Տ. ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ՏԷՐ-ՄՈՎՍԻՍԵԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ - 2018

ՀՐԱՄԱՆԱՒ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

МЕСРОПЪ АРХИЕПИСКОПЪ ТЕРЪ-МОВСЕСЯНЪ

АРХИМАНДРИТЪ И ЧЛЕНЪ БРАТІИ ЭЧМІАДЗИНСКОГО МОНАСТЫРЯ

ИСТОРІЯ ПЕРЕВОДА БИБЛІИ НА АРМЯНСКІЙ ЯЗЫКЪ

Перевела с русскаго

СУСАННА НАГАПЕТЯНЪ

Предисловіе, редактированіе и примѣчанія

ГЕОРГА ТЕРЪ-ВАРДАНЯНА

ПЕРВОПРЕСТОЛЬНЫЙ СВЯТОЙ ЭЧМИАДЗИНЪ

2018

MESROP ARCHBISHOP TER-MOVSESYAN

HISTORY OF TRANSLATION OF THE BIBLE INTO THE ARMENIAN LANGUAGE

Translated from Russian

SUSANNA NAHAPETEAN

Preface, Editing and Notes

GEORG TER-VARDANEAN

MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN

2018

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ

ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԷՐ-ՄՈՎՍԻՍԵԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ

Ռուսերէնից թարգմանեց՝
ՍՈՒՍԱՆՆԱ ՆԱՀԱՊԵՏԵԱՆ

Առաջաբանը գրեց, խմբագրեց եւ ծանօթագրեց՝
ԳԷՈՐԳ ՏԷՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ
2018

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Մ 648

Տպագրւում է երաշխաւորութեամբ
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Հրատարակչական խորհրդի
Ռուսերէնից թարգմանեց՝
ՍՈՒՍԱՆՆԱ ՆԱՀԱՊԵՏԵԱՆ
Առաջաբանը գրեց, խմբագրեց եւ ծանօթագրեց՝
ԳԷՈՐԳ ՏԷՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ

ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԷՐ-ՄՈՎՍԻՍԵԱՆ

Մ 648 ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ/ Ռուսերէնից թարգմանեց՝ ՍՈՒՍԱՆՆԱ ՆԱՀԱՊԵՏԵԱՆ; Առաջաբանը գրեց, խմբագրեց եւ ծանօթագրեց՝ ԳԷՈՐԳ ՏԷՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ.- Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2018.- 320+1 ներդիր էջ:

Մեսրոպ Մագիստրոս արքեպիսկոպոս Տէր-Մովսիսեանի (1865-1939) ներկայ գիրքը հայերէն Աստուածաշունչի ձեռագրական աւանդոյթի առաջին լուրջ գիտական հետազօտութիւնն է, որ արուած է ԺԹ. դարավերջի դրութեամբ հեղինակին յայտնի միւթի հիման վրայ, նաեւ՝ իր հրապարակման ժամանակի հայագիտութեան եւ հայ աստուածաշնչագիտութեան կարեւոր առաջընթաց քայլերից կամ ձեռքբերումներից մէկն է: 1902 թ. ռուսերէնով հրատարակուած լինելով Սանկտ Պետերբուրգում, մինչեւ այժմ հասու չի եղել ռուսերէն չիմացող հայագէտներին, ուստի գրքի հայերէն ներկայ թարգմանութիւնը հրատարակւում է անհրաժեշտ ծանօթութիւններով եւ խմբագրական լուսաբանումներով:

Նախատեսւում է հայերէն Աստուածաշնչի եւ ընդհանրապէս հայկական միջնադարեան մատենագրութեան խնդիրներով հետաքրքրուողների համար:

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)

ՏՊԱԳՐՈՒՄ Է ՄԵԿԵՆԱՍՈՒԹԵԱՄԲ
«ՍԱՐԳԻՍ ԳԱԲՐԻԷԼԵԱՆ» *ՀԻՄՆԱԴՐԱՄԻ*

ISBN978-9939-59-219-0 © Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչութիւն, 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ 5

ԳԷՈՐԳ ՏԷՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ, ՄԵՍՐՈՊ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ «ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ ՀԱՅԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ» ԳՐՔԻ ՀԱՅԵՐԷՆԸ 9

ԹԱՐԳՄԱՆՉԻ ԿՈՂՄԻՑ 20

ԱՌԱՋԱԲԱՆ 21

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ 25

Ա. ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՌՕՏ ԱԿՆԱՐԿ. Աղբիւրները. Այբուբենի գիւտը եւ Աստուածաշնչի թարգմանութիւնը. Ենթադրութիւն աւելի հին թարգմանութեան մասին 25

Բ. ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ ԵՒ ՆՐԱ ՄԱՍԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ. Ազարիա կաթողիկոսի փորձերը. Ոսկան Երեւանցու, Մխիթարի, Պետրոս Լատինացու հրատարակութիւնները. Զօհրապեանի, վենետիկեան, Աստուածաշնչական ընկերութեան Սանկտ Պետերբուրգի եւ Կոստանդնուպոլսի հրատարակութիւնները. Հրատարակութիւն Հին եւ Նոր Կտակարանների մասերի 50

Գ. ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայ մասնագէտների՝ Զարբհանալեանի, Ֆ. Սուքրիի, Ն. Բիւզանդացու եւ ուրիշների երկերը. Եւրոպացի մասնագէտներ Lourdeth, de Wetteի, Hyvernathի, Conybeareի, Robinsonի, Zahnի, Ermoniի. Vetterի եւ ուրիշների երկերը 73

1. ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԵՐԸ. Հայերէն ձեռագրեր ունեցող մատենադարանների մասին ..... 98. Նկարագրութիւն ամբողջական Աստուածաշնչի 79 [=77] ձեռագիր օրինակութիւնների 103

2. ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ ՄԱՍՆԱԿԱՆ ՁԵՌԱԳՐԵՐ ԵՒ ԱՒԵՏԱՐԱՆՆԵՐ. ա. Մասունք Հին եւ Նոր Կտակարանների [18 ձեռագիր]՝ — 171, բ. Հին Կտակարանի որոշակի գրքեր ունեցող ձեռագրեր [21 միաւոր]՝ — 174. գ. Աւետարանի ձեռագրեր [36 միաւոր]՝ — 178. դ. Նոր Կտակարանի գրքեր ունեցող ձեռագրեր [20 միաւոր]՝ — 190. ե. Նոր ձեռագրեր [4 միաւոր] — 161. զ. Աստուածաշնչի գրքերը ժողովածուների մէջ 191

3. ՁԵՌԱԳՐԵՐԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նրանց տեղաբաշխումն ըստ ժամանակի, գրչութեան տեսակի եւ վայրի. Նրանց դասակարգումն ըստ հինգ խմբի 197

4. ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ Ո՞Ր ԳՐՔԵՐՆ ԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԵԼ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՐՈՒՄ. Եկեղեցական Տօնացոյցերի եւ Ճաշոցների մասին. Հինգերորդ դարի հեղինակների՝ աստուածաշնչական գրքերի վկայակոչումները. Գրքեր, որոնց վկայակոչումներ չկան. Առ Կորնթացիս Երրորդ թուղթը. Յայտնութեան թարգմանութեան հարցը 211

5. ՏԱՐԲԵՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԳՐՔԵՐ ԵՒ ԱՆԿԱՆՈՆՆԵՐ

Ա. Ընդհանուր. ա. Աւետարան ըստ Մարկոսի՝ ԺԶ. տունք 9-20. բ. Աւետարան ըստ Ղուկայ՝ ԻԲ. տունք 43-44, 51. գ. Ղուկասու Աւետարանի վերջի աւելորդ տները. դ. Յովհաննու Ե. 4 տունը. զ. Իրք կնոջն շնացելոյ հատուածը 225

Բ. ա. Երկրորդ տարբերակներ՝ ա. Մնացորդաց գրքերի, բ. Սողոմոնի իմաստութեան գրքի, գ. Եզրի Գ. եւ Դ. գրքերի 235

Գ. Անկանոններ. Հանգիստ Յովհաննու. ա-գ. Մահք երկոտասան աւագ մարգարէից, Հատուած Մնացորդաց, Ենովքի անկանոն. դ. Կտակք երկոտասան մարգարէից. ե. Պատմութիւն Յովսէփայ եւ Ասաներթայ. զ. Աղօթք Մանասէի արքայի. է. Դանիէլի եօթներորդ տեսիլը. ը. Մահք մարգարէից 237

Դ. ա. Պատմութիւն Յովսէփայ եօթն վաճառգի. բ. Գալուստն Յակոբու ի Գեսեմ, գ. Անուանք դատաւորաց Իսրայելացւոց, դ. Խօսք Սիրաքայ՝ որդւոյ Սիմէոնի, ե. Քանիցս խօսեցաւ Տէր ընդ մարդկան 242

Կիլիկեան Ընկալեալ բնագրի հարցը 244

6. ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ ԿԱՆՈՆԸ. ընդհնուր 249

Ա. Կորիւնի կանոնը 249

Բ. Գրիգոր վարդապետի կանոնը 250

Առաքելական թղթերի նախադրութիւնների հայերէն բնագիրը ... 257

Գ. Մխիթար Այրիվանեցին. նրա աշխատութիւնները. ընդհանուր. Եբրայական անկանոնների ցանկը. Կղեմէսի, Եւագրի, Կիւրեղի ցանկերը . 262

Դ. Սամուէլ Անեցու՝ Անկնոնների ցանկը 272

Ե. Եկեղեցական կարգաց կանոնը եւ ձեռագրերը. ա. 435 եպիսկոպոսների ժողովի կանոնը, բ. Անտիոքի երկրորդ ժողովի կանոնը, գ. Կոնոն

ետեւողաց առաքելոց, դ. Պարտաւի ժողովի կանոնը, ե. O^2 ձեռագրի ցանկը, զ. Վասն համարոյ Հին եւ Նոր Կտակարանաց, է. Գրիգոր Տաթեւացու ցանկը, ը. Ցանկ-ծագումնաբանական ծառ, թ. Առաքել եպիսկոպոս Սիւնեցու չափածոյ ցանկը եւ նրա բնագիրը 273

7. ԲՆԱԳՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ, ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԳԼԽԱՑԱՆԿԵՐ

Ա. ա. Համաձայնութեան կանոններ, բ. Համաձայնութիւն՝ Ὑπόθεσις, գ. Եւթաղ 285

Բ. ա. Նախադրութիւններ եւ գլխացանկեր, Նրանց հեղինակը Գէորգ Սկեւռացին է, բ. Հերոնիմոսի Նախադրութիւնը, գ-ե. Սաղմոսաց Նախադրութիւններ՝ Աթանասի, Եպիփանի, Դաւիթ Փիլիսոփայի, Յոբի՝ Յուլիանոս Աղեքսանդրացու եւ Սամուէլ վանականի, Մարգարէից՝ Լամբրոնացու, Մխիթար Գօշի, Վարդանի, Եսայիի, Կորնթացւոց Գ.՝ Եփրեմ Ասորու, զ. Գէորգ Սկեւռացու չափածոները, է. Ներսէս Շնորհալու եւ Ներսէս Լամբրոնացու չափածոները 286

Գ. Աստուածաշնչի բառացանկեր. ա. Վանականի, բ. Դաւթի եւ Ղազար Բաբերդացու 295

Դ. Տնատում եւ այլ բաժանումներ՝ ա. Նոր Կտակարանի, բ. Հին Կտակարանի 295

ՅԱՒԵԼՈՒԱԾ 300

ՑԱՆԿ ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ 303

ՄԵՍՐՈՊ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ «ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ ՀԱՅԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ» ԳՐՔԻ ՀԱՅԵՐԷՆԸ

Մեսրոպ Մագիստրոս արքեպիսկոպոս Տէր-Մովսիսեանի (1865-1939) ներկայ դիրքը[1] *հայերէն Աստուածաշնչի ձեռագրական աւանդոյթի առաջին լուրջ գիտական հետազօտութիւնն է, որ արուած է ԺԹ. դարավերջի դրութեամբ հեղինակին յայտնի նիւթի հիման վրայ, նաեւ՝ իր հրապարակման ժամանակի հայագիտութեան եւ հայ աստուածաշնչագիտութեան կարեւոր առաջընթաց քայլերից կամ ձեռքբերումներից մէկն է*[2]*, ըստ այդմ էլ գնահատուել ու գործածուել է թէ՛ հեղինակի ժամանակակիցների*[3] *եւ թէ՛ աւելի նոր աշխատութիւնների մէջ*[4]*: Աւելին՝ հեղինակը ձեռագրերի արտաքին տուեալներով (տփի կազմութիւն՝ պարունակած նիւթերի միատեղ հանդէս գալը եւ որոշակի կարգով միմեանց հերթագայելը, բնագրական խնդիրներին վերաբերող յիշատակագրութիւններ, մատենագիտական ցուցում-մատնանշումներ եւ արտաբնագրական նմանիք) Աստուածաշնչի հայերէն ձեռագրերը զատորոշել է չորս*

---

[1] Տե՛ս **Մ. Теръ-Мовсесянъ,** Исторія перевода Библіи на армянскій языкъ, С. Петербургъ, Пушкинская скоропечатная, Летушковъ пер., N 4, 1902, IX, 287 էջ. վերնագրի «Պատմութիւն Սուրբ Գրոց հայկական թարգմանութեան» հայերէն ձեւը հեղինակինն է եւ առկայ է բուն գրքի երկրորդ տիտղոսաթերթի վրայ, այլեւ՝ նոյն ձեւով կամ նրա բառերի սկզբնատառերի «ՊՍԳԹ» համառօտումով բազմիցս յիշատակուած է իր իսկ «Ընդհանուր ցուցակ հայերէն ձեռագրաց» անտիպ գործի մէջ:

[2] Ն. Մառի հովանաւորութեամբ եւ նրա ղեկավարած հայ-վրացական բանասիրութեան ամբիոնի գծով 1902 թ. դեկտեմբերի 15ին այս գիրքը պաշտպանել է որպէս ատենախօսութիւն եւ ստացել հայ բանասիրութեան մագիստրոսի գիտական աստիճան: Հետագայ տարիներին յաճախ ստորագրել է իր այս կոչումով, եւ այն պաշտօնականացել է որպէս իր անուան բաղադրիչ՝ Մեսրոպ Մագիստրոս:

[3] Տե՛ս Ն. Մառի գրախօսութիւնը (որ նաեւ ատենախօսութեան ընդդիմախօսութիւն էր)՝ «Критики и мелкие статьи: Тексты и разыскания по армяно-грузинской филологии», вып. V, С. Петербургъ, 1903, էջ 29-53 (այսուհետեւ՝ **Ն. Մառ,** Գրախօս.): Եղել են նաեւ հետեւեալ արձագանգները. И. Г., История... .- Церковный вестникъ, 1903, ноябрь, № 46, с. 1460, A. Meillet, Revue critique d'histoire et de litterature, 8 Février 1904, № 6, p. 103-4, Գիրքը որպէս ատենախօսութիւն պաշտպանած լինելու համար շնորհաւորանք՝ Հ. Թովմաս ԿԷտիկեան.- ՀԱ, 1903, էջ 63-64, Կարճ տեղեկութիւն՝ Հ. Թովմաս ԿԷտիկեան.- ՀԱ, 1904, էջ 286: Հմմտ. **Գէորգ Տէր-Վարդանեան,** Մեսրոպ Մագիստրոս արքեպիսկոպոս Տէր-Մովսիսեան. Կենսագործունէութիւնը, «Ընդհանուր ցուցակ հայերէն ձեռագրաց», Մատենագիտութիւն, Երեւան, 1999, էջ 152:

[4] Գրքի արժէքի գիտակցումով ներկայումս դրուած է նաեւ համացանցային գործածութեան. գիտենք հետեւեալ երեք տեղը՝ https://bit.ly/2sVZPKB, https://bit.ly/2SEVpUy, https://bit.ly/2OnCB8M - (5 նոյ. 2018 թ.):

խմբի[5]. ձեռագրական համեմատութիւնների բաւական հարուստ նիւթի արդիւնք-ընթերցումների խմբաւորումներով վերջերս քանիցս հաստատուել է այդ դասակարգման հիմնաւորուածութիւնն ու ճշգրտութիւնը[6]:

Ն. Մառը, լինելով այս գիրք-ատենախօսութեան գրախօս-ընդդիմախօսը, գնահատելու հետ նաեւ քննադատել է նրա վրիպումները[7], զանցառութիւնները եւ բաւարար չափով չփաստարկուած մեկնաբանութիւնները, սակայն միաժամանակ տուել է Մեսրոպ Մագիստրոսի գործի լաւագոյն գնահատականը. «Իմ նկատած թերութիւնները կամ խնդիրները, իհարկէ, չեն նսեմացնում Հ. Մեսրոպի աշխատութեան դրական որակները եւ օգտակարութիւնները: Գրքին պատիւ է բերում նաեւ այն, որ հեղինակը նրա խնդրով հետաքրքրուել է անկեղծօրէն եւ ըստ էութեան, եւ ոչ թէ ձեւականօրէն՝ որպէս ատենախօսութեան թեմայի. եւ սա գրքի մեծագոյն արժանիքն է: Ս. Գրքի հայերէն թարգմանութեան հարցն ինձ յատուկ հետաքրքրում է ահա արդէն առնուազն վեց տարի: Եւ ես անկեղծօրէն խոստովանում եմ, որ այս աշխատութիւնը կարդալով՝ այդ հարցի մի քանի կողմերն ինձ համար նախկինից չատ աւելի պարզ դարձան: Միայն թէ, գուցէ իմ եսասիրական ճգտումամբ, կուզենայի այս գրքից չատ աւելին ստանալ, յատկապէս որ այն ո՛չ կաղապարային ձեւով է մտածուած: Մի խօսքով, վստահ եմ, որ ներկայ հետազօտութիւնը Հ. Մեսրոպի վերջին աշխատանքը չէ, եւ մնում է ցանկանալ ու յուսալ, որ էջմիածնական վանականի հետագայ աշխատութիւնները եւս լիովին ինքնուրոյն ու անթերի կլինեն»[8]:

Այսուհանդերձ, անհրաժեշտ ենք համարում այստեղ բերել նաեւ Մառի՝ այս գրքի հայերէն տարբերակի ընթերցողի համար նոյնպէս կարեւոր ու նկատառելի մի դիտողութիւն. «Տարօրինակ կերպով Հ. Մեսրոպը բոլորովին չի օգտագործել մի գիրք, որը հարցի վերաբերեալ տեղեկութիւնների իսկական պահեստարան է, սակայն ես կասկածում եմ, թէ դրա մասին նա չգիտէր: Նկատի ունեմ ճանապարհորդ Սրուանձտեանց վարդապետի գիրքը (Թորոս Աղբար, Կ. Պոլիս 1884): Այս գրքի երկրորդ հատորի երկու

---

[5] Հինգերորդ խումբ է համարել Ղազար Բաբերդացու լրացումներով ձեռագրերը, սակայն այդ լրացումները միայն տնաբաժանումների եւ օժանդակ ցանկերի բնոյթի են, սրանց մէջ բնագրական հարցեր չկան, ըստ այդմ եւ բնագրական խմբերի մէջ նկատառելի չեն:

[6] Հմմտ. **Հ. Մ. Ամալեան,** Ձեռագրերի դասակարգման փորձ ըստ Մականաբայեցոց գրքերի.- Պատմաբանասիրական հանդէս, 1979, Հ[մր] 4, էջ 59-71: Աստուածաշունչի առանձին գրքերի համեմատական հրատարակութիւնների մէջ եւս հաստատուել է նոյն չորս խմբի առկայութիւնը:

[7] Գրքի հայերէն մասերին վերաբերող դիտողութիւններս այստեղ հաշուի են առնուել:

[8] **Ն. Մառ,** Գրախօս., էջ 53:

հարիւր էջից աւելին ներկայացնում են բուն Հայաստանի՝ Թուրքիայի կազմի մէջ մտնող մասի հայերէն ձեռագրերի՝ մեծ մասամբ Ս. Գրքի օրինակների նկարագրութիւններ: Սուրբ Գրքի միայն թուագրուած օրինակները նրա մէջ 116ից պակաս չեն, բաւական յաճախ՝ յիշատակարաններից արուած ընդարձակ քաղուածքներով. այդ թւում Աստուածաշնչի 1317ից մինչեւ ԺԸ. դարի ութ լիարժէք օրինակ եւ ԺԲ. դարի երեք Աւետարան. բացի այդ՝ Աստուածաշնչի չթուագրուած, բայց մագաղաթէ երեք օրինակ: Այս բոլոր ձեռագրերի նկարագրութիւնը նոյնիսկ ըստ Հ. Մեսրոպի ծրագրի պէտք է իրենց տեղը գտնէին ներկայ ատենախօսութեան մէջ»[9]*:*

Երեւի պէտք է ենթադրենք, որ հեղինակն իր գիրքը Պետերբուրգում գրելիս Գ. վ. Սրուանձտեանցի երկհատոր «Թորոս աղբար»ը ձեռքի տակ չի ունեցել, ուստի եւ Ս. Գրքի ձեռագրերի իր չարքի մէջ վրիպմամբ չի ներառել Ն. Մառի յիշատակած՝ «Աստուածաշնչի 1317ից մինչեւ ԺԸ. դարի ութ լիարժէք օրինակ եւ ԺԲ. դարի երեք Աւետարան», իսկ «թուագրուած... 116» ասելով Մառը նկատի է ունեցել Աւետարանի ձեռագրերը, որոնց Մեսրոպ Մագիստրոսը չէր անդրադառնալու ըստ իր որդեգրած՝ միայն հնագոյն օրինակները նկատի ունենալու սկզբունքի:

Հայերէն Աստուածաշնչին վերաբերող գիտութիւնը կամ հայկական աստուածաշնչագիտութիւնը մշտապէս եղել է թէ՛ հայագիտութեան եւ թէ՛ ընդհանուր աստուածաշնչագիտութեան մասը, այսինքն՝ համաշխարհային գիտութեան հետաքրքրութեան նիւթ կամ առարկայ: Սակայն մեր խնդրոյ առարկայ գիրքը, գրուած եւ տպուած լինելով ռուսերէն եւ ռուսալեզու գիտական չրջանակների համար, միշտ անմատչելի է մնացել կամ հասու չի եղել ռուսերէն չիմացող հայ[10] *եւ այլազգի հայագէտներին ու աստուածաշնչագէտներին: Միայն մի օրինակ. վերջին չրջանում հրատարակուած եւ իբր հայ աստուածաշնչագիտութեան պատմութիւն լինելուն յաւակնող (իրականում՝ սոսկ այդ նիւթի ակնարկ) մի չարադրանքում, անհարկի կրկնելով հանդերձ Աստուածաշնչի հայկական կանոնի վերաբերմամբ Մագիստրոսի հետազօտութեան մէջ եղածը, կանոնին վերաբերող աղբիւրների քաղումների վերջում նրա աշխատութիւնը վկայակոչուել է հետեւեալ տեսքով. «Գալուստ Տէր-Մկրտչեան, Պատմութիւն Ս. Գրոց հայկական թարգմանութեան (ռուսերէն), Մոսկուա, 1902,*

---

[9] Նոյն տեղում, էջ 40-41:

[10] Վերջերս ռուսերէնի իմացութիւնը զգալի ևահանջ է ապրել ևաեւ արեւելահայ երիտասարդ սերնդի մէջ: Ռուսերէն գրքի կաևոևաւոր ընկալմանը որոշ չափով խաևգարում եև ևաեւ ո՛չ այևքաև յաջող ձեւաւորումը եւ ռուսերէնի ևախախորհրդային ուղղագրութիւնը:

էջ 259-260»[11]: Մի յղման մէջ երեք սխալի[12] առկայութիւնը վկայում է, որ սրանք սոսկ վրիպակներ չեն, այլ Մագիստրոսի վաստակն անտեսուած է կարդացուած կամ հասկացուած չլինելու պատճառով:

Քանի որ հայագիտութեան հիմնական լեզուն հայերէնն է, եւ հայերէն Աստուածաշնչի որեւէ հարց քննող ու որեւէ ազգի պատկանող մասնագէտն անպայման պէտք է հին կամ նոր հայերէն իմանայ, ուստի, ներկայացուածի բնոյթի գիտական զանցառութիւն-թիւրիմացութիւնները կանխելու լաւագոյն եղանակը Մեսրոպ Մագիստրոսի այս գործը հայերէնով հրատարակելն է, որ եւ արւում է ներկայումս:

Մագիստրոսի ուսումնասիրութիւնը հիմնուած է իր հանրայայտ «Ընդհանուր ցուցակ հայերէն ձեռագրաց» մեծածաւալ անտիպ գործի[13] «Աստուածաշունչ մատեան» մասում 1902 թ. դրութեամբ առկայ ձեռագրերի նկարագրութիւնների վրայ[14]. հիմնական նիւթը էջմիածնի ձեռագրերն են, օժանդակը՝ մեծ մասամբ գիտական գրականութեան միջոցով, երբեմն նաեւ անհատների հաղորդած տեղեկութիւններով յայտնի՝ այլ հաւաքածուների ձեռագրերը: Գրքի հրատարակումից յետոյ եղել են ձեռագրերի զգալի տեղաշարժեր, աւելին՝ ինքն իսկ Մեսրոպ Մագիստրոսը 1913 թ. փետրուարին միաւորել է իր գործի կարեւորագոյն հիմքը՝ էջմիածնի ձեռագրական բոլոր հաւաքածուները[15]՝ սրանով իսկ սկզբնաւորելով ներկայիս Մաշտոցեան Մատենադարանի «Հայերէն ձեռագրերի հիմնական հաւաքածու»ի միասնական համարակալումը: Այս պատ-

---

[11] Տե՛ս «Ցուցակ Աստուածաշունչ մատեանի հայերէն ձեռագիրներուն», [կազմեցին՝ Օնիկ Եգանեան], Ը. արք. Աճէմեան, Լիզպոն, 1992, էջ ՂԸ., ծնթ. 259. նոյնը կրկնուած նաեւ՝ **Ը. արք. Աճէմեան,** Հայերէն Աստուածաշունչը (հայագիտական ուսումնասիրութիւններ), Երեւան, 2006, էջ 186:

[12] Հեղինակի անունը պէտք է լիներ Մեսրոպ Տէր-Մովսիսեան, հրատարակութեան տեղը՝ Ս. Պետերբուրգ, էջահամարները՝ 259-262:

[13] Տե՛ս **Գ. Տէր-Վարդանեան,** Մեսրոպ Մագիստրոս արքեպիսկոպոս Տէր-Մովսիսեան. Կենսագործունէութիւնը... Երեւան, 1999, 180 էջ:

[14] Ենթադրելի է, որ նախորդ դարի սկզբին այդ թղթապանակում կամ ընդհանրապէս իր ցուցակում ունէր միայն գրքում արծարծուած ձեռագրերի նկարագրութիւնները, սակայն մինչեւ կեանքի վերջ շարունակուած նրա աշխատանքի շնորհիւ մեզ հասած տարբերակում կայ 430 ձեռագրի եւ 68 պատառիկ-պահպանակի նկարագրութիւն. տե՛ս ծնթ. 13, էջ 111: Իսկ ռուսերէն գրքում չարծարծուած կամ հեղինակի ժամանակ դեռեւս անյայտ մնացած ամբողջական Աստուածաշունչ եւ նրա առանձին գրքեր պարունակող ձեռագրերի ցանկ կամ ցուցակ կազմելը գիտական այլ՝ կարեւոր հարց է, որ դուրս է այս գրքի եւ մեր ներկայ խնդրի սահմաններից:

[15] Տե՛ս **Օ. Եգանեան,** Մատենադարանի ձեռագրական հաւաքածուները. «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցեան Մատենադարանի», հ. Ա., կազմ.՝ Օ. Եգանեան, Ա. Զէյթունեան, Փ. Անթաբեան, ներած.՝ Օ. Եգանեանի, խմբ.՝ Լ. Խաչիկեանի, Ա. Մնացականեանի, Երեւան, 1965, էջ 84 (այս եւ նոյնի՝ հ. Բ., Երեւան, 1970. այսուհետեւ՝ ՑՁՄՄ, Ա. եւ Բ.):

ճառով նրա աշխատութեան գործածումն այսօր մեծապէս դժուարացել է, որովհետեւ օգտագործուած եւ յիշատակուած ձեռագրերի՝ գրքում նշանակուած համարներն այսօր մեծ մասամբ չեն գործում: Վերջերս յօդուածներով երկիցս այս գրքին անդրադառնալով[16]*, յատկապէս առաջին յօդուածով դիւրացրել ենք նրա ռուսերէն տարբերակի օգտագործումը*[17]*, դրանով իսկ նախապատրաստելով նաեւ գրքի ներկայ հայերէնացումը:*

Ձեռագրերի համարներից զատ՝ մնացած գրեթէ բոլոր առումներով չհնացած եւ արժէքաւոր աշխատութիւնն, այսուհանդերձ, առանց միջամտելու հայերէնացնելը սխալ կլինէր: Ուստի, օգտագործումը դիւրացնելու եւ հեշտ յղելի դարձնելու նպատակով առաջին հերթին ձեռագրերի նկարագրութիւնները համարակալել ենք՝ 1-196. ամբողջական Աստուածաշունչ ձեռագրերի նկարագրութիւնների կարգային համարները, Հմր՝ նշանի զուգորդումով, կան նաեւ ռուսերէն գրքի չարադրանքում[18]*, միւսների 78-196 համարները մերն են: Հեղինակը տարբեր՝ հակասական տեղեկութիւններով աղբիւրներ օգտագործած լինելու պատճառով չորս ձեռագիր նկարագրել է երկուական անգամ. սրանց թէ՛ առաջին եւ թէ՛ երկրորդ յիշատակումներն ստացել են նոյնական՝ համապատասխանաբար՝ 19, 77, 119, 126 համարներ. ապա՝ տարբեր գրքեր ներկայացրած լինելու պատճառով եօթ ձեռագիր յիշատակել է երկուական, մէկն էլ՝ երեք անգամ, ուստի 177, 179, 180, 181, 183, 184, 191 համարները չարքում գրել ենք երկուական, իսկ 178 համարը երեք անգամ:*

«2. Աստուածաշնչի մասնական ձեռագրեր եւ Աւետարաններ» բաժինն ունի հինգ ենթաբաժին՝ Ա-Ե., որոնց ներքոյ թուարկել է Ա.՝ 1-18, Բ.՝ 1-21, Գ.՝ 1-38 (=36) եւ Դ.՝ 1-20 եւ Ե.՝ 1-4: Հետագայ չարադրանքի մէջ այս ձեռագրերը բաւական յաճախ յիշատակւում են ճիշտ այդպէս՝ Ա. Հմր 1, Բ. Հմր 5 եւ նման ձեւերով. այդ յղումներով համապատասխան

---

[16] Տե՛ս **Գէորգ Տէր-Վարդանեան,** Մեսրոպ Տէր-Մովսիսեանի «Պատմութիւն Սուրբ Գրոց հայկական թարգմանութեան» գիրքը եւ նրա մէջ ներկարագրուած-յիշատակուած ձեռագրերը- «Էջմիածին» հանդէս, 2016, Հմր Ժ., էջ 83-108: Գէորգ Տէր-Վարդանեան, Հայերէն Աստուածաշնչի ձեռագրացուցակների կազմութեան փորձերը եւ նոր ցուցակի անհրաժեշտութիւնը.- Ոսկանեան Աստուածաշնչի հրատարակութեան 350 ամեակը (1666-2016). Գիտաժողովի նիւթեր (Հոկտեմբեր 6-8, 2016), Էջմիածին, Գլխ. խմբ՝ Գէորգ Տէր-Վարդանեան, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2018, էջ 60-77:

[17] Գրքի բաժինների կարգով՝ աղիւսակների ձեւով, պարզել ենք օգտագործուած եւ յիշատակուած բոլոր ձեռագրերի ներկայ տեղերը եւ գոյքահամարները: Յատկապէս Մաշտոցեան Մատենադարանի ձեռագրերի հին եւ նոր համարների՝ Օ. Եգանեանի կազմած զուգադիր աղիւսակները (տե՛ս ՅՁՄՄ, հ. Բ., սիւն 1485-1532), անշուշտ, այս տեսակէտից շատ օգտակար են, բայց Մագիստրոսի գրքում գործածուած ձեռագրերի պատկերը պարզելու համար սրանք բաւարար չեն:

[18] 1-79 ձեւով, որ մենք դարձրել ենք՝ 1-77:

ձեռագրերը հեշտ գտանելի դարձնելու նպատակով բոլոր շարքերի մէջ ձեռագրերի կարգային համարներից առաջ գրել ենք բաժինների համապատասխան համար-գրերը՝ Ա-Ե.:

Մեսրոպ Տէր-Մովսիսեանի նկարագրած, օգտագործած եւ յիշատակած ձեռագրերի ներկայ հաւաքածուները եւ համարներն իր շարադրանքի մէջ՝ [ ] փակագծերում գրել ենք՝ թուահամարներին զուգադրելով հաւաքածուների անունների հետեւեալ ցուցիչ-համառօտումները՝

Ե - Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց մատենադարան.

Մ - Մաշտոցեան Մատենադարան (Երեւան).

Վ - Մխիթարեանց Վենետիկի մատենադարան.

Վն - Մխիթարեանց Վիեննայի մատենադարան.

Վն. կյսրկն. - Վիեննայի կայսերական մատենադարան:

Հայերէն ձեռագրերի մեծ եւ հանրայայտ այս հաւաքածուների ձեռագրերի նկարագրութիւնները ծանօթագրել ենք միայն նրանց ներկայ համարները գրելով, որովհետեւ վստահ ենք, որ տեղեակ ընթերցողն այստեղ տեսած, օրինակ՝ [Ե 326] ձեռագրի նկարագրութիւնը պէտք է փնտրի եւ հեշտութեամբ գտնի Նորայր արք. Պողարեանի կազմած՝ Երուսաղէմի Ս. Յակոբեանց մատենադարանի 11 հատորանոց ձեռագրացուցակի Բ. հատորում[19]*: Նախկինում այլ հաւաքածուների պատկանած եւ հետագայում Մաշտոցեան Մատենադարան եկած ձեռագրերի՝ նոյն Մատենադարանում ստացած համարները նշելն ընթերցողի համար բաւարար ուղենիշ ենք համարել, որովհետեւ նրանց հին յիշատակումներն արդէն Մագիստրոսի գրքում նշուած են: Պակաս յայտնի հաւաքածուների ձեռագրերի յիշատակումները ծանօթագրել ենք առնուազն մատնանշել-յղելով նանց հին կամ նոր նկարագրութիւնները, որոնց մէջ աւելի մանրամասն տեղեկութիւններ կան, քան յայտնի են Մագիստրոսի գրքով: Առանձին անհրաժեշտ դէպքերում մատնանշել ենք մեր խնդրոյ առարկայ ձեռագրերի յիշատակարանների՝ առկայ տասհատորեակի մէջ տպագրուած լինելը:*

Գիրքը գրուել եւ տպուել է քսաներորդ դարի սկզբի ռուսական գիտական հանրութեան համար, նաեւ՝ հեղինակին մագիստրոսի գիտական կոչում ապահովելու նպատակով: Այդ պատճառով թէ՛ բուն շարադրաքի եւ թէ՛ տողատակի ծանօթութիւնների մէջ միշտ առկայ է ռուս ընթերցողին առաւել մատչելի եւ հասու բացատրութիւններ տալու ձգտումը, այլեւ՝ օգտագործած հայերէն հրատարակութիւնների մասին լրացուցիչ տեղեկութիւններ հաղորդելու ցանկութիւնը. հայերէն տարբերակի մէջ այդպիսիք աւելորդ են, ուստի դրանք չտկել եւ դարձրել ենք հայ ըն-

[19] Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հտ. Բ., կազմեց **Նորայր եպս. Պողարեան**, Երուսաղէմ, տպ. Սրբոց Յակոբեանց, 1967, էջ 196-199:

թերցողի համար հարթ չարադրանք. օրինակ՝ գրել է. «Զարբհանալեանը հայերէն գրուած իր գիրքը կոչել է «Catalogue des anciennes traductions armniénnes (siècles IV-XIII)» (էջ 53, ծ.)[20] եւ այլն. դարձրել ենք՝ «Զարբհանալեանն իր գիրքը կոչել է «Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց (Դար Դ-ԺԳ.)»՝ ինչպէս գրքի հայերէն վերնագիրն է: Կայ նաեւ այս. «տե՛ս Զարբհանալեանի Catalogue des anc. trad. Arm. էջ 93» (էջ 1, ծնթ. 1), որ դարձրել ենք՝ «տե՛ս Գարեգին վ. Զարբհանալեան, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց (դար Դ.-ԺԳ.), Վենետիկ, Մխիթ. տպարան, 1889, էջ 93». այս գիրքը հետագայ էջերում ամենայաճախ յղուողն է՝ «Զարբան. Հ.Թ.Ն.» կամ ուղղակի «Հ.Թ.Ն.» ձեւով: Այս անմիօրինակ եւ անճշգրիտ ձեւի փոխարէն վերի մեր ծանօթութեան վերջում փակագծուած գրել ենք՝ «(այսուհետեւ՝ Զարբհ., ՄՀԹՆ)», որը կրկնել ենք յաջորդող չատ էջերում:

Գործածած եւ յիշատակած գրականութեան յղումները չատ յաճախ, կարելի է ասել՝ անկանոն էին. օրինակ՝ ճիշտ առաջին ծանօթութեան առաջին յղումը՝ «Ասողիկ, Տիեզերական պատմութիւն (Հայերէն, բնագիր), Ս. Պետերբուրգ, 1885, էջ 74–78 եւ 139» կանոնաւորելով դարձրել ենք՝ «Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, երկրորդ տպագրութիւն, ի Ս. Պետերբուրգ, 1885, էջ 74–78 եւ 139»: Նոյն ծանօթութեան մէջ ունի՝ «տե՛ս Ն. Բիւզանդացի, «Կորիւն», էջ 383, ծնթ. 1». սա էլ դարձրել ենք՝ «տե՛ս Նորայր Բիւզանդացի, Կորիւն վարդապետ եւ նորին թարգմանութիւնք. Գիրք Մակաբայեցւոց, Եւթաղ Ալեքսանդրացի, Ագաթանգեղոս եւ Փաւստոս Բուզանդ[21], Հանդերձ դիտողութեամբք, տեղեկութեամբք եւ լուսաբանութեամբք, Տփղիս, տպ. Մն. Մարտիրոսեանցի, 1900, էջ 383, ծնթ. 1 (այսուհետեւ՝ Ն. Բիւզանդացի, Կորիւն վարդապետ)»: Վերջինիս նման՝ համառօտած եւ ճանաչելի յղումներով ենք նշել յաճախակի կամ բազմակի յիշատակուած բոլոր գրքերը եւ յօդուածները. եւ այսպէս արել ենք հնարաւոր բոլոր դէպքերում: Հայերէն թէ՛ գրքերի եւ թէ՛ առաւել չատ գիտական պարբերականների յօդուածների յղումներն արել է չատ համառօտ կամ կրճատ-թռուցիկ-պատմողական ձեւերով՝ պարբերականի անուն, տարի եւ էջահամար, որոնցով ընթերցողը չի կարող ենթադրել, թէ հեղինակն իր խօսքն ո՛ւմ եւ ի՛նչ գործի վկայակոչմամբ է հիմնաւորում. այդպիսիք հնարաւոր բոլոր դէպքերում լրացրել ենք. օրինակ՝ առաջին իսկ ծանօթութեան մէջ կար. «Բազմա-

[20] Այս քաղուածքները ոուսերէն-բնագրային տեսքով բերելն անիմաստ ենք համարում. նախընտրեցինք օգտագործել թարգմանչից մեր ստացածը:

[21] Ի դէպ, այս անունը այլ տեղերում գրել է «Փ. Բիւզանդացի» ձեւով. դարձրել ենք «Փաւստոս Բուզանդ»:

վէպ», 1851, էջ 232, ծնթ. 1», սա դարձրել ենք՝ «Հ. Գ. Զարբհանալեան, Յաղագս թարգմանութեան Աստուածաշունչ տառից ի հայ լեզու.- «Բազմավէպ», 1851, էջ 232, ծնթ. 1 (ամբողջը՝ էջ 230-237)»[22]: Մի փոքր անց կար՝ «ըստ Գաթրճեանի՝ 445-450 (Գաթրճեան, Հանդէս Ամսօրեայ 1887 էջ 10)», որ դարձրինք. «ըստ Գաթրճեանի՝ 445-450 թուականներին՝ Հ. Յ. Գաթրճեան, Հինգերորդ դարու չորս հայ պատմագրութեանց ժամանակները.- Հանդէս Ամսօրեայ, 1887, էջ 10. ամբողջը՝ էջ 9-12)»:

Նոյնն արել ենք նաեւ օտարալեզու աստուածաչնչագիտական գրականութեան՝ հայերէն Աստուածանչին վերաբերող այլալեզու հրապարակումների յղումների հետ[23]. մեզ համար մեծ դիւրութիւն է, որ համացանցում առկայ են այդպիսի գրքերի մեծ մասի էլեկտրոնային տարբերակները, որոնցից օգտուելով էլ լրացրել ենք կրճատ եւ գրեթէ բան չասող յղումները (երբեմն էլ՝ սրբագրել մեր խնդրոյ առարկայ գրքի վրիպակները). երկու օրինակ՝ 1. ունի՝ «Bardenhewer, Geschichte der altkirchlechen Literatur 1902, էջ 337» (էջ 16, ծնթ. 1). դարձրել ենք՝ «Otto Bardenhewer, Geschichte der altkirchlechen Literatur, Erster Band. Freiburg im Breisgau, 1902, էջ 337 (այսուհետեւ՝ Bardenhewer, Geschichte)», 2. ունի՝ «V. Langlois, Collection des hist. Arm. II, 1-15» (էջ 1. ծնթ. 1), որ դարձրել ենք՝ «V. Langlois, Collection des historiens anciens et modernes de l'Arménie, t. 2, Paris, 1869, էջ 1-15»: Բայց յիշատակուած եւրոպական, հիմնականում գերմաներէն աստուածաչնչագիտական մամուլի ամսագրային եւ օրաթերթային որոշ յօդուածներ համացանցում չենք գտել, ուստի եւ ստիպուած ենք

---

[22] «Բազմավէպ», 1891» ձեւով յաճախ է յիշատակում ամսագրային տարբերակի սկիզբը հետեւեալ գրքի՝ «[**Ծրումպֆ Գիւստաֆ Ադոլֆ, Զարբհանալեան Գարեգին վ.**], Ուսումնասիրութիւնք հայ լեզուի եւ մատենագրութեան յԱրեւմուտս (ԺԴ-ԺԹ. դար), Վենետիկ, Մխիթարեան տպ., 1895, 402 էջ»: «Բազմավէպ»ի համացանցային օրինակների մէջ անհրաժեշտ նիւթը չգտնելով, թերթեցինք գրադարանային տարբեր օրինակներ եւ պարզեցինք հետեւեալը. 1891 թ. «Բազմավէպ»ն ունի երկու համարաշար եւ երկու էջակալում. Ա. համարաշար՝ Ա-ԺԲ., այսինքն՝ յունուար-դեկտեմբեր, էջք 1-389 (ամէն համար՝ 32 էջ եւ 3 էջ տարեկան բովանդակութեան ցանկը), ապա՝ վերջին համարի վերջում յաւելեալ էջ 1-17՝ «Երկու խօսք», ստորագրուած՝ «Հ[այր] Բ[արսեղ] Ս[արգիսեան]» (պատասխան իր մի գործի՝ «Հանդէս ամսօրեայ»ի գրախօսութեան): Բ. համարաշար՝ Ա-Ը. եւ Ժ-ԺԱ., այսինքն՝ յունուար-օգոստոս եւ հոկտեմբեր-նոյեմբեր, էջք 1-176 (ամէն համարը 16 էջ, միայն օգոստոսը՝ 32 էջ. գուցէ առանց նշելու նկատի ունենալով նաեւ սեպտեմբերը): Ծրումպֆ-Զարբհանալեանի գրքի էջահամարները վերաբերում են 1891ի Բ. համարաշարին. այսպէս՝ Բազմավէպ, 1891, Դ. էջ 55-60, Ե. էջ 76-80, Զ. էջ 93-6, Ը. էջ 120-6, Թ. էջ 142-4, Ժ. էջ 157-60, ԺԱ. էջ 164-71. այս մասի էջահամարների յղումներից առաջ աւելացրել ենք՝ «Ծրումպֆ-Զարբհանալեան» բառերը:

[23] Յատակ նկատելի է, որ եւրոպացիների ուսումնասիրութիւնների մեծ մասին անդրադառնալու մեռնակէտերը եղել են «Բազմավէպ»ի եւ «Հանդէս ամսօրեայ»ի ծանուցումները, գրախօսութիւններն ու թարգմանութիւնները:

եղել այդպիսիների յղումները թողնել հեղինակի ունեցածի պէս[24]:

Գրքում կան այլալեզու՝ անգլերէնով, ֆրանսերէնով եւ գերմաներէնով նոյնաբար բերուած քաղուածքներ. բոլորի թարգմանութիւնները մեր աստղանշակիր ծանօթութիւններով բերել ենք տողատակին. անգլերէննեը մենք ենք թարգմանել, միւսները՝ մեր գործընկերները. ֆրանսերէննեը՝ Ամալիա Շահումեանը, գերմաներէննները՝ Սեդա Մանուկեանը (մեծապէս շնորհակալ ենք իրենց):

*Մեր աւելացրած ծանօթագրութիւնների համարների վրայ թէ՛ բուն շարադրանքի մէջ եւ թէ՛ տողատակերում աստղանիշ՝ * ենք դրել. երբեմն յարմար է եղել մեր ասելիքը գրել հեղինակի ծանօթութիւնից անմիջապէս յետոյ, այդպիսի դէպքերում եւս մեր խօսքից առաջ աստղանիշ * կայ:*

Այս ամէնը նկատի ունենալով՝ կարող ենք վստահ ասել, որ տողատակի ծանօթութիւններն զգալի չափով աւելի մերն են, քան հեղինակինը, ուստի վստահ կարող ենք ասել, որ խմբագրել ենք ո՛չ միայն թարգմանութիւնը, այլեւ՝ Մագիստրոսի բուն գործը:

Երբեմն հարկ է եղել լրացնելու նաեւ հեղինակի խօսքը. թէ՛ բուն շարադրանքի եւ թէ՛ տողատակի խօսքի մէջ մեր արած այդպիսի բոլոր յաւելում-միջամտութիւններն առնուած են՝ [ ] փակագծերի մէջ (Մագիստրոսն այսպիսի փակագծեր չի օգտագործել):

Հայերէն բնագրի վերաբերմամբ բաւական յաճախ գործածել է «հայկական վուլգատա» արտայայտութիւնը[25]. քանի որ «վուլգատա»ն լատիներէն Աստուածաշնչի անունն է, չվոխից խուսափելու նպատակով փոխարէնն ամէնուր գրել ենք՝ «հայերէն Ընկալեալ բնագիր»:

«Րաբունի», «րաբունապետ» կամ «վարդապետ» բառերը թարգմանել է մէկ «վանական», երբեմն էլ՝ «եպիսկոպոս» կամ «արքեպիսկոպոս», առ այդ նոյնիսկ յատուկ ծանօթութիւն ունի՝ «մենք միշտ «րաբունապետ» բառը թարգմանում ենք «епископъ» բառով» (ծ. 255)[26]. այդ սխալն ուղղել եւ անհրաժեշտ բոլոր տեղերում գրել ենք «վարդապետ»:

---

[24] Հիմնականում այստեսակ անմիօրինակ եւ անկանոն յիշատակուած յօդուածների պատճառով գրքում օգտագործուած գրականութեան ցանկ չկազմեցինք. նկատի ունեցանք նաեւ այն հանգամանքը, որ Մեսրոպ Մագիստրոսի գրքի տպագրութեան 1902 թ. յետոյ հրատարակուել են աստուածաշնչական բազմալեզու տեղեկատուներ, հանրագիտարաններ եւ մատենագիտութիւններ, որոնց օգտագործմամբ եւ ըստ հարկի գերմանական մեծ գրադարաններ այցելելով կարելի է ստուգել գրականութեան թերի նկարագրուած միաւորները:

[25] «Դա մեզ իրաւունք է տալիս հայկական վուլգատա անուանել կիլիկեան բնագիրը եւ այն չհամարել հնագոյն տարբերակի իսկական ներկայացուցիչ». տե՛ս ծնթ. 526*:

[26] Սա իրաւացիօրէն սխալ է համարել նաեւ՝ **Ն. Մառ**, Գրախօս., էջ 34-35:

Դիւրընկալալի դարձնելու նպատակով շարադրանքի հոծ՝ միայար գրուած թուարկումների միաւորները երբեմն սկսել ենք նոր պարբերութիւն-տողից:

Յովհաննէս վ. Զօհրապեանին գրեթէ որպէս կանոն յիշատակել է՝ «Զօհրապ» ձեւով. ամէնուր դարձրել ենք՝ «Զօհրապեան»:

Իր անձի եւ գործի մասին գրել է մէկ եզակիով (ես, իմ), մէկ յոգնակիով (մենք, մեր). միօրինակացել եւ բոլորը վերածել ենք գիտութեան մէջ աւելի ընդունուած յոգնակի ձեւի:

Գրքի ռուսերէն տարբերակում տողատակի ծանօթութիւնների համարներն ըստ էջերի են՝ ամէն էջում սկսելով 1ով, այստեղ համարակալումն ամբողջ գրքում միասնական-շարունակական է՝ 1-629:

Ռուսերէն տարբերակում բաւական շատ են ներքին՝ որեւէ էջի բուն շարադրանքում կամ տողատակին նախորդ կամ յաջորդ էջահամարների յղումները, որոնք արուել են գրաշարութեան ընթացքում: Այստեղ, բնականաբար, դրանք նոյնաբար վերարտադրելն անիմաստ էր, ուստի այդպիսիք վերածեցինք նշուած էջահամարներին վերաբերող ծանօթութիւնների յիշատակումների. օրինակ՝ ծնթ. 17ի մէջ կար՝ «(էջ 8 եւ 9 ծնթ. 1)», դարձրինք՝ «(տե՛ս վերը, ծնթ. 12)». այսպիսի դէպքերում պէտք է նկատի ունենալ, որ յղումը կարող է վերաբերուել տուեալ, ասենք՝ 12րդ ծանօթութեանն առընչուող շարադրանքի նախորդ եւ յաջորդ մասերին:

Գրքում (էջ Թ.) առկայ ցանկի վրիպակները մեծ մասամբ ռուսերէնի նկատմամբ մանր զանցառութիւններ են. սրանց մէջ կան նաեւ հայերէնին վերաբերողներ, բայց չնշուած-չնկատուած վրիպակները աւելի շատ են, խճողուն պատկեր առաջացնելուց խուսափելու նպատակով մեր նկատած բոլորն ուղղել ենք առանց յատուկ նշելու:

Գրքի սկզբում եւ վերջում՝ թղթէ կազմի ներքին երեսներին, կայ «Նոյն հեղինակի աշխատութիւնները» անունով մի ցանկ, որ այստեղ կրկնելու կարիք չկայ, որովհետեւ երկիցս հրատարակել ենք հեղինակի տպագիր գործերի մատենագիտութիւնը[27]*:*

«Բովանդակութիւն» ցանկը ռուսերէնում դրուած է հեղինակի «Առաջաբան»ից յետոյ. այդ ցանկն այստեղ դրել ենք գրքի սկզբում:

Ռուսերէն գրքի «Բովանդակութիւն» ցանկում (էջ Է-Թ.) բոլոր վերնագրերին յաջորդում են ենթավերնագրեր եւ էջահամարներ. բացի ձե-

---

[27] Տե՛ս **Գէորգ Տէր-Վարդանեան**, Մեսրոպ Մագիստրոս արքեպիսկոպոս Տէր-Մովսիսեան. Կենսագործունէութիւնը, «Ընդհանուր ցուցակ հայերէն ձեռագրաց», Մատենագիտութիւն, «Մագաղաթ» հրատ., Երեւան, 1999, էջ 113-165: Նաեւ՝ **Մեսրոպ Մագիստրոս Արքեպիսկոպոս Տէր-Մովսիսեան,** Յօդուածների ժողովածու, Հրատարակութեան պատրաստեց՝ Գէորգ Տէր-Վարդանեան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատ., Ս. Էջմիածին, 2010, էջ 691-698 եւ 725-727 (728 էջ):

ռագրերի նկարագրութիւններին վերաբերող երկու մասից, մնացած չարադրանքի մէջ ենթավերնագրերը չկան, աւելին՝ գրուածքն ըստ ենթավերնագրերի յստակ տրոհուած չէ, ուստի հայերէնի ցանկում ենթավերնագրերի էջահամարներ չենք դրել:

Հասկանալի է, որ լատինատառ եւ հայերէնին խորթ № նշանի փոխարէն միշտ գրել ենք համարժէք «Հմր»՝ համար համառօտումը:

Ռուսերէն գրքի վերջում Մագիստրոսը «Ցանկ յատուկ անունների» խորագրով ներկայացրել է միայն անձնանունները. այդ անուանացանկի թերի եւ անկատար լինելը նկատել է դերեւս Ն. Մառը[28]: Այստեղ, բնականաբար՝ հայերէն տարբերակի հիման վրայ, կազմուել են Անձնանունների եւ Տեղանունների առանձին ցանկեր:

Լատինատառ գրուած անունները նոյն ձեւով էլ արտայայտուած են ցանկերում. վերջիններիս մէջ Աստուածանչի գրքերի անունները (Ծնունդք, Ելք եւլն) չկան. պատմողական մասերից քաղուած են միայն հետեւեալները՝ Ասանէթ՝ ընդ Յովսեփայ, Եգր, Յոբ, Մանասէ թագաւոր, Սիրաք, Սողոմոն: Այսպէս արուել է ցանկերը չուռճացնելու նպատակով, այլապէս՝ Աստուածանչի բոլոր գրքերի անունների դիմաց պէտք է չարուէին ներկայ գրքի տասնեակ էջահամարներ, որ անիմաստ է: Միով բանիւ՝ սուրբգրական որեւէ հետազօտութեան նպատակ ունեցող ընթերցողը պէտք է այս գիրքն անպայման կարդայ ամբողջութեամբ:

ԳԷՈՐԳ ՏԷՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ

---

[28] **Ն. Մառ,** Գրախօս., էջ 41: Նոյն 41րդ էջում Մառը նկատել է նաեւ հետեւեալը. «Ամբողջ աշխատութեան մէջ ի. Մեսրոպը ձեռագրերը յղում է համառօտումներով՝ պայմանական տառերով, որոնց ցանկ արժէր կազմել, այլապէս գրքից օգտուելը շատ դժուար է»: Պայմանանշանների ասուած ցանկը չկազմեցինք, որովհետեւ. նկարագրութիւնների մէջ ձեռագրերի ներկայ համարների նշանակումն արդէն զգալիօրէն դիւրացնում է գրքի ընկալում-գործածութիւնը, եւ, վերջապէս՝ այդպիսի ցանկի դեր կարող է կատարել վերը յիշատակուած մեր յօդուածը՝ տե՛ս ծնթ. 16 («Էջմիածին» հանդէս, 2016, Հ$^{\text{պր}}$ Ժ., էջ 83-108):

ԹԱՐԳՄԱՆՉԻ ԿՈՂՄԻՑ

Հեղինակի իսկ խոստովանութեամբ՝ իր ռուսերէնն այնքան էլ հարթ ու համուտ չէ, այս պատճառով երբեմն՝

Կապակից եւ հարթ հայերէն շարադրանք ստանալու նպատակով, բնագրից եւ հեղինակի մտքից ու խօսքից չհեռանալով, փորձել ենք հայերէն դարձնել՝ անտեսելով ռուսերէնի շատ ձեւեր, դարձուածներ եւ շարահիւսական կաղապարներ (ինչ որ մէկի կամ ինչ որ բանի «կողմից», «հանդիսանում է», «ներկայացնում է» եւ հայերէնին խորթ նման այլ աւելորդաբանութիւններ):

Ռուսերէնը առատ է նաեւ հեղինակի հայերէն մտածողութեան արդիւնք՝ հայկաբանութիւններով եւ յաճախ հանդիպող ոճական ու հոմանիշային կրկնաբանութիւններով. դրանք նոյնպէս յաղթահարել ենք եւ փորձել հայերէն հարթ շարադրանք ստեղծել՝ ամենեւին չհեռանալով հեղինակի խօսքից (որի իմաստը յաճախ դժուարութեամբ է գուշակւում): Միով բանիւ, հնարաւոր բոլոր միջոցներով խուսափել ենք պատճէնային կամ ստրկական թարգմանութիւն անելուց, այլ կերպ՝ հեղինակի մտքերը ձգտել ենք վերարտադրել կանոնաւոր հայերէնով:

Անհարթութիւնների եւ սխալների լաւագոյն բնորոշում-ձեւակերպումն արել է Ն. Մառը «Եթէ ոչ բոլորը, ապա գրքի թերութիւնների զգալի մասը ես կարող եմ բացատրել նրանով, որ հեղինակը, անկասկած, շատ է շտապել, յատկապէս շտապել է տպագրել» (Ն. Մառ, Գրախօս., էջ 52): Հայերէն հատուածների ռուսերէն թարգմանութեան սխալների Մառի մատնանշումները (տե՛ս Ն. Մառ, Գրախօս. էջ 41-50) անտեսել ենք, քանի որ դրանք ըստ էութեան մեր խնդրին չեն վերաբերում:

Վկայակոչած հայերէն գրականութիւնից արուած եւ ռուսերէնով ներկայացրած քաղուածները, բնականաբար, ռուսերէնից չենք վերաթարգմանել, այլ գտել ենք (վրիպակների պատճառով՝ երբեմն զգալի դժուարութեամբ) յիշատակած հայերէն աղբիւրները եւ քաղուածներն արել ուղղակի նրանցից:

ՍՈՒՍԱՆՆԱ ՆԱՀԱՊԵՏԵԱՆ

ԱՌԱՋԱԲԱՆ

Հայ ժողովրդի մշակութային կեանքի ամենամեծ իրադարձութիւնը, քրիստոնէութիւն ընդունելուց յետոյ, անկասկած, Սուրբ Գրքի թարգմանութիւնն է: Միայն այդ թարգմանութեան ժամանակից, այսինքն՝ Քրիստոսի ծննդից յետոյ հինգերորդ հարիւրամեակի սկզբից է արձանագրւում հայ գրականութեան գոյութեան փաստը, եւ միայն այդ ժամանակից է պահպանուել մեր գրական յուշարձանների անընդմէջ շարքը: Հայոց համար Սուրբ Գիրքը եղել է ո՛չ միայն կրօնի աղբիւր, այլեւ՝ գրական ստեղծագործութեան առաջին եւ բարձրագոյն օրինակ: Բաւական է ասել, որ ամբողջ հայ գրականութիւնն իր սկզբնաւորման օրից եղել է կրօնական եւ այդպիսին էլ մնացել է, որպէսզի պարզաբանի Սուրբ Գրքի կարեւոր նշանակութիւնը: Բոլոր ժամանակների ամենանշանաւոր հայ մատենագիրները եղել են Աստուածաշնչով դաստիարակուած հոգեւորական անձինք. նրանք իրենց ստեղծագործութիւններում Սուրբ Գիրքն օրինակ են դարձրել եւ նրա բազմաթիւ վկայակոչումներով ճգտել են ցուցադրել նրա հետ իրենց ծանօթութեան հիմնաւորութիւնը:

Այդ իսկ պատճառով, նա, ով յանձն կառնի չարադրել Գիրք գրոցի թարգմանութեան պատմութիւը, որ հայերի համար ունեցել է անչափ կարեւոր կրօնական եւ մշակութային նշանակութիւն, պարտաւոր է խնդիրն ընդարձակ առաջադրել եւ ճգտել նրա այդպիսի գերագոյն դերը պարզաբանել ամբողջ ազգի մտաւոր զարգացման ընթացքի մէջ: Այդպիսի խնդրի իրագործումը, որչափ էլ այն գրաւիչ է, բաւական դժուար է, յատկապէս այժմ, երբ հայոց պատմութեան եւ մատենագրութեան ամենակարեւոր հարցերը դեռեւս բաւականաչափ մշակուած եւ բազմակողմանիօրէն լուսաբանուած չեն: Զգալով այդ դժուարութիւնը, ներկայ աշխատութեան մէջ կանգ ենք առել խնդրի միայն համեմատաբար հեշտ իրագործելի մասի վրայ: Բացի սրանից, այս գրքում իր պատկան տեղը չի գտել նաեւ խնդրի ոչ պակաս կարեւոր մի այլ կողմը՝ թարգմանուած բնագրի պահպանուածութեան հարցը, նաեւ այն, թէ ո՛ր հիմնօրինակից է թարգմանուել Սուրբ Գրքի այս կամ այն մասը: Վերջինիս մասին ունենք պատմիչների անյստակ, հակասական տեղեկութիւններ, ինչպէս նաեւ որոշ մասնագէտների կարծիքներ, որոնք գիտութեան վերջին խօսք չեն կարող համարուել, քանի դեռ բազմաթիւ ձեռագրերի մանրամասն համեմատու-

թիւնը նիւթ չի տայ դնելու համար այն հիմքը, որի վրայ կարող են կառուցուել հիմնաւորուած տեսութիւններ:

Մեր առաջիկայ խնդիրը սահմանափակւում է գլխաւորապէս բնագրին վերաբերուող ձեռագրական նիւթի ուսումնասիրութեամբ: Այս նիւթի վրայ ուշադրութիւն ենք դարձրել ո՛չ ինչ որ պատահական դէպքի չնորհիւ. 1892 թուականից զբաղուելով Էջմիածնի վանքի մատենադարանի եւ այլ գրապահոցների հայերէն ձեռագրերի ցուցակները կազմելով, յաճախ առիթ ենք ունեցել նկատելու, որ ցանկացած ստեղծագործութեան բազմաթիւ օրինակներ տարբեր տուեալներով՝ գրիչների յիշատակագրութիւնների տեսքով, բնագրերի տարբերութիւններով կամ պատահական նշումներով ի վիճակի են, ի մի գումարուելով, հարստացնելու եւ համալրելու մեր գրական տեղեկութիւնները տուեալ ստեղծագործութեան մասին, եւ ո՛չ հազուադէպ ձեւափոխելու աւանդաբար նրա մասին հաստատուած տեսակէտը:

Սկիզբը մեր կազմած ցուցակի, որ բաժանուած է ըստ մատենագրութեան հիմնական տեսակների, նուիրուած է Սուրբ Գրքի ձեռագրերի նկարագրութեանը: Երբ ձեռագրերի տարբեր ժամանակներում արուած նկարագրութիւնների առանձին թերթերը միացրինք եւ դրանք դասաւորեցինք ժամանակագրական կարգով, նիւթի զուտ վիճակագրական արդիւնքը մեզ լիովին հետաքրքրական եւ ուսանելի թուաց: Համոզուեցինք, որ այդ նիւթի անմիջական ուսումնասիրութեամբ կարող ենք պարզել Սուրբ Գրքի հայկական սկզբնական կանոնը եւ նրա աստիճանական աճեցումը, որոշել բնագրերի մէջ արուած լրացումների ժամանակը, պարզել, թէ ինչպէ՛ս եւ ե՛րբ է հայկական Ընկալեալ բնագիրն ստացել իր ներկայ տեսքը. հարցեր, որոնք առ այսօր գիտական գրականութեան մէջ անհրաժեշտ լուսաբանութիւն չեն ստացել: Այդ նիւթը մեզ հնարաւորութիւն է տալիս բաւարար որոշակիութեամբ յստակեցնելու բուն բնագրի վրայ առանձին ժամանակաշրջաններում արուած աշխատանքի բնոյթն ու նշանակութիւնը, եւ թարգմանութեան ամբողջ աշխատանքը չվերագրելու միայն հինգերորդ դարի առաջին թարգմանիչներին:

Խնդրի իրագործման համար ճգտել ենք ժողովել Աստուածաշնչի մեզ մատչելի եւ յայտնի բոլոր օրինակներին վերաբերող տեղեկութիւնները եւ այդ ամբողջը դասաւորել ժամանակագրական կարգով: Ոչ փոքր ուշադրութիւն ենք դարձրել նաեւ Սուրբ Գրքի կանոնի եւ անկանոն գրքերի բազմաթիւ ցանկերի վրայ, որը պէտք է ճգալի հերաքրքրութիւն առաջացնի, որովհետեւ այդպիսի բոլոր ցանկերը նոր են, իսկ նրանց հիմք-օրինակները կորսուած են:

Այդ նիւթի մշակման ժամանակ պէտք է հաշուի առնէինք հետեւեալ դժուարութիւնները. մինչեւ այս գիրքն սկսելը՝ մեր աշխատանքները վերաբերում էին պատմական մատենագրութեան հարցերին, եւ ո՛չ Աստուածաշնչի թարգմանութեանը վերաբերող հարցի, որին պէտք է ի նորոյ ծանօթանայինք. եւ, գլխաւորը՝ մեզ առաջադրուած էր աշխատութիւն գրել մի լեզուով, որին լիովին չենք տիրապետում: Վերջինիս դէպքում մեզ ցուցաբերուած սիրայօժար օգնութիւնը, նկատի ունենալով աշխատանքի իւրայատուկ բնոյթը, պէտք է սահմանափակուէր բացայայտ ոճական եւ քերականական մեղանչումների չակումներով, իսկ ամէնից էականը՝ մտքերի չարադրանքը պէտք է լոյս աշխարհ գար այն ձեւով, ինչ ձեւով մենք ի վիճակի էինք գրել դրանք: Ձգտումով ո՛չ միշտ են յաղթահարուում դժուարութիւնները. ուսերէնով մեր առաջին աշխատութիւնը լոյս ենք ընծայում ծանր սրտով՝ ապաւինելով մեր ընթերցողների բարեհաճ ներողամտութեանը:

Մեր աշխատութեան ընթացքում յաճախ առիթ ենք ունեցել յուշումների համար դիմելու զանազան անձանց, եւ է՛լ առաւել յաճախ՝ օգտուելու Կայսերական Գիտութիւնների ակադեմիայի, Համալսարանի եւ Հանրային գրադարանների գրադարանավարների ծառայութիւններից: Նրանց բոլորին յայտնում ենք մեր սրտագին երախտագիտութիւնը, մասնաւորապէս՝ Ասիական թանգարանի տնօրէն, ակադեմիկոս Կ. Գ. Զալեմանին եւ գրադարանավար՝ դոկտոր Օ. Է. Լեմմին: Մեր աշխատանքի իրագործումը կարող էր զգալիօրէն դժուարանալ առանց ուսումնական աջակցութեան Ս. Պետերբուրգի Հայկական եկեղեցիների խորհրդի, որ իր վրայ առաւ նրա կատարմանն ուղեկցած բոլոր ծախսերը, որի համար նրան յայտնում ենք մեր խորին երախտագիտութիւնը:

ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ

Ս. Պետերբուրգ
1902 թ. Սեպտեմբերի 14

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Ա. ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՌՕՏ ԱԿՆԱՐԿ

Աստուածաշնչի հայերէն թարգմանութեան պատմութիւնը սերտօրէն կապուած է հայերէնի այբուբենի գիւտի խնդրի հետ. միեւնոյն անձինք ստեղծել են այբուբենը եւ դրանից անմիջապէս յետոյ ձեռնարկել են Սուրբ Գրքի թարգմանութիւնը:

Այդպիսով, չօշափելով մի հարցը, չի կարելի լուսաբեամբ շրջանցել միւսը: Այդպիսի սերտ կապ են մատնանշում այդ նիւթերի մասին պատմող բոլոր հնագոյն աղբիւրները: Ուր խօսք կայ այբուբենի մասին, այնտեղ խօսւում է նաեւ Աստուածաշնչի թարգմանութեան մասին, ուր յիշատակւում է այբուբենի գիւտարար սուրբ Մեսրոպի անունը, այնտեղ նրա հետ անբաժան կապուած է նաեւ Աստուածաշնչի գլխաւոր թարգմանիչ սուրբ Սահակի անունը:

Այս հարցի ուսումնասիրութեան գլխաւոր աղբիւրները երեքն են. Կորիւն վարդապետի, Ղազար Փարպեցու եւ Մովսէս Խորենացու երկերը, ընդ որում՝ որոշ երկրորդական մանրամասներ կարելի է քաղել նաեւ այդ հարցի մասին գրած այլ հեղինակներից, սակայն դէպքերի մեծ մասում նրանք իրենց չարադրանքների հիմքը փոխ են առել վերոյիշեալ հեղինակների երկերից[1]*:*

Մեծ երջանկութիւն է, որ Կորիւն վարդապետի փոքրածաւալ գրքոյկը պահպանուել է հայ գրականութեան համար եւ նրա մէջ ծառայել է որ-

[1] **Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան** Պատմութիւն տիեզերական, երկրորդ տպագրութիւն, ի Ս. Պետերբուրգ, 1885, էջ 74-78 եւ 139. Եզնիկ վարդապետի մասին տե՛ս **Գարեգին վ. Զարբհանալեան,** Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց (դար Դ.-ԺԳ.), Վենետիկ, Մխիթ. տպարան, 1889, էջ 93 (այսուհետեւ՝ **Զարբհ.,** ՄՀԹՆ). Անանուն պատմիչ՝ **Զարբհ.,** ՄՀԹՆ, էջ 104. Ցայսմաւուրք՝ տե՛ս **Նորայր Բիւզանդացի**, Կորիւն վարդապետ եւ նորին թարգմանութիւնք. Գիրք Մակաբայեցւոց, Եւթաղ Ալեքսանդրացի, Ագաթանգեղոս եւ Փաւստոս Բուզանդ, Հանդերձ դիտողութեամբք, տեղեկութեամբք եւ լուսաբանութեամբք, Տփղիս, տպ. Մն. Մարտիրոսեանցի, 1900, էջ 383, ծնթ. 1 (այսուհետեւ՝ **Ն. Բիւզանդացի**, Կորիւն վարդապետ) եւ **Հ. Գ. Զարբհանալեան,** Ցաղագս թարգմանութեան Աստուածաշունչ տառից ի հայ լեզու.- «Բազմավէպ», 1851, էջ 232, ծնթ. 1 (ամբողջը՝ էջ 230-237). **Մեծին Վարդանայ Բարձրաբերդցւոյ** Պատմութիւն տիեզերական, Ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկուա, տպ. Լազարեան ճեմարանի, 1861, էջ 55 (Ժ., 217 էջ):

պէս իր բովանդակութեամբ անփոխարինելի աւանդ ու յայտնի դարաշրջանի գրական արգասիք:

Այն ամբողջութեամբ նուիրուած է սուրբ Մեսրոպի կենսագրութեանը, որ մատնանշում է հէնց վերնագիրը եւս՝ «Պատմութիւն վարուց եւ մահուան առն երանելւոյ սրբոյն Մեսրոպայ վարդապետի մերոյ Թարգմանչի»[2]: Ըստ վենետիկեան մխիթարեանների 1894 թ. վերջին հայերէն հրատարակութեան, այն զբաղեցնում է ընդամէնը քառածալ չափի (4°) 42 էջ. ընդ սմին՝ բուն բնագրի հետ, տողատակ-զուգահեռ հրատարակուած է նրա մի այլ խմբագրութիւնը, կամ աւելի ճշգրիտ՝ նրա համառօտ վերաշարադրանքը:

Առաջաբանում (էջ 7-13) հեղինակը հաղորդում է, որ ինքը երանելի այր Յովսէփ կաթողիկոսի հրամանով համարձակւում է նկարագրել նրա եւ իր ուսուցիչ սուրբ Մեսրոպի կեանքը, իսկ մեծ, աստուածահաճոյ իրադարձութիւնների եւ բարեպաշտ այրերի կեանքի նկարագրումը, մտածում է նա, ներչնչւում է ի վերուստ՝ Աստծուց: Հին եւ Նոր Կտակարանների վկայակոչումները կոչուած են ծառայելու հեղինակի այդ մտքի բացատրութեանը: Մնացած ամբողջը (էջ 13-48) նուիրուած է ուսուցչի կեանքի նկարագրութեանը: Խօսելով Մեսրոպի մասին, Կորիւնը չի մոռանում նաեւ սուրբ Սահակի գործերը, բայց դրանցից՝ միմիայն նրա գրական եւ ուսուցչական գործունէութեանը վերաբերողները:

Ընդհանրապէս Կորիւնը կարծես խուսափում է ընդհանուր բնոյթի պատմական փաստեր հաղորդելուց: Նրա ուսուցիչ Մեսրոպը բաւական չատ է ճանապարհորդում. նա մի քանի անգամ չրջագայում է Հայաստանում, լինում է Վրաստանի եւ Աղուանքի թագաւորների մօտ, Բիւզանդիայում, Ասորեստանում. թէ՛ Յունաց կայսրը, թէ՛ Վրաց եւ Աղուանից թագաւորները, թէ՛ իշխանները՝ բոլորը նրան գերազանց ընդունելութեան են արժանացնում, տալիս են իր այբուբենը տարածելու հնարաւորութիւն, իր բացած դպրոցները կառավարելու, աշակերտներ հաւաքելու եւ դաստիարակներ նշանակելու լիակատար իրաւունք:

Մեսրոպը ներկայացւում է որպէս գրչութեան տարածման գաղափարի մարմնաւորում. եւ ամէն ոք նրան խրախուսելն ու օգնելն իր պարտքն է համարում:

---

[2] **Կորիւն**, Պատմութիւն վարուց եւ մահուան առն երանելւոյ սրբոյն Մեսրոպայ վարդապետի մերոյ թարգմանչի, Վենետիկ, տպ. Ս. Ղազարի, 1894 (այսուհետեւ՝ **Կորիւն**). **B. Welte,** Coriuns Lebensbeschreibung des hl. Mesrop, Tübingen, 1841՝ ազատ եւ ոչ ճշգրիտ թարգմանութիւն է: **V. Langlois,** Collection des historiens anciens et modernes de l'Arménie, t. 2, Paris, 1869, էջ 1-15՝ Մ. Էմինի թարգմանութիւն համառօտ վերաշարադրանքից (այսուհետեւ՝ **V. Langlois,** Collection, t. 2):

Կորիւնն աննկատ անցնում է իր ժամանակի քաղաքական-հասարակական կեանքի կողքից. միայն մէկ անգամ, այն էլ չատ մակերեսօրէն, ցոյց է տալիս այդ կեանքի իսկական դէմքը՝ յիշատակելով այն մասին, որ Հայաստանի յունական մասի կառավարիչներն սկզբում խոչընդոտում էին եւ Մեսրոպին թոյլ չէին տալիս իր այբուբենի ուսուցումը ներդնել Հայաստանի՝ յունական տիրապետութեանը ենթակայ մասում:

Ահա այն բոլորը, ինչ Կորիւնի գրքից մենք գիտենք այն ժամանակի Հայաստանի եւ նրա հարեւան պետութիւնների քաղաքական կեանքի մասին[3]*:*

Ղազար Փարպեցին եւ Մովսէս Խորէնացին այս առումով լրացնում են Կորիւնին: Նրանք իրենց գրքերի որոշակի մասերում անդրադառնում են Հայոց պատմութեան մեծագոյն իրադարձութեանը՝ այբուբենի ստեղծմանը, այն էլ միայն մասամբ ինքնուրոյն, եւ անյայտ ու մեզ չհասած աղբիւրների հիման վրայ. նրանք երկուսն էլ օգտւում են Կորիւնի մատեանից՝ մէկը միւսից անկախ:

Փարպեցին իր «Հայոց պատմութեան»[4] *մէջ (էջ 33-49) Կորիւնի խօսքերով*[5] *հաղորդում է այբուբենի ստեղծման եւ Աստուածաշնչի թարգմանութեան պատմութիւնը, ըստ որում՝ աչխատում է ընդգծել սուրբ Սահակի դերը, ի դէպ՝ ինչպէս Կորիւնի մօտ գլխաւոր դերը կատարում է սուրբ Մեսրոպը: Բացի այդ, Փարպեցին բաւական մանրամասն նկարագրում է Գրիգոր Լուսաւորչի*[6] *փառապանծ տոհմի վերջին չառաւիղ սուրբ Սահակի քաղաքական եւ հոգեւոր գործունէութիւնը:*

Նրա եւ Խորենացու նկարագրութիւնների չնորհիւ մենք հնարաւորութիւն ենք ստանում ծանօթանալու Աստուածաշնչի թարգմանութեան ժամանակի Հայաստանում տիրող քաղաքական եւ հոգեւոր վիճակին, եւ հասկանալ այն պատճառները, որոնք սեփական գրչութեան ձեռքբերման անհրաժեշտութիւն էին առաջացրել:

---

[3] Ըստ Նորայրի՝ Կորիւնն իր ուսուցչի կենսագրութիւնը շարադրել է մինչեւ նրա մահը՝ 443-444 թթ. (**Ն. Բիւզանդացի,** Կորիւն վարդապետ, էջ 433), ըստ Գաթրճեանի՝ 445-450 թուականներին՝ **Հ. Յ. Գաթրճեան,** Հինգերորդ դարու չորս հայ պատմագրութեանց ժամանակները.- *Հանդէս Ամսօրեայ,* 1887, էջ 10 (ամբողջը՝ էջ 9-12):

[4] Մենք օգտագործում ենք 1873 թ. Վենետիկի հրատարակութիւնը. **Ղազարայ Փարպեցւոյ** Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան, Հրատ. Հ. **Ղ. Ալիշան,** Վենետիկ, Ս. Ղազար, 1873, ՌՅԻԲ., 11 չհ., 639 էջ: Կայ ֆրանսերէն երկու թարգմանութիւն. Abrégé de le vie politique et gueriere du prince Vahan le Mamigonian, par **Lazar de Pharbe,** Paris, 1843 եւ՝ **V. Langlois,** Collection, t. 2, էջ 253-268:

[5] «Ջոր կարգեաց գրելով ճշմարտապէս յառաջագրեալ այրն հոգեւոր Կորիւն. ուստի եւ մեր բազում անգամ կարդալով տեղեկացեալ հաւաստեաւ». **Ղազար Փարպեցի**, էջ 35:

[6] Ղազար Փարպեցին ըստ Գաթրճեանի իր պատմութիւնը գրել է 488-490 թուականներին.- **Հ. Յ. Գաթրճեան,** Հինգերորդ դարու չորս հայ պատմագրութեանց ժամանակները.- *Հանդէս Ամսօրեայ,* 1887, էջ 11-12:

Երրորդ աղբիւրը Մ. Խորենացին է: Նա իր «Հայոց պատմութիւն» գրքում հաղորդում է հայկական այբուբենի ստեղծման պատմութիւնը՝ ժամանակի պատմական այլ իրադարձութիւնների հետ միատեղ: Նա լայնօրէն օգտւում է Կորիւնի կենսագրականից, չնայած նրա անունը՝ որպէս հեղինակի, չի տալիս. շատ սեղմ վերարտադրում է Կորիւնի հաղորդած համարեա բոլոր դրական փաստերը, միայ թէ ո՛չ իր աղբիւրի չարադրանքի կարգով, եւ ձգտում է իւրաքանչիւր փաստ զուգակցել պատմական որեւէ իրադարձութեան[7]*:*

Յիշատակուած պատմիչների միջեւ յարաբերակցութեան բացատրութեան համար կարող ենք ասել հետեւեալը. Կորիւնը սկզբնաղբիւրն է այն ամէնի, ինչը վերաբերում է աբուբենի ստեղծմանը եւ Աստուածաշնչի թարգմանութեանը. նա ճանաչուած է որպէս պատմուած իրադարձութիւնների ժամանակակից. հետեւաբար, նրա հաղորդած փաստերն արժանահաւատ են, բայց ո՛չ բացարձակապէս: Դա մասամբ պայմանաւորուած է նրանով, որ նա ամենակարեւոր փաստերի վրայ բաւական մակերեսօրէն է կանգ առնում:

Ղազար Փարպեցին ինքնուրոյն նշանակութիւն չունի, նա, ինչպէս արդէն ասուել է, կրկնում է Կորիւնի պատմածը, որին լիովին վստահում է եւ որին շատ լաւ է ճանաչում: Աստուածաշնչի թարգմանութեան վերաբերեալ նա նոր տուեալներ չունի, իսկ այբուբենի մասին հետաքրքիր է այն, որ ըստ նրա չարադրանքի՝ այբուբենի վերջին խմբագրումը պատկանել է Սահակին: Նոյնը չի կարելի ասել Խորենացու մասին. նա, առաւել քան Փարպեցին, օգտւում է Կորիւնից: Խորենացին Կորիւնի յայտնած ոչ մի փաստ չի մոռացել, փոխարէնը թէ՛ այբուբենի եւ թէ՛ Աստուածաշնչի թարգմանութեան մասին նա աւելացնում է նաեւ իր սեփականը:

Կորիւնի Վարքը պահպանուել է երկու տարբերակով՝ ընդարձակ եւ համառօտ: Դրանցից ո՞րն է սկզբնականը: Նորայրը եւ Բ. Սարգիսեանը, հակառակ Լանգլուայի եւ Էմինի, արդարացիօրէն սկզբնական են համարում ընդարձակ բնագիրը, որից կազմուել է համառօտ օրինակը, մասամբ Մ. Խորենացու Պատմութեան ազդեցութեամբ[8]*:*

---

[7] **Моисей Хоренскій,** Исторія Арменіи, новый переводъ Н. О. Эмина, Москва, 1893, XXXVI, 323 стр.: Այս հարցում նրա Պատմութեան մեզ հետաքրքրող մասերը երրորդ գրքի հետեւեալ գլուխներն են. խէ., ծբ., ծգ., ծդ., ծէ., ծը., կ. եւ կա.: * Հայերէնում գործածել ենք հետեւեալ հրատարակութիւնը՝ **Մովսիսի Խորենացւոյ** Պատմութիւն հայոց, Աշխատութեամբ Մ. Աբեղեան եւ Ս. Յարութիւնեան, Ծախիւք տեառն Սուքիասեայ արքեպիսկոպոսի Պարզեանց, Տփխիս, տպ. Մնացականց Մարտիրոսեանցի, 1913, ԿԳ., 396 էջ (այսուհետեւ՝ Մովսէս Խորենացի):

[8] **V. Langlois,** Collection, t. 2, էջ 9-16. Ագաթանգեղոս եւ իւր բազմադարեան գաղտնիքն, Քննադատութիւն Հ. Բարսեղ Վ. Սարգիսեանի, ի Մխիթ. ուխտէն, Վենետիկ,

Ղ. Փարպեցին այբուբենի ստեղծման մասին ունի մի մեծ հատուած (էջ 39-40), որը բառացիորէն ունի նաեւ Մ. Խորենացին (Գ. ծգ.): Միայն վերջերս վերջնականապէս ապացուցուեց, որ այդ հատուածը Ղ. Փարպեցու պատմութեան մէջ է մտել 1794 թուականին՝ Մ. Խորենացու Պատմութեան 1695 թուականին տպագրուած օրինակից[9]*:*

Մովսէս Խորենացու դիրքը խիստ խարխլուել է. նրա պատմութեան գրուելու ժամանակի աւանդական տարբերակի կողմնակիցներից այժմ շատ քչերն են մնացել. բայց նաեւ նրանք, որոնք վիճարկում են աւանդութիւնը, դեռեւս չեն կարողանում ճշգրիտ եզրակացութեան գալ, եւ հինգերորդ դարից հեռանալով, տատանւում են եօթներորդ եւ իններորդ դարերի միջեւ[10]*:*

Ձեռնարկելով Աստուածաշնչի թարգմանութեան հարցի քննութիւնը, առաւել յստակութեան համար այն տրոհենք մասերի՝ առաջին հերթին այն կարգով, որով նրանք հանդիպում են Կորիւնի մօտ եւ հերթով հետազօտենք դրանք՝ ըստ բոլոր աղբիւրների:

1. Հայերը Ե. դարի սկզբին ասորի հոգեւորական Աբէլի միջնորդութեամբ ասորի Դանիէլ եպիսկոպոսից[11] *ստանում են հայոց այբուբենը: Սուրբ Սահակը եւ Մեսրոպը որոշ ժամանակ այն սովորեցնում են աշակերտներին եւ յանգում են դանիէլեան այդ այբուբենի անբաւարարու-*

Սբ. Ղազար, 1890, էջ 109 (ԺԴ., 416 էջ) եւ **Ն. Բիւզանդացի,** Կորիւն վարդապետ, էջ 397-401:

[9] Հատուածների նոյնականութիւնը վաղուց էր նկատուել, եւ ըստ էական յատկանիշների ճանաչուել է, որ հատուածը Ղազար Փարպեցու Պատմութեան մէջ է առնուած Մովսէս Խորենացու Պատմութիւնից - Ս. Պարոնեանը «Երկրագունտ» պարբերականում՝ 1844-45, էջ 492 եւ նրա աշխատութիւնից օգտուած Իսահակ Ցարութիւնեանը իր «Հայոց գիրը» (Թիֆլիս, տպ. Մ. Շարաձէի, 1892, էջ 231-234) գրքում: Սակայն այդ ենթադրութեան անառարկելիութիւնը վերջնականապէս ապացուցուած է Գ. Տէր-Մկրտչեանի յօդուածով՝ Ղազար Փարպեցու ձեռագրերը.- «Արարատ», 1901, ԺԱ-ԺԲ., էջ 542-549: Նա ուսումնասիրել է Փարպեցու ձեռագրերը, Մովսէս Խորենացու հին հրատարակութիւնները եւ ճշգրիտ որոշել է այն ժամանակը, երբ փոխառնուել է յիշեալ հատուածը:

[10] Վերջին տասնամեակում Մովսէս Խորենացու պատմութեան ժամանակին վերաբերող գրականութիւնը չափազանց ստուարացել է: Առաւել յարմար է այս խնդրի վերաբերմամբ առաջնորդուել **Գր. Խալաթեանցի** Армянский эпос в истории М. Хоренского, Москва, 1896 գրքով, էջ 1-36. եւ մեր հրատարակած՝ Սոկրատ Սքոլաստիկոսի Պատմութեան (Վաղարշապատ, 1897) նախաբանով: Այսուհանդերձ, նշուած աշխատութիւններից յետոյ բազմաթիւ նոր յօդուածներ են լոյս տեսել:

[11] Իսահակ Ցարութիւնեանը իր՝ «Հայոց գրերը» բաւական ծաւալուն աշխատութիւնը նուիրել է հարցի ուսումնասիրութեանը՝ բոլոր մանրամասնութիւններով, լայնօրէն օգտուելով հայ եւ եւրոպացի մասնագէտների աշխատանքներից: Ըստ նրա եզրակացութեան (էջ 356)՝ այբուբենի ստեղծման ժամանակը Ք. յ. 404-406 թթ. են, հետեւաբար այդ ժամանակին է վերաբերում նաեւ Աստուածաշնչի հայերէն թարգմանութեան սկիզբը:

թեան վերաբերեալ եզրակացութեան: Դանիէլի նշանագրերն անբաւարար եղան հայոց լեզուի բոլոր հնչիւնական իւրայատկութիւններն արտայայտելու համար (Կորիւն, 17, Խորենացի, Գ., ծգ., Փարպեցի, 38-39):

2. Մեսրոպն անձամբ գնացել է Ասորեստան, Դանիէլի մօտ՝ այբուբենի լրացումը նրանից ստանալու յոյսով, բայց որեւէ նոր բան չի ստացել: Այնժամ նա ինքն է յօրինում նոր այբուբեն կամ լրացնում է հինը (Կորիւն, 18-19, Խորենացի, Գ., ծգ.):

3. Այբուբենի ստեղծումից անմիջապէս յետոյ սուրբ Մեսրոպը երկու աշակերտների՝ Յովսէփ Պաղնացու եւ Յովհան Եկեղեցացու համագործակցութեամբ, ձեռնամուխ է լինում Աստուածաշնչի թարգմանութեանը՝ սկսելով Սողոմոնի Առակների գրքից (Կորիւն, 19, Խորենացի, Գ., ծգ.):

4. Մեսրոպի հայրենիք վերադառնալուց յետոյ, Սահակը եւ նա աշխատանքը բաժանում են իրենց միջեւ. առաջինը հետեւում է ընդհանուր ընթացքին եւ գլխաւորապէս Աստուածաշնչի եւ այլ մատեանների թարգմանութեամբ, իսկ Մեսրոպին վիճակւում է, եթէ կարելի է այսպէս արտայայտուել՝ «Հայաստանում աստիճանաբար բացուող բոլոր դպրոցների տեսուչի» պաշտօնը: Նա մշտապէս չրջում է ամբողջ երկրով, դպրոցներ է բացում եւ հետեւում է նրանց ճիշտ ընթացքին (Կորիւն, 22, 23-25, Խորենացի, Գ., ծգ. եւ Փարպեցի, 43-48):

5. Իր ուղեւորութիւնների ընթացքում սուրբ Մեսրոպն այցելում է Վրաստան եւ Աղուանք. տեղի բնակչութեան խնդրանքով եւ ցանկութեամբ նա այբուբեն է ստեղծում նաեւ այդ երկու ժողովուրդների համար (Կորիւն, 25, 29 եւ 32, Խորենացի, Գ. ծգ.):

6. Սահակն ու Մեսրոպը գիտակցելով իրենց իմացութիւնների անբաւարար լինելը, իրենց աշակերտներից ընտրում են ամենաընդունակներին եւ ուղարկում են Ասորիք ու Յունաստան՝ լեզուներ սովորելու եւ լաւագոյն երկեր թարգմանելու համար: Աշակերտները Բիւզանդիայից վերադառնալով, բերում են Աստուածաշնչի ճշգրիտ օրինակներ, Եղեսիայի եւ Նիկիայի ժողովների եկեղեցական կանոնները եւ այլ գրքեր: Սուրբ Սահակը Եզնիկի հետ միասին սրբագրում են առաջին անկատար եւ փութանակի արուած թարգմանութիւնը՝ ըստ նոր բերուած ճշգրիտ օրինակների (Կորիւն, 27, 33, Խորենացի, Գ., կ., կա. եւ կբ., Փարպեցի, 41, 42):

Այս բոլոր վեց իրողութիւնների մասին պատմիչները պատմում են մշուշոտ, կցկտուր. ինչ որ բան ասելով բոլոր դէպքերի մասին, նրանք ամէնուր բաց են թողում ոչ միայն մանրամասներ, այլեւ շատ այնպիսի բաներ, որոնք ժամակակակից պատմիչի աչքից չպիտի վրիպէին: Այդպիսով, մենք չգիտենք թէ ի՞նչ էին Դանիէլի նշանագրերը, որտեղի՞ց էին վերցուած եւ ինչքա՞ն էր նրանց քանակը: Լրացրե՞լ է արդեօք Մեսրոպը

նրանց պակասները, թէ՞ բոլորովին նոր այբուբեն է ստեղծել: Ինչո՞ւ է Աստուածաշնչի թարգմանութիւնը նա սկսել Սողոմոնի Առակներից եւ ո՞ր լեզուից՝ ասորերէնի՞ց, թէ՞ յունարէնից: Վերջին կասկածը վերաբերւում է նաեւ Սահակի առաջին փութանակի թարգմանութեանը: Առ այսօր բացարձակ բաց է մնում նաեւ վրացական եւ աղուանական այբուբենների՝ Մաշտոցի գիւտի հարցը:

Վերը բերուած վեց իրադրութիւններից երրորդը, չորրորդը եւ վեցերորդը վերաբերում են Աստուածաշնչի թարգմանութեան հարցին, եւ այդ պատճառով էլ գրերի հարցերը մի կողմ թողնելով, զբաղուենք Աստուածաշնչի թարգմանութեան հարցով: Նախ՝ բառացի բերենք գլխաւոր աղբիւր Կորիւնի՝ սրան վերաբերուող բոլոր տեղիները, եւ համադրենք միւս երկու պատմիչների հաղորդումների հետ:

ա) «...ի թարգմանութիւն դառնային հանդերձ արամբք երկուք, աշակերտօքն իւրովք. որոյ առաջնոյն Յովհան անուն կոչէին, յԵկեղեցեաց գաւառէն, եւ երկրորդին Յովսէփ անուն՝ ի Պաղանական տանէն: Եւ եղեալ սկիզբն նախ յԱռակացն Սողոմոնի, որ ի սկզբանն իսկ ծանօթս իմաստութեանն ընծայեցուցանէ լինել. ասելով, եթէ՝ «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ. իմանալ զբանս հանճարոյ» (Կորիւն, 19):

Սա մի՛ակ տեղն է, որտեղ ճշգրիտ անուանւում են թարգմանիչները եւ նրանց թարգմանած գրքերը: Փարպեցին այդ մասին ոչինչ չի յայտնում, իսկ Խորենացին (Բ., ծգ.) համարեա բառացի կրկնում է Կորիւնին, բայց եւ աւելացնում է «Եւ իսկոյն ի թարգմանութիւն ձեռն արկեալ, խորհրդաբար սկսեալ յԱռակացն, բովանդակելով զքսան եւ զերկու յայտնիսն, եւ զՆոր կտակս յեղու ի հայ բան»:

բ) «...Եւ ի ձեռն արկեալ այնուհետեւ աստուածագործ մշակութեամբ զաւետարանական արուեստն՝ ի թարգմանել ի գրել եւ յուսուցանել» (Կորիւն, 22):

Սա վերաբերւում է հաւասարապէս՝ Սահակին եւ Մեսրոպին:

գ) «Յայնմ ժամանակի երանելի եւ ցանկալի աչխարհս Հայոց անպայման սքանչելի լինէր: Յորում անկարծ ուրեմն օրէնսուսոյց Մովսէս՝ մարգարէական դասուն, եւ յառաջադէմն Պաւղոս՝ բովանդակ առաքելական գնդովն, հանդերձ աչխարհակեցոյց Աւետարանաւն Քրիստոսի, միանգամայն եկեալ հասեալ ի ձեռն երկուց հաւասարելոցն՝ հայաբարբառք, հայերէնախօսք գտան» (Կորիւն, 22):

Այս մասը կրկնակի կարեւոր է. նրանով կարծես թէ Կորիւնն այլաբանութեամբ հաղորդում է, թէ՝ Աստուածաշնչի ո՞ր գրքերն են թարգմանուել հայերէն. Մովսէսի Հնգամատեանը եւ Հին Կտակարանի մարգարէները, Պօղոսի թղթերը, առաքելոց թղթերը, չորս Աւետարանները՝ Նոր

Կտակարանից. այն նաեւ ցոյց է տալիս, թէ Աստուածաշնչի թարգմանութիւնը հաւասար կերպով վերագրւում է «երկուց հաւասարելոցն»[12]*:*

դ) «Յետ այնորիկ ուշ եղեալ երկոցունց երանելեացն՝ զիւրեանց ազգին զղպրութիւն առաւել յարգել եւ դիւրացուցանել: Ձեռն ի գործ արկանէր ի թարգմանել եւ ի գրել մեծն Իսահակ՝ ըստ յառաջագոյն սովորութեանն» (Կորիւն, 32):

Այստեղ խօսքը Աստուածաշնչի մասին չէ, այլ այն մասին, որ թարգմանիչները եռանդով աշխատել են տարբեր դպրոցների բացման եւ եկեղեցական մատեանների թարգմանութեան ուղղութեամբ:

Թարգմանիչների աշակերտներ Յովսէփ Պաղանացին, Եզնիկ Կողբացին, Ղեւոնդ Վանանդեցին, մեր հեղինակ Կորիւնը եւ ուրիշներ 434 թուականին վերադառնում են Բիւզանդիայից, որտեղ նրանք բոլորը միասեղ հաւաքուել էին, տարբեր ժամանակներում իրենց ուսուցիչների կողմից ուղարկուած լինելով ասորերէն եւ յունարէն սովորելու համար: Եզնիկը եւ Յովսէփը սեփական նախաձեռնութեամբ, հակառակ իրենց ուսուցիչների կամքի եւ ցուցումների, Ասորիքից գնացել էին Բիւզանդիա: Կորիւնի պատմութեան մէջ մենք չենք գտնում օտարութեան մէջ թարգմանիչների գտնուելու ժամանակամիջոցը, ինչպէս նաեւ տեղեկութիւն նրանց վերադառնալու տարուայ մասին: Ընդհանրապէս ընդունուած է հաւաստի համարել Խորենացու այն հաղորդումը, որ վերադարձին աշակերտներն իրենց ուսուցիչներին գտան Աշտիշատի եկեղեցական ժողովում, այսինքն՝ վերադարձի ժամանակը վերաբերում է 434 թուականին (Մովսէս Խորենացի, Գ. կա.)[13]*:*

ե) «Որոյ չետ այնորիկ հաստատուն օրինակօք աստուածատուր գրոցն, եւ բազում շնորհագիր հարց չետ այնր աւանդութեամբք, եւ Նիկիական եւ Եփեսոսական կանոնօք, գային երեւելով աշխարհին Հայոց եւ առաջի դնէին հարցն զբերեալ կտակարանսն եկեղեցւոյ սրբոյ:

Իսկ երանելոյն Սահակայ զեկեղեցական գրոց գումարութիւնն՝ կանխաւ յունական բարբառոյն ի հայերէն դարձուացեալ, եւ բազում եւս զհայրապետաց սրբոց զճշմարիտ գիմաստութիւնն. դարձեալ չետ այնորիկ առեալ հանդերձ Երգնակաւ՝ զյառաջագոյն զյանկարծագիւտ զփոթանակի զթարգմանութիւնս հաստատէր օրինակովք բերելովք եւ շատ եւս մեկնութիւն գրոց թարգմանէին» (Կորիւն, էջ 33-34):

Բերուած այս տեղիներով սպառւում է այն ամէնը, որ Կորիւնն ու-

[12] Կորիւնը գիտէր նաեւ ուրիշ գրքեր եւ նշում է դրանք: Օրինակ նա յղում է Յոբի գիրքը (էջ 10), Սաղմոսները (էջ 42, 45) եւ Գործք սուրբ առաքելոցը (էջ 11, 12):

[13] **Մովսէս Խորենացի,** Գ. կա. «Ապա եկեալ թարգմանիչքն մեր, զորոց զանուանսն յիշատակեցաք յառաջագոյն՝ գտին զմեծն Սահակ եւ զՄեսրոպ յԱշտիշատ Տարաւնոյ». **Ն. Բիւզանդացի**, Կորիւն վարդապետ, էջ 4:

նի Աստուածաշնչի թարգմանութեան վերաբերեալ, որ արել են Սահակը, Մեսրոպը եւ նրանց աշակերտները: Ամփոփելով ամբողջ ասուածը, կարող ենք անել հետեւեալ եզրակացութիւնները. թարգանուած եւ հայերէն լեզուով ու այբուբենով գրուածը առաջինը եղել է Առակաց գիրքը. այն թարգմանել են Մեսրոպը եւ նրա աշակերտներ Յովհանը եւ Յովսէփը. անյայտ է, թէ ո՛ր լեզուից: Դրանից յետոյ Սահակն ու Մեսրոպը թարգմանել են Աստուածաշնչի մնացեալ ամբողջ մասը եւ եկեղեցական չատ գրքեր:

Մեսրոպի թարգմանութեան հիմք-բնագրերի մասին ոչինչ չի հաղորդուում, իսկ Սահակի մասին ասւում է, որ նա ունէր յունարէն օրինակներ, սակայն այդ օրինակները թերութիւններ ունէին եւ թարգմանչին չէին բաւարարում: Աչակերտները վերադառնալով Յունաստանից, բերել էին Աստուածաշնչի «ճշմարիտ եւ հաստատուն օրինակներ», եւ այս անգամ արդէն Սահակը, առանց Մեսրոպի, Եզնիկ Կողբացու գործակցութեամբ, կրկին վերանայեց ամբողջ աչխատանքը:

Ո՞վ է եղել առաջին թարգմանիչը հարցում Փարպեցին տարբերւում է Կորիւնից: Նրա չարադրանքից մենք տեսնում ենք, որ այն բանից յետոյ, երբ ստեղծեցին այբուբենը, սկսեցին դպրոցներ բացել. «Բայց տարակուսեալք կային յանչքութենէ գրոց սրբոց. քանզի ոչ գոյին դեռ եւս հայերէն լսողութեամբ սուրբ կրակարանք եկեղեցւոյ» (Ղ. Փարպեցի, էջ 43):

Այն ժամանակ արքան, Մեսրոպը եւ ժողովրդի ներկայացուցիչները դրմեցին Սահակին՝ որպէս յունարէն լեզուի լաւագոյն գիտակի, եւ խնդրեցին նրան Աստուածաչունչը յունարէնից թարգմանել հայերէն: Սահակը հաճոյքով կատարեց նրանց խնդրանքը. «...ջանալով զցայգ եւ զցերեկ՝ թարգմանեաց զկտակարանս ամենայն՝ զխօսեցեալս ճշմարիտ մարգարէիւք ի Սուրբ Հոգւոյն. եւ հաստատեալ կնքեաց երջանիկ առաքելովքն զ Նորոց կտակարանացն...» (Ղազար Փարպեցի, էջ 46-47):

Կորիւնի հետ Փարպեցու այսպիսի անճայնութիւնը կարելի է բացատրել հետեւեալ ձեւով. Փարպեցին ամբողջ պատմութիւնը հաղորդում է չատ սեղմ. նա գիտէր, որ ըստ յունարէն ճշգրիտ օրինակների Աստուածաշնչի վերջին խմբագրութիւնը եւ վերանայումը Սահակն է արել: Մանրամասնութիւնների մէջ չմտնելով, նա հաղորդել է աչխատանքի վերջնական արդիւնքը: Այդ պատճառով նա թարգմանութեան առաջին հիմքի մասին յիչատակում չունի: Սահակը թարգմանել է մէկ անգամ, այն էլ ուղիղ յունարէնից: Նա նաեւ լռում է Մեսրոպի համագործակցութեան մասին, այնպէս որ Փարպեցին Կորիւնին ոչնչով չի հակասում:

Այլ կերպ է հարցը Խորենացու հետ, թէկուզ նա ընդհանուր գծերով կրկնում է Կորիւնին: Նախ՝ այնտեղ, ուր խօսքը Առակաց գրքի՝ Մեսրոպի եւ նրա աչակերտների արած թարգմանութեան մասին է, նա մատնա-

նշում է. «բովանդակելով զքսան եւ զերկու յայտնիսն, եւ զնոր Կտակս յեղու ի հայ բան» (Խորենացի, Գ. ծգ.), երկրորդ, որտեղ Կորիւնը խօսում է Սահակի եւ Մեսրոպի ընդհանուր թարգմանութեան մասին, այնտեղ ըստ Խորենացու՝ աշխատում է միայն Սահակը. Մեսրոպը «գտանէ զմեծն Սահակ թարգմանութեան պարապեալ յասորւոյն, յոչ լինելոյ յունի» (Խոր., Գ., գլ. ծգ.), եւ, երրորդ՝ առաջին թարգմանութեան երկրորդ վերանայման ժամանակ Խորենացու պատումը չատ ձեւափոխուած է. Կոստանդնուպոլսից աշակերտների բերած գրքերը «առեալ մեծին Սահակայ եւ Մեսրոպայ՝ դարձեալ թարգմանեցին զմի անգամ թարգմանեալն փութանակի, հանդերձ նոքօք վերստին յօրինեալ նորոգմամբ» (Խորենացի, Գ., կա.):

Մտքերի ընթացքը, Խորենացու ամբողջ շարադրանքը համապատասխանում է այն ամէնին, ինչ հաղորդում է Կորիւնը. Խորենացու եւ Կորիւնի հաղորդումների տարբերութիւնը կայանում է ոչ միայն նրանում, որ ըստ Կորիւնի հիմք-բնագիրն առաջին թարգմանութեան ժամանակ յունարէնն էր, իսկ ըստ Խորենացու՝ ասորերէնը, այլեւ՝ Խորենացու ոչ յստակ ձեւակերպման մէջ. «բովանդակելով զքսան եւ զերկու յայտնիսն, եւ զնոր Կտակս յեղու ի հայ բան»:

Իրականում, Խորենացին որտեղի՞ց գիտէր, որ առաջին թարգմանութիւնը կատարուել է ասորերէնից: Ինչ վերաբերում է առաջին թարգմանութեան լեզուին, ապա այն Մովսէս Խորենացու յօրինուածքը չէ, նա կամ ինչ որ աղբիւր է ունեցել կամ էլ օգտուել է գոյութիւն ունեցող աւանդութիւնից: Կոնիբէրի, Ռոբինսոնի, Մառի աշխատանքները եւ վերջին ժամանակներս յայտնաբերուած Մնացորդաց գրքերի հնագոյն տարբերակը անառարկելիօրէն ապացուցում են, որ իսկապէս հայերէն առաջին տարբերակի հիմքում ընկած էր ասորերէն բնագիրը: Կորիւնը չգիտես ինչու այդ մասին լռում է, իսկ Ղազար Փարպեցին հազիւ թէ յիշատակէր այդ մասին. նա որեւէ մանրամասնի մէջ չի մտել: Խորենացու հաղորդումների հաստատում կարող է լինել նաեւ Մեսրոպի Յայսմաւուրային վարքը: Այնտեղ ուղղակի ասւում է, որ Սուրբ Մեսրոպը, եւ ոչ թէ աշակերտները, Կոստանդնուպոլսում Ատիկոս պատրիարքից ստացել է Սուրբ Գրքի ճշգրիտ օրինակը եւ այն բերել է Հայաստան՝ սուրբ Սահակին: Այնտեղ ինքը եւ Սահակը «զնախաթարգմանեալ Գիրսն յԱսորւոց վերստին ուղղեցին»:

«Մեսրոպ խնդրեաց ի հայրապետէն զճշմարտաբան գիրս մեծի եկեղեցւոյն առ ի թարգմանել... Եւ հայրապետն Ատտիկոս ետ նմա զաստուածային գիրսն ի թարգմանութիւն... Եւ այնպիսի ճոխ կարգօք եւ մեծարանօք ել Մեսրոպ յԸստմպօլայ եւ դարձաւ ի Հայս, առ սուրբ հայրապետն Իսահակ... Այլ եւ զնախաթարգմանեալ Գիրսն յԱսորոց վերստին ուղղեցին»[14]:

[14] Յայսմաւուրք, Մեհեկի ԺԳ. [եւ փետրուարի ԺԹ. (19)] (Ապրիլ): Սուրբ Մեսրոպը

Մնում է ասել եւս մի քանի խօսք այն մասին, թէ Մեսրոպը թարգմանե՞լ է 22 գիրք եւ Նոր Կտակարանը: Այդ մասին մենք կարդում ենք Խորենացու ծգ. գլխում: Նախադասութեան ճշմարիտ եւ բառացի նշանակութիւնը պարզ է եւ որեւէ կասկածի ենթակայ չէ. իսկ այն այսպիսին է. Մեսրոպը միայնակ, առանց Սահակի մասնակցութեան, թարգմանել է ամբողջ Աստուածաշունչը: Սրա հակառակը հազիւ թէ հնարաւոր լինի առարկել, եթէ ինքը՝ պատմիչը նոյն գրքի յաջորդ՝ ծգ. գլխում, կարծես թէ մոռանալով սեփական խօսքերը, չհաղորդէր, թէ Մեսրոպը վերադառնալով Աղուանքից, Սահակին գտաւ զբաղուած ասորերէնից Սուրբ Գրքի թարգմանութեամբ՝ չունենալով յունարէն բնագիրը: Աչքի զարնուող այսպիսի անյարիրութիւնը Խորենացուն վերագրելը դժուար է. նա չէր կարող միեւնոյն աշխատանքը ծգ. գլխում համարել աւարտուած, եւ նոյն գրքի ծգ. գլխում՝ անաւարտ: Այստեղ, թւում է, թէ հնարաւոր է մէկ բացատրութիւն, այն է՝ առաջինի դէպքում, այսինքն՝ ծգ. գլխում բացայայտ ընդմիջարկութիւն է՝ «բովանդակելով զբսաւ եւ զերկու յայտնիսն, եւ զնոր Կտակս յեղու ի հայ բաս»., եւ եթէ այս բառերը նշուած ծգ. գլխից ջնջենք, ապա իրականում ոչ միայն ոչինչ չի փոխուի, այլ ընդհակառակը՝ միայն այս բառերի հանումից յետոյ իսկական տրամաբանական կապ է ստացւում գլխի երկրորդ կէսի եւ նախորդի միջեւ: Բայց կայ մեր ենթադրութիւնը հաստատող մէկ այլ հիմնաւորում եւս: Խորենացին այս հատուածը փոխառել է Կորիւնից (տե՛ս վերը՝ ծնթ. 12ից առաջ): Կորիւնը, հաղորդելով Առակաց գրքի թարգմանութեան մասին, շարունակում է. «Որ եւ գրեցաւ ձեռամբն այնորիկ գրչի (այսինքն՝ Հռոփանոսի - [Մ. Տ-Մ.]), հանդերձ ուսուցանելով զմանկունս գրիչս նմին դպրութեան»: Նոյնը գտնում ենք Խորենացու մօտ... «Եւ իսկոյն ի թարգմանութիւն ձեռն արկեալ, խորհրդաբար սկսեալ յԱռակացն (բովանդակելով զբսան եւ զերկու յայտնիսն, եւ զնոր Կտակս յեղու ի հայ բան) - նա եւ աշակերտք նորա Յոհան Եկեղեցացին եւ Յովսէփ Պաղնացի, միանգամայն եւ զարուեստ գրչութեան ուսուցանել տալով իւրոց մանկագոյն աշակերտացն». նշանակում է փակագծում տեղաւորուած բառերը իսկական կամ վաւերական չեն[15]*:*

աշակերտներից առաջ է մտել Կոստանդնուպոլիս, եւ բնական է մտածելը, որ նա առանց Աստուածաշնչի օրինակի չի վերադարձել: Նրա ուղեւորութեան մասին գրում են Կորիւնը, էջ 26-29 եւ Մովսէս Խորենացին, Գ., ծէ.: * Տե՛ս Գիրք որ կոչի Այսմաւուրք, որ պարունակէ յինքեան զճառս վարուց սրբոց եւ զնաճատակութիւնս երանելի մարտիրոսացս եւ վկայից Քրիստոսի Աստուծոյ մերոյ... ի տպարանի Գրիգոր դպրի Մարսուանեցւոյ, Կ. Պոլիս, 1730, էջ 379:

[15] Մեզ թւում է, որ կարող ենք նշել այդ ընդմիջարկութեան աղբիւրը. ձեռագիր Աստուածաշնչերի մէջ կայ Հերոնիմոսի յայտնի Prologus galeatus [Նախադրութիւն սաղաւարտեալ] առաջաբանի թարգմանութիւնը, որ սկսւում է այս բառերով. «Վասն զի

Այնուհետեւ, ըստ Կորիւնի՝ երկրորդ վերանայման եւ սրբագրման ժամանակ աշխատել է միայն Սահակը՝ Եղնիկի հետ, իսկ ըստ Խորենացու՝ Մեսրոպը երկրորդ անգամ եւս աշխատանքում Սահակից անբաժան է մնում: Նրանցից ո՞վ է ճիշտը, դժուար լուծելի, բայց նաեւ ոչ այնքան կարեւոր հարց է:

Վերն ասուած ամբողջի հիման վրայ մենք ճշմարտութիւնից հեռու չենք լինի, եթէ Աստուածաշնչի թարգմանութեան պատմութիւնը՝ ըստ գլխաւոր աղբիւրների հաղորդման, համադրենք հետեւեալ կերպ. Մեսրոպը Ասորիքում ստեղծեց այբուբենը, եւ որպէս առաջին գործ երկու աշակերտների՝ Յովսէփի եւ Յովհանի հետ, ձեռնարկեց Աստուածաշնչի թարգմանութիւնը եւ անյայտ պատճառով սկսեց Առակաց գրքից: Նոր գիւտի լուրն արագ տարածուեց ամբողջ Հայաստանում: Պատմութիւնը մեզ ասում է, որ ողջ ժողովուրդը թագաւորի եւ կաթողիկոսի գլխաւորութեամբ ցնծութեամբ դիմաւորեցին Ասորիքից վերադարձող առաջին թարգմանիչներին: Ունենալով այբուբեն, անյապաղ գործի անցան, այսինքն՝ բացեցին դպրոցներ՝ նոր այբուբենը պատանեկութեանը սովորեցնելու համար, եւ սկսեցին փութով իրենց մայրենի լեզուի թարգմանել Սուրբ Գրքերը եւ եկեղեցու յոյն եւ ասորի հայրերի այլ ստեղծագործութիւններ: Բայց գործի ղեկավարներ Սահակը եւ Մեսրոպը հիանալի նկատել էին թարգմանական գործի ձեռնարկման թերութիւնները. չկային բաւարար պատրաստուած մարդիկ եւ Սուրբ Գրքի ճշգրիտ օրինակներ: Այդ նպատակի համար իրենց աշակերտների միջից նրանք ընտրեցին ամենաընդունակներին եւ նրանց ուղարկեցին լեզուներ սովորելու, մի մասին ասորական, միւսներին՝ յունական քաղաքներ:

Այդ աշակերտները, երկար ժամանակ այնտեղ մնալով, ձեռք բերեցին ոչ միայն ընդարձակ եւ լաւ իմացութիւններ, այլեւ Սուրբ Գրոց եւ այլ գրքերի ճշգրիտ օրինակներ. վերադառնալով հայրենիք, նրանք իրենց ուսուցիչներին հնարաւորութիւն տուեցին հիմնովին վերանայման ենթարկելու Աստուածաշնչի սկզբնական հապճեպ թարգմանութիւնը եւ մանրակրկիտ ստուգելու այն:

Եթէ ոչ ամբողջ թարգմանութիւնը, ապա նրա մի մասն արուել է ասորերէն բնագրից: Ըստ որում՝ աշխատանքում հաւասար մասնակցութիւն են ունեցել Սահակը եւ Մեսրոպը՝ մի քանի աշակերտների հետ: Երկրորդ անգամ վերանայել է միայն Սահակը՝ Եղնիկի գործակցութեամբ, եւ անկասկած թարգմանել է այն գրքերը, որոնք չեն եղել սկզբնական թարգմանութեան հիմք ծառայած առաջին օրինակների մէջ:

յերկուս գիրս առ ի Հեբրայեցւոցն պատմութիւնս բաժանելոյ, զի քսան եւ երկու նշանագրովք վարէին Եբրայեցիք ասորոց եւ քաղդէացւոց լեզուն նշանակեալ». սա ինչ որ ընդօրինակողի գաղափար է տուել ներմուծելու քննուող միջարկութիւնը:

Այս փաստերի ճշգրտութեան եւ պատմական հաւաստիութեան մէջ հազիւ թէ կասկածներ լինեն. չի կարելի ասել, թէ պատմիչները նրանցում ինչ որ բան յօրինել են, աւելացրել կամ ձեւափոխել են: Փոխարէնը անհերքելի փաստ կարող ենք համարել նաեւ այն, որ պատմիչները, յատկապէս Կորիւնը, գիտակցաբար, կամ էլ որովհետեւ հարկ չեն համարել, չատ բանների մասին լռել են: Նրանց գրական հաղորդումների մէջ մենք նկատում ենք անյստակութիւններ եւ թերասացութիւններ, եւ առանց ուշադրութեան չենք կարող թողնել որոշ ենթադրութիւններ, որոնք բխում են այս անյստակութիւններից: Ե. դարի սկզբում չի եղել հայ գրականութիւն, հայերէն այբուբեն, գոյութիւն չունէր Աստուածաշնչի մասերի կամ ամբողջութեան թարգմանութիւն, հետեւաբար չի եղել մշակուած լեզու, եւ յանկարծ կարծես ձեռքի կախարդական շարժումով, ինչ որ 20-30 տարում այս բոլորը ստացւում է եւ հասնում գերագոյն կատարելութեան: Յամենայն դէպս այդպիսին է տպաւորութիւնը, եթէ բաւարարուենք նրանով, ինչ որ հաղորդում է հայ գրականութեան սկզբնական դարաշրջանի աւանդական պատմութիւնը: Կարո՞ղ է արդեօք այն բաւարարել մեզ:

Գրական տեղեկութիւնների հիման վրայ ամբողջ Աստուածաշնչի թարգմանութեան սկզբից մինչեւ աւարտն ընկած միջակայքն ընդգրկում է մօտաւորապէս 408ից՝ մինչեւ 436 թուականի ժամանակը, այսինքն՝ սուրբ Սահակի եւ Մեսրոպի մահուանից մի քանի տարի առաջ (առաջինը մահացել է 436 թ., երկրորդը՝ 438 թ.)[16]*: Երկու չատ կարեւոր պահ բոլորովին չեն չօշափուել աւանդական գրականութեան մէջ:*

1) Աստուածաշնչի ո՞ր գրքերն են թարգմանուել, եւ ո՞րն է եղել Ե. հարիւրամեակում հայոց ընդունած կանոնը[17]*.*

2) Արդեօ՞ք հայոց գրերի գիւտից առաջ գոյութիւն չեն ունեցել Աստուածաշնչի մասնակի թարգմանութիւններ՝ յունարէն կամ ասորերէն այբուբեններով տառադարձութեամբ կամ էլ բանաւոր փոխանցմամբ:

Առաջին հարցի համար մենք ունենք ձեռագիր նիւթ, եկեղեցական ժողովների որոշումներ եւ Ե. դարի հեղինակների հաղորդումներ. այս հարցի պատասխանը մենք կտանք նշուած բոլոր նիւթերի հետազօտութիւնից յետոյ: Իսկ երկրորդ հարցի մասին այն ամէնը, որ կասենք, հնարաւոր է, որ հիմնուած լինի գլխաւորապէս տարբեր դատողութիւնների վրայ, սակայն մատենագրական տուեալները չատ քիչ են. եւ այն ինչ առկայ է, չատ խճճուած է եւ անյստակ:

Մեր բոլոր աղբիւրներն ասում են, որ սուրբ Մեսրոպը Հայոց արքա-

---

[16] **Ն. Բիւզանդացի,** Կորիւն վարդապետ, էջ 386-390:

[17] Վերոբերեալ ենթադրութիւնները (տե՛ս վերը, ծնթ. 12) որեւէ ճշգրիտ եզրակացութիւն անելու հնարաւորութիւն չեն տալիս:

յի պալատում ծառայել է որպէս քարտուղար, եւ չգոհանալով այդպիսի աշխարհական պաշտօնով, լքել է պալատը, հագել վանականի փարաջան, միացել է գործակից-ճգնաւորներին եւ սկսել քարոզել Աստուածոյ խօսքը: Գողթն գաւառում նա հանդիպել է բնակիչների, որոնք չարունակում էին խարխափել հեթանոսութեան խորը խաւարում: Նրանց ուսուցանելով քրիստոնէական կրօնի սկզբունքները, մշտապէս բախուել է դժուարութիւնների (Կորիւն, 16), որովհետեւ Սուրբ Գիրքը մայրենի լեզուով չկար, եւ դժուար էր գտնել լաւ քարոզիչներ, ասորերէնի կամ յունարէնի գիտակներ (Ղազար Փարպեցի, 35. Մովսէս Խորենացի. Գ., խէ.): Ահա ինքն էլ մտադրուեց ստեղծել հայերէն տառեր եւ թարգմանել Աստուածաշունչը, որում էլ նրան օգնեցին Սահակ հայրապետը եւ Վռամշապուհ արքան: Հետեւաբար, աղբիւրներն ուղղակի հաստատում են, որ այբուբենից առաջ չի եղել նաեւ Աստուածաշունչ: Բայց մենք կարո՞ղ ենք արդեօք բաւարարուել հարցի այդպիսի արտաքուստ պարզ թուացող լուծմամբ: Ընդհանուր պատմութիւնից յայտնի է, թէ որտեղ ի յայտ է եկել քրիստոնէական կրօնը, այնտեղ առաջացել է ազգային գրչութեան պահանջարկ. այդպէս եղել է գոթերի մօտ, այդպէս եղել է սլաւոնների մօտ: Ուլֆիլան՝ գոթերի քարոզիչը, իր քարոզի յաջողութեան համար ստեղծեց գոթական այբուբենը եւ գոթերէնի թարգմանեց Սուրբ Գիրքը. սուրբ Կիւրեղը որոշելով Մորաւիայում սլաւոնների մէջ քարոզել աստուածային խօսքը, ամէնից առաջ կազմեց սլաւոներէն լեզուի այբուբենը եւ թարգմանեց սուրբ Աւետարանը: Քրիստոնէութիւնն առանց Սուրբ Գրքի անմասն է: Դ. դարի սկզբին Գրիգոր Լուսաւորիչը՝ Հայոց մեծ մարտիրոսը, Տրդատ Թագաւորին, նախարարներին եւ ժողովրդի մեծամասնութեանը դարձրեց քրիստոնեայ: Բայց դրանից շատ առաջ ժողովրդի մէջ նոր կրօնի շատ հետեւորդներ կային: Հայաստանում գործում էին ասորի քարոզիչները. մի ժամանակ յայտնի գնոստիկ Բարդածանը[18] ապաստան գտաւ Հայաստանի սահմաններում[19], արքայական պալատում քրիստոնեայ յոյները շատ կային. ինքը՝ Գրիգոր Լուսաւորիչը եւ նրա ժառանգները իրենց հոգեւոր կրթութիւնն ստացել են Յունաստանում: Բայց ի՞նչ կարող էին անել նրանք ժողովրդի համար՝ իմանալով յունարէն եւ ասորերէն, որոնք հասկանալի չէին ամբողջ հայ ժողովրդին: Եկեղեցու այդ քարոզիչները

[18] **Otto Bardenhewer,** Geschichte der altkirchlechen Literatur, Erster Band, Freiburg im Breisgau, 1902, էջ 337 (այսուհետեւ՝ Bardenhewer, Geschichte): «Als Caracalla 216 oder 217 Edessa eroberte, floh Bardesanes nach Armenien, wo er sich jedoch vergeblich bemühte, Schüler zu gewinnen»՝ «Երբ Կարակալան 216 կամ 217 թ. գրաւում է Եդեսիան, Բարդծանը փախչում է Հայաստան, որտեղ նա, այնուհետեւ, հետեւորդներ ձեռք բերելու ապարդիւն ջանքեր է թափում»:

[19] **Մովսէս Խորենացի,** Բ., գլուխ կե.:

եւ հովիւներն ինչպէ՞ս կարող էին նոր հաւատն արմատաւորել հեթանոսների սրտերում՝ հնարաւորութիւն չունենալով նրանց հետ խօսելու հասկանալի լեզուով:

Մեզ թւում է, որ բուն պատմական գրականութեան մէջ կան թոյլ, անյստակ ակնարկներ, որոնք մատնանշում են հիմնաւորուածութիւնն այսպիսի ենթադրութեան, թէ դեռեւս հայերէն այբուբենի գիւտից շատ առաջ հայերէն լեզուով եղել են Աստուածաշնչի գրքերը: Սկզբնաղբիւր Կորիւնը չի հերքում այդ. նա դրա մասին լռում է, եւ ինչպէս մենք կտեսնենք, անուղղակի ձեւով անգամ հաստատում է այդպիսի ենթադրութիւնը, իսկ Ղազար Փարպեցին ուղղակի ժխտում է: Նա պատմում է, թէ մինչեւ այբուբենի գիւտը հայերն օգտւում էին բացառապէս աստրերէն լեզուից, որ վանքերում եւ Հայաստանի բոլոր եկեղեցիներում եկեղեցական պաշտամունքն անց էր կացւում աստրերէն լեզուով, եւ որ հայ երիտասարդութիւնը շատ ժամանակ, ծախսեր եւ աշխատանք էր անում՝ ուղեւորուելով հեռաւոր Ասորիք, ասորական լեզուն եւ գրականութիւնն ուսումնասիրելու համար (Ղազար Փարպեցի, էջ 35, 36): Ջնայած դրան, Փարպեցու որոշակի հաղորդումը չի կարելի հաւաստի համարել՝ մի քանի պատճառով: Առաջին՝ Փարպեցին գրել է գրերի գիւտից համարեա հարիւր տարի անց, եւ ինչպէս իր իսկ խօսքերի հիման վրայ մենք ցոյց ենք տուել՝ աղբիւր է ունեցել Կորիւնին, իսկ Կորիւնը ոչինչ չի գրում եկեղեցական պաշտամունքի մէջ աստրերէնի գործածման մասին: Երկրորդ՝ երկու գլխաւոր գործիչները՝ Սահակը եւ Մեսրոպը Փարպեցու խօսքերով գիտէին յունարէն, եւ ո՛չ թէ աստրերէն, եթէ եկեղեցական պաշտամունքը հայերէնով չի եղել, այլ օտար լեզուով, ինչո՞ւ այս երկու հովիւները եւ նրանց նախորդողները՝ սկսած Գրիգոր Լուսաւորչից, որոնք իրենց կրթութիւնն ստանում էին յունական քաղաքներում, իսկ հայրապետական աստիճանի ձեռնադրութիւնը կեսարիայում՝ յոյն արքեպիսկոպոսից. յամենայն դէպս այդպէս է եղել մինչեւ սուրբ Սահակի հայր Ներսէս հայրապետը. ինչո՞ւ էին նրանք նախընտրութիւնը յունարէնի համեմատ տալիս աստրերէնին: Այս պատճառով կարելի է աւելի կարեւոր նշանակութիւն տալ Մովսէս Խորենացու խօսքերին, որ այն ժամանակ, երբ հայերը գիր չունէին, «յունականաւն վարէին եկեղեցւոյ կարգք» (Գ. լգ.):

Փարպեցու պատմածում, որտեղ խօսւում է միայն աստրերէնի եւ աստրիների մասին, նկատելի է հեղինակի բացայայտ ջղայնութիւնը ամբողջ ասորականի նկատմամբ, եւ նրա վերաբերմունքը նրանց նկատմամբ իր վրայ կրում է անձնական թշնամանքի կնիքը, իսկ նրա հաղորդումը միտումնաւոր գունաւորուած յօրինուածքի բնոյթ ունի: Հայաստանում Դ. եւ Ե. հարիւրամեակներում կային երկու հակադիր կուսակցութիւններ.

ասորական ազդեցութեան, ասորական գրականութեան կողմնակիցներ, եւ հելենասէր ուղղութեան կողմնակիցներ: Քանի դեռ այս երկակիութիւնը վերաբերում էր միայն անձնական համոզմունքներին եւ չէր արտայայտւում հասարակական կեանքում, այդ կուսակցականութիւնը չատ բարի եւ արգասաբեր ազդեցութիւն ունէր. հայերը լուսաւորուած նոր քրիստոնէական հաւատքի վսեմացնող եւ վեհացնող լոյսով, առանց որեւէ մոլուցքի, նոր քրիստոնէական հաւատքով լուսաւորուելու համար հաւասար ձեւով դիմեցին իրենց ի Քրիստոս աւագ եղբայրներին՝ ասորիներին եւ յոյներին: Հայկական եկեղեցիներում հայերի հետ հաւասար ծառայում էին յոյները եւ ասորիները. Աստուածաշնչի թարգմանութիւնից յետոյ հայերը թարգմանեցին ասորի եւ յոյն եկեղեցական հայրերի լաւագոյն ստեղծագործութիւնները: Բայց ասորիների նկատմամբ հայերի վերաբերմունքը փոխուեց, երբ նրանց մէջ գտնուեցին մարդիկ, ինչպէս Բրքիչոն եւ Շմուէլը, որոնք հինգերորդ դարի սկզբին դարձան զէնք՝ պարսկական իշխանութեան ձեռքին, որը նպատակադրուեց Հայաստանում տապալելու Արշակունեաց հայկական արքայատոհմը եւ արմատախիլ անելու քրիստոնէական կրօնը: Սահակ կաթողիկոսը, օգտուելով իր ունեցած մեծ ազդեցութիւնից, սպառնալի վտանգը վերացնելու ջանքեր գործադրեց, իսկ պարսկական կառավարութիւնը ի վիճակի չլինելով իր կողմը դարձնել անյողդողդ հովուապետին, գահընկէց արեց նրան եւ նշուած երկու ասորիներին միմեանց ետեւից Հայաստանում նշանակեց կաթողիկոսներ:

Այս փաստերը մեզ հաղորդում է Ղազար Փարպեցին իր Պատմութեան մէջ (էջ 72-75): Երկու ասորիների նման վարմունքից յետոյ յարաբերութիւնները անխուսափելիօրէն պէտք է փոխուէին եւ կրէին բորբոքուածութեան եւ թշնամանքի սուր եւ կրքոտ բնոյթ, ինչի մասին ակնարկներ կան Ղազար Փարպեցու պատմութեան մէջ: Հայ երիտասարդութեան՝ կամաւոր ասորերէն սովորելը Փարպեցու պատմութեան մէջ մեծ ցասումով է ներկայացւում, եւ երբ ստեղծուեց հայոց այբուբենը, այնժամ հայերն զգացին, որ «որպէս ի խաւարէն, յասորի տանջանացն զերծեալք, ի լոյս՝ խնդային» (Ղազար Փարպեցի, էջ 42): Փարպեցու խօսքով զգուանքն ասորերէնի նկատմամբ ժողովրդի մէջ այնքան մեծ էր, որ բոլորը Սահակին խնդրում էին «թարգմանել զԱստուածաշունչ կտակարանս ի յոյն լեզուէ ի հայ բարբառս» (43-44), կարծես թէ խնդրողների համար միեւնոյնը չէր, թէ որ լեզուից կլինի թարգմանութիւնը, միայն թէ Սուրբ Գիրքը ունենան մայրենի լեզուով: Ղազար Փարպեցու կանխակալութիւնը եւ հելենասիրութիւնը երեւում է նաեւ նրա այն պատմութիւնից, որ Ասորիքում Մեսրոպի ստեղծած այբուբենը Սահակը ենթարկել է վերանայման եւ յունական գրերին համապատասխանեցման: Ասորերէնի

ազդեցութեան եւ տարածման մասին Փարպեցու բոլոր հաղորդումները մեզ առիթ են տալիս ենթադրելու, որ նա թանձրացրել եւ մեծացրել է այդ ազդեցութեան աստիճանը մասամբ նրա համար, որ դրանով ցոյց տայ, թէ որքան բարձր է գնահատուել այդ ճնշումից ազատուելը: Նրա այդպիսի չափազանցումներից կարելի է համարել նաեւ նրա այն հաղորդումը, որ թագաւորական պալատին կից, արքայական հրահանգների եւ որոշումների համար, յունարէնին հաւասար կիրառուել է միայն ասորերէնը, եւ, որ եկեղեցիներում պաշտամունքը կատարուում էր բացառապէս ասորերէնով[20] (Ղազար Փարպեցի, 34): Այս գիտակցումն էլ Փարպեցու կարծիքով եղել է գլխաւոր պատճառը, որ Մեսրոպին դրդել է հայոց համար այբուբեն ստեղծելու: Կորիւնը դրա մասին չի ասում: Նրա խօսքերով՝ Մեսրոպը, քարոզելով Գողթն գաւառում, աւելի եւ աւելի է համոզուել, որ հեթանոսութիւնը ժողովրդի մէջ ուժեղ է, տխրել, ցաւել է եւ եկել այն համոզման, որ վիշտը կարելի է ամոքել միայն ժողովրդին մայրենի, հասկանալի լեզուով կրթութիւն տալով: Փարպեցին համարեա բառացի կրկնում է Կորիւնի այս բացատրութիւնը եւ դրան աւելացնում է նաեւ իր իսկ յօրինած՝ ասորերէնի ճնշումը: Դրա համար էլ մեզ թւում է, որ մենք կարող ենք նշանակութիւն չտալ՝ մինչեւ հայերէն գրերի գիւտը հայկական եկեղեցիներում բացառապէս ասորերէն կիրառելու մասին նրա հաղորդմանը, առաւել եւս, որ միւս աղբիւրը՝ Մովսէս Խորենացին, հաղորդում է, որ եկեղեցիներում պաշտամունքն արւում էր ոչ թէ ասորերէնով, այլ՝ յունարէնով, ինչպէս նաեւ՝ որ արքայական պալատում ընդունուած էր պարսկերէնը, եւ ոչ թէ ասորերէնը կամ յունարէնը:

Յետագայի պատմիչների այսպիսի հակասականութիւնը եւ ժամանակակից լռութիւնը մեզ իրաւունք են տալիս եզրակացնելու, որ առաջին երկուսը Կորիւնի գրքում չգտնելով որոշակի տեղեկութիւններ այն մասին, թէ ինչպիսին է եղել սեփական գիր չունեցող հայ եկեղեցու սպասաւորների վիճակը, եւ իմանալով, որ նրանք եկեղեցական պաշտամունքի մէջ չէին կարող գրքերը բացառել, բնականաբար եզրակացութիւններ են արել՝ մէկը յօգուտ յունարէնի եւ ասորերէնի կիրառման, իսկ միւսը՝ յօգուտ պարսկերէնի եւ յունարէնի: Հազիւ թէ կարելի է վիճարկել, որ նրանք երկուսն էլ ընդհանրապէս իրաւացի են եղել. մեզ համար կարեւոր է միայն այն, որ նրանք աղբիւրներում ուղղակի տեղեկութիւն չեն ունեցել, եւ իրենք, կամ էլ հնարաւոր է՝ աւանդութեան հիման վրայ, գրել են ասորերէնի կամ էլ յունարէնի գործածութեան մասին: Այլ խօսքերով, նրանք հայոց գրերի ստեղծմանը նախորդած հնագոյն պատմութեան մա-

[20] Ըստ Մովսէս Խորենացու (Գ. ծբ.)՝ պալատում գործածուող լեզուն եւ գիրը պարսկականն էր:

սին գիտէին մեզանից ոչ աւելի, եւ մենք իրաւունք ունենք նրանց հանդիստ թողնել, լոյսի առկայծումներ փնտրել այն խաւարի մէջ, որի մասին ուղղակի տեղեկութիւններ չկան նոյն աղբիւրների մէջ:

Երբ հայերն ստացան Դանիէլի գրերը, «Որոց ուսեալ, եւ թեւածելով ընդ նոսա տղայոց զամս սակաւս» (Մովսէս Խորենացի, Գ., գլ. ծբ.), իսկ Կորիւնը հաղորդում է, որ դա չարունակուեց երկու տարի: Ի՞նչ էին սովորեցնում տղաներին, մի՞թէ ամբողջ ժամանակ մի՛միայն այբբենարանը: Արդեօք փորձեր չե՞ն արուել ինչ որ բան ինքնուրոյն յօրինելու եւ թարգմանելու այդ թէկուզ անկատար այբուբենով: Այդպիսի անգործութիւնն անբացատրելի կլիներ, եթէ ուշադրութիւն դարձնենք, որ ե՛ւ Մեսրոպը, ե՛ւ Սահակը, ե՛ւ արքան՝ բոլորն ուզում էին այբուբեն ունենալ, որպէսզի Աստուածաշունչը թարգմանեն մայրենի լեզուի: Դանիէլեան այբուբենի փորձարկումից երկու տարի անց եկան այն համոզման, որ այն պիտանի չէ, իսկ այդպիսի համոզմունքի եկան ո՛չ առանց գրական փորձերի:

Կորիւնը պատմում է, որ արքան, հայրապետը եւ ժողովրդի ներկայացուցիչները Ռահ գետի ափին «բարբառաւք ցնծութեան եւ երգաւք հոգեւորաւք» (Կորիւն, էջ 45) դիմաւորեցին ամբողջական այբուբենով եւ թարգմանուած Առակաց գրքով Ասորիքից վերադարձող Մեսրոպին: Վախճանուած Սահակի դին ամբոխն ուղեկցում էր Տարօն գաւառի Աշտիշատ գիւղ, որտեղ թաղուած էին Սահակի նախնիները, եւ երգում էր «սաղմոսիւք եւ աւրհնութեամբ եւ հոգեւոր բարբառով». նոյնպիսի եկեղեցական երթ էր ուղեկցում սուրբ Մեսրոպի հուղարկաւորութեան թափորին դէպի Այրարատեան գաւառի Օշական գիւղ՝ երգելով «սաղմոսիւք եւ աւրհնութեամբ եւ հոգեւոր ցնծութեամբք» (Կորիւն, էջ 45)[21]*:*

Կամ էլ պէտք է ընդունել, որ հայերն իրենց հոգեւոր երգերը երգել են հայերէն, ինչպէս առաջին, նոյնպէս եւ յաջորդ երկու դէպքերում, կամ՝ եթէ առաջին անգամ երգում էին օտար, իսկ յետոյ՝ սեփական լեզուով, այդ դէպքում մի՞թէ պատմիչը դրա մասին ոչինչ չէր ասի:

Մեսրոպը Սուրբ Գրոց թարգմանութիւնն սկսում է Առակաց գրքից: Առակաց գիրքը, ինչպէս հնագոյն ժամանակներում, այնպէս էլ այժմ, հայոց եկեղեցում մեծ յարգ ունէր. այն, Եսայիի մարգարէութեան եւ Հնգամատեանի հետ միասին, եկեղեցում միւս գրքերից առաւել շատ էր կարդացւում՝ ինչպէս ապացուցում են տասներորդ եւ տասնմէկերորդ դարերի ճառընտիրները: Բայց եթէ նրա վրայ նայենք նոյնիսկ այս զուտ արտաքին եւ ձեւական կողմից, ապա հազիւ թէ կարելի լինի նրա նշանակութիւնը համեմատել Նոր Կտակարանի եւ Սաղմոսների գրքերի հետ.

[21] **Կորիւն**, էջ 21. «Եւ բարբառաւք ցնծութեան եւ երգաւք հոգեւորաւք», էջ 45. «Սաղմոսիւք եւ աւրհնութեամբ, եւ հոգեւոր ցնծութեամբք»:

այն երբեք եկեղեցական ծէսի մէջ Նոր Կտակարանի եւ Սաղմոսարանի հետ հաւասար տեղ չի գրաւել:

Կարող է պատահել սովորական պատահականութիւն է, որ Մեսրոպը առաւել կարեւոր գրքերը թողնելով, ձեռնարկեց նուազ կարեւորների թարգմանութիւնը: Այդպիսին է Ֆ. Կոնիբէրի բացատրութիւնը[22]*. Նա ասում է, թէ երբ Մեսրոպն Ասորիքում ստեղծեց այբուբենը եւ ձեռնարկեց Աստուածաշնչի թարգմանութիւնը, նրա ձեռքն է ընկել Աստուածաշնչի երկհատոր ձեռագրի այն մասը, որն սկսւում է Առակաց գրքից, այդ իսկ պատճառով այնտեղից է սկսել իր թարգմանութիւնը: Սրամիտ, բայց բոլորովին չհիմնաւորուած բացատրութիւն է: Աւելի ճիշտ չէ՞ր լինի ենթադրելը, որ արդէն գոյութիւն ունէր Սաղմոսների թարգմանութիւնը, եւ Մեսրոպը, իմանալով այդ մասին, ձեռնարկեց թարգմանելու Սաղմոսներին յաջորդող գրքերը:*

Ինչպէս պատմում է Խորենացին, Մերուժան Արծրունին, որ յաւակնում էր հայոց Արշակունիների գահին, յենուելով պարսկական հովանաւորութեան վրայ, «Եւ զամենայն կարգ քրիստոնէութեան ջանայր խափանել: Զեպիսկոպոսս եւ զքահանայս հարկաց պատճառաւ կապեալ՝ յերկիրն Պարսից տայր տանել: Եւ զորս միանգամ գիրս գտանէր՝ այրէր, եւ հրաման տայր մի՛ ուսանել զդպրութիւն յունարէն, այլ զպարսիկ, եւ մի՛ ոք իշխեսցէ յոյն խօսել կամ թարգմանել»[23]*: Այս պատումի համար Խորենացու աղբիւրը կարելի է համարել Փ. Բուզանդին. նա առաջինն է հաղորդում Մերուժանի չարագործութիւնների, նրա՝ քրիստոնէութիւնը հետապնդելու մասին. միայն թէ յունարէն մատեանների ոչնչացման մասին ոչինչ չի հաղորդում*[24]*: Կամ Խորենացին այդ հաղորդումը վերցրել է այլ աղբիւրից, կամ էլ նրան նոյնպէս թուացել է, թէ հայերը Դ. դարում չէին կարող բաւարարուել առանց բնագրերի թարգմանութիւնների: Եթէ Խորենացին աղբիւրներ է ունեցել, ապա համարձակ չի լինի պնդելը, թէ պարսիկների կողմից ամենայն յունականի այդպիսի հետապնդումը եւ հակառակը, հայերին ստիպել է ունենալ սեփական այբուբեն եւ ազատուել օտար կախուածութիւնից*[25]*:*

---

[22] **F. C. Conybeare,** Armenian Version of the Old testament.- ի՝ A Dictionary of the Bible, Dealing with its Language, Literature and Contents, Including the Biblical Theology, Edited by James Hastings, M. A., D. D., Volume I, A- Feasts, Edinburgh, 1898 (864 p.), էջ 153 (յօդուածը՝ էջ 151-153. այսուհետեւ՝ A Dictionary of the Bible, Volume I):

[23] **Մովսէս Խորենացի**, Գ. գլուխ լզ.:

[24] **Փաւստոսի Բուզանդացւոյ** Պատմութիւն Հայոց, Սանկտ Պետերբուրգ, 1883, Դ., ձը., ձթ., էջ 149-152:

[25] **Մովսէս Խորենացին** հաղորդում է. «ի Յունաց մասնէն... վիճակեալք յաթոռն Կեսա-

Այդ այբուբենը նրանք փնտրեցին եւ գտան պարսիկների եւ յոյների համեմատ չէզոք ասորի ժողովրդի մօտ: Խորենացին ուղղակի վկայութիւն ունի այն պատճառների վերաբերեալ, ըստ որոնց գրերի համար հայերը դիմեցին ասորիներին, յամենայն դէպս իրեն այդպէս են բացատրել Թէոդոս կայսրը եւ Ատիկոս պատրիարքը[26]*: Նրանք նամակներում ուղղակիօրէն կշտամբում էին Սահակին, որ նա թողնելով յոյներին, նոր գրերի համար դիմել է Ասորիք, եւ սկզբնական շրջանում չէին ուզում նրանց թոյլատրել սովորեցնել Հայաստանի յունական մասի երիտասարդներին*[27]*: Նշանակում է, որ եթէ Դ. դարում հայերը «թարգմանութիւններ արեցին յունարէն լեզուից» եւ իրենք էլ այբուբեն չունէին, ապա պարտաւոր էին այդ թարգմանութիւնները տառադարձել յունական կամ այլ տառերով: Դա պարսկասէր կուսակցութեան աչքին յանցագործութիւն էր թւում եւ հետապնդւում էր, միաժամանակ սեփական այբուբանի գիւտից յետոյ հայերը չարունակում են գրքեր թարգմանել յունարէնից, եւ դա չէր հետապնդւում: Այսպիսով, Խորենացին ուղղակի հաստատում է Դ. դարում հայերէն լեզուով հայ գրականութեան գոյութիւնը:*

Ի դէպ, այս միտքը նոր չէ, եւ այն փորձում են առաջարկել նաեւ ուրիշները: Օրինակ, հայր Ս. Պարոնեանը ապացուցում է սաղմոսների հայերէն թարգմանութեան գոյութիւնը գրերի գիւտից առաջ[28]*: Նրա հիմնաւորումները սրանք են՝*

1. Լատիներէն եւ սլաւոներէն լեզուների Սուրբ Գրքից ամէնից առաջ թարգմանուել են Սաղմոսները եւ յետոյ՝ միւս գրքերը:

2. Սաղմոսների հայերէն բնագիրը Աստուածաշնչում եւ եկեղեցապաշտամունքային մատեաններում՝ ժամագրքերում, իրարից խիստ տարբերւում են:

3. Թ. դարի մատենագիր Թովմա Արծրունին հաղորդում է, որ Խոյթ լեռան բնակիչները (Սասունում, Արեւմտեան Հայաստանի թուրքական

րու, վարել յունական դպրութեամբ եւ ոչ ասորւով». եւ նոյն գլխում՝ «չտայիմ պարսիկ վերակացուքն յոյն ումեք ուսանել դպրութիւն յիւրեանց մասինն, այլ միայն ասորի» (**Մովսէս Խորենացի.** Գ., ծդ.): Չնայած նոյն Խորենացին, ինչպէս տեսանք, ասում է, որ հայերը եկեղեցական ծէսի համար գործածում էին յունարէնը:

[26] **Մովսէս Խորենացի,** Գ., գլուխ ծԷ.:

[27] Թէոդոսը Սահակին գրում է. «Եւ առաւել յայսմ մեղադիր եմք, զի արհամարհեալ զճարտարաւքս, որ ի մերում քաղաքիս՝ յասորեաց ոմանց խնդրեցեր զիմաստից գիւտս». **Մովսէս Խորենացի** Գ., ծԷ.:

[28] Այս հարցի վերաբերեալ նրա օգտակար յօդուածը տպագրուել է Կոստանդնուպոլսի «*Երկրագունտ*» ամսագրում եւ քաղումներով ներկայացուած է՝ **Զարբհ.,** ՄՀԹՆ, էջ 216-219, որտեղից էլ մենք օգտւում ենք: Այս կարծիքը հաւանում է Կոնիբէրը ի՝ **Scrivener F. H. A.,** A Plain Introduction to the Criticism of the New Testament, For the Use of Biblical Students, Vol. II. London, New York, and Cambridge, 1894, էջ 153 (այսուհետեւ՝ Scrivener, Intruduction. II):

Բաղէշի վիլայեթում) «Հնուց գիտեն եւ միշտ անգիր կրկնում են հայ քահանաների թարգմանած սաղմոսները»[29]*:*

4. Յովհան Ոսկեբերանի Անանուն կենսագիրը հաղորդում է, որ սուրբ պատրիարքը գտնուելով աքսորի մէջ եւ ապրելով Հայաստանում, հայերին յորդորեց թարգմանել Աստուածաշունչը՝ թարգմանութիւնն սկսելով սաղմոսներից:

5. Միւնխէնում գտնուող յունարէն մի ձեռագրում պահպանուել է մի հայերէն գրառում, որում ասւում է, թէ յոյն Թէոդոս կայսրը հայերի վրայ խիստ զայրացել է նրա համար, որ նրանք համարձակուել են սաղմոսները թարգմանել հայերէնի, քանի որ նրանք Գրիգոր Լուսաւորչի ժամանակներից դրանցից (այսինքն սաղմոսներից) օգտուել են յունարէն թարգմանութեամբ:

Հայր Ս. Պարոնեանի այս դրոյթներից առաւել մեծ նշանակութիւն ենք տալիս Թովմա Արծրունու հաղորդմանը, այն է՝ որ իններորդ հարիւրամեակում լեռնային Խոյթ երկրի կիսավայրենի բնակիչները սաղմոսներն անգիր գիտէին: Այս փաստի հաստատումը գտնում ենք նաեւ մի այլ տեղերում՝ Յովհաննէս Գառնեցի վարդապետի մօտ, որը սաղմոսների իր ձեռագրի նախաբանում հետաքրքիր տուեալներ է հաղորդում սաղմոսների վիճակի եւ Սարկաւագ վարդապետի խմբագրման մասին[30]*:*

Նա հայերին յանդիմանում է իրենց մէջ տարածուած այն վատ սովորութիւն համար, որ նրանք անգիր արտասանում են սաղմոսները, մշտապէս կրկնում եւ դրանով իսկ աղաւաղում են բովանդակութիւնը:

Բնագրի այս աղճատման դէմ ընդվզեց Սարկաւագ վարդապետը՝ ԺԲ. դարում, սակայն այն չարունակուեց նաեւ մինչեւ Յովհան Գառնեցու ժամանակ՝ ԺԳ. դարում եւ համարեա մինչեւ վերջին ժամանակներս:

---

[29] **Թովմայի վարդապետի Արծրունւոյ** Պատմութիւն տանն Արծրունեաց. ի լոյս էած Ք[երովբէ] Պ[ատկանեան], Ի հայրապետութեան Տ. Տ. Մակարայ վեհափառ կաթողիկոսի ամենայն Հայոց, ի Ս. Պետերբուրգ, ի տպարանի Ի. Ն. Սկորոխոդովի, 1887, էջ 121. «Եւ գիտեն զսաղմոսսն զհին թարգմանեալսն վարդապետացն Հայոց, զոր հանապազ ի բերան ունին».- այս խօսքերը պրոֆեսոր Մառը «Новооткрытый армянский текстъ Паралипоменонъ» К. В. IV, էջ 73 տալիս է հետեւեալ ձեւով. «эти горцы знаютъ псалмы въ древнемъ переводеъ армянскихъ учителей и постоянно произноаятъ ихъ» * թրգմ.՝ «Այդ լեռնականները Սաղմոսները գիտեն հայոց հին ուսուցիչների թարգմանութեամբ եւ միշտ արտասանում են դրանք»:

[30] Յովհաննէս Գառնեցու այս նշումը բերուած է՝ **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 219-220. կրճատմամբ ունենք այն տեղի, որտեղ խօսւում է սաղմոսները անգիր սովորելու մասին: Մենք այն գտանք նաեւ Էջմիածնի Հ՟ 632 [Մ 614] ձեռագրում: * Նկատի ունի Մ 614 ձեռագրի այս բնագիրը՝ «212աբ ՁԵ. *Ստուգաբանութիւն Սաղմոս[ի] ի Յովհաննէս Գառնեցոյ հոգելից վարդապետէ, որ ոմանց յերկբայութիւն* - ՁՍաղմոս Դաւթի, մանաւանդ թէ զերգս Հոգւոյն Սրբոյ... *խիստ օգտիս, զի ճշմարտաբան է, եւ լուսաւորիս Հոգովն Սրբով, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն*»:

Պարզ է, որ Գառնեցու կշտամբանքը վերաբերում էր ոչ թէ սաղմոսներն անգիր իմանալուն, այլ բնագրի աղաւաղմանը[31]*:*

Եօթներորդ դարի եկեղեցական մատենագիր Թէոդորոս Քռթենաւորը իր՝ «Ընդդէմ Մայրագոմեցւոյ» ճառում յայտնի Մայրագոմեցի վարդապետի հետ բանավիճում է եկեղեցական տարբեր հարցերի մասին. ի միջի այլոց նա չօշափում է սուրբ Ղուկասի Իբ. 42, 43՝ երկու տան եւ Պօղոսի առ Կորնթացիս երրորդ թղթի կանոնականութեան հարցը[32]*: Զարբհանալեանը Քռթենաւորի խօսքն իր գրքում (էջ 204, 210) մէջբերում է որպէս ապացոյց այն բանի, որ հայերը հինգերորդ հարիւրամեակում իրենց բնագրում ունէին Ղուկասի Իբ. 42, 43, եւ առ Կորնթացիս երրորդ թուղթը: Սակայն Զարբհանալեանի բերած խօսքերում կոնիբէրը նկատել է մի այլ փաստ եւս, որի վրայ առաջ ոչ ոք ուշադրութիւն չի դարձրել:*

Թէոդորոսը բանավիճելով Մայրագոմեցու հետ, նրան մեղադրում է երկիմաստ երեսպաշտութեան մէջ, որն արտայայտուել է հետեւեալում. Մայրագոմեցին, մշտապէս հաստատելով, որ բարձր է գնահատում Գրիգոր Լուսաւորչին եւ լիովին ընդունում է նրա հեղինակութիւնը, իրականում այլ կերպ է վարուել: Լուսաւորիչը ճանաչել է առ Կորնթացիս Գ. թուղթը եւ Ագաթանգեղոսի երկում առկայ իր ճառում մէջբերել է այդ թղթի 16րդ տունը. քանի որ, դրա մասին նկատում է Թ. Քռթենաւորը, չնայած այն բանին, որ Նիկիայում սուրբ հայրերը Սուրբ Գրքի կանոն են հաստատել, եւ նրա մէջ ընդունել են Պօղոսի միայն 14 թղթերը, այնուամենայնիւ «Իսկ բարեդրուատելին Գրիգոր զառ ի հարցն լռեալն եւ ոչ մակա-

---

[31] Ի հաստատումն դրա, թէ ինչպէս է ամբողջ գիրք բանաւոր փոխանցուել. մենք կարող ենք օրինակ բերել մեր սեփական կեանքից: Պապս հոգեւորական էր. նա սովորութիւն ուներ՝ ամէն երեկոյ պառկելուց առաջ, ցածր եւ հանգիստ ձայնով, սեանեակով գնալ-գալով կարդում էր ողջ երկար գիշերային ժամերգութիւնը - եկեսցէ. իսկ լաւ եղանակին նա այդ անում էր սեփական տան հարթ տանիքի վրայ գնալ-գալով: Ես քայլում էի նրա հետ եւ պարտաւոր էի ցածր ձայնով կրկնել նրա բառերը: Այդ ձեւով, առանց որեւէ դժուարութեան եւ ինձ համար բոլորովին աննկատ, սովորեցի ամբողջ պատարագը, այն էլ ինձ համար բոլորովին անհասկանալի լեզուով՝ գրաբարով: Այդ ժամանակ ես ոչ կարդալ գիտէի, ո՛չ գրել: Ես անձամբ գիտէի եկեղեցականների, ովքեր եկեղեցական ողջ պաշտամունքը գիտէին անգիր եւ շատ վատ էին կարդում՝ համարեա անգրագէտ: Սովորելու այսպիսի եղանակի դէպքում բնագրի աղաւաղումը հասկանալի է:

[32] 1833 թ. Վենետիկում նրա ճառերի հրատարակումը հայերէն լեզուով՝«**Թէոդորոս Քռթենաւորի**, ճառք. Ա. Երանելոյն Թէոդորոսի ընդդէմ Մայրագոմեցոյն». սրա հետ միասին հրատարակուել են երկու այլ ճառեր՝ սուրբ Խաչի եւ Աստուածածնի մասին. Դրանց մասին տե՛ս **Զարբհանալեան ի. Գ.,** Հայկական հին դպրութեան պատմութիւն (Դ-ԺԳ. դար), Բարձրագոյն դպրցաց համար, Երկրորդ տպագրութիւն, յաւելուածովք եւ փոփոխութեամբք, Վենետիկ, 1897, էջ 469-471 (այսուհետեւ՝ **Զարբհ.**, Պատմ. հայ դպր., 1897). եւ՝ **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 204-205 եւ 210-211:

դրեալ ի նոր թարգմանութիւնս, վկայաբանութեամբ ճառագրեաց»[33]*: Դրանով հանդերձ, ինչպէս Մայրագոմեցին եւ նրա հետեւորդներն ընդունեցին միայն «նոր թարգմանութիւնը», այլ ոչ թէ «Աւետարանի հին կամ առաջին թարգմանութիւն»ը*[34]*, որն օգտագործել է Գրիգորը եւ որտեղ առկայ էին նաեւ Ղուկասի Աւետարանի երկու տունը՝ ԻԲ., 42, 43, եւ այդ ձեւով նրանք դրանով ժխտում էին Լուսաւորչի հեղինակութիւնը:*

Ըստ այս վկայութիւնների՝ երկու չատ ճշգրիտ արտայայտութիւններով եօթներորդ դարի հեղինակը մատնանշում է Նոր Կտակարանի երկու թարգմանութիւն՝ ա) առաջին թարգմանութիւն եւ բ) նոր թարգմանութիւն: Առաջինն ընդունել եւ օգտագործել է Գրիգոր Լուսաւորիչը, եւ նրա միջից քաղել է Կորնթ. Գ. թղթի 16րդ տունը, նրա մէջ կային նաեւ Ղուկասի Աւետարանի ԻԲ., 42, 43 երկու տունը, իսկ նոր թարգմանութիւնը ո՛չ մէկն ունէր, ո՛չ միւսը: Եօթներորդ հարիւրամեակում ոմանք ընդունում էին առաջինը, միւսները՝ երկրորդը, ինչի համար էլ նրանց միջեւ վէճեր էին լինում:

Այդ հին թարգմանութիւնն այն չէր, որ հապճէպ արել էին Սահակը եւ Մեսրոպը. մենք արձանագրեցինք, որ դատելով ըստ աղբիւրների, երկու թարգմանութիւն չի եղել, այլ մի անգամ արուած թարգմանութիւնը երկրորդ անգամ սրբագրուել է. ինչպէս նաեւ պարզ է, որ Գրիգոր Լուսաւորիչը ոչ մի կերպ չէր կարող օգտուել նրանից: Միայն Մովսէս Խորենացին է անյստակ ձեւով յիշատակում երկու թարգմանութիւնների մասին: Իսկ այն թարգմանութիւնը, որն արուել է դեռեւս այբուբենի գիւտից չատ աւելի առաջ եւ որի մասին պատմիչները լռում են, հէնց այն էլ ամենայն հաւանականութեամբ հիմք է ծառայել գլխաւոր թարգմանիչների աշխատանքի համար, որոնք օգտուել են հայկական այբուբենից, այլ ոչ «մուրացածոյ փոխառած ասորական այբուբենից»[35]*:*

Եւ չի կարելի չհամաձայնել Կոնիբէրի այսպիսի եզրակացութեան հետ. «If this inferences» (այսինքն՝ առաջին եւ նոր թարգմանութեան յիշատակումը) are just, than the first Armenian version of New Testament was made of the beginning rather than towords the end of the 4'th century, although the native historians of the 4'th century are silent about it»[36]*:*

---

[33] **Յովհաննու Իմաստասիրի Աւանեցւոյ** Մատենագրութիւնք, Վենետիկ, Ս. Ղազար, 1833, էջ 155 (էջ 145-182՝ «Թէոդորոսի Քոթենաւորի ճառք երեք»):

[34] «Ասեն, անընդունակ է առաջաթարգմանութիւն Աւետարանին»:

[35] Սա ասորերէնի համար Ղազար Փարպեցու գործածած արտայայտութիւնն է՝ *«մուրացածոյ բարբառով»* (էջ 36), եւ դանիէլեան այբուբենի համար Մովսէս Խորենացու օգտագործած՝ «մուրացածոյիւն այնուիկ» (Գ., ծբ.):

[36] **F. C. Conybeare,** Armenian version of New testament.- A Dictionary of the Bible, Volume I, p. 154 (յօդուածը՝ էջ 153-154): * Թարգմ.՝ «Եթէ այս եզրակացութիւններն

Այս բոլոր դատողութիւններին կարող ենք աւելացնել մեր կարծիքով ուշադրութեան արժանի եւս մէկը: Հին հայերէնի բոլոր գիտակները հիացել եւ հիանում են Աստուածաշնչի հայերէն թարգմանական լեզուի դասական կատարելութեամբ: Մի քանիսը նոյնիսկ, Լակրոզի գլխաւորութեամբ, հայերէն տարբերակն անուանել են «թարգմանութեանց թագուհի»: Cornely-ն այս թարգմանութեան մասին ասում է. «Pulchritudini autem et elegantiae conjuncta est summa interpretationis fidelitas. Syntaxeos armeniacae regulis non violatis presso pede sequitur graecum exemplar, ipsumque vocum ordinem retinere studet, quare textui quem prae manibus habuerunt, dignoscendo optime inservit»[37]**:*

Ոչ այնքան հիացած, բայց յամենայն դէպս գովաբանական է հնչում մի այլ գիտնականի՝ Kaulen-ի վճիռը. Die armenische Uebersetzug giebt in beiden Testamenten den griechischen Text sorgtältig und treu, abar nicht sclavisch wieder[38]*:*

Օտարազգի գիտնականների այս կարծիքներին միացել է հայ բանասէր Նորայր Բիւզանդացին՝ մասնագէտ եւ իր ժողովրդի լեզուի լաւ գիտակ. «Թարգմանութեան արուեստն,- ասում է նա,- այնչափ կատարեալ, եւ հայերէնն այնպէս գեղեցիկ է եւ համեղ, գլխաւորապէս ի յունէ թարգմանութեանց մէջ, որ աւելի մատենագրութիւն եւ գերազանց մատենագրութիւն կոչելի են՝ քան թէ թարգմանութիւն՝ Սուրբ Գիրք մեծագոյն մասամբ, եւ Յոհաննու Ոսկեբերանի բազում Մեկնութիւնք»[39]*:*

Ինչպէս բերուած էր վերը, ըստ աւանդական տեղեկութիւնների՝ Աստուածաշնչի լրիւ թարգմանութեան ժամանակահատուածը, սկզբից մին-

---

իրաւացի են, ապա Նոր Կտակարանի առաջին հայերէն տարբերակը պատրաստուել է Դ. դարի սկզբին, եւ ո՛չ նոյն դարի վերջերին, թէկուզ Դ. դարի բնիկ պատմիչները դրա մասին լռում են»:

[37]* Թարգմ.՝ «Գեղեցկութեանն ու ճրբագեղութեանն աւելանում է մեկնաբանութեան ճշգրտութիւնը: Պահպանելով հանդերձ հայոց լեզուի շարահիւսութեան կանոնները, թարգմանիչը հարազատ է մնում յունարէն բնագրին, ջանալով նոյնիսկ պահպանել յունարէն բառերի հերթականութիւնը, այդպիսով ձգտելով իր ձեռքի տակ եղած բնագրի ընկալմանը»:

[38] **Cornély,** p. 387, **Kaulen, Einleitung**, p. 172, p. 176. եւ **Dr. V. Ermoni,** De la Mission des Lazaristes, Paris, Քննադատական ուսումնասիրութիւն Սուրբ Գրոց հայկական թարգմանութեան վրայ, Թրգմ. Հ. Ստեփ[անոս] Սարեան.- Բազմավէպ, 1900, էջ 451 (ամբողջը՝ Է., էջ 296-302, Ը. էջ 346-352, Թ. էջ 406-410. Ժ-ԺԲ. էջ 451-454: Այսուհետեւ՝ **V. Ermoni,** Բազմավէպ, 1900): * Cornely-ից եւ Kaulen-ից արուած քաղաւումները եւս վերցուած են Բազմավէպ, 1900, էջ 451ից (**Cornély**, էջ 387, **Kaulen**, էջ 172, Հմր 176. **Kaulen Franz,** Einleitung in die Heilige Schrift, Alten und Neuen Testaments, Volume 2**,** 1899): - **Kaulen**, էջ 172, թարգմ.՝ «Յունարէն բնագրի հայերէն թարգմանութիւնը երկու Կտակարաններում էլ արուած է խնամքով և ճշգրիտ, բայց ոչ ստրկաւան կրկնութեամբ»:

[39] **Ն. Բիւզանդացի**, Կորիւն վարդապետ, էջ 1-2:

չեւ աւարտ, տեւել է 30 տարուց ոչ աւելի: Այսպիսի կարճ ժամկէտում սկսւում եւ զարգանում է գրականութիւնը, ձեւաւորւում է «կատարեալ լեզուն»:

Մեր աչքի առջեւ զարգանում է նորագոյն հայկական գրականութիւնը՝ նոր լեզուով՝ աշխարհաբարով, հին գրքային՝ գրաբարի փոխարէն: Այս գործընթացը Հայաստանի թուրքական մասում, գլխաւորապէս Կոստանդնուպոլսի հայերի մօտ սկսուել է նախորդ դարի երեսնական թուականներից. ռուսական մասում՝ յիսնականներից: Ե՛ւ այնտեղ, Ե՛ւ այստեղ անցել է կէս հարիւրամեակից աւելի: Այժմ գոյութիւն ունեն լաւ դպրոցներ, տպագրութիւն, հարուստ հին մատենագրութիւն, բայց հազիւ թէ գտնուի մի մարդ, որը նոր-գրքային լեզուի՝ աշխարհաբարի կատարելութեան մասին իր կարծիքն արտայայտելու համար կգործածի Նորայրի բառերը: Առ այսօր այդ նոր, ժողովրդին հասկանալի լեզուով դեռեւս Աստուածաշնչի լաւ թարգմանութիւն չկայ: Այստեղ, անկասկած, կայ մի այլ պատճառ եւս, բայց գլխաւորը գրաբարի համեմատ նոր լեզուի անկատարութիւնն է:

Այս ամէնը մեզ իրաւունք է տալիս եզրակացնելու, նախ՝ որ Աստուածաշնչի թարգմանութեան եւ հայոց գրչութեան մասին մեր աւանդական տեղեկութիւնները չափազանց անկատար եւ ոչ ճշգրիտ են, եւ երկրորդ՝ ընդունելու, որ հինգերորդ դարի սկզբից շատ առաջ՝ եթէ ոչ ամբողջ Աստուածաշունչը, ապա նրա ամենագլխաւոր մասերը հայերէնով գոյութիւն են ունեցել:

Ժամանակի ընթացքում, երբ պատշաճ ձեւով կուսումնասիրուեն բոլոր ձեռագրերը, կժողովուեն գրական հաղորդումները հայ հին գրականութեան, որ բաւական հարուստ է Աստուածաշնչի գրքերի թարգմանական եւ ինքնուրոյն մեկնութիւններով, այն ժամանակ էլ հնարաւորութիւն կստեղծուի ենթադրութիւնների ոլորտից անցնելու առաւել ճշգրիտ եւ հիմնաւորուած եզրակացութիւնների: Իսկ առայժմ այն գրականութիւնը, որն առկայ է եւ մատչելի, իսկապէս ինչ որ տեղեկութիւններ է տալիս, բայց այդ տեղեկութիւնները պէտք է ստուգուեն եւ հիմնաւորուեն, իսկ առանց դրա դժուար կլինի ասելը, թէ առկայ գրականութեան մէջ որտե՞ղ են պատմական փաստերի սահմանները, եւ որտե՞ղ են աւանդութիւնների հետ խառնուած յայտնի նկրտումները:

Բ. ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ ԵՒ ՆՐԱ ՄԱՍԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Աստուածաշնչի հայերէն ձեռագրերը եղել են չատ հազուագիւտ, թանկ, եւ դրանք ձեռք բերելը չատ դժուար է եղել: Երկար ժամանակ Եւրոպայում հայերէն թարգմանութեան մասին ճիշգրիտ ոչինչ չգիտէին: Ոմանք այդ թարգմանութիւնը վերագրում էին Գրիգոր Լուսաւորչին, ուրիշները՝ Յովհան Ոսկեբերանին[40]*: Հայկական տարբերակի հետ ճչգրիտ ծանօթութիւնն սկսուել է Ոսկանի 1666 թուականի հրատարակութիւնից: Հետաքրքրական է այս հրատարակութեան պատմութիւնը. այն կատարել է իր ստանձնած առաքելութեան բարձր նշանակութեամբ խորապէս տոգորուած եռանդուն մի մարդ: Նրանից դեռեւս 150 տարի առաջ Աստուածաշնչի մի մասը՝ Սաղմոսները տպագրուել էին, սակայն ամբողջական Աստուածաշունչը տպագրելն այնքան էլ հեշտ չէր: Հայերէն առաջին տպագիր գիրքը եղել է եկեղեցական օրացոյցը, որ Վենետիկում լոյս է տեսել 1512 թուականին*[41]*: Առաջին հրատարակութիւնները եղել են բացառապէս հոգեւոր բովանդակութեան գրքեր, եթէ չհաշուենք հայերէնլատիներէն մի բառարան եւ երկու այբբենարան: Ծաւալով նրանցից իւրաքանչիւրն Աստուածաշնչի տասներորդ մասն էլ չեն:*

Հայերը համեմատաբար չատ վաղուց են ծանօթ եղել տպագրական գործի հետ եւ ընդունելով դրա մեծ օգտակարութիւնը, առաջին իսկ ժամանակներից երազում էին Աստուածաշնչի բնագիրը տպագրուած տեսնել: Վատիկանի հայերէն մի ձեռագրում[42] *պահպանուել է Կիլիկիայի հա-*

---

[40] **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 236-245: Ցաղագս թարգմանութեան Աստուածաշունչ տառից ի հայ լեզու.- Բազմավէպ 1850, էջ 217 (ամբողջը՝ էջ 214-217):

[41] 1512 թուականը չի կարելի համարել հայերէն առաջին գրքի տպագրման ծայրայիղ սահման: Հ. Զարբհանալեանը (**հ. Գ. վ. Զարբհանալեան,** Հայկական մատենագիտութիւն, Վենետիկ, Մխիթ. տպ., 1883, էջ 1. այսուհետեւ՝ **Զարբհ.**, Հայկ. մատենագիտ.) առաջին թուագրուած հրատարակութիւն համարել է 1565 թուականի Սաղմոսարանը, բայց նորայայտ տարբեր հնատիպներ այդ ժամկէտը տեղաշարժեցին դէպի 1512 թուական.- Հանդէս Ամսօրեայ, 1890, էջ 162 եւ 1894, էջ 358-361: * **Հ. Գ[րիգորիս] Գ[ալէմքեարեան],** Հայ տպագրութեան երախայրիք մ՚ալ.- Հանդէս ամսօրեայ, 1890, էջ 161-163: **Տ[րդատ] վ. Պ[ալեան]**, Հայ տպագրութեան ամենահին երախայրիք մ՚ալ.- Հանդէս ամսօրեայ, 1894, էջ 357-361:

[42] Cod. Arm. II, նկարագրութիւնը՝ Հանդէս ամսօրեայ, 1892, էջ 244-245: * **Միսքճեան Յովհաննէս վրդ.,** Ցուցակ հայերէն ձեռագրաց քահանայապետական մատենադարանին Վատիկանու ի Հռովմ.- Հանդէս ամսօրեայ, 1892, էջ 211-214, 244-247, 273-275, 339-343 (նկարագրել է 13 ձեռագիր. այսուհետեւ՝ **Միսքճեան**, Ցուցակ Վատիկանի):

յոց Ազարիա կաթողիկոսի 1585 թուականին գրած նամակը Գրիգոր ԺԳ. պապին: Կաթողիկոսը գրում է, որ նա Հռոմ է ուղարկել իր փոխանորդ՝ Յովհան եպիսկոպոսին, Գրիգոր սարկաւագին եւ այլոց, եւ նրանց ձեռքն է տուել Աստուածաշնչի մի ձեռագիր օրինակ, որպէսզի նրանք Հռոմում այն տպագրեն. «յամենայն ազգս հայոց, որ է շատ եւ բազում, ճորով թէ գտնուի Ի. (20) Աստուածաշունչ ընդ ամէնն. եւ կու նստի գինն Մ. (200) կամ Յ. (300) ֆլորի մէկն, եւ չգտնուիր», ուստի եւ խնդրում է պապից, որ նա օգնութիւն ցուցաբերի եւ ծախսերին չնայելով, հնարաւորութիւն տայ տպելու հայերէն Աստուածաշունչը[43]*: Ըստ ամենայնի կաթողիկոսի խնդրանքը մնացել է անհետեւանք. անգամ յայտնի չէ, թէ արդեօք Աստուածաշունչը տպելու փորձ արո՞ւել է:*

Անցաւ էլի երկար ժամանակ. շատ տեղերում տպարանները բացուեցին, եւ հայերէն գրքեր տպագրուեցին. այսպէս՝ Վենետիկում, Հռոմում, Լվովում, Միլանում, Փարիզում, Նոր Ջուղայում, Լիվոռնոյում եւ Ամստերդամում. բայց ոչ ոք չհամարձակուեց ձեռնարկել Աստուածաշնչի հրատարակումը: Ընդ որում, թուարկուած բոլոր տպարանները եղել են մասնաւոր ձեռնարկութիւններ՝ ոչ մեծ միջոցներով եւ առանց առանձնապէս յատուկ բարոյական մեծ աջակցութեան: Այդ աջակցութիւնն ի յայտ եկաւ Էջմիածնի կաթողիկոսի կողմից, եւ հայերի վաղեմի ցանկութիւնը յաջողութեամբ պսակուեց: Էջմիածնի Յակոբ Դ. ամենայն Հայոց կաթողիկոսը 1656 թ. Եւրոպա ուղարկեց իր նախորդի անձնական քարտուղար Մատթէոս Վանանդեցի աւագ սարկաւագին, որպէսզի նա եւրոպական որեւէ կենտրոնում Էջմիածնի վանքի անունով տպարան հաստատի եւ սկսի տպագրել Աստուածաշունչը: Իսկապէս, Մատթէոսին յաջողուեց, թէկուզ՝ մեծ դժուարութիւններով, Ամստերդամում տպարան բացել, որոշ գրքեր տպագրել եւ ձեռնամուխ եղաւ Աստուածաշնչի տպագրութեան համար տառեր պատրաստելու: Բայց Մատթէոսն անսպասելիօրէն մահացաւ, եւ նրա այնպէս բարեյաջող սկսած գործը կանգ առաւ: Այդժամ Յակոբ կաթողիկոսը նրա տեղը նշանակեց Ոսկան վարդապետին՝ Երեւան քաղաքից[44*]*: Ոսկանի եղբայրն ապրում էր Ամստերդամում, Մատթէոսի բացած տպարանի գործակիցն էր եւ նրա մահից յետոյ միայնակ կառավարել է այն*[45]*: Տպարանի միջոցներն այնքան սուղ էին, որ առանց կողմնակի*

[43] Այս նամակը յապաւումներով բերել է՝ **Հ. Գարեգին Զարբհանալեան,** Պատմութիւն հայերէն դպրութեանց ի պէտս ուսման ազգային վարժարանաց, Բ. Նոր մատենագրութիւն, Վենետիկ, Ի տպարանի Մխիթարեանց, 1878, էջ 280, 281 (այսուհետեւ՝ **Զարբհ.**, Պատմ. հայ նոր դպր.), եւ՝ **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 170-171:

[44*] Սխալ գիտէ՝ «Երեւանցի» մականունը վերաբերում է Ոսկանի ծննդավայրին՝ Նոր Ջուղայի Երեւանցոց թաղին:

[45] **Զարբհ.**, Պատմ. հայ նոր դպր., էջ 292-301. **Զարբհ.**, Հայկ. մատենագիտ., էջ 55-57:

օգնութեան անհնար էր անգամ մտածելը՝ սկսելու այնպիսի ձեռնարկում, ինչպիսին Աստուածաշունչ տպագրելն էր: Ոսկանը մեծ եռանդով սկսեց այդ գործը եւ կատարեց այն: Ամէնից առաջ անհրաժեշտ էին նիւթական մեծ միջոցներ: Ոսկանն ինքը պէտք է դրանք հայթայթէր. նա յոյս ունէր միջոցներ գտնել Եւրոպայում ապրող հարուստ հայ առեւտրականների կամաւոր նուիրատուութիւնների ձեւով: Դրա համար էլ նա չրջագայեց Իտալիայի եւ Ֆրանսիայի այն քաղաքներով, որտեղ հայեր էին ապրում, եւ եռամեայ ջանքերից յետոյ նրան վերջապէս յաջողուեց Լիվոռնոյում ստանալ անհրաժեշտ միջոցներ: Եւ այնժամ 1665 թուականին Ամստերդամում՝ Մատթէոսի հիմնադրած տպարանում նա սկսեց Աստուածաշնչի տպագրութիւնը: Երկար չտեւեց տպագրութիւնը. համարեա մէկ տարի[46*] *յետոյ հրատարակութիւնը պատրաստ էր եւ լոյս տեսաւ հայկական Աստուածաշնչի editio princeps-ը*[47]*:*

Ոսկանի հրատարակութեան խորագիրն այս է. «ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ՀՆՈՅ ԵՒ ՆՈՐՈՅ ԿՏԱԿԱՐԱՆԱՅ ՆԵՐՊԱՐՈՒՆԱԿՕՂ, ՇԱՐԱԿԱՐԳՈՒԹԵԱՄԲ ՆԱԽՆԵԱՅՆ ՄԵՐՈՅ ԵՒ ՃՇՄԱՐՏԱՍԻՐԱՅ ԹԱՐԳՄԱՆՉԱՅ. Իսկ զկնի հրամանաւ վեհափառին Տեառն Յակոբայ Հայոց Կաթուղիկոսի գլխակարգեալ եւ տնատեալ ըստ Դաղմատացւոցն. նա եւ զհամարձայնութիւն հանուրց գրոց Աստուածաշնչից ընդ իրեարս առընթեր կարգեալ ամենեցուն. նուաստի ումեմն բանի Տեառն սպասաւորի. Ոսկանի Երեւանեցւոյ: ՅԱՄՍՏԵՐԴԱՄ: Ներ Տպարանում սրբոյն Էջմիածնի. եւ սրբոյն Սարգսի զօրավարի, ի Թուում փրկչին 1666, Իսկ Հայոց .ՌՃԺԵ. Նամսեանն մարտի մետասանի»:

Ձեռագրերը ցոյց են տալիս, որ գլխաբաժանումն ըստ լատինական վուլգատայի արուած է դեռեւս 1293 թուականին՝ նախկին թագաւոր Հեթում-Յովհաննէսի կողմից, իսկ գլուխները Լվովում 1616 թուականին տների է բաժանել Ղազար Բաբերդցին: Եթէ Ոսկանն իսկապէս ինքն է

[46*] Սխալ է հաշուել՝ Աստուածաշնչի տպագրութիւնը Ոսկանն սկսել է 1666 թ. մարտի 11ին եւ աւարտել՝ 1668 թ. հոկտեմբերի 13ին, այսինքն՝ տեւել է երկու տարի եօթ ամիս:

[47] **Johann David Michaelis,** Introductio to the New Testament, tome II, London, 1823, էջ 103 ասում է որ ինքը Chardin-ի ստեղծագործութիւնների հրատարակութեան մէջ գտել է մի նկատողութիւն, որ իբր Ոսկանը սկզբում իր Աստուածաշունչը Ֆրանսիայում տպագրելու մտադրութիւն է ունեցել, բայց թոյլտուութիւն չի ստացել: Այս կարծիքին դէմ հանդէս եկաւ H. Hyvernat-ը (**F. Vigouraux,** Lexikon de la Bible, p. 1011), ասելով՝ «je n'ai pu trouver ce detail dans l'édition de l'anglais 1811 de Chardin» (* թարգմ.՝ «Chardin-ի 1811 թ. անգլերէն հրատարակութեան մէջ ես չէի կարող գտնել այդ մանրամասնութիւնը»): Ոսկանը Հռոմում դժուարութիւնների է հանդիպել, դա յայտնի է նրա նախաբանից, իսկ Ֆրանսիայի մասին Ոսկանը ոչինչ չի ասում: Համեմատի՛ր **Alter**, Philologisch-kritische Miscellen, Wien, p. 140 եւ **Holmes**, Praefatio in editionem LXX, cap. IV. **Զարբհ.**, Հայկ. մատենագիտ., էջ 55-57:

արել այդ աշխատանքը, ապա պէտք է մտածել, որ նախորդների աշխատանքը նրան յայտնի չի եղել: Սակայն նա իր հրատարակութեան յաւելուածում տպագրել է Ղազար Բաբերդցու՝ աստուածաշնչական բառերի ցանկը, որը գտնւում է միայն Աստուածաշնչի ձեռագիր օրինակներում, առանձին ընդօրինակութիւններ չունի, հետեւաբար Ոսկանը գտել է Ղազար Բաբերդցու պատրաստի աշխատանքը եւ օգտուել է նրանից՝ այն ներկայացնելով որպէս իրենը[48]: Հայրապետի յիշատակումը պէտք է հասկանալ այնպէս, որ ինքը նրանից թուլլտուութիւն է ստացել իր հրատարակութեան մէջ օգտուելու Ղազար Բաբերդացու աշխատանքից: Ոսկանի հրատարակութիւնը կազմուած է քառածալ (in 4⁰) երկու մեծ հատորից: Առաջին հատորը՝ էջ 1-628 պարունակում է Ծննդոցից մինչեւ Մակաբայեցիների գրքերը. երկրորդ հատորը՝ էջ 1-429, Յոբ, Սաղմոսներ եւ այլ գրքեր, էջ 430-718՝ Նոր Կտակարան. էջ 719-839՝ Յաւելուած. Եզրի Գ. (կամ Դ.) գիրքը, Հերոնիմոսի՝ Հին Կտակարանի բոլոր գրքերի Առաջաբանը եւ աստուածաշնչական բառերի Ղազար Բաբերդացու ցանկը:

Ոսկանը վերջաբանում նկարագրում է բոլոր այն դժուարութիւնները, որոնց ինքը ենթարկուել է մինչ իր աշխատանքն աւարտելը, բայց, հրատարակութեան հիմք ծառայած ձեռագրի մասին որեւէ խօսք չի ասում: Զօհրապեանը մանրամասն համեմատելով նրա բնագիրը, կարծել է, որ նրա հիմքը մօտ է բնագրին վենետիկեան մի ձեռագրի, որ ինքը նկարագրել է երրորդ համարի ներքոյ[49]: Ոսկանն Աստուածաշունչը տպագրել է ամբողջութեամբ, նա չի տպել միայն Հին եւ Նոր Կտակարանների Նախադրութիւնները ու Գլխացանկերը, բայց փոխարէնն աւելացրել է Եզրի Գ. գիրքը, Սիրաքի գիրքը, Երեմիայի թուղթը, Հերոնիմոսի Առաջաբանը եւ Ղ. Բաբերդացու ցանկը. որոնցից առաջին չորսը լատիներէնից նրա արած թարգմանութիւններն են: Բոլոր մասնագէտները նրա հրատարակութիւնը չատ խիստ են գնահատել: Նրան մեղադրել էին այն բանում, որ նա ինքնակամ ձեւափոխել է հին բնագիրը, այն համապատասխանեցնելով լատինական վուլգատային: Ընդ որում՝ ինքն էլ վատ տիրապետելով լատիներէնին եւ դասական հայերէնին, ձեռնարկել է թարգմանելու ամբողջ գրքեր եւ սրբագրելու հին բնագիրը:

---

[48] Տե՛ս Ձ^ռ 36 LB[1] ձեռագիր Աստուածաշնչի նկարագրութիւնը:

[49] Աստուածաշունչ մատեան Հին և Նոր Կտակարանաց. ըստ ճշգրիտ թարգմանութեան նախնեաց մերոց ի հելլենականն հաւատարմագոյն բնագրէ ի հայկականս բարբառ. նորոգապէս ի լոյս ընծայեալ յընտրելագոյն գրչագիր գաղափարէ՝ համեմատութեամբ այլ և այլ օրինակաց, հանդերձ կարևոր ծանօթութեամբք բնաբանին, յաշխատասիրութենէ տեառն **Հ. Յովհաննու Զօհրապեան վարդապետի,** Վենետիկ, Ս. Ղազար, 1805, Առաջաբան, էջ 7, 8 եւ 2՝ նկարագրութիւն V[10] Ձ^ռ 77 Աստուածաշունչ ձեռագրի (այսուհետեւ՝ Աստուածաշունչ Զօհրապեանի):

Ահա Լակրոզի կարծիքը՝ 1718 թուականի մի նամակում. «Il savait un peu de latin, et n'avait aucun goût, ni aucun sens critique. Il n'a, à la vérité, rien changé, ni retranché dans son édition, mais lorsqu'il a trouvé quelque chose de plus dans la Vulgate, il ne s'est fait aucun scrupule de l'ajouter à son édition. Il l'avoue même dans l'une de ses préfaces et s'en fait, mal à propos, honneur»[50].

Ոսկանի համար այսպիսի անհաճոյ եզրակացութեան Լակրոզը եկել է՝ Ոսկանի Աւետարանները համեմատելով Փարիզի ազգային գրադարանի ունեցած մի ձեռագիր Աւետարանի բնագրի հետ[51]***: Բացի այդ, Ոսկանն իրեն թոյլ տուեց եւս մի կամայականութիւն, նա պատճէնեց լատինական վուլգատայի կանոնը, ինչպէս յայտնի է՝ չատ բաներում տարբեր Եօթանասնիցի կանոնից, իսկ հայ թարգմանիչներն ու ընդօրինակողներն ընդունել էին միայն այս վերջին կանոնը: Այսպիսով, Ոսկանի մօտ Յոբի գիրքը դրուած է Սաղմոսներից առաջ, աւագ մարգարէները բոլորը միասին՝ կրտսերներից առաջ, Պօղոսի թղթերը՝ սուրբ առաքեալների եօթ թղթերից առաջ, իսկ Եբրայեցիներին ուղղուած թուղթը՝ Պօղոսի բոլոր թղթերից յետոյ, ինչը հայերէն որեւէ ձեռագրում չի հանդիպում: Չնայած բոլոր այս կամայականութիւններին, Ոսկանն իր հրատարակութեան մէջ դրական չատ կողմեր ունէր: Ամբողջ երեք տարի անցկացնելով Իտալիայում եւ ճգտելով ուսումնասիրել լատիներէն լեզուն, անկասկած, նա մշտապէս օգտուել է լատինական վուլգատայից, սիրել է այն եւ համարել կատարելութիւն. հէնց այդ ազդեցութեամբ էլ մասամբ բացատրւում են նրա հրատարակութեան թերութիւնները: Իսկ դրական կողմերն էին՝ օրինակելի, հրաշալի տպագրութիւնը լաւ թղթի վրայ, եւ գրքի համեմատաբար էժանութիւնը, այնպէս որ իւրաքանչիւր ցանկացող կարող է հեշտութեամբ այն ձեռք բերել: Ժամանակակիցները թերութիւնները չէին նկատում, եւ իւրաքանչիւրն ուրախ էր իր համար ձեռք բերելու Աստուածաշնչի նրա հրատարակութիւնը: Նրա հրատարակութեան պատմական վաստակը չատ մեծ է. միայն մանանագէտները կարող էին դժգոհ մնալ. ժողովրդի համար մայրենի լեզուով Աստուածաշունչը մատչելի էր դարձել եւ մեծ բարիք էր համարւում: Որ ժամանակակիցները չէին նկատում Ոսկանի***

---

[50] ***La Croze,*** Thesaurus Epistolicus. III, 3, 69 եւ յաջորդ. հմմտ. **V. Ermoni,** Բազմավէպ, 1900, էջ 301, ծնթ. 2: * Թարգմ.՝ «Նա մի քիչ լատիներէն գիտէր, բայց զուրկ էր ճաշակից ու քննական մտածողութիւնից: Իրականում նա իր հրատարակութեան մէջ ոչինչ չի փոխել կամ չի կրճատել, սակայն երբ Վուլգատայում ինչ որ լրացուցիչ տեղեկութիւն է յայտնաբերել, ապա առանց խղճի խայթի աւելացրել է իր հրատարակութեանը: Նա նոյնիսկ անիրաւացի հպարտութեամբ իր նախաբաններից մէկում խոստովանում է այդ բանը»:

[51] Այդ ձեռագիրն իր համար արտագրել է Լակրոզը. եւ նրա աշխատանքը պահպանւում է Վիեննայի Կայսերական գրադարանում (Cod. arm. Հմր 22 եւ մեզ մօտ՝ 2 Ե. Հմր 4 ձեռագրի նկարագրութիւնը):

թերուԹիւնները եւ դրանց կարեւորուԹիւն չէին տալիս, որպէս լատագոյն ապացոյց են ծառայում յայտնուող երկու՝ 1705 եւ 1733 թուականների հրատարակուԹիւնները: Այս երկուսն էլ առանց որեւէ փոփոխուԹեան վերարտադրում են նրա բնագիրը:

Երկրորդ հրատարակուԹեան յիշատակարանը տեղեկացնում է. «Արդ, եղեւ զրաւ Աստուածաչունչ մատենիս Թվին Հայոց ՌՃԾԶ. (1707), ի չնորհազարդ հայրապետուԹեան եւ կաԹողիկոսուԹեան սուրբ աԹոռոյն էջմիածնայ ամենայն հայոց տեառն Աղեկսանդրի Ճուղայեցւոյ. ի յօրինակս հնոյ տպեցեալ լուսաւորեալ հոգի Ոսկան վարդապետի՝ յար եւ նման, ոչ աւելի եւ ոչ նուազ, սակայն մանր գրով»: Հրատարակիչը եղել է իր իսկ՝ Ոսկան վարդապետի ազգական Պետրոս Լատինացին, որն իր Աստուածաչունչը հրատարակել է 1705-[1707] ԹԹ., Կոստանդնուպոլսում, երկու հատորով՝ քառածալ (In 4⁰). առաջինը՝ 512 էջ, երկրորդը՝ 697 էջ:

Մխիթարեան միաբանուԹեան հիմնադիր Մխիթարը 1733 թուականին Վենետիկում երկրորդ անգամ վերատպեց Ոսկանի հրատարակուԹիւնը՝ «լաւ Թղթի վրայ, աւելի ազնուաբարոյ նկարներով, աւելի գեղեցիկ գլխատառերով եւ առաւել մանրակրկիտ սրբագրումներով»: Զօհրապեանի կարծիքով[52], Մխիթարը նկատել է Ոսկանի ԹերուԹիւնները եւ սխալները, նա համեմատել է նրա բնագիրը վուլգատայի լատիներէն Փարիզեան հրատարակուԹեան հետ եւ լուսանցներում նշել է տարընԹերցումները. քառածալ (in 4⁰) հրատարակուԹիւնն իր մէջ ամփոփում է Հին Կտակարանը՝ էջ 1-930, Նոր Կտակարանը՝ էջ 931-1169 եւ Յաւելուածներ՝ 1170-1280:

Ոսկանի ազդեցուԹիւնը սրանով չաւարտուեց: 1686 թուականին Թադէոս քահանան Վենետիկում հրատարակեց Ճաշոցը: Նա մի քանի ձեռագիր ունէր, դրանց մէջ նկատել էր մեծ տարաձայնուԹիւններ, եւ համեմատելով Ոսկանի հրատարակուԹեան հետ՝ նրանցից ընտրել է այն ընդօրինակուԹիւնը, որի բնագիրն աւելի է համապատասխանում Ոսկանի տպագրին, որը եղել է «վերցուած հայոց հին արքաների գանձարանից». Զօհրապեանը նոյնիսկ մտածում է, որ Թադէոսն իր ամբողջ բնագիրը

---

[52] Աստուածաշունչ Զօհրապեանի, Առաջաբան, էջ 7. «Եւ զի պակասէին առ ձմա հայկական գրչագիր օրինակք առ ուղղագրութիւն վրիպանացս»՝ ձգտում է Մխիթարին արդարացնել նրանով, որ կարծես թէ նա ի վիճակի չի եղել գտնելու Աստուածաշնչի նոր ձեռագիր եւ հարկադրուած է եղել ընդունելու Ոսկանի բնագիրը: Չնայած միայն այն հանգամանքը, որ Մխիթարը Ոսկանի օրինակով իր հարտարակած բնագիրը համեմատել է լատինական վուլգատայի հետ, պէտք է համոզէր Զօհրապեանին, որ այստեղ այլ օրինակ չունենալու մասին խօսք լինել չի կարող, այլ պարզապէս Մխիթարը լատինական վուլգատայի մասին ունեցել է նոյն հայեացքը, ինչ որ Ոսկանը:

հիմնաւորապէս ձեւափոխել է ըստ Ոսկանի[53], բայց Թադէոս վարդապետի խօսքերից[54] հազիւ թէ հնարաւոր է գալ այդպիսի եզրակացութեան:

Նոյնպէս հազիւ թէ Ոսկանի ազդեցութիւնից զերծ են Աւետարանի եւ ամբողջ Նոր Կտակարանի բազմաթիւ հրատարակութիւնները. օրինակ՝ 1680, 1685, 1710, 1732, 1740, 1759 թուականների Վենետիկի, 1668, 1698 թուականների Ամստերդամի եւ այլ տեղերի հրատարակութիւնները:

Ոսկանի հրատարակութիւնը՝ չնայած իր բոլոր թերութիւններին, գերիշխել է համարեա 150 տարի՝ մինչեւ 1805 թուականը: Նրան վերջնականապէս դուրս է մղել Զօհրապեանի հրատարակութիւնը: Հայր Յովհաննէս Զօհրապեանը եղել է ներկայացուցիչներից մէկը Մխիթարեան Վենետիկի Սուրբ Ղազարի միաբանութեան՝ վերջինիս ամենաբարձր ծաղկման ժամանակաշրջանում: Նա լատիներէն լաւ գիտէր. կարդինալ Մայիի հետ միասին պատրաստել եւ հրատարակել է Եւսեբիոսի Ժամանակագրութեան հայերէնից լատիներէն թարգմանութիւնը, եւ տիրապետում էր դասական հայերէնին՝ գրաբարին: Նա չատ էր զբաղւում հայ մատենագրութեամբ, սակայն նրա գլխաւոր աշխատանքը եղել է քննական հիմնաւորուած բնագրով հայերէն Աստուածաչնչի հրապարակումը՝ իր ժամանակի պահանջներին եւ ըմբռնումներին լիովին համապատասխան: Մինչ այժմ գերիշխում է նրա բնագիրը, ինչպէս նաեւ՝ ընդհանուր գծերով, հայ մատենագրութեան մէջ Աստուածաչնչի հարցի մասին նրա հայեացքներն ու կարծիքները:

Վերյիշենք նրա հրատարակութեան վերնագիրը, որ հաղորդում է. «ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ՄԱՏԵԱՆ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԱՅ Ըստ ճչգրիտ թարգմանութեան նախնեաց մերոց՝ ի հելլենականն հաւատարմագոյն բնագրէ ի հայկականս բարբառ: Նորոգապէս ի լոյս ընծայեալ յընտրելագոյն գրչագիր գաղափարէ, համեմատութեամբ այլեւայլ օրինակաց, հանդերձ կարեւոր ծանօթութեամբք բնաբանին: Յաչխատասիրութենէ տեառն Հ. Յովհաննու Զօհրապեան վարդապետի, ի միաբանութենէ Մեծին Մխիթարայ րաբունապետի եւ առաջին աբբայի: Տպագրեալ հրամանաւ Տ. Տ. Ստեփաննոսի Ագոնց աստուածապատիւ արհիեպիսկոպոսի եւ առաջնորդի ուխտին Սրբոյն Ղազարու, 1805, ի Վանէտիկ, ՌՄԾԴ., ի գործարանի Սրբոյն Ղազարու»:

Հրատարակութիւնը մէկ մեծ հատորով է, քառածալ (in 4⁰), մի քանի

---

[53] Հմմտ. **Զարբհ.**, Հայկ. մատենագիտ., էջ 383-385:

[54] Ճաշոց, Վենետիկ, տպ Գասպար Սահրադեանի եւ Թադէոս Համազասպեանի, 1686-1688, էջ 2-3. «Եւ աջողութեամբ Տեառն առդիպեցաւ մեզ աստ Ճաշոց իմն վաղեմեան ամբողջ եւ անթերի՝ ի գանձուց հնոց թագաւորացն Հայոց, զոր եւ առընթեր եղեալ Աստուածաշնչոցն մատենից, գտի զնա ամենեւին համեմատ եւ համաձայն ընթերցուածովք, գլխաթուովք եւ համարագրովք»:

նկարով. կազմուած է. երեք գլխով Առաջաբանից՝ էջ 3-11, Գրքերի վերնագրերից՝ էջ 12, Հին Կտակարանից՝ էջ 1-648, Նոր Կտակարանից՝ էջ 649-836, եւ, ներածուԹեամբ Հանդերձ, անկանոն գրքերի Յաւելուածի մասը՝ էջ 1-29: Այդ նոյն բնագիրը նա տպագրել է նաեւ ուԹածալ (in 8^0), չորս հատորով, որի վերջին հատորը պարունակում է Նոր Կտակարանը եւ Յաւելուածը: Նրա հրատարակուԹեան պարունակուԹիւնը, որ առանց փոփոխման վերցուած է 1319 թուականի իր հիմնական ձեռագրից (ձեռագրերի մեր նկարագրուԹիւնների մէջ՝ SK³ էջ 18), կազմուած է Հին Կտակարանից՝ Ծնունդք, Ելք, Ղեւտական, Թիւք, Յեսու, Դատաւորք, ՀռուԹ, Ա-Դ. ԹագաւորուԹեանց, Ա-Բ. Մնացորդաց, Ա-Բ. Եզրի, Նէեմի, Եսթեր, Յուդիթ, Տովբիթ, Ա-Գ. Մակաբայեցւոց, Սաղմոսք, Սողոմոնի Ա-Դ. գիրքք, Յոբ, Եսայի, ԺԲ. մարգարէք, Երեմիա՝ իր մասերով, Դանիէլ, Եզեկիէլ: Նոր Կտակարան՝ Աւետարանք ըստ Մատթէոսի, Մարկոսի, Ղուկայ, Յովհաննու, Գործք առաքելոց, Է. Թուղթք Կաթողիկեայք, ԺԴ. Թուղթք Պօղոսի, ՅայտնուԹիւն. եւ Յաւելուած՝ Սիրաք, Սիրաքի խօսքերը, Եզրի Գ., Մանասէի Աղօթքը, Կորնթ. Գ. Թուղթ, Հանգիստ Յովհաննու եւ Աղերս Եւթաղի: Սա, ինչպէս յետոյ կտեսնենք, կիլիկեան դարաշրջանի հայերէն Աստուածաշնչի կանոնի ճշգրիտ վերարտադրուԹիւնն է, այն տարբերուԹեամբ, որ յաւելուածում Զօհրապեանի ունեցած գրքերը ձեռագրերում սովորաբար գտնւում են գրքերի բուն շարքերում, չնայած կան ձեռագրեր, որոնց մէջ այս կամ այն անկանոնը չկայ: Նա առաջինը տպագրեց միայն հայերէն ձեռագրերում գոյուԹիւն ունեցող՝ Հին Կտակարանի իւրաքանչիւր գրքի գլխացանկերը եւ նախադրուԹիւնները, որ չեն արել ո՛չ Ոսկանը եւ ո՛չ միւսները:

Ասացինք, որ Աստուածաշնչի խնդրի մասին Զօհրապեանի կարծիքները գերիչխում են մինչեւ այժմ: Հայ գրականուԹեան մէջ նա առաջինը դրեց այդպիսի հարց եւ քննարկեց այն: ՀրատարակուԹեան խորագիրն իսկ հաղորդում է նրա կարծիքի էուԹիւնը. հայերէն թարգմանուԹիւնն արուել է յունական բնագրի ամենահաւատարիմ օրինակից: Նա (այսինքն Զօհրապեանը) իր առջեւ ունեցել է նախնիների ճշգրիտ թարգմանուԹիւնը եւ ընտրելագոյն գրչագիրը:

Իսկապէս, հայերէն Աստուածաշնչի հարցում չատ մեծ է Զօհրապեանի վաստակը, բայց այսպիսի թեթեւ վերաբերմունքը այն խնդիրներին, որոնց լուծման վրայ անհրաժեշտ է չատ աշխատել եւ որոնց նաեւ անհրաժեշտ է մօտենալ մեծ զգուշուԹեամբ, ունակ է մեզ կասկած ներշնչելու նրա քննական ունակուԹիւնների նկատմամբ: Մխիթարեանները խորապէս ներշնչուած էին Մովսէս Խորենացու հեղինակաւոր նշանակուԹեամբ. ըստ Խորենացու՝ հայերէն Աստուածաշնչի այժմ գոյուԹիւն ունե-

ցող թարգմանուԹիւնն արուել է յունարէնից, հայոց եկեղեցու հայրերը մերժել են առաջին բնագիրը, որ թարգմանուել էր ասորերէնից, Զօհրապեանի համար եզրակացուԹիւնը որոշուած էր, նա աւելացրել է գոյները, բնագրի, թարգմանուԹեան եւ ձեռագրի մասին օգտագործելով գերազրական աստիճանի բոլոր բնորոշող բառերը:

Երեք մասի բաժանուած Զօհրապեանի ներածուԹիւնը պատմում է.

1) Աստուածաշնչի ծագման, նրա յունարէն եւ եբրայերէն բնագրերի եւ հայերէն բնագրի նշանակուԹեան մասին.

2) այն ուԹ ձեռագրերի մասին, որոնցից օգտուել է Զօհրապեանը իր հրատարակուԹեան համար եւ Ոսկանի ու այլոց հրատարակուԹիւնների մասին.

3) ըստ ինչ տուեալների է Զօհրապեանը պատրաստել եւ հրատարակել իր Աստուածաշունչը:

ԱկնառուԹեան համար բերենք նրա հիմնական մտքերը: Աստուածաշունչը գրուել է եբրայերէն՝ եբրայեցի ժողովրդի համար: Դրա սկիզբը դրել է Մովսէսը, իսկ միւս մարգարէները չարունակել են նրա աշխատանքը: Պաղոմէոսի օրօք 72 եբրայական ռաբբիներ այն եբրայերէնից Թարգմանել են յունարէնի: Այդ ԹարգմանուԹիւնը գերագոյն հեղինակուԹիւն է ստացել, աւելի է յարգուել բնագրից, որ հաստատուել էր մասորական բնագրից եւ Ակիւղասի, Թէոդոտիոնի եւ Սիմաքոսի երկրորդային ԹարգմանուԹիւններից յետոյ: Սակայն ԵօԹանասնից բնագիրը եւս, չարամիտների կամ անուշադիր գրիչների ձեռքով տեղ-տեղ եղծուել է աղաւաղման, եւ որպէսզի վերականգնուի հին բնագիրը, Որոգինէսը Գ. դարում կազմել է իր Վեցիջեանը (Hexapla)՝ քննական նշաններով՝ աստղանիշերով (*) եւ բրգաձեւերով (~ կամ .~): Կոստանդիանոս Մեծի օրօք Եւսեբիոսը կայսեր հրամանով բազմացրեց Hexsapala-ն, հրատարակելտարածելով այն 50 օրինակով:

Հայերէն ԹարգմանուԹիւնն արել են սուրբ Սահակը եւ Մեսրոպը, նրանք այն Թարգմանեցին երկու անգամ, քանի որ «մերժեցին Աստուածաշնչի ասորերէնից Թարգմանուած մասը», երբ իրենց աշակերտների միջոցով Կոստանդնուպոլսի պատրիարքից ստացան «ճշգրիտ» եւ «հաստատուն» յունարէն օրինակը: «ԳրեԹէ աներկբայ ունիմք» ասում է Զօհրապեանը, «իմաստասիրել լինելոյ այնմ ի հաւատարմագունէն ի հելլենական գաղափարս... վեցիջեան օրինակէ անտի Որոգինեայ»[55]*: Դրան որպէս*

[55] [Աստուածաշունչ Զօհրապեանի, էջ 4]: Այս միտքը Զօհրապեանից առաջ արտայայտել են Վիստոն եղբայրները՝ Մովսէս Խորենացու թարգմանութեան հրատարակութեան նախաբանում.- Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց եւ Աշխարհացոյց. **Moisis Chorenensis** Historiae Armeniacae Libri III Accedit ejusdem scriptoris epitome Geographiae... Հայերէն եւ լատիներէն, Notisque illustrarunt Gulielmus et Geor-

ապացոյց են ծառայում հայերէն բնագրերում պահպանուած Որոգինեան քննական նշանները: Հայերը բնագիրը վերարտադրեցին ճշգրիտ՝ բառ առ բառ, մեծագոյն զգուշութեամբ, որին չատ նպաստեց հայերէնի եւ յունարէնի խօսքի կառուցուածքի նմանութիւնը: «Այնպէս անվթար յերիւրեցին ի մերս հայրենի բարբառ», ասում է նա, «մինչեւ համարձակիմ ասել, զի եթէ ի նմա զբառ ինչ կամ զգրախեց մի կամիցի ոք փոփոխել, կամ յաւելուլ եւ կամ նուազեցուցանել, արդարեւ չմարթի առանց խանգարելոյ զսքանչելի ներդաշնակութիւն չարագրութեանն»: Եւ այսպիսի անյարիրութիւն ասում է մի մարդ, որը ծանօթագրութիւններում հազարներով նշել է տարբեր ձեռագրերի սխալներ, բացթողումներ եւ յաւելումներ:

Յաջորդ՝ երկրորդ գլուխը պատմում է ձեռագրերի եւ հրատարակութիւնների մասին: Զօհրապեանն իր տրամադրութեան տակ ունեցել է Վենետիկի Մխիթարեան մատենադարանի ութ ամբողջական ձեռագիր, Ոսկանի հրատարակութիւնը, Աւետարանի չուրջ 30 ձեռագիր եւ մի քանի Ճաշոց: Նա բաւական պատկերաւոր ձեւով տալիս է Վենետիկի մատենադարանի Աստուածաշնչի այդ բոլոր ութ ընդօրինակութիւնների նկարագրութիւնը, եւ մենք կօգտուենք ձեռագրերի նրա նկարագրութիւններից, իսկ Ոսկանի հրատարակութեան մասին նրա կարծիքն արդէն բերուած է:

Երրորդ գլխում բերուած են դատողութիւններ բուն հրատարակութեան մասին: Այստեղ նա ասում է, թէ Աստուածաշնչի բոլոր գրքերի ո՛ր մասն է համարել անհրաժեշտ դնել հրատարակութեան մէջ, ինչպիսի՛ յաջորդականութիւն է պահպանել եւ ինչպէ՛ս է օգտուել ձեռագրերից: Նրա համոզմամբ հիմնական ձեռագիրը՝ այսինքն SK^3-ը, ամենակարեւոր նշանակութիւնն ունի, եւ ինքը նրան նախընտրութիւն է տալիս, իսկ միւս ձեռագրերի տարընթերցումները բերում է ծանօթագրութիւնների մէջ: Նա ձեռագրերն իրապէս չի բաժանել ըստ խմբերի, անուններ չունեն, եւ ներկայացում են հետեւեալ կերպ. SK^3 ձեռագիրը կոչւում է «օրինակ». նրա բացայայտ սխալները սրբագրւում են մնացած բոլոր ձեռագրերի բացառապէս միակերպ ընթերցումներով: Եթէ կէսը կամ գոնէ երկու ձեռագիր ունեն «օրինակ»ից տարբեր ընթերցումներ, ապա այն ծանօթագրութեան մէջ նշւում է հետեւեալ կերպ. «ոմանք այսպէս կամ այնպէս», իսկ եթէ կէսից աւելին չեն համապատասխանում «օրինակ»ին, նշւում է «բազումք այսպէս կամ այնպէս». եւ վերջապէս մէկ օրինակի ընթերցումները նշուել են «մի օրինակ այսպէս»: Այսպիսի խմբաւորումը ոչ մի հնարաւորութիւն չի տալիս իմանալու, թէ յատկապէս ո՞ր ձեռագրերն են միասին վերցրած կազմում «ոմանք» կամ «բազումք»:

---

gius, gul. Whistoni Filii, Լոնդոն, տպագր.՝ Վիստոն եղբայրների, տպարան Կարոլի Անքերսի, 1736, էջ XI (2 չհ, XXIV, 412 էջ):

Մենք ունենք բոլոր ութ ձեռագրերի եւ Ոսկանի հրատարակութեան տարընթերցումները, բայց դժբախտաբար չնորհիւ Զօհրապեանի յղումների տարօրինակ եղանակի, չենք իմանում, թէ որ ձեռագիրն ինչպիսի տարընթերցումներ ունի: Եւ եթէ նրա հրատարակութեան մէջ թերութիւններ կան, ապա սա գլխաւորներից մէկն է: Նա աշխատել է վերականգնել հնագոյն բնագիրը. հիմք է ծառայել «ի ձեռնագրէ ամնի, որպէս ասի՝ Գէորգայ վարդապետի» ընդօրինակուած արժանահաւատ ձեռագիրը, չնայած Զօհրապեանը չգիտէր, թէ ո՞վ էր այդ Գէորգը, բայց ճիշտ էր գուշակել, որ ձեռագիրը կիլիկեան ծագում ունի, դրա համար էլ այն համարել է կատարելութիւն: Նա չգիտէր եւ չէր էլ կարող իմանալ, որ այդպիսի ծագումը նրան պէտք է որոշ զգուշութիւն եւ թերահաւատութիւն ներշնչէր, այդժամ էլ նա չէր ասի, որ ունի, «հաւատարիմ թարգմանութիւն ճշգրտագոյն յունական բնագրի եւ լաւագոյն ձեռագիր»: Նոյն կերպ էլ նախաբանում արտայայտուած նրա դրոյթներից չատերը քննադատութեան չեն դիմանում: Այսպիսիք են՝ յունարէն բնագրից երկրորդ լիակատար թարգմանութեան մասին կարծիքը, տեսակէտը՝ թէ իբր կիլիկեան դարաշրջանի ձեռագրերը կատարեալ են, եւ թէ Հին Կտակարանի գլխացանկերը եւ նախադրութիւնները թարգմանուած են այլ լեզուից, եւ հաւասար կերպով նաեւ այն, թէ հայերէն թարգմանութիւնը կատարելութիւն է: Զօհրապեանի մտքերի այս հիմնական դրոյթները մեծ մասամբ փոփոխուած կամ մերժուած են, չխօսելով արդէն բուն Աստուածաշնչի բնագրի վերաբերեալ նրա կարծիքի մասին: Սակայն անառարկելի է Զօհրապեանի վաստակը հայերէն Աստուածաշնչի բնագրի պատմութեան մէջ: Նա առաջինը տուեց բնագիրը, մեզ թոյլ ենք տալիս օգտագործել այսպիսի եզր՝ «կիլիկեան Աստուածաշնչի», ինչպէս այն կարդացել են հայերը՝ սկսած ԺԳ. դարից:

Քննական բնագրի ապագայ հրատարակիչը կարող է հիմնուել տարընթերցումների նրա հաւաքած հարուստ նիւթի եւ նրա համառօտ, բայց շատ գործնական ծանօթագրութիւնների վրայ: Նա եւրոպական բոլոր գիտնականներին հնարաւորութիւն է տուել առաւել ճիշտ նայելու հայերէն Աստուածաշնչի բնագրի վրայ:

Նրա Առաջաբանը, ինչպէս տեսանք, չօշափում է Աստուածաշնչի ընդհանուր հարցերը՝ հայերէն տարբերակի խնդրի պարզաբանումների համար: Այնուհետեւ այդ հարցի վերաբերեալ Զարբհանալեանը գրել է առաւել մանրամասն, բայց դատողութիւններով Զօհրապեանից առաջ չի գնացել:

Զօհրապեանի հրատարակութեամբ, ինչպէս ասուեց, վերջնականապէս դուրս մղուեց Ոսկանի բնագիրը, այժմ մի ամբողջ հարիւրամեակի

ընթացքում արդէն իչխում է այս բնագիրը. 1817 թուականին Պետերբուրգում, 1860 թուականին Վենետիկում, 1893-1895 թուականներին Կոստանդնուպոլսում վերարտադրում են Զօհրապեանի բնագիրը:

Աստուածաչունչը Պետերբուրգում հրատարակել է ռուսական աստուածաչնչական ընկերութիւնը: Այն ցանկացած քննադատութիւնից ցած է՝ կոպիտ սխալներով, սակայն էժանութեան պատճառով շատ տարածուած է: Նրա մէջ չկան հայկական կանոնի շատ գրքեր:

1860 թուականի Վենետիկի հրատարակութեան վերնագիրը հետեւեալն է. «Գիրք Աստուածաչունչք Հին եւ Նոր Կտակարանաց, Ըստ միաբան վաղեմի գրչագրաց մերոց եւ յոյն բնագրաց», մէկ հատորով, քառածալ (in 4°), 1224 էջ: Այն պարունակում է Զօհրապեանի հրատարակութեան բոլոր մասերը՝ գրքերի նոյն դասաւորութեամբ, միայն Սիրաքը տեղադրուած է Սողոմոնի Իմաստութեան գրքից յետոյ:

Բնագրի մասին որոշակի ոչինչ ասել չի կարելի. վերջինիս վերնագիրն աւելի համեստ է, քան Զօհրապեանինը. բայց եթէ բառացի պարզաբանենք իմաստը, ապա ստիպուած կլինենք ընդունել իր իսկ՝ հրատարակչի շատ ենթակայական (սուբեկտիւ) տարրեր: Դժբախտաբար բնագիրն առանց որեւէ առաջաբանի[56] է, ի՞նչ ձեռագրեր են օգտագործել եւ ինչպէ՞ս պէտք է հասկանալ «Ըստ... յոյն բնագրաց» բառերը, մնում է հանելուկ: Հրատարակութեան նպատակը եղել է չքեղ տպագրուած, նկարներով զարդարուած բնագիր տալը, բայց հրատարակիչը բազմախոստում վերնագրով դուրս է եկել պարզ շրջանակից: Սակայն մենք պէտք է ասենք, որ այս հրատարակութիւնը որեւէ քննական նշանակութիւն չունի, չնայած պատահում են յունարէնի տարընթերցումներով էջեր, օրինակ՝ 193, 303, 458, 470, 519, 546, 678 եւ Սիրաքի ամբողջ գրքում, սակայն այդ տարընթերցումները կամայական բնոյթ են կրում, եւ յայտնի չէ, թէ ինչու է հրատարակչին յարմար եղել նշել միայն այս տարընթերցումները եւ ոչ ուրիշները:*

Կոստանդնուպոլսի վերջին՝ 1893-1895 թուականի հրատարակութիւնն ունի հետեւեալ վերնագիրը. «Աստուածաչունչ մատեան Հին եւ Նոր Կտակարանաց, ըստ ճշգրիտ թարգմանութեան նախնեաց մերոց, համեմատութեամբ եբրայական եւ յունական բնագրաց». ամերիկեան աստուածաչնչական ընկերութեան հրատարակութիւն է: Առաջաբանում ասուած է, որ աստուածաչնչական ընկերութիւնը ցանկացել է հրատարակել հայերէն Աստուածաչունչը, եւ այն յաջող տարածելու համար նախապէս ապահովել է Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքի հեղինակա-

[56*] Առաջաբանը տե՛ս **Հ. Արսէն Բագրատունի,** Յառաջաբան Աստուածաշունչ գրոց, Հրտ. պտրստ. Հ. Ներսէս Տէր-Ներսէսեան.- Բազմավէպ, 1966, ԺԱ-ԺԲ., էջ 347-54:

ւոր հաւանութիւնը: Ըստ ընկերութեան կանոնագրի, ասուած է առաջաբանում, նրա հաշուին կարող են հրատարակուել Սուրբ Գրոց բնագրեր՝ միայն եբրայական հիմնօրինակից, իսկ հայկական հոգեւորականութիւնը չհամաձայնեց հրաժարուել հին թարգմանութիւնից: Այնժամ հանգուցեալ Ներսէս Վարժապետեան պատրիարքն այսպիսի ղիջում արեց. նա թոյլատրեց առանց որեւէ փոփոխութեան հրատարակել հին բնագիրը, միայն թէ՝ այն համեմատել եբրայական բնագրի հետ եւ տարբերութիւնները տպել ծանօթագրութիւնների մէջ:

Եբրայերէնի եւ յունարէնի հայ գիտակներից կազմուել է յանձնաժողով, որը համեմատել է ամբողջ Աստուածաշունչը եւ աւելի քան 12000 տարբերթերցումներից ընտրել է ամենակարեւորները եւ տեղադրել ծանօթագրութիւնների մէջ: Հիմնական բնագիր թողնուեց Զօհրապեանինը, այնպէս որ այս դէպքում եւս բնագրի քննութեան առումով որեւէ առաջընթաց չենք կարող նշել: Գրքերը տպագրուել են առանց Նախադրութիւնների, Հին Կտակարանի կանոնը եբրայականն է, այնպէս որ չկան հետեւեալ գրքերը. Եզրի Ա. (-լատինական վուլգատայի՝ Եզրի Բ.), Յուդիթի գրքերը, Մակաբայեցոց երեք գրքերը, Սողոմոնի Իմաստութիւնը, Սիրաքի գիրքը եւ Բարուք մարգարէութիւնը:

Սաղմոսարանի հրատարակութիւնների մասին չենք խօսի. դրանք երբեւէ չեն հրատարակուել որպէս Աստուածաշնչի մաս, այլ՝ որպէս եկեղեցական պաշտամունքային գիրք՝ այդպիսի նպատակի համար յատուկ յարմարութեամբ:

Վենետիկում 1827 եւ 1854 թթ. յատուկ հրատարակուել է Սողոմոնի Իմաստութեան գիրքը՝ հայերէն, յունարէն եւ լատիներէն լեզուներով եւ «Իմաստութիւն Յեսուայ, որդւոյ Սիրաքայ, եւ թուղթ Երեմիայ մարգարէի առ գերեալսն ի Բաբիլոն», Վենետիկ 1833 թուական: Սիրաքը եւ Երեմիայի թուղթը առանձին գրքով յայտնաբերուել են Վենետիկի Մխիթարեաններ-ի մի ձեռագրում՝ գրուած 1418 (ՊԿԷ.) թուականին, եւ նկատելով Զօհրապեանի հրատարակութեան համեմատ նրա բնագրի տարբերութիւնը, առանձնայատուկ տպագրեցին այն:

Աստուածաշնչի 1860 թուականի հրատարակութեան մէջ վերատպուած է Սիրաքի այդ բնագիրը, որը շատ բաներով տարբերւում է Զօհրապեանի բնագրից: Երկու բնագրերն էլ աւարտւում են 42րդ գլխով, ի դէպ՝ երբ յունարէն եւ լատիներէն բնագրերն ունեն 50 գլուխ: Այս տարբերութիւնն աւելի վաղ էին նկատել: Այս կրճատման պատճառը դեռեւս պարզաբանուած չէ. արդեօք սկզբնօրինակից թերթե՞ր են կորել, կամ թարգմանիչների ունեցած հիմնօրինակն ունեցել է միայն այս 42 գլո՞ւխը. որոշակի ոչինչ ասել հնարաւոր չէ: Դեռեւս Ստեփաննոս Լվով-

ցին նկատելով բնագրի այդ թերութիւնը, լատինական վուլգատայից [ի նորոյ] թարգմանեց ամբողջ գիրքը, եւ մի քանի ձեռագրում ունենք նրա թարգմանութիւնը:

Անհրաժեշտ ենք համարում յիշատակել Աստուածաշնչի մասերի եւս երկու նորագոյն հրատարակութիւն՝ վերջերս յայտնաբերուած Մնացորդաց գրքերի հնագոյն օրինակը, եւ հայերէն հնագոյն ձեռագրի՝ Մոսկուայի Արեւելեան լեզուների Լազարեւեան ճեմարանի Աւետարանի լուսատիպը: Երկու հրապարակումների համար էլ պարտական ենք նշուած ճեմարանի պրոֆեսոր Գրիգոր Խալաթեանցին:

Պրոֆ. Խալաթեանցը 1896 թուականի ամռանը աշխատում էր Էջմիածնի մատենադարանում. այն չրջանում, երբ վանքի միաբանութեան անդամ Եղիա վարդապետ [Ջալալեան]ը զբաղուած էր Աստուածաշնչի բոլոր ձեռագրերի համեմատութեամբ: Վերջինս պրոֆեսորի խնդրանքով նրա ուշադրութիւնը հրաւիրեց մի ձեռագրի վրայ, որի մէջ Մնացորդաց գրքերն իրենց բովանդակութեամբ տարբերւում էին հայերէն Ընկալեալ բնագրից: Պրոֆ. Խալաթեանցը մօտ ծանօթանալով նոր բնագրի հետ, համոզուեց, որ նրանում պահպանուել է Մնացորդաց գրքերի աւելի հին տարբերակը եւ դրա մասին հաղորդում տպեց «Արարատ» ամսագրի յուլիսի համարում՝ տպագրելով նորայայտ թարգմանութեան մի քանի հատուած[57]: Այդժամ Սահակ եպիսկոպոս Խապայեանը Երուսաղէմից նրան հողորդեց, որ այնտեղ՝ պատրիարքական մատենադարանում Աստուածաշնչի մի ձեռագրում առկայ է այդ տարբերակը եւ որ դեռեւս 1773 թուականին այն նկատել է Սարգիս վարդապետը: Պրոֆ. Խալաթեանցին յաջողուեց նշուած եպիսկոպոսի միջոցով ստանալ Երուսաղէմի օրինակի ընդօրինակութիւնը՝ ձեռագրի նկարագրութեան հետ. այդ օրինակը, որպէս առաւել հին, նա դրեց իր հրատարակութեան հիմքում եւ համեմատելով էջմիածնի բնագրի հետ, 1899 թուականին հրատարակեց Մոսկուայում: Այդ՝ «Գիրք մնացորդաց ըստ հնագոյն հայ թարգմանութեան» հրատարակութիւնը (Editio princeps) կազմուած է՝ մեծադիր (in folio) ռուսերէն առաջաբանից՝ էջ I-IV, հայերէն առաջաբանից՝ էջ Ա-ԺԱ., երկու ձեռագրի նկարագրութեամբ, 115 էջ բնագիր Երուսաղէմի ձեռագրի (-J²), ծանօթագրութիւնների մէջ համեմատութեամբ էջմիածնի ձեռագրի (-Jl), եւ նոյն ձեռագրերի լուսատիպ երկու էջի հետ[58]:*

---

[57]* Մի կարեւոր գիւտ Ս. Էջմիածնի մատենադարանում. Ա. եւ Բ. Մնացորդաց գրքերի ասորերէնից հայ թարգմանութիւնը, Հրատ. Գրիգոր Խալաթեանց.- Արարատ, 1896/Ե., էջ 311-317:

[58] Գիրք մնացորդաց ըստ հնագոյն հայ թարգմանութեան. Ջառաջինն ած ի լոյս ըստ կրկին ձեռագիր օրինակաց, հանդերձ Բ. լուսագիր նմանատպութեամբք նոցին Գրիգոր Խալաթեանց, Մոսկուա, տպ. Վաւվառէ Գատցուկի, 1899, ՌՑԽԸ. ԺԱ, 118

Երկու առաջաբաններն էլ նպատակ ունեն ընթերցողին ծանօթացնելու բուն հրատարակութեան եւ նորայայտ բնագրի հայերէն տարբերակի մի քանի ընդհանուր հարցերի հետ: Պրոֆ. Խալաթեանցը ճիշտ է գուշակել, որ նորայայտ բնագիրը ներկայացնում է Մնացորդաց գրքերի հին տարբերակը, ժամանակով աւելի հին է հայերէն Ընկալեալ բնագրի թարգմանութիւնից, եւ ենթադրել է, թէ նրա մէջ թաքնուած է «ասորերէնից» կատարուած հին հայերէն թարգմանութիւն (էջ I): Նա իր միտքն առաւել որոշակի ձեւակերպում է հետեւեալ կերպ. «ես ենթադրում եմ, որ Մնացորդաց գրքերի առաջին հայերէն թարգմանութիւնը կատարուած է ասորերէնից, այն հնագոյն ասորական թարգմանութիւնից, որը յայտնի է Թարգում անուամբ» (էջ IV): Նրա այս ենթադրութիւնը այժմ հիմնաւորուած եւ ապացուցուած է պր. Մառի կողմից՝ նոր բնագրի հիմնաւոր ուսումնասիրութեամբ[59]*:*

Երկու յօդուած՝ մէկը Վենետիկի մխիթարեան Զրաքեանի[60]*, եւ միւսը՝ գերմանացի գիտնական Ֆէտտերի*[61]*, տեղեկութիւններ են տալիս պրոֆ. Խալաթեանի հրատարակութեան մասին՝ նորայայտ հայերէն թարգմանութեան հիմքի մասին հեղինակների կարծիքներով, մի փոքրիկ յօդուած էլ տպուեց «Հանդէս ամսօրեայ»ում*[62]*: Հ. Ք. Զրաքեանը հաստատում է հրատարակչի այն միտքը, որ նորայայտ հայերէն թարգմանութեան հիմքբնագիրը եղել է ասորական Պշիտտան, եւ նա ձգտել է այդ ապացուցել նորայայտ բնագրի 9 տուն (Մնաց. Ա., 11-19) համեմատելով եբրայա-*

էջ (այսուհետեւ՝ Գիրք մնացորդաց, հրատ. Գ. Խալաթեանցի):

59 Անհրաժեշտ ենք համարում ուշադրութիւն դարձնել յարգելի պրոֆեսորի առաջաբանի մի քանի անճշտութիւնների վրայ. ա) Ասորական հին բնագիրը, ինչպէս յայտնի է, կոչւում է ոչ թէ «Թարգում», այլ՝ «Պշիտտո», բ) «Կորիւն»ում յիշատակում չկայ ասորերէնից հնագոյն կամ սկզբնական հայերէն թարգմանութեան մասին (էջ I). գ) նաեւ ճշգրիտ չի խօսում առաջին թարգմանիչների *առաջին* եւ *երկրորդ* թարգմանութիւնների մասին, ըստ Կորիւնի նրանք ստուգում եւ ձեւափոխում էին մի անգամ արդէն արուած թարգմանութիւնը: Այլ հարց է, եթէ գրական աւանդութիւնից անկախ հաստատենք տարբեր թարգմանութիւնների գոյութիւնը: դ) Էջմիածնի վանքի ձեռագրի՝ պր. Խալաթեանցի թուագրումը ճիշտ չէ. այն վերաբերում է ոչ թէ ԺԷ. դարին, այլ՝ ԺԵ. կամ առ առաւելն ԺԶ. դարին. ձեռագրում գտնելով 1635 թ. նշումը՝ նրա հայերէնով նկարագրութեան մէջ (էջ 9) Խալաթեանցը ճիշտ է կռահել, որ այն գրուել է «1635 թուականից առաջ», իսկ ռուսերէն առաջաբանում՝ առանց որեւէ վերապահութեան օգտագործում է՝ ԺԷ. դար: Ձեռագրի մէջ գտել ենք 1600 թ. մի գրառում՝ գրուած կրկին բուն ձեռագրից աւելի ուշ, իսկ գրի բնոյթը եւ օգտագործուած թղթի տեսակն առանց այդ տարեթուի էլ ցոյց են տալիս ձեռագրի հնութիւնը. համեմատի՛ր ստորեւ՝ ձեռագրի մեր նկարագրութիւնը JL (Հ^{մր} 67):

60 **Հ. Ք. Զրաքեան**, Գիրք Մնացորդաց ըստ հնագոյն հայ թարգմանութեան.- Բազմավէպ, 1900, էջ 117-122:

61 **Ֆ. Ֆէտտէր,** Մնացորդաց գրոց նորագիւտ բնագիր մը.- Բազմավէպ». 1900, էջ 458-460 (թարգմանութիւն Letterarische Rundschau-ից՝ 1900, փետրուար 1, Հ^{մր} 2):

62 Ա. եւ Բ. Մնացորդաց գրքերու նորագիւտ հայ թարգմանութիւնը.- Հանդէս ամսօրեայ, 1896, էջ 315:

կան, ասորական եւ Եօթանասնից բնագրերի հետ: Իսկ Ֆետտերը բնագրերի հապճեպ համեմատութեամբ եզրակացրել է. 1. «...մեր բնագիրը, ոչ թէ յունականէն թարգմանուած է, ինչպէս պաշտօնականը, այլ սեմական բնագրէ մը՝ ըլլայ ասորական, ըլլայ եբրայական»: 2. Թարգմանութիւնը չի արուել Փշիտտայից, այլ աւելի հին բնագրից: 3. Յունարէնն բնագրի համեմատ այն ինքնուրոյն է, «վերջապէս հաւանական կ'երեւի մեզ որ ի Մնացորդաց Թէոդոտիոնի Մնացորդաց թարգմանութիւնը մեզի պահուած ըլլայ»: «Սակայն վերջնական արդիւնքը կստացուի», եզրակացնում է նա, «Դեռ չքննած թէ այս հայերէն բնագիրը ինչ աղերս ունի Եբրայերէնին, Յունարէնին, Պեշիտտային եւ Վուլկատային հետ, ապահով դատաստան մի բնականապէս անկարելի է»:

Այդ ցանկութիւնն իրականացաւ: Պրոֆ. Ն. Յա. Մառը արդէն վաղուց զբաղուած է նոր բնագրի ուսումնասիրութեամբ եւ իր աշխատանքի գլխաւոր արդիւնքները վերջերս հրատարակեց «Кавказскій Вестник» ամսագրի այս տարուայ ապրիլին, էջ 66-83. «Новооткрытый армянскій текстъ Паралипоменонъ» («Մնացորդաց նորայայտ հայերէն բնագիրը»): Պրոֆ. Մառի յօդուածի հիմնական մտքերն արտայայտւում են հետեւեալում. նորայայտ «Այս բնագրում իսկապէս հնամենի շատ գծեր ունենք, սակայն հազիւ թէ այն ներկայացնում է Սուրբ Գրքի համապատասխան մասի հնագոյն հայերէն թարգմանութիւնը» (էջ 67): «Այս բնագիրը գերագոյն աստիճանի արժէքաւոր է, նրանում հետաքրքրական նիւթերի մեծ առատութիւն կայ», սակայն այդպիսի նիւթ հայկական Ընկալեալ բնագրում մենք նախկինում էլ ենք ունեցել (էջ 69): Վիստոն եղբայրների արտայայտած կարծիքը՝ Եօթանասուն թարգմանիչների բնագրից հայերէնի թարգմանուածութեան մասին իշխում է մինչեւ օրս, որովհետեւ հայերէն բնագրի վրայ քիչ աշխատանք է արուել, իսկ այդպիսի աշխատանքը վաղուց կարող էր համոզել, որ չնայած կարծես թէ արտաքուստ հայերէն Ընկալեալ բնագրի թարգմանութիւնն արուել է յունարէնից, բայց նրա հիմքում ընկած է հին ասորերէն բնագիրը: Այսպիսի թարգմանութեան մասին հայ մատենագրութեան մէջ աւանդոյթ է պահպանուել՝ Թովմա Արծրունի եւ Գրիգոր Նարեկացի հեղինակների երկերում: Բայց եւ առանց այդ աւանդոյթի էլ՝ «Սուրբ Գրոց վրացերէն թարգմանութիւնը, անկասկած, անմիջաբար կախուած է հայերէն տարբերակից» դրոյթը կծառայէր որպէս հաստատում հայերէն թարգմանութեան ասորերէն հիմնօրինակի մասին կարծիքի (էջ 73): Հայերէն թարգմանութեան մասին այս հիմնական դրոյթներն առաւել մեծ չափով են հաստատւում Մնացորդաց գրքերի նոր տարբերակով:

Ընդօրինակողների անփութութեան պատճառով նորայայտ Մնացորդաց բնագիրը եւս մեզ է հասել որոշ փոփոխութիւններով, այդուհան-

դերձ, Ընկալեալ բնագրի հետ համեմատած՝ նրա հնչիւնաբանութեան, քերականութեան եւ բառագանձի հնամենիութիւնը բաւական նկատելի է (էջ 74): Հայերէն նորայայտ բնագրի տարբերակը համեմատելով ասորերէն, վրացերէն եւ եբրայերէն թարգմանութիւնների հետ, պրոֆ. Մառը կարծում է, որ ընդհանրապէս հայերէն բնագրի հիմքը պէտք է համարել ասորերէնը, բայց ոչ այն ասորերէնը, որ այժմ կայ. նաեւ՝ որ հայերէն բնագիրը չի պահպանուել այն տեսքով, ինչպիսին այն եղել է սկզբնապէս: Դա երեւում է նրանից, որ բաւական յաճախ են այն դէպքերը, երբ վրացերէն բնագիրն աւելի համապատասխանում է ասորերէնին, ինչպէս նաեւ հայերէնը՝ աւելի եբրայերէնին, այսինքն՝ ասորերէնի առաջին նախօրինակին, հետեւաբար՝ ասորերէն, հայերէն, վրացերէն բնագրերը եբրայերէնից եւ մէկը միւսից թարգմանուելուց յետոյ, ինքնուրոյնաբար փոփոխուել են յուներէն բնագրի եւ եբրայական թարգումի ազդեցութեամբ, եւ ըստ այդմ՝ իւրաքանչիւրն առանձին պահպանել է միւսներում կորսուած հնագոյն ձեւերը:

Պրոֆ. Խալաթեանցի մէկ այլ հրատարակութիւնն է «Աւետարան հին հայերէն թարգմանութեամբ», գրուած 887 թուականին[63]*:*

Ռուսերէն եւ ֆրանսերէն լեզուներով համառօտ առաջաբանին յաջորդում է առաւել մանրամասնը՝ հայերէնով: Վերջինում տրւում է ձեռագրի նկարագրութիւնը՝ բերելով բոլոր յիշատակարանները (էջ Ա-Գ.), տարբերթերցումների աղիւսակները եւ ձեռագրի բնագրի բոլոր առանձնայատկութիւնները՝ տպագրի համեմատ (չի ասուած՝ ո՞ր հրատարակութեան. էջ Դ- ԺԱ.) եւ գլուխների աղիւսակը՝ ըստ լուսապատճէնի թերթերի: Տարօրինակ է, որ պրոֆ. Խալաթեանցը հրատարակելով այսպիսի ձեռագիր եւ առաջարկելով համեմատութիւնների այսպիսի հարուստ նիւթ, ինքը ոչ մի եզրակացութիւն չի անում եւ հայ գրչութեան հնագոյն յուշարձանի նշանակութեան ու դերի մասին եզրայանգումներ անելը թողնում է ապագայ հետազօտողին[64]*:*

Առօրեայ սովորական կեանքում Աստուածաշնչի լրիւ բնագիրն այն նշանակութիւնը չունի, ինչ Աւետարանը, ողջ Նոր Կտակարանը եւ Սաղմոսները, ուստի եւ հասկանալի է, որ լրիւ Աստուածաշնչի վեց հրատա-

[63] Աւետարան ըստ թարգմանութեան նախնեաց մերոց գրեալ Յ.Զ. թ. հայոց եւ ամի Տեառն 887. լուսատիպ հրատարակութիւն գրչագրի Լազարեան ճեմարանի արեւելեան լեզուաց. արդեամբք պատուոյ հոգաբարձուի ճեմարանիս Իշխան Սիմեօնի Աբամելիք-Լազարեան, Մոսկուա, ՌՅԻԸ. - 1899: Фототипическое изданіе рукописи Лазаревскаго института Восточныхъ языков на иждивеніе почетнаго попечителя института князя С. С. Абамелекъ-Лазаева. Москва, 1899. Изданіе in folio, II + ԺԲ. + 229 листов фототипіи (այսուհետեւ՝ Լազարեան Աւետարանի նմանատիպ, 1899):

[64] Տե՛ս Հանդէս ամսօրեայ. 1898, էջ 155: * «Կ» ստորագրութեամբ՝ «Նոր հրատարակութիւնք» տեսութիւն է՝ ՀԱ, 1898, էջ 151-156:

բակուրթիւնների դիմաց կարելի է տասնեակներով հաշուել Աւետարանի, Նոր Կտակարանի եւ Սաղմոսարանի հրատարակութիւնները: Հ. Գ. Զարբհանալեանն իր «Հայկական մատենագիտութեան» մէջ տալիս է դրանց ցանկը, բայց՝ հազիւ թէ ամբողջական: Աւետարանը՝ հրատարակուած տարբեր վայրերում, առաւելապէս եկեղեցական պաշտամունքի նպատակների համար (տե՛ս Զարբհանալեան, էջ 75-78) հաշւում է 13 հրատարակութիւն, դրանք մեզ համար այնքան էլ կարեւոր չեն, որքան ամբողջ Նոր Կտակարանի հրատարակութիւնները (էջ 502-505). Ամստերդամում՝ 1668, 1698 թթ., Վենետիկում՝ 1710, 1720, 1740, 1752, 1766, 1789, 1874 թթ., Պետերբուրգում՝ 1814, 1859 թթ., Փարիզում՝ 1825, 1828 թթ., Մոսկուայում՝ 1834ին՝ գրաբար եւ աշխարհաբար թարգմանութիւն, Զմիւռնիայում՝ 1841, 1842, 1843 թթ., երկրորդ անգամ աշխարհաբար՝ 1849 թուականին, Կալկաթայում՝ 1844 թուականին, Լոնդոնում՝ 1854 թուականին, Նիւ Եորքում՝ 1841ին: Զարբհանալեանը նորագոյն հրատարակութիւնները չի թուարկել: Սաղմոսարանն ըստ նրա հաշուարկման հրատարկուել է 42 անգամ (էջ 595-608), ընդ որում՝ ամենահինը նա համարում է 1565 թուականի տպագրութիւնը, քանի որ նրան յայտնի չի եղել 1515 թուականի Վենետիկի առաւել հին հրատարակութիւնը[65]*:*

Հին հայերէնով՝ գրաբարով գրուած Աստուածաշունչն այժմ ոչ բոլորին է հասկանալի, ըստ այդմ էլ խօսակցական լեզուի թարգմանելու փորձեր են արուել. արեւմտահայերէնով կայ այդպիսի թարգմանութեան մի քանի հրատարակութիւն՝ Զմիւռնիայում 1859 եւ 1870 թթ. եւ Կոստանդնուպոլսում՝ 1857 թ.: Բայց ամերիկեան աստուածաշնչական ընկերութեան հրատարակած այդ թարգմանութիւնները կատարելապէս

---

[65] Հրատարակութիւնների համար հմմտ. **V. Ermoni,** Բազմավէպ, 1900, էջ 301-302: Նաեւ՝ Յուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Կազմեց Հ. Յակովբոս վ. Տաշեան՝ Մխիթ. ուխտէն (Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց հրատարակեալ ի Մխիթարեան միաբանութենէ. հտ. Ա. Աւստրիա, Գիրք Բ.), Վիեննա, տպ. Մխիթարյան, 1895 (2 չհ., XVII, 277, ԿԴ., 1164 երկսիւն էջ, 7 ն. թ. նկարք). անուանացանկում՝ Կտակարան բառի ներքոյ՝ էջ 1104 (այսուհետեւ՝ Տաշեան, Յուցակ): Թէ՛ մէկը եւ թէ՛ միւսը թուարկել են ո՛չ բոլոր հրատարակութիւնները: **Coybeare**, Armenian version of New Testament.- A Dictionary of the Bible, Volume I, p. 154. **Eb. Nestle.**- ի՝ Herzog, Realencykl., III, 96, որտեղ յիշատակւում է Աւետարանի Ս. Պետերբուրգում 1814, 1819 (թաթարերէն եւ հայերէն), 1828 (հին եւ նոր հայերէն), Վենետիկի 1825 թուականի, Կալկաթայի 1844 թուականի, Նոր Կտակարանի Զօհրապեանի բնագրի, Վենետիկի 1824, 1863 թթ., Աւետարանի 1869 թ., Նոր Կտարակարնի 1864 թ. Վիեննայի հրատարակութիւնները: Կարնոյ Սանասարեան վարժարանի ձեռագրացուցակում մենք գտանք հետեւեալ անուանումը՝ Հին Կտակարան **Ղուկասու դպրի Վանանդեցւոյ,** Ամսթելոտամ, 1713, էջ 736, եւ նոյնը՝ **Զարբհ.**, Հայկ. մատենագիտ. (էջ իա.), բայց ոչ մի տեղ ոչինչ որոշակի չգտայ այդպիսի հրատարակութեան մասին, անգամ Զարբհանալեանի մօտ. եւ թւում է Հին Կտակարան անուան տակ թաքնւում է «Սուրբ Գրքի պատմութիւնը»:

անբաւարար են: Ամենավերջին ժամանակներս՝ 1896 թուականին, Կոստանդնուպոլսի հայերն ուզում էին նոր թարգմանութիւն պատրաստել: Որպէս օրինակ թարգմանուել էր Մատթէոսի Աւետարանի մի մասը եւ ուղարկուել էր հայերէնի բոլոր մասնագէտներին եւ գիտակներին՝ հին հայերէնից նորի թարգմանելու լաւագոյն եղանակի մասին կարծիքներ ժողովելու համար: Բայց արեւմտահայերին պատուհասած դժբախտութիւնները ստիպեցին մոռանալ այդ կարեւոր գործը:

Հայ հին գրականութեան մէջ բաւական շատ են անկանոն երկերը. դրանցից մի քանիսը տարաժամանակ մտել են Աստուածաշնչի գրքերի կազմի մէջ, օրինակ՝ Կտակք ԺԲ. նահապետաց, Յովսէփի եւ Ասանէթի պատմութիւնը, Եզրի Դ. գիրքը եւ այլն, իսկ միւսները որպէս ընթերցման գրականութիւն հանդիպում են գլխաւորապէս տարբեր ձեռագիր ժողովածուների մէջ: Չնայած անկանոնների հարցը մեր հետազօտութեան խնդիրների մէջ չի մտնում, այդուհանդերձ առաջին տեսակը չենք կարող լռութեամբ շրջանցել: Մանրամասների մէջ չմտնելով կարող ենք ասել, որ վերջին ժամանակներս դրանցով զբաղուելու անհրաժեշտութիւն է առաջացել, եւ որպէս արդիւնք Վենետիկում հայերէնով երկու հատորով լոյս տեսան առաւել հետաքրքիր անկանոնների ժողովածուներ՝

Հատոր Ա. Անկանոն գիրք Հին Կտակարանաց, հրատարակութիւն Հ. Ս. Յովսէփեանի, ուրթածալ (in 8⁰), ԺԶ.+408, 1896 թ. եւ՝

Բ.՝ Անկանոն գիրք Նոր Կտակարանաց, հրատարակութիւն Հ. Ե. Տայեցի, ուրթածալ (in 8⁰), ԺԵ.+491:

Առաջին հատորի համար հրատարակուել է Հ. Բ. Սարգիսեանի մանրակրկիտ հետազօտութիւնը: Առաջին հատորի մէջ մտել են Աստուածաշնչի ձեռագրերում հանդիպող բոլոր անկանոները, բայց երկրորդի մէջ Նոր Կտակարանի այդպիսի որեւէ անկանոն ներառուած չէ: Երկու հատորների առաջաբաններում տրուած է հեղինակների օգտագործած ձեռագրերի համառօտ նկարագրութիւնը[66]*:*

Ոսկանի եւ Զօհրապեանի հրատարակութիւններն իրենց դարն ապրել են, ի յայտ են եկել նոր պահանջներ. եւ որքան հեռանում ենք, այնքան աւելի է փոխւում հայերէն թարգմանութեան պատմութեանը վերաբերող հիմնական հայեացքը: Երկարատեւ լռութիւնից յետոյ եւրոպական

---

[66] Ուսումնասիրութիւնք Հին Կտակարանի անվաւեր գրոց վրայ, գրեց **Հ. Բ. Վ. Սարգիսեան,** Վենետիկ, 1898, 8⁰, 484 էջ: Հայերէն չիմացող մասնագէտների համար առաջին հատորի մասին բաւական մանրամասն տեղեկութիւն կայ Ռոբինսոնի Montague Rhodes James, Apocrypha Anectoda.- ի Ռոբինսոնի՝ Text and Studies, 1899. էջ 158-168: Ինքը՝ Ռոբինսոնը Ռոդի համար կազմել է հայերէն հրատարակութեան մանրամասն բովանդակութիւնը: Հմմտ. նաեւ Preuschen, Die arm. Uebersetzung der 12 Testamenten.- Ztschr. für N. T. Wissenschaft, 1900, էջ 108 եւ յաջորդ էջեր:

չատ մասնագէտներ սկսել են իրենց ուշադրութիւնը դարձնել հայերէն բնագրի վրայ. առանձին յօդուածներով եւ մենագրութիւններով հայերէն թարգմանութեան ընդհանուր կամ մասնաւոր հարցերի մասին ի յայտ են եկել տարբեր աշխատանքներ: Սակայն այդպիսի աշխատանքների յաջողութեան համար պակասում է ամենագլխաւորը, որ Աստուածաշնչի հայերէն տարբերակի քննական հրատարակութիւնն է: Վերն ասուած ամբողջից ընթերցողը պէտք է համոզուի, որ Զօհրապեան բնագիրը չի կարող բաւարարել նոր պահանջները[67]*: Նա միամիտ վստահութեամբ ԺԴ. դարի սկզբի ձեռագիրը համարում էր կատարելութիւն, այսինքն՝ կիլիկեան չրջանի վերջին ժամանակների ձեռագիրը, եւ ինքն իրեն չէր տալիս ամենապարզ հարցը. սկզբնական թարգմանութիւնն ինչպիսի՞ կամայական եւ ակամայ փոփոխութիւնների է ենթարկուել առնուազն ինը դարի ընթացքում: Հասկանալի է, որ նա դեռեւս չէր կարող իմանալ, որ հնում իսկապէս ժամանակ առ ժամանակ փորձեր են արուել ուղղելու, հետեւաբար՝ ձեւափոխելու բնագիրը, փոխարէնը՝ իր իսկ հրատարակութեան բազմաթիւ տարընթերցումները պէտք է որ պատկերաւոր ձեւով նրան ցոյց տային յամենայն դէպս ակամայ փոփոխութիւնների դոյութիւնը: Ինչը չկարողացաւ անել կամ չնկատեց Զօհրապեանը, պարտաւոր է անել քննական բնագրի ապագայ հրատարակիչը: Հայերէն թարգմանութիւնը կարեւորութիւն ունի եւ որպէս հին թարգմանութիւն կարող է մեծ ծառայութիւն մատուցել վերականգնման համար յունարէն եւ ասորերէն հիմնօրինակները, որոնցից կատարուել է այդ թարգմանութիւնը: Վերջին դէպքում նրա նշանակութիւնը մեծանում է նաեւ նրանով, որ նրա առաջին թարգմանութիւնն արուել է կորսուած ասորական հիմնօրինակից, եւ չնայած հետագայում ենթարկուել է հիմնաւոր սրբագրման ըստ Եօթանասնիցի, բայց այդուհանդերձ՝ ոչ այնչափ, որ սկզբնական հիմնօրինակի հետքեր մնացած չլինեն: Հայերէն թարգմանութեան ապագայ հրատարակչի խնդիրը յստակ է՝ այս թարգմանութեան հնարաւորինս հնագոյն ձեւի վերականգնումը: Եւ այս խնդիրը հնարաւոր է յաղթահարել տարբեր միջոցներով: Դրանցից առաջինը հէնց բուն ձեռագրերի բնագրերի համեմատութիւնն է, յետոյ՝ համեմատումը մի կողմից յունարէն եւ ասորերէն հիմնօրինակների, եւ միւս կողմից՝ վրացերէն թարգմանութեան հետ, երկրորդ՝ ըմբռնումն այն եղանակի եւ ձեւերի, ըստ որոնց իրականացուել են բնագրի հետեւողական սրբագրումները: Հայոց մատենագրութեան կիլիկեան դարաշրջանը, անկասկած, հսկայական նշանակութիւն ունի հայ*

[67] **Eb. Nestle.** Reaiencykl. III, 1897. «Eine unseren Anforderungen entsprechende neuere Ausgabe fehlt noch». * «Մեր պահանջներին համապատասխանող նոր հրատարակութիւնը դեռեւս բացակայում է»:

գրականութեան պատմութեան մէջ: Այդ դարաշրջանին մենք պարտական ենք առաւել վաղ շրջանի ստեղծագործութիւնների մեծ մասի պահպանման համար: Մնում է պարզել մի կարեւոր եւ շատ հետաքրքրական հարց. ի՞նչ տեսքով են կիլիկեցիները մեզ փոխանցել նախնիների այդպիսի ժառանգութիւնը[68]*: Եւ այս հարցը մենք հերթի ենք դնում, որովհետեւ հիմք ունենք մտածելու, որ Աստուածաշնչի վերաբերմամբ արձանագրուած է փաստ, որ այդ դարաշրջանի ներկայացուցիչներն իրենց թոյլ են տուել կրկին խմբագրել եւ յունարէն հիմնօրինակի հետ համեմատել հնագոյն թարգմանութեան եթէ ոչ ամբողջ բնագիրը, ապա գոնէ մի մասը: Այնպէս որ հետազօտողը երբեք այս հանգամանքը չպէտք է աչքաթող անի: Աւետարանները եւ Հին Կտակարանի առանձին գրքեր պահպանուել են առաւել հին եւ կիլիկեան դարաշրջանից անկախ օրինակներով. նոր հրատարակութեան ժամանակ անառարկելիօրէն դրանց պէտք է նախընտրութիւն տրուի, իսկ ամբողջ բնագրի վերաբերմամբ՝ կիլիկեան ձեռագրերի խմբի շարքում պէտք է դրուի առաջինից անկախ եւ Հայաստանի յայտնի կենտրոններում ընդօրինակուած ձեռագրերի խումբ: Հիմնօրինակների հետ համեմատութիւնը շատ մեծ աշխատանք է պահանջում. սկզբում պէտք է պարզուի յունարէն եւ ասորերէն ձեռագրերի խումբը, որոնք կարող են լինել հայերէն թարգմանութեան եւ սրբագրումների հիմնօրինակները, ընդ որում՝ չպէտք է մոռանալ, որ այդպիսի հիմք օրինակութիւնների ծագման ժամանակի համեմատ՝ նրանք եւս տեղ-տեղ փոփոխութեան են ենթարկուել: Հեշտ չի լինի խնդիրը՝ հիմնօրինակի համեմատ հայերէն բնագրի որեւէ ընթերցման տարբերութեան դէպքում որոշելու, թէ ո՞ր ընթերցումը պէտք է նախընտրել: Հայերէն բնագիրն էլ իր կողմից կարող է օգնել հիմնօրինակի հնագոյն ձեւի վերականգնմանը:*

Այսպիսի դէպքերում մեծ ծառայութիւն կարող է մատուցել վրացերէն թարգմանութիւնը: Կոնիբէրի եւ պրոֆ. Մառի աշխատութիւնների[69] *չնորհիւ անվիճելի ապացուցուել է, որ վրացերէն տարբերակը թարգմանուած*

---

[68] Պրոֆ. Մառը, վերոբերեալ յօդուածում՝ «Новооткрытый армянский текстъ Параліпоменонъ» (Մնացորդաց նորայայտ հայերէն բնագիրը), էջ 72. հպանցիկ այսպիսի կարծիք է արտայայտում. «Լիովին հաւանական է, որ Սուրբ Գրքի հայերէն թարգմանութեան համար անհետեւանք չի մնացել հայկական եկեղեցու կիլիկեան շրջանը՝ լատինական եկեղեցու հետ նրա սերտ շփմամբ»:

[69] Պրոֆ. Մառի աշխատութիւնները դեռեւս հրատարակուած չեն, դրանք նա կարդում է Ս. Պետերբուրգի Համալսարանի Արեւելեան ֆակուլտետի դասախօսութիւններում: Անհրաժեշտ ենք համարում ասել, որ պրոֆ. Կոնիբէրը խօսել է միայն հայերէն եւ վրացերէն բնագրերի նմանութեան մասին, այլ ոչ թէ հայերէնից վրացերէնի թարգմանութեան մասին (նրա յօդուածը՝ The growth of the P'schitta version of the N. T. illustrated from the armenian and georgian versions. Americ. Journ. of theology, I, 1897, Հ՝ր 4). վերջին միտքը եւ նրա ապացոյցը պրոֆ. Մառինն է:

է հայերէնից, եւ յետոյ երկու տարբերակներն էլ իրարից անկախ ենթարկուել են Եօթանասնից թարգմանութեան ազդեցութեանը: Խմբագրական այսպիսի աշխատանքի ինքնուրոյնութիւնը եւ անկախութիւնը բաւական շատ դէպքերում բացառում է համատեղ ձեւափոխութեան հնարաւորութիւնը: Ուստի լիովին հասկանալի է, որ վրացերէն թարգմանութեան մէջ պահպանուել են աւելի հին շատ ընթերցումներ, որոնք հայերէնը կորցրել է:

Ահա հայերէն Աստուածաշնչի համար վրացերէն բնագրի կարեւորութեան մասին ինչ էր ասում պրոֆ. Մառը՝ դոկտորական բանավէճի իր ճառում. «Առանց հին վրացերէն բնագրի մանրամասն ուսումնասիրութեան հնարաւոր չէ լիովին պարզաբանել Սուրբ Գրոց հայերէն հին՝ առաջին թարգմանութեան հարցը: Առաւել եւս, Սուրբ Գրոց հայերէն բնագրի վրայ կատարուած քննական աշխատանքը՝ նրա սկզբնական տեսակի եւ հայ թարգմանիչների առջեւ եղած հիմնօրինակի լեզուի բացայայտման համար, չի կարող արուել առանց վրացերէն թարգմանութեան անմիջական օգտագործման, քանի որ վրացերէն թարգմանութիւնը յաճախ վերականգնում է հայերէն տարբերակի նախասկզբնական ընթերցումները՝ այն դէպքերում, երբ այն հասցրել է դրանք փոխարինել նորերով»[70]*:*

Իսկ ինչ վերաբերում է ուսումնասիրմանը այն մեթոդին, ըստ որի հները աստուածաշնչական բնագիրը ենթարկել են փոփոխութիւնների եւ շտկումների (հասկանալի է, այստեղ ենթադրւում է միայն գիտակցուած փոփոխութիւնը), ապա դրա համար հնագոյն ձեռագրերում մենք շատ հարուստ նիւթ ունենք: Այդ նիւթը կազմում են առաջին հերթին բազմաթիւ տարընթերցումների օրինակները, որոնք ընդօրինակողները նշանակել են ձեռագրերի լուսանցներում: Այդպիսի տարընթերցումներից շատերը նոյնաբար կրկնւում են մի քանի ձեռագրերում, իսկ նրանցից մի քանիսը գրուած են յունարէն, այնպէս որ դրանք մէկ կամ միւս օրինակողի գործ չեն, այլ որոշակի դպրոցի, եւ մենք յստակ տեսնում ենք հին թարգմանութեան աստիճանական եւ զգոյշ ձեւափոխման ընթացքը, երբ սրբագրողներն իրենց իրաւունք չէին վերապահում ջնջելու որեւէ բառ կամ նախադասութիւն եւ այն փոխարինելու մի ուրիշով: Նրանք ընտրութեան համար գրում էին թէ՛ մէկը եւ թէ՛ միւսը, բայց այդ նկատւում

---

[70] Պրոֆ. Մառի ճառը՝ «Об единствѣ задачъ армяно-грузинской филологии» («Հայվրացական բանասիրութեան խնդիրների միասնութեան մասին»), տպագրուել է «Кавказскій Вѣстникъ» ամսագրում (1902 թ., Հ՟ր 3, էջ 15-29): Ուշադրութեան արժանի են նրա խօսքերը՝ «Հայկական աւանդութիւնը, ըստ որի Սուրբ Գիրքը առաջին անգամ վրացերէն է թարգմանուել հայերէնից, արդէն իր հաստատումն է գտնում հին վրացերէն բնագրերում, եւ այս փաստի մանրամասն պարզաբանումը նոյնպիսի էական նշանակութիւն ունի ե՛ւ վրացականի, ե՛ւ հայկականի համար». էջ 25:

է մինչեւ որոշակի ժամանակաշրջան, օրինակ ԺԴ. դարից յետոյի ձեռագիր Աւետարաններում այդ երեւոյթն այլեւս չի հանդիպում, այլ մի տարրընթերցումը հանւում է, եւ պահպանւում է միւսը: Այդպիսի եղանակի պարզման երկրորդ միջոցը՝ երբ ունենք նոյն գրքի երկու կամ աւելի տարբերակ եւ դրանց առաջացման ժամանակի մասին մատենագրական վկայութիւններ: Այդպիսիք են, օրինակ, Մնացորդաց գրքերի երկու տարբերակները, Յայտնութեան երեք տարբերակները, Մարկոսի Աւետարանի ԺԶ. 9-20 տների մասի՝ երեքը, Յովհաննու Աւետարանի Ը. 1-12 տների՝ երեքը, առաքեալական թղթերի Եւթաղի առաջաբանի՝ երկուսը:

Ի վերջոյ, երրորդ միջոցը՝ որոշ ձեռագրերում առկայ գրառումներն են, որոնցում տեղեկութիւններ են հաղորդւում Աստուածաշնչի եւ Աւետարանների հաստատուած եւ ընդունուած «օրինակ»ների մասին:

Այդպիսի անուանակոչուած եւ հնում յայտնի «օրինակ»ները նշանակալի քանակ են ունեցել: Շատ յաճախ նրանք յիշատակւում են առանց որեւէ անուանման, միայն բնութագրող բառերով՝ «ընտիր եւ ստոյգ օրինակ», մի այլ անգամ՝ առաջին ընդօրինակողի անունով՝ «Գէորգի օրինակ», որից պատճէնուել է Վենետիկի SK[2] (Հմր 17) ձեռագիրը: Յայտնի են եղել Սաղմոսների «Գառնեցու» ձեռագիրը՝ արտագրուած «Սարկաւագի» կամ «Հաղբատեցու» առաւել հին օրինակից[71]: Աւետարանների ձեռագրերի մէջեւ առանձնանում էր «Մուրղանեցի» օրինակը: Բայց ամենակարեւորը երկու ձեռագրում առկայ նոյնական մի գրառում է, որտեղ ասւում է, որ ԺԲ. մարգարէից Մարգարէութիւնները համեմատուած են «երուսաղէմեան, ալեքսանդրեան, Որոգինէսի Քառիջեանի եւ Եօթանասուն թարգմանիչների» օրինակների հետ[72]: Այս հիանալի գրառմանը մենք դեռ կանդրադառնանք: Որեւէ կասկած չի կարող լինել, որ քանի որ հնում եղել են այդպիսի օրինակներ, եւ հանրայայտ հեղինակութիւն ու նշանակութիւն են ունեցել, ապա նրանք սրբագրուել են, յայտնի հետաքրքրութիւն են ունեցել եւ եղել են ձեռագրերի առանձին խմբերի նախագաղափարներ: Այդպիսի աշխատանքները թէկուզ եւ Աստուածաշնչի բնագրի նկատմամբ հայոց կենդանի հետաքրքրութեան եւ այդ բնագիրը կատարելագործելու նրանց ցանկութեան արտայայտիչներ են, բայց նրանցով նաեւ ապացուցւում է, թէ ինչպէս է աստիճանաբար եւ գիտակցաբար ձեւափոխուել առաջին թարգմանիչների հնագոյն թարգմանութիւնը:

---

[71] **Զարբհ.**, Պատմ. հայ նոր դպր., էջ 276-277՝ բերում է Սաղմոսների 1565 թ. տպագրի նշումը (նա այդ համարել է հնագոյն հրատարակութիւն), որով իմանում ենք, որ հրատարակիչ Աբգար դպիրը ընտրել եւ հրատարակել է՝ «լաւ եւ յընտիր օրինակէ Գառնեցոյ վարդապետի»:

[72] Այս գրառումը կայ երկու ձեռագրում՝ տե՛ս՝ 2. Ձեռագրերի նկարագրութիւններ՝ Բ. Հմր 4 եւ 5:

Գ. ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ինքնուրոյն եւ թարգմանական աստուածաբանական ստեղծագործուԹիւններով որքան հարուստ է հայ հին գրականուԹիւնը, նոյնքան աղքատ է նորը: Աստուածաչնչի, նրա գրական հարցերի ուսումնասիրուԹիւնն այսօր հայ մասնագէտներին չի հետաքրքրում: Ընդ որում՝ նրա հզօր ազդեցուԹիւնը հայ ժողովրդի հոգեւոր կեանքի, նրա մտածողուԹեան, գրական ստեղծագործուԹիւնների վրայ մեծ եւ անվիճարկելի է: Զխօսելով Ե. դարի հայ մատենագրուԹեան հնագոյն դարաշրջանի մասին, որի պատմուԹիւնը բոլոր մանրամասներով քննուած չէ, ազգային գրականուԹեան երկրորդ վերածննդի դարաշրջանում՝ կիլիկեան թագաւորուԹեան ժամանակ եւս գրականուԹեան լաւագոյն ներկայացուցիչներից շատերն աշխատել են Աստուածաչնչի վրայ, իսկ նորագոյն ժամանակներում կարծես թէ մոռացել են դրա մասին եւ դրանով քիչ են հետաքրքրուում:

ԵԹէ սկսէինք հաշուել Աստուածաչնչի ուսումնասիրուԹեանը վերաբերող՝ առանձին յօդուածների կամ առաւել ընդարձակ հետազօտուԹիւնների տեսքի բոլոր աշխատուԹիւնները, ապա կստանայինք մի աննշան թիւ:

Անհամեմատ շատ արել եւ անում են եւրոպական աստուածաբանները եւ հայագէտ- մասնագէտները, քան հէնց իրենք՝ հայերը: Եւրոպացիների աշխատանքներն ընդհանրապէս յատուկ բնոյթ ունեն. նրանք Աստուածաչնչի հայերէն թարգմանուԹիւնն ուսումնասիրում են գլխաւորապէս նրա համար, որպէսզի պարզեն այդ թարգմանուԹեան նշանակուԹիւնը բուն Աստուածաչնչի բնագրի քննուԹեան հարցերում[73]*:*

Հայերէն յատուկ աշխատուԹիւնների մէջ ամենահանգամանալի երկը Զարբհանալեանի «Մատենադարան հայկական թարգմանուԹեանց նախնեաց» գրքի «Աստուածաշունչ Գիրքը» գլուխն է[74]*: Այդ գլուխը զբաղեցնում է գրքի 57-245 էջերը եւ բաժանուած է 14 մասի:*

[73] **G. A. Schrumpf,** Les études armèn. en Europe, հայերէն թարգմանութիւնը՝ Շրումպֆ-Զարբհանալեան.- «Բազմավէպ», 1891, էջ 55՝ ասւում է. «Արեւմտեան բանասիրաց ու եւրոպացի գիտնոց հայկական լեզուի ուսմամբ հետաքրքրուելնուն գլխաւոր պատճառն եւ շարժառիթ եղած է Աստուածաշունչ Գրոց հինգերորդ դարու մէջ եղած ընտիր թարգմանութիւնն»:

[74] Զարբհանալեանն իր գիրքը կոչել է «Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց (Դար Դ-ԺԳ.), Վենետիկ, Մխիթարեան տպ., 1889»: Գրքի մէջ նա շատ յարմար խմբաւորել է յունարէնից, ասորերէնից եւ այլ լեզուներից Դ.-ԺԳ. դարերի յայտնի բոլոր թարգմանական ստեղծագործութիւնները եւ իւրաքանչիւրի մասին տուել է համառօտ բայց շատ արժէքաւոր տեղեկութիւններ: Սա լրացումն է նրա այլ աշխատութիւնների. «Հայկական մատենագիտութիւն, 1565-1883 թթ.» եւ հայոց հին եւ նոր գրականութեան պատմութեան երկու հատորների. կայ առաջինի երրորդ

1) «Թարգմանուլթիւն Եօթանասնից» («որուն համեմատ եղած է հայկականն»). էջ 59-68:

2) «Ասորի հին թարգմանուլթիւնք» (խօսում է Պշիտտայի թարգմանութեան մասին, որը Դ. դարում գործածական է եղել նաեւ հայոց մէջ). էջ 69-81:

3) «Առաջին թարգմանուլթիւն Սուրբ Գրոց յԱսորականէ» (այստեղ քաղում է Կորիւնի, Ղ. Փարպեցու, Մ. Խորենացու եւ Է. դարի հեղինակ Մեսրոպ Երէցի[75] պատմածները: Նրա եզրակացուլթիւնն այսպիսին է. «յայտնապէս կ'երեւնայ թէ երկու թարգմանութիւնք եղած են Աստուածաշունչ գրոց ի մեր լեզու: Առաջինն ըստ մեծի մասին յասորւոյն՝ ի ձեռն սրբոյն Սահակայ, եւ մասամբ ալ ի յունէ՝ ի սրբոյն Մեսրովպայ»). էջ 82-101.*

4) «Թարգմանչաց երթն ի Բիւզանդիոն», էջ 101-110.

5) «Երկրորդ թարգմանուլթիւն Սուրբ Գրոց ի յունականէ» (աշակերտները վերադարձել են եւ ուսուցիչներին ներկայացրել Եօթանասնից լաւագոյն օրինակները՝ պատրաստուած Պանփիլոսի եւ նրա աշակերտ ու ընկեր Եւսեբիոսի կողմից՝ Վեցիկեանի եւ Որոգինէսի Քառիկեանի հիման վրայ. Սահակը սկսեց ևորից թարգմանել թարգմանուած բնագիրը), էջ 110-113.

6) «Հնագոյն օրինակք Սուրբ Գրոց ի յոյն լեզու» (խօսում է Codices Sinaiticus, Alexandrinus, Vaticanus, Ephraemitanus եւ Vasilianus ձեռագրերի մասին), էջ 114-121.

7) «Հնագոյն գրչագիրք Սուրբ Գրոց ի հայ լեզու» (առաջին անգամ յիշատակւում են կարեւորագոյն ձեռագրեր՝ էջմիածնի վանքի Հ՝ր 153-173, Վենետիկի վանքի 13 ձեռագիր՝ առաւել մանրամասն նկարագրութեամբ, Երուսաղէմի Սուրբ Յակոբ հայկական վանքի հինգ ձեռագիր եւ մի քանի այլ ձեռագրեր: Ապա առանձնայատուկ բերուած են Աւետարանների ձեռագրեր՝ տարբեր գրադարանների պատկանող 4 օրինակ՝ Ժ., 9ը՝ ԺԱ., 5ը՝ ԺԲ. եւ 27ը՝ ԺԳ. դարերի), էջ 121-171:

8) «Հայ թարգմանուլթեան Սուրբ Գրոց կարգ եւ դասաւորուլթիւն», էջ 171-180:

9) «Անյայտ կամ անվաւեր գիրք ի Հին Կտակարանի», էջ 180-192.

10) «Անվաւեր գիրք Նոր Կտակարանի ի հայ թարգմանուլթեան». էջ 192-206.

հրատարակութիւնը՝ 1897 թ., երկրորդն ունի մէկ հրատարակութիւն՝ 1878 թ.: * Յիշատակած գրքերի յղումներ տե՛ս նախորդ էջերում:

[75*] Վրիպել է՝ Մեսրոպ Երէցը Ժ. դարի հեղինակ է. տե՛ս **Մեսրոպայ երիցու Վայոցձորեցւոյ** Պատմութիւն սրբոյն Ներսիսի Հայոց հայրապետի, աշխատ. Գէորգ Տէր-Վարդանեանի.- Մատենագիրք Հայոց, ԺԱ. հտ., Ժ. դար, Պատմագրութիւն, Անթիլիաս-Լիբանան, 2010, առաջաբան՝ էջ 631-666, բնագիրը՝ էջ 667-743:

11) «Հայկական թարգմանուԹեան հարազատուԹիւն» (խօսում է Նոր Կտակարանի աղճատուած տեղերի մասին), էջ 206-214.

12) «Արդեօ՞ք Սուրբ Գիրք ամբողջ ի հինգերորդ դարու թարգմանուած են ի հայ» (հարց, որին նա պատասխանել է հաստատաբար), էջ 215-227.

13) Հայ թարգմանուԹեան վրայ վերջին աշխատուԹիւն». էջ 227-234.

14) «Հայկական թարգմանուԹեան յարգ». էջ 234-245[76]**:*

Բերուած վերնագրերից պարզւում է, որ Զարբհանալեանն իր առջեւ հարցը լայն է դրել եւ ձգտում է այդ հարցը սպառել իր ամբողջ ծաւալով: Նա հաւաքած չատ նիւթ ունի, միայն թէ առանց բերելու կամ ոչ բաւարար ճշգրտուԹեամբ յիշատակելով իր աղբիւրները: Նրա համար, ինչպէս եւ Զօհրապեանի, թարգմանուԹեանը վերաբերող հարցում Խորենացին գերագոյն հեղինակուԹիւն է, որին նոյնիսկ Կորիւնի համեմատ է նախընտրուԹիւն տալիս: Զարբհանալեանը Զօհրապեանի ազդեցուԹեան տակ է. ինչպէս ամբողջ աշխատանքի ծրագիրը, նոյնպէս եւ առաջնորդող մտքերը փոխառնուած են նրանից: Համեմատելով երկու աշխատանքները, չի կարելի չնկատել երկուսի աչքի զարնող տարբերուԹիւնը. Զօհրապեանն առաջադրուած հարցին տուել է սեղմ, բայց պարզ լուսաբանում, ընթերցողի համար դժուար չէ նրա մտքերի ընթացքին հետեւելը. Զարբհանալեանի մօտ ընդգծուած է հարցին վերաբերող ամէնը տալու ձգտումը, բայց յաճախ դժուար է նրա մտքերը որսալը, չխօսելով ակնյայտ անճշտուԹիւնների մասին: Բերուած են տարբեր ձեռագրերի գրառումներ, եւ յաճախ ասուած չէ, Թէ որտեղ են գտնւում այդ ձեռագրերը, եւ բաւական չատ են նրանց Թուականների սխալները. աղբիւրները քաղւում են ոչ ճշգրիտ, կամ էլ բոլորովին չեն վկայակոչւում[77]*:*

Զարբհանալեանին է պատկանում նաեւ «Բազմավէպ»ում 1850 եւ 1851 Թուականների երկու համարներում՝ «Ցաղագս թարգմանուԹեան աստուածաշունչ տառից ի հայ լեզու» վերնագրով լոյս տեսած յօդուածը[78]*: Յօդուածը գրուած է գրաբարով եւ առաջ է թարգմանուԹեան մասին հին հեղինակներից քաղումներով՝ յարմար խմբաւորած ի մի: Քառասուն տարի առաջ Զարբհանալեանի գրած յօդուածը համեմատելով նրա վերջին աշխատանքի հետ, տեսնում ենք, որ հեղինակը այս ժամանակի ընթաց-*

[76]* Այս խորագրերը բերել ենք Զարբհանալեանի գրքից. վերջին երկուսի փոխարէն Մ.Տ-Մ. էջ 53 գրել է այս. «Վերջին գլուխները նուիրուած են Աստուածաշունչի հայերէն թարգմանուԹեան նշանակուԹեան բացատրուԹեանը»:

[77] Զարբհանալեանի այս աշխատանքը նախ մաս առ մաս հրապարակուել է «Բազմավէպ»ում՝ 1888, էջ 97, 108, 193, 208, 289 եւ 312. 1889. էջ 104-108:

[78] **Հ. Գ. Զարբհանալեան**, Ցաղագս թարգմանուԹեան Աստուածաշունչ տառից ի հայ լեզու.- Բազմավէպ, 1850, էջ 212-217, 1851 էջ 230-237:

քում իր հայեացքները չի փոխել: Ամբողջականութեան համար արժէ բերել եւս երկու յօդուած. «Յորդոյ գիրքը եւ անոր հայ թարգմանութիւնը»[79] եւ «Աստուածաշունչք. թարգմանութիւն եօթանասնից եւ հայկականն եւ ամբողջութիւն Նոր Կտակարանի»[80], երկուսն էլ լոյս են տեսել կրկին «Բազմավէպ»ում: Առաջինում հեղինակը ցանկանում է հայերէն թարգմանութեան մէջ մատնանշել եւ հաստատել ասորական հիմնօրինակի տների հետքերը, իսկ երկրորդում Հ. Ա. Սուքրին առաջին անգամ ընթերցողին ծանօթացնում է Աստուածաշնչի հայերէն ձեռագրերի որոշ նիւթերի հետ.

1. Հերոնիմոսի Առաջաբանը - Prologus Galeatus [Նախադրութիւն սաղաւարտեալ]- հին թարգմանութիւնը, որը Հ. Սուքրին վերագրում է Որոգինեսին (էջ 202-203):

2. Փարիզի արքունի մատենադարանում կայ մի հայերէն ձեռագիր, որը պարունակում է «Վասն Պտղոմեանցն պատմութիւն, թէ որչափ ժամանակս թագաւորեցին յետ Աղեքսանդրի Մակեդոնացւոյ»: Նա պարունակում է Աստուածաշնչի թարգմանութեան մասին յայտնի աւանդութիւնը եօթանասուն թարգմանիչների կողմից, ինչպէս նաեւ եօթանասուն թարգմանիչների անունները (էջ 203-205):

3. «Գիրք կայսերաց»ից քաղուած վկայութիւն Եւթաղի մասին, երբ նա յօրինեց Նոր Կտակարանի մասերի իր առաջաբանները, (էջ 205-206):

4. Եւսեբիոսի Թուղթը Կարպիանոսին՝ Ամովնի կանոնների մասին, Մատթէոսի Աւետարանից առաջ (էջ 206-207):

5. Հատուած Ժ. դարի հեղինակ Գր. Նարեկացու Երգ Երգոցի մեկնութիւնից, այն մասին, որ Երգ Երգոցը թարգմանուած է ասորերէնից (էջ 208):

6. Ղազար Բաբերդացու բացատրական խօսքը Աստուածաշնչի որոշակի բառերի նրա կազմած աղիւսակների վերաբերեալ (էջ 209-210).

7. Բերւում է ամբողջութեամբ. ա) «Իրք կնոջն չնացելոյ»՝ Յովհ. Ը., 1-12, բ) Յովհ. Ե., 4, գ) Մարկ. ԺԶ., 9-20, (էջ 211-212):

Սուքրիի կարծիքով Աստուածաշնչի թարգմանիչներն են եղել՝ Սահակը, Մեսրոպը, Յովհանը, Յովսէփը, Մովսէս Խորենացին, Եզնիկը եւ Ներսէս Լամբրոնացին: Ձեռագրերում նա գտել է նաեւ ինչ որ Յակոբի, Գինէոսի հետ միասին, եւ Յովհանին, որոնք աշխատել են բնագրի սրբագրման վրայ: Բայց ե՛րբ եւ ինչո՛ւմ են կայացել նրանց ուղղումները, մանրամասներն անյայտ են:

Բայց ամէնից հետաքրքիրը մի նոր աշխատանք է: Վերջերս լոյս է տեսել Ստոկհոլմում ապրող հայ մասնագէտ Նորայր Բիւզանդացու գիր-

---

[79] «Յորդոյ գիրքը [եւ անոր հայ թարգմանութիւնը]».- Բազմավէպ, 1874, էջ 29-37:

[80] **Հ. Ա. Սուքրեան,** «Աստուածաշունչք. թարգմանութիւն եօթանասնից եւ հայկականն. եւ ամբողջութիւն Նոր Կտակարանի».- Բազմավէպ, 1877, էջ 200-212:

քը՝ «Կորիւն վարդապետ եւ Ղորիւն թարգմանութիւնք՝ Գիրք Մակաբայեցւոց, Եւթաղ Աղեքսանդրացի, Ագաթանգեղոս եւ Փաւստոս Բիւզանդ»[81]*: Նորայրն իր գրքում, որի վրայ նա մեծ աշխատանք եւ ժամանակ է ծախսել, ձեռնարկել է լուծելու հայ գրականութեան երկու կարեւոր ստեղծագործութիւններին՝ Ագաթանգեղոսի եւ Փաւստոս Բիւզանդի պատմութիւններին վերաբերուող վիճելի հարցերը եւ բացայայտել, թէ Սուրբ Գրքի ո՞ր գրքերը, ե՞րբ եւ ո՞ր թարգմանիչներն են թարգմանել: Նրան հիմնաւորապէս յայտնի է հարցի հին եւ նոր գրականութիւնը. նա գիտակցաբար մի կողմ է թողնում նախորդների քննական այն եղանակները, որոնցով գրականութեան վիճելի հարցերի լուծման ժամանակ հիմնւում են գրական յուշարձանների տարբեր տեղեկութիւնների վրայ, եւ ձգտում է առաւելապէս լեզուի, վանկի եւ ոճի օգնութեամբ լուծել ամենադժուար հարցերը:*

Գիրքը կազմուած է ա) Յառաջաբանից՝ ե-իե., բ) Գլ. Ա. Կորիւնը եւ նրա թարգմանութիւնները, որտեղ նա յայտնում է Կորիւնի եւ նրա մատենագրական գործունէութեան մասին իր կարծիքի ամփոփումը. գ) Գլ. Բ. Ի՛նչ թարգմանիչներ են եղել Ե. դարում, ինչպիսի՛ ինքնուրոյն եւ թարգմանական ստեղծագործութիւններ են ունեցել նրանք, եւ քանի կարգի կարելի է բաժանել այդ թարգմանիչներին: Այս երկու գլուխը (էջ 1-35) կազմում են իւրատեսակ՝ դ) ներածական գլխաւոր աշխատանքի, իսկ այդ աշխատանքը կազմուած է փոքր գրքոյկի՝ Կորիւնի կենսագրութեան բառերի, դարձուածների եւ նախադասութիւնների համեմատութիւնից Ագաթանգեղոսի եւ Փաւստոս Բիւզանդի պատմութիւնների հետ, Մակաբայեցոց գրքերի եւ Եւթաղի առաջաբանների հետ մի կողմից, եւ միւս կողմից՝ նաեւ վերջիններիի՝ իրար միջեւ: Այս տաժանակիր աշխատանքն ընդգրկում է նրա գրքի 36-380 էջերը: Գրքի վերջում՝ էջ 381-484, կայ յաւելուած՝ ե) «Տեղեկութիւնք եւ լուսաբանութիւնք»՝ կազմուած 25 ծանօթագրութիւնից, որոնք պարունակում են տարբեր հարցերի չատ արժէքաւոր պարզաբանումներ եւ, մեր կարծիքով, աշխատանքի մէջ նշանակալի հետաքրքրութիւն ունեն:

Դեռեւս Նորայրից առաջ ճանաչուել էր Ե. դարի մի քանի հեղինակների լեզուի նմանութիւնն Աստուածաշնչի որոշ գրքերի թարգմանութեան լեզուի հետ[82]*, իսկ Նորայրը ցանկանում է հիմնաւորել կամ կա-*

---

[81] Թիֆլիս, 1900. in 8⁰, Իե., 520 էջ: * Այս գրքի յիշատակումներ տե՛ս նաեւ նախորդ էջերում՝ գրքի սկզբից սկսած:

[82] **Ա. Այտընեան,** Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, հանդերձ ներածութեամբ եւ յաւելուածով, Վիեննա, տպ. Մխիթարեան, 1866, էջ 154, ծանօթ. 9 (այսուհետեւ՝ **Այտընեան**, Քնն. քերակ.), նշել է Կորիւնի եւ Մակաբայեցոց գրքերի լեզուի նմանութիւն, իսկ Գ. Զարբհանալեանն այդպիսի նմանութիւն է գտել Եղիշէի եւ Մակաբայեցոց գրքերի լեզուների մէջ. նրա կարծիքով Մակա-

դապարել (կոդաւորել) այդպիսի ենթադրութիւնները: Նա կարծում է, որ Կորիւնի եւ միւսների նշուած երկերում, նախ՝ շատ են այնպիսի բառերը, որոնք, չնայած հանդիպում են Ե. դարի այլ մատենագիրների մօտ, սակայն Կորիւնը դրանք յաճախ է օգտագործում եւ յատուկ կապակցութիւններում, երկրորդ՝ կան դարձուածներ, որոնք սովորական են միայն Կորիւնի եւ նրանից կախում ունեցող հեղինակների համար. երրորդը՝ կան բարդ եւ ածանցաւոր բառեր, որոնք օգտագործում են միայն Կորիւնը եւ նշուած հեղինակները. եւ չորրորդ՝ միայն այդ երկերն են աւելի յաճախ հնարաւորութիւններ տալիս ուղղելու այդ ստեղծագործութիւնների մէջ սպրդած սխալները: Եւ այսպիսի՝ զուտ արտաքին, ենթադրութիւններով Նորայրն ուզում է ընթերցողին համոզել, որ յունարէնով գրուած Ագաթանգեղոսի եւ Փաւստոս Բուզանդի պատմութիւնների, ինչպէս նաեւ Մակաբայեցւոց գրքերի եւ Եւթաղի գործերի թարգմանիչը Կորիւնն է: Սուրբ Գրոց միւս գրքերի վերաբերմամբ նրա կարծիքն այսպիսին է. առաջին՝ Ե. դարի բոլոր թարգմանիչներին նա բաժանում է չորս դասի. նրա դասդասման հիմք են ծառայել կրկին ոճը եւ լեզուն: Պատմական գրականութեան մէջ (Կորիւն, էջ 2, Մովսէս Խորենացի, Գ., գլ. կ.) թարգմանիչներին բաժանում են խմբերի՝ առաջին կամ աւագ խումբ, եւ երկրորդ կամ կրտսերագոյն (թարգմանիչների Անանունի անուանացանկը՝ Զարբհ. ՀԹՆ, էջ 104, նրանց բաժանում է երեք կարգի): Պատմութիւնն աւագ է կոչում այն թարգմանիչներին, որոնք եղել են Սահակի եւ Մեսրոպի աւագ աշակերտները եւ որոնք այբուբենի ստեղծումից յետոյ առաջին թարգմանութիւնների ժամանակ օգնեցին իրենց ուսուցիչներին: Իսկ երկրորդները կամ կրտսերները եղել են այն աշակերտները, որոնք մեծ ուսուցիչների մօտ իրենց ուսումն սկսել են հայերէնի այբուբենով եւ նրանց օգնել են նախկինում թարգմանուած գրքերի սրբագրումների ժամանակ[83]*:*

Վիեննայի Մխիթարեան դպրոցը չբաւարարուեց պատմական աւանդութիւններով սահմանուած այդպիսի խմբաւորմամբ եւ ձգտեց մանրամասն բնութագրել իւրաքանչիւր խմբի առանձնայատկութիւնները, եւ երկու խումբը դարձրեց երեքը եւ չորսը[84]*: Նորայրը միանում է նշուած դպրոցի փաստարկումներին, ինքն էլ թարգմանիչներին բաժանում է չորս դասի եւ մանրամասն թուարկում է այն գրական աշխատանքները, որոնք, իր կարծիքով, կարելի է վերագրել այս կամ այն դասին: Նրա*

բայեցւոց թարգմանիչը եղել է Եղիշէն (*Բազմավէպ*, 1851, էջ 234):

[83] **Զարբհ.**, Պատմ. հայ դպր., 1897, էջ 289-299 եւ **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 100-110:

[84] Թադէոս Թոռնեանն իր հայոց լեզուի քրիստոմատիայի առաջաբանում՝ Հատընտիր ընթերցուածք ի մատենագրութեանց նախնեաց, հանդերձ ծանօթութեամբք ի Հ. Թադէոսէ Վ. Թոռնեան, հտ. Ա., Վիեննա, 1866, ՌՑԺԵ. (32, 550 էջ), նրանց բաժանում է չորսի, Այտընտ., Քննն. Քերակ. առաջաբանում՝ երեք խմբի:

խմբաւորումը ոչ լիովին է համընկում մխիթարեանների խմբաւորման հետ: Առաջին դասը նա Եզնիկի անունով կոչում է Եզնիկեան (Թոռնեանը՝ նոյնպէս), որին նա վերագրում է մի ինքնուրոյն երկ՝ Եղծ Աղանդոց եւ 22 թարգմանական գործ՝ Աստուածաշնչի գլխաւորութեամբ: Այդ դասի մէջ ճանաչւում է դասական հայերէն լեզուի կատարեալ իմացութիւնը եւ գործածութիւնը: Աստուածաշնչի ամբողջ թարգմանութիւնից Նորայրն այդ դասին չի վերագրում միայն Մակաբայեցւոց երեք գրքերը, Եւթաղի խորագրերը, գլխացանկերը եւ խրատներ, նաեւ՝ Հին կտակարանի գրքերի Նախադրութիւնները եւ մեկնութիւնները: Այդ դասը, նրա կարծիքով, թարգմանել է նաեւ աննկանոններ՝ Մանասէի Աղօթքը, Երեմիայի Թուղթը, առ Կորնթացիս Գ. Թուղթը եւ Յովհաննու Հանգիստը. Եզրի Ա. եւ Բ., Նէեմի գրքերի թարգմանութիւնը նա կասկածելի է համարում. Յովհաննու Յայտնութիւնը չնայած այդ դասի թարգմանութիւն է, նոր խմբագրման է ենթարկուել:

Երկրորդ դասը նա անուանում է Եփրեմեան, Եփրեմ Ասորու անունով (Թոռնեանի չորրորդ դաս): Այս խումբը ինքնուրոյն աշխատութիւն չունի, ունի ընդամէնը 9 թարգմանական ստեղծագործութիւն, Աստուածաշնչի թարգմանութեանը չի մասնակցել, իսկ դասի թարգմանութեան մէջ գլխաւոր տեղն զբաղեցնում են Եփրեմ Ասորու աշխատանքները: Լեզուն օրինակելի է համարւում, բայց նրա մէջ գերիշխում է ասորերէնի ազդեցութիւնը, եւ թարգմանութիւններն առատ են ասորաբանութիւններով:

Երրորդ դասը՝ Կիւրեղեան (Թոռնեանի՝ երկրորդը), Կիւրեղ Երուսաղէմցու անունով, ունի 11 թարգմանական ստեղծագործութիւն, գլխաւորապէս յունարէնից: Այս դասի լեզուն դեռեւս կանգնած է դասական կատարելութեան բարձրութեան վրայ, սակայն երբեմն արդէն նկատելի է մաքրութեան (clarté) նուազումը:

Չորրորդ դասը՝ Կորիւնեան (Թոռնեանի՝ երրորդ, Ագաթանգեղեան) ունի ինքնուրոյն աշխատութիւն՝ Մեսրոպ Մաշտոցի վարքը, թարգմանութիւններ՝ Մակաբայեցւոց երեք գրքերը, Եւթաղի ստեղծագործութիւնները, Ագաթանգեղոսի եւ Փաւստոս Բիւզանդի պատմութիւնները: Լեզուն յատկանշւում է աւելորդաբանութիւններով, անսովոր բարդ բառերով եւ մի իմաստի համար մեծաքանակ բառերի օգտագործումով:

Նորայրը Տեղեկութիւնք եւ լուսաբանութիւնք յաւելուածներում առանձին քննում է հետեւեալ հարցերը. 1) «Զթարգմանչաց Հայերէն Աստուածաշունչ մատենին» (էջ 381-384, ծնթ. 1). 2) «Յորում ամի գնացած են Կորիւն եւ իւր հինգ ուսումնակիցք ի Կոստանդնուպոլիս, եւ յորում ամի դարձած են ի Հայս» (էջ 384-385, ծնթ. 2). 3) «Քննութիւն թարգմանութեան գրոցն Մնացորդաց» (էջ 405-407, ծնթ. 10). 5) Թարգմանութիւն

գրոցն Ա. եւ Բ. Եզրի, եւ Նէեմեայ» (էջ 407-413, ծնթ. 11). 5) «Քննութիւն Թարգմանութեան Յովհաննու առաքելոյ Յայտնութեան գրոց» (էջ 413-432, ծնթ. 12). 6) Նախադրութիւնք եւ Գլխակարգութիւնք Հին եւ Նոր Կտակարանաց» (էջ 422-434, ծնթ 13), եւ 7) «Եւթաղի Աղեքսանդրացւոյ Յիշատակարան» (էջ 477-478, ծնթ. 20): Հարկ ենք համարում աւելացնել, որ բոլոր 25 ծանօթութիւններն աւելի կամ պակաս չափով կապ ունեն Աստուածաշնչի թարգմանութեան հարցի հետ:

Նորայրի աշխատութիւնն արուած է շատ բարեխղճօրէն՝ ինչ վերաբերում է իր նախորդների կարծիքների ներկայացմանը եւ նախաձեռնուած գրական խնդրի լուծման համար իր սահմանած հիմնական դրոյթի իրագործմանը: Սակայն հազիւ թէ որեւէ մէկը համաձայնի ճիշտ համարել այսպիսի հիմնաւորմը եւ հարցի այդպիսի առաջադրումը: Ըստ նրա՝ մատենագրութեան մէջ լեզուն լուծում է բոլոր կասկածելի հարցերը. նա այդպէս է վարւում թարգմանիչների խմբաւորման, Ագաթանգեղոսի եւ Փաւստոս Բուզանդի սկզբնական լեզուի որոշման, եւ, որ ներկայ դէպքում մեզ համար կարեւորագոյնն է, Սուրբ Գրքի տարբեր մասերի թարգմանութեան ժամանակը որոշելիս: Աստուածաշնչի տարբեր մասերը դիտարկելիս մենք կհամոզուենք, որ այն, ինչ նա համարում է չորրորդ կարգի աշակերտների թարգմանութիւն, օրինակ՝ Հին Կտակարանի Գլխացանկերը եւ Նախադրութիւնները, ոչ թէ թարգմանութիւն են, այլ ԺԳ. դարի հայ վարդապետի ինքնուրոյն աշխատանք. ինչպէս նաեւ Եւթաղի աշխատութիւնների մեր ունեցած բնագիրն ուշ ժամանակներում աղճատուած եւ վերաձեւուած աշխատանք է: Իսկ այդպիսի փաստերից մէկը բաւարար է համոզելու համար իւրաքանչիւրին, թէ որքան խիստ կարող է սխալուել նոյնիսկ հին հայերէնի այնպիսի գիտակ, ինչպիսին համարւում է Նորայրը, եթէ իր դատողութիւնների մէջ չենուի այդպիսի նեղ չափանիշի վրայ:

Վենետիկի մխիթարեան Հ. Զրաքեանի «Սուրբ Գրոց ուսումն ի Հայս» յօդուածը թռուցիկ տեսութիւն է տալիս Ե. դարից մինչեւ մեր օրերը հայերի արած տարբեր մեկնութիւնների եւ առանձին աշխատութիւնների վերաբերեալ: Այս յօդուածով կարելի է հեշտութեամբ կողմնորոշուել հեղինակների անունների եւ նրանց աշխատութիւնների հարցերում[85]*:*

Ահա հայ մասնագէտների բոլոր աշխատութիւններն այնպիսի հետաքրքիր հարցի մասին, ինչպիսին Աստուածաշնչի հայերէն թարգմանութիւնն է: Հնարաւոր է՝ մնացել են մեր կողմից չյիշատակուած որոշ յօդուածներ, ինչպէս նաեւ մեր ժողովրդի, եկեղեցու եւ գրականութեան

[85] **Հ. Ք. Զրաքեան**, Սուրբ Գրոց ուսումն ի Հայս.- Բազմավէպ, 1901, էջ 156-160 եւ 208-213:

պատմուլթեան դասագրքերում թարգմանիչների դարաշրջանին նուիրուած գլուխներ, բայց բոլոր դէպքերում, ինչպէս սկզբում ասացինք, առայժմ արուած է չատ քիչ, եղածն էլ բացառապէս Վենետիկի մխիթարեանների կողմից, որոնք պատկանելով մի դպրոցի, հիմնական դրոյթներում նոյնակարծիք են:

Ձեռնամուխ լինելով եւրոպական մասնագէտների աշխատուլթիւններին քննուլթեանը, պէտք է առանձին հարցերի ինքնուրոյն ուսումնասիրուլթեամբ զբաղուողներին տարբերենք նրանցից, ովքեր գրել են ընդհանրական հարցերի մասին՝ ընդհանուր կողմնորոշման նպատակով: Վերջինների թիւը չատ մեծ է, բայց նրանք մեծ մասամբ մէկը միւսին կրկնում են եւ հազուադէպ են որեւէ նոր բան տալիս. իսկ առաջինների աշխատանքները, ինչպէս կտեսնենք, տուել են չատ արժէքաւոր պտուղներ. արդիւնք ոչ այնքան հայ մատենագրուլթեան բազմակողմանի ուսումնասիրուլթեան, որքան չնորհիւ Աստուածաշնչին վերաբերող գրականուլթեան հետ հիմնաւոր ծանօթուլթեան:

Եւրոպական գրականուլթեան մէջ հայերէն թարգմանուլթեան մասին հնագոյն տեղեկուլթիւնները հիմնուած են Գէորգ Ալեքսանդրացու վկայուլթիւնների վրայ, որը 620 թուականին գրելով Յովհան Ոսկեբերանի վարքը, ի միջի այլոց հաղորդում է, որ սուրբ պատրիարքը իր աքսորի ժամանակ Փոքր Հայքի Կոկիսոն քաղաքում «հայերէն է թարգմանել Սաղմոսները եւ Նոր Կտակարանը»[86]: Բայց ԺԸ. հարուրամեակից սկսած՝ հայկական աղբիւրների հետ ծանօթուլթիւնը չատ ընդարձակուեց՝ չնորհիւ Շրեդերի, Լակրոզի, Հ. Ս. Սոմալի, Նոյմանի, Մովսէս Խորենացու Հայոց պատմուլթեան Վիստոն եղբայրների թարգմանուլթեան եւ այլոց[87]: Ոսկանի հրատարակուլթեան մասին Լակրոզի քննական կարծիքը վկայում է ոչ միայն եւրոպացու գիտունուլթեան, այլեւ հայերէնի նրա լաւ իմացուլթեան մասին:

Նա Ոսկանից լաւ է գնահատել հին հայերէնի գեղեցկուլթիւնները, եւ Աստուածաշնչի հայերէն տարբերակի կատարելուլթեամբ այնքան է հրապուրուել, որ այն կոչել է «թարգմանուլթիւնների թագուհի»[88]:

---

[86] **Le Long,** Bibliotheca Sacra, part II. t. I, Halle, 1771, p. 179 եւ **ՀՈՎՀ. ԳԱՐԵԳԻՆ ԶԱՐԲՀԱՆԱԼԵԱՆ**, Ցաղագս թարգմանութեան աստուածաշունչ տառից ի հայ լեզու.- Բազմավէպ 1850, էջ 217:

[87] **J. Schröder,** Thesaurus linguae Armeniacae, Ամստերդամ, 1711.- **V. de La Croze,** Histoire du christianisme d' Ethiopie et d'Arménie, La Haye, 1739.- **S. Somal**, Quadro della storia Litteraria d'Armenia, Venezia, 1828.-**Neumann**, Versuch zu einer Geschichte der arm. Litteratur, 1836:

[88] **La Croze,** Thesaurus epistolicus, III, 3 եւ յաջորդք, Շրոմպֆ-Զարբհանալեան.- Բազմավէպ 1891, էջ 56 եւ **Հ. ԳԱՐԵԳԻՆ ԶԱՐԲՀԱՆԱԼԵԱՆ**, Ցաղագս թարգմանութեան Աստուածաշունչ տառից ի հայ լեզու.- Բազմավէպ, 1851, էջ 234-235. Բազմավէպի այս էջերում բերուած են հայերէն թարգմանութեան մասին Սէն-Մարտէնի, Գէոթենգէրի,

Այսպիսի կարծիքը այն հետեւանքն է ունեցել, որ սկսել են աւելի շատ ուշադրութիւն դարձնել հայերէն թարգմանութեան վրայ, եւ ֆրանսիացի առաջին հայագէտներից մէկը՝ աբբա Վիլֆրուան (Abbé Villefroy) նպատակադրուել է յունարէն բնագրի հրատարակութեան համար համեմատել ամբողջ հայերէն բնագիրը, բայց դա արել է միայն Ամբակում մարգարէի գրքի նկատմամբ, որը եւ նա հրատարակել է[89]*: Այն, ինչը չյաջողուեց ուսուցչին, կատարեց նրա աշակերտը՝ Սիմոն Պիէռ Լուրդէն (Simon Piérre Laurdet), որը ձեռնարկեց ամբողջ հայերէն տարբերակը լատիներէնի թարգմանելու գործը: Նա իր աշխատանքն սկսեց 1785 թուականին, սակայն զգալով հայերէնի իր իմացութեան թոյլ լինելը, 1792 թուականին մեկնեց Վենետիկ՝ մխիթարեանների մօտ, եւ մէկուկէս տարի մնալով այնտեղ, շարունակեց իր թարգմանութիւնը՝ այն համեմատելով եբրայական եւ յունական հիմնօրինակների հետ: Նա աշխատեց մինչեւ 1798 թուականը. եւ այժմ Միւնխէնի արքայական գրադարանում պահպանւում է նրա չհրատարակուած եռահատոր ձեռագիրը*[90]*: Թարգմանութիւնը պարունակում է Ծննդոց գրքից մինչեւ Մակաբայեցւոց գրքերը՝ ներառեալ:*

Այդ աշխատանքներից յետոյ սովորական երեւոյթ դարձաւ այսպէս կոչուած «Սուրբ Գրքի վերաբերեալ ներածութիւն»ներում (Einleitungen) տեղեկութիւններ տալ նաեւ հայերէն թարգմանութեան մասին. եւ մենք աշխատում ենք թուարկել այդպիսի կարեւոր ստեղծագործութիւնների անունները: Հանրագիտական որոշ բառարաններում ինքնուրոյն նշանակութիւն ունեն հայագէտ-մասնագէտներ Դէ Վետտի, Պետերմանի, Գելցէրի, Կոնիբէրի, Hyvernat-ի, Նեստլի յօդուածները, նաեւ՝ Ռոբինսոնի, Ցահնի, Վեբերի եւ այլոց աշխատութիւնները:

Հնագոյն եւ գործնական յօդուածներից մէկը de Witte-ը տպագրել է Ersch und Gruber հանրագիտական բառարանի «Armenien» բառի ներքոյ[91]*, որտեղ բերուած է այն գրականութիւնը, որը հետագայում կրկնուել է այլ հանրագիտարաններում: Հարկ է ընդգծել նրա մօտ առկայ մի վիճելի հարց, որը յարուցուել է ԺԸ. դարում եւ առ այսօր վերջնականապէս լուծուած չէ՝ թարգմանութեան հիմք օրինակի մասին հարցը: Հայերը թարգմանել են «die alexandrinische Üebersetzung, und im Daniel die Theodtion»*[92]**,*

Ուրսինոսի եւ Ծրոդէրի կարծիքները:

[89] The Bibl of every Land, 1775 թուականի. **Ծրումպֆ-Զարբհանալեան.**- Բազմավէպ, 1891, էջ 167:

[90] Հայր **Գր. Գալէմքեարեանի** նկարագրութիւնը՝ Հանդէս Ամսօրեայ, 1891, էջ 366. նաեւ մեր նկարագրութիւնը՝ ձեռ. 2. Ե. Հ^{մր} 3:

[91] Երկրորդ հրատարակութիւն, մասն V, 1820, էջ 359-360, ծնթ. 21:

[92*] «Ալեքսանդրեան թարգմանութիւնը եւ Դանիէլի Թէոդիտիոնը»:

սակայն Եօթանասնիցի ո՞ր խմբագրութիւնն են վերցրել նրանք: Լակրոզը Ալեքսանդրեանի կողմնակիցն է[93]*, իսկ Վիստոն եղբայրները, Բրենդենկամպը եւ Էյքհորնը մտածում էին, որ Թարգմանութեան տարբեր մասերի համար պէտք է ընդունել տարբեր խմբագրութիւններ*[94]*: Սակայն մտածում էին նաեւ Լուկիանոսի եւ Հեսիքիոսի խմբագրութիւնների մասին*[95]*: Այդ նոյն գիտնականներն արտայայտել են այլ միտք, թէ՝ Հեթում Ա. (՞) թագաւորը ԺԳ. դարում ըստ լատինական վուլգատայի ձեւափոխել եւ խմբագրել է հայկական հնագոյն Թարգմանութիւնը: Մենք յետոյ ցոյց կտանք, թէ ինչի վրայ էր հիմնուած այդտեսակ ենթադրութիւնը. փաստօրէն ճիշտ է, որ Հեթում Բ. թագաւորը, այլ ոչ Հեթում Ա.ը, աշխատել է հայերէն բնագրի վրայ:*

Herzog-ը երկու տեղ խօսում է Աստուածաշնչի հայերէն Թարգմանութեան մասին՝ Հատոր II, էջ 67-69՝ «Armenien» յօդուածում եւ Հատոր III, էջ 95-97՝ «Bibelübersetzungen - Armenische Bibelübersetzung» յօդուածում[96]*: Առաջին յօդուածում (Petermann, Gelzer) բերւում է Թարգմանութեան պատմութիւնն ըստ աւանդութեան. «Die aus dem Syrischen gemachte Uebersetzung wurde einer eingehenden Revision unterworfen, und erst nach 432 ist die Bibelübersetzung entstanden, welche von da an einen officielen Character trug»*[97]* (էջ 67): Երկրորդ յօդուածում (O. F. Fritzsche, Eb. Nestle) գրականութեան խմբաւորումը շատ յարմար է:*

H. Hyvernat-ի Version de la Bible Armenienne յօդուածը[98] *բաժանուած է՝ 1) De l'histoire de la Version Armén., 2) Des principales éditions, եւ 3) De la nature et de l'importance de la version arménienne: Նա նաեւ նոր գրականութիւն է ներկայացրել*[99]*: Նա Լակրոզի եւ այլոց յարձակումներից պաշտպանում է*

---

[93] **La Croze,** Thes. Epist. t. III, p. 201 իր ենթադրութիւնը հիմնել է Մովսէս Խորենացու Պատմութեան վրայ, որը հաղորդում է, որ առաջին թարգմանութեան վերանայումից յետոյ եւս թարգմանութեան «գործը շատ մասերում անբաւարար է եղել, եւ կրտսեր աշակերտները լեզուի իմացութեան մէջ կատարելագործուելու համար ուղարկուել են Ալեքսանդրիա (Մովսէս Խորենացի, Գ., կա.):

[94] **Whiston. M.** Chor. p. XI, Brendenkamp, Uber die arm. Ubersetzung des A. T.'s in Eichorn's Allgem. Bibliothek IV Band, p. 360 եւ Eichorn, Einleitung, I Theil, p. 648:

[95] **Berthold**, Einl. t. II p. 560 եւ Hyvernat, Dictionaire de la Bible, էջ 1014. Հմմտ. նաեւ **Scrivener**, Introduction, II, էջ 151, որտեղ խօսւում է Կոստանդնուպոլսի, Եդեսիայի կամ Սամոսատի օրինակների մասին:

[96] Realencyclopädie für protestantische Theologie und Kirche, Leipzig, 1897 եւ 1898:

[97*] Թարգմ.՝ «Ասորերէնից արուած թարգմանութիւնը հանգամանօրէն վերանայուել է եւ միայն 432ից յետոյ է ստեղծուել այն Աստուածաշունչը, որ այդուհետեւ պաշտօնական բնոյթ է ստացել»:

[98] **Vigouraux**, Dictionaire de la Bible, 1892, I, էջ 1010-1015:

[99] Hyvernat-ը Զարբհանալեանին հետեւելով (**Զարբհ.**, Հայկ. մատենագիտ., էջ ԺԷ.) կարծում է, որ Սաղմոսների առաջին հրատարակութիւնը եղել է 1565 թուականին,

Ոսկանին՝ «En Somme on peut l'accuser d'avoir manqué de sens critique, mais non d'avoir montré de l'ignorance, or de la superstition, et encore moins de la malice, comme l'insinue Michaelis, R. Simon et Schulz»[100]*:

Անգլիացի պրոֆ. Conybeare-ը, եւրոպական հայագէտների մէջ առաւել քան որեւէ մէկը, զբաղուած է հայկական տարբերակի մասնակի եւ ընդհանուր խնդիրների ուսումնասիրութեամբ: Նրա «Armenien version of the Old Testament» եւ «Armenian version of the New Testament» յօդուածներն ունեն խորագրեր՝ 1) Ո՞ր հիմնօրինակից է թարգմանուած Հայկական Աստուածաշունչը, 2) Նրա նշանակութիւնը բնագրի քննութեան համար, 3) Թարգմանութեան ժամանակը, եւ 4) Նրա բովանդակութիւնը եւ գրքերի կարգը[101]*: Նրա կարծիքն ամփոփւում է այսպէս. Հին Կտակարանի ներկայ տարբերակը թարգմանուած է Եօթանասնիցից, բայց նրա մէջ Փշիտայի կամ Մասորականի իւրայատկութիւններ կան: Հայկական բնագրով կարելի է լրացնել Եօթանասնիցի որոշ տեղիներ: Երեմիայի մարգարէութեան մէջ յաճախ նկատելի են Մասորականի կամ ասորերէն բնագրի միջնորդաւորուած եւ անմիջնորդ օգտագործման հետքեր: Հայերէն թարգմանութեան Երեմիայի մարգարէութեան մէջ գլուխները եւ տները համընկնում են ոչ թէ Եօթանասնիցի, այլ՝ Մասորականի եւ ասորերէն բնագրի հետ: «It is certain then in O. T. the Armenians translated the LXX, supplementing in however, and adjusting it to the Massoretic text» (p. 152)*[102]*:*

Հայերէն բնագիրը խառն բնոյթ ունի, մարգարէութիւններում աւելի շատ են եբրայական հիմնօրինակի հետքերը՝ քան ասորականի: Եբրայական հիմնօրինակի տարընթերցումները հայերէն բնագիրը կարող էր փոխառնել կամ ասորականից, կամ էլ ասորականի միջոցով՝ եբրայականից. սակայն կայ նաեւ երրորդ հնարաւորութիւնը. հայերն իրենց առջեւ ունեցել են Որոգինէսի Վեցիջեանը, ինչպէս ցոյց է տալիս բրգաճեւների

անհիմն վիճարկելով Kaulen-ի կարծիքը, որն այդ հրատարակութիւնը դրել է 1515 թուականին «à l'edition de 1515 dont parle Kaulen, Einleitung in die heil. Schrift, § 174, p. 143 d'après Scholz, Einieitung in die heil. Schrift, p. 500, sans doute elle n'a j'amais existé». * թարգմ. «Ինչ վերաբերում է 1515 թ. հրատարակութեանը, որի մասին խօսում է Կաուլէնը՝ Einleitung in die heil. Schrift, § 174, էջ 143՝ ըստ Շուլցի՝ Einieitung in die heil. Schrift, էջ 500, ապա այն երբեւէ գոյութիւն չի ունեցել»:

[100]* Յօդուածի եւ մասերի վերնագրերը՝ «Աստուածաշնչի հայկական տարբերակը, 1) Հայկական տարբերակի պատմութեան մասին, 2) Հիմնական հրատարակութիւնների մասին եւ 3) Հայկական տարբերակի կարեւորութեան մասին»: Քաղուածքը՝ «Ընդհանուր առմամբ մենք նրան կարող ենք մեղադրել քննական վարմունքի բացակայութեան մէջ, սակայն երբեք տգիտութիւն կամ նախապաշարուածութիւն ցուցաբերելու մէջ, եւ, առավել եւս՝ խորամանկութեան, որում նրան մեղադրում են Միքաէլիսը, Ռ. Սիմոնը եւ Շուլցը»:

[101] A Dictionary of the Bible, Volume I, էջ 151-154:

[102]* «Ցստակ է, որ Հին Կտակարանում հայերը թարգմանել են Եօթանասնիցը, սակայն այն լրացնելով եւ յարմարեցնելով Մասորական բնագրին»:

եւ աստղանիշերի օգտագործումը, նաեւ՝ Սիմաքոսի, Ակիւղասի եւ Թէոդոտիոնի ընթերցումները: Հայերէն բնագրի մէջ թարգմանութիւնը յունարէն յայտնի ձեռագրերից ամէնից չատ մօտ է Հմր 22 եւ 88 ձեռագրերի խմբագրութեանը[103]*: Ընդհանուր առմամբ թարգմանութիւնը կարելի է օրինակելի համարել. «It needs only to be added, that for beauty of diction and accuracy of rendering the Armenian cannot be surpassed»*[104]*: Լեզուի ոգին թարգմանիչներին թոյլ է տուել բառացի թարգմանել, [բայց] ոչ ի վնաս ոճի գեղեցկութեան. եւ այսպիսի բառացի թարգմանութիւնը կարող է հին յունարէն ձեռագրի արժէք ունենալ. «has almost the same value for us as the greck text itself» (էջ 152)*[105]*:*

Նրա յաջորդ երեք յօդուածները՝ «The armenian Version of the New Testament», երկրորդը՝ Guardian հանդէսում եւ երրորդը՝ Սկրիվենների գրքում[106]*, թարգմանութեան պատմութեան չարադրանքի կրկնութիւնն են. ձեռքի տակ ունեցել ենք միայն վերջինը: Նրանում, ի միջի այլոց, ասուած է. «The fifth century version included all the books of the O. and N. T. save the third books of Ezra, Esther, Tobith, Judith, Wisdom of Solomon, and perhaps the Maccabees»*[107]* (էջ 152-153)*[108]*. եւ ենթադրութիւն է արուած այն մասին, թէ եկեղեցական պաշտամունքային կարիքների համար Սաղմոսները թարգմանուել են աւելի վաղ, եւ որ «the book of Reveletions was translated twice»*[109]*: Վերջինս Զարբհանալեանի կարծիքն է, որի գրքից նա վերցնում է նաեւ Աւետարանի 17 ձեռագրերի համառօտ նկարագրութիւնը*[110]*:*

Յանկ այն գործերի, որոնցում խօսւում է նաեւ հայերէն թարգմանութեան մասին.

R. Simon, Histoire critiqe des versions de N. T. chap. XVI, Rotterdam. 1690, p. 196: Hug. Einl N. T. p. 399:

---

[103] Մենք չկարողացանք պարզել՝ յատկապէս որո՞նք են այդ երկու յունարէն ձեռագրերը:

[104*] Թարգմ.՝ «Պէտք է միայն աւելացնել, որ հայերէնի ոճի գեղեցկութիւնն ու փոխադրութեան ճշգրտութիւնը գերազանցուել չի կարող»:

[105*] «Մեզ համար գրեթէ նոյն արժէքն ունի, ինչ յունարէն բնագիրն ինքնին»:

[106] ա) The Academy, Հմր 1239, New Issue, Febr., 1, 1896, էջ 98-99, բ) Scrivener, Introduction. II, էջ 148-154, գ) Guardian, 1894, July, 18:

[107*] Քաղուածքի թարգմ.՝ «Հինգերորդ դարի տարբերակն ընդգրկում է Հին եւ Նոր Կտակարանների բոլոր գրքերը, բացի Եզրի, Եսթերի, Տոբիթի, Յուդիթի, Սողոմոնի իմաստութեան, եւ, թերեւս, Մակբայեցւոց գրքերից»:

[108] Պրոֆ. Կոնիբէրը խոստանում է այս կարծիքի հիմնաւորումն աւել մի այլ տեղում:

[109*] Թարգմ.՝ «Յայտնութեան գիրքը թարգմանուել է երկիցս»:

[110] **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 220-222 եւ 157-163:

Scholz, Einleitung in die heilge Schrift, p. 500[111]*:
Kaulen, Einleitung, III. Auslage, § 173, 174:
Cornely, Introductio:
Giesbach, Vet. et Nov. Testam. variant. Armen. 1796:
Th. Hartwell Horne, An introduction to the critical study and knowledge of the holy Scriptures, 14 edit. 1877, IV, 312-315:
J. PP. Martin, Introduction à la critique textuelle du Nouveau Testament, Paris, 1885, էջ 334:*

Paul de Lagarde. ***հայերէնի քաջ գիտակ, Աստուածաշնչի մասին իր աշխատութիւններում շատ յաճախ օգտուել է նաեւ հայերէն բնագրից*** *(Praetermissa-ում եւ Specimen-ում), եւ յատկապէս գլխաւոր հրատարակութիւններով՝* ***Մխիթարի*** *(h-m haikanisch-Mkitharis),* ***Զօհրապեանի*** *(h-z* ***Զօհրապեան****), Ոսկանի (h-o) եւ Վենետիկի 1860 թուականի [տպագիրներով] (h-o veneta 1860):*

Միւս հայագէտը՝ *Félix Nêve, Arménie chrètienne et sa litteratur, Louvain, 1886, էջ 13, 22 եւ յաջորդք, ի միջի այլոց խօսում է Աստուածաշնչի թարգմանութեան մասին:*

Kirchenlexicon, Wetzer und Welte, «Armenische Sprache Scrift und Literatur» յօդուածում, 2 Aufl. Bd. I, 1882, էջ 1344-1353:

Joseph Nirschl, Lehrbuch der Patrologie und Patristik, *Vetter-ի յօդուածը՝ «Mesrop und seine Schule», Bd. III, 1885, էջ 215-262:*

Bardenhewer, Patrologie, 1901, էջ 519-522:

P. Donat-Vernière, Histoire du patriarcat arménien catolique, Paris, 1891, էջ 128-129:

Brendencamp, Ueber die arm. Ubersetzung des A. T's, in Eichhonn, Allgemeine Bibliothek, t. IV, էջ 634:

Berthold, Einl. t. II, էջ 560:[112]*

Անհամեմատ կարեւոր են յատուկ բնոյթի այն յօդուածները, որոնք վերջին ժամանակներս սկսել են յաճախ լոյս տեսնել եւրոպական հանդէսների սիւնակներում: Պրոֆեսոր Կոնիբէյրը յաջողութեամբ սկսել է զբաղուել Աստուածշնչի հայերէն ձեռագրերով, եւ առաջին անգամ յօ-

[111*] Einleitung in die heiligen Schriften des alten und neuen Testamenten, Von Dr. J. M. Augustin Scholz, Domkapitular am Metropolitan domkapitel zu Köln und ordentlichem Professor der biblichen Exegese in der katholich-theologichen Fakultät an Bonn. Zweiter Theil. Die specielle Einleitung in die historischen Bücher des A. T. Köln , Verlag von J. & W. Boiſſerée. 1845.

[112*] Գրականութեան այս թուարկումը միայար՝ մի պարբերութեամբ էր, տրոհեցինք պարբերութիւնների:

դուռածով հանդէս եկաւ Էջմիածնի մի հնագոյն ձեռագրի՝ 986 թուականին գրուած Հ՟ր 229 [ՄՄ Հ՟ր 2374] Աւետարանի մասին: Այդ յօդուածում նա առաջին անգամ հաղորդեց, որ Մարկոսի վերջին՝ ԺԶ., 9-20 տները հայերէն թարգմանութեան մէջ ունեն յատուկ վերնագիր՝ «Արիստոն Երիցու», եւ միտք է առաջադրում, որ այդ Արիստոն երէցը ճիշտ նա է, ում մասին յիշատակում է Պապիաս Հիերապոլսեցին՝ Եւսեբոսի մօտ (Եկեղեցական Պատմութիւն, Գ., 39, 3-4)[113]*:*

Գլխաւոր հետաքրքրութիւնը նրա հաղորդումն էր, իսկ Արիստոնի կամ Արիստիոնի անձի վերաբերեալ նրա կարծիքը ոմանք ընդունում են[114]*, միւսները փորձում էին ապացուցել, որ բերուած անուան տակ պէտք է հասկանալ Արիստոն Պելլացիին*[115]*:*

Կոնիբէրի յայտնի կարեւոր յօդուածն է՝ On the codex Pamphili and date of Euthalius[116]*:*

Կոնիբէրը համեմատելով Աստուածաշնչի հայերէն մի քանի ձեռագիր[117]*, որոնք պարունակում են Պօղոսի թղթերը, նրանցում գտել է Եւ-*

[113] Արիստոնի ինքնութիւնը պարզելու համար նա հարկադրուած է եղել դիմելու սրբագրման եւ հաղորդուած ձեւի փոխարէն ընդունելու «Արիստիոն» ընթերցումը: Դա էլ հակառակ տարբերակների առիթ է տուել: Նրա յօդուածի մասին հմմտ. Հ. Յակովբոս Տաշեան, Քանի մը նոր հրատարակութիւնք.- Հանդէս Ամսօրեայ, 1895, էջ 81-87 «Արիստոն երէց ըստ վկայութեան Էջմիածնի թ. 222 ձեռագրին» (էջ 82-87):

[114] ***Th. Zahn,*** Theologisches Litteraturblatt, 1893, Հ՟ր 51 եւ Adolf Harnack.- Theologische Literaturzeitung, 1893, Հ՟ր 23. **Theodor Zahn,** Forschungen zur Geschichte des neutestamentlichen Kanons und der altkirchlichen Literatur. VI Teil. I. Apostel und Apostelschüler in der Provinz Asien. II. Brüdder und Vettern Jesu, Leipzig, 1900, էջ 129 (այսուհետեւ՝ **Zahn**, Forschungen)՝ գրում է. «Es unterliegt für Urteilsfähinge keiner Frage, dass darunter jener Aristion zu verstehen ist, welchen Papias in der Vorrede erwähnt»: * Թրգմն. «Կասկած չկայ վճռելու համար, որ պէտք է հասկանալ՝ այդ Արիստիոնն է, որին Պապիասը յիշատակում է նախաբանում»:

[115] ***Alfred Resch,*** Aussercanonische Paralleltexte zu den Evangelien, Leipzig, 1894, text und Untersuchungen, X, p. 449 եւ ***Kiappeli***, Nuova Antologia, հայերէն թարգմանութիւնը՝ Նկատողութիւն մի Ս. Մարկոսին Աւետարանին ԺԶ. գլխողմ.- «Բազմավէպ», 1894, էջ 218-221. տե՛ս նաեւ՝ Protest. Encyclopädie, II, էջ 47. **Harnack**, Die Chron. der altchr. Litter., Leipzig, 1897, էջ 269. գրում է Resch-ի կարծիքի հակառակ: Խնդրի ամբողջ գրականութիւնը, որին ուշադրութիւն են դարձրել մասնագէտները, տե՛ս՝ **Bardenhever**, Geschichte der altkirchlichen Litteratur, 1902, էջ 188 եւ 541:

[116] The Jornal of Philolgy, vol. XXIII, London, 1895, էջ 241-259, հմմտ. Protes. Realecyclopädie, 1896, II, էջ 732 եւ՝ ***Robinson***, Euthaliana, էջ 8-19 եւ 91-98:

[117] Համեմատութեան համար նա վերցրել է Բրիտանական թանգարանի Arm. Cod. Add. 19.730՝ Գործք եւ Թուղթք սրբոց առաքելոց, գրուած 1270 թուականին, լորդ Zouche-ի Աստուածաշունչը եւ Վենետիկի մխիթարեանների 1220 թուականի մի ձեռագիր [1322/192]: Ելթաղի Աղեպսը աւելի վաղ տպուած է եղել՝ **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 139. եւ՝ Յուցակ հայերէն գրչագրաց մատենադարանի ուխտին Մխիթարայ ի Ս. Ղազար Վենետկոյ. Աստուածաշունչ գիրք. Հին եւ Նոր Կտակարանք.- Բազմավէպ, 1891, Գ. էջ 68 (ամբողջը՝ Բազմավէպ, 1891, Բ. էջ 33-40, Գ. էջ 65-69, Դ. էջ 97-100, Ե. էջ 129-134, Ը. էջ 209-214. ընդարագրուած են՝ Ս. Գրքի Ա., Բ., Գ., Դ. օրինակք.

թաղի Նախադրութիւնները եւ նրա իսկ գրառումները Առ Փիլիմոն թղթի վերջում. գրեցի եւ կարգեց ἔγραψα καὶ ἐξεθέμην, *ճիշտ նոյն կարգով, ինչպէս յունարէն H ձեռագրում*[118]*: Այս հանգամանքը նրան առիթ է տուել եզրակացնելու, որ Եւթաղի Նախադրութիւնն ունեցող հայերէն ձեռագրերի եւ յունարէն H ձեռագրի միջեւ սերտ կապ կայ: Սակայն դրա վրայ նա կանգ չի առել, այլ ձգտել է արտաքին նմանութիւնը հիմնաւորել երկու բնագրերի համեմատութեամբ: Այդ աշխատանքը նրան աւելի համոզեց, որ, իսկապէս, երկու տարբերակների բնագրերը համընկնում են: H-ի նախագաղափարը համարուել է Դ. դարում Պամփիլոսի գրած ձեռագիրը, հայերը Ե. դարում ունէին Պամփիլոսի օրինակը եւ նրանից թարգմանել են Պօղոսի թղթերը, եւ քանի որ նրանց օրինակն աւելի հին է եղել քան H-ը, որ Զ. դարի ձեռագիր է, ապա հայերէն թարգմանութիւնը կարող է մասամբ փոխարինել կորսուած հին յունարէն ձեռագրին:*

Կոնիբէրին հակառակ հանդէս եկաւ J. A. Robinson-ը՝ Euthaliana, Studies of Euthalius codex H of the Pauline Epistles and the Armnian version[119]*: Նա սինայական կրկնագրի (Syr^{sin}) հիման վրայ, որն առաւել հին տարբերակ է, քան անգամ Փշիտան է, արձանագրում է, որ հայերէն Աւետարանում եւ Պօղոսի թղթերում շատ հետքեր են մնացել հին ասորերէն այդ Նոր Կտակարանից, եւ կարծում է, որ հայերն իրենց Աստուածաշունչը բոլորովին էլ երկու անգամ չեն թարգմանել, այլ միայն սրբագրել են՝ ըստ յունական հիմնօրինակի իրենց առաջին անգամ արուած թարգմանութիւնը, այդ պատճառով էլ սկզբնական թարգմանութիւնից հետքեր են մնացել: Նա շատ զգուշ է մօտենում այդ եզրակացութեանը եւ ասում է. «If in the issue the vuew here propounded should be accepted as the true one, the Armenian version will demand far more attention than in has hitherto received» (էջ 90)*[120]*: Աւելի վաղ՝ դեռեւս Թ. Ցահնը*[121] *նկատել էր, որ Եփ-*

այսուհետեւ՝ Ցուցակ Վենետիկի Ս. Գրոց): Եւթաղի այս ձշումը համարեա առանց բացառութեան հանդիպում է Աստուածաշնչի բոլոր ձեռագրերի Նոր Կտակարան մասում, որտեղ կան Եւթաղի նախադրութիւնները: Այդ մասին համեմատել Զօհրապեանի հրատարակութեան յաւելուածում՝ էջ 824 եւ Robinson, Euthaliana, էջ 9:

118 ***Tischendorf***, N. T. Editio, II, 1849, էջ 727. ***M. H. Omont,*** Notice sur un tres ancien manuscrit grec an onciales des Èpîtres de Saint Paul, Paris 1889 եւ ***A. Erhard,*** Codex H und Euthalius, Centralblatt für Bibliothekswesen, VII, 9, էջ 385-411:

119 Text and Studies, by **J. A. Robinson**, vol III, Cambridge, 1885, 8º (120 էջ), էջ 72-98՝ ձուիրուած է հայերէն տարբերակին:

120* Թարգմ.՝ «Եթե այս հարցում քննարկուող տեսակէտը պէտք է ընդունուի որպէս իրաւացի, ապա հայկական տարբերակը շատ աւելի մեծ ուշադրութիւն կպահանջի, քան մինչ օրս ստացել է»:

121 **Theodor Zahn,** Geschichte des Neutestamentlichen Kanons, Zweiter Band, Zweiter Häfte, Erlangen und Leipzig, 1892, S. 565 (S. VI, 409-1022). այսուհետեւ՝ **Zahn,** Geschichte des Neutestamentlichen Kanons, II, 2) - «Aphraat citiert nie den Brief Philemon's»

բեմ Ասորու մեկնուԹեան մէջ չկայ առ Փիլիմոն Թղթի մեկնուԹիւնը, եւ որ այդ Թղթից յղումներ չկան Ափրահատի ճառերի մէջ, իսկ այժմ, ըստ ասորերէն եւ հայերէն բնագրերի Ռոբինսոնի արած համեմատուԹիւններ՝ պարզւում է, որ հայերէն ԹարգմանուԹիւնը ե՛ւ դրա մէջ ե՛ւ Պետրոսի Բ. Թղթում ասորաբանուԹիւններ չունի: Աւետարանից Ռոբինսոնը համեմատել է յունարէնի, հայերէնի, ասորերէնի՝ ըստ Syr^{sin}, Syr^{cy}, Syr^{pesh} եւ Տատիանոսի Համաբարբառի 15 տարընԹերցում եւ ցոյց տուել, որ տարընԹերցումների այդ 15 դէպքերը հայերէն բնագիրը սրբագրողների ուշադրուԹիւնից վրիպել են, եւ պահպանուել են ԹարգմանուԹեան գաղափար օրինակի, այսինքն՝ ասորերէն սկզբնագրի ընԹերցումները: Աւելի դժուար է եղել Պօղոսի ԹղԹերի ասորերէն հիմնօրինակի համեմատուԹեան խնդիրը, որը հին բնագիր չունի, եւ Ռոբինսոնը ստիպուած է եղել ապաւինել Ափրահատի ճառերին ու Եփրեմ Ասորու մեկնուԹիւններին: Վերջինիս պահպանուած հայերէն ԹարգմանուԹիւնն ըստ արժանւոյն չի գնահատուել, քանի որ եւրոպացիները իրենց առջեւ ունէին նրա ոչ Թէ հայերէն, այլ լատիներէն ազատ ԹարգմանուԹիւնը[122]*: Թղթերի մէջ նա արձանագրում է ասորերէնի եւ հայերէնի ընդհանուր տարընԹերցումների 24 դէպք: Նրա եզրակացուԹիւնն այսպիսին է. «I think that I may claim as the result of the foregoing investigation to have established at teast a strong presumpion in favour of an Old Syriac base underlying the Armenian Version both in the Gospels and in the Pauline Epistles» (էջ 90)*[123]**: Կոնիբէրը համեմատել է H եւ Սինայական ձեռագրերը*[124] *եւ նրանցում գտել է 33 ընդհանուր տարընԹերցում, իսկ համեմատելով այդ 33 տարընԹերցումները հայերէն տարբերակի հետ, գտաւ, որ դրանցից 14ը չկան հայկականում, իսկ մնացած 19ից հայերէնն 12ը = H, Sin., 3ը = Որոգինէսի, 1ը = կայ Կղեմէս Հռոմէացու մօտ, 2ը = Եւթաղի ձեռագրում, ըստ դրա էլ արել է վերը մեր բերուած եզրակացուԹիւնը, որ մեզ հասած հայերէն բնագիրը Թարգմանուել է Պամփիլոսի ձեռագրից կամ H խմբից: Ռոբինսոնը օգտուելով այդ նոյն նիւԹից եւ այլ տարընԹերցումներից,*

[«Ափրահատը Փիլիմոնի թուղթը երբեւէ չի յղել»]:

[122] Այս հարցի մասին տե՛ս **Th. Zahn,** Theologisches Litteraturblatt, 1893, Հմր 39-41, որն ուսումնասիրել է Եփրեմ Ասորու լատիներէն թարգմանութիւնը. **S. Ephraem Syri** Commentaria in Epistolas Pauli, nunc primum ex Armenio in latinum sermonem a patribus Mechitharistis translata, Venet, 1893, 8^{0}, X f. 275:

[123*] Թարգմ.՝ «Կարծում եմ, որ ես կարող եմ պնդել, որ վերոշարադրեալ քննութեան արդիւնքում հաստատուել է խիստ հաւանարմութիւն հին ասորերէն բնագրի օգտին, որը ընկած է հայերէն տարբերակի հիմքում՝ թէ՛ Աւետարաններում եւ թէ՛ Պօղոսի թղթերի մէջ»:

[124] Կոնիբէրը համեմատութեան համար նիւթը վերցրել է՝ **Wilhelm Bousset,** Textkritische Studien, Leipzig, 1894, Text und Untersucunden Harnack-ի:

Կոնիբէրի այդ 12 ընթերցումները ենթարկել է նոր՝ առաւել մանրակրկիտ քննութեան եւ յանգել բոլորովին այլ արդիւնքների: 12 տարընթերցումներից 9ը նա գտնում է Փշիտայում, իսկ 3ը՝ սովորական յունական ձեռագրերում. հետեւաբար՝ այն ինչը Կոնիբէրը համարում էր բնօրոշ հայերէն բնագրի համար եւ ինչն այդ բնագիրը մօտեցնում է H ձեռագրի նախագաղափար օրինակին, Ռոբինսոնի կարծիքով հին ասորերէն հիմնօրինակի մնացորդն է հայերէն թարգմանութեան մէջ: Ռոբինսոնն ասում է. «Our enquiry in to the origin of this version has shewn us, that there are Syriac elements of great antiquity contained in it, and that it is worthy of a most carefuly study»[125]*: Ռոբինսոնի գգուշօրէն արտայայտուած այս կարծիքն այժմ աւելի է հաստատւում վերջերս յայտնաբերուած եւ հրատարակուած Մնացորդաց գրքերի հին տարբերակով եւ հէնց Կոնիբէրի մի այլ յօդուածով:*

Նա համաձայնելով Ռոբինսոնի կարծիքի հետ, այն զարգացրել է՝ The growth of the P'shitta version յօդուածում[126]*: Այս անգամ նա համեմատել է Պօղոսի թղթերը եւ Նոր կտակարանի ասորերէն, յունարէն, հայերէն եւ վրացերէն բնագրերի որոշակի մասեր եւ նշել է բազմաթիւ տարընթերցումներ: Նրա համար ասորերէնի բնագիր են ծառայել Cureton (Syr$^{cur.}$) Աւետարանի մասերը եւ վերջերս յայտնաբերուած (Lewis) սինայականը (Syr$^{sin.}$), իսկ Պօղոսի թղթերի համար՝ Եփրեմ Ասորու միայն հայերէն թարգմանութեամբ պահպանուած մեկնութիւնները: Արդէն Ռոբինսոնը ընդունել է գոյութիւնը Փշիտայի բնագրից աւելի հին ասորերէն հիմնօրինակի, որը ե. դարում գործածութեան մէջ լինելով, խիստ սրբագրուել է եւ կորցրել սկզբնական տեսքը, այնպէս որ այն հին ասորերէն թարգմանութիւն համարել չի կարելի: Ճիշտ նոյն ձեւով նաեւ հայերէն բնագիրը՝ չնայած սրբագրուած է եղել ըստ յունարէն հիմնօրինակի, սակայն թարգմանուած լինելով հին ասորերէն բնագրից, որոշ դէպքերում նրա հետքը պահպանել է աւելի քան նոյնիսկ Փշիտան, իսկ վրացերէն բնագիրը, հայերէնից ածանցուած լինելով, աւելի է հաստատում այդպիսի ենթադրութիւնը*[127]*:*

---

[125] Թարգմ.՝ «Այս տարբերակի ծագմանը վերաբերող մեր քննութիւնը ցոյց տուեց, որ նրա մէջ առկայ են մեծ հնութիւն ունեցող ասորական տարրեր, եւ որ դա արժանի է առաւել ուշադիր ուսումնասիրութեան»:

[126] **Conybeare F. C.,** The Growth of the Peshittâ Version of the New Testament. Illustrated from the Old Armenian and Georgian Versions.- The American Journal of *Theology*, Vol. 1, No. 4 (Oct., 1897), pp. 883-912. հմմտ. Տ[աշեան°]՝ **Կոնիբէր,** Մեծութիւն Պշիտտա թարգմանութեան Նոր Կտակարանի, լուսաբանուած հայերէն եւ վրացերէն թարգմանութեամբք.- Հանդէս ամսօրեայ, 1897, էջ 379-380:

[127] Անգլիացի գիտնականների այս երկու աշխատանքները, ինչպէս նաեւ պրոֆ. Մառի նորագոյն յօդուածը, համարեա վերջնականապէս հաստատում են մատենագրական աւանդութիւններն այն մասին, որ հայերէնի նախօրինակը եղել է ասորերէնը,

Կոնիբէյրը On the Philonean text of the Septuagint[128]*, Quaestiones et Responsion in Genesin յօդուածում խօսում է Փիլոնի երկերի հայերէն թարգմանութեան եւ այդ թարգմանութեան նշանակութեան մասին՝ ինչպէս Աստուածաշնչի յունարէն հիմնօրինակի, նոյնպէս եւ հայերէն տարբերակի համար, եւ գալիս է այսպիսի եզրակացութեան. «...the version of Philo was made if not anteriorly to, yet independently of the armenian Vulgate: so that if the same variants secur in both, that is so much additional evidance in behalf of, and not against, the version of Philo» (էջ 88)*[129*]*:*

Փիլոնն իր առջեւ ունեցել է Եօթանասնիցի մի օրինակ, եւ նա ըստ տների մեկնել է ամբողջ Ծննդոց գիրքը: Նրա մեկնութիւնն ամբողջութեամբ պահպանուել է միայն հայերէնով, եւ Կոնիբէյրը Աստուածաշնչի Հոլմի օքսֆորդեան հրատարակութեան օգնութեամբ փորձել է հակառակ՝ հայերէնից յունարէն թարգմանութեամբ վերականգնել Եօթանասնիցի Փիլոնի ունեցած ձեռագրի կորսուած բնագիրը:

Նրա երկու յօդուած վերաբերւում են ԺԲ. նահապետների անկանոն կտակներին՝ ա) On the jewish autorship of the Testaments of 12 Patriarchs[130]*: Հեղինակը հաղորդում է, որ 1891 թուականին լինելով Էջմիածնում, ԺԲ. նահապետների կտակները լուսանկարել է անձամբ հայրապետին (՞) պատկանող մի Աստուածաշնչից եւ Լոնդոնում այն համեմատել է Զինկէրի հրատարակութեան հետ*[131]*: Այդ աշխատութիւնով նա փորձել է, յենուելով հայերէն բնագրի վրայ՝ վերականգնել յունարէն հիմնօրինակի ժամանակը, որը նրա կարծիքով վերաբերում էր Ա. դարի վերջին կամ Բ. դարի սկզբին*[132]*: Իսկ երկրորդը՝ բ) A collation of Sinkers Texts of the Testements*

ընդ որում՝ այն դէպքում, երբ թարգմանութեան պատմութեան սկզբնաղբիւր Կորիւնն ասում է միայն յունարէն հիմնօրինակի մասին, եւ քանի որ ուսումնասիրուած է ամբողջ բնագրի դեռեւս աննշան մասը, ապա պետք է յուսալ, որ առաւել ընդարձակ ուսումնասիրութիւնը նիւթ կտայ ոչ միայն մեսրոպեան, այլ եւ առաւել հին շրջանի թարգմանութեան համար:

[128] **Conybeare F. C.,** On the Philonean Text of the Septuagint.- The Jewish Quarterly Review, Vol. 5, No. 2 (Jan., 1893), pp. 246-280: **Sermo I,** Philonis de quaestionibus quae in Genesi sunt. էջ 256-280. **Sermo II**, quaestionum et solutionum in Genesin եւ 1896 (vol. VIII, էջ 88-122), Sermo III, quaestiones in Geesin.

[129*] Թարգմ.՝ «Փիլոնի տարբերակը պատրաստուել է եթէ ոչ աւելի առաջ, ապա գոնէ հայկական Ընկալեալից անկախ, այնպես որ, եթէ երկուսի մէջ էլ կան նոյն ձեւերը, ապա դա շատ աւելի լրացուցիչ վկայութիւն է յօգուտ Փիլոնի տարբերակի, քան՝ հակառակը»:

[130] The Jewish Quarterly Review, 1893, t. V, էջ 375-398:

[131] Testamenta 12 Patr. Cambridge, 1869.

[132] Հմմտ. **Ad. Harnack,** Die Chron. d. altchrist. Litt., Leipzig, 1897, էջ 566 եւ **Preuschen**, Die arm. Uebersetzung der 12 Test. Zeitschr. für neutestamentliche Wissenschaft, 1900 էջ 108: Պրէոշէնն ունէր անկանոնների 1896 թ. Վենետիկում տպա-

ot Reuben and Simeon with the old armenian version, եւ of Iydah, Dan, Ioseph, Benjamin[133]*, նա բերում է Աստուածաշնչի մի քանի հայերէն ձեռագրերի՝ ԺԲ. նահապետների կտակներին վերաբերող տարընթերցումներ: Դանիէլի եօթներորդ տեսիլի անկանոնը հետազօտել է Վիեննայի մխիթարեան գիտնական Հ. Գր. Գալէմքեարեան վարդապետը եւ հիանալի մեկնաբանութեամբ հրատարակել է գերմաներէնով*[134]*:*

Աստուածաշնչի բոլոր գրքերի հայկական կանոնի հարցին նուիրուած են մասնաւորապէս S. Weber-ի յօդուածները - Zur Geltung der hl. Schrift bei den alten Armenier[135]*: Ըստ Ե. դարի հայ հեղինակների հաղորդումների՝ նա պարզաբանում է, թէ Ե. դարում Աստուածաշնչի որ գրքերն են թարգմանուել հայերէն: Մխիթար Այրիվանեցու ժամանակագրութեան մէջ առկայ՝ Սարկաւագ վարդապետի կանոնական եւ անկանոն գրքերի ցանկերը վաղուց են իրենց վրայ գրաւել մասնագէտների ուշադրութիւնը: Անկանոն գրքերի այդ ցանկերի մասին համառօտ արտայայտւում է Ք. Պատկանեանը՝ ժամանակագրութեան իր ռուսերէն թարգմանութեան նախաբանում (էջ 315), ինչպէս նաեւ Carrière-ը՝ Ասանէթի անկանոնի երկու գլուխների հայերէն բնագրի եւ ֆրանսերէն թարգմանութեան հրատարակութեան մէջ ՝ Une version arm. de histoire d'Asaneth*[136]*: Բայց գլխաւոր աշխատութիւնը պատկանում է գերմանացի յայտնի գիտնական Th. Zahn-ին՝ Uber einige armenische Verzeichnisse kanonischer und apocrypher Bücher*[137]*:*

Անկանոն գրքերի Սամուէլ Անեցու ունեցած ցանկը[138]*, որ բառացիօրէն կրկնում է Կիրակոս Գանձակեցին, պարունակում է անկանոն գրքերի*

գրուած նոր հրատարակութիւնը, սակայն ճ. Բ. Սարգիսեանի աշխատութիւններից ծանօթ չէր:

133 The Jewish Quarterly Review, 1896, էջ 260-268 եւ 471-485:

134 Die siebente Vision Daniels.- Wiener Zeitschrift für Kunde Morgenland's, VI, Heft II, էջ 109-136, որի մասին՝ **Հ. Գ[րիգորիս] Գ[ալէմքեարեան],** Տեսիլ Դանիէլի եւթներորդ.- Հանդէս Ամսօրեայ, 1892, էջ 241-2:

135 Tübingener Quartalschrift, 1896, III, էջ 463-489. հայերէն թարգմանութիւնը՝ Ս. Գրոց յարգն ու արժէքը հին հայոց քով.- Հանդէս Ամսօրեայ, *1897, էջ 129-137. եւ՝ Աստուածաշունչ գրոց յարգն առ նախնի հայս (ըստ պր. Ս. Վեբերի. թրգմ. Հ. Ստեփանոս Սարգեան.*- Բազմավէպ, *1897, Դ. էջ 167-9, Է. էջ 311-3, Թ. էջ 408-11, ԺԲ. էջ 600-3:*

136 Nouveaux Melanges Orientaus, Paris, 1886, էջ 471 եւ յաջորդք, քաղուածքներ առ **Զարբհ.,** ՄՀԹՆ, էջ 186-192:

137 **Th. Zahn,** Forschungen zur Geschichte des Neutestamentlichen Kanons, Leipzig, 1893. I Paralipomena, էջ 109-157, գրախօսութիւնը՝ **Հ. Յ. Տաշեան,** Քանի մը նոր հրատարակութիւնք.- Հանդէս Ամսօրեայ, *1895,* էջ 1-3 (ամբողջը՝ էջ 1-6):

138 Զօհրապեանի եւ Mai-ի լատիներէն թարգմանութիւնը (Եւսեբիոսի Ժամանակագրութեան հայերէնից լատիներէն թարգմանութեան հրատարակութիւնը՝ Eusevii Pamphili Chronicorum canon libri duo, միասին՝ Samuelis presbyteri Aniensis temporum

տասն անուն: Սամուէլը պատմում է, որ Ք. յ. 591 թուականին Հայաստանում յայտնուեցին ճարտասան ասորիներ եւ ցանկանում էին հայերի մէջ տարածել Նեստորի աղանդը, սակայն նրանց անիծեցին եւ վռնդեցին երկրից: Այդուհանդերձ, գտնուեցին մարդիկ, ովքեր անցան նրանց կողմը եւ թարգմանեցին նրանց կեղծ գրքերը: Ցահնը փորձում է ցոյց տալ, թէ որտեղի՞ց կարող էր Սամուէլը ստանալ իր ցանկը եւ յունական կամ ասորական գրականութիւններում կա՞ն արդեօք ցանկում նշուած գրքերից: Այնուհետեւ յօդուածի յաջորդ երկու մասերում (II, էջ 115-147 եւ III, էջ 148-157) նա նոյնպիսի քննութեան է ենթարկում Սարկաւագ վարդապետի ցանկերը, որոնք մեզ փոխանցել է Մխիթար Այրիվանեցին: Կրկնութիւնից խուսափելու համար մենք նրա յօդուածի բովանդակութիւնը չենք բերում, քանի որ այժմ ձեռքի տակ ունենք Սարկաւագի ծրագրով եւ ցանկով Մխիթարի ձեռքով գրուած ձեռագիրը, եւ նրա չնորհիւ Ցահնի դատողութիւնների մէջ շատ բան պէտք է փոխուի, իսկ Մխիթարի աշխատանքին մենք առանձին գլուխ ենք նուիրելու:

Հայերէն թարգմանութեան մասին Paris, de la mission des Lazaristes-ից Dr. V. Ermoni-ի յօդուածը, որ 1897 թուականին կարդացել է Ֆրայբուրգում, պարունակում է եւրոպական գիտնականների կարծիքները հայերէն թարգմանութեան մասին: Նա ցանկանում է ապացուցել, որ ներկայ բնագիրը թարգմանուած է յունարէն Եօթանասնիցից[139], իսկ սկզբում եղել է երկու թարգմանութիւն, առաջինը՝ Սահակինը, ասորերէն հիմնօրինակից, երկրորդը՝ Մեսրոպինը, յունարէն ալեքսանդրեան օրինակից, վերջինիս գրքերի ամբողջ կազմով: Նա կարծում է, որ ձեռագրերի ուսումնասիրութիւնն այդ հարցում որեւէ նոր բան չի տայ:

Թէկուզ բոլոր մասնագէտները դեռեւս վաղուց ընդունել էին եւ այժմ եւս ընդունում են հայերէն բնագրի նշանակութիւնը յունարէն Եօթանասնիցի համար, իսկ վերջին ժամանակներս՝ նաեւ ասորերէն հին թարգմանութեան համար, առ այսօր, բացի յիշատակուած մասնակի աշխատութիւններից, հայերէն ամբողջ բնագիրը ոչ մէկն ըստ արժանւոյն չի ուսումնասիրել: Հին Կտակարանի առաջին մակերեսային համեմա-

---

usque ad suam aetatem, Mediol., 1818, p. 52 եւ ֆրանսերէն՝ **Brosset M.,** Collection d'historiens Arméniens, tome II, St. Petersbourg, 1876, էջ 395: **Կիրակոսի Գանձակեցւոյ** Համառօտ պատմութիւն ի սրբոյն Գրիգորէ ցաւուրս իւր լուսաբանեալ (Պատմագիրք հայոց Բ.), Վենետիկ, 1865, էջ 29 (Ժ., 265 էջ. այսուհետեւ՝ **Կիրակոս Գանձակեցի**, Վենետիկ, 1865):

[139] Լոյս է տեսել նրա յօդուածի անաւարտ թարգմանութիւնը՝ **Վ. Երմոնի** (Dr. V. Ermoni), Քննադատական ուսումնասիրութիւն Ս. Գրոց հայկական թարգմանութեան վրայ.- Բազմավէպ, 1900, Է. էջ 296-302, Ը. էջ 346-352, Թ. էջ 406-410, Ժ-ԺԱ. էջ 451-454 (Թրգմ. եւ Ազդ Հ. Ստեփանոս Սարըեանի):

տուԹիւնն արել է Holmes and Parson-ը[140], բայց ըստ Կոնիբէյրի արձագանգի (Scrivener էջ 151)՝ «not with desirably accurancy nor from the oldest manuscripts»[141]: Նոր Կտակարանի բնագրի վերաբերմամբ այդպիսի համեմատուԹիւն առաջին անգամ հրապարակել է Tregelles-ը, եւ յետոյ տպագրուել է Նոր Կտակարանի Տիշենդորֆի ուԹերորդ հրատարակուԹեան մէջ[142]: Այս համեմատուԹիւնը Կոնիբէյրը համարում է առաւել ճշգրիտ,- «N. T. is accurate so far as it goes, but is far being exhaustive or based on a consensus of the oldest manuscripts» (Scrivener, էջ 152)[143]:*

Holmes-ի համեմատուԹիւնից օգտուել է Fr. Field-ը՝ Որոգինէսի հատուածների մասին իր յայտնի գրքում[144]: Հին Կտակարանի մի այլ համեմատուԹիւն արել է Kaulen-ը՝ որպէս օրինակ Թարգմանելով հայերէն տարբերակի առանձին մասեր: Հայերէն ԹարգմանուԹեան մասին նրա կարծիքը յանգում է նրան, որ, նախ՝ այն յունարէն հիմնօրինակի վերարտադրուԹիւնն է, չնայած ԹարգմանուԹիւնը «sclavisch treu» [ստրկական հաւատարմուԹեամբ] անուանել չի կարելի, եւ երկրորդ՝ դաւանաբանական հասկացուԹիւնների վերաբերմամբ եւ բուն բնագրի ճշգրտուԹեան հարցում այն լրիւ համապատասխանում է հիմնական յունարէն ընկալեալին[145]:

Կայ մի հետաքրքիր հարց եւս՝ ասորի մեկնիչ Barhebräus-ի կողմից Աստուածաշնչի մեկնուԹեան իր գրքում հայերէն բնագրից օգտուելը: Դրա մասին Dr. F. Göttsberger-ի նորագոյն աշխատուԹիւնը[146] հաստատում է, որ Բար-Հրէան, չնայած որպէս Փոքր Հայքի Մելիտենէ քաղաքի ծնունդ մօտ յարաբերուԹիւնների մէջ է եղել հայերի հետ, բայց նրանց Աստուածաշնչից օգտուել է ոչ անմիջաբար[147]: Նա ունի մեկական յղում Ղեւտա-

---

140 Եօթանասնից հրատարակուԹիւնում՝ Oxsford, 1798-1828, Praefatio in Pentateuchen, էջ IV:

141 Ըստ Վիեննայի կայսերական գրադարանի Հ^{մդ} 11 ձեռագրի, որ Holmes-ի համար համեմատել է F. C. Alfer-ը: Ձեռագրի Հ. Յ. Տաշեանի նկարագրուԹիւնը՝ Հանդէս ամսօրեայ, 1891, էջ 49, եւ մեր շարքում՝ Wk. Հ^{մդ} 33:* Քաղուածքի թարգմ.՝ «Ո՛չ ցանկալի ճշգրտութեամբ, ո՛չ էլ հնագոյն ձեռագրերից»:

142 **G. R. Gregory,** Prolegomena zu Tischendorfs Novum Testamentum Graece, editio octava, critica major. des griechischen N. T., Leipzig, 1884-1894, էջ 195 (այսուհետեւ՝ Gregory, Prolegomena), Տրեգէլսի համար համեմատուԹիւնը Լոնդոնում արել է Չարլզ Ռիէուն: Տրեգէլսը դրանից օգտուել է Greek New Testament-ում. հմմտ. Hyvernat-ի յօդուածը, էջ 1014:

143* Թրգմն.՝ «Նոր Կտակարանը ճշգրիտ է այնքանով, որքանով հնարաւոր է, բայց սպառիչ կամ հնագոյն ձեռագրերի համաձայնութեան վրայ հիմնուած լինելուց հեռու է»:

144 **Origeni** Hexaplarum quae supersunt, Oxford, 1885:

145 **Kaulen**, Einleitung III, Anfl. § 171, էջ 144:

146 **Dr. F. Göttsberger,** Die syro-armenischen Bibelcitate aus den Scholien des Barhebräus.- Zeitschrift für alttestamentliche Wissenschaft, 1901, էջ 101-127:

147 Նրա մեկնութիւնները հրատարակել են՝ **Walton**, Polyglotta, tom. VI. Excerpta

կան Ժ. 19ից՝ «յոպոպ» եւ Յովհաննու Աւետարանի՝ Ժ. 2 «Հովիւն քաջ» եւ 157 անգամ Սաղմոսներից: Գէոտսբերգէրը, համեմատելով 157+2 յղումները հայերէն բնագրի հետ (էջ 104-123), եկել է այն եզրակացութեան, որ Բար-Հրէան իր առջեւ ունեցել է Աստուածաշնչի ոչ թէ հայերէն բնագիրը, այլ լուսանցներում նշումներով ասորերէն ինչ որ ձեռագիր:

Սրանով նա հերքում է[148] *Wiseman-ի կարծիքը, որը մտածում էր, թէ հնում գոյութիւն է ունեցել հայերէն Աստուածաշնչի ասորերէն թարգմանութիւն: Գէոտսբերգէրը իր յօդուածն աւարտում է իրաւացի ենթադրութեամբ, որ հայերէն անյայտ ձեռագրից վերցուած 157+2 քաղուածքները կարող են օգտակար լինել հայերէն բնագիրը հրատարակելու ժամանակ:*

Աստուածաշնչի հայերէն ձեռագրերի անբաժան մաս են կազմում անկանոն երկու գիրք՝ Ա. Կորնթացիս Գ. Թուղթը՝ նրանց պատասխանով առ Պօղոս եւ Յովհաննու Հանգիստը: Վերջինը հայ եկեղեցին նոյնիսկ կանոնական գրքերին հաւասար յարգի է համարում, եւ այն ընդգրկուել է ձաշոցների մէջ[149]*: Մինչեւ 1891 թուականը Պօղոսի անկանոն Թուղթը յայտնի է եղել միայն հայերէն բնագրով եւ Եփրեմի մեկնութեամբ, որը պահպանուել է կրկին հայերէն թարգմանութեամբ: Այն հայերէնից անգլերէն է թարգմանել լորդ Բայրոնը, լատիներէն եւ յունարէն են թարգմանել Վիսոտոն եղբայրները, գերմաներէն՝ Ռինկը, եւ երկու անգամ՝ Ֆեատէրը. նրան նուիրուել են չատ մենագրութիւններ եւ առանձին յօդուածներ*[150]*: Բայց*

---

paucula ex Scholiis Ps. V et XVIII, էջ 74: **Eichhorn**, Repertorium für morgenländische Litteratur, XIII, էջ 184. բայց լաւագոյն հրատարակութիւնները՝ **P. De Lagarde,** Praetermissorum libri duo, Göttingen, 1879, էջ 97-244, եւ **O. F. Tulberg,** Die Scholien zu Psalmen 1, 2, 22, Upsala, 1842:

148 «Die syro-armenischen Citate hat Bar-Häbreus als Randnoten zu seinen Hadschrifen vorgefuden» (էջ 126): Բար-Հրէայի մասին յիշատակում է՝ V. Ermoni, Բազմավէպ, 1900, էջ 453, Kaulen-ը՝ էջ 172-176, Cornely, էջ 387 եւ Schrumpf-ը՝ **Շրումպֆ-Զարբհանալեան.**- Բազմավէպ, 1891, էջ 123:

149 Հայոց եկեղեցին այն կարդում է Յովհաննէս առաքեալի օրը եւ Քահանայապետի ծէս կատարելու ժամանակ, այն պահին, երբ հոգեւորականի դագաղն արդէն իջեցուած է գերեզմանի մէջ:

150 Առաջին անգամ Ա. Կորնթ. Գ. թղթի հետ եւրոպացիներին ծանօթացրեց՝ **J. Ussher**, Sylloga annotationum, Oxon., 1644, էջ 29, ըստ Զմիւռնիայից 1644 թուականին բերուած մի վնասուած ձեռագրի. այնուհետեւ՝ **Wilkins**, Amsterdam, 1715 թ., Whiston եղբայրները, 1736 թուականին հրատարակելով Մովսէս Խորենացու Պատմութեան լատիներէն թարգմանութիւնը՝ հայերէն բնագրով հանդերձ, appendix, էջ 367՝ աւելացրին Ա. Կորնթացիս Գ. թղթի յունարէն եւ լատիներէն թարգմանութիւնները, արուած Հալէպից բերուած մի ամբողջական ձեռագրից: Այդ բնագիրը վերարտադրեցին **La Croze-ը**, Thes. Epist. III, էջ 237 եւ՝ Fabricius, Cod. Apocr., III, 681: Լորդ Բայրոնն իր ազատ թարգմանութիւնը հրատարակեց՝ Աւգերեան Ցարութիւն վ., Քերականութիւն հայերէն և անգղիական, ի Վէնէտիկ, Ի վանս սրբոյն Ղազարու, 1819 (A Grammar armenian and english, by p.p. Awker and lord Byron, 1819), էջ 176-194 (8 չհ., 334, 2 չհ. էջ): Գերմաներէն թարգմանեց **Dr. P. Vetter,** Der apocr. III. Kor. Brief

1891 թուականին Միլանի Ամբրոսեան գրադարանի Ժ. դարի մի լատիներէն ձեռագրի (E. 53 inferior) մէջ՝ նախ Corsen-ը, իսկ յետոյ՝ S. Berger-ը նկատեցին եւ պատճէնեցին նշուած անկանոնի լատիներէն բնագիրը: Սակայն լատիներէն ձեռագիրը ճիշտ այն մասում, որտեղ տեղադրուած է անկանոնը, խիստ վնասուած էր, եւ լատիներէն բնագրի վերականգնման համար հարկ եղաւ դիմելու Զօհրապեանի հայերէն հրատարակութեանը (Յաւելուած, էջ 25): Այդ աշխատանքը համատեղ կատարեցին եւ հրատարակեցին A. Carriére et S. Berger-ը, La correspondans, Paris, 1891[151]*:*

Կարիէրը եւ Բերժէն Թղթի հիմնօրինակ են համարում յունարէնը, այն դէպքում, որ Vetter-ը[152] *հայերէն բնագրի համար հիմք է համարում ասորերէն հիմնօրինակը: Բոլոր երեքի աշխատանքներում բերուած է մանրամասն գրականութիւն: Շուտով Laon-ում գտնուեց լատինական թարգմանութեան նոր, անվնաս օրինակ*[153]*, եւ այն հրատարակեց Bratke-ն*[154]*:*

Անկանոն Թղթի համեմատ քիչ ուշադրութեան է դարձուած Յովհաննէս առաքեալի Հանդիստ անկանոնին: 1871 թուականին այն լատիներէն է թարգմանել Վիեննայի մխիթարեան միաբան Հ. Յովսէփ Գաթրճեանը[155]*:*

---

neu übersetzt nach seiner Entstehung untersucht, Tübing. Quartalschrift, 1890, LXXII, էջ 615-624. սակայն դրանից առաջ եղել է թարգմանութիւնը՝ **W. Rink,** Das Sendschreiben der Korinther in armenischer Uebersetzung erhalten, Heidelberg, 1823:

151 Ancienne version latine et traduction du texte arménien.- Revue théologique et scientifique, vol. XXIII. Թարգմանութիւնը՝ Մատենագրականք.- Բազմավէպ, 1891, էջ 279-281 եւ **Հ. Յակովբոս Տաշեան,** Երկու նոր հրատարակութիւնք.- Հանդէս Ամսօրեայ, 1891, էջ 345-346:

152 Theologisches Qartalschrift, LXXII, 1891 եւ Ueber die Entstehungszeit der arm. Uebersetzung des Briefwechsels, Litter., Rundschau, 1897, էջ 36:

153 Theologisches Literaturzeitung, 1892, Հմ՝ 24. **Vetter**, Theol, Qartalschrift, 1893. Heft II, էջ 350-51. 1895, Heft IV, էջ 622-633. ծանուցում՝ Հանդէս Ամսօրեայ, 1893, էջ 243:

154 Theologisches Literaturzeitung, 1892, Sp. 585-588 «Ein zweiter lateinischer Text des apocryphischen Briefwechsels zwischen dem Apostel Paulus und den Korinthern». **Vetter**, Der apocryphe dritte Korintherbrief, Wien 1894. Ֆետտերի այս աշխատանքում կայ ամբողջ գրականութիւնը. էջ 39-57՝ հայերէն բնագրի եւ թարգմանութեան նոր գրախօսութիւնը, էջ 58-64 Բերժէի լատիներէն բնագիրը, էջ 64-69՝ Բրատկէի լատիներէն բնագիրը, էջ 70-79՝ առ Կորնթացիս Գ. թղթի Եփրեմ Ասորու մեկնութեան հայերէնից գերմաներէն թարգմանութիւնը (այն առաջինը թարգմանել է Ս. Կանայեանցը՝ Theodor Zahn, Geschichte des Neutestamentlichen Kanons, II, 2, S. 592-611: Ցահնի յօդուածի Հ. Յ. Տաշեանի թարգմանութիւնը՝ **Theodor Zahn,** Թղթակցութիւն Պաւղոսի եւ Կորնթացւոց եւ Մեկնութիւն Եփրեմի.- Հանդէս Ամսօրեայ, 1891, էջ 217-218, 232-234 եւ 276-279), եւ էջ 80-97՝ առ Կորնթացիս Գ. թղթի Յովհաննէս Որոտնեցի հայ վարդապետի մեկնութեան թարգմանութիւնը. **P. Vetter,** Der apokryphe dritte Korintherbreif, neu übersetz und nach seiner Entstehung untersucht.- Հանդէս Ամսօրեայ, 1894, էջ 280-286, 301-306, 346-350, 365-366 (թարգմ.՝ Հ. Յ. Տաշեանի): Հմմտ. Bardenhewer, Geschichte, էջ 466-467:

155 Ecclesiae Ephesiae de obitu Ioannis Apostoli narratio. Ex versione armeniaca saeculi

Հայերէնով կայ այդ անկանոնի Ներսէս Լամբրոնացու մեկնուԹիւնը, որը անկանոնի հետ միասին Մ. Էմինը թարգմանել է ռուսերէն. Н. Эминъ, Апокрифическое сказаніе объ успеніи св. Евангелиста Иоанна Богослова[156] *(Անկանոն պատում Յովհաննէս Աւետարանիչ Աստուածաբանի մահուան մասին):*

Լատիներէնից գերմաներէն թարգմանուԹիւնը ըստ Գաթրճեանի արել է M. J. Schmid-ը[157]*: Ցահնն իր յայտնի՝ Acta Joannis աշխատուԹեան մէջ ապացուցում է, որ Յովհաննու Հանգիստը առաքեալի անկանոն վարքի մի մասն է:*

Աւարտելով գիտնական գրականուԹեան տեսուԹիւնը, աւելորդ չենք համարում աւելացնել ցուցակ անկարեւոր մի քանի աշխատուԹեան, որոնց մէջ Աստուածաշնչի հայերէն տարբերակի խնդիրը արծարծւում է ի միջի այլոց: Այդ ցանկը մասնաւոր նամակով սիրայօժար մեզ հաղորդեց Հ. Յ. Տաշեանը.

ա) M. S. Eulinger, Une leçon probablement Hésychinne, Actes Congr. Scient. intern. des Catholiques (Freiburg, 1898), II, 273-81, թարգմանուԹիւն՝ «Բազմավէպ», 1898, էջ 423 եւ վերաբերւում է Երգ Երգոցի «Ողողոմացի Սուլամիթա» է., 1, (հայերէն Զ. 12, եւ է. 1) անուան մասին հատուածին.

բ) E. Teza, Sul libro di Giuditta nella versione Armena, թարգմանուԹիւն՝ «Բազմավէպ» 1896, էջ 301-6.

գ) H. Goussin, Apokalypsis S. Joannis Apostoli, versio sahidica, Strasburg 1895. ի միջի այլոց՝ առաջաբանում հաղորդում է, որ ինքը գտել է ՅայտնուԹեան հայերէն տարբերակի աւելի հին թարգմանուԹիւն: Սակայն 1895 թուականից ի վեր նա իր յայտնագործուԹեան մասին որեւէ բան այլեւս չի գրել:

quinti, nunc primum latina cum notis prodita. Curavit P. Iosephus Catergian: Ասորերէն բնագրի մասին՝ **W. Wright,** Apocryphal Actes of the Apostles, London, 1871, էջ 166. իսկ II, 61 անգլերէն թարգմանութիւնը եւ **Th. Zahn,** *Acta Joannis unter Benutzung von C. Tischendorf's Nachlass bearbeitet*, Erlangen, 1880, էջ 238-250:

[156] Թարգմանութիւնը տպուել է նախ՝ Православное обозрение, 1876, յունուար, էջ 1-42, իսկ այժմ՝ Էմինի աշխատութիւնների հրատարակութեան մէջ՝ **Н. О. Эмин,** Переводы и статьи по духовной армянской литературе (за 1859-1882 гг.), апокрифы, жития, слова и др., Москва, 1897, էջ 17-62:

[157] **M. J. Schmid,** Dormitio Beati Ioannis Apostoli, Theologisch practische Monatschrift, Passau, 1898, էջ 153-358: Համմտ. Հ. Գրիգորիս Գալէմքեարեանի ծանուցումն առ այս՝ Հանդէս Ամսօրեայ, 1898, էջ 183:

1. ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԵՐԸ

Մատենագրական աղբիւրների թերի եւ հատուածական տեղեկութիւնները նշանակալի չափով լրացւում են ձեռագրերի ուսումնասիրութեամբ: Մեր նպատակի համար գլխաւոր նշանակութիւն ունեն այն ձեռագրերը, որոնք պարունակում են Աստուածաշնչի ամբողջական եւ մասնակի ընդօրինակութիւններ: Հայերէն ամէնահին ձեռագիրը Մոսկուայի Արեւելեան լեզուների Լազարեան ճեմարանի Աւետարանն է, որը գրուել է 887 թուականին եւ Թ. դարի միակ յայտնի ձեռագիրն է: Ժ. եւ ԺԱ. դարերի թուագրուած ձեռագրերն առանձնապէս շատ չեն, եւ նրանց մէջ առաջին տեղը գրաւում են Աւետարանները: Աստուածաշնչի առաջին թուագրուած ձեռագիրը վերաբերում է ԺԲ. դարի վերջին (1199 թ.), իսկ Աստուածաշնչի ԺԳ. եւ յաջորդող դարերին վերաբերող ձեռագրերի թիւը հաշւում է արդէն տասնեակներով: Հայերէն ձեռագրեր գտնւում են մեծ եւ փոքր բաւական շատ գրադարաններում, թէեւ նրանցից շատերը մինչ այժմ եւս գտնւում են մասնաւոր անձանց ձեռքին: Ձեռագրական հաւաքածուների մէջ նշանակութեամբ եւ քանակով կարեւոր տեղ ունեն հետեւեալ գրադարանները՝ Էջմիածնի վանքի կաթողիկոսականը, Վենետիկի Մխիթարեաններինը՝ Սուրբ Ղազար կղզում, Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց հայկական վանքինը, Վիեննայի Մխիթարեաններինը, Փարիզի՝ Ֆրանսիայի ազգայինը, Դոնի Նախիջեւանի եկեղեցիներինը: Այս մատենադարաններից Էջմիածնինը ամենահարուստն է՝ ունի 3740 ձեռագիր, թուարկուած մնացած գրադարանները քանակով զիջում են Էջմիածնին, այսպէս, օրինակ՝ Փարիզի ազգային գրադարանի հաւաքածուն հաշւում է 320 միաւոր: Հարիւրից աւելի գտնւում է Մոսկուայի Լազարեան ճեմարանում, Պարսկաստանի Նոր Ջուղայի Սուրբ Ամենափրկչի վանքում, Կարնոյ Սանասարեան վարժարանում, Սեւանի վանքի գրադարաններում: Հարիւրից պակաս պահպանւում են Պետերբուրգի Ասիական թանգարանում, Հանրային գրադարանում, Արեւելեան լեզուների ինստիտուտում: Վերջապէս՝ մի քանի ձեռագիր գտնւում է Մոսկուայի Ռումեանցեւեան թանգարանում: Հաւաքածուներ կան նաեւ Բեռլինի, Միւնխէնի, Վիեննայի գրադարաններում, Լոնդոնի Բրիտանական թանգարանում, Վատիկանում, Թիֆլիսի Ներսիսեան դպրոցում, Կոստանդնուպոլսի տարբեր հայկական կազմակերպութիւններում եւ պատմական Հայաստանի համարեա բոլոր հայկական վանքերում[158]*:*

[158] Հայկական ձեռագրերի եւ հաւաքածոների մասին ընդհանուր տեղեկութիւններ

Եւրոպական գրադարաններում գտնուող ձեռագրերն ունեն ձեռագրացուցակներ եւ մատչելի են նրանց հետ ծանօթանալ ցանկացողների համար, նոյնը չի կարելի ասել այլ գրադարանների ձեռագրերի մասին: Եւրոպայում միայն Վենետիկի Մխիթարեանները չեն հասցրել հրատարակել իրենց գրադարանի ձեռագրացուցակը: Ակնյայտ է, որ առանց ցուցակների, որոնք կպարունակեն հաւաքածուների ձեռագրերի գոնէ անունների եւ անուանումների համառօտ թուարկում, դժուար է ծանօթանալ նրանց ունեցած նիւթերին: Եւ մենք՝ մեզ վրայ առնելով Աստուածաշնչի բոլոր ձեռագիր օրինակների ցուցակի կազմումը, մեզ չենք գովաբանում, որովհետեւ այդ խնդրում ցանկալի լիարժէքութեան հասնելու յոյս չունենք: Մեր աշխատանքը պարունակելու է Աստուածաշնչի մեզ յայտնի բոլոր օրինակների, Հին եւ Նոր Կտակարանների մասերի լրիւ թուարկումը, իսկ Աւետարանների վերաբեմամբ՝ բերելու ենք միայն Թ-ԺԲ. դարերի ձեռագրերը, եւ ԺԳ. դարի միայն մի քանի առաւել հետաքրքիր օրինակները, որովհետեւ յաջորդող դարերի մեզ յայտնի բոլոր՝ թուով 500 ձեռագրերի թուարկումը հազիւ թէ նպատակայարմար լինի, եւ չատ տեղ ու ժամանակ կխլի:

Աստուածաշնչի հայերէն օրինակութիւններին վերաբերող առաջին ճշգրիտ տեղեկութիւնները տուել է Զօհրապեանը՝ 1805 թուականի իր յայտնի հրատարակութեան նախաբանում (էջ 5-7)[159]*, որտեղ հակիրճ կերպով նկարագրել է Վենետիկի Մխիթարեան միաբանութեան ութ ձեռագիր: Աւելի լիարժէք են Զարբհանալեանի տուեալները, որը Վենետիկի վանքի ձեռագրերից բացի նկարագրում է նաեւ Էջմիածնի եւ Երուսաղէմի վանքերի եւ այլ գրադարանների Աստուածաշունչներն ու Աւետարանները: Ըստ Զօհրապեանի, Վենետիկի ձեռագրերն ութն են, իսկ Զարբհանալեանն արդէն յիշատակում է 13 համար*[160]*:*

Աստուածաշնչի եւ Աւետարանի տարբեր գրադարաններում ցրուած բոլոր ձեռագրերը միայն Էջմիածնի վանքի հայրապետական գրադարա-

կան՝ **Զարբհ.**, Պատմ. հայ դպր., 1897՝ «Հայկական ձեռագրեր» գլխում՝ էջ 69-94, իսկ Տաշեանը հրապարակել է յատուկ ուսումնասիրութիւն՝ «Ակնարկ մը հայ հնագիտութեան վրայ» տեսութիւնը, որ հատուածաբար տպագրուել է՝ Հանդէս Ամսօրեայ, 1897, 1898 թթ. եւ հրատարակուել է առանձին գրքով՝ **Հ. Յակովբոս վ. Տաշեան,** Ակնարկ մը հայ հնագրութեան վրայ, Ուսումնասիրութիւն հայոց գրչութեան արուեստին, 10 զնկատիպ պատկերով, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1898, ԺԱ., 203 էջ (Ազգ. մատենադարան, ԻԸ.):

159 Տե՛ս վերը՝ 55րդ ծանօթութեանը յաջորդող էջը:

160 Աստուածաշունչ Զօհրապեանի, նախաբան, էջ 5-7. **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 121-171. Scrivener, Introduction, էջ 153-154, որտեղ տրուած է Զարբհանալեանի աշխատութիւնից վերցուած՝ Աւետարանի 17 ձեռագրի նկարագրութիւն (էջ 157 եւ 162), կրկին նոյն տեղից ի՝ A Dictionary of the Bible, Volume I, էջ 154 (864 p.), Gregory, Prolegomena, էջ 915 (այս աշխատութիւնը մենք չենք տեսել):

նում (մատենադարանում) եղած ձեռագրերի թուի կէսն էլ չեն կազմում: Որպէս հայերէն ձեռագրերով ամենահարուստը, այդ գրադարանը վաղուց է իր վրայ սեւեռել մասնագէտների եւ եւրոպական գիտնականների ուշադրութիւնը: Պահպանուել է Էջմիածնի Յովհաննէս կաթողիկոսի 1833 թ. Դորպատի պրոֆեսոր Գլոսուսին ուղղուած պատասխան ուղերձը՝ կոնդակը: Կոնդակից երեւում է, որ Գլոսուսը դիմել է կաթողիկոսին, խնդրելով հաղորդել, թէ գրադարանում կա՞ն արդեօք յոյն եւ այլ գրողների երկերի բնագրեր կամ թարգմանութիւններ, եւ պատրաստակամութիւն է յայտնել իր վրայ վերցնելու նրանց հրատարակելու ամբողջ աշխատանքը եւ ծախսերը: Կաթողիկոսը դրան պատասխանել է, թէ այդպիսի երկեր գրադարանում չկան[161]*: Այդպիսի պատասխանը մասնագէտներին չի բաւարարել. եւ Ս. Պետերբուրգի կայսերական Գիտութիւնների Ակադեմիայի անդամ Մարի Բրոսէին յաջողուել է ստանալ Էջմիածնի գրադարանի բոլոր տպագիր գրքերի եւ ձեռագրերի լրիւ ցուցակը, որը նա հրատարակել է ֆրանսերէն եւ ռուսերէն լեզուներով*[162]*: 1849 թուականին Բրոսէն ձեռնարկեց ուղեւորութիւն դէպի Վրաստան եւ Հայաստան եւ իր Էջմիածնում եղած ժամանակ ծանօթացաւ ձեռագիր ձեռագրացուցակներին եւ նչեց ամենակարեւոր ձեռագրերը: Այնուհետեւ նա հրատարակեց իր դիտարկումները*[163]*. գրադարանում նա գտաւ ձեռագիր չորս ցուցակ, երկու ընդհանուր եւ երկու յատուկ՝ առաւել մանրամասն: Առաջին՝ ամենահին ցուցակը 1828 թուականին կազմել է Մանուէլ վարդապետը, եւ պարունակել է 708 համար՝ այբբենական կարգով*[164]*, իսկ երկրորդ՝ ընդհանուր ցուցակն առարկայական կարգով էր. այդ ցուցակի Գ. գլուխը պարունակել է Աստուածաշնչի անմբողջական 27 ձեռագրի նկարագրութիւն, Դ. գլուխը՝ Աւետարանների, իսկ Ե.՝ պատմական ստեղծագործութիւնների: Բրոսէն համարեա ամբողջութեամբ վերարտադրել է այդ ցուցակը, իր կողմից մի քանի ձեռագրի վերաբերեալ աւելացրել է բաւական*

[161] Կաթողիկոսի այդ ուղերձը տպագրուել է գերմաներէն՝ «Dorpater Jahrbucher»ում, 1833, էջ 90 եւ գերմաներէնից թարգմանուել եւ հրատարակուել է «Արարատ» հանդէսում՝ Կոնդակ Յովհաննէս կաթուղիկոսի՝ ուղղած Դորպատի Գլոսիոս պրոֆեսորին.- Արարատ, 1901, Է-Ը., էջ 392-394. տպագրուած՝ «Յաւելուած» վերնախորագրի ներքոյ, ստորագրուած՝ «Մեսրոպ վարդապետ»:

[162] Catalogue de la Bibliothèque d'Ehmiadzin, composé par M. Karganoff et publié par M. **Brosset**, académicien extraordinaire, Saint Petersbourg, 1840 (**Бросse M.,** Каталогъ книгамъ Эчмядзинской библиотеки, Санктпетербургъ, 1840), 121 էջ. «Ընդհանուր ցուցակ Էջմիածնի գրադարանի գրքերի եւ ձեռագրերի» (այսուհետեւ՝ **Brosset**, Catalogue de la Bibliothèque d'Ehmiadzin):

[163] **Marie-Félicité Brosset**, Rapports sur un voyage archéologique dans la Géorgie et dans l'Arménie, St. Pétersbourg, 1851, էջ 23-80:

[164] Մանուէլ վարդապետի եւ միւսների կազմած ցուցակները երբեւէ չեն հրատարակուել եւ որպէս ձեռագրեր պահպանւում են Էջմիածնի մատենադարանում:

ճչգրիտ եւ մանրամասն տեղեկութիւններ. օրինակ՝ Յովհան եպիսկոպոսի Աստուածաշնչի մասին (= մեր՝ O^2 Հմր 5), Հեթում թագաւորի (= մեր՝ H Հմր 11), Միքայէլ վարդապետի (= մեր DJ^8 Հմր 57), Նահապետ կաթողիկոսի (= մեր E^2 Հմր 60): Դ. գլխում դրուած է 30 ձեռագիր Աւետարանների ցուցակ, որոնց մէջ միայն երկուսը ԺԲ. դարի են, իսկ մնացած բոլորը՝ ԺԳ. եւ յաջորդ դարերի:

Հայերէն առաւել մանրամասն ցուցակի կազմումը սկսուել եւ աւարտուել է 1860-1862 թթ.: Այդ նպատակի համար Մատթէոս կաթողիկոսը վանքի միաբաններից նշանակել է յատուկ յանձնաժողով՝ Դանիէլ վարդապետ Շահնազարեանցի գլխաւորութեամբ, որն էլ միանձնեայ կատարել է ամբողջ աշխատանքը: Նա վերահամարակալեց բոլոր ձեռագրերը, բաւական մանրամասն նկարագրեց նրանց արտաքինը. պարզեց թէ ո՞ր ժամանակին է վերաբերում ձեռագիրը, ո՞վ է այն գրել եւ ո՞ւմ պատուէրով. բերեց գրքերի վերնագրերը եւ հետաքրքիր դրառումները: Դանիէլ վարդապետի կազմած ցուցակում թերութիւններն ու անճշտութիւններն անչափ շատ են, այդուհանդերձ՝ նրա աշխատութեան չնորհիւ հնարաւոր դարձաւ մասնագէտների ծանօթութիւնը էջմիածնի գրադարանի հաւաքածոյի բովանդակութեանը: Դանիէլ վարդապետի ձեռագրացուցակը 1863 թ. Թիֆլիսում հրատարակեց Յակոբ Կարենեանը: Այդ հրատարակութեան տիտղոսաթերթի վրայ կազմողի՝ Դանիէլ վարդապետի անունը յիշատակուած չէ, դրա համար էլ բոլոր հրատարակութիւններում նշւում է հրատարակչի անունը, այլ ոչ թէ իրական աշխատաւորի[165]*: Այդ անարդարութեան վերացման նպատակով հետագայ չարադրանքում բերելու ենք ցուցակի կազմողի՝ Դանիէլի անունը, եւ ո՛չ հրատարակչի: Դանիէլի ցուցակի կազմութեան ժամանակ էջմիածնի մատենադարանում կար 2340 ձեռագիր, որոնց անուանումները նրա ցուցակում դասաւորուած են այբբենական կարգով. նոյն կարգով էլ նա կազմել է իր նկարագրութիւնը: Ներկայումս մատենադարանում կայ Դանիէլի ցուցակի հաւաքածուի 2383 համար, հետեւաբար՝ ցուցակի աւարտից յետոյ հաւաքածուի մէջ մուտք են արուել 43 ձեռագրեր, որոնք դրուել են հաւաքածուի համարների միջեւ, ապա ձեռագրերը վերահամարակալուել են. եւ այժմ սա Դանիէլի ցուցակից օգտուելիս պակաս դժուարութիւններ չի առաջացնում: Բայց չուտով նկատեցին այդ խառնաշփոթը եւ սկսեցին նոր ստացուած*

[165] Մայր ցուցակ ձեռագիր մատենից գրադարանի Սրբոյ աթոռոյն Էջմիածնի. Տպագրեալ Հրամանաւ տեառն Մատթէոսի ընդհանրական հայրապետին ամենայն Հայոց, [Աշխ. Շահնազարեան Դանիէլ վ.], Ծախուք ի Կարնոյ գաղթական Յակոբայ վարժապետի Կարնեցւոյ, յօգուտ դպրոցի ժառանգաւորաց Սրբոյ Էջմիածնի, ի Թիֆլիզ, ի տպ-ի Ներսիսեան ազգային հոգեւոր դպրոցի հայոց, ի 1863 ամի, 7 չհ., 230 էջ (այսուհետեւ, հիմնականում շարադրանքի մէջ՝ Դանիէլի ցուցակ):

ձեռագրերը դասաւորել նոր համարական կարգով: Նոր հաւաքածուի ձեւաւորումն սկսուել է 1864 թուականին եւ արդէն ունի 1057 համար, որին պէտք է աւելանան Խաչիկ վարդապետի 300ից աւելի ձեռագրերը: Այսպիսով, Էջմիածնի վանքի բոլոր ձեռագրերի թիւը հաւասարւում է 2383 (=2340՝ Դանիէլի) + 1057 (նոր հաւաքածուն) + 300 (Խաչիկի) = 3740: Խաչիկի ձեռագրերի ցուցակը տպագրւում է, իսկ ամբողջ մատենադարանի ցուցակը մենք եք կազմել, բայց դեռ տպագրուած չէ[166]*:*

«Ըստ ձեռագիր ցուցակի 2383 (իմա՛ Դանիէլի 2340) համարներից. Աստուածաշունչի ամբողջական ձեռագրեր[167] *են Հ՟թք 153-185 (Դանիէլի՝ 147-178), Աստուածաշունչի թերի ձեռագրեր՝ Հ՟թք 186-228 (Դանիէլի՝ 179-221). Աւետարանի ձեռագրեր՝ Հ՟թք 229-371 (Դանիէլի՝ 222-363): Այս համարներից դուրս Աստուածաշնչի մասեր են՝ հանդիպում՝ Հ՟թք 18, 21, 42, 420, 571, 602, 613, 615, 632, 729, 796, 944, 1187, 1228, 1345, 1348, 1359, 1430, 1472, 1684, 1708, 1767 (բերում ենք նոր՝ իրական համարները, եւ ո՛չ Դանիէլինը) բոլորը միասին՝ 241 ձեռագիր: Ձեռագրերի նոր հաւաքածուից Սուրբ Գրքի մասերին վերաբերում են. Աստուածաշնչի ամբողջական ձեռագրեր՝ Հ՟թք 16, 17, 18, 357, 358, 359, 360, 784. Աստուածաշնչի մասնական ձեռագրեր՝ Հ՟թք 35, 130, 144, 342, 533, 712, 806, 944, 1020, 1056: Աւետարանի ձեռագրեր՝ Հ՟թք 21-34, 362-385, 585-790, 802, 812, 816, 837, 852, 893-910, 923, 925-935, 963, 968, 973, 1000, 1006, 1007, 1019, 1024, 1028, 1046, 1057. ընդամէնը՝ 108, իսկ առաջիններիի հետ միասին՝ 349 միաւոր*[168]*: Նոր հաւաքածուի համարներն առաջինից զատելն ընդունուած է վերջինիս ամէն համարի կցելով Գ տառը՝ Գէորգ կաթողիկոսի անուան սկզբնատառը, ով դրել է նոր հաւաքածուի հիմքը: 349 թիւը*[169]***

[166] Էջմիածնի մատենադարանի մասին ընդհանուր տեղեկութիւններ՝ **I. I. Mourier,** La bibliothèque d'Etchmiadzine et les manuscrits arméniens, Թիֆլիս, 1889:

[167] Դանիէլը առաջինները կոչում է «լրիւ», երկրորդները՝ «թերի». ամբողջականների մէջ թերիները շատ են, օրինակ՝ Հ՟թք 154, 158, 160, 162, 163, 185, բայց սրանք աւելի շուտ պակասաւոր են, նրանց մասերը կորսուած են, որովհետեւ Դանիէլը թերի է համարում այնպիսի ձեռագրերը, որոնց մէջ իր իսկ՝ գրչի ցանկութեամբ գրուած են միայն որոշակի գրքեր, օրինակ՝ Գործք եւ Թուղթք առաքելոց կամ Մարգարէութիւն Եսայեայ եւ Թուղթք Պօղոսի եւ այլ գրքեր՝ գրչի ընտրութեամբ:

[168] Այս 349 միաւորների թուի մէջ չեն մտնում Հ. Խաչիկ վարդապետի հաւաքածուի՝ Հին եւ Նոր Կտակարանների ձեռագրերը: * Այդ հաւաքածուի նկարագրութիւնները տե՛ս՝ Ցուցակ ձեռագրաց Դադեան Խաչիկ վարդապետի՝ ժողոված 1878-1898, Մասն Ա., [Կազմեց՝ Ցակոբ Յ. Թօփճեան], Վաղարշապատ, տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, 1898, Ը., 121, 1 չհ. էջ, Ցուցակ ժողովածուաց Դադեան Խաչիկ վարդապետի, Մասն Բ. 1878-1898, [Կազմեց՝ Ցակոբ Յ. Թօփճեան], Վաղարշապատ, տպ. Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, 1900, 82 էջ:

[169*] Թուարկած բոլոր ձեռագրերի ներկայ համարներն այստեղ նշելն աւելորդ կամ անտեղի ենք համարում. ցանկացողը որեւէ ձեռագրի ներկայ համարը կարող է պարզել Օձիկ Եգանեանի կազմած զուգադիր աղիւսակներով. տե՛ս Ցուցակ ձեռա-

ցոյց է տալիս, թէ որքան մեծ է Աստուածաշնչի պահպանուած ձեռագրերի քանակը, բայց պէտք է իմանալ, որ նրանց մէջ ամենամեծ քանակը Աւետարաններն են: Աստուածաշնչի ամբողջական ձեռագրերը 42ն են՝ նրանց մէջ հաշուելով որոշ պակասաւոր օրինակներ, մասնակիները՝ 74, Աւետարանները՝ 233[170]*:*

Այս ձեռագրերով Աստուածաշնչի բնագրի ամբողջ նիւթն ամենեւին չի սպառուում: Մինչեւ այժմ գտնուած չէ երկաթագիր գրչութեամբ գրուած հայերէն Աստուածաշնչի մի որեւէ օրինակ, բայց այդպիսի բնագիր, թէկուզ եւ հատուածներով, կայ Ժ-ԺԲ. դարերի Ճաշոցներում, ապա Սաղմոսարանները՝ ժամագրքերի մէջ, աւետարանական ընթերցուածները Մաշտոցների մէջ անկասկած բնագրի համար հարուստ քննական նիւթ են պարունակում, չխօսելով արդէն ամենահին ձեռագրից աւելի հին ժամանակների հեղինակների եւ թարգմանիչների բազմաթիւ քաղում-վկայակոչումների մասին:

Ձեռագրերը դասաւորում ենք ժամանակագրական կարգով՝ ուշադրութիւն չդարձնելով նրանց գտնուելու վայրի վրայ: Մեր ցանկի օգտագործման յարմարութեան համար, բացի ժամանակագրական կարգով համարակալումից, փակագծերում տալիս ենք գրադարանի ներկայ համարը եւ ամէն ձեռագրի անուանումը՝ լատինական տառերով, դրա համար օգտագործելով գրչի, տիրոջ կամ գտնուելու վայրի անուան սկզբնատառը՝ ըստ նրանց նշանակութեան»[171]*:*

1. *Յ*[1]*. Հ*[մր] *1. ՈՒԲ. – 1199. Երուսաղէմի հայոց պատրիարքարանի Սուրբ Յակոբ վանքում*[172] *[Եղմ. 326]:*

գրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Բ., կազմեցին Օ. Եգանեան, Ա. Ջէյթունեան, Փ. Անթաբեան. Յանկերը եւ համեմատական տախտակները՝ Օ. Եգանեանի. Խմբագրութեամբ՝ Լ. Խաչիկեանի, Ա. Մնացականեանի, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1970, էջ 1485-1512. «Ա. Համեմատական տախտակ Էջմիածնի նախկին գրատան հիմնական հաւաքածուի ձեռագրերի հին եւ նոր թուահամարների (Ըստ «Կարեանեանց ցուցակի թուահամարների»)» եւ «Բ. Համեմատական տախտակ Էջմիածնի նախկին գրատան հիմնական հաւաքածուի ձեռագրերի հին եւ նոր թուահամարների»:

[170] Մենք մանրամասներ հաղորդեցինք Էջմիածնի մատենադարանի մասին, որովհետեւ, ինչպէս ասուեց, բոլոր ձեռագիր գրքերի հրատարակուած ցուցակ չկայ, եւ որովհետեւ մեր աշխատանքի հիմքերը կազմում են նրա ձեռագրերը, այլ մատենադարանների մասին համաոօտ տեղեկութիւններ բերում ենք՝ երբ առիթ է լինում յիշատակել այդ գրադարանների օրինակների մասին:

[171*] Պայմանանիշերը սահմանել է՝ ձեռագրերը նրանցով ճեշտ մտապահելու համար. J նշանակում է «Երուսաղէմ» (ձեռագրի պահպանման տեղը), Mo՝ «Մօրու» անապատ (գրչութեան վայրը), O՝ «Յովհաննէս Արքաեղբայր» (ստացողի անունը), An՝ Անաւարզա (կրկին՝ գրչութեան տեղը), MN՝ Մովսէս, Ներսէս (գրիչների անունները), Kon՝ Կոստանդնուպոլիս, LB՝ Ղազար Բաբերդացի եւ այլն:

[172] Տե՛ս **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ *222* եւ **Ն. Բիւզանդացի**, Կորիւն վարդապետ, էջ 415-416:

Նրա մասին մենք չատ քիչ գիտենք: Զարբհանալեանն իր ցուցակում հաղորդում է, որ այն գրուած է 1199 թուականին եւ պարունակում է Յովհաննու Յայտնութեան բնագիրը, որը տարբերւում է Ընկալեալի բնագրից: Օրինակի համար նա առաջին գլխից բերում է 4-8 տները: Ն. Բիւզանդացին կրկնում է Զարբհանալեանի մատնանշումը: Մենք ցոյց ենք տալիս, որ Էջմիածնի Հմր 153 (Դանիէլի ցուցակի Հմր 147) [Մ 177] Աստուածաշունչը գրուած է ոչ թէ 1151 թուականին, ինչպէս նրա մի յիշատակարանի հիման վրայ ընդունուած էր համարել, այլ՝ հաւանաբար 1292 թուականին, այնպէս որ եթէ J^1-ի տարեթիւը ճիշտ է, ապա այդ ձեռագիրը Աստուածաշնչական յայտնի ձեռագրերի մէջ հնութեամբ պէտք է զբաղեցնի առաջին տեղը:

2. M_o. Հմր 2. ԶԲ-ԶԴ. = 1253-1255. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 154, Դանիէլի ցուցակի Հմր 148, էջ 10[173] *[Մ 178]:*

Այս ձեռագիրը գրուած է հաստ, մոմապատ թղթի վրայ. այն չատ վնասուած-փչացած է եւ չունի Նոր Կտակարանը, իսկ Հին Կտակարանից՝ Ա. եւ Բ. Մնացորդաց, Սաղմոսք, Սողոմոնի չորս գրքերը, Երեմիայի, Եզեկիէլի եւ Մաղաքիայի մարգարէութիւնները, բացի այդ՝ Թերի-արատաւոր են Ծննդոց եւ Դանիէլի մարգարէութիւն գրքերը: Եղած գրքերից չատերը լրացուած են աւելի ուշ՝ ԺԵ. դարի մատենագիր Յակոբ Ղրիմեցու կողմից: Ունի 280 թերթ, գրուած է բոլորգիր եւ մասամբ նոտրգիր (աւելացուած մասերը) գրով, երկսիւն է (25x15,5 սմ), քառածալ (in 4^0), իւրաքանչիւր սիւնակում 49-51 տող: Այն գրուած է Միքայէլ քահանայի եւ Յակոբ Ղրիմեցու կողմից՝ Ստեփաննոս եպիսկոպոսի համար՝ յանապատին Երկայն Մաւրու եւ ունի գրիչների 8 յիշատակարան:

Բնագրի մասին պարտաւոր ենք նշել, որ այն չունի ո՛չ գլխացանկեր, ո՛չ նախադրութիւններ. Ծննդոց գրքի գլխացանկը գրուած է աւելի ուշ՝ նոտրգրով: Բնագրում հանդիպում են Որոգինէսի աստղանիշ եւ բրգաձեւ նշաններ, իսկ Թագաւորութեանց գրքերի լուսանցներում նշուած են Սիմաքոսի (Սիմ.), Ակիւղասի (Ակ.) եւ Թէոդոտիոնի (Թէո.) ընթերցումները:

Յիշատակարանները պատմական արժէք ունեն: Միքայէլ քահանան ձեռագիրը գրել է Երկայն Մաւրու անապատում՝ 1253 թուականին, Հեթումի թագաւորութեան օրօք: Ի միջի այլոց, գրիչը հաղորդում է, որ այս ձեռագիրը գրելու ժամանակաշրջանում Հեթում թագաւորը երրորդ տա-

---

Երուսաղէմի պատրիարքարանի մատենադարանը բովանդակում է հազար օրինակից աւելի ձեռագիր եւ ունի չհրատարակուած ձեռագիր ցուցակ, տեղեկութիւնները, որ մենք վերցնում ենք Զարբհանալեանից, եւ մի ձեռագրի մասին՝ պրոֆ. Խալաթեանից, շատ հատուածական են եւ բուն բնագրերի մասին ոչինչ չեն հաղորդում:

173 Տե՛ս նաեւ **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 122-123:

բին էր, որ բացակայում էր. ուղեւորուել էր Թաթարստան՝ մոնղոլական խանի մօտ:

3. 0[1]. Հ[մր] 3. ՁԺԲ. - 1263. Էջմիածնի վանքի ձեռագիր Հ[մր] 1056 Գ. [Մ 4243]: Այս ձեռագիրը մատենադարանի համար ձեռք էր բերուել երկու տարի առաջ. այն խիստ վնասուած է, նրա մէջ շատ թերիներ կան, թէ՛ արտաքին ձեւով եւ թէ՛ գրքերի դասաւորութեամբ տարբերւում է Աստուածաշնչի սովորական ընդօրինակութիւններից: Այն գրուած է լաւ մագաղաթի վրայ, մանր բոլորգրով, ութածալ է (in 8[0]), երկսիւն, 31 տողով: Մարգարէների եւ առաքեալների նրբագեղ նկարուած բազմաթիւ մանրանկարներ (թուով 21) ոսկով եւ վառ գոյներով զարդարում են ձեռագիրը: Ստեփանոսի օգնութեամբ այն գրել է Հեթում արքայի եղբայր Յովհաննէս արքեպիսկոպոսը, որն իրեն միշտ կոչել է «Արքայեղբայր»: Արքայի եղբայր Յովհաննէս արքեպիսկոպոսը բուռն սէր է ունեցել ընդօրինակելու Աւետարան, Աստուածաշունչ, ինչպէս նաեւ այլ ձեռագրեր, որոնցից շատերը չեն կորսուել եւ հասել են մեզ[174]: Նա, ինչպէս վկայում են բազմաթիւ յիշատակարաններ, լուրջ ուշադրութիւն է դարձրել օրինակի ճշգրտութեան վրայ եւ միշտ փնտրել է լաւագոյն օրինակներ: Միայն մէկ՝ Էջմիածնի մատենադարանում այժմ կայ նրա՝ Աստուածաշնչի երկու ձեռագիր, Նոր Կտակարանի մասերով երկու ձեռագիր[175], Գործք առաքելոցի Յովհան Ոսկեբերանի մի մեկնութիւն եւ էլի ուրիշ գրքեր: Մեր ձեռագիրը գրուած է Կիլիկիայում՝ Բարձր-բերդի մօտ:

Ձեռագիրը սկսուել է Նոր Կտակարանով, չորս Աւետարաններով, որոնք արդէն չկան. այժմ այն սկսւում է Յայտնութիւնով, որի մէջ պակասում է աւարտը. Գործք Առաքելոցից անվնաս պահպանուել են միայն թերթիկներ, իսկ այնուհետեւ յաջորդում են առաքեալների եօթ թղթերը՝ նախագրութեամբ եւ գլխացանկերով, Եւթաղի Խրատները, Պօղոսի 14 Թղթերը եւ առանձին, բոլորի վերջում՝ Առ Կորնթացիս Գ. թուղթը: Հին Կտակարանից՝ Եսայիի Մարգարէութիւնը, վատ գրով նրա սկզբում կցագրուել են 50 գլուխների գլխացանկը, որ սկզբնական ձեռագրում չի եղել, եւ վերջում՝ մարգարէի անկանոն մահը. Դանիէլի Մարգարէութիւնը եւ նրա մահը. ԺԲ. Մարգարէք եւ նրանց մահերը. Սողոմոնի չորս գրքերը, Յոբի գիրքը:

---

174 Նրա մասին տե՛ս **Զարբհ.**, Պատմ. հայ դպր., 1897, էջ 67-69 եւ 688-690: **Հ. Ղ. վ. Մ. Ալիշան,** Սիսուան, Համագրութիւն Հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ, Վենետիկ, 1885, էջ 144-146 (այսուհետեւ՝ **Ղ. Ալիշան**, Սիսուան. ԺԵ. 592 էջ) եւ իմ հրատարակած՝ Սուրբ Մեսրոպի վարքը, 1897 թ., նախաբանը: * Տե՛ս **Կարապետ Սասնեցի,** Ներբողեան յաղագս վարուց եւ մահուան Ս. վարդապետին Մեսրոբայ (արտատպած «Արարատ» ամսագրից՝ 1897 թ., էջ 330-336, 378-384, 456-463), հրատ. Մ. վրդ. Տէր Մովսէսեան, Վաղարշապատ, տպ. Ս. Էջմիածնի, 1897, 74 էջ:

175 Տե՛ս մեր նկարագրած՝ «Նոր Կտարարանի մասեր». 2. Դ. Հ[մր] 1, 2:

Որպէս այս ձեռագրի առանձնայատկութիւններ արժէ նշել, որ Հին Կտակարանի գրքերը գլխացանկեր եւ Նախադրութիւններ չունեն[176]: Նոր Կտակարանի գրքերը լուսանցներում ունեն թուատառեր, որոնք ցոյց են տալիս տների (ստիքիրոն στιχήραι*) համարները, յիսունական եւ հարիւրական խմբաւորումով: Տնահաշիւներն են՝ Գործք առաքելոցում 2516, Յակոբի Թղթում՝ 237, Պետրոսի Ա. Թղթում՝ 224, Պետրոսի Բ. Թղթում՝ 266 եւ այլն:*

Բնագրում պատահում են Որոգինէսի նշաններ, իսկ Եսայի եւ Դանիէլ մարգարէների լուսանցներում՝ Սիմաքոսի, Ակիւղասի եւ Թէոդոտիոնի ընթերցումները:

Ապա թուատառերով նշուած են Նոր Կտակարանի ընթերցումների հատուածները Հին Կտակարանում. «ֆռանկի»[177] համարներ կան միայն Առակքում եւ Եսայիի մարգարէութիւնում: Բացի այդ, Եսայիի մարգարէութիւնում կայ բաժանարար համարների մի ամբողջ համակարգ, այսինքն՝

1) «Ֆռանկի» համարներ՝ 1-66, այսինքն՝ այնքան, որքան վուլգատայում:

2) Հին բաժանման համարներ՝ 1-43. տպագիր բնագրում եւ ընդհանրապէս ձեռագրերում սրանց թիւը 50 է:

3) Առաւել մանր բաժանումների թուեր, կայ ընդամէնը 1-118. այսպիսի բաժանում գտել ենք միայն այս ձեռագրում, սակայն ինչի՞ համար է այն՝ մնում է անհասկանալի:

4) Ամբողջ մարգարէութիւնում դրուած համարներ՝ սկսւում են 4ով եւ վերջանում 14ով, բայց անհասկանալի է մնում, թէ ինչո՞ւ են դրանք 4ով սկսւում:

5) Կան համարներ, որոնք սկսւում են 37րդ գլխից եւ չարունակւում մինչեւ 73, պատճառը կրկին անհասկանալի է:

6) Տները հաշուած են 50ական, ընդամէնը՝ 3400:

4. *J². Հ՝ր 4. ՁԺԸ. - 1269. Երուսաղէմի հայոց պատրիարքարանի ձեռագիր [Եղմ. 1925]: Այն նկարագրել է պրոֆ. Խալաթեանցը[178]: Գրուած է թղթի վրայ, բաղկացած է 601 թերթից, երկսիւն է (37x26)[179], մեծագիր*

---

176 Եսայիի գրքի գլխացանկը հետագայի յաւելագրում է:

177 Այդ «ֆրանկի թուերի» մասին պէտք է խօսենք. դրանք յաճախ հանդիպում են տարբեր ձեռագրերում, ոյնն կերպ կխօսենք նաեւ Նոր Կտակարանի «գլխացանկերի» եւ «նախադրութիւնների» մասին:

178 Գիրք մնացորդաց, հրատ. Գ. Խալաթեանցի, էջ IV-V:

179 Չափերը մեզ կասկածելի են թւում: * Ըստ նորագոյն նկարագրութեան՝ ձեռագրի չափերն են. 36x26x13 սմ. տե՛ս Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հտ. Ջ.

(in folio), 38ական տողով, բոլորագիր է: Ունի զարդանկարներ, մանրանկարներ, գլխազարդեր եւ գեղեցիկ գլխագիր տառեր՝ մասամբ ոսկեզօծ: Նրանում չատ են յիշատակարանները, որանցից մենք իմանում ենք գրիչների անունները՝ Մխիթար, Յակոբ եւ Միհաս, գրչութեան վայրի անունը՝ Երզնկա, առաջին տիրոջ անունը՝ եկեղեցի թեմի առաջնորդ Սարգիս արքեպիսկոպոս, եւ հետագայ տէրերի՝ Մարգար վարդապետի եւ խոջա Զիրաքի անունները:

Այս ձեռագիրն ուշագրաւ է նրանով, որ նրա մէջ կայ Մնացորդաց գրքերի թարգմանութեան հին տարբերակը, որը մասնագէտների կարծիքով հնագոյն թարգմանութիւնն է, որը վերանայման չի ենթարկուել ըստ եօթանասուն մեկնիչների յունարէն հիմնօրինակի: Այս ձեռագրի Մնացորդաց գրքերի այսպիսի տարբերութիւնը վաղուց է նկատել Սարգիս վարդապետ Մալեանը, որը 1775 թուականին Աստուածաշնչի տպագիր օրինակների հետ համեմատել է 15 ձեռագիր եւ նշել կարեւոր տարբերցումները: Մնացորդաց գրքերի վերաբերեալ նա գրել է. «Առաջին եւ երկրորդ Մնացորդաց գիրքն յամենից տարաճայն գտանեցան, զտեղիս տեղիս թէպէտ նայեցայ, սակայն կարի հեռի է ի տպագրեցելոյն»[180]*:*

Իր հրատարակութեան հիմքում պրոֆ. Խալաթեանցը դրել է J² ձեռագրի բնագիրը՝ որպէս առաւել հին եւ լաւ պահպանուած[181]*: Դժբախտաբար պրոֆ. Խալաթեանցը ամբողջ ձեռագրի բովանդակութիւնը չի տալիս:*

Կազմեց Նորայր եպս. Պողարեան, Երուսաղէմ, Տպարան Սրբոց Յակոբեանց, 1972, էջ 401:

[180] **Տաշեան,** Յուցակ, էջ 632: Հմմտ. **Հ. Յ. Տաշեան,** Հայերէն ձեռագիրք Վիեննայի կայսերական գրատան.- Հանդէս Ամսօրեայ, 1891, էջ 16 (ամբողջը՝ էջ 11-17, 44-51, 72-78, 110-116, 149-152. այսուհետեւ՝ **Հ. Յ. Տաշեան,** Հայերէն ձեռ. Վիեննայի կայս. գր. ի՝ ՀԱ, 1891). հմմտ. առանձի գրքով՝ Յուցակ հայերէն ձեռագրաց կայսերական մատենադարանին ի Վիեննա, կազմեց **Հ. Յակովբոս Տաշեան,** Վիեննա, Մխիթ. տպարան, 1891, էջ 10-11 (ամբողջը՝ 9 չհ., 49 էջ. այսուհետեւ՝ **Տաշեան**, Յուցակ Վիեննայի կայս. մատ-ի) եւ Գիրք մնացորդաց, հրատ. Գ. Խալաթեանցի, էջ II:

[181] Անհրաժեշտ ենք համարում հերքել պրոֆ. Խալաթեանցի մի ենթադրութիւնը՝ բերուած J²-ի նկարագրութիւնում, ըստ որի «JL-ի հիմնական տարբերութիւնը J²-ից կայանում է նրանում, որ JL-ն ենթարկուել է Եօթանասուն թարգմանիչների *արտաքին* ազդեցութեանը, ունի նախադրութիւն կամ Praepositiones, Մնացորդաց Ա-Բ. գրքերի գլխացանկերը եւ տնահամարները (հները եւ փոանկիները), որոնք բոլորովին չկան J²-ում»: Մենք հնարաւոր ենք համարում հայկական Ընկալեալի ազդեցութիւնը JL բնագրի վրայ, բայց ճիշտ չէ յարգելի պրոֆեսորի պնդումը՝ իբր Նախադրութիւնը, գլխացանկը եւ տնահամարները (յատկապէս՝ «փոանկի») կազմում են *գլխաւոր տարբերութիւնը* այն բանի, որ JL-ն ենթարկուել է եօթանասուն մեկնիչների բնագրի ազդեցութեանը: Յունարէն հիմնօրինակում չկան ո՛չ գլխացանկեր, ո՛չ նախադրութիւններ եւ ո՛չ էլ տնահամարներ. դրանք կազմել են հայերը կամ փոխառել են լատինական վուլգատայից. եւ մենք իր տեղում ցոյց կտանք դրանց իսկական հեղինակին, այլեւ՝ թէ ե՛րբ են դրանք կազմուել: Կարող է պատահել պրոֆ. Խալաթեանցը նկատի ունի հայերէն թարգմանութիւնը՝ ընդհանրապէ՞ս: Այդ դէպքում աւելորդ է եօթանասուն մեկնիչներ անուանց օգտագործումը:

5. *O^2. Հ^{մր} 5. Ձժթ. - 1270. Էջմիածնի վանքի ձեռագիր Հ^{մր} 155, Դանիէլի ցուցակի Հ^{մր} 149, էջ 10 [Մ 345]: Այս ձեռագիրը*[182] *եւս գրուած է Յովհաննէս եպիսկոպոսի՝ արքայի եղբօր ցանկութեամբ, 819 թուին մոմած հաստ թղթի վրայ, երկսիւն (31x23), երկածալ (in 2^0). գիրը գեղեցիկ բոլորգիր է՝ մի քանի նրբագեղ մանրանկարներով: Բաւական չատ են յիշատակարանները, որոնցից որոշներն այն ժամանակի պատմութեան համար կարեւոր նշանակութիւն ունեն: Որպէս գրիչներ յիշատակւում են Բարսեղը, Յովհաննէս եպիսկոպոսը եւ գլխացանկերի ու նախադրութիւնների գիրչ Թորոս քահանայ Ռուբինանցը. առաջին սեփականատէրը եղել է Յովհաննէս եպիսկոպոսը, եւ այնուհետեւ՝ իշխանաց իշխան պարոն Կոստանդինը, գրչութեան վայրը՝ Սիս քաղաքը, «արքայական մարզարանում»*[183]*:*

Բայց մի բանի վրայ հարկ ենք համարում ուշադրութիւն դարձնել. ձեռագիրն ի սկզբանէ գրուած է եղել առանց որեւէ Գլխացանկի, եւ բնագրերը ձեռագրում յաջորդել են մէկը միւսին՝ նշանակուած գրքի գլխատառ անունով, այսպէս՝ «Ծննունդք», «Ելք» եւ այլն. եթէ այս անուանումները ոչ միշտ են գրուած վերին եւ ստորին լուսանցներում, ապա ամէն գրքի վերջում պարտադիր կայ հետեւեալ կերպ. «կատարումն», կամ «վերջ Ծննդոց», «Ելից» եւ այլն:

Որոգինէսի նշանները եւ գրքերի տարբեր բաժանումները ոչ բոլորովին են համապատասխանում նախորդ՝ O^1 համարի նշանների հետ, այսպէս, օրինակ՝ Եսայիի մարգարէութեան մէջ կան միայն հին բաժանման համարները եւ տեսիլի համարները, չեն հասցրել մտցնել «փռանկի» խոշագրերի համարները: Գլխացանկերի հին համարները գտնում ենք միայն հետեւեալ գրքերում. Յեսու Նաւէի՝ թուով 45 (Ընկալեալում սրանք՝ 30 են, իսկ «փռանկական»ում՝ 24), Ա. Թագաւորութեանց՝ 80 (որքան Ընկալեալում է), Բ. Թագաւորութեանց՝ 70 (Ընկալեալում՝ 76), Գ. Թագա-

---

[182] Տե՛ս **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 123-125 եւ **Ղ. Ալիշան**, Սիսուան, էջ 153, 154: Բայց այս ձեռագրի առաւել մանրամասն նկարագրութիւնը կայ ի՝ **Brosset**, Rapport sur une voyage archéologique dans la Géorgie et dans l'Arménie, էջ 26-32, մասամբ հայերէնով բերելով բոլոր գլխաւոր յիշատակարանները:

[183] «ի Սիս, ի մարզարանին արքունի»: Մարզարան բառը մենք թարգմանել ենք «ристалище»՝ ինչ նշանակում է բառն ինքնին: Սակայն ի՞նչ է հասկացւում դրա տակ՝ արխի՞ւ, գրադարա՞ն, կամ՝ կարող է պատահել, արհեստանո՞ց, որտեղ Յովհաննէս եպիսկոպոսը մեծ քանակով պատրաստում էր Աստուածաշնչի, Աւետարանի իր եւ այլ գրքերի ձեռագրերը՝ դժուար է ասել: Դրա մասին մենք ոչինչ չենք գտել **Ղ. Ալիշան**ի յայտնի Սիսուան գրքում: * «*Արքայական մարզարանում*»ի փոխարէն «արհեստ}ա[ւ]որական մարզարանէն» ընթերցում տե՛ս՝ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Բ., կազմեցին՝ Օ. Եգանեան, Ա. Զէյթունեան, Փ. Անթաբեան, Ա. Քէօշկերեան. Խմբագրութեամբ՝ Ա. Մնացականեանի, Օ. Եգանեանի, Ա. Զէյթունեանի. Յանկերը Վ. Դեւրիկանի, Երեւան, «Նայիրի» հրատ., 2004, էջ 134:

ւորուքեանց՝ 77 (Ընկալեալում՝ 61) եւ Եսայիի մարգարէութիւնում՝ 50: Իւրաքանչիւր սաղմոս ունի առանձին թիւ, բոլորը՝ 150, սակայն 118 եւ 144 սաղմոսների տները նշուած են եբրայական տառերով՝ ալիֆ, բետ եւ այլն. կան ձեռագրեր, որոնք այդ տառերի հայերէն տառադարձման հետ միասին գրում են նաեւ եբրայական տառերով: Տները համարակալուած են նաեւ Գործքում եւ Առաքելոց Թղթերում:

Երբ մեր ձեռագիրն ընկել է Հեթում Նղրեցի Ջամբռլայի (սենեկապետ) որդի՝ իշխանաց իշխան Կոստանդինի ձեռքը, ապա նա սեփական ձեռքով երկու տեղում (թերթ 570բ եւ 814բ) գրել է ոտանաւորներ, որոնցում ողբում է մահն իր եղբայր պարոն Ճուճքէի, որը 33 տարեկան հասակում մահացել է 1358 թուականին: Երկու տեղում էլ գրուած է նոյն չափածոն: Կոստանդինը 1365 թուականին դարձաւ Կիլիկիայի արքայ[184], սակայն այստեղ նա ինքն իրեն իշխան է կոչում, իսկ նրա Աստուածաշնչում յիշատակարաններ եւ գլխացանկեր գրող Թորոս քահանայ Ռուբինանցը նրան կոչում է իշխանաց իշխան: Երբ Կոստանդինն ստացաւ Աստուածաշունչը, նա նոյն Թորոս քահանայ Ռուբինանցին յանձնարարեց ձեռագրում աւելացնել գլխացանկեր, տարբեր յիշատակարաններ եւ գրքերի անունների մի ցուցակ: Կոստանդինի եղբայր Ճոճքէն մահացել է 1358 թուականին, Կոստանդինը արքայ դարձաւ 1365 թուականին, հետեւաբար Թորոսի բոլոր լրացումները պէտք է վերաբերուեն այդ ժամանակին: Այս տարեթուերը կարեւոր են գլխացանկերի առաջացման ժամանակագրութիւնը որոշելու համար:

Գլխացանկերը ներմուծելու համար Թորոսը Յովհաննէս եպիսկոպոսի՝ կազմի մէջ առնուած ձեռագրին աւելացրել է մաքուր թերթեր, այս եղանակով նա անջատել է այս կամ այն գրքի սկիզբը եւ վերջը: Աստուածաշնչի տարբեր ցուցակների համեմատութեան համար կբերենք էջմիածնի մատենադարանի ամբողջական օրինակների մէջ ամենահին այս ձեռագրի ունեցած՝ Սուրբ Գրքերի անունների ցանկը:

Հին կտակարան. 1) Ծնունդք, 2) Ելք, 3) Ղեւտական, 4) Թիւք, 5) Բ. աւրէնք[185], 6) Գիրք Յեսուայ Նաւէի, 7) Գիրք Դատաւորաց, 8) Հռութ, 9-12) Գիրք Ա-Դ. Թագաւորութեանց[186], 13-14) Գիրք Ա-Բ. Մնացորդաց,

---

[184] **Ղ. Ալիշան**, Սիսուան (էջ 412, 413) վերատպել է մեր ձեռագրի չափածոները: Անկասկած է՝ Ալիշանն այդ տաղերը փոխառել է Բրոսէի աշխատութիւնից, թէկուզ այս դէպքում նրան չի յղել:

[185] Գրուած է «Երկրորդումն աւրինաց», բայց յաճախ հանդիպում է «Երկրորդ աւրէնք» ձեւով:

[186] Այս գրքերից առաջ դրուած է Հերոնիմոսի յայտնի առաջաբանը՝ Prologus galeatus-ը, տարօրինակ վերնագրով՝ «Ցառաջաբան նախակարգեալ Թագաւորութեանցս», դրա համար էլ այն յայտնուել է այստեղ:

15) Գիրք Ա. Եզրի[187], 16) Գիրք Բ. Եզրի, 17) Գիրք Նէեմի[188], 18) Գիրք Եսթերի, 19) Գիրք Յուդիթի, 20) Գիրք Տովբիթի, 21-23) Գիրք Մակաբայեցոց Ա-Գ., 24) Սաղմոսարան[189], 25) Գիրք Սողոմոնի Առակաց, 26) Բանք Ժողովողի, 27) Գիրք Երգ Երգոց, 28) Գիրք Իմաստութեան Սողոմոնի, 29) Գիրք Իմաստութեան Յեսուայ՝ որդւոյ Սիրաքայ, 30) Գիրք Յոբայ, 31)

---

187 Սրան նախադրում է այսպիսի բացատրութիւն՝ [316բ]. «Առաջին ասելով զգիրսս[IV] երկրորդ նշանակէ զգիրս զկնի սորին գոլ Եզրի, որ եւ կայ առ մեզ, թէպէտ եւ ոչ յայս կարգս. գիրս մի այլ Եզրի, յորում տեսիլք եւ խաւսակցութիւն նմա եւ հրեշտակի առակաւք եւ աւրինակաւք: Եւ ի կատարումն[2] թէ շնորհս առ Եզր եւ զամենայն գիրս, որք եղծան ի գերութեանն, նորոգապէս վերստին խաւսեցաւ եւ գրել ետ դպրաց՝ յարտաքին դաշտ: Բայց ոչ կարացաք ստուգել՝ թէ յառաջին հարցն ընկալեալ եղեւ այն ընդ[3] աստուածաշունչ գիրսս, բայց միայն զի Եւսեբի յիշէ զԻրինէոսի խաւսս ասացեալ՝ թէ զի՞նչ զարմանալի է այդ, որ յեւթանասնից թարգմանեցան գրեանքդ հաւասարք: Ուր զի եւ ի ձեռն Եզրի Աստուած զգիրս սուրբս, որք կորեան ի գերութեանն, վերստին նորոգեաց ի Բաբելովն. եւ այս գրոց սրբոց նորոգմունք յայն Եզր յիշի եւ ոչ յայս: Սակայն այլ բանքն յաճուրք են եւ արհաւիրք, եւ տկար մտաց ի կարծիս: Այլ եւ[4] ես չգտի հաւատարիմ վկայութիւն վասն նորին ի գրոց հարցն մերոց եւ ոչ յԵւսեբայ[5], բայց միայն զայդ բանդ: Եւ զի յաւրինակդ[6] ուստի զառաջինն գրեցի, ոչ էր եդեալ եւ այն երկրորդ ըստ կարգի, վասն այսորիկ չհամարձակեցայ ես զնոյն անձամբ անձին դնել ի շարս Աստուածաշունչ գրոցս հիւսմանն. զմտաւ ածեալ՝ զի թէ զՅայտնութիւնն Յովհաննու ի կարծիք ձգեցին վասն այսպիսի զարհուրական բանից՝ յետ նորոյ շնորհացս, ո՞րչափ զայն որ եւս առաւել է, նաեւ անհաւատ է, թէ ամէնեւին եղծան գիրք աւրինացն եւ մարգարէիցն ի Բաբելովն: Զի գոյին եւ ի Բաբելովն[7] որք հաճոյք[8] գտան Աստուծոյ՝ նոքաւք դաստիարակեալք, եւ որպէս յայտ է ի Դանիէլէ կարգի ունէին եւ դատաւորք ի Բաբելովն, որք աւրինաւքն խրատէին: Այլ ճշմարիտն Աստուծոյ է գիտելի»: / 1. SK[2] զգիրս. 2. SK[2]կատարումն. 3. SK[2]ընդ այլ, 4. SK[2]«եւ» չիք. 5. SK[2]յԵւսեբեայ. 6. SK[2]յաւրինակս. 7. SK[2]ի բաբելովնի.. 8. SK[2]հաճոյ: / Բարսեղի այս յիշատակարանը կայ նաեւ SK[2] Հ[ին] 14 ձեռագրում՝ մի քանի աննշան տարընթերցումներով, եւ չնայած մեր ձեռագրի յիշատակարանը մենք հիմնօրինակ ենք համարում, այդուհանդերձ բերեցինք SK[2] օրինակի տարընթերցումները:

188 Վերջում կայ այսպիսի յիշատակարան՝ [331բ]. «Եզր երկրորդ եւ Նէեմի: Զառաջին Եզրասն գրեցի եւ զերկրորդս յաւժարեցայ ի կարգ այլ աստուածաշունչ բանիցդ հաւասարել, որ անկարծիքս է. զի մի՛ իւիք թերի մնասցէ ի բանից, որք ունին վկայութիւն ի վերայ իւրեանց յառաջնոց մեր սուրբ հարցն: Եւ զի նոքա գրեցին Եզրաս առաջին եւ երկրորդ ընդ առաջնոյն: Եւ երկրորդս հիւսեցաւ հրամանաւ տեառն Յոհաննիսի րաբունոյ եւ ձեռամբ մեղապարտի Բարսղի, ի մխիթարութիւն ընթերցողացդ եւ ի պատիւ եւ ի փառս Աստուծոյ»: Այս յիշատակարանը տպագրուած է Brosset-ի Voyage archéologique-ում, էջ 29: **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 220-221: Բարսեղը չբաւարարուելով առաջին գրառմամբ, աւելացրել է նաեւ այս երկրորդը, որը կրկնութիւն է եւ առաջինի հաստատումը: Երկուսում էլ նա յենւում է այն բանի վրայ, որ եկեղեցու հայրերը Եզրի մի գիրքն անուանել են առաջին, հետեւաբար դրանով իրենց կարծիքն են յայտնել ոչ միայն *երկրորդ* գրքի գոյութիւն ունենալու վերաբերեալ, այլեւ կարծես թէ թոյլատրել են այն Սուրբ Գրքի կանոնի մէջ ներառնելու հնարաւորութիւնը, եւ Բարսեղը, Յովհաննէս եպիսկոպոսի հրամանով, որոշեց սովորական կանոնից նահանջել եւ իր ձեռագրի մէջ ներառաւ Եզրի այս երկրորդ գիրքը:

189 Որպէս սաղմոսների առաջաբան համարեա բոլոր ձեռագրերում կցւում է մեկնութիւնից մի հատուած՝ «Երանելոյն Եպիփանու Կիպրացւոյ, Յաղագս երգոց սաղմոսարանի» որը տպագրուած է 1805 եւ 1860 թուականների հրատարակութիւններում:

Գիրք Եսայիայ մարգարէի, 32) Գիրք տեսլեանց ԺՒ. սուրբ մարգարէից, 33) Գիրք Դանիէլ դատաւոր մարգարէի[190]*, 34) Գիրք Երեմիայ մարգարէի, 35) Գիրք Բարուք մարգարէի, 36) Գիրք Ողբ Երեմիայի, 37) Աղօթք Երեմիայի, 38) Տեսիլ Եզեկիէլ մարգարէի:*

Նոր Կտակարան. սկզբում ունի Եւսեբիոսի թուղթը Կապրիանոսին եւ համաձայնութեան կանոնները՝ տասը աղիւսակով:

1) Աւետարան ըստ Մատթէոսի, նրա առաջաբանը: Իւրաքանչիւր թերթի ստորին լուսանցներում նշուած են համաձայնութեան կանոնների համարները [Յրուագանկ]: 2) Աւետարան ըստ Մարկոսի, նախադրութեամբ եւ համաձայնութեան կանոնով. վերջում, որպէս առանձին մաս գրուած է ԺՋ. 9-20 հատուածը: 3) Աւետարան ըստ Ղուկասու՝ նախադրութեամբ եւ համաձայնութեան կանոնով: 4) Աւետարան ըստ Յովհաննու, նախադրութեամբ եւ համաձայնութեան կանոնով. վերջում առանձին գրուած է. «Իրք կնոջն չնացելոյ»[191]*: 5) Գործք սուրբ առաքելոց, Հին կտակարանի 16 ընթերցուածների մի ցանկով: 6) Սուրբ առաքեալների եօթ թղթերը՝ ընդհանուր նախադրութեամբ: 7) Աղերս Եւթաղեայ: 8) Պօղոսի տասնհինգ թղթերը՝ նախադրութեամբ. Առ Կորնթացիս Գ. գրուած է երկրորդից յետոյ: 9) Յայտնութիւն սուրբ Յովհաննու առաքեալի եւ աստուածաբան աւետարանիչի:*

Ինչպէս հետագայում կտեսնենք, Աստուածաշնչի հայերէն տարբերակի ձեռագրերի մեծամասնութիւնը, եթէ պահպանուել են ամբողջութեամբ, գրքերը բովանդակում են այս կարգով, եւ մենք կնշենք ընդամէնը այն դէպքերը, երբ այս կամ այն ձեռագիրը չեղումներ կունենայ այս օրինակից:

Բազմաթիւ յիշատակարաններ ըստ ծագման ժամանակի բաժանւում են՝

1. Յովհաննէս եպիսկոպոսի եւ նրա օգնական Բարսեղ գրչի յիշատակարանները՝ Ա) (144ա էջում) ասւում է, որ «այդ տարում վախճանուել է Հեթում թագաւորը»[192]*, եւ նրա գահը ժառանգել է նրա որդի Լեւոնը: Բ., Գ., Դ., Ե., Զ. (էջք 179ա, 338բ, 402բ, 487 ա, 570բ)*[193] *ընդհանուր բովանդակութեան չափածոներ: Է. (թերթ 354բ) ասւում է՝ «Զստացող տառիս՝*

---

190 «Դանիէլ դատաստանաց»:

191 «Զայս շնորհ Տեառն սքանչելեաց Եւսեբի ժամանակագրէ, թէ ի յերբայեցի աւետարանէ անտի ընկալաւ եկեղեցի: Վասն այնորիկ եւ առընթեր պատշաճ համարեցաք կարգել ընթացից Յոհաննու Աւետարանիս, զոր յիշատակէ յերրորդ դպրութեան ԼԹ. գլխին բանիւ Պապիասայ»:

192 Հեթում Ա. արքան վախճանուել է 1270 թուականին:

193 Յիշատակարաններից երկուսը տպագրել է՝ **Brosset**, Catalogue de la Bibliothèque d'Ehmiadzin, էջ 25. եւ առ **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 123 եւ 124:

զտէր Յոհաննէս րաբունի յիշեսջիք ի Տէր եւ զծնողսն իւր: Ընդ նմին եւ զՅոհաննէս սրբասնեալ քահանայ, որ զաւրինակս ետ»: Ը. յիշատակարանը Սաղմոսների մասին (թերթ 475ա) Ներսէս Շնորհալու տաղն է՝ «Աստուածեղէն հոգւովն ի սմա»՝ սկզբնատողով: Թ. գրառման մէջ (թերթ 547ա) յիշատատակւում է ստացող եւ սրբագրող Յովհաննէս եպիսկոպոսը: Ժ. յիշատակարանի մէջ (թերթ 570բ) չափածոյ համառօտ նկարագրւում է խաչակիրների երրորդ արշաւանքը: Երբ «թուրքիման ազգի... Յովսէփ իսմայելեան արքան» գրաւեց սուրբ քաղաքը, մեծ Հռոմում լուր տարածուեց տարաբախտ պարտութեան մասին, եւ հաւաքուեցին խաչակիրները՝ ալամանները, ֆրանկների թագաւոր Ֆիլիպը, ինգլիզները, եւ չորս տարի անընդհատ պատերազմ վարեցին:

2) Թորոս քահանայ Ռուբինեանցի եւ իշխանաց իշխան Կոստանդինի յիշատակարանները. ա) 71ա, 132բ, 440բ էջերի յիշատակարաններում Թորոսն ասում է, որ ձեռագիրը պատկանում է իշխանաց իշխան Կոստանդինին, եւ որ նա ինքն է գրել գլխացանկերը[194]. բ) 570բ, 814բ էջերում իշխանը սեփական ձեռքով չափածոյով գրում է իր եղբօր՝ իշխան Ճոֆրէի մահուան մասին, որը մահացել է 1358 թուականին[195]:

3) Վերջին գրիչների յիշատակարանները. ա) յիշատակարան [Բաբերդի] ինչ որ Յոհաննէս եպիսկոպոսի (814բ), որտեղ նա ասում է, որ ինքն այդ ձեռագիրը նուիրել է Տարօնի Սուրբ Կարապետ վանքին (Մշոյ գաւառ). բ) յիշատակարանում (815ա) հաղորդւում է, որ 1376 թուականին բարեպաշտ Ասլան ամուսինը եւ նրա կին Իւղիտան գնեցին այս Աստուածաշունչը եւ նուիրեցին Տարօնի Սուրբ Կարապետ վանքին. գ) յիշատակարանում (816ա) ասւում է, որ Մանուէլ վարդապետն էջմիածնի միաբանութեան կողմից [նուիրակութեան նպատակով 1664 թ.] ուղեւորուելով Վան քաղաք, իմացաւ, որ Սուրբ Կարապետ վանքի առաջնորդը թուրքական հարկահաւանների ստիպմունքով այս Աստուածաշունչն ուղարկել է Վան՝ վաճառելու, եւ որ Մանուէլը գնել է այն՝ էջմիածնի վանքի մատենադարանի համար:

Այս յիշատակարանների շնորհիւ մենք կարող ենք հետեւել այս ձեռագրի ճակատագրին եւ իմանալ՝ ի՛նչ եղանակով է այն յայտնուել էջմիածնի մատենադարանում:

Քանի դեռ մեր տրամադրութեան տակ չկայ Աստուածաշնչի մէկ այլ յայտնի ամբողջական ձեռագիր, մենք այս ձեռագիրը համարում ենք կի-

[194] Թորոսի յիշատակարաններից երկուսը տպագրել է՝ **Brosset**, Catalogue de la Bibliothèque d'Ehmiadzin, էջ 27 եւ Զարբհանալեանի ՄՀԹՆ, էջ 123-124:

[195] Բնագիրը տպագրել են՝ **Brosset**, Catalogue de la Bibliothèque d'Ehmiadzin, էջ 28, **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 124-125 եւ **Ղ. Ալիշան**, Սիսուան, էջ 413: Զարբհանալեանը եւ Ալիշանն օգտուել են Բրոսէի աշխատութիւնից:

լիկեան դարաշրջանի ամենահին եւ ամբողջական ընդօրինակութիւնը: J[1]-ի մասին մենք ասացինք, որ նրա բովանդակութիւնը, ինչպէս նաեւ գրչութեան վայրն անյայտ են:

6. *An. Հմր 6. ԶԼԴ. - 1285. ձեռագիր Կաուց վանքի՝ Վանայ լճի վրայ [Մ 5560]: Նրա մասին Զարբհանալեանն ունի չատ մակերեսային տեղեկութիւն*[196]*: Գրուած է 1285 թուականին, բոլորգրով, Ռուբինեանց ընտանիքից Հեթումի որդի Լեւոնի թագաւորութեան չրջանում, Անաւարզա դղեակում*[197]*:*

7. *SK[1] Հմր 7. ԶԼԴ. - 1285. Բուլթանիայի Պրուսա քաղաքում*[198] *[անյայտ]: Սրա մասին մենք գիտենք Զարբհանալեանի՝ առանց որեւէ մանրամասնութեան բերած յիշատակումով: Ձեռագիրը գրուած է Սկեւռայի վանքում, Հեթումի որդի Լեւոնի թագաւորութեան եւ Յակոբի կաթողիկոսութեան ժամանակաշրջանում, երբ վանքի առաջնորդն է եղել Մինասը: Գէորգ վարդապետ Սկեւռացու «թելադրութեամբ» ձեռագիրը պատուիրել է բարեպաշտ պատանի Խաչատուրը, որը որպէս դպիր սովորել է Գէորգի մօտ: Նա ինքն էլ ընդօրինակել է Ծննդոց, Դատաւորաց եւ Թագաւորութեանց գրքերը, բայց ի վիճակի չի եղել դրանք աւարտելու, դրա համար էլ նրան մասամբ օգնել է նրա քեռի Աստուածատուր քահանան՝ գրելով Նոր Կտակարանը, իսկ ողջ ձեռագիրն աւարտել է Ստեփանոս վարդապետ Գոյներ Երիցանցը, որը 1288 թուականին գրել է «գիրս սրբոց մարգարէից եւ զսրբազրաց ոմանց»: Այդ Ստեփանոսը նոյնպէս, ինչպէս եւ Թագաւորի եղբայրը Յոհաննէս եպիսկոպոսը, հռչակուած էր նրանով, որ նա օրինակել է չատ Աստուածաչունչեր եւ այլ գրքեր: Դրանցից մի քանիսը պահպանուել եւ հասել են մեզ*[199]*:*

8. *MA. Հմր 8. 1272-1288 [1283]*[200]**. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 944, Դանիէլի յուցակի Հմր 924 [Մ 1500]:*

---

196 **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 156:

197 «ի յաստուածապահ զդղեակս Անաւրզաբա»:

198 **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 156-17: * Այս ձեռագրի մասին տե՛ս **Հ. Պ. Ալիշան**, Հայապատում. Պատմիչք եւ պատմութիւնք Հայոց, հտ. Բ. Պատմութիւնք Հայոց, Վենետիկ, 1901, էջ 496-7՝ Հմր 339. **Տ. եպս. Պալեան**, Պրուսայի Ս. Աստուածածին եկեղեցւոյ ձեռագիր Աստուածաշունչը՝ 1285-1287.- «Լոյս», Պոլիս, 1906, էջ 1166-72, 1191-6, 1216-21. Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ. ԺԳ. դար, Կազմեց Ա. Ս. Մաթեւոսեան, Երեւան, 1984, էջ 617-9՝ Հմր 500:

199 Նրա մասին՝ **Զարբհ.**, Պատմ. հայ դպր., 1897, էջ 78 եւ **Ղ. Ալիշան**, Սիսուան, էջ 93-97:

200* Ձեռագիրը գրուել է 1283 թուականին. տե՛ս Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ. ԺԳ. դար, կազմեց Ա. Ս. Մաթեւոսեան, Երեւան, 1984, էջ 531. ըստ Գարեգին կթղ. Յովսէփեանի յօդուածի՝ «Ակօս», Բէյրութ, 1946, էջ 124-126:

Սա Աստուածաշնչի հասարակ ձեռագիր չէ, այլ, եթէ կարելի է այդպէս կոչել, մի ամբողջ գրադարան այն գրական ստեղծագործութիւնների, որոնք միջնադարում կազմել են հայոց գրական-աստուածաբանական իմացութիւնների հիմքը: Յուցակում այն անուանում են Ճառընտիր[201]*, ինչը ըստ էութեան եւ բովանդակութեան ճիշտ չէ. Ճառընտիրներում սովորաբար լինում են գլխաւորապէս հատուածներ տարբեր գրքերից եւ ճառեր, իսկ այստեղ չկայ որեւէ հատուած, այլ տարբեր հեղինակների ամբողջական աշխատութիւններ են եւ Սուրբ Գրոց բոլոր գրքերը: Այս ձեռագրի մասին մենք կրկին խօսելու հարկ կունենանք, երբ խօսք կլինի հայերէն Աստուածաշնչի կանոնի մասին: Այն գրուած է հաստ դեղնաւուն թղթի վրայ. 1089 թերթ է, մեծադիր (in folio. 35,5x25), երկսիւն: Գրքի հասարակ կազմը վերաբերում է 1604 թուականին, իսկ նախկինում կազմից զրկուած լինելով՝ վնասուել է*[202]*: Սկիզբը պահպանուած է, հնարաւոր է կորսուել է միայն սկզբնաթերթը, իսկ վերջը խիստ տուժել է, եւ քանի որ Մխիթարն իր ժամանակագրութեան մէջ*[203] *հաղորդում է այս ձեռագրի ամբողջ գլխացանկը, ապա ըստ դրա մենք կարող ենք եզրակացնել, որ ձեռագրի համարեա մէկ քառորդը կորսուած է: Թերութիւններ կան եւ միջնամասի մի քանի տեղում: Յիշատակագրութիւնները բաւական շատ են, եւ դրանք բաժանւում են երկու տեսակի՝ բուն օրինակողների յիշատակարաններ եւ կազմողների ու այլ գրիչների յիշատակարաններ: Առաջիններից մենք գիտենք գրիչների անունները եւ տիրոջը՝ Մխիթար եպիսկոպոսին: Մխիթարն ինքն է գրել հսկայական ձեռագրի ամենամեծ մասը, եւ երկու ուրիշ գրիչներ՝ Սարգիսը եւ Ստեփաննոս սարկաւագը օգնել են նրան: Երկրորդ կարգի գրառումներից՝ ոմն Սիմէոնի եւ Յովհաննէսի, մենք ձեռագրի ճակատագրի մասին ինչ որ բաներ ենք իմանում: Վարագայ վանքցի այդ Յովհաննէսը 1604 թուականին, երբ պարսիկ շահ Աբաս արքան յարձակուեց Երեւան քաղաքի վրայ, մեր ձեռագիրը կազմել տուեց Այրիվանքում, որից յետոյ ձեռագրի թերթերը կորսուել չէին կարող. այն պակասաւոր էր դարձել այդ թուականից առաջ: Իսկ Սիմէոնը ժամանակագրական կարգով համառօտ հաղորդում է իր ժամանակի մի*

---

201 Դանիէլի ցուցակ, էջ 130. «ճաղընտիր Մեծադիր»:

202 Տե՛ս Դանիէլի ցուցակ, էջ 130-133. առաւել մանրամասն բացատրութիւններով Վիեննայի մխիթարեան Գր. վ. Գալէմքեարեանի յօդուածը՝ [Մխիթար Այրիվանեցի եւ իւր նորագիւտ գրութիւնը].- *Հանդէս Ամսօրեայ*, 1891, էջ 161-167. ձեռագրի մասերի պատճէնն այժմ գտնւում է Վիեննայի մխիթարեանների մատենադարանում եւ նկարագրուած է՝ Տաշեան, Ցուցակ, էջ 548-558:

203 Хронографическая исторія, составленная отцом Мехитаром, вердепетом Айриванским, Пер. с арм. с предисл. и примеч. К. Патканова, Санкт Петербург, тип. Акад. наук, 1869, стр. 360-363 ([4], 312-418 с.):

քանի պատմական տեղեկութիւններ. օրինակ նա գրում է. 1690 թուականին ես եղել եմ վանքում. 1691 թուականին վախճանուեց Եղիազար կաթողիկոսը, եւ նրա տեղն զբաղեցրեց իր աշակերտ Նահապետը. 1601 թ. էջմիածնի կաթողիկոսը հաշտուել է Գեղարդի[204] *վանքի առաջնորդ Դաւիթ եպիսկոպոսի հետ. 1692 թ. «եկն մորեխն Երեւանա երկիրն», բայց «փառք Աստուծոյ, վնաս ոչ եղեւ». 1697 թ. «Ես՝ տէր Սիմոնս կարդացի այս Փիլոն գիրքս» [499ա]*[205]*: Հետեւաբար ձեռագիրը մինչեւ ԺԷ. հարիւրամեակի վերջ մնացել է իր տեղում, որտեղից հետագայում բերուել է էջմիածնի մատենադարան:*

Մխիթար Այրիվանեցին իր ժամանակագրութեան Բ. գրքում, 34րդ գլխում տալիս է Սուրբ Գրքերի անունների մի ցուցակ, որը կազմել է Սարկաւագ վարդապետը՝ հետեւեալ վերնագրով. «Կարգադրութիւնք գրոց սրբոց, որք ստուգաբանեցան ի Սարկաւագ վարդապետէն եւ գրեցան յինէն ի տէր Մխիթար վարդապետէս պատմագրէ ի մին տուփ՝ յաւուրս ՃՀ. (170).»[206]*, Մխիթարն ըստ այդ ցանկի է գրել իր ձեռագիրը, որը հասել է մեզ: Նրա ամբողջական բովանդակութիւնը լիովին համընկնում է Սարկաւագի օրինակի հետ, չատ նշանակալի տարբերութեամբ: Բերում ենք ձեռագրի բովանդակութիւնը՝ նշելով տարբերութիւնները Սարկաւագի օրինակից:*

Ա. *Նոր Կտակարան. Եւսեբիոսի նամակը Կարպիանոսին: 1) Աւետարան Ըստ Յովհաննու. Ստորին լուսանցներում դարձուածքներով կամ առանձին բառերով գրուած է այլաբանական բացատրութիւն Աւետարանիչի մասին. «Տեառն հնազանդութիւն, գետ Եփրատես, որ է պղտաբերութիւն, Բղխեալ ի Կարնոյ, եւս ի Տարաւնոյ, որ է նշանակ գիտութեան, այլեւ արդարութեան»:*

Այսպիսի բացատրական նշումները կան նաեւ սիւնակամէջերին եւ արտաքին լուսանցներում՝ «Դեսպանք Աբգարու, Կոնքն ծիրանի փայտէ էր քերած, Սուրբ Հոգոյն գալստեան»: Բացի այսպիսի հատուածական նշումներից, իւրաքանչիւր Աւետարանի վերջում կայ եւս նրա ὑποθεσις*-ը: Յոհաննէսի մասին այն ասում է. 7բ «Գրեաց զԱւետարանս ձեռամբ Պրոխորոնի յունարէն բարբառով, սկսեալ ի Պատմոս եւ աւարտեալ յԵփեսոս: «Ունի գլուխս* κεφάλαια *ՄԼԲ. (232), վկայութիւնս ԺԵ. (15), Աւետարանս*

---

[204] Այրիվանքը կոչւում է նաեւ Գեղարդավանք, այն տեղը, որտեղ առաջ գտնւում էր սուրբ գեղարդը, որն այժմ պահւում է Էջմիածնի վանքի խորանում:

[205] *«այս Փիլոն գիրքս»*. հետաքրքիր է, որ այս ձեռագիրը կոչուել է Փիլոնի գիրք:

[206] Ք. Պատկանեանի թարգմանութիւնը, էջ 360. նրա հայերէն հրատարակութիւնը՝ **Մխիթար Այրիվանեցի,** Պատմութիւն ժամանակագրական, Ի լոյս ընծայեաց **Ք[երովբէ]. Պ[ատկանեան],** Ս. Պետերբուրգ, տպ. Կայսերական ճեմարանի գիտութեանց, 1867, էջ 33-36 (այսուհետեւ՝ **Մխիթար Այրիվանեցի,** Պատմութիւն, 1867):

ԽԹ. (49), տունս ՍՅ. (2300). եւ ինքն ՃԺԷ. (157) ամաց եւ ամսոց Է.անց (7) կատարեցաւ իւր մահուամբ յԵփեսոս, ի մայիսի Ը.ն (8)»:

2) Աւետարան ըստ Մատթէոսի, լուսանցներում. «Մատթէոս երգ կենաց. գետս այս Փիսովն, ի չորս ականց ելանէ...», իսկ վերջում՝ 15ա «Յետ Է. (7) ամի համբառնալոյն Տեառն գրեաց զԱւետարանս ի լեզու Հեբրաեցի, ի խնդրո երիցանցն Երուսաղէմի, ի նոյն քաղաքի, որ ունի գլուխս ՅՇԵ. (355), վկաւրթիւնս ԼԲ. (32), Աւետարանս ԿԱ. (61), տունք ՍՈ. (2600): Եւ ինքն ի Զմուրմին քաղաքի կատարեցաւ հրով ի Փիլիպիանոս թագաւորէ, ի նոեմբերի Զ.ն (6)»:

3) Աւետարան ըստ Մարկոսի: Լուսանցներում՝ «Մարկոս սուրբ Աւետարանիչ՝ բարձր պատնէշ. գետս այս Գեհովն...», իսկ վերջում՝ 20ա «Մարկոս Հ.իցն (70), աշակերտ Պետրոսի առաքելո, հրամանաւ նորին յետ ԺԵ. (15) ամի վերանալոյն Տեառն գրեաց զԱւետարանս լատին լեզուաւ[207], սկսեալ ի Հռոմ եւ աւարտեալ յԱղեքսանդր, եւ թարգմանեալ ի բարբառ եգիպտացի, որ ունի գլուխս ՄԼԳ. (233), վկայութիւնս ԺԵ. (15), Աւետարանս ԾԶ. (56), տունս ՌՈ. (1600): Եւ ինքն յԱղեքսանդրի սրբոյ Զատկին ի կռապաշտից քարշեալ ընդ հրապարակն, սպանաւ յապրիլ ԺԵ. (15)»:

4) Աւետարան ըստ Ղուկասու: Լուսանցքներում՝ «Սուրբ Աւետարանիչ Լուկաս, յարութիւն. Տիգրիս արիութիւն[208], Լայնութիւն կամ ցասկոտութիւն, ելանէ ի լերանցն Կորդուաց, ի Հաշտէն գաւառէ, յԱլալաւայ գեղջէ, ցանգական, ողջախոհական, գուարակ զենական, ճանճկէն ճարտուկ, որթիւ, այսինքն՝ ուղղորդէ կամ յոտն կացէք - յարութիւն...»: Քանի որ այս Աւետարանի վերջին մէկ թերթը պոկուել եւ կորսուել է, եւ չնայած Յովհաննէս Վարագացին 1604 թուականին լրացրել է պակասող թերթը, ὑποθεσιζ-ը մնացել է չգրուած:*

5) Գործք սրբոց առաքելոց. յառաջաբաններ եւ սկիզբ չունի[209]: Լուսանցներում գետեղուած են 50ական տներ, ընթերցումներ, վկայութիւններ, գլխացանկեր, թուեր, ինչպէս նաեւ առանձին դարձուածներով ստորին լուսանցներում նշուած է համապատասխան էջի բովանդակութիւնը. - «Ստեփանոս, - Սիմոն կախարդ - Պօղոս գնայ ի Դամասկոս...»:*

6) Առաքեալների եօթ թղթերը՝ յառաջաբանով:

7) Աղերս Եւթաղեայ, վերջում յիշատակարանով. 44բ «Յաւուրս Արկադեա եւ Ոնորեա սուրբն Եւթաղի Աղեքսանդրացի արար զցանկ առաքելոյս ի

---

[207] Ժամանակագրութեան մէջ ասուած է՝ «դալմատական լեզուով». Պատկանեանը եւ Բրոսէն թարգմանել են՝ «լատիներէն»:

[208]* Քաղուածքի շարունակութիւնը մենք ենք բերել:

[209]* Իրական պատկերն այս է՝ «Յառաջաբան («որք». սկ. չիք «/// [ձեղգութեամբն վր] իպեցոյց: Քանզի ասէ. Երանեալ է այր...») 30ա: Գիր. 30ա: Գլուխք 30աբ: Գիրք 30բ-40ա»:

խնդրո մեծի հաւրն Թէոփիլոսի, նա եւ զԳործոցս եւ զկաթողիկէիցս. ի խնդրո թագաւորազն կրաւնաւորին Աթանասի՝ համահասակի, յաղագս հերձուածոյն Կղէոբոսի եւ Կարպոկրատեա, որք զվկայութիւն մարգարէիցն որ վասն Քրիստոսի հանեալ եղծանէին ի Նոր կտակարանացս»[210]*:*

8) Եւթաղեայ յառաջաբան Պօղոս առաքելի ***եւ բոլոր 15 թղթերը՝ սովորական յաջորդականութեամբ, սակայն լուսանցներում, իւրաքանչիւրի մօտ նշում է ամէն թղթի ժամանակագրական կարգը***[211]*:*

9) Յայտնութիւն. 10) Հանգիստ Յովհաննու: ***Սրանով աւարտւում է Նոր կտակարանի գրքերի ցանկը, որն ունի այնքան գիրք, որքան Սարկաւագի «կարգադրութիւնք Գրոց Սրբոց»ը, որտեղ Յայտնութիւնը եւ Յովհաննու Հանգիստը նախորդում են Պօղոսի թղթերին:***

Բ. *Հին եւ Նոր կտակարանների գրքերի միջեւ գտնւում են եկեղեցական գրքեր եւ մի ճառ:*

1) 72ա-4բ [Դաւթի փիլիսո]փայի Ներգինացո Ներբողեան ասացեալ ի Սուրբ խաչն — ***Բարձրացուցէ՛ք զՏէր Աստուած...:***

2) 74բ-7բ Գիրք աղաւթից, զոր արարեալ է սուրբ հարցն Սաակա եւ Մեսրոբա — ***Սարկաւագ ասէ. Աւրհնեա Տէր: Եպիսկոպոս. Տէր, եթէ զչրթունս...***[212]*:*

Գ. ***Որպէս երրորդ մաս դրուած են Հին կտակարանի գրքերը. 1) Գիրք Ծննդոց: Հին կտակարանի մասում եւս, ինչպէս եւ Նոր կտակարանում, հանդիպում են փոքրիկ յիշատակումներ, որոնցից կարեւորները մենք***

---

210 «Գիրք Կայսերացում» մենք գտնում ենք այս նոյն յիշատակարանը՝ աննշան տարբերութիւններով. [ըստ վենետիկեան «ձեռագրաց»]՝ այն տպագրուած է Բազմավէպ-ում (**Հ. Ա. Սուքրեան,** Աստուածաշունչք. թարգմանութիւն Եօթանասնից եւ հայկականն. եւ ամբողջութիւն Նոր Կտակարանին.- Բազմավէպ, 1877, էջ 200-212), եւ մենք այն բերում ենք համեմատութեան համար. «Ի սոցա (Ոնորիոսի եւ Արկադեայ) երկրորդ ամին եղեւ Եւթաղ Աղեքսանդրացի՝ որ հրաշազան յօրինուածովք զսուրբ առաքելոյն Պաւղոսի եւ զԳործոց առաքելոցն եւ զԵօթնեցունց թղթոցն կաթողիկեայց զառաջաբանս եւ զգլուխս եւ զմասնաւորս եւ վկայութիւնս եւ զտունս՝ կարգեաց յաղագս հերձուածոյն որ էին Կաղբոսի (?) եւ Կարպոկրատեայ, Կոթորոսի եւ Եկղորոսի, որ սոսկ մարդ ասէին զՔրիստոս, եւ վկայութիւնս որ վասն Քրիստոսի խոտէին, եւ զՀին Կտակարանս ոչ ընդունէին» (Բազմավէպ, 1877, էջ 205): Այս յիշատակութիւնը յայտնի է եղել նաեւ Գիրք պատճառացի (Liber Causarum) կազմող Գրիգոր վարդապետին, եւ նա օգտուել է դրանից, ինչպէս երեւում է հետեւեալից: Խօսելով Պօղոսի թղթերի մասին (Էջմիածնի ձեռագիր Հ^{մր} 1650 [Մ 1879], թերթ 312), աւելացնում է. «Իսկ զթուղթսն Պաւղոսի ստուգիւ եցեոյց Եւթաղի, ի խնդրոյ թագաւորազին կրօնաւորին Թէոփիլի, որ թարգմանի աստուածասէր. որ եւ զԳործոցն, եւս զթուղթս առաքելոց»:

211 Սարկաւագը եւս ունի թղթերի այդ կրկնակի կարգը:

212 Ըստ Սարկաւագի ցուցակի այս գրքերից յետոյ գալիս է՝ «Սուրբ Մանդակուսու պատարագը». մեր ձեռագրում այն աղօթագրքի մասն է՝ [77բ-80բ «*Կարգ պատարագի* - Սղմ. Դատ արա՛ ինձ, Տէ՛ր: Տո՛ւր, Տէ՛ր, սրբութիւն ձեռին իմո...»]:

նշելու ենք. օրինակ՝ Ծնունդքը՝ «Մեծն Մուսես գրեաց հրամանաւ Աստուծոյ» (81ա):

2) Ելք. 104ա «Զսոսա աստղանշան արար Որոգինէս»:

3) Ղեւտական: 4) Թիւք: 5) Երկրորդումն աւրինաց: 6) Յեսու Նաւեայ:

7) Դատաւորք: 141բ «Սամուէլ մարգարէ եւ Նաթան մարգարէ գրեցին Դատաւորքն»: 8) Հռութ: 9) Ա. Թագաւորաց: 149ա «Մաղաքիմի Յեսու որդի Անանիա մարգարէի գրեաց: Սամուել եւ Նաթան գրեցին»: 10) Բ. Թագ.: 11) Գ. Թագ. 166ա «Թագաւորութեանց երրորդ Երեմիա մարգարէ գրեց. Յեու եւ Ազարիա գրեցին. ոմանք՝ թէ Ազարիա»: 12) Դ. Թագ. 175բ «Երեմիա գրեց»[213]: 13) Ա. Մնացորդացը 183բ «Եզր գրեց»: 14) Բ. Մնացորդացի վերջում ունի այսպիսի յիշատակարան. 200բ «Տեառն Սաակա կաթողիկոսի գՄնացորդս յետ ամենայն մարգարէից է թարգմանեալ: Որ կարդասցէ զաւրինակս զայս՝ աղաւթս արասցէ ի վերա սրբոյն Սահակ կաթողիկոսի. մինչ ցՍաակ[214] սուրբ ասին, իսկ անդի եւ այսր՝ տէր»[215]:

Մնացորդաց այս գրքերը նոր օրինակ են պրոֆ. Խալաթեանցի Մոսկուայում հրատարակած հին թարգմանութեան[216]: Նրա հրատարակութեան հետ համեմատել ենք մեր ձեռագրի իւրաքանչիւր գրքի երկուական գլուխ եւ պարզել, որ Մխիթարի մեր նորագիւտ օրինակը իր տարբերցումներով պատկանում է էջմիածնի մի այլ՝ Jl (Հմր 68) [Մ 354] ձեռագրի կարգին: Այժմ մենք ունենք Մնացորդացի հնագոյն թարգմանութեան չորս ընդօրինակութիւն. J² (1262) [Եղմ. 1925] եւ L¹ (ԺԳ-ԺԴ. դարեր)[217] [Լոնդոնի Համբէթեան պալատի Հմր 1209] ներկայացնում են առաջին եւ

---

213 Հարկ է նկատել, որ Մխիթարը Հերոնիմոսի Յառաջաբանը չի կցել Թագաւորութեանց գրքերին, եւ Եպիփան Կիպրացուը՝ Սաղմոսներին, այլեւ՝ Գլխացանկերն ու նախադրութիւնները՝ Հին Կտակարանի գրքերին:

214 Ժամանակագրութեան Բ. գրքի 14րդ գլուխը՝ «Հայ կաթողիկոսներ»-ը բանալի է տալիս այդ տեղի բացատրութեան համար. այնտեղ գրուած է, թէ Լուսաւորչի տոհմի կաթողիկոսները կոչւում են սուրբ, իսկ միւսները՝ տէր (Պատկանեանի հրատարակութիւն էջ 344):

215 Այս յիշատակարանն առկայ է նաեւ Երուսաղէմի J² ձեռագրում, ինչպէս հաղորդում է պրոֆ. Խալաթեանցը, առաջաբան, էջ III:

216 Գիրք մնացորդաց, հրատ. Գ. Խալաթեանցի՝ II էջում Խալաթեանցը գրում է, որ Հմր 183 ձեռագիրը (մեր JL) իր տեսակի մէջ միակ օրինակն է: «Ես ասում եմ միակը, որովհետեւ դրանից յետոյ վերանայել եմ այդ գրադարանում գտնուող հայերէն Աստուածաշունչերի ձեռագրական ընդօրինակութիւնները (թուով աւելի քան 30), բայց նրանցից ոչ մէկում չեմ նկատել այդ նորայայտ թարգմանութեան հետքը»: Սակայն նրա ուշադրութիւնից վրիպել է ամէնագլխաւոր գանձը՝ Մխիթարի ձեռագիրը, որն առաջնակարգ նշանակութիւն ունի Աստուածաշնչի հայերէն թարգմանութեան հարցում:

217 ***Գր. Խալաթեանց,*** Մի նոր օրինակ նորագիւտ Մնացորդաց գրոց.- Հանդէս Ամսօրեայ, 1901, էջ 193-195:

էջմիածնի երկու ձեռ. MA (1296) եւ Jl (ԺԶ. դ.)՝ երկրորդ խումբը:

Մխիթարը գիտէր հայերէն Ընկալեալի մէջ տարբերակների գոյութեան մասին, որ երեւում է հետեւեալից. հին թարգմանութիւնն աւարտւում է Լե. գլխի 25 տնով, Jl՝ ըստ Ընկալեալի վերջում աւելացնում է Լե. 26, 27 տները, եւ ԼԶ. գլուխը, իսկ MA-ն ինչպէս եւ J²-ը աւարտւում է Լե. 25ով, սակայն MA-ն՝ Դանիէլ մարգարէից յետոյ, վերնագրի ներքեւում՝ «Մնացորդք ի մնացորդաց» վերնագրի ներքոյ լրացնում է Լե. 26, 27 տները եւ ԼԶ. գլուխը:

15-16) Եզրի Ա-Բ.:

17) Ա. Գիրք Մակաբայեցւոց. 211ա «Ափրիկանոս գրեաց երբաեցի լեզուաւ» 18) Բ. Գիրք Մակաբայեցւոց: 19) Գ. Գիրք Մակաբայեցւոց. այսպիսի գրառմամբ[218]. 230բ «ես Դ. Մակաբաեցիսն ո՛չ գտի, եւ ոչ Յովսեպոսն, որ է Կաիափա, որ գրեալ է ի գիրսս»)[219]:*

Սարկաւագի ցուցակում այս տեղում առանց որեւէ նշումի գրուած է. «Զորրորդ Մակաբայեցի. Յովսեպոս՝ որ է Կայիափայ քահանայապետ» (Մխ. էջ 35): Մխիթարը ընդունելով Սարկաւագի հեղինակութիւնը, հաւատացել է նրան բառացի եւ իզուր փնտրել է գոյութիւն չունեցող գրքերը, իսկ Սարկաւագն իր հերթին այս տեղեկութիւնները քաղել է ասորական աղբիւրներից[220]:

Մակաբայեցիներին յաջորդում են անկանոն գրքեր:

20) «Տեսիլ Ենովքա արդարո՝ Է.երրորդին յԱդամայ. վասն ժամանակաց»[221]:

21) «Կտակ ԲԺ.ն Հաւապետացն»[222]:

22) «Պատմութիւն Ասաներթա»[223]:

---

218 **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 190, ծնթ. 1. առանց աղբիւրը նշելու բերել է այս գրութեան մի մասը:

219* Մ. Տէր-Մովսիսեանը՝ էջ 98, սա կարդացել է՝ «Զդդ Մակաբայեցիսն ոչ գտի եւ ոչ զՅովսեպոսն, որ գրել էի ի գիրս, որ է կարի ափսոս»:

220 ***Assemani Joseph Simonius,*** Bibliotheka Orientalis, t. III, ps. I, 1725. De Scriptoribus Syris Nestorianis էջ 622, որտեղ հաղորդւում է, որ արեւելեան ժողովուրդների մէջ այն կարծիքը կար, թէ պատմաբան Յովսէփը եւ քահանայապետ Կայիփան, որը դատել է Փրկչին, նոյն անձն են, եւ իբր այդ Կայիփան յետոյ քրիստոնեութիւն է ընդունել: Մխիթարը ժամանակագրութեան 36 գլխում՝ «Պատմագիրք ի սկզբանէ»՝ այդպէս էլ համարել է՝ «Յովսէպոս, որ է Կայիփայ» [էջ 37]:

221 Հրատարակուած է՝ Թանգարան հին եւ նոր նախնեաց. Ա. Անկանոն գիրք Հին Կտակարանաց, [Աշխատ. Հ. Սարգիս Յովսէփեանց], Վենետիկ, Ս. Ղազար, 1896, էջ 378 (ԺԶ., 408 էջ. այսուհետեւ՝ Անկանոնք ՀԿ-ի):

222 Անկանոնք ՀԿ-ի, էջ 27:

223 Անկանոնք ՀԿ-ի, էջ 189 եւ Պատմութիւն Յովսեփայ եւ կնոջ նորա Ասաներթի՝ դստերն Պետափրէ քրմի Արեգ քաղաքի.- Բազմավէպ, 1885, Գ, էջ 200-6, 1886, Ա. էջ 25-30. վերջում՝ «Օրինութիւն խոստովանութեան Ասաներթայ առ Աստուած» (Մխիթ.

23) «Արհնութիւն խոստովանութեան Ասաներթա»[224]:

24) Տովբիթ. 244բ «Պ. (800) ամաւ յառաջ էր քան զծնունդն Քրիստոսի»:

25) Յուդիթ. 247ա-51ա «Վասն Յուդդա աղախնո Աստուծոյ՝ զիարդ սպան նա զՀողոփեռնէս թու[ր]ք եւ ապրեցոյց զԻսրայէլ»[225]: «ՇԺ. (510) ամաւ յառաջ էր այս քան զծնունդն Քրիստոսի Աստուծոյ մերո»:

26) Եսթեր, 251ա-4ա վերնագիրն է՝ «Տեսիլ Մուրդքէոսի. Շ. (500) ամաւ յառաջ քան զԾնունդն Քրիստոսի»:

27) Սաղաթիէլ, Եզր[226]. «ՇՇԸ. (558) ամաւ յառաջ քան զծնունդն Քրիստոսի Աստուծոյ»: Այս գրքի բնագիրը հրատարակուել է Զօհրապեանի Աստուածաշնչի յաւելուածում (էջ 13-15) եւ վերատպուել է Հին Կտակարանի Անկանոններում, ինչպէս ցոյց տուեց համեմատութիւնը՝ մեր բնագիրը առաւել լաւ է պահպանուել:

28) ԺԲ. մարգարէք. 260բ-270բ. 261ա էջի արտաքին լուսանցներում ունի չորս ցանկ. ա) բոլոր մարգարէների ժամանակագրական ցանկը՝ սկսած Ադամից մինչեւ Յուդայ Մակաբէ. «ՅԱդամա ՎՇՂէ. (3597), Մովսէս՝ ՎՊՀԶ. (3876), Դեբովրիա՝ ՏՃԷ. (4107), Սամուիէլ՝ ՏՃԿԵ. (4165)... Յեսու որ Սիրաք կոչեցաւ՝ ՏՋՁԲ. (4982), Յովդա Մակաբէէ՝ ՐՃՂԸ. (6198) Յիսուս Քրիստոս ծնեալ[227]»: Առաջին ցանկից յետոյ գալիս է երկրորդը՝ բ) մարգարէ-գրիչների անուններով. «Մովսէս, Դաւիթ, Սողոմոն, Աբդիու, Նաւում, Ովսէէ, Ամովս, Յովէլ, Եսաի, Յունան, Միքա, Երեմիա, Սոփոնիա, Բարուք, Դանիէլ, Եզեկիէլ, Սաղաթիէլ, Անգիա, Զաքարիա, Ամբակում, Մաղաքիա: Այսք են գրով մարգարէք»: գ) Երրորդ ցանկը ներկայացնում է մարգարէներին՝ ըստ ժամանակագրութեան՝ 261ա «Ժամանակո՝ Աբդիու, Նաւում, Ովսէէ, Ամովս, Յովէլ, Յունան, Միքիա, Սոփոնիա, Անգիա, Զաքարիա, Ամբակում, Մաղաքիա»: դ) չորրորդ ցանկը մարգարէներին թուարկում է ըստ Աստուածաշնչի դասաւորութեան կարգի. «Ովսէէ, Ամովս... Զաքարիա, Մաղաքիա»:

վանքի մի ճառընտիրից, հրատ պտրստ. Հ. Աթանաս Տիրոյեան):

224 Սարկաւագի ցանկում վերջին երկու գլուխների փոխարէն կայ՝ «Ասենիթի աղօթքն» (էջ 35): Վերնագրերի այս տարբերութեան մասին հմմտ. Ն. *Մառի* համեմատութիւնը՝ Ամառային ուղեւորութիւնից դէպ ի Հայս, թարգմանութիւն. Նկատողութիւններ եւ քաղուածներ հայկական ձեռագրերից.- Հանդէս Ամսօրեայ, 1891, էջ 260-272:

225 Բնագրում՝ թուք. վերջին տառը պարզ չէ, սակայն մէկ այլ տեղում (261ա էջի լուսանցում) յստակ կարդացւում է՝ թուրք. «Յուդիթ սպան զՀողեմփեռնէս թուրք»: Յուդիթ անունը անսովոր ձեւ ունի՝ «վասն Յուդդա». նաեւ յաջորդ գիրքը կոչւում է՝ Մուրդքէ. Եսթեր:

226 Անկանոնք ՀԿ-ի, էջ 251: Զօհրապեանի Աստուածաշունչ, Յաւելուած էջ 13:

227 Մարգարէների այս ցանկը չի համապատասխանում Մխիթարի Ժամանակագրութեան մարգարէների ցանկին, Պատկանեանի հրատարակութիւն, էջ 339:

29) Սաղմոսք Դաւթի: 30) Առակք[228]: 31) Ժողովող: 32) Երգ երգոց. «Աւրհնութիւն աւրհնութեանց, Սիրաք Սիրիմո»: 33) Իմաստութիւն: 34) Եսայի: 35) Երեմիա: 36) Բարուք: 37) Ողբք: 38) Երեմիայի թուղթը[229]: 39) Եզեկիէլ: 40) Յոբայ արդարոյն. 346ա «Յոբ զոր պատմագրեաց Մուսէս եւ յետոյ ստիքորոնեաց Սաղոմոն»: 41) Դանիէլ:

42) Մնացորդք ի Մնացորդացն (Ընկալեալի գլ. Լե. 25, 26 եւ ԼԶ.): 359ա «Մնացորդքն ի Մնացորդացն, զոր յայլ գիրս գտի»: 43) 359բ Ի մեկնութենէ Մնացորդաց. Սողոմոն:

44) 359բ-61բ Ի Մնացորդաց գրոց (ստ. լս.՝ «Վասն Երեմիայ»), զոր գտի ի գիրս Հոռոմոց[230]:

45) Երկոտասան փոքր եւ երկոտասան այլ մարգարէից մահերը. Եղիայի, Եղիսէի, Եսայիի, Երեմիայի, Եզեկիէլի, Դանիէլի, Երեք մանկանց, Մովսէսի, Հեղիի, Յովասի, Զաքարիայի՝ որդւոյ Բարեքայ, Զաքարիայի՝ հօր Յովհաննու»:

46) Իմաստութիւն Յեսուայ որդւոյ Սիրաքայ:

Բոլորի վերջում, մի էջի վրայ, գրուած են կանոնական եւ անկանոն գրքերի տարբեր ցանկեր. 369բ ա) Հին եւ Նոր Կտակարանների «Գիրք, զոր ունիմ հրեայքս ի ծածուկ, այսքիկ են», բ) «Սրբոյն Կղեմա, եթէ ո՞ր գիրք ընդունելի է», գ) «Սրբոյն Եւագրեա կարգադրութիւն Աստուծաշունչ տառիս», դ) «Աստուածաշունչ. սրբոյն Կիւրղի Երուսաղէմի հայրապետի կարգադրութիւն»:

[231]* *Դ. Սարկաւագի ցանկում Հին Կտակարանին յաջորդող ստեղծագործութիւններն ունեն ընդհանուր վերնագիր՝ Ճուրբք. Subtils[232]. մեր ձեռագրում այսպիսի անուանում չկայ, այդուհանդերձ, կան Subtils գրքեր, որոնք որպէս առանձին մաս սկսւում են նոր թերթից:*

Ա. 370ա-507բ. Փիլոնի. 1) Յաղագս նախախնամութեան: 2) Կեանք վարուց իմաստնոց: 3) Յաղագս վարուց տեսականին: 4) Աստուածային աւրինացն այլաբանութիւն: 5) Այնոցիկ, որ ի լինելութեանն խնդրոց

---

[228] Սարկաւագի ցանկում այստեղ կայ միայն Առակաց գիրքը, իսկ Սողոմոնի միւս գրքերի անուանները չկան:

[229] Երեմեայի մարգարէութեան [Բարուքի] վերջում կարդում ենք. 329բ՝ «Գրեցաւ ի Դ. աւրինակէ Երուսաղէմացո»:

[230] Այդ հատուածը տպագրուել է՝ «Արարատ», 1895, մարտ, էջ 81-82 եւ Յաւելուած, էջ 3-8, նաեւ՝ Անկանոնք ՀԿ-ի, էջ 354:

[231*] Յաջորդող՝ «Ճուրբ» բնագրերի թուարկումն արել է ո՛չ ըստ ձեռագրի, այլ՝ ըստ Զարբհանալեանի, ուստի ձեռագրի նիւթերի խորագրերի՝ ռուսերէնով հեղինակի արած թուարկման փոխարէն այստեղ դնում ենք նոյն Զարբհանալեանից կամ ձեռագրացուցակից առած վերնագրեր:

[232] Պատկանեանը «Ճուրբք» բառը թարգմանում է ըստ իմաստի՝ «փիլիսոփայական գրքեր», իսկ Բրոսէն եւ Կարիէրը հաղորդում են հետեւեալ բառերով՝ Profonds, Sublils, որոնցից վերջինը հայերէն բառի առաւել ճշգրիտ թարգմանութիւնն է:

եւ լուծմանց[233]. չորս գլուխ, ամէն մէկը՝ 99, 85, 62 եւ 243 հարցերով: 6) Այնոցիկ, որ յելս են խնդրոյ եւ լուծմանց. 21 հատուած: 7) Այնոցիկ, որ յելսն խնդրոց եւ լուծմանց. 124 հարց: 8) Յաղագս քահանայիցն. 12 հարց: 9) Յաղագս բագնին իրաց. 13 հարց: 10) Յաղագս ժ. բանիցն. 15 հարց: 11) Առանց պատրաստելոյ ի Սամփսոն: 12) Յաղագս Յովնանու մարգարէի: 13) Յաղագս զԱստուած ի բարեգործութեան, հուր ծախիչ անուանեալ ի տեսլեան երից մանկանցն[234]:

Բ. Սրբոյն Դիոնեսեայ առաջին եպիսկոպոսի Աթենացոց առ Տիմոթեոս եպիսկոպոս Եփեսացոց Յաղագս երկնայնոցն քահանայապետութեանց. 15 գլուխ:

1) Յաղագս երկնայնոցն քահանայապետութեանցն: 2) Յաղագս ի մկրտութիւնն կատարմանց: 3) Յաղագս հաղորդութեան: 4) Յաղագս միւռոնին կատարման եւ որք նովաւ կատարին: 5) Յաղագս քահանայականացն կատարմանց: 6) Յաղագս նուիրեցելոյն կարգաց: 7) Յաղագս կրօնաւորաց: 8) Յաղագս ի վերայ ննջեցելոցն կատարմանց: 9) Յաղագս եկեղեցականին քահանայապետութեան: 10) Յաղագս աստուածայնոցն անուանց[235]:

Գ. Սուրբ Յեռեթէոս: 1) Յաղագս աստուածաբանականացն տարրութեանց: 2) Թէ զի՞նչ է աղաւթից զաւրութիւն, եւ յաղագս երանելոյն Յեռոթէոսի, եւ յաղագս երկիւղածութեան աստուածաբանականի: 3) Յաղագս բարւոյ, լուսոյ, ազնուի, տուփման, զարմացման, նախանձու: 4) Ի տուփականացն աւրհնութեանց մեկնութիւն[236]:

Դ. Սուրբ Դիոնիսիոս (չարունակութիւն). 11) Յաղագս էի եւ յարացուցից: 12) Յաղագս իմաստութեան մտաց: 13) Յաղագս զաւրութեան, արդարութեան, փրկութեան եւ այլն: 14) Յաղագս Սրբոյն սրբոց, թագաւորին թագաւորաց, Տեառն տերանց: 15) Յաղագս խորհրդական աստուածաբանութեան: 16) Թուղթք զանազանք:

Ե. Սուրբ Գրիգոր եպիսկոպոս Նիւսացու. 1) Յաղագս բնութեան մարդոյ: 2) Տեսութիւն մարդոյն կազմութեան: 3) Յորդորումն մանկանց ի կուսութիւն: 4) Խօսք Ժողովողի: 5) Յաղագս Երգոց երգոյն[237]: 6) Խօսք

---

233 «Փիլոնի՝ այնոցիկ որ ի լինելութեանն խնդրոց եւ լուծմանց ՂԹ. հարց», շատ պարզ արտայայտութիւնը ժամանակագրութեան մէջ կրճատուած է անճանաչելիութեան չափ՝ «որ ի լինելութեանց». ինչո՞ւ է Պատկանեանը թողել՝ առանց թարգմանութեան:

234 Փիլոնի այս ստեղծագործութիւնների մասին հմմտ. Կոնիբէրի վերը մէջբերուած աշխատանքները. Philonis Quaestiones in Genesin (էջ 68, 69) եւ **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 735-748:

235 **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 381-394:

236 **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 384:

237 Սարկաւագի ցանկի այս տեղում նկատելի է բացայայտ անորոշութիւն եւ անճշտու-

յինն երանուելիւնս: 7) Մեկնուելիւն «Հայր մեր»-ի[238]*:*

Զ. Երանելի Սեւերիանոսի եպիսկոպոսի Եմեսացւոյ. Վասն հաւատոց եւ ի Հօրէ ծննդեան Բանին[239]*:*

Է. Գրիգորիս Աստուածաբան եպիսկոպոս Նազիանզացու. 1) Ի ծնունդն Քրիստոսի: 2) Ի յայտնուելիւն Տեառն: 3) Առ Եւնոմիացիսն, «Առ այնոսիկ»[240]*:*

Ը. Բարսղի Երանելի եպիսկոպոսի կապադովկացւոյ. 1) Ճառք: 2) Գիրք հարցողաց: 3) Մեկնուելիւն վեցօրէից[241]*:*

Թ. Վարք եւ խրատք Եւագրեայ երանելւոյն[242]*:*

Ժ. Դաւթի փիլիսոփայի Սահմանք[243]*:*

Ի. Պրոկղ Դիոդոխոսի Սահմանք աստուածաբանականք:

Լ. 1) [Դիոնիսիոսի Թրակացւոյ] Քերականութիւն: 2) Հերմեսի Իմաստասիրի ասացեալ. [Առ Ասկղեպիոս Սահմանք]: 3) Պորփիւրի Ներածութիւն: 4) Դաւիթ փիլիսոփայի Վերլուծութիւն [ներածութեանն Պորփիւրի]: 5) Արիստոտելի Ստորոգութիւնք, Պերիարմենաս, Յաղագս առաքինութեանց, Յաղագս աչխարհի[244]*:*

Ժամանակագրութեան ցանկի համեմատ ձեռագրում պակասում է 13 նիւթ: Ինչպէս ասել ենք, 1604 թուականի երկրորդ կազմումից առաջ ձեռագրից չատ թերթեր են կորսուել. վերջին թերթերի հետ միասին կորսուել է նաեւ գլխաւոր յիշատակարանով թերթը, որը մանրամասներ էր պարունակում ժամանակի եւ գրիչների մասին: Բայց, չնայած դրան, դժուար չէ ճշգրտօրէն որոշել նրա գրչութեան ժամանակը: Ըստ Բրոսէի հաշուարկի՝ Մխիթարի ժամանակագրութիւնն աւարտուել է 1297 թուականին, իսկ ըստ Հ. Գր. Գալէմքեարեանի՝ 1289-90 թուականներից ոչ ուշ, ընդ որում՝ մենք առաւել հիմնաւոր ենք համարում Հ. Գրիգորի փաս-

---

թիւն. այնտեղ դրուած են՝ «Նիւսացիքն, Բնութիւնն, Կազմութիւնն, Կուսութիւնն, Ժողովողն, Երգերգոցն» [էջ 35], որն առիթ է տուել մտածելու, թէ Ժողովողն եւ Երգերգոցն վերցուածեն Աստուածաշնչի գրքերի թուից եւ դրուածեն փիլիսոփայական գրքերի մէջ: Ամենայն հաւանականութեամբ այսպիսի սխալ ըմբռնում է ունեցել ժամանակագրութեան մեզ հասած ձեռագրի ընդօրինակողը, որովհետեւ կրկնութիւնից խուսափելու համար նա իրեն թոյլ է տուել այս գրքերի անունները ջնջել Աստուածաշնչի գրքերի շարքից:

238 **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 362-374:

239 **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 679-687:

240 **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 346-358:

241 **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 326-344:

242 **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 431:

243 **Զարբհ.**, Պատմ. հայ դպր., 1897, էջ 314-394:

244 **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 666, 675 եւ 321:

տարկները[245]: Ժամանակագրութեան մէջ իր իսկ Մխիթարի հաղորդած վերջին փաստերը 1290 թուականի սահմանները չեն անցնում, իսկ ձեռագիրը գրուել է ժամանակագրութեան աւարտից բաւական առաջ. ինչպէս ցոյց է տալիս Ժամանակագրութեան 34րդ վերնագիրը՝ «Կարգադրութիւնք գրոց սրբոց որք... գրեցաւ յհնէն ի տէր Մխիթար վարդապետէս պատմագրէ ի միմ տուփ՝ յաւուրս ՃՀ. (170).», նշանակում է այդ հատորը գրելու վերջին ժամկէտն եղել է 1290 թուականից ոչ ուշ, այլ առաջ: Հարցը միայն այն է, թէ քանի՞ տարի առաջ: Այս հարցի պատասխանը գտնւում է բուն ձեռագրում. նրա մէջ՝ պատարագի աղօթքներում նշւում են ժամանակակից երկու արքաների անուններ, Կիլիկիայի Հայոց Լեւոն Բ. Թագաւորի (1270-1289) եւ Վրաց Դեմետրէի (1272-1289 թ.), ինչպէս նաեւ Հայոց Յակոբ Ա. կաթողիկոսի անունը (1268-1286). նշանակում է ձեռագիրը գրուել է այն ժամանակ, երբ այս երեք անձնաւորութիւնները կենդանի են եղել եւ ղեկավարել են իրենց երկրները եւ հօտը, այսինքն՝ 1272-1286 թուականները, Դեմիտրէի գահակալութեան առաջին տարուանից մինչեւ Յակոբ կաթողիկոսի վախճանը:

9. St[1]. Հ՟ր 9. ՁԽԱ. - 1292. Էջմիածնի վանքի ձեռագիր Հ՟ր 156, Դանիէլի ցուցակի Հ՟ր 150, էջ 10[246] [Մ 179]:

Այս ձեռագիրը գրել է Ստեփան Գոյներ Երիցանցը, ձեռագրեր, յատկապէս՝ Սուրբ Գիրք ջանասէր ընդօրինակողը: Նա գրում է չատ նրբագեղ, սկզբից մինչեւ վերջ հրաշալի համաչափութեամբ կատարելով իր աշխատանքը: Որքան հնարաւոր է եղել դատել տարբեր ձեռագրերի մակերեսային համեմատութեամբ, նա առաւել լաւ եւ միակերպ է օգտագործել կէտադրական նշանները: Նա սովորական գրիչ չէր, այլ կիլիկեան ժամանակաշրջանի Աստուածաշնչի ձեռագիր օրինակողների մեծամասնութեան նման, այնքան պատրաստուած եւ կարդացած է եղել, որ ըստ տեսքի եւ ըստ ուղղագրութեան գերազանց հասկանալով իր ընդօրինակած բնագիրը՝ գրում էր չատ ճիշտ:

579 թերթանոց ձեռագիրը գրուած է լաւ մագաղաթի վրայ, երկսիւն է (23,5x16), քառածալ (in 4⁰), 52 տող, գեղեցիկ բոլորգիր: Նրա մէջ զարդարանքը չատ քիչ է, իսկ մանրանկար՝ միայն մէկն է: «Ճառանկի» խորագրերի համարներն ամէն գրքի սկզբում օժտուած են յատուկ ծանօ-

[245] **Հ. Գ. Գալէմքեարեան,** Մխիթար Այրիվանեցի եւ իր ընորագիւտ գրութիւնը.- Հանդէս Ամսօրեայ, 1891, էջ 166-167 (161-167) եւ **Brosset**, Hist. Chronologique, par M. d'Airivanque, Preface. ճ. Գր. Գալէմքեարեանը ուշադրութիւնից բաց չի թողնում, որ ժամանակագրութեան մէջ նոյնիսկ 1307 թուականի յիշատակութիւն կայ, սակայն նա ապացուցում է, որ այն ամէնը, ինչ հաղորդում է 1290 թուականից յետոյ, ձեռագրի առաջին իսկ օրինակողների յաւելումն է:

[246] Տե՛ս նաեւ **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 125:

թագրութիւններով, որոնք բացատրում են, թէ քանի՛ գլուխ կայ դրանցից իւրաքանչիւրում եւ ըստ խորագրերի որո՛նք են լատինական եւ հայկական բնագրերի միջեւ առկայ տարբերութիւնները: Օրինակ, Եսթերի գիրքը չատ է տարբերւում լատինական վուլգատայից. հայկ. գլ. Ա. = լատ. ԺԱ. 2, իսկ հայկ. ԺԲ., 6 = լատ. Ա., ընդ որում՝ ձեռագրում կայ յիշատակութիւն. «Աստի ի հետ այլ չի միաբանիլ փռանգնոյն գիրքն ընդ մերս»:

Մակաբայեցւոց երրորդ գրքի մասին գրուած է. 249ը «Երրորդ Մակաբաեցիքն չկա ի փռանգուն գիրքն»:

Առակաց գրքի ԻԴ. 22 տան դիմաց գրուած է. «Աստի մինչեւ փառքն չի միաբանիլ փռանգուն գիրքն ընդ հայուն»:

Լ.Զ. ՃԺԷ. եւ ՃԺԸ. սաղմոսներին[247]՝ լուսանցներում, հայերէն տառադարձութեամբ եբրայական այբուբենով նչւում են տներ, իսկ ՃԺԷ. սաղմոսը հայկականի հետ միասին ունի նաեւ եբրայական տառերը՝ հետեւեալ նչումով. «կարմիր լքով գրերդ որ հետ սեւին է՝ ջհաին է»:

Նոր Կտակարանի գլուխների թուերը տրւում են՝ ըստ Մատթէոսի՝ 28, ըստ Մարկոսի՝ 15, ըստ Ղուկասու՝ 23 եւ ըստ Յովհաննու՝ 21[248]:

Բնագիրը տարբերւում է O^2-ից[249]. Հին Կտակարան. 1) իւրաքանչիւր գրքի գլխացանկը գրուած է բնագրից առաջ՝ հետեւեալ գրքերում. 1-7, 9-15, 17, 21-22, 25, 28 (29ը՝ Սիրաքի գիրքը ձեռագրում չկայ). 2) չունեն գլխացանկեր, այլ միայն նախադրութիւններ՝ 16, 18, 19, 20, 23, 31, 32, 33 եւ 37 գրքերը. 3) գլխացանկեր եւ Նախադրութիւններ չունեն՝ 8, 23, 26, 27, 30, եւ 34 գրքերը. 4) Թագաւորութեանց գրքերն ունեն Հերոնիմոսի Prologus Galeatus. 5) Սաղմոսներն ունեն՝ ա) անվերնագիր հատուած Դաւթի մասին. բ) Ալեքսանդր եպիսկոպոս Ալեքսանդրացիի Յառաջաբան Դաւթի սաղմոսների մեկնութեան. եւ գ) Եպիփան Կիպրացու Յաղագս երգոց Սաղմոսարանի, 6) որպէս անկանոն յաւելում Հին Կտակարանի վերջում կան բոլոր մեծ եւ փոքր մարգարէների մահերը:

Նոր Կտակարան. 1) Գործք սուրբ Առաքելոց. ունեն. ա) գլխացանկ, բ) նախադրութիւն, գ) ընթերցումների (կամ վկայութիւնների) թիւը, դ) Այլ յառաջաբան, որը չկայ տպագրուած հրատարակութիւններում, ե) աւագ սարկաւագների անունները՝ նշանակուած ըստ թեմերի, զ) Առաքեալնե-

---

247 Հերոնիմոսը խօսելով եբրայական կանոնի 22 գրքերի մասին, այբուբենի տառերի թուով, յիշատակում է, որ այս 22 տառերը հանդիպում է նաեւ Թուոց գրքում, եւ որ նրանցով ցոյց են տալիս Ղեւտացիների եւ քահանաների թիւը, «ինչպէս նաեւ նրանցով են նշւում ԼՋ., ՃԺԸ. եւ ՃԽԴ. սաղմոսները»:

248 «Այդ համարդ որ ՖԷ ու Ռայ գտնուս ի գիրքդ, նա այդ փոանկնոյն ջաբիստրն է. եւ այս գլխոյս ջումլ, իը. է»:

249 Մենք թուերը գործածում ենք այնպէս, ինչպէս նրանք թուարկուած են մեր O^2 ձեռագրում:

րի (գործած) հրաչքները, է) Պօղոսի ճամբորդութիւնը: 2) Պօղոսի ամէն թղթի նախադրութիւնն առանձին է, 3) Առ Կորնթացիս երրորդ թուղթը դրուած է երկրորդից յետոյ, 4) վերջում՝ անկանոն «Հանգիստ Յովհաննու»:

Աստուածաշնչի դրքերի վերջում որպէս յաւելուած կան հետեւեալ դրքերը.

1) Խրատք ընթերցմանց բովանդակ տարւոյն: 2) Տաւնացոյց ըստ չաբաթուց եւ սակաւ մի Հարցնացոյց: 3) Տաւնք ըստ Հայոց եւ Հռոմայեցւոց ամսոց: 4) Աղաւթամատոյց: 5) Պատարագամատոյց: 6) Յառաջաբան Դաւթի մարգարէի Մեկնութեան Աթանասի եպիսկոպոսի Աղեքսանդրացւոյ զամենայն երգոց Սաղմոսարանացն Դաւթի գներուն՚ակ միտս իւր գտեալ եւ այլոց յայտնի ցուցանէ: 7) Յովհաննու Ոսկեբերանի Ի մեծի աւուրն Պենտակոստէին: 8) Աղաւթք Վարդավառին: 9) Կանոն Ջրաւրհնեաց: 10) Թուղթ Կիւրղի եպիսկոպոսի Երուսաղէմի Վասն երեւելոյ նշանի խաչին յերկնից: 11) Կանոն Նաւակատեաց եկեղեցւոյ պղծելոյ յանաւրինաց եւ չարժեալ սեղանն վերստին հաստատել: 12) Խոստովանութիւն Մանասէի (աղօթքը): 13) Պատճէն տաւմարի Եբրայեցւոց: 14) Գէորգ վարդապետի Յաղագս սրբոյ պասքային եւ տերունական լրմանն: 15) Խրատ Պսակի (Հատուած):

Ստեփանոս գրչի յիշատակարանները, մասամբ չափածոյ, առանձնակի հետաքրքրութիւն ունեն նրանով, որ նրանց միջոցով մենք ի վիճակի ենք կապ հաստատել այս ձեռագրի եւ միւսների միջեւ, ինչը շատ կարեւոր է առանձին խմբեր կազմելու համար: Ստեփանոսը Գէորգ վարդապետին կոչում է իր հոգեւոր հայրը եւ ասում է, որ իր ձեռագիրը 1292 թուականին օրինակել է նրա եւ նրա աշակերտ Խաչատուրի օրինակներից: Նախորդ՝ 7րդ համարում SK[1]-ի հետ մենք ծանօթացել ենք Խաչատուրի ձեռագրին, որի մի մասը գրել է ինքը՝ Ստեփանոսը, իսկ Գէորգի վաստակը Աստուածաշնչի եւ եկեղեցական ծիսական գրքերի համար այնքան մեծ է, որ մենք նրա մասին առանձին ենք խօսելու:

Աղաւթամատոյցի եւ Պատարագամատոյցի օրինակները սրբագրել է Գէորգը, եւ երբ Ստեփանոսը դրանք արտագրում էր, գիտէր, որ դրանք տարբերւում են սովորական օրինակներից, դրա համար էլ ընթերցողներին հանգստացնում է հետեւեալ բառերով. [551ա] «Ի Գէորգ վարդապետին աւրինակէն գրեցի զսա: Եւ նա գրեալ էր, թէ որք յընթեռնուլն զսա այլափոխ բանիցն պատահեսցէ, մի՛ տգիտութեան վարկցի կամ անձնահաճութեան եւ մի՛ հա/551բ/մարձակեսցի յեղաչրջել բան ինչ, զի յաւրինակէ Մեկնութենէն տեառն Խոսրովու ուղղեցաք՝ որչափ գտաք զ՚ի նմանէ քննեալն»:

Գէորգը Պատարագամատոյցի վերջում մի գրառման մէջ բողոքում է նրանց դէմ, ովքեր անգիտութեան պատճառով թոյլ են տուել նորաձեւ յաւելումներ պատարագին[250]. «Ի Գէորգ վարդապետի աւրինակէն գրեցի զսա, եւ նորա գրեալ էր, թէ մի՛ հեղգութեամբ համարիր զոչ յաւելուլն ի սմա զհամբակագունից ոմանց զնորաձեւ բանից բարդուածս»:

Տարօրինակ է գրչի անունը՝ «Ստեփաննոս Գոյներ Երիցանց»: Ալիշանը (Սիսուան էջ 96-97) ասում է, որ նա ըստ իր ծագման վայրի կոչուել է «Կայթաոնցի, Կայծաոնցի», որը նոյնպէս անյայտ է եւ դժուար բացատրելի, ինչպէս նրա տարօրինակ մականունը՝ Գոյներ՝ Երիցանց զուգակցմամբ: Ալիշանը կարծում է, թէ գոյները «գոյն» բառից է, երիցանցը՝«երէց»՝ քահանայ բառից, «քահանայի որդի», սակայն այսպիսի բացատրութիւնը հազիւ թէ կարելի է ընդունել եւ բաւարարող համարել: «Գոյներ» անունով 1271 թուականին հանդիպում է կիլիկիեցի մի պալատական՝ «Սիր Գոյներ»՝ ինչպէս երեւում է յիշատակումից: Գոյներ Երիցանցը մեր գրչի մականունն է: Գրիչ-գրողների մականուններն ընդունուած էին, եւ օգտագործում էին նոյնիսկ իրենք՝ դրանց կրողները, օրինակ. «Սարգիս Պիծակ», «Մկրտիչ Նաղաշ», «Յովհաննէս Կոզեռն», եւ ուրիշներ: Գոյներ Երիցանցը նոյն տեսակ մականուն է: Դա հաստատում են Ստեփաննոսի բառերը. «թէպէտ եւ սպասաւորական աստիճանի վիճակեալ էի, սակայն ամաչեմ կոչել զիս ի բարձրագունէն, այլ մականունութեամբ կոչեմ Գոյներիցանց»: Սրանից մենք տեսնում ենք, որ նա բոլորովին էլ քահանայ չի եղել, այլ՝ կամ վարդապետ, կամ՝ եպիսկոպոս[251]:

Ձեռագիրը 1650 թուականին եղել է Ագուլիսի Սուրբ Թովմա առաքեալի վանքում, եւ յայտնի Մովսէս կաթողիկոսի աշակերտ Խաչատուր վարդապետն այն կազմելու է տուել ոմն Գալուստի:

10. *MN Հ՝ր 10. [Ջխև.] - 1292. Էջմիածնի վանքի ձեռագիր Հ՝ր 153,*

---

[250] Ջօհրապեանի եւ հետեւորդների հրատարակութեան հիմքում ընկած է Գէորգի օրինակը. կարելի է ենթադրել, որ եթէ նա եկեղեցական-ծիսական գրքերում նորարարութիւն չի թոյլատրել, կշտամբում էր նահանջողներին, եւ ձգտում էի վերականգնել բնագրի ամենահին տեսքը, ապա նա չէր կարող այլ ձեւով վարուել Աստուածաշնչի բնագրի նկատմամբ:

[251] [526բ] «Ստեփաննոս Գոյներ Երիցանց, որ թէպէտ եւ սպասաւորական աստիճանի վիճակեալ էի, սակայն ամաչեմ կոչել զիս ի բարձրագունէն, այլ մականունութեամբ կոչեմ Գոյներիցանց: Որ յոյժ ժամանակի իմոյ՝ ցանկացաւ եղեալ աստուածասէրն մարգարէական բանից հնոյն եւ աստուածայրականին Յիսուսի լուսափառ նոր վարդապետութեանն, եւ իմոյիս երկաւք եւ բազում աշխատութեամբ զփափագ տեսչանաց սրտիս լցի, եւ յանգ հանեալ աւարտեցի զԱստուածաշունչ գիրս բովանդակ, եւ զայլ պիտանացու եւ յոյժ հարկաւոր եկեղեցական աւանդութիւնս՝ ըստ իմոյ կարողութեանն խոշորագիծ գրով... յիշեսջիք ի Քրիստոս զհոգեւոր հայրն իմ եւ լուսաւորիչ՝ զԳէորգ վարդապետն, եւ զհամակամ աշակերտ նորին՝ զԽաչատուր, յորոց աւրինակաց եւ զգիրքս գրեցի՝ բազում խնամարկութեամբ ի նոցանէ...»:

Դանիէլի ցուցակի 147, էջ 10[252] *[Մ 177]: Ձեռագիրը գրուած է լաւ մագաղաթի վրայ, բոլորգրով, 611 թերթ է, ամէն էջում 45 տող, երկսիւն է (25,5x18), քառածալ (in 4º): Ձեռագրում ժամանակը ճիշտ չի նշուած: Ո (600) = 1151 թուական, 595ը՝ «ի գաւառիս Կիւլիկա, ի թագաւորութեան Լեւոնի՝ որդոյ Հեթմոնի թագաւորին»*[253]*: Առանձին զարդարանք չունի, միայն մէկ գլխազարդ (14ա) եւ մի քանի կիսագլխազարդ՝ այն էլ կարմիր թանաքով. լուսանցներում սովորական զարդանկարների փոխարէն նկարուած են գունաւոր, համակենտրոն շրջագծեր, նրանց մէջ՝ գլխագիր տառեր: Այդ թուատառերը ցոյց են տալիս գրքերի, եւ նրանցից իւրաքանչիւրի մէջ՝ գլուխների թուերը, եւ ընթերցումների հատուածների թիւը Սաղմոսներում եւ ամբողջ Նոր Կտակարանում:*

Գրիչներ Մովսէս եւ Ներսէս վարդապետների յիշատակարանները բաւական չատ են՝ թուով 48 հատ: Նրանցից չատերը կրկնութիւն են, սակայն կան նաեւ բաւական հետաքրքիր տուեալներ ունեցողներ: Պէտք է ափսոսալ, որ ձեռագրի վերջում չկայ գլխաւոր յիշատակարանը, քանի որ ընկել են վերջին երկու կամ երեք պրակները, որոնց վրայ ամենայն հաւանականութեամբ եղել են Յայտնութիւնը եւ Յովհաննու Հանգիստը: Բազմաթիւ յիշատակարանների մէջ միայն մէկը չատ համառօտ կերպով տեղեկութիւն է տալիս ձեռագիրը գրելու ժամանակի եւ վայրի մասին: Մեր ձեռագիրը սկսել են գրել երկու վարդապետ՝ Ներսէսը եւ Մովսէսը. առաջինը չաւարտած՝ մահանում է, Մովսէսն այն հասցնում է աւարտի:

Դատելով ըստ բոլոր յատկանիշների՝ Մովսէսը հասարակ արտագրող չէր. նա լաւ գիտէր լեզուն եւ տիրապետում էր գրչին, ուստի եւ իր Աստուածաշունչը զարդարել է բազմաթիւ գեղեցիկ ոտանաւորներով: Նա լաւ իմացութիւնների տէր եւ գրականութեան նկատմամբ հետաքրքրութիւն ունեցող մարդ էր, չատ ընդարձակ հայեացքով՝ թէ ինչպէս պէտք է տարածել այդ գրականութիւնը: Նա գիտէր նաեւ յունարէն, որը երեւում է հետեւեալից. Հին Կտակարանում հայերէնի կողքին յաճախ օգտագործուած են յունարէն վերնագրեր, որոնք գրուած են յստակ, գեղեցիկ եւ չատ ճարտար ձեռագրով. եւ ակնյայտ է՝ լեզուն չիմացողը չէր կարող այդպէս գրել: Մովսէսն անդամ էր Սեպուհ լեռան Գրիգոր Լուսաւորչի վանքի միաբանութեան՝ Մանեայ քարանձաւում, եւ ինչպէս երեւում է

---

[252] Տե՛ս նաեւ **Զարբհ.,** ՄՀԹՆ, էջ 122. A Dictionary of the Bible, Volume I, էջ 154. **Ղ. Ալիշան**, Սիսուան, էջ 533, 534:

[253*] Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ. ԺԳ. դար, կազմեց Ա. Ս. Մաթեւոսեան, Երեւան, 1984, էջ 774-780՝ այս ձեռագրի յիշատակարանները դրել է 1296 թ. ներքոյ, որի մասին ունի ընդարձակ ծնթ. յէջ 780, ուր յղում է նաեւ՝ **Մ. Տէր-Մովսիսեան,** Էջմիածնի հ. 153 [177] ձեռագիրը».- Արարատ, 1904, էջ 125-37. «Մայր Աթոռ» վերնախորագրի ներքոյ, ստորագրուած՝ «Մեսրոպ վարդապետ»:

յիշատակարաններից, պատուաւոր դիրք է ունեցել: Իր ձեռագիրն աւարտելուց յետոյ նա այն նուէր է մատուցել «Սուրբ Լուսաւորչի դամբարանին». 13բ «Ես՝ անարժան Մովսէս, զԱստուածաշունչս իմովք ձեռաւք գրեալ, Դամբարանի Սուրբ Լուսաւորչին նուիրեցի ի Լերինն Սեպուհի, ի Մանեա յայրսն: Եւ թէ ոք ո եւ իցէ՝ նենգել խորհիցի՝ յափշտակելով կամ գողանալով, կամ թէ առաջնորդ, վաճառեսցէ կամ ումեք չնորհեսցէ, կամ ընդ իրիք փոխանակեսցէ, դատախազ կացցէ նմա սուրբ Լուսաւորիչն առաջի Քրիստոսի, եւ աստ մի՛ հասարակեսցէ զաւուրս իւր»:

Վանքում կար լաւ մատենադարան, որ պարունակում էր այսպիսի գրքեր. «զԱստուածաշունչս եւ կամ զՄեկնչերն եւ զնրբերն եւ զինչ վարդապետական գիրք» (12բ), որոնք յիշւում են նաեւ «զԱստուածաշունչս եւ կամ զայլ վարդապետական գրեանք» ձեւով[254]: Դա վանական միաբանութեան ընդհանուր օգտագործման գրադարան էր, եւ Մովսէսն ապագայ պատասխանատուների պարտաւորութիւն սահմանեց երբեք չմերժել այն վանականներին, ովքեր ցանկանում են ուսումնասիրել այդ գրքերը՝ ի բաւարարումն նրանց ցանկութիւնների: «Զի», ասում է նա իր յիշատակարաններում, «գրեանքդ վասն դասի ենք դրել ի դուռն Սուրբ Լուսաւորիչդ»:

«Ո՛վ եղբարք, չատ աչխատեցայ եւ սակաւ վայելեցի... Ով զգիրքս զԱստուածաշունչս եւ կամ զՄեկնչերն եւ զնրբերն եւ զինչ վարդապետական գիրք կա, խնայէ դասասաց վարդապետի, փակեալ լիցի նմա դուռն արքայութեանն Աստուծոյ, զի գրեանքդ վասն դասի ենք դրել ի դուռն Սուրբ Լուսաւորչիդ. որ փակէ եւ չտա, փակեալ լիցի նմա կենացն մուտ. ամէն» [12բ]:

Դրանցից օգտուել թոյլատրւում է ոչ միայն նշուած վանքի միաբանութեան անդամներին, այլ նաեւ նրանց, ովքեր ապրում են մօտակայ վանքերում, որոնք գպրոցներ ունեն: Ով սովորել ցանկացողին, նախանձելով չտա ձեռագրերը, «եղիցի ընդ անիծիւք»: Մի բան կարելի է պահանջել օգտուողներից՝ որ ով կզբաղուի ձեռագրերով, դրանց հետ պէտք է խնամքով վերաբերուի, եւ դա բաւական է: «Զի զէնն զինաւորին է»:

«Որ զաստուածաշունչս եւ կամ զայլ վարդապետական գրեանք, որ ի Սուրբ Լուսաւորիչս կա, յաղագս յաղաչանաց խնայէ, որ ի չուրջակա վանօրեայքդ /609ա/ դասատուն լինի, եղիցի ընդ անիծիւք՝ իբրեւ զայն ծառայն, որ թաքոյց զարծաթ տեառն իւրոյ, եւ իբրեւ զայն՝ որ ինքեանք ոչ մտին եւ որ մտանէին՝ չտային թոյլ մտանել. եւ զնոյն անէծս ժառան-

[254] Յատուկ եզրերով եկեղեցական գրքերն այսպիսի ճիւղերի բաժանելը Մովսէսի պատահական յօրինուածքը չէ, այլ ինչպէս «Աստուածաշնչի կանոնը» գլխում մենք ցոյց ենք տալիս, արդիւնք էր վանական դպրոցներում կիրառուող յայտնի ծրագրի:

գեսցեն: Ապա որ կարդասցէ, խնամով պահեսցէ, եւ այս բաւական է, զի զէնն զինաւորին է. եւ կատարողքն եղիցին աւրհնեալ. ամէն» [608բ-9ա]:

Սակայն այս յիշատակարաններից առաւել հետաքրքիր եւ կարեւոր են գլխացանկերի եւ նախադրութիւնների մասին պատմող ուրիշ երկուսը: Սովորաբար ձեռագիր եւ տպագիր Աստուածաշնչերում գլխացանկերը եւ նախադրութիւնները դրւում են համապատասխան գրքերի սկզբում, բայց մեր ձեռագրում դրանք գրուած են խմբերով, այսինքն՝ մի քանիսը միասին. բացայայտ ապացոյցն այն բանի, որ կամ առաջ դրանք այդպէս էին գրում, կամ էլ դրանք գրուած են ոչ թէ ձեռագրի հետ միաժամանակ, այլ յետոյ: Սրա ճշգրիտ բացատրութիւնը գտնում ենք 130ա էջի հետեւեալ յիշատակարանում. «Ո՛վ եղբարք եւ ծառայակիցք, որք գայք զկնի մեր եւ հանդիպիք մերումս շարագրութեան, այս ձեզ յայտնի լիցի, զի թէ յանցնիւր տեղւոջ ոչ է եղեալ զգլխահամար իւրաքանչիւր գրոց, այս է պատճառն, զի ի մերումս ժամանակի հնոցն արարած ոչ գտաք գլխահամար Աստուածաշնչից գրենաց: Եւ որ մերն էր րաբունապետ[255], է՛, զոր յինքենէ չարժեալ եւ է՛, զոր ի մէնջ թախանձեալ եղեւ, եւ զայսոսիկ յորժամ արար, ի գրոցս սուղ ինչ կայր գրելոյ, եւ ուր տեղի գտաք՝ եղաք, ուր՝ ոչ, լուր ժողովեցաք առ ի պէտս»:

Մէկ այլ յիշատակարանում (թերթ 3) Մովսէսը հետագայի օրինակողներին յորդորում է՝ «Թէ ոք կամեսցի գրել, յառաջ զ Նախադրութիւնս գրեսցէ եւ ապա զ Գլխահամարան՝ ի սկզբան ամենայն գրոց»:

Հնգամատեանի եւ Թագաւորութեանց բոլոր գրքերի գլխացանկերը գրուած են ամէն գրքի բնագրից առաջ, իսկ նրանց նախադրութիւնները՝ ձեռագրի սկզբում: Հերոնիմոսի յայտնի Prologus galeatus առաջաբանը դրուած է Թագաւորութեանց գրքերի բնագրից առաջ, ընդ որում՝ քանի որ ազատ տեղը քիչ էր, այն մասամբ գրուել է ստորին լուսանցներում:

Որպէս այս ձեռագրի առանձնայատկութիւն, անհրաժեշտ ենք համարում նշել հետեւեալ փաստերը.

ա) Եզրի Ա. գիրքն ունի գլուխների եռակի բաժանում, որոնք նշուած են հետեւեալ կերպ.

ժ. (10)

ժբ. (12)

ֆռ. թ. (9)

Առաջին բաժինը կազմուած է տասը մասից եւ համապատասխանում

---

[255] Հայերէն օգտագործուել է «մերս րաբունապետ». մենք միշտ «րաբունապետ» բառը թարգմանում ենք «епископъ» բառով, քանի որ հնում այն շատ յաճախ օգտագործուել է «եպիսկոպոս» բառին համաձայնասար: * Սխալ է. բառի հիմքը «ռաբբի-րաբունի»ն է, որ նշանակում է «վարդապետ», ամէնուր այդպէս էլ գրել ենք՝ «վարդապետ»:

է Գէորգի գլխացանկերի թուին. երկրորդը կազմուած է 12 մասից, ինչին ուրիշ ձեռագրերում չենք հանդիպել, երրորդը՝ 9 «ֆռանկի» բաժանումը կամ լատինական վուլգատայի գլուխների թիւը:

բ) Սկսած սաղմոսներից մինչեւ Եզեկիէլ մարգարէի գիրքը, ամէն գրքի սկզբում, մեծ բազմագոյն եւ համակենտրոն շրջանակներում գլխատառերով գրուած են ութ գրքերի համարները. 1) Սաղմոսք, 2) Սողոմոնի չորս գիրքը, 3) Յոբ, 4) Եսայի, 5) ԺԲ. Մարգարէք, 6) Դանիէլ, 7) Երեմիա, 8) Եզեկիէլ: Սա ի՞նչ յատուկ հաշուարկում է. բացատրել չկարողացանք՝ ոչ մի ուրիշ ձեռագրում Հին Կտակարանի գրքերի նման խմբաւորում չգտնելով:

Ճիշտ նոյնպիսի տառերով նշուած են նաեւ Պօղոսի 14 թղթերը՝ չրջանցելով Առ Կորնթացիս Գ. թուղթը, չնայած որ բնագրում այն գտնւում է երկրորդ թղթից յետոյ եւ ըստ կարգի պէտք ստանար չորս թիւը:

գ) Մենք ասել ենք, որ Մովսէս գրիչը հայերէնի հետ միասին օգտագործել է նաեւ յունարէն վերնագրեր: Ուրիշ որեւէ ձեռագրում չենք հանդիպել այդպիսի յունարէն յաւելումներ, եւ դրա համար էլ հազիւ թէ հիմք կայ մտածելու, թէ այդ յաւելումները հին թարգմանութեան մնացորդներ են. հակուած ենք ենթադրելու, որ Մովսէսը, ով գլխացանկերով եւ յաւելումներով լրացրել է իր օրինակը, այն համեմատել է նաեւ յունարէն բնագրի հետ եւ ինչ որ բաներ առել նրանից:

Այս բոլոր իւրայատկութիւնները եւ վերը բերուած յիշատակարանները, մեր ձեռագրին յատուկ նշանակութիւն տալով, նրա ճիշտ ժամանակը որոշելը դարձնում են առաւել անհրաժեշտ: Ժամանակի մասին միակ պահպանուած յիշատակարանն ասում է. «Եւ արդ, եղեւ զրաւ գրչութեան սորա ի գաւառիս Կիլիկիա, ի թագաւորութեան Լեւոնի՝ որդոյ Հեթմոն թագաւորին. գրեցաւ Հայոց թուին Ո. (1151), որ է աւրհնեալ յաւիտեան» (595բ):

Մենք նախորդում տեսանք, որ Մովսէս գրիչը՝ Դարանաղի գաւառի Սեպուհ լեռան Սուրբ Լուսաւորչի վանքի միաբանութեան անդամ էր, որտեղ նա աշխատել է եւ աւարտել իր աշխատանքը: Դարանաղին գտնւում է բուն Հայաստանում, չնայած որ Կիլիկիայի հարեւանութեամբ է, եւ հետեւաբար, այս յիշատակարանի հիման վրայ պէտք է ենթադրել, որ ձեռագիրը սկսել է գրուել Կիլիկիայում, եւ աշխատանքի միայն աւարտն է եղել Լուսաւորչի վանքում:

Այնուհետեւ յիշատակարանում ասուած է, որ ձեռագիրը գրուել է Հեթում թագաւորի որդու գահակալութեան ժամանակ՝ 1151 թուականին. ի դէպ՝ 1151 թուականին Կիլիկիայում տիրել է Թորոս Բ. իշխանը, որն արքայի տիտղոս չի ունեցել եւ չի եղել Հեթում կամ Հեթմոն թագաւո-

րի որդին: Սա ցույց է տալիս, որ յիշատակարանում առկայ է բացայայտ անճշտութիւն կամ տարեթուի կամ էլ Հեթմոն թագաւորի անուան հարցում, եթէ ընդհանրապէս ամբողջ յիշատակարանն ուշադրութեան արժանի է: Սա մեզ առիթ է տալիս քննելու այս յիշատակարանը, որպէսզի համոզուենք, թէ որտեղ է թաքնուած սխալը: Մի կողմ թողնելով 1151 թուականը, զբաղուենք Հեթում թագաւորի անուամբ: Կիլիկիայում Հեթում անունով երկու թագաւոր է եղել. Հեթում Ա.՝ 1226-1271 թթ. եւ Հեթում Բ.,՝ 1289-1301 թթ.: Հեթում Ա.ը՝ Կոստանդին իշխանի որդին, ծնուել է 1215 թուականին եւ ամուսնանալով Ռուբինեան առաջին թագաւոր Լեւոնի դստեր հետ, 1226 թուականին դարձաւ Կիլիկիայի թագաւոր: Նա իր կենդանութեան օրօք հրաժարուեց գահից եւ վանք մտաւ, իսկ նրա փոխարէն սկսեց թագաւորել նրա որդին՝ Լեւոն Բ.ը՝ 1271-1288 թուականներին, ամբողջ 17 տարի:

Նրանից յետոյ խռովութիւնները եւ ներքին անկարգութիւնները խիստ ալեկոծեցին փոքրիկ պետութիւնը: Քանի որ նրա որդի եւ ժառանգորդ Հեթում Բ.ը երկիրը կառավարելու ցանկութիւն չցուցաբերեց, իսկ մի քանի տարուայ՝ 1289-1292 թթ. գահակալութիւնից յետոյ թագը տուեց իր եղբօրը՝ Թորոսին, իսկ ինքը հրաժարուելով աշխարհիկ կեանքից, մտաւ Փրանկիսկեան վանք եւ կոչուեց Յովհաննէս: Գահի վրայ Թորոսի բախտը չբերեց. նա տապալուեց իր եղբայր Սմբատի կողմից եւ սպանուեց 1298 թուականին[256]: Սակայն խառնակութիւնները սրանով չվերջացան. Սմբատի դէմ հանդէս եկաւ երրորդ եղբայրը՝ Կոստանդինը, եւ այդ ժամանակ Հեթում-Յովհաննէսը, համախոհների պնդմամբ, դուրս եկաւ վանքից, գահից վռնդեց Կոստանդինին եւ կրկին ինքը թագաւորեց: Այս ներքին անկարգութիւնները եղան 1292-1299 թուականներին: Հեթումը երկրորդ անգամ թագաւորելով՝ գահի վրայ մնաց մինչեւ 1301 թուականը, այնպէս որ նրա թագաւորումը, ընդհատումով, եղել է 1289-1301 թուականներին:

Հարց է ծագում. եթէ գրիչը սխալուել է տարեթիւը հաղորդելիս եւ ճիշտ է հաղորդել Հեթում թագաւորի անունը, ապա երկու Հեթումներից որի՞ն ի նկատի ունէր: Նա իր ձեռագիրը Հեթում թագաւորի օրօք չի գրել, այլ նրա որդու, որի անունը նա չգիտէր: Հետեւաբար գրառման մէջ յիշուածը Հեթում առաջինն է, եւ ոչ թէ Հեթում երկրորդը, որը որդիներ չի ունեցել եւ որին յաջորդել են եղբայրները: Այսպիսով, ձեռագրի ստեղծման ժամանակը պէտք է համարել Լեւոն երկրորդի գահակալութեան շրջանը՝ 1271-1288 թթ.: Սակայն հարցի այսպիսի լուծմանը խանգարում են հետեւեալ փաստերը. ա) ձեռագրում բոլոր գրքերը բաժա-

[256] Այդ սպաւնութիւնը, ի միջի այլոց, յիշատակւում է Հմր 13 Աստուածաշնչի յիշատակարանում:

նուած են գլուխների՝ «ըստ ֆռանկի համարների», այդ ֆռանկի համարները հայկական Աստուածաշնչի մէջ առաջին անգամ ներդրել է Հեթում երկրորդը՝ 1292 թուականին՝ գահից հրաժարուելուց յետոյ. բ) դժուար է ենթադրել, որ գիտնական Մովսէս գրիչը չիմանար 17 տարի փառաւորապէս թագաւորած Լեւոն երկրորդի անունը եւ նրան կոչէր հօր անունով: Ինչո՞ւ, ընդունելով ի գիտութիւն, որ փոքր յիշատակագրութեան մէջ ճիշտ չէ տարեթիւը, անսովոր է թագաւորի անուան ձեւը՝ Հեթմոն՝ Հեթումի փոխարէն, անհաւանական է, որ Մովսէսը չիմանար Լեւոնի անունը, եւ ընդհանրապէս թոյլ կտա՞ր այսպիսի սխալներ, մենք պէտք է եզրակացնենք, որ յիշատակարանը գրել է ոչ թէ Մովսէսը, այլ ինչ որ գրիչ, որը յիշատակարանը գրելիս օգտուել է աւանդութիւններից՝ ձեռագիր Աստուածաշնչի ստեղծման ժամանակը եւ տեղը հարցնելով վանքի միաբաններին: Իսկ որ այդ աւանդութիւնները հիմքում ճիշտ են եղել, համարեա անառարկելի ձեւով հաստատւում է հէնց ձեռագրով եւ գրչի անձնաւորութեամբ:

Վերեւում ձեռագիրը նկարագրելիս, մենք ցոյց տուեցինք Մովսէսի բացառիկ որակները եւ նկատեցինք, որ նա վանքում երեւելի դիրք է ունեցել, հէնց դա էլ մեզ դրդեց նրա անձին վերաբերող այլ տեղեկութիւններ փնտրել պատմական աղբիւրներում: Տեղեկութիւնները, որոնք մեզ յաջողուեց հաւաքել, մեզ լիովին հնարաւորութիւն են տալիս աւելի ճշգրիտ ճանաչել նրա անձը, դրա միջոցով էլ՝ մեր ձեռագրի ժամանակը: Մովսէսը ոչ այլ ոք էր, եթէ ոչ աշակերտը 1301 թուականին վախճանուած յայտնի Գէորգ Սկեւռացու, որի մահից յետոյ Մովսէսն իր չափածոներում ողբում եւ գովաբանում էր նրան: Ղեւոնդ Ալիշանը[257] նրա անձի վերաբերեալ մի արժէքաւոր յիշատակում ունի: Մովսէսի աշակերտ՝ ոմն Գրիգոր կամ Գրիգորիս Խարբերդցի մեզ թողել է 1314 թուականին գրուած մի ձեռագիր[258], եւ նրանում կայ այսպիսի յիշատակում. «ի գալ վարդապետին Մովսիսի ի Կիլիկիոյ բազում գրեանօք, յորդորեալ եւ առեալ զմեզ՝ բնակեցաք ի Դարաձաղեաց գաւառն, ի լեառն սուրբ եւ մեծ Լուսաւորչին մերոյ, ամս վեց»[259]: Այս յիշատակարանը մեզ շատ բան է բացատրում: Նրանից մենք իմանում ենք, որ Մովսէսը, թողնելով Կիլիկիան, իր շուրջը աշակերտներ է ժողովել եւ նրանց բնակեցրել է այն ժամանակ լքուած Սուրբ Լուսաւորչի վանքում՝ Սեպուհ լեռան վրայ: Նա իր հետ բազմաթիւ գրքեր է բերել եւ վանքում գրադարան հիմնել:

---

257 **Ղ. Ալիշան**, Սիսուան, էջ 106, ծնթ. 2:

258 Ալիշանն այդ գրքի անունը չի ասում:

259 «Վեց տարի», կարելի է հասկանալ, որ Գրիգորն այնտեղ ապրել է վեց տարի, կամ նորահաստատ միաբանութիւնը գոյութիւն է ունեցել միայն վեց տարի:

Վերը բերուած յիշատակութեան մէջ Հին Կտակարանի նախադրութիւնների եւ գլխացանկերի կազմողը անուանուած է «մեր րաբունապետ», եւ քանի որ մենք ցոյց ենք տալիս, որ գլխացանկերի եւ նախադրութիւնների կազմողը եղել է Գէորգ Սկեւռացին, իսկ Գրիգոր վարդապետ Խարբերդցու հաղորդմամբ Մովսէսը եղել է Գէորգի աշակերտը, ապա պարզ է, որ մեր գրիչը եւ Գէորգ Սկեւռացու աշակերտ Մովսէսը նոյն անձն են: Մենք նրա յիշատակարաններից գիտենք թէ ինչպիսին են եղել այն գրքերը, որոնց մասին ասում էր Գրիգորը:

Մեր ձեռագրի ժամանակագրութեան պարզումը մեծ նշանակութիւն ունի, իսկ այն որոշելը մեզ յաջողւում է ինչպէս Մովսէսի անձով, նոյնպէս եւ այլ դատողութիւններով: Նախ՝ ձեռագրի սկզբում, երկու էջի վրայ, կայ Աստուածաշնչի իւրայատուկ բառարան, որ կազմել է 1251 թուականին վախճանուած Վանական վարդապետը. երկրորդ՝ ինչպէս ասուել է, ձեռագրում կայ գրքերի գլխաբաժանում, որ արուել է 1292-1293 թուականներին: Հետեւաբար, ձեռագիրն առաջին թուականից չուտ որեւէ կերպ գրուած լինել չէր կարող, նաեւ նրա գրուելու ժամանակը մենք չենք կարող տեղաշարժել վերջին տարուց ետ: Այն յիշատակարանը, որտեղ խօսւում է գլխացանկերի մասին, ասւում է, որ դրանք կազմել է «մեր րաբունապետը», մասամբ մեր խնդրանքով, երբ ձեռագրի մի մասն արդէն պատրաստ էր: Գէորգի մէկ այլ աշակերտի՝ Ստեփան Գոյների 1292 թուականին գրուած ձեռագրում նոյնպէս կան գլխացանկեր եւ «փռանկի» համարներ: Քանի որ Մովսէսի ձեռագիրը գրուել է այն ժամանակ, երբ Գէորգը կազմել է գլխացանկերը, եւ այդ գլխացանկերը հանդիպում են Ստեփանոսի ձեռագրում, որ գրուած է 1292 թուականին. եւ դրանից բացի՝ քանի որ երկու ձեռագիրն էլ գրքերի լատինական բաժանումներ ունեն, որ ներդրել է Հեթում երկրորդ թագաւորը՝ 1292 թուականից ոչ առաջ, ապա պարզ է, որ Մովսէսի ձեռագիրը նոյնպէս գրուած է 1292 թուականին: Թոյլատրելի է եւս մէկ ենթադրութիւն, որ Ստեփանոսը եւ Մովսէսը իրենց ձեռագրերում հետագայում են աւելացրել լատինական բաժանումները, այդ դէպքում հնարաւոր է առաջ տեղաշարժել գլխացանկերի կազմութեան ժամանակը, հետեւաբար՝ նաեւ Մովսէսի ձեռագրի գրուելու ժամանակը: Սակայն մեր կարծիքով, առաւել հաւաստի են մեր առաջին մտայանգումները, եւ մենք կանգնում ենք 1292 թուականի վրայ: Ընդ որում, թւում է, կարելի է բացատրել նաեւ յիշատակարանի սխալները. վանքում դեռեւս յիշում էին, երբ անյայտ գրիչն աւելացնում էր բոլոր առումներով անճիշտ յիշատակարանը, որ Մովսէսի ձեռագիրը գրուել է Հեթում թագաւորի օրօք, բայց չգիտէին ո՛չ նրա գահակալութեան ժամանակը, ո՛չ մէկը միւսին արագ փոխարինող նրա ժառանգորդների անունները, իսկ ամբողջ

17 տարի թագաւորած՝ Հեթում առաջինի ժառանգորդ Լեւոնի անուան այդտեսակ չիմացութիւնը չի կարելի ենթադրել:

Ամբողջ ասուածի հիման վրայ մենք գալիս ենք այն եզրայանգման, որ մեր ձեռագիրը, որ մինչ այժմ համարւում էր Աստուածաշնչի ամենահին ձեռագիրը, վերաբերում է ոչ թէ ԺԲ., այլ՝ ԺԳ. դարին: Այն գրել է Գէորգ Սկեւռացու աշակերտ Մովսէս Երզնկացին. աշխատանքն սկսել է Կիլիկիայում՝ Ներսէսի հետ միասին, աւարտել է ինքը՝ Լուսաւորչի վանքում, որտեղ նա հիմնել է նոր գիտական միաբանութիւն:

Ինչ վերաբերւում է բուն ձեռագրի բնագրին, մենք արդէն նշել ենք նրա բոլոր առանձնայատկութիւնները, իսկ նրա գրքերի կազմութիւնը եւ յաջորդականութիւնը լրիւ համապատասխանում է O^2 ձեռագրին, միայն վերջում չկայ Յայտնութիւնը եւ Յովհաննու Հանդիստը, որոնք, անկասկած, կորսուել են:

11. *Հ. Հ՚ր 11. ՀՒԴ. - 1295. Էջմիածնի վանքի ձեռագիր Հ՚ր 157, Դանիէլի ցուցակի Հ՚ր 151, էջ 10*[260] *[Մ 180]:*

Այս ձեռագիրը գրուած է եղել Հեթում Բ. թագաւորի (1289-1301) համար, որը 1292-1299 թուականների միջակայքում գահից հրաժարուելով՝ Հեթում Յովհաննէս անուան տակ որոշ ժամանակ ընդունուեց փրանկիսկեան վանք[261]*: Ընդհանրապէս նա հովանաւորել է գրականութիւնը, իսկ այդ ժամանակ անձամբ էր զբաղւում մատենագրութեամբ*[262]*: Արքայական ձեռագիրը գրուած է լաւ մագաղաթի 572 թերթի վրայ, հրաշալի բոլորգրով. բոլոր գլխատառերը եւ Աստուծոյ անունը ոսկուց են, իսկ սկզբնատառերը՝ գունաւոր են եւ ոսկով, ձեռագրի մեծութիւնը՝ 22,5x16, քառածալ (in 4^0), երկսիւն, 53 տող: Այն զարդարուած է բազմաթիւ ճակատազարդերով եւ զարդանկարներով: Գրիչը Ստեփանոսն է, սակայն ինչպէս երեւում է գրից, Ստեփանոս Գոյների հետ ընդհանուր ոչինչ չունի: Ձեռագրից պակասում են սկզբի թերթերը, դրա համար էլ չկայ Ծննդոց գրքի գլխացանկը եւ նախադրութիւնը, իսկ բոլոր յաջորդ գրքերը դրանք ունեն: Գրքերում 5, 7 գլխացանկեր նախորդում են նախադրութիւններին, եւ գրիչը դրան տալիս է այսպիսի բացատրութիւն. «Ով ոք ընթեռնու կամ աւրինակէ զգիրքս զայս, նա թող յառաջ զնախադրութիւնս գրէ ու ապա*

---

260 **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 125, Զօհրապեան, Յառաջաբան, էջ 7:

261 Նրա մասին խօսել ենք MN ձեռագրի ժամանակը պարզելիս:

262 Յովհաննէս Երզնկացին գովաբանում է նրան եւ ասում, որ նա եղել է աստուածաբանական եւ հոգեւոր գրքերի ուսեալ, որ նա շատ էր սիրում գրքեր եւ գիտութիւն, մշտապէս գրքեր էր ձեռք բերում, յարգում էր իմաստութիւնը. տե՛ս **Ղ. Ալիշան**, Սիսուան, էջ 548-549:

զցանկքն, զի յետեւ չինեցաւ[263] նախադրութիւնս քան զգրոցս գրելն. նա ես այնոր համար յետեւ դրի: Ապա որ գրէ, նա թող զամէն նախադրութեներն յառաջ գրէ, ինչվի յԱւետարանն, ու այնկից ընդ այն թող հայնց գրէ զկաթուղիկէիցն ու զԱռաքելին՝ զինչցեղ գրած է. եւ զիս՝ զմեղաւորս զՍտեփաննոս յիշեա՛ անմոռաց, զի խիստ աշխատեցայ» [81բ][264]:*

Ձեռագրի գրչութիւնն աւարտուել է 1295 թուականին. 1292 թուականի նախորդ երկու ձեռագրերում (St[1] եւ MN) մենք արդէն գլխացանկեր եւ նախադրութիւններ ունենք, այս յիշատակարանի հիման վրայ պէտք է ենթադրել, որ Հեթումի ձեռագիր սկսել է գրուել 1292 թուականին:

Բնագիրը՝ Թագաւորութեանց եւ Սաղմոսների գրքերի մեկնութիւնների հատուածների յաւելումներով հանդերձ, նոյնական է O^2 ձեռագրի հետ. տարբերութիւններն են՝ 1) Զունի Սիրաքի գիրքը, Յոբի գրքում բացի նախադրութիւնից կայ նաեւ հատուած Յուլիանոս եպիսկոպոս Աղիկառնացու մեկնութիւնից: 2) «Իրք կնոջն չնացելոյ»ն գրուած է Յովհաննու Աւետարանի բնագրի մէջ՝ է. 52 - Ը. 10, O^2-ի նշումով: 3) Պօղոսի Առ Կորնթացիս Գ. թուղթը գրուած է երկրորդից յետոյ: 4) «Ճռանկի» վերնագրերի թուերն ունեն St[1]-ի նշումները: 5) Սողոմոնի Իմաստութեան վերջում գրուած է Ներսէս կաթողիկոսի տաղը: Բոլոր գլուխները նշուած են համարներով, որոնք ցոյց են տալիս իւրաքանչիւր տունը, սակայն սրանք, անկասկած, ուշ շրջանի գործ են եւ փոխառնուած են տպագիր օրինակից:

Յիշատակարաններից մենք արդէն բերել ենք մէկը, մնացածը գրուած են ըստ կաղապարի, տեղեկութիւններ ունեն Հեթում թագաւորի,Ստեփաննոս գրչի եւ ձեռագիրը գրելու ժամանակի մասին: Սակայն վերջում (561բ) կայ շատ երկար չափածոյ մի յիշատակարան, որը հաղորդում է Ռուբինեանների համառօտ պատմութիւնը Կիլիկիայում: Բանաստեղծու-

---

263 Այս խօսքը՝ «չինեցաւ» օգտագործուել է նաեւ վենետիկեան V[8] ձեռագրում, որի վրայ Զարբհանալեանը եւ ուրիշներն ուշադրութիւն չեն դարձրել: Այս յիշատակարանը համեմատիր վերը՝ MN ձեռագրի 130ա էջի Մովսէս գրչի յիշատակարանի հետ:

264* Սա Բ. օրինաց գրքի նախադրութեան վերջում է: Աւելի ուշ՝ Հոութի նախադրութիւնից յետոյ եւ Դատաւորաց գրքից առաջ կայ նաեւ նոյնաբնոյթ հետեւեալը. «Ով պատուելի եւ սրբասնեալ եղբա՛րք մեր եւ հա՛րք, ով ոք աւրինակէ զգիրքս զայս, նա թող յառաջ զնախադրութիւնն գրէ ու ապ[ա] զցանկքն. զամէն գրոց ի հետ իւր դի՛ր, ապա զնախադրութիւնն յառաջ դի՛ր քան զցանկն, եւ զՀոութայիս նախադրութիւնն ի յիր տեղն դի՛ր, զկնի կատարման Դատաւորացս. եւ զիս յիշեա՛» (108բ): Ի դէպ, 81բ եւ 108բ էջերի այս յիշատակարանները չկան ի՝ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Ա. կազմեցին՝ Օ. Եգանեան, Ա. Զէյթունեան, Փ. Անթաբեան, խմբագրութեամբ՝ Ա. Մնացականեանի, Օ. Եգանեանի, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1984, էջ 734-740. բայց կան ի՝ Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ. ԺԳ. դար, կազմեց Ա. Ս. Մաթեւոսեան, Երեւան, 1984, էջ 749-750:

Թեան հեղինակը ինքը՝ Հեթում Թագաւորն է[265]*:*

ՌԿԳ.՝ 1624 Թուականի մի յիշատակարան հետաքրքրական է ձեռագրի ճակատագիրը պարզելու համար. նրա մէջ Արիստակէս վարդապետը պատմում է, որ ցանկանալով ձեռք բերել Հեթում Թագաւորի ձեռագիրը, վեց տարի ճամբորդել է՝ փնտրելով այն եւ վերջապէս գտել է Տիգրանակերտ քաղաքում. մեծ ուրախութեամբ նա այն ձեռք է բերել եւ Կոստանդնուպոլսում կազմելու է տուել Մելքիսեդեկ անունով մի դպրի: Թէ ինչպէս է Արիստակէսի ձեռքից այդ հազուագիւտ ձեռագիրը հասել Էջմիածնի մատենադարան, ցոյց է տալիս մի այլ՝ Զաքարիա վարդապետի երկար յիշատակարանը՝ Dj[8]*, Հմր 55 ձեռագրում:*

12. *St*[2]*. Հմր 12. ՋԽԶ. - 1297. Ձեռագիր՝ Եւդոկիա քաղաքում*[266]*: Այս ձեռագրի մասին ըստ Զարբհանալեանի խօսքի գիտենք հետեւեալը. «Գրեալ ձեռամբ Ստեփանոս Գոյներ Երիցանց, ի ՋԽԶ. (= 1297), ի Թագաւորութեան Հայոց Սմպատայ եւ ի կաթողիկոսութեան տեառն Գրիգորի»: Մենք կարծում ենք, որ այս ձեռագրի հետ միասին մեզ հասել են Ստեփաննոս Գոյների առնուազն երեք ձեռագիր՝ Sk*[1]*, St*[1] *եւ St*[2]*:*

13. *ME. Հմր 13. [ՋԽԷ.] - 1298 [ՍՊԸ., Արեւելեան ձեռագրերի ինստիտուտի Հայերէն ձեռ. C-29]*[267]**: Պետերբուրգում կայ հայերէն ձեռագրերի մի մասնաւոր հաւաքածու՝ կազմուած 14 միաւորից, որի մասին տեղեկութիւն ենք ստացել գաղտնի խորհրդական Գ. Ա. Եզեանից՝ բոլոր միաւորների ցուցակով: Հաւաքածուի տասներորդ համարն է՝ «Աստուածաշունչ եւ Նոր Կտակարան: Մինչեւ Սիրաքի գիրքը ներառեալ գրել է Հաղբատի վանքի աբեղայ Գրիգորը, այնուհետեւ մինչեւ Նոր Կտակարանի վերջը՝ աբեղայի եղբայր Բարսեղը՝ այն Թուականին, երբ սպանուել է Հայոց արքայորդի Թորոսը (1298 թ.)»: Այս հաւաքածուն պատկանել էր Մուրաւեովին, եւ նրանից ճառանգաբար անցել է նրա փեսայ Ջերկովին*[268]*:*

---

[265] Բանաստեղծութիւնն աւարտւում է 562րդ մագաղաթէ թերթում, որ ունի քառանկիւն կտրուածք: Ոչ առանց հիմքի ենթադրւում է, որ այնտեղ արքայական կնիք է դրուած եղել:

[266] **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 156 * Տե՛ս նաեւ Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ. ԺԳ. դար, կազմեց Ա. Ս. Մաթեւոսեան, Երեւան, 1984, Հմր 641՝ էջ 804:

[267*] Համառօտ նկարագրութիւնը տե՛ս **К. Юзбашян,** Армянские рукописи в Петербургских собраниях: Каталог, Православный Палестинский сборник, Выпуск 104, С.-Петербург, 2005, էջ 189, յիշատակարանները՝ էջ 311-312:

[268] Քանի որ այդ հաւաքածուի մասին դեռեւս որեւէ մէկին յայտնի չէր հայ գրականութեան մէջ, մենք մեզ իրաւունք ենք տալիս ամբողջութեամբ տպագրել Գ. Ա. Եզեանի՝ Ն. Ն. Մուրաւեովին պատկանող հայերէն ձեռագրերի ցուցակը. 1) Հին Հայաստանի օրէնքներ, 2) Մաշտոց, 3) Եկեղեցական երգեցողութիւն, 1437 թ. գրուած Տփխուում, Կոստանդինի կաթողիկոսութեան օրօք, 4) 1091 թ. գրուած Մաշտոց, 5) Սուրբ Ներսէս Շնորհալու Յիսուս Որդի եւ Ողբ Եդեսիոյ չափածոները, աւթուական, 6) Քերա-

14. *Sk². Հմր 14. ՁԺԲ. - 1303. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 159, Դանիէլի ցուցակի Հմր 153, էջ 10*[269] *[Մ 182]:*

Գրուած է թղթի վրայ, ունի 735 թերթ, բոլորգիր է, երկսիւն (մեծութիւնը՝ 27x17), քառածալ (in 4⁰), 43 տող: Հին Կտակարանի բոլոր գրքերն օժտուած են նախադրութիւններով եւ գլխացանկերով: 0² ձեռագրի համեմատ ունեցած տարբերութիւններն են. 1) Եպիփան Կիպրացու Սաղմոսների մեկնութեան նոր հատուածը. 2) 150րդ սաղմոսից յետոյ դրուած են մարգարէների ուրիչ սաղմոսներ [օրհնութիւնները]՝ քաղուած Աստուածաշնչի միւս գրքերից: Մովսէսի, Սամուէլի մայր Աննայի, Եսայիի, Եզեկիա թագաւորի երգերը, Ամբակումի, Մանասէի, Մարիամ Աստուածածնի, Զաքարիայի, Սիմէոն ծերունու, Երեք մանկանց աղօթքները: 3) Ձունի Սիրաքի գիրքը: 4) Ունի Յուլիանոս Աղիկառնիեցու Յոբի մեկնութիւնը: 5) Եսայիի, Երեմիայի եւ Եզեկիէլի մահերը: 6) Դանիէլը դրուած է Երեմիայից յետոյ: Վերջում՝ «Աւետարանացոյց եւ այլ խրատք բովանդակ տա[ւոյն]» (743բ-54բ):

Բազմաթիւ յիշատակարաններից իմանում ենք, որ գրիչը Գէորգ Սկեւռացու աշակերտ Մարտիրոս վարդապետն է, ձեռագիրը գրել է Գռներ վանքում (ի վանս Գռներոյ), այն ժամանակ, երբ Հայոց թագաւորութիւնը չրջապատուած էր թշնամիներով, եւ Հեթում թագաւորը գնաց թաթարական խանից օգնութիւն խնդրելու: Հեթում Ա. թագաւորի մասին նոյնը հաղորդուել է M_o (Հմր 2) ձեռագրում, սակայն երկու յիշատակարանն էլ իրարից անկախ են: Ձեռագիրը նորոգուել է 1658 թուականին՝ Էջմիածնի վանքում:

15. *K. Հմր 15. ՁԺԷ. - 1308. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 160. Դանիէլի ցուցակի Հմր 154, էջ 10*[270] *[Մ 183]: Գրուած է հաստ թղթի վրայ, բաղկացած է 573 թերթից, բոլորգիր է, երկսիւն (25x16,5), քառածալ (in 4⁰): Գրչի անունը կարապետ է, իսկ վերջին տիրոջը՝ Առաքել եպիսկոպոս Տարսոնացի: Հին Կտակարանի բնագրի մեծ մասը պակասում է. 1-23 գրքերը չկան, մնացել են նրանց նախադրութիւնները եւ գլխացանկերը՝ գրուած միատեղ, յաջորդաբար: Արժանի են նշանակուելու. 1) Հին Կտակարանի*

կանութիւն, 7) Աւետարան, գրուած 1472 թ., Ռստակէսի կաթողիկոսութեան օրօք, 8) Սաղմոսարան, 1640 թ. գրուած Ալեքսան վարդապետի ձեռքով, Փիլիպոսի կաթողիկոսութեան եւ շահ Սաֆի Ղզլբաշի ժամանակ, 9) Աւետարան, գրուած 1671 թ., 10) Անյայտ ձեռագիր, 11) Աւետարան, գրուած 1656 թ., Յովհաննէս գրչի ձեռքով, Կոստանդնուպոլսում, Յակոբ կաթողիկոսի ժամանակ, Մուհամմեդ սուլթանի օրօք, 12) Աւետարան գրուած 1337 թ., 13) Վարք սուրբ հարանց. ըստ գրչութեան ենթադրելի է, որ գրուել է ԺԳ. եւ ԺԴ. դդ. միջեւ. իր մէջ ամփոփում է բազմաթիւ պատմական տեղեկութիւններ:

269 **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 126:

270 **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 127:

բառերի Վանական վարդապետի այլաբանական բացատրութիւնը: 2) Մանասէ թագաւորի աղօթքը: 3) Յոբի գրքի՝ Յուլիանոսի եւ Սամուէլ վարդապետի մեկնութիւնները: 4) Դանիէլ մարգարէի մահը: 5) Յովհաննու Հանգիստը: 6) Հին եւ Նոր Կտակարանների գրքերի ցանկը եւ ամէն գրքի տների քանակը[271]*:*

16. *Kj. Հ՟Ր 16. ՋԿԶ. - 1317. Էջմիածնի վանքի ձեռագիր Հ՟Ր 181, Դանիէլի ցուցակի Հ՟Ր 175, էջ 18 [Մ 353]: Գրուած է թղթի վրայ, 680 թերթ է, բոլորգիր (չափսը՝ 25x17), քառածալ (in 4⁰), երկսիւն, 47 տող: Գրիչը եղել է Կիրակոս րաբունին, նրան օգնել է իր զարմիկը՝ Յովհաննէս սարկաւագը, իսկ կազմել է Ոլստակէս կրօնաւորը՝ 1615 թուականին՝ Մաղարթայ գաւառի Սուրբ Ստեփանոս Նախավկայի վանքում:*

Բնագիրը O^2-ի հետ համեմատած ունի հետեւեալ տարբերութիւնները. 1) Որոշ գրքեր ունեն նախադրութիւններ եւ գլխացանկեր, իսկ միւսները՝ ոչ. 2) Յոբի գիրքը գրուած է Մակաբայեցւոց գրքերից յետոյ. ուշ ժամանակի ձեռագրերում այս կարգը յաճախ է հանդիպում: 3) Մանասէի աղօթքը. 4) Յովհաննու Հանգիստը. 5) Կտակք ԺՒ. նահապետաց:

17. *Ez. Հ՟Ր 17. ՋԿԸ. - 1318. Էջմիածնի վանքի ձեռագիր Հ՟Ր182 եւ Դանիէլի ցուցակի Հ՟Ր 176 [Մ 206]:*

Գրուած է 589 թերթ լաւ մագաղաթի վրայ, երկսիւն (26,2x19), քառածալ (in 4⁰), բոլորգիր, տողերի քանակը՝ 25: Ամբողջ ձեռագիրը զարդարուած է չքեղ նախչազարդերով, սկզբնատառերով, գլխազարդերով եւ մանրանկարներով: Աւետարանի համարեա իւրաքանչիւր էջի լուսանցներում կայ մէկ կամ մի քանի մանրանկար՝ բովանդակութեանը համապատասխան: Այս ձեռագրի գրիչը եղել է ԺԳ. դարի յատնի գրող Յովհաննէս վարդապետ Երզնկացին կամ Ծործորեցին: Նա իր կեանքում շատ է ճամփորդել եւ անձնական կապեր է ունեցել Արեւելեան Հայաստանի եւ Կիլիկիայի յայտնի մատենագիրների հետ[272]*. երկար ժամանակ ապրել է Սեպուհ լեռան Լուսաւորչի վանքում, Մանեայ այրում, որտեղ էլ նա ըստ ամենայնի ծանօթացել է մեր MN ձեռագրին, սակայն չի երեւում, թէ նրանից է պատճէնել իր օրինակը:*

O^2-ի համեմատ տարբերութիւնն այն է, որ Նոր Կտակարանի գրքերն այլ հերթականութիւն ունեն՝ 4 Աւետարան, Յայտնութիւն, Գործք, Է. Կաթողիկեայ Թուղթք, Աղերս Եւթաղի եւ Թուղթք Պօղոսի:

---

[271] Այս ցանկը մենք բերում ենք առանձին՝ «Սուրբ գրքի հայկական կանոնը» գլխում *[573ա «Վասն տանց համարոյ Հին եւ Նոր Կտակարանաց - Ծննդոց գիրքն՝ տուն ՏՁԷ. (4307)... Փիլիմոնին՝ ԽԸ. (48)»]:

[272] **Զարբհ.**, Պատմ. հայ դպր., 1897, էջ 734-767:

Յիշատակարաններում Յովհաննէսը յիշում է իր ուսուցիչ Եսայի եպիսկոպոսին:

18. *SK³. Հմր 18. ՋԿԸ. - 1319. Ձեռագիր Վենետիկի մխիթարեանների*[273] *[Վնտկի Հմր 1508/1]*[274]*: Գրուած է 540 թերթ լաւ մագաղաթի վրայ, բոլորգիր է, քառածալ (in 4º), 53 տող: Գրիչը եղել է Յովհաննէսը, տէրը՝ Սարգիս Պիծակը: Բնագիրը համընկնում է 0²-ի հետ, տարբերւում է մի քանի յաւելումներով. 1) Բոլոր գրքերը նախագրութիւններ եւ գլխացանկեր ունեն. 2) Զունի Սիրաքի գիրքը, որը Զօհրապեանն իր հրատարակութեան համար վերցրել է ուրիշ ձեռագրից. 3) Ունի՝ Եսայի, Երեմիա եւ Եզեկիէլ մարգարէների մահերը. 4) Գէորգ վարդապետի՝ Աստուածաշնչի առաջին ինը գրքերին նուիրուած չափածոները: Զօհրապեանն իր հրատարակութեան հիմք է ընդունել այս ձեռագիրը:*

19. *Ja. Հմր 19. [ՋՀԶ-ՋՉԹ.] - 1327-1340. Էջմիածնի վանքի ձեռագիր 359 Գ [Մ 2627]: Գրուած է 544 թերթ լաւ մագաղաթի վրայ. չափսը՝ 23,5x16,5, երկսիւն, 52 տող, մանր բոլորգիր: Գրիչը Սարգիս քահանան է. գրել է Յակոբ կաթողիկոսի համար: Ձեռագիրը հարուստ եւ ճաշակով զարդարուած է մանրանկարներով, զարդանկարներով, խորաններով, կիսախորաններով եւ հրաշալի սկզբնատառ զարդագրերով, յիշատակարանների թիւը հասնում է 25ի, մի քանիսը չատ հետաքրքիր են: Այս ձեռագիրն արտաքին տեսքով, գրով եւ մանրանկարներով չատ նման է Ստեփանոս քահանայի (St¹) եւ Հեթում թագաւորի (H) օրինակութիւններին:*

---

[273] **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 129-141: Յուցակ Վենետիկի Ս. Գրոց.- Բազմավէպ, 1891, էջ 33 (32-40). Աստուածաշունչ Զօհրապեանի, առաջաբան էջ 5, 6: **Ղ. Ալիշան**, Սիսուան, էջ 235, 236. իսկ մանրանկարիչ Սարգիս Պիծակի մասին՝ էջ 475-517. Անկանոնք ՀԿի, առաջաբան, էջ ԺԳ.: Առ այսօր Վենետիկի մխիթարեանները չեն հրատարակել իրենց բազմաթիւ ձեռագրերի ցուցակը: Զօհրապեանը յիշատակում եւ նկարագրում է Աստուածաշնչի 8 ձեռագիր, իսկ Զարբհանալեանը՝ 13, ընդ որում՝ նա մանրամասն բերում է այդ ցուցակի միայն SK³ բնագիրը, իսկ միւսների մասին նրա հաղորդումները սահմանափակւում են մի քանի յիշատակարան բերելով: Կան միաւորներ, որոնց մասին նա չի էլ յիշատակում. օրինակ՝ Հմրք 2, 3 (որոնք նոր են եւ հետաքրքիր չեն, ասում է նա), 5, 7, 10 եւ 11: 1891 թուականին մխիթարեանները ձեռնարկեցին ցուցակի մաս մաս հրապարակումը, եւ հրատարակեցին Աստուածաշնչի չորս ձեռագրի նկարագրութիւն «Բազմավէպ» ամսագրում, սակայն, դժբախտաբար դրանով էլ վերջացրին: Նրանց ձեռագրերից մի քանիսի մասին համառօտ տեղեկութիւններ կան Անկանոնք ՀԿ եւ Անկանոնք ՆԿ ժողովածուների առաջաբաններում (Վենետիկ 1896 եւ 1898), ինչպէս նաեւ Ալիշանի յայտնի աշխատութիւններում՝ Սիսուանում, Սիսականում՝ Սիսական. Տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ, Ս. Ղազար, 1893, Թ, 563 էջ, եւ Այրարատում՝ Այրարատ. Բնաշխարհ Հայաստանեայց, Տեղագրեաց Հ. Ղ. Վ. Ա., Ի Նաւասարդս Գ. շրջանի Հայկին, Վենետիկ, Ս. Ղազար, 1890, ՌՃԼԹ., Ը., 590 երկսիւն էջ:

[274*] Վենետիկի Մխիթարեանց մատենադարանի ձեռագրերի կոտորակային համարների համարիչը գոյքահամարն է, յայտարարը՝ ձեռագրացուցակի համարը:

Բնագիրը համապատասխանում է O^2-ին: Նոր են՝ Սողոմոնի գրքերի Ներսէսի չափածոները, 12 առաքեալների մահերը եւ Յովհաննու Հանգիստը: Քանի որ չկայ գլխաւոր յիշատակարանը՝ թուականով, ուստի ձեռագրի գրուելու ժամանակը կարող ենք որոշել մօտաւորապէս: Ոմն Աւետիք վարդապետ Դարանաղի գաւառից՝ վերջին տէրը, 1425 թուականին այն գնել է Եզեկիէլ սարկաւագից, որն իբր ժառանգութիւն այն ստացել էր Գէորգ եպիսկոպոսից: Առաջին տէրը եղել է Յակոբ կաթողիկոսը: Մինչեւ 1425 թուականը այդ անունով երկու կաթողիկոս են եղել. Յակոբ առաջինը՝ 1268-1286 թթ. եւ Յակոբ երկրորդը՝ 1327-1340 թթ.: Առաջինի կաթողիկոսութեան ժամանակ մեր Աստուածաշունչը գրուած լինել չէր կարող, քանի որ այն ժամանակ նրա մէջ չէին կարող լինել գլխացանկերը եւ նախադրութիւնները. մնում է ենթադրել, որ ձեռագիրը գրուած է Յակոբ երկրորդի օրօք, որ հաստատւում է մէկ այլ փաստով: Ծաղկողն իրեն կոչում է Սարգիս քահանայ. եւ իրօք՝ Յակոբ երկրորդի օրօք որպէս ծաղկող երեւելի էր Պիծակ մականունով Սարգիսը, որից այս ձեռագրից բացի մնացել են նաեւ նախորդ համարը եւ հրաշալի մանրանկարներով 1325-1331 թուականների երկու ձեռագիր Աւետարան[275]*: Հետեւաբար մեր ձեռագիրը ժամանակով պէտք է վերագրենք 1327-1340 թուականներին՝ Յակոբ երկրորդ կաթողիկոսի ժամանակին*[276]**:*

20. *V^2. Հ^{մր} 20. ՁՁԱ. - 1332. ձեռագիր Վենետիկի մխիթարեանների. ըստ Բազմավէպի Հ^{մր} 4 եւ մատենադարանի Հ^{մր} 1007[/12]*[277]*: Գրուած է թղթի վրայ՝ բոլորգրով (չափսը՝ 23x15). գրիչներն են՝ Ներսէս աբեղան, Դաւիթը եւ Եփրեմ քահանան՝ Ներսէս եպիսկոպոսի համար:*

Բազմավէպում Հին Կտակարանի մասին ոչինչ չի ասուած, իսկ Նոր Կտակարանը այսպիսի կարգ ունի. 4 Աւետարաններ, Յայտնութիւն, Հան-

275 **Ղ. Ալիշան**, Սիսուան, էջ 235-236:

276* Ըստ նոր նկատուած յիշատակագրութեան՝ գրչութեան տարին համարւում է 1338^{թ}., 87բ (ստ. լս.) «Յաւրս ՋԾ. (=վեցշաբաթին), յամիս յունիս ԻԶ., ՁՁԷ. (1338) եդին Բ. մարդ ի մեքենայս եւ չարաչար սատակեցան, վասն զի զաl88ահաշխարհս եւ զբերդն *Սիսոյ* ծախեալ էին անաւրինաց գաղտաբար, եւ աւրս էր կէտ եդեալ վնասու նոցա: Վա՛յ զիրենք». տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Ը., Ձեռագիրք 2401-2700, խմբագրութեամբ՝ Գէորգ Տէր-Վարդանեանի, Յանկերը կազմեց՝ Վարդան Դեւրիկեան, Երեւան, «Նայիրի» հրատ., 2013, էջ 799-800:

277 Ցուցակ Վենետիկի Ս. Գրոց.- Բազմավէպ, 1891, էջ 130-134. այս ձեռագրի նկարագրութիւնը Զարբհանալեանը տալիս է որպէս Հ^{մր} 12՝ էջ 147-150, իսկ Հ^{մր} 4ի ներքոյ (էջ 141) նշում է Ղազար Բաբերդացու մի օրինակ՝ LB^2. Զարբհանալեանը, ինչպէս նաեւ Բազմավեպում ցուցակը կազմողը եւ Անկանոնների նորագոյն հրատարակիչը, աշխատելով նոյն վանքում, կարծես ծանօթ չեն եղել մէկմէկու աշխատանքներին. նրանցից իւրաքանչիւրը նոյն ձեռագիրը նկարագրում է ինքնուրոյն, ունի իր համարը, եւ յաճախ դժուար է նրանց նկարագրած ձեռագրերը մէկը միւսի հետ նոյնականացնելը:

գիստ, Գործք, Է. Թուղթք, Աղերս Եւթաղի, եւ [Թուղթք] Պօղոսի, եւ վերջում, որպէս յաւելում՝ «Պատարագամատոյց»:

«Ստացողն Ներսէս՝ եթէ չէ համանունն Պաղոնց կամ Պալիեանց, այլ մի է ի Միաբանելոցն կամ յՈւնիթորաց, զայս կ՛ակնարկեն բացայայտ վարդապատուիթիւնն բղխման Հոգւոյն Սրբոյ» [ի Պատարագամատուցի], այս կարծիքն արտայայտել է ձեռագիրը Բազմավէպում (էջ 134) նկարագրողը:

Ձարբհանալեանը բերում է չորս յիշատակարան, որոնք բերուած են նաեւ Բազմավէպում եւ որոնք պատմական նշանակութիւն ունեն: Առաջին յիշատակարանում կարդում ենք, որ Վահրամի որդի Ներսէս վարդապետը, Տարօն նահանգից եւ Սասուն գաւառից, Ղազարի վանքի միաբան, մտադրուելով ձեռք բերել Աստուածաշնչի օրինակ, ունեւոր մարդկանցից խնդրեց եւ ստացաւ դրամական նպաստ, Թաւրիզում գնեց մագաղաթ [= թուղթ], Գայլաձորի վանքում պայմանաւորուեց վանական երկու գրիչների հետ եւ նրանց հանձնարարեց ձեռագիրը գրել 1400 դրամով, սակայն այն ստանալիս նա պէտք է լրացուցիչ վճարեր եւս 300 դրամ: Աշխատանքն աւարտուեց 1330 թուականին: Միւս յիշատակարաններում հաղորդւում է, թէ ում ձեռքն է ընկել ձեռագիրը: 1471 թուականին մահմեդականները խիստ հալածանքների ենթարկեցին Տարօնի բնակիչներին, եւ Սուրբ Առաքեալոց վանքի վանականները Աստուածաշունչը միւս ձեռագրերի եւ եկեղեցական իրեղէնների հետ միասին թաղեցին հողի մէջ, որից էլ Աստուածաշունչը խիստ վնասուել է: 1478 թուականին Պօղոս վարդապետը նորոգել տուեց ձեռագրի վնասուած մասերը: Նոյնպիսի խիստ հալածանք կրկնուեց նաեւ 1539 թուականին:

21. *V³. Հմր 21. ՁՂ. - 1341. ձեռագիր Վենետիկի մխիթարեանների. Ձարբհանալեանի Հմր 8, Բազմավէպ, Հմր 5, իսկ մատենադարանի՝ Հմր 935[/8][278]: Գրուած է թղթի վրայ, 635 թերթ. երկսիւն (24x17), քառածալ (in 4⁰), 35 տող, լաւ բոլորգիր: Առաջին գրչի անունը Կարապետ է, իսկ Առակաց գիրքը գրել է Մովսէս վարդապետը. նկարչի անունը Աւագ դպիր է: Առաջին տէրը եղել է Գրիգոր քահանան, որն այն ձեռք է բերել 1341 թուականին[279], Սուլթանէ քաղաքում, որտեղ կառավարիչը Շեխ Հասանն էր, հայոց հիւպատոս եւ սպարապետը՝ Բիւրթէլը, իսկ եպիսկոպոսը՝ Սարգիսը: Այ-*

[278] **Ձարբհ.**, ՄՀԹՆ, էջ 145-146. Ցուցակ Վենետիկի Ս. Գրոց.- Բազմավէպ, 1891, էջ 209-214, Անկանոնք ՀԿ-ի, էջ ԺԲ.:

[279] Ձարբհանալեանը՝ ՄՀԹՆ, էջ 145-146, տարեթիւը ճիշտ չի նշել. ԶՂ. - 1541՝ ՁՂ. - 1341-ի փոխարէն. դժբախտաբար նրա մօտ տարեթուերի այսպիսի սխալները բաւական յաճախ են. մեր ձեռագրի ճշգրիտ թուականը՝ Անկանոնք ՀԿ-ի, էջ ԺԴ. եւ Բազմավէպ, էջ 209:

նուհետեւ 1354 թուականին Գրիգորի որդի Եփրեմ քահանան իր ձեռագիրը նուիրել է Վարագայ վանքի Սուրբ Խաչ եկեղեցուն, որ պատահել է Հայոց Մխիթար կաթողիկոսի հայրապետութեան օրօք: Եւ [538բ] «Աստուած ողորմի Մովսէս վարդապետին Մեծոփայ վանաց եւ իւր ծնողացն, որ ի ՊԴ. (1355) թվականին զգիրս Առակաց գրեաց ի սուրբ ուխտն Վարագ»: Այնուհետեւ ձեռագիրը ձեռք է բերում Տաթեւի վանքի միաբան Գրիգոր քահանան, Տաթեւում այն մնաց մինչեւ 1642 թուականը: Նրա բովանդակութեան մասին մենք միայն գիտենք, որ այն ունի Դանիէլի եօթներորդ տեսիլ անկանոնը:

22. *AS. Հ՟ր 22. ՊԺԵ. - 1366. Էջմիածնի վանքի ձեռագիր Հ՟ր 357 Գ [Մ 2705]: Գրուած է լաւ մագաղաթի վրայ, 490 թերթ, երկսիւն (29x21), քառածալ (in 4^0), 25 տող: Գեղեցիկ բոլորգիր է. բաւական չատ են խորանները եւ կիսախորանները՝ բոլորը վառ գոյներով եւ ոսկով: Սաղմոսները եւ Նոր Կտակարանը, բացի Յայտնութիւնից, գրել է Առաքել աբեղան՝ Ֆռանկների երկրում՝ Բոլոնիա քաղաքում, իսկ Թերութիւնները Ղրիմի Կազարիա քաղաքում լրացրել է Նատերի որդի Ստեփանոսը:*

Բնագիրը ըստ 0^2-ի է. տարբերութիւնը՝ Դանիէլը յաջորդում է երեմիային. չունի ո՛չ գլխացանկեր, ո՛չ նախադրութիւններ, փոխարէնը բովանդակում է Ներսէս Շնորհալու՝ Սողոմոնի եւ մարգարէների գրքերին նուիրուած չափածոները: Հին Կտակարանի վերջում կայ մի բնագիր այն մասին, թէ՝ «Քանի անգամ Աստուած խօսեց մարդկանց հետ» [332ա «Խաւսեցաւ Աստուած ընդ Ադամայ Է. անգամ եւ ընդ Եւայի Գ. անգամ, ընդ Կայենի Դ... ընդ Զաքարիաս ՃԹ., ընդ Մաղաքիաս ԻԲ.»]: Նոր Կտակարանի մասում կայ Յովհաննու Հանգիստը եւ Աստուածաշնչի բառերի՝ Վանական վարդապետի այլաբանական բացատրութիւնը:

Կան մի քանի չատ ընդարձակ եւ հետաքրքիր յիշատակարաններ: Նրանցից մենք իմանում ենք, որ հիւսիսի թեմական առաջնորդ Գրիգոր եպիսկոպոսը 1660 թուականին նորոգել է այս Աստուածաշունչը [193բ «վերստին նորոգեաց զԳիրքս Սուրբ եւ զտառս Հնոց կտակարանաց, զոր եղծեալ եւ ջնջեալ էր յանփոյթ ըմբռնողաց»], ընդ որում՝ յիշատակուած են Կաֆա (Թեոդոսիա) քաղաքի հոգեւորականների եւ երեւելի քաղաքացիների անուններ: Մի յիշատակարանում հաղորդւում է Սարկաւագ վարդապետի կողմից Սաղմոսների սրբագրման մասին. մէկ այլ յիշատակարանում առաջին գրիչը գովաբանում է Յովհաննէս եպիսկոպոսին, որը լինելով գիտելիքների հովանաւոր, «Որ եւ ժողովեալ գրեանս բազում մեկնչաց ի սրբոց հարանց բացայայտեալ զբոլոր Աստուածաշունչ գրոց մեկնութիւնս, եւ զի գրասէր գոլով ստացաւ զամենայն գրեալսն եւ անյագ փափագմամբ

ընթեռնոյր, ուսանէր եւ ուսուցանէր ո՛չ միայն բանիւ, այլեւ արդեամբք ի գործ բերեալ արձանացուցանէր զուսեալսն ի գրելոց սրբոց»: Նա ինքն իր վանքում հիմնել է նոր հրաշալի եկեղեցի, եւ կառուցման ժամանակ նրան օգնել է նրա եղբայր Ղազարը:

Ձեռագիրը Ղրիմում մնացել է մինչեւ տեղացի հայերի վերաբնակեցումը Ռուսաստանի տարածք՝ Դոնի Նախիջեւան: Այդ ժամանակ՝ 1790 թուականին այն ձեռք բերեց Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ՝ Յովսէփ արքեպիսկոպոս, հետագայում՝ կաթողիկոս, Արղուէթեան-Երկայնաբազուկ իշխանը, իսկ նրա մահից յետոյ այն արդէն պատկանել է էջմիածնի մատենադարանին:

23. *WM[1]. Հմր 23. ՊԺԸ. - 1368. Աստուածաչունչ Վիեննայի մխիթարեանների Հմր 55[280]: Գրուած է 28x18,5 չափսի թղթի 588 թերթի վրայ. երկսիւն, 47 տող, բոլորգիր, բազմաթիւ զարդերով եւ մանրանկարներով. 1368 թուականից առաջ՝ Յովհաննէս եպիսկոպոս Ամեցին գրել է Անիում, Մանուէլ Բջնեցի եպիսկոպոսի համար:*

Ամբողջական Աստուածաչունչ է՝ նախադրութիւններով եւ գլխացանկերով. Մակաբայեցւոց գրքերին յաջորդում է Յոբի գիրքը՝ Յուլիանոս եպիսկոպոս Ալեքսանդրացու առաջաբանով, ընդ որում՝ մեզ յայտնի բոլոր ձեռագրերում նա կոչւում է Հալիկառնացի: Երեմիա մարգարէին յաջորդում է Դանիէլը, որն ունի անկանոն եօթներորդ տեսիլը[281]: Նոր Կտակարանի մասում, չորս Աւետարաններին յաջորդում են՝ Յայտնութիւնը եւ Հանդիսաը, Գործք առաքելոցը, Կաթողիկեայ է. Թուղթք, Աղերս Եւթաղի, Թուղթք Պօղոսի, վերջում Առ Կորնթացիս Գ. Թուղթը:

24. *Su. Հմր 24. ՊԻ. - 1371. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 180, Դանիէլի ցուցակի Հմր 174 [Մ 352]:*

Գրուած է 409 թերթ հաստ թղթի վրայ, երկսիւն (31,3x22), քառածալ (in 4[0]), 53 տող. բոլորգիր, ունի բազմաթիւ ճակատազարդեր: Այսպէս կոչուած ֆռանկի համարների մասին մենք փոքր նշում-բացատրութիւն ենք գտնում այս ձեռագրում պահպանուած հետեւեալ յիշատակագրութեան մէջ.

[1բ] «Համար Ֆռանկին, որ Ջամբիստր[1] կոչեն, որ ի վերայ ամենայն Աստուածաչնչին ճապաղած է, ես՝ Հեթումս, որ եւ Յովհաննէս կոչիմ, բազում [աչխա]տութեամբ փոխեցի առ ի դիւրաւ գտանելոյ, եթէ բան ինչ

[280] Մխիթարեանների ձեռագրական մատենադարանն ունի 573 միաւոր եւ օրինակելի ցուցակ՝ գերմաներէն եւ հայերէն լեզուներով, որ 1895 թուականին հրատարակել է՝ Տաշեան, Ցուցակ. մեր ձեռագրի նկարագրութիւնը՝ էջ 253-260:

[281] Այն հրատարակել է ՀՀ. Գրիգոր Գալէմքեարեանը՝ Die siebente Vision Daniels, von Grigoris Dr. Kalemkia, Wien, 1892:

իցէ յերկոցունցն միջի: Արդ, գլուխ Ծննդոցն ունի համարս[2] [282] Ծ. (50): Ուր Ցէ եւ Ռա կա՝ ֆռանգին է: Օգնեա՛յ, Աստուած իմ»:

Այս Աստուածաշունչը Գրիգոր քահանայ Թորոսեանցը գրել է իր համար՝ Սուրղաթ քաղաքում, այնուհետեւ 1669 թուականին այն ձեռք բերեցին երկու վաճառականներ՝ Հախնազարը եւ Մովսէսը, Էրզրումում վերակազմելու են տուել եւ որպէս յատկենական յիշատակ նուիրել են Արաքսի ափին գտնուող Ստեփաննոս Նախավկայի վանքին:

Բնագիրն 0^2-ի համեմատ ունի հետեւեալ տարբերութիւնները. 1) 2, 3 գրքերը չունեն նախադրութիւններ եւ գլխացանկեր: 2) 1-8 գրքերը ունեն Գէորգի չափածոները: 3) 20րդ գրքին յաջորդում է 30րդը (Յոբը), 25-29 (Սողոմոնի գրքերը), Սիրաքի իմաստութիւնը, 24 (Սաղմոսներ), 31 (Եսայի), 33 (Դանիէլ), 32 (Փոքր մարգարէք), 34-37 (Երեմիա), 38 (Եզեկիէլ), 21-23 (Գիրք Մակաբայեցւոց):

Այսպիսի խառնաչփոթը, ամենայն հաւանականութեամբ, կատարուել է կազմելու ժամանակ, կամ էլ պէտք է մտածել, թէ այն գրել են մաս առ մաս՝ ինչպէս պատահել է, եւ յետոյ միացրել են իրար: Օրինակ Յոբի եւ Եսայիի նախադրութիւնները գրուած են միասին՝ Յոբի գրքից առաջ: Հին կտակարանի վերջում գրուած է [310ը «Քանի՞ցս անգամ խօսեցաւ Աստուած ընդ հարսն ամենայն] - Խաւսեցաւ Աստուած ընդ Ադամա է.ան ժամ... ընդ Մաղաքիաս՝ Իբ.] բնագիրը: Նոր Կտակարանում Յայտնութիւնը գրուած է չորս Աւետարաններից յետոյ:

Վերջում կայ՝ Ա. Աստուածաշնչի Ծագումնաբանութիւնը՝ Գաւազան գիրքը [398ա-405ա [Գրիգորի Թորոսանց Ազգատոհմ սուրբ հարց եւ գործք նոցա] - Ջմիտս Աստուածաշունչ գրոց... Ի Լ. (30) ամի թագաւորութեանն Հէրովդէսի, ի գիշերի յաւուր կիր[ակէի], ստոյնե՝ ի հինգշաբթի], եւ Բ. Ներսէս Լամբրոնացու Յայտնութիւնը:

25. *Ch. Հմր 25. ՊԼ Գ. - 1384. ձեռագիր Էջմիածնի մատենադարանի Խաչիկ վարդապետի հաւաքածուի [Մ 4113]*[283]**: Գրուած է թղթի վրայ, բոլորգրով, Յակոբ կրօնաւորի ձեռքով:*

Ունի. 1) Գէորգ կրօնաւորի տաղերը: 2) Յոբի գիրքը Սաղմոսներից առաջ: 3) Եսայիի մահը: 4) Կարգը՝ Երեմիա, Եզեկիէլ, Դանիէլ եւ ԺԲ. մարգարէք: 5) Հանգիստը Հին Կտակարանի վերջում:

Այս ձեռագրում եւս կայ Հեթում-Յովհաննէսի նշումը՝ հայերէն Աստուածաշնչում ֆռանկի համարների կիրառութեան մասին, որի տարբերութերցումները նշել ենք նախորդ ձեռագրի նկարագրութեան մէջ: Մենք

[282] [1] Ch. Ֆռանգին զոր ջաբիստր , [2] Ch. Համար ունի:

[283*] Տե՛ս **Յ. Թօփճեան,** Ցուցակ ձեռագրաց Դադեան Խաչիկ վարդապետի, ժողոված 1878-1898, մասն Ա., Վաղարշապատ, 1898, էջ 3-5:

որեւէ տեղ այս նշումը տպագրուած չենք գտել, չնայած նրա մասին վկայութիւն կայ (տե՛ս Ներածութիւն, ծնթ. 95-96):

26. *Sch. Հ^{մր} 26. ՊԼԹ.-ՊԽԹ. = 1390-1400. Էջմիածնի վանքի ձեռագիր Հ^{մր} 161. Դանիէլի ցուցակի 155, էջ 10*[284] *[Մ 346]:*

Գրուած է 599 թերթ լաւ թղթի վրայ, երկսիւն (27,5x18,5), քառածալ (in 4^{0}), 48 տող, չատ գեղեցիկ բոլորգրով: Զարդարանք, խորաններ եւ կիսախորաններ չատ ունի:

Հին կատակարանի Բնագիրը՝ 1) 1-3 գրքերը նախադրութիւններ եւ գլխացանկեր չունեն, 2) Ծննդոց գրքից յետոյ՝ ա) Կտակք ԺԲ. նահապետաց, բ) Յովսէփի կին Ասանէթի պատմութիւնը [36ա-41բ Պատմութիւն Ասանեթայ՝ կնոջն Յովսէփայ]. 3) Սաղմոսների վերջում Մանասէ թագաւորի աղօթքը. 4) Սիրաքի գիրքը ունի վերջում՝ Խրատք իմաստնոց, 5) Մահ Եսայեայ մարգարէի, 6) ա) Ներսէսի եպիսկոպոս Տարսոնի՝ ԺԲ. մարգարէից մեկնութեան հատուած, բ) Հատուած երեմիա մարգարէի մեկնութիւնից՝ ըստ Մխիթար վարդապետի (Գօշի), գ) Հատուած Դանիէլ մարգարէի մեկնութիւնից՝ ըստ Վարդան վարդապետի, դ) Հատուած Եզեկիէլ մարգարէի մեկնութիւնից՝ ըստ Եսայի վարդապետի: 7) Մահք Դանիէլի եւ Եզեկիէլի:

Նոր Կտակարանն ունի գրքերի հետեւեալ կարգը. 4 Աւետարաններ, Թուղթք Պօղոսի, Գործք առաքելոց, Թուղթք կաթողիկեայք, Աղերս եւ-թաղի, Յայտնութիւն եւ Հանգիստ: Պօղոսի Թղթերը սկզբում ունեն Եփրեմ Ասորու մեկնութեան հատուած Առ Կորնթացիս Գ. Թղթի[285]*: Այս բոլոր հատուածները նշուած հեղինակների մեկնութիւնների նախաբաններն են, բացի Եփրեմ Ասորու մեկնութիւնից*[286]*:*

Ձեռագիրը գրուած է Յովհաննէս եպիսկոպոսի համար՝ յանապատս Նոր շինայ, որ նաեւ կոչւում է Մանուկ Սուրբ Նշան. գրիչը եղել է Պետրոս աբեղան, սակայն նրան օգնել են ուրիշները. Ամիր Մուլքը նուիրել է թուղթը, Մովսէսը կոկել է թուղթը. Մկրտիչ քահանան նկարել է մանրանկարները եւ զարդանկարները: Եւ քանի որ Պետրոս սարկաւագը չի աւարտել աշխատանքը, 10 տարի անց Հիզան քաղաքում այն չարունակել է Յովհաննէս քահանան, այն ժամանակ, երբ Լէնկ Թեմուրի վայրի յորդա-

---

284 **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 127:

285 Այս բոլոր հատուածները հանդիպում են նաեւ Վիեննայի արքայական գրադարանի մի ձեռագրում, այն է՝ Cod. Arm. 11, մեր շարքի՝ Հ^{մր} 33 Wk:

286 Ն. Լամբրոնացու մեկնութեան մասին տե՛ս **Զարբհ.**, Պատմ. հայ դպր., 1897, էջ 657. Մխիթար Գօշի՝ էջ 197. Վարդանի՝ էջ 741. Եսայիի՝ էջ 766. **Սրբոյն Եփրեմի** Մատենագրութիւնք, Հատոր երրորդ. Մեկնութիւն չորեքտասան թղթոցն Պաւղոսի, Վենետիկ, Ս. Ղազար, 1836, էջ 116-124 (265 էջ):

ները աւերելով Հայաստանը, յարձակուեցին Վրաստանի վրայ:

Հետագայում ձեռագիրը ձեռք է բերել Մովսէս վարդապետը. նա, ինչպէս ասւում է մի յիշատակարանում՝ [556ա] «բազում աշխատութեամբ չինեաց յանապատն Շատիկայ, որ բազում ժամանակաց քակտեալ եւ աւերեալ կայր. միայն փոքրիկ եկեղեցի մի կայր, Բ. կողմն հանգած, զի այն էր միայն: Արդ, չինեաց յեկեղեցիս եւ հաստատեաց զկարգ աղօթից եւ ժողովեաց բազում միաբանս՝ Ղ. (90) աւելի եւ ոչ պակաս, զկարգ եւ զսահմանս նոցա հաստատեաց եւ չինեաց զԳ. ճաղացս, եւ բազում մուլքս էառ եւ չինեաց զԲ. կարմունջս՝ մէկն եղեգաց գետուն վրայ եւ մէկն՝ բուն գետոյն, որ նորա վարձն վարպետներոյն խօճա Մարգարէն չնորհեց: Խնդրեմք ի Քրիստոսէ, որ եւ նորա հոգին լուսաւորեսցէ. ամէն»:

27. *Min. Հմր 27. ՊԽԴ. - 1395. ձեռագիր՝ մասնաւոր սեփականութիւն: 1880 թուականին այն եղել է Կոստանդնուպոլսում, Վահան վարդապետ Տէր-Միճասեանի մօտ: Նրա մասին տեղեկութիւն մենք գտնում ենք «Նոտարք Հայոց» վերնագրով գրքի հեղինակ Ղեւոնդ Փիրղալէմեանի մօտ*[287]*, որը դժբախտաբար բաւարարուել է ձեռագրի գրչութեան թուականը նշելով:*

28. *DJ[1]. Հմր 28. ՊԽԹ. - 1400. էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 162. Դանիէլի ցուցակի Հմր 156, էջ 10*[288] *[Մ 184]:*

Գրուած է թղթի վրայ, 355 թերթ (չափսը՝ 22,5x14,7), երկսիւն: Գիրը սովորական բոլորգիր է, ունի մի քանի մանրանկար, խորաններ եւ ճակատազարդեր: Այն 1400 թուականին գրել է դոմինիկեան ֆրա Յովհաննէսը՝ Խաչատուր քահանայի համար: Ունի 15 յիշատակարան. դրանք համառօտ տեղեկութիւններ են տալիս Աստուածաշնչի գնի եւ որոշ պատմական տուեալներ՝ Լէնկ Թեմուրի եւ նրա որդի Միրանշահի մասին: Անկասկած՝ ձեռագիր գրուել է Պարսկաստանում, Ուրմիայում, որտեղ ԺԴ. հարիւրամեակում հիմնուել է հայ դոմինիկեանների միաբանութիւն, որը կառավարում էին եւրոպացի կաթոլիկները[289]*: Աւետարանի սկզբում [288ա, 296ա] կայ երկու հատուածի՝ ըստ Մատթէոսի ԺԸ. 1-20-ի եւ ըստ Ղուկասու ԺԶ., 1-8-ի պարսկերէն թարգմանութիւնը՝ հայատառ:*

---

287 Նօտարք հայոց, Կոստանդնուպոլիս, 1882: * Ամէնուր «Փիրղալէմեան»ի փոխարէն գրել է «Փիրղամէլեան» - Ս. Ն.: * Նօտարք հայոց. Հաւաքեալ եւ ի լոյս ածեալ ձեռամբ Ղեւոնդ վարդապետի Փիրղալէմեան Տոսբեցւոյ, Վարագայ վանուց վանականի, Կ. Պոլիս, Տպագր. Նշան Կ. Պէրպէրեան, [1888], էջ 6-7՝ յիշատակարան, որին վերաբերող ծանօթութիւնն է՝ «1880, առ Վահան վ. Տ. Միճասեան»: Յիշատակարանը տե՛ս նաեւ ԺԴ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկեան, Երեւան, 1950, էջ 611-612:

288 **Զարբհ.**, ՄՀԹՆ, *էջ* 127 եւ **Brosset**, Voyage Archéologoque, էջ 33, Հմր 10:

289 **Զարբհ.**, Պատմ. հայ նոր դպր., էջ 194-212:

Բնագիրը սովորական հայկական կանոնն է ըստ՝ 0^2, չնայած կարելի էր սպասել լատինական վուլգատայի ազդեցութեանը. 1) Հին Կտակարանն ունի գլխացանկեր եւ նախադրութիւններ, 2) Սիրաքի գրքից յետոյ դրուած է Եսայիի մարգարէութիւնը, ԺԲ. մարգարէք, Դանիէլ, Եզեկիէլ եւ Երեմիա, 3) Անկանոն՝ Դանիէլի Է. տեսիլը, 4) բոլոր մարգարէների մահերը, 5) Ներսէս Շնորհալու տաղերը Սաղմոսների մասին, 6) Մարգարէների վկայութիւնները Փրկչի մասին:

29. *V^4. Հմր 29. ՊԿԷ.-ՊՀԱ. = 1418-1422. Վենետիկի ձեռագիր Հմր 280, իսկ ըստ Աստուածաշնչի ձեռագրերի թուի՝ Հմր 10^{290}: Գրուած է թղթի վրայ, երկսիւն (6x22°)[291], մաքուր բոլորգրով: Տէրը եղել է ոմն Յովհաննէս վարդապետ, որն իր օրինակը տուել է Մկրտիչ Նաղաշ եպիսկոպոսին, իսկ սա էլ վաճառել է իր աշակերտ Առաքել վարդապետին: Կարապետ գրիչն այս ձեռագիրը գրել սկսել է Խլաթ քաղաքում, 1418-1422 թուականներին: Հին Կտակարանում կան անկանոն գրուածքներ՝ ԺԲ. նահապետների կտակը եւ Ասանէթի պատմութիւնը:*

30. *JT. Հմր 30. ՊՀԱ.-1422. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 184 եւ Դանիելի ցուցակի Հմր 178 [Մ 207]: Գրուած է հաստ թղթի վրայ, 559 թերթ (մեծութիւնը՝ 27x17), երկսիւն, 50 տող. բոլորգիր, սակաւաթիւ կիսախոշորաններով եւ բազում ճակատազարդերով: Գրիչներն են՝ Յովհաննէս վարդապետը, Թումա սարկաւագը եւ Խաչատուր եւ Անդրէաս քահանաները, որոնք այն գրել են 1422 թուականին, տարբեր տեղերում՝ Սաղաթէլ վարդապետի համար. աւարտը եղել է Վան քաղաքի մօտ՝ յայտնի Վարագայ վանքում, իսկ սկիզբը գրուել է Աղթամար կղզում: Բաւական չատ յիշատակարաններ կան. դրանցից մէկում Թումա գրիչը պատմում է, որ յիշեալ Սաղաթէլը Վարագայ վանքի առաջնորդ Յովհաննէս արքեպիսկոպոսից ստացել է այս ձեռագրի մի հատուածը՝ տասը տետր, եւ յետոյ ամբողջ ուժով ձգտել է՝ մասամբ սեփական ձեռքով, մասամբ էլ տարբեր գրիչների օգնութեամբ, լրացրել է պակասող մասերը: Այս եղանակով ստացուած բնագիրը, ակնյայտ է, որ չի կարող առանց մեծ թերութիւնների լինել:*

Ձեռագիրը պարունակում է Սուրբ Գրոց բոլոր մասերը, սակայն գրքերի որոշակի կարգ չկայ. օրինակ, Սաղմոսները գտնւում են Հին Կտակարանի վերջում, Յոբի գիրքը գրուած է Եզեկիէլ մարգարէի գրքից յետոյ. եւ այլն:

---

290 Անկանոնք ՀԿ-ի, էջ Ժ.:

291 Մեզ թւում է Անկանոնք ՀԿ-ի առաջաբանում՝ էջ Թ., չափերն անճիշտ են տրուած: * Իրաւացի է. ձեռագրի չափը 28,2x16 սմ է՝ ըստ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Ա, յօրինեց Հ. Բ. վ. Սարգիսեան՝ Մխիթարեան ուխտէն, Վենետիկ-Սուրբ Ղազար, ՌՅԿԳ. = 1914, էջ 99:

19. Wa. Հմր 31. [ՊՀԴ.] - 1425. ձեռագիր Վան քաղաքում [Մ 2627]: Փիրղալէմեան վարդապետն իր «Նոտարք հայոց» գրքում (էջ 6) յիշատակում է, որ ինքը 1425 թուականին գրուած մի ձեռագիր Աստուածաշունչ է տեսել Վան քաղաքում, հայոց թեմական առաջնորդի տանը: Այլ տեղեկութիւններ նա չի տալիս[292]*:*

31. *Mar. Հմր 32. [ՋԽԱ.] - 1492. Մարմաչէն վանքի ձեռագիր [անյայտ]: Անցեալ 1901 թուականի ամռանը Բաքուում դր. Իօնիսեանը մեզ ցոյց տուեց իր ճամբորդական գրառումները, որոնց մէջ մենք գտանք համառօտ տեղեկութիւն Աստուածաշնչի մի ձեռագրի մասին, որը գտնւում է Կարսի մարզի Մարմաչէն վանքում: Այն գրուած է Յովհաննէսի ձեռքով, Միրան-շահի համար, Թղթի վրայ, 1492 թուականին, «Սանահինի օրինակից»*[293]*:*

32. *Wk. Հմր 33. ՌԾԷ. - 1608. Վիեննայի արքայական գրադարանի ձեռագիր՝ Cod. Armen. 11*[294]*: Գրուած է Թղթի վրայ. 541 թերթ, երկսիւն (21x20), քառածալ (in 4⁰), 37 տող, նոտրգիր*[295]*: Գրիչն Աբրահամ քահանայ Սէչովցին է. ձեռագիրը գրել է Սէչով քաղաքում, Աբրահամ եւ Յակոբ քահանաների համար:*

292* Նոյնն է ընդ Ja. Հմր 19ի. տե՛ս վերը: Նոյն Ղ. վրդ. Փիրղալէմեանն այս ձեռագիրը տեսել է «1866. յուլիս 20. ի Վան, Առաջնորդարան, առ հանգուցեալ Կղեմէս վարդապետ Զուխաճեան Կ. Պոլսեցի» եւ ընդօրինակել հետագայ՝ 1425 թ. ստացող Աւետիք Դարանաղցու յիշատակարանը (էջ 541բ). տե՛ս «Նօտարք հայոց...», էջ 79-80 (այստեղից առել է՝ ԺԵ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, մասն Ա. (1401-1450 թթ.), կազմ.՝ Լ. Խաչիկեան, Երեւան, 1955, էջ 343-4, Հմր 362): Իսկ 1873ին տիկ. Եւգինէն ձեռագիրը գնել եւ նուիրել է իր եղբօրը՝ Գէորգ Դ. կաթողիկոսին (Հմր 43), ապա եւ մտել է Գէորգեան հաւաքածու՝ Հմր 359: Մ. Տէր-Մովսիսեանը գրչութեան եւ հետագայ յիշատակարաններով ձեռագրի նոյնականութիւնը չի նկատել:

293* Այս ձեռագրի մասին գիտենք միայն մեր հեղինակից. գրեթէ նոյնն է նաեւ Աստուածաշունչ ձեռագրերի ամփոփ ցուցակում՝ Մ. Տէր-Մովսիսեան, Ընդհանուր ցուցակ հայերէն ձեռագրաց, Աստուածաշունչ, էջ 200-201. «ՄԷ. ՋԽԱ. - 1492. Մարմաշէն, Ղանլիճա... Տեղեկատու բժիշկ Յովհաննիսեան, գրիչ՝ Յովհաննէս ի վանացն Թաւատեաց, ի գիւղս որ կոչի Գաւառ, ստացող Միրանշահ, արտագրեալ յօրինակէն Սանահինոյ»: Ձեռագիրրս արտայայտուած չէ ի՝ ԺԵ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, Մասն երրորդ (1481-1500 թթ.), կազմեց Լ. Ս. Խաչիկեան, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1967, էջ 185-190՝ 1492 թ. շարքում:

294 Հ. Յ. Տաշեան, Հայերէն ձեռ. Վիեննայի կայս. գր. ի՝ ՀԱ, 1891, էջ 49-51 եւ ցուցակի առանձին հրատարակութիւնը՝ Տաշեան, Ցուցակ Վիեննայի կայս. մատ-ի, 1891, էջ 17-20: Տե՛ս նաեւ Տաշեան, Ցուցակ, գերմաներէն մասը, էջ 71: Ինչպէս իր տեղում (տես ծնթ. 141) ասուած է, եւրոպացիները Holmes and Parson հրատարակութեան մէջ առաջին անգամ այս ձեռագրի հայերէն բնագիրը համեմատեցին՝ հայերէն թարգմանութեան նախօրինակը պարզելու համար:

295 Ամենայն հաւանականութեամբ Լեհաստանում գործածուող նոտրգիրը, որ աւելի նման է բոլորգրի:

Բնագիրն ունի. 1) նախադրութիւններ, 2) Եզրի Գ. գիրքը, 3) Յոբի գիրք՝ Սաղմոսներից առաջ, 4) Յովնան մարգարէի աղօթքը, 5) Մանասէ թագաւորի աղօթքը, 6) Սիրաքը՝ իմաստունների խրատներով, իսկ յետոյ Սողոմոնի գրքերը, միասին դրուած են չորս գլխաւոր մարգարէները՝ Եսայի, Երեմիա, Եզեկիէլ, Դանիէլ, եւ նրանցից յետոյ՝ փոքր մարգարէները[296], 7) մահք մարգարէից, 8) հատուածներ մեկնութիւններից՝ ա) Մխիթար Գօշի՝ Երեմիա մարգարէի, բ) Եսայի Նչեցու՝ Եզեկիէլ մարգարէի, գ) Վարդանի՝ Դանիէլ մարգարէի եւ դ) Ներսէս Տարսոնացու՝ ԺԲ. մարգարէների, 9) ձեռագրի վերջում գրուած են կտակք ԺԲ. նահապետաց, 10) Նոր Կտակարան չունի: Գրքերի սկզբում հայ վարդապետների մեկնութիւնների հատուածները յիշեցնում են Sch, Հմր 27 ձեռագիրը:

33. *Kon¹. Հմր 34. Ռկ.-1611. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 164, Դանիէլի ցուցակի Հմր 158, էջ 11[297] [Մ 186]: Գրուած է հաստ թղթի վրայ. 500 թերթ (մեծութիւնը՝ 25,5x19,5), երկսիւն, 47 տող, հիանալի բոլորգիր՝ զարդերով եւ ճակատազարդերով: Այն Միքայէլ Թոխաթեցին Մկրտիչ վարդապետ Խարբերդցու համար գրել է Կոստանդնուպոլսում: Միքայէլ գրիչը գրել է մի այլ Աստուածաշունչ, որն այժմ գտնւում է Վատիկանում եւ մեր չարքում նկարագրուած է՝ Հմր 39: Բնագիրն ունի. 1) Գէորգ վարդապետի չափածոները, 2) ա) Դաւիթ Փիլիսոփայի սաղմոսների մեկնութիւնը, բ) Աթանաս Ալեքսանդրացի եպիսկոպոսի Սաղմոսների մեկնութիւնը, 3) Սիրաքը՝ Հին Կտակարանի վերջում, 4) Յովհաննու Հանգիստը, 5) Աստուածաշնչի բառերի Վանական վարդապետի այլաբանական բացատրութիւնները:*

34. *J³. Հմր 35. Ռկդ.-1615. Երուսաղէմի վանքի ձեռագիր[298] [Ե 2558]: Գրուած է բոլորգրով, մանրանկարներով, Վարագայ վանքի վանահայր Մարտիրոս վարդապետի համար՝ Մոկս քաղաքում: Աւելի որեւէ բան յայտնի չէ:*

35. *LB¹. Հմր 36. Ռկե.-Ռկը. = 1616-1619. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 179, Դանիէլի ցուցակի Հմր 173, էջ 13 [Մ 351]: Գրուած է լաւ մագաղաթի վրայ, 600 թերթ (26,5x20), քառածալ (in 4⁰), երկսիւն, իսկ վերջին թերթերը (565-600) եռասիւն, տողերի թիւը՝ 53, բոլորգիր, մանրանկարները եւ տարբեր զարդերը բաւական շատ են, եւ դրանք մեծ տարբերութիւն ունեն մինչ այժմ քննուած ձեռագրերից: Յիշատակարանները թուով 14ն*

---

[296] Այս յաջորդականութիւնը ցոյց է տալիս լատինական վուլգատայի բացայայտ ազդեցութիւնը:

[297] **Brosset**, Voyage Archeologique, էջ 33, Հմր 12:

[298] **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 155:

են, յիշատակում են գլխաւոր տիրոջը եւ մասնաւորապէս գրիչներ Ղազարոս Բաբերդացուն եւ Թորոս դպրին: Ձեռագիրը գրուած է Լվով քաղաքում՝ 1616-1619 թուականներին:

Ղազար Բաբերդացու ձեռագիրը ներկայացուցիչն է Աստուածաշնչի օրինակների նոր խմբի, որը շատ բաներով տարբերւում է Կիլիկիայում եւ այլ վայրերում մինչ այդ ժամանակ գրուած օրինակներից, քանի որ Բաբերդացին այն օժտել է նախադրութիւններով եւ վերջաբաններով, բառացանկերով, գլուխները բաժանել է տների, որպէս անբաժանելի մաս բնագրի մէջ ներառել է Եզրի երրորդ գիրքը, ԺԲ. նահապետաց կտակները, Յովսէփի եւ Ասանէթի պատմութիւնը, եւ, վերջապէս, Աստուածաշնչի լատինական եւ լեհական ձեռագրերի օրինակով՝ ձեռագիրը զարդարել է նոր մանրանկարներով: Ընդհանրապէս հայերէն ձեռագրերում մանրանկարները հանդիպում են մեծ մասամբ Աւետարանների օրինակութիւններում եւ յատկապէս ամբողջական Աստուածաշնչում: Հայ գեղանկարչութեան պատմութեան համար նրանք մեծ հետաքրքրութիւն ունեն, սակայն կարեւոր են նաեւ բուն բնագրի համար: Նրանք ակնառու ձեւով ցոյց են տալիս ասորական եւ յունական, իսկ ԺԲ. հարիւրամեակից, յատկապէս ԺԷ. դարից՝ լատինական գեղանկարչութեան ազդեցութիւնը: Աւետարանի որոշ օրինակներում աւետարանիչների մանրանկարների վրայ նրանց անունները գրուած են յունարէնի այբուբենով. եթէ դրանք համեմատենք հայերէն աւետարանների լուսանցների յունարէն տարընթերցումների հետ, դժուար չի ենթադրելը, որ նա, ով մանրանկարներ է պատճէնել յունարէն կամ լատիներէն ձեռագրից, կարող էր նաեւ երկու բնագրերը համեմատել եւ ըստ հարկի սրբագրել իր հայերէն բնագիրը: Սրանով մենք ցանկանում ենք ասել, որ մանրանկարներն ամբողջ հարիւրամեակների հեռաւորութիւնից ակնյայտ ձեւով ցուցադրելով յունարէն կամ լատիներէն ձեռագրերի ազդեցութիւնը, պարտաւոր են եւ կարող են մեզ ցոյց տալ հայերեն բնագրի զանազան փոփոխութիւնների պատճառներն ու աղբիւրները: Այսպիսի ենթադրութիւնը մասամբ հաստատւում է Ղազար Բաբերդացու օրինակութեամբ, որի մասին Աստուածաշնչի իր հրատարակութեան առաջաբանում Զօհրապեանը գրում է. «Թէպէտ են վայելչակերպ ըստ արտաքնոյն՝ բայց բազմօք նուազեալ յարուեստէ. մանաւանդ երկրորդն՝ որ եւ լին է անհամար սխալանօք... ո՛չ համարձակիմ երաշխաւոր լինել եւ սմա՝ ուրեք ուրեք նաեւ բնաբանին անհուպ լինելոյ» (էջ 6)[299]:

[299] *«Ոչ համարձակիմ երաշխաւոր լինել եւ սմա՝ ուրեք ուրեք նաեւ բնաբանին անհուպ լինելոյ»*. չնայած Զօհրապեանի կարծիքի այսպիսի պայմանականութիւնը տարօրինակ է թւում, նա Ղազար Բաբերդացու օրինակը համեմատել է ուրիշների հետ եւ հնարաւորութիւն է ունեցել առաւել որոշակի արտայայտուելու:

Եւ իսկապէս, LB[1]-ի արտաքինը՝ իր բազմաթիւ մանրանկարներով, կտրուկ տարբերւում է հին ձեռագրերից, եւ դա այնպէս է համապատասխանում ժամանակի ճաշակին, որ LB[1]-ի հրապարակումից յետոյ գրուած ձեռագրերի մի մեծ քանակ նրանից արուած պատճէններ են կամ նմանակում եւ նրա ներմուծած ուղղութեան հետագայ կատարելագործում: Բաբերդացու օրինակի սկզբում կայ նրա բացատրական առաջաբանը, որում նա ասում է, որ Լեհաստանում, որտեղ ինքն ապրել է, լեհերի մօտ տեսել է Աստուածաշնչի ճոխ զարդարուած եւ օգտագործման համար յարմարեցուած ընդօրինակութիւններ եւ ցանկացել է ինքը եւս կիրառել բոլոր այդ եղանակները, որպէսզի հայերը լեհերի նման հեշտութեամբ կարողանան իւրացնել Սուրբ Գրոց բովանդակութիւնը: Ղազար Բաբերդացին մասամբ հասաւ իր նպատակին: Նրա ձեռագրից արուած բազմաթիւ ընդօրինակութիւնները ցոյց են տալիս, որ նրա օրինակը, իր բոլոր իւրայատկութիւններով, ժէ. դարում այնպիսի գերիշխող նշանակութիւն ստացաւ, ինչպիսին Գէորգ Սկեւռացու օրինակը՝ ԺԳ. եւ ԺԴ. դարերում:

Բնագիրը ունի՝ 1) Ղազար Բաբերդացու առաջաբանը՝ իր օրինակը լատինական վուլգատայի համեմատ կազմելու մասին [3բ-4բ]: 2) Գրիգոր Տաթեւացու՝ Աստուածաշնչի գրքերի ցանկը [5ա]: Ցանկը կազմուել է Հերոնիմոսի յայտնի յառաջաբանի ազդեցութեան տակ: 3) Վանական վարդապետի՝ Աստուածաշնչի բառերի այլաբանական բացատրութիւնը [5բ-6բ]: 4) Բոլոր գրքերը գլխացանկերով եւ նախադրութիւններով: 5) Եզրի Գ. գիրքը (ըստ վուլգատայի՝ Դ.) երկրորդ գրքից յետոյ, 6) Յոբի գիրքը Սաղմոսներից առաջ, եւ Երեմիայինը Դանիէլից առաջ: 7) Առ Կորնթացիս Գ. Թուղթը: 8) Յովհաննու Հանգիստը: 9) Ղազար Բաբերդացու վերջաբանը, որ Աստուածաշնչի մասին գովեստի խօսք է, մասամբ՝ չափածոյ: 10) Երկու այբբենական ցանկ՝ Աստուածաշնչի անձնանունների եւ հասարակ անունների բառերի որոշակի քանակով, ըստ բնագրի կարեւոր նիւթերի: Առաջինը կազմուել է ըստ գրքերի հայերէն բաժանումների (ըստ այդ բաժանումների կազմուած են Գէորգ Սկեւռացու գլխացանկերը), իսկ երկրորդը՝ ըստ գրքերը գլուխների բաժանելու լատինական կարգի:

Այս երկու ցանկերը տպագրուած են Աստուածաշնչի առաջին, երկրորդ եւ երրորդ հրատարակութիւնների մէջ (տե՛ս ծնթ. 47, 52), 11) Մակաբայեցոց գրքերից յետոյ՝ ԺԲ. նահապետաց կտակները: LB[1]-ից արտագրուած բոլոր օրինակները բոլոր առաջին 10 մասերում լիովին միանման են, տարբերութիւն է նկատւում 11րդ համարի մէջ: Որոշ ձեռագրերում ԺԲ. նահապետաց կտակներից յետոյ գրուած է Յովսէփի եւ Ասանէթի պատմութիւնը, միւսներում՝ միայն Ասանէթի պատմութիւնը, երրորդներում այդ անկանոնները գրուած են վերջում՝ Սուրբ Գրքի կարգից դուրս:

Ղազար Բաբերդացին առաջին անգամ հայերէն բնագրում կատարեց գլուխների բաժանում՝ տների: Նրա համարների համակարգը բաւական իւրօրինակ է. նա հայերէն տառերն արաբական թուերի հետ զուգակցել է հետեւեալ կերպ. 1, բ. (= 2), գ. (= 3), դ. ե. զ. է. ը. թ. 1 ժ. (= 1+10), 1բ. (= 12), 1գ. (= 13): Գրքերի բուն բնագիրը նա չմասնատեց, այլ պահպանելով չմասնատուած բնագրի հին ձեւը, իւրաքանչիւր թեմայի գլխի սկզբի որոնումը հեշտացրեց նրանով, որ այդպիսիները նշեց կարմիր աստղիկներով:

Զօհրապեանն իր առաջաբանում ասում է, որ ինքը Լեհաստանում՝ Լվով քաղաքում տեսել է Ղազար Բաբերդացու ընդօրինակութեան ինքնագիրը՝ գրուած 1619 թուականին. այս թուականն ունի նաեւ մեր ձեռագիրը. հետեւաբար, պէտք է ենթադրել, որ պահպանուել է Բաբերդացու ինքնագիր օրինակը: Զարբհանալեանը[300] Հմր 4ի ներքոյ բերում է LB¹-ի մի օրինակ, չափածոյ յիշատակարանով: Այդ յիշատակարանը բովանդակութեամբ էջմիածնի ձեռագրի գլխաւոր յիշատակարանի պատճէնն է՝ գրուած արձակ ձեւով: Վենետիկի ձեռագրում եւս յիշատակւում է ձեռագրի կազմող Ղազար Բաբերդացին, գրիչ Թորոսը, 1619 թուականը, հայ քահանաների անունները, Լվով քաղաքի եկեղեցական երէցփոխներին: Սակայն Վենետիկի ընդօրինակութիւնը հիմնօրինակը չէ, այլ պատճէն է, քանի որ այն գրուած է 1655 թուականին:

Յիշատակարանի չափածոյ ձեւը յանգեցնում է այն մտքին, որ Ղազար Բաբերդացին իր հիմնական օրինակը հրատարակել է մի քանի անգամ, քանի որ չկայ մի օրինակ, որ արտագրողները հիմնօրինակի արձակ յիշատակարանը վերածէին չափածոյի:

36. *J⁴. Հմր 37. ՌՀԱ.-ՌՁԱ. = 1622-1632. Երուսաղէմի վանքի ձեռագիր[301] [Ե 2559]: Այն գրուել է տասը տարուայ ընթացքում՝ Մարմանտ գիւղացի Բարսեղ վարդապետ Արծրունու խնդրանքով: Բոլորգիր է, բազմաթիւ մանրանկարներով:*

37. *J⁵. Հմր 38. ՌՀԳ. - 1624. Երուսաղէմի վանքի ձեռագիր[302] [Ե 2560]: Այս ձեռագրի մասին մենք քիչ բան գիտենք: Զարբհանալեանը գրում է, որ այն գրուել է Խիզան քաղաքում Կիրակոս քահանայի ձեռամբ, Կարապետ վարդապետ Մոկացու համար: Այն «պաճուճազարդ»՝ մանրանկարներով է:*

300 **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 141-144:

301 **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 156:

302 **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 155:

38. *Kon[2]. Չ՛ր 39. ՌՀԴ. - 1625. Vatikan. cod. Armen. I[303]: Այս ձեռագիրը գտնուում է Վատիկանի գրադարանում, գրուած է 581 թղթի թերթի վրայ, երկսիւն է (25x18), քառածալ (in 4[0]), 46 տող, բոլորգիր, բազմաթիւ մանրանկարներով եւ զարդանկարներով: Այն Կոստանդնուպոլսում գրել է գրիչ Միքայէլ Թոխաթեցին՝ Յովհաննէս վարդապետ Կոստանդնուպոլսեցու համար[304]*:*

Բնագիրն ունի. 1) Գլխացանկեր եւ նախադրութիւններ, 2) Եզրի Գ. Գիրքը, 3) Յոբի գիրքը՝ Սաղմոսներից առաջ, Երեմիան՝ Դանիէլից առաջ, Յայտնութիւնը նախորդում է Պօղոսի թղթերին, 4) Մակաբայեցւոց գրքերից յետոյ՝ կտակք ԺԲ. նահապետաց եւ Յովսէփի ու Ասանէթի պատմութիւնը, 5) Վանական վարդապետի՝ Աստուածաշնչի բառերի այլաբանական բացատրութիւնը, 6) Նոր Կտակարանի վերջում՝ Յովհաննու Հանգիստը:

Այս ձեռագրի գլխաւոր յիշատակարանում ասւում է, որ գրիչն այս օրինակից առաջ գրել է ամբողջ երեք ուրիշ ձեռագիր. «...եւ գրողի սորա Միքայելի Թոխաթցւոյ, որ քան զայս Գ. Աստուածաշունչ գրած էր»[305]:

Այս բառերը սովորական պարծենկոտութիւն չեն. մենք արդէն նշել ենք, որ Չ՛ր 35 Kon[1] ձեռագիրը գրուած է նրա ձեռքով: Այս ձեռագրի մասին Զարբհանալեանն արտայայտել է հետեւեալ միտքը, որ սա տպագրելու համար Ազարիա կաթողիկոսի Հռոմ ուղարկած օրինակն է: Վատիկանի Աստուածաշնչի ժամանակի՝ 1625 թուականի համադրումն Ազարիայի նամակի գրութեան՝ 1585 թուականի հետ, ցոյց է տալիս այսպիսի ենթադրութեան անհիմն լինելը[306]:

39. *Tig[1]. Չ՛ր 40. ՌԾԴ. - 1635. Երուսաղէմի վանքի ձեռագիր[307] [Ե 1127]: Գրուել է Ամիդ քաղաքում (Տիգրանակերտ), մանր բոլորգրով:*

40. *G. Չ՛ր 41. ՌԾԴ. - 1635. Էջմիածնի վանքի ձեռագիր Չ՛ր 360 Գ [Մ 2628]: Գրուած է մագաղաթէ 478 թերթի վրայ (մեծութիւնը՝ 23x15,5), երկսիւն, 50 տող, բոլորգիր: Ունի խորաններ եւ կիսախորաններ. 1635 թուականին գրել է Գրիգոր քահանան: Բնագիրն ունի Կտակք ԺԲ. նահապետաց (Ծննդոց գրքից յետոյ), Մանասէի Աղօթքը, բոլոր մարգարէների*

---

303 **Միսքճեան**, Ցուցակ Վատիկանի.- Հանդէս Ամսօրեայ, 1892, էջ 212-214:

304* Առաւել մանրամասն նկարագրութիւնը տե՛ս Codices Armeni bybliothecae Vaticanae Borgiani, Vaticani, Barberiniani, Chisiani. Schedis Frederici Cornwallis Conybeare adhibitis recensuit Eugenius Tisserant, Bybliothecae Vaticanae scriptor, Romae, Typis Poluglottis Vaticanis, MCMXXVII (1927), էջ 197-201 (այսուհետեւ՝ Վատիկանի ցուցակ):

305 **Միսքճեան**, Ցուցակ Վատիկանի.- Հանդէս Ամսօրեայ, 1892, էջ 214:

306 **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 236 եւ Հանդէս ամսօրեայ, էջ 212, ծնթ. 1:

307 **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 156:

մահերը: Յայտնութիւնը դրուած է Պօղոսի թղթերից առաջ:

41. *Tig[2]. Հմր 42. ՌՁԹ. -1640. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 165, Դանիէլի ցուցակի Հմր 159[308] [Մ 187]: Գրուած է 455 թղթի թերթի վրայ (մեծութիւնը 25x18,3), երկսիւն, 53 տող, լաւ բոլորգիր, զարդարուած է հարուստ մանրանկարներով:*

Եղիազար գրիչն այն գրել է Տիգրանակերտ քաղաքում. տէրերն են եղել Յովասափ քահանայ Արծրունեցին եւ Ներսէս վարդապետը, իսկ նրանց ձեռքից անցել է Սուրբ Թադէոսի վանքին: Յիշատակարանները բաւական չատ են: Բնագիրն ունի՝ Եսայիի մահը, Դանիէլ, Եզեկիէլ, Յովհաննու Հանգիստը, Գէորգ [Սկեւռացի] վարդապետի տաղերը [Յիշատակարանները]:

42. *Kon[3]. Հմր 43. ՌՂ. - 1641. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 166, Դանիէլի ցուցակի Հմր 160 [Մ 188]:*

Գրուած է 517 թերթ լաւ մագաղաթի վրայ. երկսիւն (26x20), քառածալ (in 4[0]), 48 տող, լաւ բոլորգիր, բազմաթիւ մանրանկարներով եւ զանազան զարդանկարներով: Գրիչ Յակոբ Ակնցին այն գրել է 1641-1642 թուականներին, Կոստանդնուպոլսում՝ Գասպար քահանայ Ակնցիի համար:

Բնագիրն ունի. Մակաբայեցւոց գրքերից յետոյ ԺԲ. նահապետաց կտակը, Յովսէփի պատմութիւնը, Եզրի Գ. գիրքը, Սաղմոսներից յետոյ գրուած են՝ Մանասէի, Անանիայի, Եզեկիէլի, Եսայիի, Յովնանի, Ամբակումի, Մարիամի, Զաքարիայի, Սիմէոն ծերունու եւ երեք մանկանց աղօթքները. Սողոմոնի գրքերի վերաբերեալ Ներսէս Շնորհալու տաղերը. Սիրաքը վերջում ունի յաւելում. «Խօսք Սիրաքայ, կարծեմ որդւոյ կատարելոյն Սիմէոնի»[309], Երեմիայի գիրքը, յետոյ Դանիէլինը, Յայտնութիւնը, Յովհաննու Հանգիստը, իսկ յետոյ՝ Պօղոսի թղթերը: Մանրանկարները եւ մասամբ բնագիրը յիշեցնում են LB[1]-ը:

43. *Kon[4]. Հմր 44. ՌՂ. - 1641. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 17 Գ [Մ 2669]: Գրուած է 756 թերթ մագաղաթի վրայ, երկսիւն (25x17,5), քառածալ (in 4[0]), բոլորգիր: Աստուածատուր դպիրը 1641 թուականին Կոստանդնապոլիս քաղաքում այն գրել է Թորոս եպիսկոպոս Սեբաստացու համար: Ձեռագրի զարդարումն անաւարտ է թողնուած. մանրանկարների տեղերը դատարկ են:*

Բնագիրն ունի. Մակաբայեցւոց երեք գրքից յետոյ ԺԲ. նահապետաց կտակները, Յոբը, այնուհետեւ Սաղմոսներ, Երեմիան, այնուհե-

[308] Դանիելի ցուցակի էջ 11 եւ **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 128:

[309] Այս հատուածը տպագրուած է՝ Աստուածաշունչ Հօրապեանի, Յաւելուած, էջ 12-13:

տեւ Դանիէլը, Յայտնութիւնը, Հանգիստը, յետոյ Պօղոսի Թղթերը: Վերջում կայ՝ «Խաւսք եւ իմաստութիւն, ասացեալ Խիկարի Իմաստնասիրի» [656բ-661ա]: Բնագիրը բովանդակութեամբ եւ գրքերի դասաւորութեամբ մասամբ համընկնում է նախորդ՝ Kon[2]-ի հետ: 1663 թուականին վաճառական Մկրտիչն այս ձեռագիրը գնել է եւ նուիրել Հին Նախիջեւանի մօտ գտնուող Երնջակի վանքին:

44. *Dj[1]. Հմր 45. ՈՂԷ. - 1648. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 18 Գ [Մ 2587]: Գրուած է 605 թերթ լաւ մագաղաթի վրայ. երկսիւն է (25,5x20), քառածալ (in 4[0]), 50 տող, բոլորգիր: Ղազար գրիչն այն գրել է Նոր Ջուղա քաղաքում, Ջահկեցի Հայրապետի առեւտրական որդիներ Իմիրզայի եւ Պետրոսի պատուէրով, որոնք այն գնել եւ նուիրել են Երնջակի Սուրբ Կարապետ վանքին: Հայրապետ ծաղկողը նրա մէջ նկարել է բազմաթիւ մանրանկարներ եւ ամենատարբեր զարդանկարներ:*

Բնագիրն ունի. Ղազար Բաբերդացու առաջաբանը [3ա-4ա], Գրիգոր [Տաթեւացու] Սուրբ Գրոց ցանկը, Մակաբայեցւոց գրքերից յետոյ ԺԲ. նահապետների կտակները, իսկ նրանցից յետոյ Եփրեմ Ասորու մի երկը հետեւեալ վերնագրով. «Սրբոյն Եփրեմի Յովսէփ եւթն վահանգի»՝ Յովսէփի կենսագրութեան վերաշարադրանքն ըստ Սուրբ Գրոց, դրանից յետոյ՝ Պատմութիւն Յովսէփի եւ Ասանէթի:

Ուշադրութեան արժանի է պատմական մի յիշատակարան, որում հաղորդւում է երկու կաթողիկոսների՝ Եղիազարի եւ Յակոբի թշնամութեան պատմութիւնը, որոնցից իւրաքանչիւրը ձգտում էր հեռացնել միւսին:

45. *Dj[2]. Հմր 46. ՈՂԷ. - 1648. Վենետիկի ձեռագիր Հմր 4՝ Զօհրապեանի առաջաբան, էջ 6 [Վ 623/3]: Գրուած է մագաղաթի վրայ, բոլորգրով, մանրանկարներով՝ LB[1]-ի նմանութեամբ: Գասպար քահանայ գրիչը Պարսկաստանի Նոր Ջուղայում գրել է իր անձնական օգտագործման համար, Խաչատուր աբեղայ Ջուղայեցու ծախսով:*

46. *Dj[3]. Հմր 47. ՈՂԹ. - 1650. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 167, Դանիէլի ցուցակի Հմր 161, էջ 11 [Մ 189]:*

Գրուած է լաւ մագաղաթի 651 թերթի վրայ, երկսիւն (25,2x28), քառածալ (in 4[0]), 49 տող, բոլորգիր: Նազարէթ քահանան եւ նրա աշակերտ Յովսէփ գպիրը 1650 թուականին այն գրել են Նոր Ջուղայում. պատուիրատուն եղել է խոջա Եղիազարի[310] որդի խոջա Նազարէթը. նկարազարդել է վերն արդէն նշուած Հայրապետը:

---

[310] Այս Եղիազարը եղել է յայտնի Լազարեան տոհմի նախապապը, որը փառաբանուել է մեծ բարեգործութիւններով, սկզբում՝ Պարսկաստանում, այնուհետեւ՝ Ռուսաստանում:

Բնագիրն ունի՝ Ղազար Բաբերդացու առաջաբանը, Գրիգոր [Տաթեւացու] ցանկը, Սուրբ Գրոց բառերի՝ Վանականի այլաբանական բացատրութիւնը, Դատաւորների գրքից յետոյ նրանց անունների ցանկը. «Եւ այս են դատաւորք» [115աբ]: Եզրի Գ. գիրքը գտնւում է երկրորդից յետոյ, Յոբի գիրքը՝ Մակաբայեցւոց գրքերից յետոյ, Երեմիան, յետոյ՝ Դանիէլը. Յովհաննու Հանգիստը՝ Նոր Կտակարանի վերջում: Ղազար [Բաբերդացու] չափածոյ աղօթքը, Աստուածաշնչի բառերի երկու ցանկ, եւ վերջում՝ Աստնէթի պատմութիւնը:

Գլխաւոր յիշատակարանում թուարկուած են Ղազարի բազմանդամ ընտանիքի անդամների անունները: Գասպար քահանան իր մասին օգտագործում է «ոքնաշխատ» բառը, իսկ Հայրապետը յիշատակում է իր ուսուցիչ Խաչատուր եպիսկոպոսի անունը:

47. *Dj[4]. Հմր 48. 1650°. Էջմիածնի վանքի ձեռագիրը Հմր 177, Դանիէլի ցուցակի Հմր 171, էջ 12 [Մ 204]: Գրուած է 671 թերթ լաւ մագաղաթի վրայ, երկսիւն (25x18), քառածալ (in 4⁰), 44 տող, բոլորգիր, բազմաթիւ մանրանկարներով եւ զարդանկարներով:*

Վերջում գլխաւոր յիշատակարան չունի. համառօտ հաղորդւում են գրիչ Գասպար քահանայի եւ տիրոջ՝ խոջա Պօղոսի անունները: Գիրը եւ մանրանկարները կրկին մատնանշում են Dj[2]-ի եւ Dj[3]-ի յայտնի գրիչ Գասպարին, ըստ այդմ էլ գրչութեան ժամանակը համարում ենք 1650 թուականի չուրջ, իսկ տեղը՝ Նոր Ջուղան, որտեղ աշխատել է Գասպարը: 1793 թուականի մի յիշատակարան հաղորդում է, որ Թիֆլիսեցի Յարութիւնը գնել է այս Աստուածաշունչը եւ նուիրել Էջմիածնի վանքին՝ Ղուկաս կաթողիկոսի անձնական օգտագործման համար: Բնագիրն ու մանրանկարները լիովին համապատասխանում են Գասպարի՝ արդէն ներկայացուած ձեռագրերին, մի տարբերութեամբ, որ ԺԲ. նահապետների կտակները դրուած են ձեռագրի վերջում:

48. *Dj[5]. Հմր 49. ՌՃ. - 1651. Նոր Ջուղայի Սուրբ Ամենափրկչի վանքի ձեռագիրը [Ն. Ջ. 15/1]*[311*]*:*

Գրիչներ Մարկոս եւ Յովսէփ քահանաներն այն գրել են բոլորգրով՝ Նոր Ջուղայում: Այս համառօտ տեղեկութիւնը գտել ենք Ամենափրկչի վանքի ձեռագիր ցուցակում, որ 1853 թուականին կազմել է Գալուստ Շարմազանեանը: Այս ցուցակի մի օրինակը 1862 թուականին Bergé-ն տրամադրել է ակադեմիկոս Brosset-ին[312]*, եւ այժմ այդ օրինակը պահպանւում է Գի-*

[311] Գրչութեան թուականը ճշգրտուած է՝ ՌՃԺԱ. - 1662 թ.: Նոր Ջուղայի համարները եւս գրել ենք գոյքահամար/ցուցակի համար կարգով:

[312] **Brosset**, Voyaje Archeologique, էջ 37-38, Հմր 25:

տուֆիւնների ակադեմիայի Ասիական Թանգարանում: Այս ցուցակից Կ. Յ. Եզեանը[313]* *արտագրել է պատճէն, որը նա տուեց մեզ՝ օգտագործելու համար, եւ այդ եղանակով մենք իմացանք ընդհանրապէս այդ ցուցակի գոյութեան մասին: Ըստ այդմ՝ 1853 թուականին Նոր Ջուղայի վանքում եղել է 202 միաւոր ձեռագիր, եւ վեց ձեռագիր՝ տեղի թեմական առաջնորդի մօտ, որոնց մէջ կան շատ հետաքրքիր միաւորներ:*

49. *Dj*[6]*. Հմր 50. ՌՃԳ.-ՌՃԼ. = 1654-1658. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 170 եւ Դանիէլի ցուցակի Հմր 164, էջ 12 [Մ 200]: Գրուած է 612 թերթ մագաղաթի վրայ (մեծութիւնը՝ 26,5x20,5), երկսիւն, 48 տող:*

Բոլորգիր է, մանրանկարներով եւ զարդանկարներով՝ նման Ղազար Բաբերդացու օրինակին. գրչի անունը Յովհաննէս է, իսկ տէրը՝ Աւետիքը, [հետագայ տէրը]՝ Բարսեղ աւագ սարկաւագը, վայրը՝ Նոր Ջուղա:

Բնագիրը՝ ըստ LB[1]*-ի է, Ծննդոց գրքից յետոյ գրուած է Կտակք ԺԲ. նահապետաց, իսկ Եզրի երկրորդ գրքից յետոյ՝ [Եզրի] երրորդ գիրքը:*

50. *LB*[2]*. Հմր 51. ՌՃԴ.-ՌՃՋ. = 1655-1657. Վենետիկի վանքի ձեռագիր Հմր 229*[314] *[Վ 229/4]: Գրուած է մագաղաթի վրայ, բոլորգրով եւ զարդարուած է բազմաթիւ զարդանկարներով ու մանրանկարներով: Գլխաւոր յիշատակարան չունի. պահպանուել է գրչի անունը՝ Մարկոս: Այս ձեռագրի հիմք-օրինակը LB*[1]*-ն է:*

51. *LB*[2]*. Հմր 52. ՌՃԵ. - 1656. Վենետիկի վանքի ձեռագիր, ըստ Զօհրապեանի Հմր 7 [Վ 1182/7]: Գրուած է մագաղաթի վրայ, բոլորգրով, Յովհաննէս դպիր Լեհցու ձեռքով, Աբրահամ Պելերգատցու համար: Զարդարուած է մանրանկարներով, իսկ բնագրում նկատելի է լատինական վուլգատայի ազդեցութիւնը:*

52. *Dj*[7]*. Հմր 53. ՌՃՋ. - 1657. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 169, Դանիէլի ցուցակի Հմր 163, էջ 11*[315] *[Մ 347]: Գրուած է 607 թղթի թերթի վրայ (մեծութիւնը՝ 29,5x22,5), երկու եւ երեք սիւնից՝ 50ական տողով, բոլորգիր է. ամբողջ գրքում Աստուած, Քրիստոս, Սուրբ Հոգի բառերը գրուած են կարմիր թանաքով: Զարդանկարները եւ մանրանկարները*

---

[313]* Г. А. Эзовымъ - Герасимъ Артемевичъ = Կարապետ Յարութիւնի Եզեան:

[314] Աստուածաշունչ Զօհրապեանի, առաջաբան, էջ 6՝ սա համարում է հինգերորդ համար, Հին Կտակարանի Անկանոնքի հրատարակիչը (էջ ԺԱ.)՝ չորրորդ: Կայ նաեւ թուականի տարբերութիւն՝ Զօհրապեանը գրել է ՌՃԴ. - 1655, Հին Կտակարանի անկանոնքի հրատարակիչը՝ ՌՃՋ. - 1667: Դժուար է որոշելը, թէ այս երկու թուականներից ո՛րն է ճիշտը: * Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հտ. Ա.., յօրինեց **Հ. Բ. վ. Սարգիսեան,** Վենետիկ-Սուրբ Ղազար, ՌՁԿԳ. = 1914, էջ 43, թուագրել է՝ ՌՃԴ. - 1655:

[315] **Brosset**, Catalogue de la Bibliothèque d'Ehmiadzin, էջ 34, Հմր 16:

չատ չատ են, սակայն նրանք սովորականին հակառակ չեն տարբերւում չքեղութեամբ, չունեն վառ գոյներ եւ ոսկի: Այն գրուած է 1657 թուականին, Գրիգոր Համազասպեանցի կողմից՝ վաճառական Սաֆարի համար, որն այն նուիրեց Իսահակ եպիսկոպոսին: Գրչութեան տեղի անունը յիշատակարաններում չկայ, սակայն պարզ է, որ այն գրուել է Նոր Ջուղայում: Բնագիրը համանման է LB[1]-ին: Ծննդոց գրքից յետոյ Յովսէփի, սուրբ Եփրեմի պատմութիւնն է, պատմութիւն Յովսէփի յեօթն վահանդի, պատմութիւն Ասանէթի, կտակ. ԺԲ. նահապետաց եւ Յովհաննու Հանգիստը: Ունի նաեւ տարբեր աղիւսակներ եւ Աստուածաչնչի գրքերի Ղազար Բաբերդացու ցանկերը:

53. *Var. Հմր 54. ՌՃՀ. - 1659. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 185*[316] *[Մ 190]: Գրուած է 411 մագաղաթի թերթի վրայ, երկսիւն (26,2x18), քառածալ (in 4⁰), 50 տող, բոլորգիր, գրիչը կոչւում է Վարդան աբեղայ: Այս ձեռագիրն ունի չատ թերութիւններ եւ անաւարտ էջեր: Հին կտակարանում չկան հետեւեալ գրքերը՝ Յուդիթ, Տովբիթ, Հռութ, Եզր, Նէեմի, Մակաբայեցւոց, Սաղմոսք, Սողոմոն, Յոբ, Սիրաք, Եսայի, պակասում է նաեւ Մնացորդաց եւ Եզեկիէլ, իսկ Նոր կտակարանում Յայտնութեան մի մասը, Պօղոսի թղթերից յետոյ կայ Եփրեմ Ասորու՝ Առ Կորնթացիս Գ. թղթի մեկնութիւնը [396բ-7ա «Պատճառ երրորդ Կորնթացւոց՝ սրբոյն Եփրեմի - Կորընթացիքն յետ միաբանելոյն...»]:*

54. *Dj[8]. Հմր 55. ՌՃԹ. - 1660. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 172. Դանիէլի ցուցակի Հմր 166, էջ 12 [Մ 201]: Գրուած է 618 թերթ լաւ մագաղաթի վրայ, երկսիւն (27,5x20,5), քառածալ (in 4⁰), 50 տող, LB[1] օրինակին նման մանրանկարներով եւ զարդանկարներով. սա եւս կրկին սպահանցի Հայրապետի աշխատանքն է՝ ինչպէս Dj[1] եւ Dj[3] ձեռագրերը: Այստեղ նա կրում է վարպետաց վարպետ տիտղոսը: 1660 թուականին այն Սպահանում կամ Շօշում Զաքարիա եպիսկոպոսի համար գրել է Աստուածատուր քահանան:*

Բնագիրը՝ ըստ LB[1]-ի է. Ծննդոց գրքից յետոյ՝ ԺԲ. նահապետաց կտակները, Եզրի Բ. գրքից յետոյ՝ Եզրի Գ., ԺԲ. մարգարէների եւ Դանիէլի մահերը, Յովհաննու Հանգիստը:

Ձեռագրի վերջում (610բ-613բ) կայ չատ երկար յիշատակարան, որտեղ ձեռագրի տէրը՝ Էջմիածնի Մովսէս կաթողիկոսի աշակերտ Զաքարիա եպիսկոպոսը չատ արժէքաւոր տեղեկութիւններ է տալիս իր ուսուցչի, նրա աշակերտների եւ իր մասին: Նա պատմում է, թէ ինչպիսի դժուա-

[316] Այս համարը Դանիէլը չունի, նշանակում է այն մէկն է այն ձեռագրերից, որոնք ցուցակի կազմուելուց յետոյ են մուծուել հին ցուցակի մէջ (տե՛ս վերը՝ ծնթ. 166):

բուժիւնների դէմ է ինքը ստիպուած եղել պայքարել, որպէսզի Սպահանում պատուիրի Աստուածաշունչը, մինչեւ Ջուղայում յայտնի Շահիխաւենց տոհմից խոջա Սաֆարը [=Վաթանը] նրան անհրաժեշտ օգնութիւն ցուցաբերեց: Ընդ որում՝ նա մանրամասն նկարագրում է այդ Սաֆարի տոհմի ազգաբանութիւնը, որը փառաբանուած է 1605 թուականին՝ շահ Աբասի ժամանակ Հին Ջուղայից Նոր Ջուղա վերաբնակուած հայոց պատմութեան մէջ: Ոչ պակաս հետաքրքրական է Զաքարիա եպիսկոպոսի հաղորդումը Հեթում (H) թագաւորի ձեռագրի ձեռքբերման մասին: Նա պատմում է, որ 1656 թուականին գնացել է Երուսաղէմ՝ խոնարհուելու Քրիստոսի գերեզմանին: Այնտեղից եդեարձի ճանապարհին մտել է Էրզրում քաղաք եւ լսել, որ Հեթումի Աստուածաշունչը վաճառքի են առաջարկում:

Չնայած նրան, որ հէնց այդ ժամանակ նրա պատուէրով Սպահանում Աստուածաշունչ էր գրւում եւ դեռեւս աւարտուած չէր, նա գնում է նաեւ արքայի այդ օրինակը: Իր մահից առաջ նա իր ամբողջ ունեցուածքը՝ ոսկէ եւ արծաթէ իրերը, գրքերը, Աւետարանի ձեռագրերը, Աստուածաշնչի երկու ձեռագիրը կտակով նուիրեց[317] Կարբիի՝ Քրիստոսի սուրբ նախակարապետի վանքին, որ գտնւում է Էջմիածնի վանքից քսան վերստ հեռաւորութեան վրայ: Այդ վանքը ծաղկում էր ԺԷ.-ԺԸ. հարիւրամեակներում եւ հռչակուած էր իր դպրոցով, սակայն այժմ այն ամբողջովին լքուել է, եւ հնագոյն տաճարի հրաշալի ճարտարապետական կառոյցն օրըստօրէ մօտենում է վերջնական աւերման: Այսպիսի հանգամանալի գրառման շնորհիւ մենք կարող ենք հետեւել, թէ ինչ ձեւով է Աստուածաշնչի լաւագոյն ձեռագրերից մէկը՝ H օրինակը հասել Էջմիածնի վանքի մատենադարանին: Քանի որ հետագայում Կարբիից բոլոր գրքերը տեղափոխուել են Էջմիածին, ապա դրանց հետ միասին բերել են նաեւ H-ը՝ Հեթումի թագաւորի ձեռագիրը եւ մեր այս ձեռագիրը:*

55. *E[1]. Հմր 56. ՌՃԹ. - 1660[318]*. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 171. Դանիէլի ցուցակի Հմր 165, էջ 12[319] [M 348]: Գրուած է լաւ մագաղաթի վրայ, 608 թերթ (մեծ. 28x20,2), երկսիւն, 48 տող, գիրը՝ գեղեցիկ բոլոլորգիր, բազմազան զարդանկարներով եւ մանրանկարներով: 1660 թուականին Էջմիածնի վանքում Ակն քաղաքացի Թամուր դպիրը գրել է պարոն Ամբակումի եւ նրա որդի Երեմիայի համար: Յիշատակարանները բաւական չատ են:*

[317*] Վրիպմամբ գրել է «завѣщаниемъ отказалъ». խօսքը Յովհաննու Կարապետի վանքի կամ Յովհաննավանքի մասին է:

[318*] Թուականը ճշգրտուած է՝ 1654-1661 թթ.:

[319] **Brosset**, Catalogue de la Bibliothèque d'Ehmiadzin, էջ 93, Հմր 18:

Բնագիրն ունի յաւելեալ մասեր՝ դատաւորների անունները, Մակաբայեցւոց գրքերից յետոյ ԺԲ. նահապետաց կտակները, Ներսէսի տաղերը՝ Սողոմոնի գրքերի, Երեմիայի եւ յետոյ Դանիէլի գրքերի մասին, Յայտնութիւնը եւ նրանից յետոյ Պօղոսի թղթերը, Հանգիստը՝ Նոր Կտակարանի վերջում, եւ Աստուածաշնչի բառերի Վանականի այլաբանական բացատրութիւնը: Այս ընդօրինակութիւնը ուշ ժամանակների աշխատանքի նոր տեսակ է: Մանրանկարներում նկատելի է որոշակի ինքնուրոյնութիւն, մանրանկարիչը սովորականի պէս չի բաւարարւում պատրաստի նկարների պատճէնմամբ, այլ ազատօրէն օգտուելով LB^1-ի եւ Kon^2-ի օրինակներից, իրենից տալիս է շատ նոր տարրեր: Գլխաւոր յիշատակարանում պատմւում է Փիլիպոս եւ Յակոբ կաթողիկոսների մասին:

56. *Kon^5. Էմ 57. ՌՃԺ. - 1661. Երուսաղէմի վանքի ձեռագիր*[320] *[Ե 2561]: Գրուած է բոլորգրով, հրաշալի մանրանկարներով, ոսկէ գլխատառերով եւ լուսանցներում բազմաթիւ զարդերով ու մանրանկարներով: Գրչութեան վայրն է՝ Կոստանդնապոլիսը, ժամանակը՝ 1661 թ., եւ պատուիրատուն է Մարտիրոս վարդապետ Ղրիմեցին:*

57. *Dj^9. Էմ 58. ՌՃ[Ժ]Բ. - 1663. Էջմիածնի վանքի ձեռագիր Էմ 168. Դանիէլի ցուցակի Էմ 162, էջ 11*[321] *[Մ 191]: Գրուած է 629 թերթ լաւ մագաղաթի վրայ (մեծ. 25,8x15), երկսիւն կամ եռասիւն, 50 տող. բոլորգիր, ունի զարդանկարներ, կիսախորաններ եւ ճակատազարդեր, սակայն միայն մէկ մանրանկար: Գրիչը յայտնի Գասպար երէցն է, տէրերը՝ Խօջա Սաֆարը եւ Միքայէլ վարդապետը. գրուած է Սպահանում: Յիշատակարանները բաւական շատ են: Այս ձեռագիրը եւս որպէս հիմնօրինակ ունի Ղազար Բաբերդացու օրինակը. Աստանէթի պատմութիւնը չունի:*

58. *Kon^6. Էմ 59. ՌՃԺԵ. - 1666*[322]*. Էջմիածնի վանքի ձեռագիր Էմ 173. Դանիէլի ցուցակի Էմ 167 [Մ 202]: Գրուած է 547 թերթ լաւ մագաղաթի վրայ (մեծ. 25x19,3), երկսիւն, 45 տող, բոլորգիր: Ունի միայն ճակատազարդեր եւ զարդանախշեր. գրիչը Ստեփան դպիրն է, տէրը՝ Յովհաննէսը վարդապետը: Հին Կտակարանի առաջին մասը գրուել է Կոստանդնուպոլսում, երկրորդ մասը՝ Տիգրանակերտում:*

Ընդարձակ յիշատակարանում ձեռագրի տէր Յովհաննէս վարդապետը՝ Փիլիպոս կաթողիկոսի աշակերտն ու արբանեակը, պատմում է, թէ ինչպէս ինքը կաթողիկոսի հետ միասին 1651 թուականին Երուսաղէմ

---

320 **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 155:

321 **Brosset**, Catalogue de la Bibliothèque d'Ehmiadzin, էջ 34-35, Էմ 20. բերում է պատմական երկար յիշատակարանի բովանդակութիւնը:

322 Թուականը ճշգրտուած է՝ 1651-1666 թթ.:

ուղեւորուելիս Կոստանդնուպոլսում Յակոբ գրչից նուէր է ստացել Հին Կտակարանի 22 տետրը, եւ ցանկանալով լրացնել պակաս մասը, ամբողջ 15 տարի լաւ գրիչ է փնտրել Կոստանդնուպոլսում, Երուսաղէմում եւ Էջմիածնում, եւ վերջապէս գտել է [«ի Կերտն Տիգրանու»], Արղնիի [Բարձրահայեաց Սուրբ] Աստուածածնի վանքում: Այնժամ հիմնուելով վանահօր երաշխաւորութեան վրայ, Յունան գրչին յանձնարարեց լրացնել Աստուածաշնչի պակասող մասը: Երբ աշխատանքը պատրաստ էր, նա գրչից դժգոհ մնաց, որովհետեւ ինքը չատ զբաղուած լինելով, գիրքը գրելը նա յանձնարարել էր իր անհմուտ աշակերտներին:

Բնագիրն ունի Գէորգ վարդապետի, Ներսէս Շնորհալու տաղերը, Յովհաննու Հանգիստը, Աստուածաշնչի բառերի Վանականի այլաբանական բացատրութիւնը:

59. *Kf. Հմր 60. ՌՃԺԷ. - 1668. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 358 Գ. [Մ 2706]: Գրուած է 687 թերթ լաւ մագաղաթի վրայ (27x29,5), քառածալ (in 4⁰). երկսիւն, 45 տող, բոլորգիր: Գրիչն է Վրթանէս կամ Վարդան երէցը, տէրը եղել է Վարդան եպիսկոպոսը, գրչութեան վայրը՝ Կաֆա քաղաքը, ներկայիս Թէոդոսիան՝ Ղրիմում:*

Ձեռագիրը բազմաթիւ զարդարանքներ ունի՝ նկարազարդուած նիկողայոս ծաղկողի ձեռքով: Այդ նկարիչը յիշատակարան ունի Հմր 22 AS. ձեռագրում, եւ բնագրի համեմատութիւնը ցոյց է տալիս, որ այս ընդօրինակութիւնը այդ համարից արուած պատճէն է, այն տարբերութեամբ, որ KF-ի գրիչն իրեն թոյլ է տուել աւելացնել AS-ում չեղած նիւթեր:

Բնագիրն ունի. 1) Հատուած Աթանաս եպիսկոպոս Ալեքսանդրացու Սաղմոսաց մեկնութիւնից, 2) Ն. Լամբրոնացու եւ Ն. Շնորհալու տաղերը Սողոմոնի եւ ԺԲ. մարգարէների գրքերի մասին. 3) Սիրաքի գիրքը դրուած է Նոր Կտակարանի վերջում. 4) [471աբ] «Խաւսեցաւ Աստուած ընդ յԱդամայ Է. (7) անգամ... ընդ Մաղաքիայ ԻԲ. (22) անգամ. փառք չնորհաւղին կատարելութեան. ամէն»: 5) Աստուածաշնչի բառերի Վանականի այլաբանական բացատրութիւնը: Այս ամէնի հետ մէկտեղ այս ձեռագիրը նման է Հմր 22ին, սակայն այլ աւելի մասեր ունի. 6) Հեթում արքայի չափածոն Ռուբինեանների պատմութեան մասին (տե՛ս ձեռ. H), 7) Վերջում որպէս յաւելուած Սիրաքի գիրքը՝ Սիմէոնի հատուածներով եւ 8) ԺԲ. նահապետների կտակները:

Յիշատակարանները հետաքրքիր են Ղրիմում ապրող հայերի պատմութեան համար:

60. *Tig³. Հմր 61. ՌՃԼԲ. - 1683. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 174, Դա-*

Նիէլի ցուցակի Հմր 168, էջ 12[323] *[Մ 203]:*

Գրուած է 518 թերթ լաւ մագաղաթի վրայ, երկսիւն, (26x19), քառածալ (in 4⁰), 50 տող, բոլորագիր. գրիչն է եղել Տիրատուր դպիրը, տէրը՝ Միհաս վարդապետ Տիգրանակերտցին [Ամթեցին]:

Բնագիրը սովորական է, ունի ԺԲ. նահապետների կտակները եւ Մանասէ թագաւորի աղօթքը:

61. *E². Հմր 62. Ռճլե. - 1686. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 175, Դանիէլի ցուցակի Հմր 169, էջ 12 [Մ 349]: Գրուած է 652 թերթ լաւ մագաղաթի վրայ, երկսիւն (27x19), քառածալ (in 4⁰), 51 տող: Զարդարանքի եւ մանրանկարների հարստութեան ու քանակի առումով Աստուածաշնչի աւելի լաւ օրինակ վանքի մատենադարանում գոյութիւն չունի. ամէն էջում նոր զարդարանք կայ: Ուշ շրջանի գեղանկարչական աշխատանքների հետ համեմատած՝ սկսելով Ղազար Բաբերդացու օրինակից, դրանք բոլորը լաւագոյն եւ կատարեալ մանրանկարներ են: Սակայն զարդանկարների եւ մանրանկարների ձեւերից բացայայտւում է գեղանկարչի ինքնուրոյնութիւնը: Նրա անունը Մաղաքիա Կոստանդնուպոլսեցի է, եւ նա աշխատել է Էջմիածնում:*

Գրիչը եւ տէրը եղել է Նահապետ Ուռհայեցի վարդապետը, որ հետագայում դարձաւ Էջմիածնի կաթողիկոս:

Բնագիրը՝ 1) ԺԲ. նահապետների կտակները, 2) Ներսէսի տաղերը՝ ձօնուած Սողոմոնի գրքերին, 3) Գլխաւոր մարգարէների մահերը, 4) Յովսէփի եօթ Վահանգի պատմութիւնը, 5) Յովսէփի եւ Ասանէթի պատմութիւնը, 6) Աստուածաշնչի բառերի Վանականի այլաբանական բացատրութիւնը, 7) Եզրի չորրորդ գիրքը, 8) Հերոնիմոսի նախադրութիւնը (թարգմ. Ոսկանի). 9) Աստուածաշնչի բառերի Ղազար Բաբերդացու ցանկերը՝ արտագրուած Ոսկանի տպագրից, 10) Զորս Աւետարանները, Յայտնութիւն, Գործք եւ այլն[324]*:*

62. *E³. Հմր 63. ՌՃՀԹ. - 1700. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 176, Դանիէլի ցուցակի Հմր 170, էջ 12 [Մ 350]:*

Գրուած է 552 թերթ մագաղաթի վրայ (մեծ. 27x20,5), երկսիւն, 51 տող, բոլորգիր. գրիչներն են՝ Յովհաննէս եւ Մարտիրոս երէցները, տէրերը՝ սկզբից Նահապետ կաթողիկոսը, իսկ յետոյ Յովհաննէս արքեպիսկոպոս [Ագուլեաց]: Մանրանկարների եւ տարբեր զարդարանքների թիւը եթէ չի հաւասարւում Հմր 62-ին, ապա չատ քիչ է պիջում նրան:

---

323 **Brosset**, Catalogue de la Bibliothèque d'Ehmiadzin, էջ 36-37, Հմդ 22. բառացի բերում է բազմաթիւ յիշատակարանների պատմական հետաքրքիր հատուածներ:

324 **Brosset**, Catalogue de la Bibliothèque d'Ehmiadzin, էջ 37, Հմդ 24:

Բնագիրն ամբողջական է, բայց չունի Հմր 62ի աւելորդ յաւելումները, հնարաւոր է՝ այս օրինակը ժամանակով նախորդ ձեռագրից աւելի հին է, որովհետեւ 1700ն այն տարին է, երբ Նահապետ կաթողիկոսն իր համար ձեռք բերուած Աստուածաչունչը նուիրեց Յովհաննէս եպիսկոպոսին:

63. *L[1]. Հմր 64. ԺԳ. դար. Լոնդոնի Համբեթեան արքեպիսկոպոսի գրադարանի, ձեռագիր Հմր 1209[325]*:*

Գրուած է ԺԳ. դարում (?), գրիչը Յովհաննէս քահանան է. բաղկացած է 433 թերթից: Նրա մէջ կայ Դանիէլի եօթներորդ տեսիլ աննկանոնը[326]: Վերջերս Հ. Ս. Պարոնեանը Փարիզում հրատարակուող հայկական «Բանասէր» հանդէսում հաղորդեց, որ այդ ձեռագրում կայ Մնացորդաց գրքերի հնագոյն թարգմանութեան նոր օրինակ[327]:

64. *V[7]. Հմր 65. ԺԳ–ԺԴ. դարեր, Վենետիկի վանքի ձեռագիր Հմր 841 [841/5]: Գրուած է թղթի վրայ, բոլորգրով (մեծ. 35x24) Բարսեղ եւ Գէորգ գրիչների կողմից՝ Թորոս քահանայի համար[328]: Ձեռագրի սկզբում կան Նոր եւ Հին Կտակարանների գլխացանկերը եւ նախադրութիւնները, «Հաւանականբար ի տարբեր գրչէ» ասում է այս ձեռագրի նկարագրողը[329]: Կայ հետաքրքիր գրառում. «Տէր Յիսուս Քրիստոս Աստուա'ծ, գթա', ողորմեա' Գէորգ վարդապետին, որ զնախադրութիւններս եւ զգլխին ամեն Հին կտակարանաց է շինել. եւ զՄարտիրոս վարդապետն՝ որ զաւրինակն ետ»:*

Եսթերի գրքի վերջում կայ Ներսէս Համբրոնացու տաղը, որ սկսւում է

325* Նկարագրութիւնը տե՛ս A catalogue of the Armenian manuscripts in the British Library, Acquired since the year 1913, and of Collections in other Libraries in the United Kingdom, by Vrej Nerses Nersessian, vol. one, The British Library, London, 2012, էջ 93-94 (այսուհետեւ՝ Անգլիայի ցուցակ, Բ.):

326 **Հ Հ. Գ[րիգորիս] Գ[ալէմքեարեան],** Տեսիլ Դանիէլի եւթներորդ.- Հանդէս ամսօրեայ, 1892, էջ 242 (ամբողջը՝ էջ 241-242), **Հ. Բարսեղ Սարգիսեան**, Ուսումնասիրութիւնք Հին Կտակարանի անվաւեր գրոց վրայ, Վենետիկ, 1898, էջ 132, ծնթ. 2 (այսուհետեւ՝ **Հ. Բ. Սարգիսեան**, Ուսումնասիրութիւնք): Այս ձեռագրի բովանդակութիւնը հաղորդում է 1812 թուականին հրատարակուած լատինական ցուցակում. «Codex charteus in quarto, Vetus testamentum Armeniace. Desunt: Solomonis Ecclesiastes, Iob, Isaias et 12 Prophetae Minores. Insunt aetem: Pentateuchus, losue, Iudicum liber, Ruth, Regum primus, secundus, tertius et quartus mutilus, Paralipomenon Primus et Secundus imperfecta, Esdras I, qui in vulgato - latino est Esdras III, Hieremias, Treni, Baruch, Psalterium».

327 **Գր. Խալաթեան,** Մի նոր օրինակ նորագիւտ Մնացորդաց գրոց.- Հանդէս ամսօրեայ, 1901, էջ 193-195: * Տե՛ս նաեւ Ս[ուքիաս] Վ[արդապետ] Պ[արոնեան], Մնացորդաց գրոց նոր օրինակի մը գոյութիւնը.- «Բանասէր», հատոր Ա., գիրք Դ., Պարիս, 1899, էջ 344:

328 Ցուցակ Վենետիկի Ս. Գրոց.- Բազմավէպ, 1891. էջ 97-100. **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 151-156:

329 Ցուցակ Վենետիկի Ս. Գրոց.- Բազմավէպ, 1891, էջ 98:

հետեւեալ բառերով. «Հայեաց ի հրաշս որ պատմեցաւ»[330]: Կան կրտսեր մարգարէների մահերը: Վերջում կայ. «Աստուածայայտնութեանն ժամակարգութիւն, այլ եւ բովանդակ տարւոյն ըստ ընթերցուածիմ եւ ըստ այլ կարդացմանց»:

65. *WM². Հմր 66. ԺԳ.-ԺԴ. դարեր, Վիեննայի մխիթարեանների ձեռագիր Հմր 71[331]: Գրուած է 541 թղթի թերթ վրայ (մեծութիւնը 25,5x19,5). 53 տող, բոլորգիր: Բնագիրն ունի գլխացանկեր եւ նախադրութիւններ, մարգարէների մահերը, Գէորգ վարդապետի տաղերը: Պակասում են՝ Աւետաբանները, Առ Կորնթացիս Գ. Թուղթը. բոլոր թղթերի վերջում Աստուածաշնչի բառերի Վանականի այլաբանական բացատրութիւնն է:*

66. *Ach. Հմր 67. ԺԳ-ԺԴ. դարեր. ձեռագիրն Ախալցխայում է [Մ 7623]: 1888 թուականին մոսկովեան գիտական արշաւախմբի կողմից Ախալցխայում, Ենի-Պակաբ եւ Սաթլէդ գիւղերում հայերէն ձեռագրերից արուել են մի քանի մանրանկարների պատճէններ: Այդ նկարներն այնուհետեւ հրատարակուել են «Матеріалы по археологіи Кавказа»ում (Նիւթեր Կովկասի հնագիտութեան)՝ Քիւչուկ-Իոաննեսովի եւ Ա. Մ. Պաւլինովի ծանօթագրութիւններով: Նկարների մէջ կայ Հին կտակարանի սկզբնաթերթի մի նկար՝ Ախալցխա քաղաքում գտնուող ձեռագրից: Դժբախտաբար Ախալցխայի այդ ձեռագրի մասին որեւէ տեղեկութիւն[332] տրուած չէ:*

67. *Jl. Հմր 68. ԺԵ-ԺԶ. դարեր[333]*, Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 183, Դանիէլի ցուցակի Հմր 177, էջ 13[334] [Մ 354]: Գրուած է թղթի, մասամբ մագաղաթի վրայ, 649 թերթ (մեծ. 26,5x10,5), երկսիւն, 44 տող. բոլորգիր, առանց որեւէ զարդարանքի. գրիչը՝ Գրիգոր դպիր Գաւառեցի կամ Ապարանեցի: Գիրքը կրկին կազմուել է 1635 թուականին խոջա Սարատի համար, իսկ առաջին տէրը եղել է հայ դոմինիկեան Ֆրա Մխիթարիչը: Մի ջնջած*

---

330 Տպագրուած են՝ Ցուցակ Վենետիկի Ս. Գրոց.- Բազմավէպ, 1891, էջ 97-100 եւ **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 153:

331 Տաշեան, Ցուցակ, էջ 315-318:

332 Кавказъ, Матеріалы по археологіи Кавказа, Выпуск III, Москва, 1893, стр. 91-105. կայ հինգ աղիւսակ եւ 16 նկար: * Տե՛ս Նկարագիր Սուրբ Կարապետի վանից Երնջակայ եւ շրջակայից նորա, գրեց Մեսրովբ արք. Սմբատեանց. 1897-1904, Տփխիս, 1904, էջ 315: Թուականը ճշգրտուած է՝ ՌՃԴ. - 1655 թ.:

333* Այժմ թուագրուած է ԺԴ. դարով. տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Բ., կազմեցին՝ Օ. Եգանեան, Ա. Ջէյթունեան, Փ. Անթաբեան, Ա. Քէօշկերեան, խմբագրութեամբ՝ Ա. Մնացականեանի, Օ. Եգանեանի, Ա. Ջէյթունեանի, ցանկերը՝ Վ. Դեւրիկանի, Երեւան, «Նայիրի» հրատ., 2004, էջ 227-240:

334 Գիրք մնացորդաց, հրատ. Գ. Խալաթեանցի, էջ III-IV: Այս ձեռագրի մասին համեմատի՛ր աստ՝ վերը, էջ 44, որտեղ համարը վրիպմամբ նշուած է՝ 67: * Սխալ է, ուսերէն տարբերակում այդպիսի բան չկայ. հմմտ. աստ, ծնթ. 64ից առաջ:

յիշատակարանի մէջ (թերթ 648բ) դժուարութեամբ ընթերցւում է վաճառական Նուրիջանի (խոջա Նուրիջան)[335]* *անունը եւ հայոց ՌԽԹ՝ 1600 թուականը*[336]*, որ ցոյց է տալիս ձեռագրի կրկին անգամ կազմուելու ժամանակը՝ Յովհաննէսի եւ Արիստակէսի կողմից, իսկ դրա հետ միասին՝ ըստ բոլոր յատկանիշների ձեռագիրը վերաբերում է ԺԵ. կամ ԺԶ. դարին:*

Բնագիրը հետաքրքիր է իր անկանոններով եւ գրքերի յաջորդականութեամբ: Կան՝ 1) Եզրի Գ.՝ երկրորդից յետոյ, 2) Գէորգ վարդապետի տաղերը, 3) ԺԲ. նահապետների կտակները, 4) Սուրբ Եփրէմի՝ Յովսէփի եօթ Վահանգի մասին, 5) Յովսէփի եւ Ասանէթի պատմութիւնը, 6) Սիրաք, յետոյ՝ Սաղմոսներ. եւ այլն, 7) Զորս գլխաւոր մարգարէների մահը, 8) Երեմիա, այնուհետեւ Դանիէլ: Եւ ինչպէս արդէն ասուել է, հէնց այս օրինակում է հայր Եղիա Ջալալեանը բացայայտել Մնացորդաց գրքերի հին տարբերակը, որ առաջին անգամ հրատարակել է պրոֆ. Խալաթեանցը: Դրա համար էլ այս ձեռագիրն անուանում ենք հայր Եղիայի անունով: 9) Նոր Կտակարանի կարգը՝ Զորս Աւետարանները, Յայտնութիւն, Պօղոսի 15 թուղթ, Գործք Առաքելոց, Կաթողիկեայ եօթ Թուղթ եւ Աղերս Եւթաղի:

68-69. *Sis. Հ՟ր 69-70. ԺԶ. դ., Կիլիկիայի կաթողիկոսութեան ձեռագրեր, Սիս քաղաքում. Victor Langlois-ն Journal Asiatiq-ում*[337] *տպագրել է հայոց կաթողիկոսարանում գտնուող ձեռագրերի ցանկը, որի մէջ կան Աստուածաշնչի երկու ձեռագիր: Առաջինը՝ քառածալ (in 4⁰), երկրորդը՝ մեծածաւալ (in folio), երկուսն էլ գրուած են թղթի վրայ, ըստ Langlois-ի՝ ԺԶ. դարում, թէեւ այս թուագրման իրաւացիութեանը կասկածելու հիմք ունենք:*

70. *V⁹. Հ՟ր 71. ԺԶ. դար. Վենետիկի Մխիթարեանների ձեռագիր Հ՟ր 1366, Զարբհան. Հ՟ր 9*[338] *[Վ 1270/9]*[339]*:*

Գրուած է թղթի վրայ (մեծ. 20x16), Եզեկիէլ սարկաւագի կողմից, ունի

[335]* Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Բ., կազմեցին՝ Օ. Եգանեան, Ա. Ջէյթունեան, Փ. Անթաբեան, Ա. Քէօշկերեան, խմբագրութեամբ՝ Ա. Մնացականեանի, Օ. Եգանեանի, Ա. Ջէյթունեանի. Յանկերը Վ. Դեւրիկեանի, Երեւան, «Նայիրի» հրատ., 2004, էջ 235, այդ անունը կարդացել են «Նուր-վ[ալ]ի»:

[336] Գ. Խալաթեանցը 1600 տարեթիւը չի նկատել:

[337] Journal Asiatique, Ser. V, tome V, p. 291: * V. Langlois, Voyage a Sis, Capitale de l'Arménie au moyen age.- Journal Asiatique, Cinquiéme Série, t. V, 1855, էջ 257-300 (էջ 290-297՝ «Catalogue des manuscrits»՝ նկարագրել է 145 ձեռագիր). էջ 291. «16. Bible; in 4⁰, pap[ier], à deux colonnes, XVIe siecle. 17. Bible, in-fol., pap[ier], à deux colonnes, XVIe siecle»): Այս ցուցակի հայերէն թարգմանութիւնը տե՛ս Մեսրոպ վրդ. Աշճեան, Սսոյ կաթողիկոսարանին ձեռագրաց ցուցակը.- «Հասկ», 1971/Դ.-Ե., էջ 164-69 (այս ձեռագրերը՝ էջ 165):

[338] **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 146 եւ Անկանոնք ՀԿ-ի, էջ ԺԱ.:

[339]* Ձեռագրի վենետիկեան համարը՝ «1366», վրիպակ է, ճիշտն է՝ 1270:

«Ֆռանկ»ի գլուխներ եւ ԺԲ. նահապետների կտակները:

71. *JM. Հմր 72. ԺԷ. դար. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 178, Դանիէլի ցուցակի Հմր 172, էջ 13*[340] *[Մ 205]: Գրուած է 489 թերթ լաւ մագաղաթի վրայ. երկսիւն (26x18,5), քառածալ (in 4⁰), 50 տող, բոլորգիր, բազմաթիւ մանրանկարներով. գրիչներն են՝ Յովանէս երէցը եւ նրա աշակերտ Մատթէոսը: Մանրանկարները Kon¹ եւ E² ձեռագրերի պատճէններն ու նմանակումներն են:*

Բնագիրն ունի 1) ԺԲ. նահապետների կտակները՝ Ծննդոց գրքից յետոյ. 2) Յովսէփի պատմութիւնը. 3) Յակոբի եւ իր ամբոխ ընտանիքի գալուստի եւ Գեսեմում նրանց վերաբնակուելու մասին: 4) Սիրաքի գիրքը, ապա՝ Ելք եւ այլն: 5) Եզրի Գ.՝ երկրորդից յետոյ: 6) Յովհաննու Հանգիստը: 1797 թուականին ձեռագիրը գտնուել է Կարսում, որտեղից բերուել է Էջմիածնի մատենադարան:

72. *Ka. Հմր 73. ԺԷ. դար. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 16 Գ [Մ 2585]. Գրուած է 479 թերթ թղթի վրայ (մեծ. 27x17,5), երկսիւն, 50 տող. բոլորգիր, ունի մի քանի մանրանկար եւ զարդանկարներ: Անյայտ են գրչի եւ տիրոջ անունները: Այս ձեռագիրը պատկանել է Ախալցխայի Կարապետ արքեպիսկոպոսին, որը լինելով 1829 թուականին Թուրքիայից Կարինի հայերի վերաբնակեցումը գլխաւորողը, ինչպէս երբեմնի Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեան Երկայնաբազուկը Ղրիմից նորնախիջեւանցիներին վերաբնակեցնելու ժամանակ էր, հաւաքել է չատ ձեռագրեր, որոնք իր մահից յետոյ անցել են Էջմիածնի մատենադարանին: Արքեպիսկոպոսի ունեցուածքի հաշուառման ժամանակ նրա բոլոր գրքերը նշուել են Ախլքալաքի քաղաքային ոստիկանութեան կնիքով, որն առկայ է նաեւ մեր ձեռագրում:*

Բնագիրն ունի. 1) Գէորգ վարդապետի տաղերը: 2) Ներսէս [Շնորհալու] տաղերը: 3) Սիրաքը՝ հետաքրքիր նախաբանով: 4) Մարգարէների մահերը: 5) Յովհաննու Հանգիստը: Սիրաքի նախաբանը բերում ենք ամբողջութեամբ[341]**:*

[« Նախադրութիւն Յեսուայ որդւոյ Սիրաքայ - Յեսու Սիրաքայ յերկբայութեան եղեալ ոմանց][342]**, չհամարձակեցան*[343] *ասել ստուգապէս, եթէ*

---

340 **Brosset**, Catalogue de la Bibliothèque d'Ehmiadzin, էջ 38, Հմր 26:

341* Ձեռագրում այս նախադրութիւնը կրկնուած է. նախ՝ 269ա էջում (Սիրաքի գրքից առաջ), ապա՝ 367բ (Եզեկիէլի Մարգարէութիւնից եւ Մահից յետոյ). Մ. Տէր-Մովսիսեանը բերել է երկրորդը, որ բնագրի սկիզբը չունի. մենք երկու տարբերակը համադրեցինք եւ տարբերութիւնները նշեցինք:

342* 367բ > Նախադրութիւն... եղեալ ոմանց

343 **Brosset**, Catalogue de la Bibliothèque d'Ehmiadzin, էջ 38, Հմր 26:

իցէ ի մարգարէիցն. որպէս եւ վասն Իմաստութեանն Սողոմոնի ոմանք կարծեաւք վարեցան՝ թէ ոչ է նորա. սոյնպէս եւ զՅուդիթ Տուբիայ եւ զՀովիւն եւ զգիրս զայս Յեսուայ չհամարեցան արժանի կանոնի: Բայց բազում քննութեամբ ստուգեցաւ վասն Իմաստութեանն ճշմարտապէս Սողոմոնի գոլ ասացեալ. սակայն զգիրս Յեսուայ եւ զՅուդիթն նոյնպէս երկբայութեամբ ունին. իսկ Հովիւն դուն ուրեք երեւի կամ բնաւ իսկ ոչ. մանաւանդ ի գիրս հայոց: Բայց այս Յեսուայ[344] ոմանք ասեն աշակերտ եւ դպիր լեալ մեծի իմաստնոյն Սողոմոնի. ուստի եւ ճահ իմն թուի ինձ ասացեալս, զի յոյժ համեմատի գիրքս այս Առակացն Սողոմոնի. որպէս դէմք բանիցն եւ զաւրութիւն իմաստիցն ցուցանէ հանգիտապատիւ գոլով զսա նորայն գրեանցն, թէպէտ եւ սուղ ինչ զանազանի՝ որպէս նորայն, ի միմեանց[345]*:*

Որով սկսանի բազում եւ յոլով ճառիւք խրատել զլսաւղն՝ սիրել զիմաստութիւն, որով կա եւ մնա յաւիտեան: Քարոզէ հարց խրատել զորդիս. եւ յանդիմանէ զակարութիւն կռոցն, պատուիրէ չտալ իշխանութիւն կանանց եւ ոչ վստահանալ ի նոսա. զգուշացուցանէ ի չար զրկանաց եւ յանիրաւ կաշառից. գովէ զդաւանութիւն եւ լաւ տայ զաղքատ հպարտ եւ զմեծատուն սուտ: Հրաժարէ ի զոհից եւ յանիրաւ պատարագաց. բամբասէ զարծաթասիրութիւն եւ զարբեցութիւն, ընդ որս եւ ի սուտ բարեկամաց զգաստանալ խրատէ: Եւ այլ բազում եւ ընդ երկար ճառիւք աւարտէ զգիրս»:

Այս նախաբանը կազմուած է ամբողջութեամբ Գէորգ Սկեւռացու նախադրութիւնների սկզբունքով, սակայն մենք այն գտել ենք միայն ԺԷ. դարի այս ձեռագրում, այն էլ Հին Կտակարանի վերջում, Սիրաքի բուն գրքից առանձին, նաեւ՝ Վիեննայի մխիթարեանների WM[2] ձեռագրում[346]: Այն յօրինուած է անյայտ հայ կրօնաւորի կողմից, որը գիտէր, որ Հովուի գիրքը հայերէնով չկայ, եւ ծանօթ է եղել Հերոնիմոսի նախադրութեանը, ինչպէս ցոյց է տալիս հետեւեալ նախադասութեան համարեա բառացի կրկնութիւնը. «եւ զՅուդիթ Տուբիայ եւ զՀովիւն եւ զգիրս զայս Յեսուայ չհամարեցան արժանի կանոնի». – Հերոնիմոսն այսպէս ունի՝ «եւ Յեսու Սիրաքայ եւ Յուդիթ եւ Տուբիա եւ Հովիւն չեղեն արժանի կանոնի»:

73. *As. Ձ՟ 74. ԺԷ. դար. Էջմիածնի վանքի ձեռագիր Ձ՟ 784 Գ [Մ 2732]: Գրուած է 517 թերթ լաւ մագաղաթի վրայ (մեծ. 26x20), երկսիւն, 49 տող, բոլորգիր: Ծաղկողը չի հասցրել վերջացնել իր աշխատանքը, քանի որ*

344* 269ա > եւ զՅուդիթն նոյնպէս... Բայց այս Յեսուայ

345* 269ա սորայն ի միմեանց] նորայն գրեանցն... նորայն ի միմեանց

346 Երկու օրինակում էլ՝ այս եւ WM[2] ձեռագրերում պակասում է այս նախաբանի սկիզբը:

չատ քիչ են աւարտուած գարդերը, եւ չատ չատ են դատարկ տեղերը, որոնք նշուած են կարմիր մատիրով: Գրիչը եղել է Աստուածատուր երէցը:

Բնագիրը վերջին ժամանակների տեսակի է: Ունի՝ 1) Եզրի Գ. դիրքը: 2) ԺԲ. նահապետների կտակները: 3) «Գովասանութիւն Սաղմոսացս Դաւթի, ասացեալ յԱռաքել վարդապետէ, ի խնդրոյ Գէորգ քահանայի. խաւսք պիտանի»: 4) Ներսէս Շնորհալու «Նախադրութիւնք խրատականք. Յաղագս աղօթիցն». - այս խրատը սովորաբար հանդիպում է ժամագրքերում: 5) Սիրաքը՝ Սողոմոնի գրքերից առաջ: 6) Խիկարի խրատները: 7) Բոլոր մարգարէների մահերը: 8) Երեմիան, այնուհետեւ Դանիէլը: 9) Յայտնութիւն, այնուհետեւ Պօղոսի թղթերը: 10) Յովհաննու Հանգիստը: 11) Աստուածաշնչի բառերի՝ Վանականի այլաբանական բացատրութիւնը:

74. Z. Հմր 75. ԺԷ. դար. Zouche-ի ձեռագիր [Բրիտ. գրդ. Or. 8833]: Այս ձեռագրի մասին գրում է Կոնիբէյրը՝ իր ԺԲ. նահապետների անկանոններիի մասին յօդուածում: Այն լորդ Զուչէյի մասնաւոր սեփականութիւն է, Լոնդոնում[347]*:*

75. L[2] Հմր 76. ԺԷ. դար. ձեռագիրը Լոնդոնում է: Այս Աստուածաշունչը պատկանում է Անգլիական աստուածաշնչական ընկերութեանը՝ Լոնդոնում [Հմր 76]. սրա մասին կրկին յիշատակում է Կոնիբէյրը՝ Jew. Quarterly Rew. (1896 թ. էջ 260)[348]*:*

76. Dj[10]. Հմր 77. ԺԷ. դար [Ն Ջ 16/2]: Ըստ Շերմազանեանի ցուցակի Ն. Ջուղայի Ամենափրկչի վանքում կայ Աստուածաշնչի երկրորդ ձեռագիրը՝ առանց գրչութեան թուականի, սակայն այն կրկին կազմուել է ՌՂԱ. (1642) թուականին, Փիլիպոս կաթողիկոսի հայրապետութեան օրօք:

77. V[10]. Հմր 78. Վենետիկի վանքի ձեռագիր Հմր 1006 [1006/6]: Գրուած է 581 թերթ մագաղաթի վրայ. 47 տող (մեծ. 25x17), բոլորգիր, Յովհաննէս Մալազ Կաոկաոեցու համար:

Ժամանակի մասին որեւէ բան չգտանք ո՛չ Զօհրապեանի մօտ եւ ո՛չ էլ «Բազմավէպ»ում[349]*: Ըստ Զօհրապեանի՝ հնարաւոր է գրուել է Կիլիկիայում, իսկ բնագրով նմանւում է Ոսկանի տպագրին: Ունի «Ֆռանկի» համարներ:*

[347*] Այժմ պատկանում է Բրիտանական գրադարանին՝ Or. 8833 համարով. տե՛ս Անգլիայի ցուցակ, Բ., էջ 59-71. Հմր 1:

[348*] Այժմ պատկանում է՝ The Brithish and Foreign Bible Societe-ին, Հմր 76. սրա նկարագրութիւնը եւս տե՛ս Անգլիայի ցուցակ, Բ., էջ 88-92. Հմր 3:

[349] Աստուածաշունչ Զօհրապեանի, Առաջաբան, էջ 6. Ցուցակ Վենետիկի Ս. Գրոց.- Բազմավէպ, 1891, էջ 129-130:

77. V^{11}, Հ՟ 79. Վենետիկի Մխիթարեանների ձեռագիր Հ՟ 6[350] *[1006/6]: Գրուած է մագաղաթի վրայ՝ բոլորգրով: Ժամանակի մասին տեղեկութիւն չգտանք:*

Այս 79 միաւորով աւարտւում է Աստուածաշնչի ձեռագրերի ամբողջական օրինակների մեր նկարագրութիւնը: Ցանկանալով ընդարձակել մեր աշխատանքը, իւրաքանչիւր համարի մասին բաւարարուել ենք՝ բերելով ամենահամառօտ եւ ամենակարեւոր տեղեկութիւնները: Ըստ Զարբհանալեանի՝ Վենետիկի մատենադարանում կայ ձեռագիր Աստուածաշնչի 13 օրինակ, իսկ գիտնական միաբանութեան տարբեր աշխատութիւններից մեզ յաջողուել է տեղեկութիւններ գտնել նրանցից միայն տասնմէկի մասին. մեզ նաեւ թւում է, որ Երուսաղէմի հայկական վանքի մատենադարանում կայ եօթից աւելի օրինակ, սակայն յոյս ունենք, որ հիմնական նիւթն [այստեղ] արդէն նշուած է, եւ այն լրացնելը դժուար չէ:

[350] **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 145: * Սա եւ նախորդը նոյն ձեռագիրն են. այսինքն՝ Մեսրոպ Մագիստրոսի «V^{10}» եւ «V^{11}» պայմանանիշերը վերաբերում են միեւնոյն՝ մէկ ձեռագրի:

2. ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ ՄԱՍՆԱԿԱՆ ՁԵՌԱԳՐԵՐ ԵՒ ԱՒԵՏԱՐԱՆՆԵՐ

Ա. Մասունք Հին եւ Նոր Կտակարանների

78. Ա. Հմր 1. ՈԽԶ. - 1207. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 203 [Մ 194]: Բաղկացած է 391 թերթից, [թուղթ], (25,5x17), գրուած է միջին երկաթագրով՝ Առաքէլ քահանայ գրչի ձեռքով, Յունան քահանայի համար: Պարունակում է Պօղոսի 14 թղթերը եւ Եսայիի մարգարէութիւնը:

[254ա] «Ի ստոյգ գիտողաց եւ յուղիղ աւրինակէ գրեցաւ, թէպէտ եւ ես ախմար էի, զի ոչ մտահաճութեամբ է ընտրեալ, այղ ի բազում աւրինակաց ընտրեալ եւ վկայե[ա]լ ի գիտնականաց եկեղեցւոյ»[351]*:*

79. Ա. Հմր 2. ԶԺԸ. - 1269. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 191 [Մ 142]: Գրուած է 328 թերթ մագաղաթի վրայ (20x14,5), Մարգարէ գրչի ձեռքով, Հռոմում՝ Սուրբ Պօղոս եւ Պետրոս եկեղեցուն կից հայոց «Հանգստարան»ում: Բովանդակում է Աստուածաշունչը՝ ծիսական գրքերով. Եսայիի մարգարէութիւնը, Սողոմոնի գրքերը, Եզրի Գ.՝ «Եզր մարգարէի տեսիլները», Սաղմոսներ, աղօթքներ՝ Մանասէի, երեք մանկանց, Աստուածամօր, Զաքարիայի եւ Սիմէոնի: Այնուհետեւ՝ ժամագիրք, Նարեկացու Աղօթագիրք, եւ յետոյ՝ Գործք առաքելոց, Թուղթք Յակոբայ, Յուդայի, Աղերս Եւթաղի, Թուղթք Պօղոսի, չորս Աւետարանք, կրկին ծիսական գրքերի մասեր: Յիշատակարանը հետաքրքիր է ձեռագիրը գրելու ժամանակ Հռոմում ապրած հայերի մասին տեղեկութիւններով:

80. Ա. Հմր 3. ՋԽԴ. - 1295. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 158, Դանիէլի յուցակի Հմր 152, էջ 10[352] *[Մ 181]: Գրուած է հաստ, մոմապատ թղթի վրայ, կազմուած է 228 թերթից. երկսիւն (25x16,5), քառածալ (in 4º), 30 տող, բոլորգիր. վնասուած մասերը լրացուած են նոտրգրով: Գրիչը Յովհաննէս քահանան է. ձեռագիրը գրել է ամենայն հաւանականութեամբ Մլէճ*[353] *վանքի միաբանութեան անդամ երկու եղբայրների՝ Ներսէս*

---

[351] Այս գրառումը իմաստով եւ ձեւով յիշեցնում է յաջորդող՝ Ր. 4 համարի յիշատակարանը (տե՛ս ստորեւ՝ 99. Ր. Հմր 4. [Մ 193]):

[352] **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 125:

[353] **Ղ. Ալիշան**, Սիսուան էջ 66 եւ 74՝ վանքի անունը գրում է «Մլիճ», թէեւ կասկածում է եւ իրաւացիօրէն ենթադրում, որ «Մլիճ»ը «Մլէճ»ի սեռական յոլովն է: * Ըստ Ալիշանի՝ բառի սեռականը կարող է լինել «Մլիճի» կամ «Մլիճոյ»:

եւ Թորոս քահանաների համար: Այնտեղ ձեռագրի գրչութեան թուականին վախճանուեց վանահայր Վարդան վարդապետը, որ «մականուն Հիւսն յորջորջի»: Ձեռագիրն առաջին անգամ կազմել է Հայրապետ քահանան, այնուհետեւ՝ Ստեփաննոս քահանան, Եւդոկիա (Թոխաթ) քաղաքում: Թերութիւնները չտկել-նորոգել է ոմն Աբրահամ:

Բնագիրը՝ [Յայտնութիւն, Հանգիստ, Տեսիլ սրբոյն Սահակայ, Թուղթք Պօղոսի, Գործք առաքելոց, Կաթողիկեայ եօթ թուղթք, Աղերս Եւթաղի, Մարգարէութիւն Եսայեայ, Սողոմոնի չորս գրքերը, Պօղոսի Ա. Կորնթացիս Գ. թուղթը, Հատուածներ Սիրաքի գրքից եւ Վարդան կրօնաւորի խոստովանութիւնը՝ գրուած չափածոյ՝ 303ա-6ա «Խոստովանութիւն մեղաց եւ խայտառակութիւն անձին ինքնայօժար կամօք եղկելոյս Վարդանայ» եւ այլ մանուկք][354]*:*

81. *Ա. Հմր 4. ՋԿԴ. - 1315. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 189 [Մ 192]: 367 թերթ (23x15,5), [թուղթ, երկսիւն, բոլորգիր, 21 տող]. Աբրահամ կրօնաւորը գրել է Թադէոս կրօնաւորի համար, Վանայ լճի Լիմ կղզում: Բվնդ.՝ Մարգարէութիւն Եսայեայ, Թուղթք Պօղոսի:*

82. *Ա. Հմր 5. ՊԵ. - 1354. Բեռլինի թագաւորական գրադարանի ձեռագիր [Ms. Or. Minut. 287]*[355]*: Գրուած է թղթի եւ մագաղաթի 271 թերթի վրայ՝ գրիչ Ստեփաննոսի ձեռքով, Յովհաննէս կրօնաւորի համար, Սուրբ Աթոռ քաղաքում: Բվնդ.՝ Մարգարէութիւն Եսայեայ, Թուղթք Պօղոսի:*

83. *Ա. Հմր 6. ՊԻ. - 1371. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 195 [Մ 62]: Կազմուած է 319 թերթից (16x12). գրիչն է Ստեփաննոս քահանան, Աւագ անապատում: Բվնդ.՝ Մարգարէութիւն Եսայեայ, Պօղոսի 15 թուղթք, Յայտնութիւն, Հանգիստ, Գործք առաքելոց, Եօթ թուղթք կաթողիկեայք եւ Աղերս Եւթաղի:*

84. *Ա. Հմր 7. ՊԻՐ. - 1379. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 188 [Մ 159]: 314 թերթ (21,5x15), [թուղթ, երկսիւն, բոլորգիր, 17-33 տող]. Կարապետ գրիչը գրել է Ապրակունիս գիւղի Սուրբ Սարգիս եկեղեցում: Բվնդ.՝ Մարգարէու-*

---

[354]* Ռուսերէն գրքի էջ 153՝ ձեռագրի բովանդակութիւնը ներկայացրել է այսպէս. «Բնագիրը ճիշտ չի գրուած. ունի այսպիսի կարգ. Չորս Աւետարան, Պօղոսի թուղթք, Գործք առաքելոց, Եօթ թուղթք կաթողիկեայք, Եսայեայ մարգարէութիւն: Այժմ լրացումներով ձեռագիրն ունի. Հատուածներ Սիրաքի գրքից, Յայտնութիւն, Հանգիստ, Սուրբ Սահակի Տեսիլը, Թուղթք Պօղոսի, Գործք առաքելոց, Աղերս Եւթաղի, Եսայի մարգարէ, Սողոմոնի չորս գրքերը, Պօղոսի Գ. թուղթը եւ Վարդան կրօնաւորի չափածոյ խոստովանութիւնը»:

[355] Տե՛ս Die handschriften-Verzeichnisse der Königlichen Bibliothek zu Berlin, Zehnter Band, Verzeichniss der armenischen Handschriften, von **Dr. N. Karamianz**, Berlin, 1888, էջ 3, ձեռ. Հմր 5 (VIII+88 էջ):

թիւն Եսայեայ, Թուղթք Պօղոսի, Գործք առաքելոց, Եօթ թուղթք կաթողիկեայք, Աղերս Եւթաղի, Կիւրեղ Երուսաղէմցու թուղթը Խաչի յայտնութեան մասին՝ [«Վասն երեւելոյ նշանին խաչին յերկնից»], Սողոմոնի չորս գրքերը եւ հատուածներ Աւետարանից՝ [Իւղաբերից, Բժկութեան]:

85. *Ա. Հմր 8. ՊՁ. - 1431. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 200 [Մ 149]: 279 թերթ (18x12,5) գրել է Կարապետը՝ Երուսաղէմում: Բվնդ. Հանգիստ, Յայտնութիւն, Մարգարէութիւն Եսայեայ, Թուղթք Պօղոսի, Կանոնք սրբոց Առաքելոց, Գործք առաքելոց, Եօթ թուղթք առաքելոց:*

86. *Ա. Հմր 9. ՌՀԷ. - 1628. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 196 [Մ146]: 401 թերթ (20x12,5). գրել է Մեսրոպ դպիրը Գրիգոր վարդապետի համար: Բվնդ.՝ Սողոմոնի գրքերը՝ Ներսէս Շնորհալու տաղերով հանդերձ, Գործք առաքելոց, Եօթ թուղթք կաթողիկեայք, Եւթաղ, Յայտնութիւն, Սիրաք: Ունի՝ [224բ-5բ] «Ներսիսի Կլայեց[ւ]ոյ (=Լամբրոնացւոյ) [Յիշատակարան թարգմանութեան Յայտնութեանն Յովհաննու]»՝ Յայտնութիւնը Աստուածաչնչի հայկական կանոն մուծելու մասին:*

87. *Ա. Հմր 10. ՌՁԶ. - 1637. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 194 [Մ 145]: 334 թերթ (17,5x11,5), գրիչը Ղազարն է: Բվնդ.՝ Մարգարէութիւն Եսայեայ, նրա մահը եւ Պօղոսի թուղթք:*

88. *Ա. Հմր 11. ՌՃԺԷ. - 1668. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 944 Գ [Մ 3545]*[356]*: 268 թերթ (18,5x12), գրել են Թադէոս դպիրը եւ Ալէքսանը՝ Յովհաննէս վարդապետի համար, Շոռոթ գիւղում: Բվնդ.՝ Եսթեր, Տովբիթ, Յոբ, Եօթ թուղթք կաթողիկեայք, [Աղերս Եւթաղի], Յայտնութիւն, Հանգիստ, Սահակ կաթողիկոսի Տեսիլը, ԺԲ. մարգարէք, Դանիէլ մարգարէ եւ Երեմիայի ողբը:*

89. *Ա. Հմր 12. ՌՃԾԲ. - 1703. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 210 [Մ 77]: 272 թերթ, տէրը Մարգարէ Ապուչեհցի եպիսկոպոսն է: Բվնդ.՝ ԺԴ. թուղթք Պօղոսի, Սողոմոնի գրքերը՝ Ներսէս Շնորհալու չափածոներով, Թուղթ Յակոբի, Յովհաննու Ա-Գ. թուղթք:*

90. *Ա. Հմր 13. ՌՃՁԲ. - 1733. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 213 [Մ 80]: 205 թերթ (15,5x10,5), պատկանել է Մովսէս քահանայի: Բվնդ.՝ Եօթ թուղթք կաթողիկեայք, Սիրաքի գիրքը:*

91. *Ա. Հմր 14. ԺԳ. դար. Վատիկանի գրադարանի ձեռագիր cod. Arm.*

---

[356]* Գէորգեան համարը վրիպմամբ տպուած է 944, որ արդի 2440ն է, մինչ ներկայացուած ձեռագիրը Գէորգեան 994ն է, որ արդի 3545ն է, եւ որի ճշգրիտ թուականն է՝ ՌՃԺԶ.-ՌՃԺԷ.՝ 1667-1668 թթ.:

III [Cod. Vat. Arm. 3][357]: Գրուած է մագաղաթի վրայ, կազմուած է 469 թերթից (23x43), բոլորգիր, գրիչ՝ Ռօբէն: Բվնդ.՝ (թերթ 3-43). Եւսեբի թուղթ առ Կարպիանոս, Ջորս Աւետարանների նախադրութիւնները եւ գլխացանկերը, Դաւիթ փիլիսոփայի Սաղմոսների մեկնութիւնը, Եսայիի մարգարէութեան եւ Պօղոսի բոլոր թղթերի գլխացանկերը[358]:*

92. *Ա. Հմր 15. ԺԵ. դար. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 199 [Մ 148]: Ունի 410 թերթ (16x10,5), գրել է Ալէքսան Նորաշէնցին՝ Բարսեղ վարդապետ Սիւնեցու համար՝ երնջակում: Բվնդ.՝ Եսայի, Գործք Առաքելոց, Եօթ Թուղթ կաթողիկեայք, [Աղերս Եւթաղի], Յայտնութիւն, ԺԴ. Թուղթք Պօղոսի:*

93. *Ա. Հմր 16. ԺԷ. դար. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 223 [Մ 229]: 276 թերթ (18,5x14): Բվնդ.՝ Եօթ Թուղթք կաթողիկեայք., Աղերս Եւթաղի, Առակք, Ժողովող, [Իմաստութիւն]:*

94. *Ա. Հմր 17. ԺԷ. դար. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 1020 Գ [Մ 3604]: 315 թերթ (16,5x12,5), գրիչ՝ Դաւիթ: Բվնդ.՝ Թուղթք Պօղոսի, Յոբի գիրքը եւ Եսայիի մարգարէութիւնը:*

95. *Ա. Հմր 18. ԺԷ. դար. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 342 Գ [Մ 2397]: Բվնդ.՝ Սողոմոնի, Յոբի, Սիրաքի գրքերը եւ Առաքեալների եօթ կաթողիկեայ թղթերը[359]*:*

Բ. Հին[360]* Կտակարանի որոշակի գրքեր ունեցող ձեռագրեր

96. *Բ. Հմր 1. ՁԷ. - 1258.[361]* Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 215 [Մ 287]. գրուած է 288 թերթ մագաղաթի վրայ (մեծ. 21x15). գրիչն է Կոստանդին քահանան, ստացողը՝ Պետրոս կրօնաւորը. եւ պարունակում է հետեւեալ գրքերը. Յոբ (ԺԴ. 12ից մինչեւ վերջ), Սաղմոսք, Առակք [եւ Սողոմոնի միւս գրքերը], բոլոր մարգարէները, առանց գլխացանկերի եւ նախադրութիւնների:*

97. *Բ. Հմր 2. ՁԻ. - 1271. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 186 [Մ 199].*

---

357 Համմտ. Միսքճեան, Ցուցակ Վատիկանի.- Հանդէս ամսօրեայ, 1892, էջ 245:

358* Աւելի մանրամասն տե՛ս Վատիկանի ցուցակ, էջ 205-221:

359* Գրքում Գէորգեան հաւաքածուի համարը վրիպմամբ կամ թուերի դրափոխութեամբ 432 է, որ Մ 3785ն է եւ որ բովանդակութեամբ սուրբգրական չէ: Իսկ Մ 2397 ձեռագիրը 1640 թ. գրուել է Էջմիածնում, գրիչ եւ ծաղկող՝ Մովսէս կր., ստացող՝ Առաքել եպս., Սիրաքի գիրքը չունի, այլեւ՝ ունի Աղերս Եւթաղի:

360 Գրքում (էջ 155) վրիպմամբ տպուած է՝ «Նոր Կտակարանի» («H. Завѣта»), իսկ ցանկում (էջ Է.) ճիշտ է՝ «B. Завѣта»:

361* Թուականը սխալմամբ գրել է՝ ՁԵ. - 1256:

գրիչ [եւ ստացող]՝ Կոստանդին կրօնաւորը, «ի հռչակաւոր ուխտս Դրազարկ եւ յանապատս Վանկունք». Մանրանկարները նկարել է Գրիգոր քահանան: Ունի հետեւեալ գրքերը. Յոբ, Սաղմոսք, Առակք, Ժողովող, Երգ երգոց, [Իմաստութիւն], Եսայի, Երեմիա, [Բարուք], Եզեկիէլ, Դանիէլ, ԺԲ. մարգարէք, առանց գլխացանկերի եւ նախադրութիւնների: Գրիչն իր յիշատակարանում ձեռագրի առանձնայատկութեան մասին հաղորդում է հետեւեալը. [433բ] «Որք պատահիք այսմ գրո՝ ընթերցմամբ կամ աւրինակելով, համարձակ լերո՛ւք, զի բազում աշխատութեամբ ուղղեցի: Եւ որ ինչ ի սմա ըստ մտի թուեցի, գոհութիւն Տեառն մատուցի, եւ եթէ սխալ ինչ հանդիպեցի՝ զիջմամբ ըստ իս ներելով թողցի, զի ո՛չ ծուլութեամբ անփոյթ արարի, այլ մեծաւ ջանիւք այդչափ կարացի»:

Մահուանից առաջ գրիչ Կոստանդինն իր Աստուածաշունչը կտակել է Մլէճի Աստուածամօր անունով վանքին՝ [107բ «զկնի մահուան իմոյ տաց զսա ի ժառանգութիւն մաւրն Աստուծոյ՝ ի յԱւագ Մլիճին»]: Ինչպէս երեւում է մի յիշատակութիւնից [1ա], 1675 թուականից ձեռագիրն արդէն գտնուել է Էջմիածնում:

98. *Բ. Ձ^ր 3. ՁԿԱ. - 1312. Էջմիածնի վանքի ձեռագիր Ձ^ր 224*[362]** [Մ 231], գրուած է բոլորգրով, 367 թերթ (մեծ. 16x12). գրիչ Սահակի ձեռքով, երկու հոգեւորականների՝ Պօղոսի եւ Պետրոսի համար: Պարունակում է Սողոմոնի չորս գիրքը, Յոբի եւ 12 մարգարէների գրքերը: Համառօտ յիշատակարանում հաղորդւում է. [165բ] «Քրիստո՛ս Աստուած, յարութիւն կենաց պարգեւեա՛ տեառն Ներսէսի Հայոց կաթողիկոսի, որ զաւրինակս է չինել, եւ զ Կոստանդին փիլիսոփա, որ զաւրինակս երետ»*[363]**:*

99. *Բ. Ձ^ր 4. ՁԽԸ. - 1299*[364]*. Էջմիածնի վանքի ձեռագիր Ձ^ր 190 [Մ 193]. գրուած է 175 թերթ թղթի վրայ (մեծ. 25,5x16). գրիչներն են Աբրահամը եւ Յովսէփը, [170ա] «ի գաւառիս Արճիշոյ կոչեցեալ, յանուանեալ անապատիս Ասպիսնկա վանք»: Բվնդ.՝ Սողոմոնի չորս գրքերը եւ ԺԲ. մարգարէք: Ունի երկու բաւական հետաքրքիր յիշատակում, որոնցում հաղորդւում է այս օրինակի համեմատումը երեք այլ օրինակների հետ. [169բ] «Ուղղեալ է զաւրինակս զայս յԱղեքսանդրացւոց եւ յերուսաղէ-*

362* Համարը վրիպակով տպուած է՝ 223:

363* 1312 թուականի է միայն Փերճոց անապատում անյայտ գրչի ձեռքով գրուած՝ ԺԲ. մարգարէից մասը՝ թ. *253-368*, մնացեալն անթուական է, մօտաւոր թուագրումը՝ ԺԴ. դար. տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Ա., կազմեցին՝ Օ. Եգանեան, Ա. Ջէյթունեան, Փ. Անթաբեան, խմբագրութեամբ՝ Ա. Մնացականեանի, Օ. Եգանեանի, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1984, էջ 1027-1034:

364 Այս միաւորը նման է յաջորդին, այդ պատճառով մենք այն շարքի մէջ ըստ ժամանակի չենք դրել:

մացւոց աւրինակէ, դարձեալ եւ ի Զորեքկնւոյն Ովրիգենի: Գրեցաւ երկոտասան մարգարէս ըստ Եւթնասնիցն եւ երկուց Թարգմանացն»:

Միւս յիշատակութիւնը Յովսէփ գրչի գլխաւոր յիշատակարանի մի մասն է. [171ա] «...Եւս եւ յաւէտ զհարազատ հոգեւոր վարդապետն մեր՝ զՄխ(իթար), որ զաւրինակն չնորհեաց, չնորհեսցէ նմա զիւր երկնից արքայութիւնն: Բայց գրեցաւ ի սաստիկ եւ յընտրելագոյն աւրինակէ, ի վաղուց հետէ ստուգեալ եւ ճչմարտեալ ի նոյն պայմանի, բայիւք[365] եւ բառիւք, եւ տառիւ անթերի եւ անսղալ գոլով, զի թէպէտ եւ յաղագս մերոյ կարեաց ի սոյնս ձեռնարկեցաք, սակայն եւ առաւել եւս վասն աւրինակի եւ գաղափար այլոց լինելոյ, սա ըստ յարմարութեան բանիցն, զի ամենայն ոք համարձակ զայս առցէ՝ առ ի յայլս փոխելոյ, առանց երկբայութեան եւ կասկածանաց»:

Այս, ինչպէս եւ նախորդ յիշատակարանը բառացիորէն հանդիպում է յաջորդ՝ 5րդ ձեռագրում, որում չկան ԺԲ. մարգարէից գրքերը, այդ պատճառով էլ կրճատուած է առաջին յիշատակարանի այն մասը, որտեղ ասւում է. «Գրեցաւ երկոտասան մարգարէս ըստ Եւթնասնիցն եւ երկուց Թարգմանացն»:

100. *Բ. Հմր 5. ՉԿԶ. - 1317. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 209 [Մ 76]. գրուած է 176 թերթի վրայ (մեծ. 16x12), Յովհաննէս կրօնաւորի ձեռքով, «յանապատին Արծկէու, ի գաւառին Բզնունեաց»: Բովանդակում է Սողոմոնի գրքերը եւ ունի երկու յիշատակութիւն՝ բերուած Հմր 4ում: Քանի որ երկուսն էլ՝ Արճէշ եւ Բզնունի գաւառները գտնուել են Վասպուրականում՝ Վանայ լճի մօտ, ապա ենթադրելի է, որ առաջինը՝ Հմր 4 ձեռագիրը, Հմր 5ի գրչի համար ծառայել է որպէս հիմնօրինակ:*

101. *Բ. Հմր 6. ՉՉԶ. - 1337. ձեռագիր Վիեննայի մխիթարեանների Հմր 274[366]: 373 թերթ (24x16). գրիչն է Մարգարէ քահանան, գրել է Ղազար քահանայի համար: Բովանդակում է Սողոմոնի չորս գրքերը, ԺԲ. մարգարէք, Դանիէլ մարգարէ եւ Դանիէլի եօթներորդ տեսիլը: Սողոմոնի գրքերի հետ կան Շնորհալու տաղերը:*

102. *Բ. Հմր 7. ԺԲ. դար(?). Կարնոյ Սանասարեան վարժարանի ձեռագիր[367] [Մ 7753]: 183 թերթ (26x16): Բվնդ.՝ գիրք Ծննդոց, գլ. ԻԹ. 14 - Թիւք, գլ. ԺԸ. 22:*

---

365 Հմր 5ի տարընթերցումներ՝ յընտիր] յընտրելագոյն, բառիւք եւ բառիւք] բայիւք եւ բառիւք

366 Տաշեան, Ցուցակ, գերմ. մասի էջ 147 եւ հայերէնի էջ 694-6:

367 Ցուցակ հայերէն ձեռագրաց Սանասարեան վարժարանի ի Կարին, Կազմեց **Հրաչեայ Ց. Աճառեան** (Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց. Հրատարակեալ ի

103. *Բ. Հմր 8. ՊԺ. - 1361. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 198 [Մ 73]: 185 թերթ, գրիչ Կիրակոս քահանան գրել է Յովհաննէսի համար: Բովանդակում է ԺԲ. մարգարէք, Յոբի գիրքը, Եզեկիէլ մարգարէ, Դանիէլ, Սողոմոնի չորս գիրքը. բոլոր գրքերը թերի-վնասուած են, սակայն ձեռագրի բնագիրը լաւն է, գլխացանկը եւ նախադրութիւնք չունի:*

104. *Բ. Հմր 9. ՊՂՋ. - 1447. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 187 [Մ 141]: 327 թերթ (22x16,5). գրել է Մխիթար քահանայ գրիչը: Բովանդակում է՝ Հնգամատեանը:*

105. *Բ. Հմր 10. ՌՆԹ. - 1630. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 212 [Մ 79]: 379 թերթ, գրել է Սարգիս սարկաւագ գրիչը: Բվնդ.՝ Սողոմոնի բոլոր գրքերը, Սիրաք եւ Յոբ:*

106. *Բ. Հմր 11. ՌՋ. - 1631. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 207 [Մ 75]: 335 թերթ (15x10), գրուած է Էջմիածնում: Բովանդակում է՝ Յոբի գիրքը, «Հարցմունք Դչխոյին Հարաւոյ ընդ Սողոմոնի», Սողոմոնի գրքերը, Սիրաք, Բանք իմաստասիրաց եւ զանազան աղօթքներ:*

107. *Բ. Հմր 12. ՌՂՋ. - 1647. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 205 [Մ 74]: 240 թերթ մագաղաթ (11,5x9). Մանկասարի ձեռքով գրուած է Հայրապետ քահանայի համար: Բվնդ.՝ Առակք, [Ժողովող], Երգ Երգոց, Իմաստութիւն Սողոմոնի եւ գիրք Սիրաքայ:*

108. *Բ. Հմր 13. ՌՃԽԵ. - 1696. Վիեննայի Մխիթարեանների ձեռագիր Հմր 319*[368*] *ըստ Տաշեանի ցուցակի: Ձեռագիրը բաղկացած է երկու մասից. երկրորդ մասում ունի Սիրաքի գիրքը՝ Ստեփաննոս Լվովցու թարգմանութեամբ:*

109. *Բ. Հմր 14. ԺԳ. դար. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 163, Դանիէլի ցուցակի Հմր 157 [Մ 185]: Գրուած է 328 թերթ հաստ մոմապատ թղթի վրայ, երկսիւն (24,5x16,2), 28 տող, բոլորգիր. գրել է Պօղոսը՝ Յովհաննէս վարդապետի համար: 1465 թուականի մի յիշատակարանի մէջ հաղորդուում է, որ անհաւատները գերի են վերցրել Վրաստանի Գորգի թագաւորին, եւ նրան յաջորդել է նրա զարմիկ Կոստանդինը, իսկ մի տարի յետոյ՝ Բագրատը:*

Ձեռագիրը պակասաւոր է. բովանդակում է միայն՝ Հնգամատեանը, Յեսու, Դատաւորք, Եզրի մի մասը, Հռութ, Եսթեր, Յուդիթ եւ Տովբիթ:

Մխիթարեան միաբանութենէ, հարող Ջ. Տաճկաստան, տետր Ա.), Վիեննա, տպ. Մխիթարեան, 1900, էջ 20 (IX, Ժ-ԺԵ., 37 երկսիւն էջ. այսուհետեւ՝ Ակնարկ Տաճկաստանի):

368* Գրքում ձեռագրի համարը վրիպմամբ 139 է. թուականը եւս ուղղելի՝ ՌՃԽԳ. - 1694:

110. *Բ. Հմր 15. ԺԵ. դար. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 216 [Մ 156]: 299 թերթ (13x7,5), գրիչը Պետրոս կրօնաւորն է: Բվնդ.՝ Եզեկիէլ մարգարէ եւ նրա մահը, ԺԲ. մարգարէք եւ նրանց մահերը:*

111. *Բ. Հմր 16. ԺԶ. դար. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 220 [Մ 230]: 171 թերթ (16x12), տէրը՝ Եսայի: Բվնդ.՝ Սողոմոնի գրքերը եւ Սիրաք:*

112. *Բ. Հմր 17. ԺԷ. դար. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 219 [Մ 271]: 269 թերթ (12,5x9,5). բվնդ.՝ Սողոմոնի գրքերը եւ Սիրաք:*

113. *Բ. Հմր 18. ԺԷ. դար. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 214 [Մ 81]: 263 թերթ (13,5x8,5). բվնդ.՝ Յոբի գիրքը եւ Սողոմոնի գրքերը, [Սիրաք՝ թրգմ. Ստ. Լեհացու]: Վերջում կայ յօդուած տասներկու ուսուցիչ-վանականների մասին՝ [258ա «ԲԺ.տասան սուրբ վարդապետաց անուվանք»]:*

114. *Բ. Հմր 19. ԺԷ. դար. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 225 [Մ 232]: 284 թերթ (13,5x10,5). բվնդ.՝ Մարգարէութիւն Եսայեայ եւ գիրք Սիրաքայ:*

115. *Բ. Հմր 20. ԺԷ. դար. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 193 [Մ 144]: 253 թերթ (20x14). բվնդ.՝ Եսայի, Երեմիա, Դանիէլ, Եզեկիէլ եւ նրա մահը, ԺԲ. մարգարէք եւ բոլորի մահերը:*

116. *Բ. Հմր 21. ԺԷ. դար. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 144 Գ [Մ 2856]: Ձեռագիրը կազմուած է երկու մասից. 1-208 թերթերն ունեն Հնգամատեանի Վարդանի մեկնութիւնը, իսկ թերթ 209ից մինչեւ վերջ՝ Յեսու Նաւէից մինչեւ Մակաբայեցւոց գրքերը ներառեալ եւ հատուած Դանիէլի մագարէութիւնից:*

Գ. Աւետարանի ձեռագրեր

117. *Գ. Հմր 1, ՅԼԶ. - 887. Արեւելեան Լեզուների Լազարեան ճեմարանի հիմնակազմ գրադարանի ձեռագիր Հմր 1111[369] [Մ 6200]: Այն գրուած է հաստ մագաղաթի վրայ, ունի 229 թերթ (37x28 սմ), էջում 22ական տող, երկսիւն: Երկաթագիր է, գրիչը Վարդան Վանանդեցու որդի Սահակ Վանանդեցին է (այժմ Կարսի մարզ): Այն 1847 թուականին ճեմարանին է նուիրել Թէոդոսիայից մի վաճառական, իսկ թէ դրանից առաջ ո՞ւր է եղել այն՝ անյայտ է:*

Բնագիրն Աւետարան է՝ Եւսեբիոսի կանոններով, իսկ լուսանցներում հանդիպում են տարընթերցումներ: Պրոֆեսոր Խալաթեանցի հրատարակութեան չնորհիւ հայերէն գրչութեան այս հնագոյն յուշարձանը գիտական աշխարհին հասու է դարձել:

[369] Լազարեան Աւետարանի ձմռնատիպ, 1899. վերեւում ներկայացուած՝ տե՛ս ծնթ. 58:

118. *Գ. Հ՟Բ 2. ՆԺԴ. - 965. Սեւանի վանքի ձեռագիր Հ՟Բ 1 [Մ 7737]: Գրուած է 339 թերթ սպիտակ մագաղաթի վրայ, երկսիւն է (26,5x8,5), 19ական*[370] տող, երկաթագիր: Ունի չորս աւետարանիչների մանրանկարները եւ մի քանի կիսախորան: «Վանքի ձեռագիր ցուցակում գրչութեան ժամանակը նշուած է 965 թուականը եւ, դատելով գրից, ձեռագիրն իսկապէս հնագոյն է, սակայն յիշատակարանը... ի դէպ, թերի է, ոչ մի վկայութիւն չի տալիս ո՛չ ժամանակի ոչ էլ ընդօրինակողի մասին»*[371]*:*

Բնագիրը Աւետարան է՝ Եւսեբիոսի կանոններով: Յովհաննէսի վերջում «անառակ կնոջ» հատուածն է:

119. *Գ. Հ՟Բ 3. ՆԺԵ. - 966. ձեռագիր Անտոնեան միաբանութեան վանքում, Կոստանդնուպոլսում*[372] *[WAG 537]*[373]*:*

119. Գ. Հ՟Բ 4. ՆԺԵ. - 966. ձեռագիր Նոր Ջուղայում, Պարսկաստանում [WAG 537][374]*: Այս ձեռագրի մասին նշում ենք կարդացել Ներսէս Ե. կաթողիկոսի կոնդակում, գրուած 1846 թուականի Հոկտեմբերի 26ին*[375]*: Կաթողիկոսը իր կոնդակով Ջուղայի թեմական առաջնորդ Յովհաննէսից պահանջում այդ ձեռագիրն ուղարկել Էջմիածին: Այն գրուած է եղել երկաթագրով, մագաղաթի վրայ եւ ունեցել է յիշատակարան. «Գրեցաւ*

370* 19ի փոխարէն տպուած էր՝ 79:

371 Ցուցակ համառօտ ձեռագրաց վանուց Սեւանայ, [կազմեց Ն. Մառ]. Ցամառնային ՌՅԼԹ. թ. ի Հայաստան ճանապարհորդութենէ, Մոսկուա, տպ. Մկրտիչ Բարխուդարեանի, 1892, ՌՅԽԱ. (շապիկին՝ **Н. Марръ.** Списокъ рукописей Севанского монастыря изъ лътней (1890) поездки въ Арменію. Москва, тип. М. Бархударянь, 1892), էջ 1 (IV, 59 երկսիւն էջ):

372 **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 158: Միաբանութեան անդամները կաթոլիկ հայեր են, որոնք ըստ լուրերի Կոստանդնուպոլսում ունեն լաւ գրադարան՝ հազուագիւտ ձեռագրերով:

373* Անտոնեան վանքի այլ ձեռագրերի նման վաճառուել է եւ այժմ է ի Բալթիմոր, Waltres Art Gallery, Հ՟Բ 537. տե՛ս A Catalogue of Medieval Armenian Manuscripts in the United States, by **Avedis K. Sanjian**, University of California Publications. Near Eastern Studies, 16, University of California Press, Berkeley, Los-Angeles, London, 1976, էջ 260-267 (այսուհետեւ՝ **Ա. Սանճեան**, Ցուցակ Ամերիկայի). տե՛ս նաեւ http://www.thedigitalwalters.org/Data/WaltersManuscripts/html/W537/description.html:

374* Այս եւ նախորդը՝ Բալթիմորի Waltres Art Galleryի 537ը, նոյնն են. թիւրիմացութեան պատճառը թուատառի Ե-Է շփոթն է, այսինքն՝ սրա թուականը, որ Մագիստրոսը կարդացել է «ՆԺԷ. - 968», իրականում ՆԺԵ. - 966 է: Հմմտ. **Գարեգին Ա. կաթողիկոս** [Յովսէփեան], Ցիշատակարանք ձեռագրաց, հտ. Ա. (Ե. դարից մինչեւ 1250 թ.), Անթիլիաս, 1951, էջ 121-122. Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, Ե.-ԺԲ. դդ., աշխատ. Ա. Մաթեւոսեանի, Երեւան, 1988, էջ 58-59:

375 Ներսէս կաթողիկոսի 1846-1854 թուականների կոնդակների կրկնօրինակները գտնւում են Սանասարեան վարժարանի ձեռագրերի հաւաքածոյում: Դրանք երեք մեծ եւ մեծադիր հատոր են: * Այս երեք հատորն իր իսկ՝ Մեսրոպ Տէր-Մովսիսեանի ձեռքով բերուել են Էջմիածին եւ այժմ Մաշտոցեան Մատենադարանում են՝ ձեռ. Հ՟Բ 4585-4587:

սուրբ Աւետարանս ՆԺԵ. թուականութեան Տեառն մերոյ, հրամանով եւ ծախիւք Թորոս քահանայի, միաբանութեամբ ամենայն ընտանեացն... Ես՝ Սարգիս անարժան քահանայ գրեցի...»[376]*: *Այս ձեռագիրն էջմիածնի վանքի մատենադարանում չկայ. այն չենք գտել նաեւ Նոր Ջուղայի ձեռագրացուցակում, որ կազմել է Գ. Շերմազանեանը, որի մօտ թուագրուած հնագոյն ձեռագիր Աւետարանը 1218 թուականի է:*

120. *Գ. Հմր 5, ՆՀԵ. - 986. կարնոյ Սանասարեան հայկական վարժարանի ձեռագիր Հմր 1*[377] *[Մ 7735]:*

Գրուած է 220 թերթ մագաղաթի վրայ. երկսիւն է (31x24), մեծադիր (in folio): 986 թուականին Եղիա քահանան ձեռագիրը ձեռք է բերել իր որդիներ Խաչիկի եւ Գրիգորի համար: Ե-ԺԲ. դդ-ի յիշ-ք, էջ 68:

Բնագրում միայն չորս Աւետարաններն են, Եւսեբիոսի աղիւսակներով եւ լուսանցներում տարընթերցումներով:

121. *Գ. Հմր 6. ՆՀԸ. - 989. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 229, Դանիէլի ցուցակի Հմր 222 [Մ 2374]: Էջմիածնի ամենահին թուագրուած ձեռագիրն է, կարեւոր հետաքրքրութիւն ունի ոչ այնքան իր բնագրով, որն՝ ի դէպ, դեռեւս ուսումնասիրուած չէ, որքան իր մանրանկարներով եւ փղոսկրէ երկու տախտակէ կազմով, այսպէս ասած՝ դիպտիխներով (երկտախտակով): Ամէն փեղկ բաժանուած է հինգ շերտի, որոնց վրայ փորագրուած են Փրկչի եւ Աստուածամօր երկրային կեանքի տարբեր դրուագների ուռուցիկ պատկերներ: Բիւզանդական արուեստի յայտնի մասնագէտ Յ. Ստրիժիգովսկին հիմնաւոր կերպով ուսումնասիրել է երկու փեղկերը եւ ձեռագրի բոլոր մանրանկարները, եւ իր աշխատութիւնը հրատարակել է «Էջմիածնի Աւետարան» անուամբ, որը լոյս է տեսել գերմաներէնով եւ հայերէն թարգմանութեամբ*[378]*:*

Մագաղաթէ ձեռագիրն ունի 232 թերթ, գրուած է երկաթագրով, երկսիւն (մեծ. 35x28), մեծադիր (in folio), 20 տող: Գրիչ Յովհաննէսն այն գրել է Ստեփանոս վարդապետի համար, որը Մաղարդի Սուրբ Ստեփանոս Նախավկայի վանքի[379] *վանահայրն էր: Վանահայրը այն նուէր է մա-*

[376]* Ձեռագրիս թուականը Ե-Է. սովորական շփոթի հետեւանքով Մ. Տ-Մ. գրել է 968. ուղղել ենք եւ յիշատակարանի քաղուածքն առել՝ Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, Ե.-ԺԲ. դդ., աշխատ. Ա. Մաթեւոսեանի, Երեւան, 1988, էջ 58-59ից:

[377] **Ադճառեան**, Ցուցակ Սանասարեան վարժարանի, էջ V 1-3 /**H. Adjarian,** Catalog der arm. Handschriften an der bibliothek der Sanasarian-institutes zu Erzerum, Wien 1900. Ցուցակը տպագրուած է հայերէն՝ գերմաներէն համառօտ քաղուածքներով):

[378] **J. Strzygowski,** Das Etschmiadzin-Evangeliar, Beiträge zur Geschichte der armenischen, ravennatischen und syro-ägyptischen Kunst, Wien 1891, 4^0, VIII, 128:

[379] Այդ վանքը գտնւում է ներկայիս Երեւանի Ճահճոյի Դալարագեազի գաւառում. այն անուանուել է նաեւ «Նոր Վանք»: Ստեփանոսի անունով միւս վանքը Արաքսի

տուցել իր վանքին: Կայ նաեւ 1174 թուականի գրառում, իսկ հետագայ ճակատագրի մասին, եւ յատկապէս՝ թէ ե՞րբ են փղոսկրէ տախտակներն օգտագործուել ձեռագիրը կազմելու համար՝ անյայտ է[380]*:*

Բնագիրը՝ չորս Աւետարան, Եւսեբիոսի թղթով, Ամոնի կանոններով եւ նշաններով: 1891 թ. այս ձեռագրում կոնիքէրը նկատեց Մարկոսի ԺԶ. 9-20 յայտնի հատուածին վերաբերող՝ կարմիր թանաքով գրուած յատուկ վերնագիր «Արիստոն երիցու»:

«Անառակ կնոջ» հատուածը տեղադրուած է Յովհաննու Աւետարանի բնագրի Ը. գլխում՝ «Իրք կնոջն շնացելոյ» լուսանցային ծանօթութեամբ:

Վերջում՝ երեք էջի վրայ, առաւել մանր երկաթագրով կայ Աւետարանի տօնական ընթերցումների օրացոյցը՝ [«Աւետարանացոյց»]:

122. *Գ. Հմր 7. ՆԾ. - 1001. պէտք է ենթադրել՝ Վենետիկի վանքի(՞) ձեռագիր [Վ 1268/126]: Գրուած է մագաղաթի վրայ, երկաթագրով: Ըստ Զարբ. ՄՀԹՆ, էջ 158՝ այս ձեռագրի գտնուելու վայրի մասին որեւէ բան չի ասւում:*

123. *Գ. Հմր 8. ՆԾԶ. - 1007. Վենետիկի վանքի՞ ձեռագիր [Վ 887/116]: Գրուած է երկաթագրով՝ մագաղաթի վրայ. գրիչ Կիրակոսն այն գրել է Մակեդոնիայում՝ Ադրիանուպոլիս քաղաքում, Վասիլի թագաւորութեան օրօք. «Եւ ես՝ Յովհաննէս պոտուսպաթար թագաւորի եւ պողքսիմոս տուկս Թոթորականիս ճորտս, որ գրել ետու զսուրբ զԱւետարանս իմ հոգեացս չիշատակ»*[381]*:*

124. *Գ. Հմր 9. ՆՁԵ. - 1036. ձեռագիրը Վենետիկի վանքի(՞) [Ն Ձ 53/19]: Գրուած է մագաղաթի վրայ՝ երկաթագրով, Թորոս կրօնաւորի ձեռքով*[382]*:*

125. *Գ. Հմր 10. ՆՁԷ. - 1038. ձեռագիրը Շխնոց գիւղի, կարինի մօտ՝ Սուրբ Յովհաննէս եկեղեցում [Մ 6201]: Գրուած է մագաղաթի վրայ. ունի մանրանկարներ*[383]*:*

ափին է, Հին Ջուղայի մօտ. երբեք չի կոչուել «Նոր վանք»: Տե՛ս ***Ալիշան***, Սիսական, 1893, էջ 203-204:

[380*] Այս ձեռագրի՝ Բղենոյ Նորավանքում ստեղծուելու եւ հետագայ ճակատագրին վերաբերող հարցերի մեծ մասի պատասխանները տուել է՝ Ս. Բարխուդարեան, «Էջմիածնի աւետարանի» գրչութեան վայրը.- Բանբեր Մատենադարանի, հտ. 4, Երեւան, 1958, էջ 43-59:

[381] **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 158:

[382] **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 159: * Թուականը գրել է՝ ՆՁԷ. - 1038, հետեւանք «Ե-Է» շփոթի:

[383] Յիշատակուած է «Արեւելք» թերթում՝ 1892, մայիս 12 եւ «Հանդէս Ամսօրեայ», 1896, էջ 221: * Հմմտ. **Գարեգին Ա. կաթողիկոս** [Յովսէփեան], Յիշատակարանք ձեռագրաց, հտ. Ա. (Ե. դարից մինչեւ 1250 թ.), Անթիլիաս, 1951, էջ 219-220. Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, Ե.-ԺԲ. դդ., աշխատ. Ա. Մաթեւոսեանի, Երեւան, 1988, էջ 85-86:

126. *Գ. Հմր 11. ՆՂԳ. - 1044. Վենետիկի վանքի՞ ձեռագիր [Մ 3723]: Գրուած է մագաղաթի վրայ՝ Յուսիկ վանականի ձեռքով, Պետրոսի հայրապետութեան օրօք*[384]*:*

126. Գ. Հմր 12. ՆՂԴ. - 1045. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 23 Գ. [Մ 3723]: Գրուած է մագաղաթի վրայ, երկաթագրով. 243 թերթ, երկսիւն (34x28), մեծադիր (in folio), 21 տող:

Բնագիրն ունի Եւսեբիոսի աղիւսակները: Այս ձեռագիրը գրուած է Յուսիկ քահանայի ձեռքով, Պետրոս հայրապետի ժամանակ: Յուսիկի յիշատակարանը այս եւ նախորդ վենետիկեան(՞) ձեռագրում բառացի կրկնւում է. տարբերութիւնը տարիների մէջ է: Սակայն հնարաւոր է Զարբհանալեանը նկատի է ունեցել ա՛յս ձեռագիրը. առաւել եւս, որ նա չի խօսում ձեռագրի գտնուելու ներկայ տեղի մասին: Այս ձեռագրում կան նաեւ տարբեր անձանց եւ տարբեր ժամանակների գրառումներ: Նրանցից մէկում ասւում է, որ 1301 թուականին ոմն Մխիթար ձեռագիրը նուիրել է Սուրբ Թորոսի եւ Սուրբ Նշանի վանքին [105բ]:

127. *Գ. Հմր 13. ՇԲ. - 1053. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 363 Գ. [Մ 3793]: Գրուած է 311 թերթ մագաղաթի վրայ. երկսիւն է (38,5x30). մեծադիր (in folio), 17 տող, խոշոր երկաթագիր. գրիչն է Յովհաննէս քահանան, տեղը՝ Սանդուխտ վանքը:*

Ձեռագրի 60-65 թերթերը կրկնագիր են, սկզբնական գիրը եղել է երկաթագիր, որի վրայ այժմ գրուած է բոլորգրով: Պահպանուել են բոլոր աւետարանիչների մանրանակարները՝ Յովհաննէսի եւ Պրոխորոնի՝ յունարէն մակագրութիւններով. «ὁ θεός» եւ «Προχορον».

Բնագիրը Եւսեբիոսի կանոններով է եւ լուսանցներում տարբերթերցումներով:

128. *Հմր 14. ՇՋ. - 1057. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 362 Գ. [Մ 3784]: Գրուած է 288 թերթ մագաղաթի վրայ. երկսիւն (42,5x33), մեծաչափ (in folio): Գրիչը Թովմա*[385]** երէցն է, եւ այն գրել է Մելիտենէ քաղաքում՝ Սուրբ Գրիգոր եկեղեցում, Խաչիկ կաթողիկոսի օրօք: Երկրորդ գրիչը Մովսէս քահանան է:*

Հետագայ ժամանակների յիշատակագրութիւնները մի քանիսն են՝ 1507, 1559, 1798, 1882 թուականների:

---

[384] **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 159:* Ըստ Զարբհ-ի՝ թուականը ՆՂԳ. - 1044, բայց Գ-Դ տառերի շփոթ կայ, ճիշտն է՝ ՆՂԴ. - 1045, թիւրիմացութիւն է նաեւ «Վենետիկի վանքի՞» համարելը. այդուհանդերձ, այս տուեալներն ունի ՄՄ Հմր 3723ը, որը, որպէս Էջմիածնի Գ.23 նաեւ յաջորդ տողում է. հմմտ. Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, Ե.-ԺԲ. դդ., աշխատ. Ա. Մաթեւոսեանի, Երեւան, 1988, էջ 90-91, Հմր 109:

[385]* Գրչի անունը գրել է՝ «Թորոս»:

129. *Գ. Հ՟Ր 15. ՇԺԳ. - 1064. Վենետիկի վանքի ձեռագիր*[386] *[ե 1924]: Գրուած է մագաղաթի վրայ՝ երկաթագրով Գրիգորիսի կաթողիկոսութեան եւ յունաց Տուկիծ կայսեր թագաւորութեան օրօք, Շուխրտաձտառետ վանքում, երբ վանահայրը Թովմասն էր*[387]*:*

130. *Գ. Հ՟Ր 16. ՇԺԵ. - 1066. Էջմիածնի վանքի ձեռագիր Հ՟Ր 369. Դանիէլի ցուցակի Հ՟Ր 362, էջ 23 [Մ 311]: Գրուած է 282 թերթ մագաղաթի վրայ, երկսիւն (23x14), քառածալ (in 4⁰), երկաթագիր: Ունի չորս կիսախորան՝ ոսկով. պահպանուել է Մարկոսի մանրանկարը. մնացած երեքը կտրուած են:*

Բնագիրը վնասուած է, չունի կանոններ, եւ Մարկոսի ու Յովհաննէսի վերջերում առանձին դրուած են յայտնի հատուածները: Որպէս յաւելում ունի Աւետարանացոյց՝ [280բ-282ա] «Աւետարանք յայտնութեան ուխտ աւուրցն առաւաւտին»: Աւետարանի բոլոր բառերը չեչտադրուած են՝ նշուած յատուկ թանաքներով:

Գրչութեան ճշգրիտ թուականն անյայտ է, 1066 թուականի յիշատակարանը գրել է Գրիգոր քահանան, որն հաղորդում է, որ ինքը լինելով Այրարատ գաւառի Արկուռի գիւղից, Սենեքերիմ Արծրունի թագաւորի հետ միասին լքել է հայրենիքը եւ վերաբնակուել Սեբաստիա քաղաքում: Ինչ որ մկկը, անունը չի յիշատակւում, այս Աւետարանը 1194 թուականին տուել է «զմեծ սեւաստիաւան գիակուրանն, զորդի Սմբատա՝ որդւոյ Հեթմոյ սեւաստաւսի՝ տեառն Լամբրաւնին եւ Պապեռաւնին»: Այնուհետեւ մկկ ուրիշ յիշատակարանից տեղեկանում ենք, որ ձեռագիրը եղել է նաեւ Ներսէս Շնորհալու ձեռքին, որն էլ այն տուել է իր զարմիկին՝ Գրիգորիս կաթողիկոսին: Գրիգորիսն այս օրինակի մասին ասում է [217բ] «քանի որ այս ընդօրինակութիւնը ճանաչուել է որպէս անսխալ (ճշգրիտ), այդ իսկ պատճառով անուանւում է Յակոբցի»[388]*:*

131. *Գ. Հ՟Ր 17. ՇԻ. - 1071. Էջմիածնի վանքի ձեռագիր Հ՟Ր 260. Դանիէլի Հ՟Ր 253 [Մ 275]: Գրուած է 269 թերթ մագաղաթի վրայ. երկսիւն (24x18), քառածալ (in 4⁰), մանր երկաթագրով: Գրիչն է Յովհաննէսը, տէրը Սմբատը՝ որդի Վահրամի:*

---

386 **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 159:

387* Այս յատկանիշներն ունի Եղմ. Հ՟Ր 1924ը՝ ՇԺԳ. - 1064ին գրուել է «ի վանքս կոչեցեալ Շուխր Խաչդառեա». տե՛ս Գարեգին Ա. կաթողիկոս [Յովսէփեան], Յիշատակարանք ձեռագրաց, հտ. Ա. (Ե. դարից մինչեւ 1250 թ.), Անթիլիաս, 1951, էջ 103-104, Հ՟Ր 123. Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Զ., կազմ. Նորայր եպս. Պողարեան, Երուսաղէմ, 1972, էջ 400:

388 «որ եւ վասն անմոլոր ճանաչելոյ, կոչի սա Յակոբցի»:

Բնագիրը՝ կանոններ չունի. վերջում (թ. 264-265) յաջորդաբար գրուած են յայտնի վիճելի հատուածները՝ ա) Մարկոսի ԺԶ. 9-20, բ) Ղուկասի ԻԲ. 42, 43, 51 եւ գ) Յովհաննու Ը. 1-11:

Կան 1320 թ. եւ աւելի ուշ ժամանակների յիշատակարաններ:

132. *Գ. Հ՟Բ 18. ՇԽԸ. - 1099. Էջմիածնի վանքի ձեռագիր Հ՟Բ 257, Դանիէլի ցուցակի Հ՟Բ 250, էջ 18 [Մ 288]: Գրուած է 280 թերթ մագաղաթի վրայ. երկսիւն (20,5x15), քառածալ (in 4⁰), երկաթագիր: Գրիչը Ահարոն կրօնաւորն է. գրել է Գրիգորի հայրապետութեան եւ յոյն ժողովրդի վրայ ֆրանկների տիրապետութեան օրօք, որոնք [279բ-280ա] «...եկին հասին մինչեւ յԱնդիոք, եւ բազում աշխատութեամբ եւ մեծաւ պատերազմաւք բացին զԱնդիոք եւ ի սուր սուսերի յանխնայ կոտորեցին յանաւրէնսն, եւ յետ Գ. (3) աւուրց եկին անթիւ եւ անհամար ազգս թուրքաց եւ պարսից եւ ար[ա]պկաց եւ տաճկաց եւ բանակեցան չուրջ զքաղաքաւն եւ զդաշտաւն՝ թուով Դ. հարիւր հազար եւ Խ. հազար (440.000)... դարձուցին զբանական անաւրէնսացն, ի զերիս աւուրս սուրն քրիստոնեից ճարակէր զանաւրէնսն... ի նմին ամի բացին զմեծ եւ զհռչակաւոր մայրաքաղաքն Երուսաղէմ»: Ձեռագիրը գրուել է «ի մայրաքաղաք Աղեկսանդրու, ընդ հովանե[ա]ւ Յովհաննու աւետարանչին»:*

Բնագիրը համաբարբառի կանոններով է: Այս ձեռագրի յիշատակարանը բերուած է Զարբհանալեանի մօտ (էջ 159), առանց ձեռագրի գտնուելու վայրի անուան:

133. *Գ. Հ՟Բ 19. ՈՒ. - 1171. Վենետիկի վանքի[389] ձեռագիր [Վ 68/123]. գրուած է մագաղաթի վրայ, երկաթագրով, 1171 թուականը ձեռագրի գրուելու իսկական ժամանակը չէ, այլ այդ տարում [ոմն Աստուածատուր քահանայ] Մանազկերտ քաղաքում այն գնել է Սեփանոս քահանայից[390]*:*

134. *Գ. Հ՟Բ 20. ՈՒԳ. - 1174. ձեռագիր Եւդոկիա քաղաքում[391] [անյայտ]: Գրել է Գրիգոր գրիչը՝ Գրիգոր Տղայ կաթողիկոսի հրամանով: Այնուհետեւ Հեթում թագաւորի հայր իշխան Կոստանդինը 1236 թուականին այն ձեռք*

---

389 **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 159-160՝ գտնուելու վայրը չի նշում:

390* 1171ը գրչութեան թուականը չէ, այլ՝ գնման. հմմտ. Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, Ե.-ԺԲ. դդ., աշխատ. Ա. Մաթեւոսեանի, Երեւան, 1988, էջ 201. նաեւ՝ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Ա., յօրինեց՝ **Հ. Բ. վ. Սարգիսեան**, Վենետիկ-Սուրբ Ղազար, ՌՅԿԳ.=1914, էջ 545, ուր՝ էջ 539-540. ձեռագրի գրչութիւնը թուագրուած է «դար Թ.-Ժ.»: Գնման մի այլ՝ 1145 թ. յիշ. տե՛ս Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, Ե.-ԺԲ. դդ., աշխատ. Ա. Մաթեւոսեանի, Երեւան, 1988, էջ 164:

391 **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 160-161:

է բերել եւ նուիրել է իր իսկ հիմնադրուած Փրկչի եկեղեցուն[392]*:*

135. *Գ. Հմր 21. ՈՀ. - 1181. Վեհետիկի վանքի ձեռագիր*[393] *[Վ 961/87]: Աւետարանը գրուել է 1181 թուականին՝ Հոռոմոսի վանքում (վանքը Անի քաղաքից հինգ վերստ հեռու՝ Ախուրեան գետի աջ ափին է), Սուրբ Յովհաննէս եկեղեցու հովանու ներքոյ, Բարսեղ Հայրապետի օրօք, երբ վանքի վանահայրն էր Խաչատուրը: Այն գրուել է ձեռագրի գրիչ [Յովհաննէսի] աւագ եղբայր եւ ուսուցիչ Վարդան երէցի ցանկութեամբ*[394]*:*

136. *Գ. Հմր 22. ՈՀԱ. - 1182. Այս ձեռագիրը գտնուում է Սարուշէնի գիւղական եկեղեցում, Շուշի քաղաքից ոչ հեռու [անյայտ]: Այն գրուած է լաւ մագաղաթի վրայ՝ երկաթագրով, գրել են Ռստակէս քահանան եւ նրա եղբայր Վրդանէսը: Որոշ ժամանակ այն եղել է Թաւրիզում՝ մահմեդականների ձեռքին «գերի», եւ ոմն Միրզա Օհաննէսեան Զարգարեանց 1827 թուականին այն գնել է եւ նուիրել նշուած գիւղի եկեղեցուն, որտեղ բնակիչներն այն պաշտում են որպէս սուրբ*[395]*:*

137. *Գ. Հմր 23. ՈՀԱ. - 1182. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 236 եւ Դանիէլի ցուցակի Հմր 229 [Մ 283]: Գրուած մագաղաթի վրայ. ունի 360 թերթ, երկաթագիր է, երկսիւն (21x15), քառածալ (in 4⁰), 17 տող: Սկզբում, մի թերթի վրայ ընդօրինակուած կամ նկարուած են բոլոր չորս աւետարանիչները: Ձիշատակարանները երկու թուական ունեն, երկուսն էլ կազմման տարբեր տարեթուեր՝ 1182 եւ 1303: Գրչութեան տարեթիւն անյայտ է*[396]*: Բնագիրը սովորական է, առանց այլեւայլ յաւելումների:*

138. *Գ. Հմր 24. ՈՀԲ. - 1183. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 257, Դանիէլի*

---

[392]* Ձարբհանալեանն առել է Սրուանձտեանցից՝ Թորոս Աղբար, Ա., էջ 118-119 (1175 թ.): Հմմտ. Գարեգին Ա. կաթողիկոս [Յովսէփեան], Ձիշատակարանք ձեռագրաց, հտ. Ա. (Ե. դարից մինչեւ 1250 թ.), Անթիլիաս, 1951, էջ 453-459, Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, Ե.-ԺԲ. դդ., աշխատ. **Ա. Մաթեւոսեանի,** Երեւան, 1988, էջ 215-7 եւ Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ. ԺԳ. դար, Կազմեց Ա. Ս. Մաթեւոսեան, Երեւան, 1984, էջ 198:

[393] **Ձարբհ.,** ՄՀԹՆ, էջ 159:

[394]* Վեհետիկի ցուցակ, Ա., էջ 391-396. **Գարեգին Ա. կաթողիկոս [Յովսէփեան],** Ձիշատակարանք ձեռագրաց, հտ. Ա. (Ե. դարից մինչեւ 1250 թ.), Անթիլիաս, 1951, էջ 481-486. Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, Ե.-ԺԲ. դդ., աշխատ. **Ա. Մաթեւոսեանի,** Երեւան, 1988, էջ 232-233:

[395] Այս ձեռագրի մասին տեղեկութիւնները ձամակով մեզ է յայտնել Բեհիկ վարդապետը: * **Մ. եպս. Բարխուտարեանց,** Արցախ, Բագու, 1895, էջ 101, Յովսէփեան, Ձիշատակարանք, էք 491, Հմր 225 (կարծում է՝ ձեռագիրն աւելի հին է, 1182ը համարում է նորոգութեան ժամանակ), նաեւ՝ Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, Ե.-ԺԲ. դդ., աշխատ. **Ա. Մաթեւոսեանի,** Երեւան, 1988, էջ 234:

[396]* Գրչութեան թուականը 1033ձ է՝ ՆՁԲ. (373ա), 1182ը հետագայ կազմութեան տարին է (180բ):

ցուցակի Հմր 364 Գ [Մ 2877]: Գրուած է 219 թերթ մագաղաթի վրայ. երկսիւն է (33x26). քառածալ (in 4⁰), 23 տող, երկաթագիր: Այս ձեռագրում 1183 տարեթիւը այն ժամանակն է, երբ վնասուած ձեռագիրը նորոգուել է երկու կանանց՝ Գոհարի եւ Խոսրովիդուխտի[397] ծախսերով: Վերջում [171ա-172բ] կայ տօների ընթերցումների օրացոյց՝ Աւետարանացոյց:*

139. *Գ. Հմր 25. ՈԼԲ. - 1183. Բրիտանական թանգարանի ձեռագիր[398] [Or. 81]: «Գրուած է 1183 թ. Հայոց Գրիգոր կաթողիկոսի հայրապետութեան օրօք»:*

140. *Գ. Հմր 26. ՈԽԲ. - 1193. Դոնի Նախիջեւանի ձեռագիր[399] [WAG 538][400]*: Գրուած է «ի հայրապետութեանն տեառն Տղայ Գրիգորի կաթողիկոսի Հայոց, եւ յիշխանութեան բարեպաշտ իշխանին Լեւոնի... յանապատիս որ կոչի Պաւղոսական, մերձ առ ամուր դղեկիս Կատինոյ»[401]:*

Նախորդ 1901 թ. ամռանը մենք մանրամասն ծանօթացանք Նախիջեւանի հայկական ձեռագրերի հաւաքածոյին եւ կազմեցինք համառօտ ցուցակ, սակայն յիշեալ հաւաքածոյի մէջ այս ձեռագիրը չգտանք:

141. *Գ. Հմր 27. ՈԽԲ. - 1193. Վենետիկի վանքի ձեռագիր [Վ 1635/125][402]: Գրուած է մագաղաթի վրայ, երկաթագրով, 1193 թ., Գրիգոր կաթողիկոսի հայրապետութեան օրօք. այն ժամանակ, երբ Ներսէս Լամբրոնացին կիլի-*

---

[397]* Մ. Տ-Մ.՝ այս անուան փոխարէն գրել է՝ «Սանդուխտի»: Ձեռագրի ժամանակն այժմ սահմանուած է՝ ԺԱ. դար. տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Թ., Ձեռագիրք 2701-3000, խմբագրութեամբ՝ Գէորգ Տէր-Վարդանեանի, Երեւան, «Նայիրի» հրատ., 2017, էջ 1054:

[398] **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 160: * Տե՛ս A Catalogue of the armenian manuscripts in the British Museum, by Frederick Cornwaills Conybeare, London, 1913, Հմր 4, էջ 4-6 (այսուհետեւ՝ Կոնիբէր, Ցուցակ Լոնդոնի). **Գարեգին Ա. կաթողիկոս** [Յովսէփեան], Յիշատակարանք ձեռագրաց, հտ. Ա. (Ե. դարից մինչեւ 1250 թ.), Անթիլիաս, 1951, էջ 485-486, Հմր *222*. նաեւ՝ Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, Ե.-ԺԲ. դդ., աշխատ. **Ա. Մաթեւոսեանի,** Երեւան, 1988, էջ 231, Հմր 247՝ թուականը կարդում ենք՝ 1181:

[399] **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 160:

[400]* Նոր Նախիջեւանում պատկանել է Դաւիթ Օդաբաշեանին: Տե՛ս **Ա. Սանճեան,** Ցուցակ Ամերիկայի, էջ 267-273. էջ 268՝ **Մերիլէնդ**, The Walters Art Gallery, W.538. «1889ից մինչեւ 1903 թ. ձեռագիրը եղել է Նոր Նախիջեւանում: Ձեռագրի հետագայ պատմութիւնն անյայտ է». էջ 273՝ ունի հարուստ մատենագիտութիւն, ուր նաեւ՝ ՄՀԹՆ, էջ 160. **Գարեգին Ա. կաթողիկոս** [Յովսէփեան], Յիշատակարանք ձեռագրաց, հտ. Ա. (Ե. դարից մինչեւ 1250 թ.), Անթիլիաս, 1951, էջ 565-570, 817-818: Կայ նաեւ՝ Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, Ե.-ԺԲ. դդ., աշխատ. **Ա. Մաթեւոսեանի,** Երեւան, 1988, էջ 272-273. կրկին՝ մանրամասն մատենագիտութեամբ՝ մի այլ նկարագրութիւն տե՛ս http://www.thedigitalwalters.org/Data/WaltersManuscripts /html/W538/description.html: «Walters Art Museum, 1931, by Henry Walters' bequest»:

[401] Այս ամրոցի մասին հմմտ. **Ղ. Ալիշան**, Սիսուան, էջ 534:

[402] Յիշատակարանի լուսանկարը տե՛ս **Ղ. Ալիշան**, Սիսուան, էջ 83:

կիսայում եպիսկոպոս էր. նա էլ այս ձեռագիրը պատուիրել է իր համար[403]*:

142. *Գ. Հմր 28. ՈՒԽԷ. - 1198. ձեռագիր Լվովում*[404] *[Վարչաւա]: Գրուած է երկաթագրով՝ Լեւոն Ռուբինեանի թագաւորութեան եւ Գրիգոր կաթողիկոսի հայրապետութեան օրօք, մի մասը՝ Մլէճի վանքում, միւս մասը՝ Սկեւռայում:*

143. *Գ. Հմր 29. ՈՒԹ. - 1200. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 25 Գ [Մ 2589]: Գրուած է 339 թերթ մագաղաթի վրայ, երկաթագրով. երկսիւն (24x19), քառածալ (in 4⁰), 12 տող: Գրել է Սարգիս սարկաւագը՝ կոստանդին քահանայի համար: Ունի չորս Աւետարանիչների մանրանկարները՝ նկարուած Հայրապետ քահանայի ձեռքով:*

144-145. *Գ. Հմրբ 30, 31: Զարբհանալեանը յիշատակում է Վենետիկի վանքի երկու օրինակ՝ Հմրբ 2 եւ 9, որոնք նա Ժ. եւ ԺԱ. դարերի է համարում [Վ [190/103]*[405]*:*

403* Կայ՝ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Ա, յօրինեց Հ. Բ. վ. Սարգիսեան՝ Մխիթարեան ուխտէն, Վենետիկ-Սուրբ Ղազար, ՌՅԿԳ. = 1914, էջ 549-560. **Գարեգին Ա. կաթողիկոս [Յովսէփեան],** Յիշատակարանք ձեռագրաց, հտ. Ա. (Ե. դարից մինչեւ 1250 թ.), Անթիլիաս, 1951, էջ 563-566, Հմր 253, Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, Ե.-ԺԲ. դդ., աշխատ. Ա. Մաթեւոսեանի, Երեւան, 1988, էջ 273-274:

404 **Զարբհ.**, ՄՀՐԹՆ, էջ 160: * **Ն. Ակինեան**, Սկեւռայի Աւետարանը, Վիեննա, 1930, էջ 6-8. **Գարեգին Ա. կաթողիկոս [Յովսէփեան],** Յիշատակարանք ձեռագրաց, հտ. Ա. (Ե. դարից մինչեւ 1250 թ.), Անթիլիաս, 1951, էջ 613-20. Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, Ե.-ԺԲ. դդ., աշխատ. Ա. Մաթեւոսեանի, Երեւան, 1988, էջ 298-301: Ձեռագրին վերաբերող գրքի գրախօսութ.՝ **Վ. Ղազարեան, Ա. Բոզեան,** Լեմբերգի Աւետարանը. ԺԲ. դարի վերագտնուած մի նկարազարդ հայերէն ձեռագիր, հրատ.՝ Գիւնտեր Պրինցինգի եւ Անդրէա Շմիդտի կողմից, Պատմաբանասիրական հանդէս, 1999/1, էջ 360-366, ըստ որի՝ հրատարակութիւնն է՝ Das Lemberger Evangeliar. Eine wiederentdeckte Armenische Bilderhandschrift des 12. Jahrhunderts, herausgegeben von Günter Prinzing und Andrea Schmidt, mit Beiträgen von Anton von Euw, Christian Hannick, Mesrob K. Krikorian, Annette Lang-Edwards, Günter Prinzing, Andrea Schmidt, Christian Weise, Wiesbaden, 1997, 186 S. 2 Karte und XXIX Tafeln. [Sprachen und Kulturen des christlichen Orients, Herausgegeben von Johannes den Heijer, Stephen Emmel, Martin Krause, Andrea Schmidt. Bd. 2]:

405* Այս երկու՝ 30 եւ 31 համարների վերաբերեալ Զարբհանալեանի գրքի էջ չի յիշատակել: Մինչդեռ ՄՀՐԹՆ, «Տասներորդ դարու» բնորոշումով թուարկել է՝ 1-4 ձեռագիր (էջ 157-158), «Մետասաներորդ դարու»՝ 1-9 միաւոր (էջ 158-160), «Երկոտասաներորդ դարու»՝ 1-5 ձեռագիր (էջ 160-161), ի վերջոյ՝ «Երեքտասաներորդ դարու»՝ 1-27 ձեռագիր (էջ 161-170): Ժ. դ. համարուած չորս միաւորների մէջ Վենետիկի ձեռագիր չկայ, ԺԱ. դարի 9 ձեռագրերից չորսը Վենետիկի են, որոնք, սակայն, համապատասխանում են այս շարքի 7, 8, 19 եւ 20 համարներին: Ջուտ թուագրման վրայ հիմնուելով՝ ակնարկուածները համապատասխան ենք համարում հետեւեալ ձեռագրերին՝ Վենետիկի Հմր 190/103՝ Թ.-Ժ. դ. (Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հտ. Ա, յօրինեց **Հ. Բ. վ. Սարգիսեան**՝ Մխիթարեան ուխտէն, Վենետիկ-Սուրբ Ղազար, ՌՅԿԳ. = 1914, էջ 455-462) եւ Հմր

146. *Գ. Հ՟ր 32. Ժ. դար, Բրիտանական թանգարանի ձեռագիր [Add. 21.932]. գրուած է մագաղաթի վրայ, Ժ. դարում՝ Եղիշէ քահանայի համար*[406]*:

147. *Գ. Հ՟ր 33. ԺԱ. դար. Երուսաղէմի վանքի ձեռագիր [Ե 2556]*[407]*: «Ջատագող սրբոյ Աւետարանիս զԳագիկ Շահանշահ՝ որդի Աբասայ, եւ զԳորանդուխտ թագուհի եւ զՄարեմ յիշեսջիք». աւարտուում է մի յիշատակարանը:*

148. *Գ. Հ՟ր 34. ԺԱ. դ. Վենետիկի վանքի ձեռագիր Հ՟ր 5՝ ըստ Ս. Պետերբուրգի Ասիական թանգարանում գտնուող՝ Զօհրապեանի ձեռագիր ցուցակի [Վ 1400/108]: Գրուած է մագաղաթի վրայ՝ երկսիւնագրով: Բնագիրը կանոններով է: Այս ձեռագիրը նախկինում գտնուել է Տրապիզոնի մի հայկական եկեղեցում, որտեղից էլ ձեռք է բերել Վենետիկի վանքի մատենադարանը: 1427 (ՊՀԶ.) թուականի մի յիշատակարան տալիս է վերջին տիրոջը՝ Յովասափի անունը*[408]*:*

1295/108՝ Ժ.-ԺԱ. դ. (Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Ա, յօրինեց **Հ. Բ. վ. Սարգիսեան**՝ Մխիթարեան ուխտէն, Վենետիկ-Սուրբ Ղազար, ՌՅԿԳ. = 1914, էջ 477-486):

406* **Կոնիբէր**, Յուցակ Լոնդոնի, Հ՟ր 1, էջ 1-2, որից առել եւ Ժ. դարի ներքոյ է դրել՝ **Գարեգին Ա. կաթողիկոս** [Յովսէփեան], Յիշատակարանք ձեռագրաց, հտ. Ա. (Ե. դարից մինչեւ 1250 թ.), Անթիլիաս, 1951, էջ 1025-1026, ուր յիշում է նաեւ՝ **Զարպհ.**, ՀԹՆ, էջ 158, **Տրդատ եպս. Պալեան,** Հայերէն ձեռագիր Աւետարանք Թ.-ԺԵ. դարերու, Ա.- Բիւզանդիոն, 1908, Հ՟ր 3.551՝ 31/Ե.-13/Զ., էջ 4, թ. 6 [պէտք է լինի՝ 8] Աւետարան»: Գարեգին Ա. կաթողիկոս [Յովսէփեան], Յիշատակարանք ձեռագրաց, հտ. Ա. (Ե. դարից մինչեւ 1250 թ.), Անթիլիաս, 1951, էջ 1026՝ «Զարբ. իր վերոյիշեալ գործի մէջ այս Ձեռագիրը նկատում է «հաւանականաբար տասներորդ դարու մէջ գրուած»: Իսկ Կոնիբէր նոյնպէս իր վերոյիշեալ գործի մէջ (եր. 2բ) գրում է. «In any case it may well have been written early in the tenth century»: Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, Ե.-ԺԲ. դդ., աշխատ. **Ա. Մաթեւոսեանի,** Երեւան, 1988, էջ 44. քաղել է՝ «Զտէր Եղիսէ զհրամանող սուրբ Աւետարանիս, որք ընթեռնուք՝ յաղաւթս յիշեսջիք», ապա ծանօթագրել՝ «Մ. Տէր-Մովսիսեանը սոյն յիշատակարանը Համահաւաք ցուցակում դրել է ԻԳ. եւ ԼԵ. համարների տակ, թուագրելով մի դէպքում Ժ., միւս դէպքում՝ ԺԱ. դար (Անտիպ ձեռագրացուցակներ, Հ՟ր 133, Աւետարանք): Ոմանք թուագրում են նաեւ Թ. դար: Պայմանականաօրէն դնում ենք Թ. դարի տակ». Մաթեւոսեանից առաջ որեւէ մէկն այս ձեռագիրը Թ. դարով չի թուագրել:

407* **Գարեգին Ա. կաթողիկոս** [Յովսէփեան], Յիշատակարանք ձեռագրաց, հտ. Ա. (Ե. դարից մինչեւ 1250 թ.), Անթիլիաս, 1951, էջ 241-4, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հտ. Ը., կազմեց **Նորայր արքեպս. Պողարեան,** Երուսաղէմ, 1977, էջ 245-8. իսկ Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, Ե.-ԺԲ. դդ., աշխատ. **Ա. Մաթեւոսեանի**, Երեւան, 1988, էջ 102-3՝ առել է Յովս. Յիշ-քից:

408* Տրապիզոնի նշանաւոր Աւետարանն է՝ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Ա, յօրինեց **Հ. Բ. վ. Սարգիսեան**՝ Մխիթարեան ուխտէն, Վենետիկ-Սուրբ Ղազար, ՌՅԿԳ. = 1914, էջ 477-86՝ Ժ.-ԺԱ. դդ.: Սխալ է թէ՛ թուականը եւ թէ՛ ստացողի անունը. ճիշտը՝ ՊՀԴ. 1425 թ., վերջին տէրը՝ Էվատշահ. հմմտ. նաեւ ԺԵ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ,

149. *Գ. Հ՟ր 35, ԺԱ. դար. Վենետիկի վանքի ձեռագիր Հ՟ր 6՝ ըստ Ս. Պետերբուրգի Ասիական թանգարանում գտնուող՝ Զօհրապեանի ձեռագիր ցուցակի [Վ190/103]: Գրուած է մագաղաթի վրայ՝ երկու սիւնով երկաթագրով, գրիչ Յովհաննէսի ձեռքով:*

Մեզ յաջողուեց առայժմ հաւաքել Թ-ԺԲ. դարերի Աւետարանի 35 ընդօրինակութիւն, սակայն մեզ յայտնի են այդ ժամանակի եւս երկու օրինակ. առաջինը՝ Աւետարան Ծուրղութ գիւղում՝ Ախալցխա քաղաքից ոչ հեռու. երկրորդը՝ Մեծ Շէն գիւղում՝ Շուշի քաղաքից ոչ հեռու: Այդպիսի հազուագիւտ օրինակների գոյութիւնը գիղերում ապացոյց է այն բանի, որ դեռեւս ոչ բոլոր ձեռագրերն են հաւաքուած աւելի թէ պակաս յայտնի գրադարաններում:

150. *Գ. Հ՟ր 36. ԺԲ.-ԺԳ. դարեր. Էջմիածնի վանքի ձեռագիր Հ՟ր 303, Դանիէլի ցուցակի Հ՟ր 296 [Մ 313]: Այն գրուած է հաստ մոմապատ թղթի վրայ. ունի 268 թերթ. երկսիւն (25x17), քառածալ (in 4⁰), միջին երկաթագիր, գրուած է Եդեսիա քաղաքի Սուրբ Գէորգ եկեղեցու հովանու ներքոյ, Յովհաննէս քահանայի ձեռքով: Սկզբում այն ձեռք է բերել Սահակը, աւելի ուշ՝ 1687 թուականին, Յովհաննէս քահանան, այնուհետեւ՝ տանուտէր Աւետը:*

Բնագիրն ունի Մարկոսի ԺԶ., 9-20 հատուածի ինքնուրոյն թարգմանութիւնը եւ Ղուկասի Աւետարանի վերջում յաւելեալ երկու տուն: Աւետարանի ոչ մի օրինակի մէջ այդ տները մեզ չեն հանդիպել: «Իրք կնոջն չնացելոյ»ն Յովհաննէսի բուն բնագրի մէջ է. լուսանցներում ունի չատ տարընթերցումներ:

151. *Գ. Հ՟ր 37. ՈՁԱ. - 1232. Էջմիածնի վանքի ձեռագիր Հ՟ր 1057 Գ. մատենադարանի նոր հաւաքածուի վերջին համարը [Մ 2743]: Գրուած է մագաղաթի վրայ, երկաթագրով, երկսիւն. գրիչն է Տիրացուն, տէրը՝ Յովհաննէս քահանան: Ունի լաւ մանրանկարներ, ծաղկողի անունն է Գրիգոր: Այս ձեռագիրը գտնուել է Թարգմանչաց վանքում, եւ ինչպէս երեւում է՝ մշտապէս այնտեղ է պահուել, ինչն էլ ապացուցում են ձեռագրում տարբեր անձանց կողմից տարբեր ժամանակներում գրառուած յիշատակութիւնները:*

Բնագիրն ունի համաձայնութեան կանոնները եւ տարընթերցումներ, ինչպէս նաեւ Մարկոսի հատուածի առանձին տարբերակը:

152. *Գ. Հ՟ր 38. ՉՇԹ. - 1310. Էջմիածնի վանքի ձեռագիր Հ՟ր 250, Դանիէլի ցուցակի Հ՟ր 243[409]* [Մ 280]: Գրուած է հաստ թղթի վրայ. ունի*

Մասն առաջին (1401-1450 թթ.), կազմեց **Լ. Ս. Խաչիկեան,** Երեւան, 1955, էջ 345-6:

[409]* Համարը վրիպմամբ տպուած է 247:

264 թերթ, երկսիւն (22,5x17), քառածալ (in 4⁰), 20 տող, բոլորգիր. գրել է Աւագ քահանան, Բաբերդ ամրոցում, Սուրբ Յովհաննէս եւ Սուրբ Սիոն եկեղեցիների հովանու ներքոյ:

Բնագիրը՝ կանոններով, տարբերւում է լուսանցների իր տարընթերցումներով. իսկ սկզբում ունի Եւսեբիոսի կանոնների [իմա՛ խորանների] Ստեփաննոս եպիսկոպոս Սիւնեցու մեկնութիւնը:

[264բ] «Յիշեսջիք եւ զսրբասէր քահանայ զՍամուէլն եւ զզաւակսն իւր, որ ետ կրկին այլ աւրինակ, որ ստուգեցաք, եւ զկարապետ քահանայն, որ միւս այլ աւրինակ չնորհեաց, որ կոչի Մուրղանեցի, քանզի յերկուց եւ յերից վկայից հաստատի ամենայն բան: Զի յորժամ յաւարտումն հասաւ, եղաք զերիս ընդիր եւ անուանի Աւետարանքն եւ ստուգեցայք, որ մին չառաւեղաւք էին գրած. եւ մի՛ հայիք ի յախմարութիւն իմ եւ յանարհեստ գիրս, զի բազում աշխատանս կրեցի մինչ ի ձեռն բերի զաւրինակերս եւ ստոյգեցի»:

Դ. ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԳՐՔԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՁԵՌԱԳՐԵՐ

153. *Դ. Հ՟ր 1. [ՈԿԹ.] - 1220. Վենետիկի վանքի ձեռագիր*[410] *[1322/192]: Բովանդակում է. Գործք, Եօթ կաթողիկեայ թուղթք, Յայտնութիւն եւ Թուղթք Պօղոսի*[411]**:*

154. *Դ. Հ՟ր 2. ԺԳ. դ. British Museum-ի ձեռագիր Add. 19,730*[412] *[Add.19.730]: Բովանդակում է Յայտնութիւն, Թուղթք Պօղոսի, Գործք եւ Թուղթք Առաքելոց: Կոնիբէրն ասում է, որ ճիշտ այսպիսի ձեռագրեր կան նաեւ Թիֆլիսում, Էնֆիաճեանի մասնաւոր գրադարանում:*

---

[410] Բերում է Conybeare-ը՝ ի A Dictionary of the Bible, Volume I, էջ 153:

[411*] Թէեւ Վենետիկում 1220 թ. գրուած Նոր Կտակարան չկայ, բայց Կոնիբէրի հաղորդած տուեալները ճշգրիտ համապատասխանում են Վենետիկի Հ՟ր 1322/192 ձեռագրին, որ Բ. վ. Սարգիսեանը «ԺԲ.-ԺԳ. դդ.» թուագրելով հանդերձ, ձեռագրի ստացող Հեթում վարդապետի առիթով ճանօթագրել է. «հաւանական է կարծել որ մատեանս 1220-1269ին գրուած ըլլայ». տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Ա, յօրինեց **Հ. Բ. վ. Սարգիսեան**՝ Մխիթարեան ուխտէն, Վենետիկ-Սուրբ Ղազար, ՌՑԿԳ. = 1914, էջ 793-804. ըստ ցուցակի ձեռագիրն ունի Թուղթք Պօղոսի, Գործք, Թուղթք կաթողիկեայք, Յայտնութիւն, Հանգիստ Յովհաննու եւ Մարգարէութիւն Եսայեայ, իսկ ըստ Կոնիբէրի՝ «The order of the rest of the NT books in the oldest MS at the Venice, written A. D. 1220, is as follows: Acts, Catholic Epistles, Revelation of John the Apostle, Epistles of Paul, at the end of which is added the letter of the Corintians to Paul. The Ep. to the Hebrews precedes to Tim. and follows Thess» (տե՛ս Dictionary of the Bible, 1898, I. p. 153):

[412] **Conybeare**, ի A Dictionary of the Bible, Volume I, էջ 153: * Տե՛ս նաեւ Կոնիբէր, Ցուցակ Լոնդոնի, Հ՟ր 7, էջ 9-11:

155. *Դ. Հմր 3. ՉԻՋ. - 1277. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 363 [Մ 208]: Գրուած է 223 [թղթէ] թերթի վրայ (մեծ. 25x17), Սիմէոն գրչի ձեռքով՝ Խաչատուր քահանայի համար, Աղթամար կղզում: Բովանդակում է՝ Եօթանասուներկու առաքեալների անունները, Գործք առաքելոց, [Կաթողիկեայ թուղթք, Աղերս Եւթաղի, Աւետարան Յովհաննու]:*

156. *Դ. Հմր 4. ՉԼԳ. - 1284. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 226 [Մ 195]: Գրուած է 406 մագաղաթէ թերթի վրայ (մեծ. 23x15). գրիչ Կոստանդինի ձեռքով՝ Հեթում թագաւորի եղբայր Յովհաննէս եպիսկոպոսի համար, Սիս քաղաքում: Բովանդակում է. Աւետարանք, Յայտնութիւն, Հանդիստ, Գործք առաքելոց, Եօթ թուղթ կաթողիկեայք, Աղերս Եւթաղի, Թուղթք Պօղոսի, [Սաղմոսք]:*

157. *Դ. Հմր 5. ԺԳ. դար. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 227 [Մ 196]: 113 թերթ լաւ մագաղաթ (24x16,5). պատկանել է Հեթում թագաւորի եղբայր Յովհաննէս եպիսկոպոսին (տե՛ս ձեռ. 0^1 եւ 0^2): Բովանդակում է Գործք առաքելոց, Եօթ թուղթք առաքելոց եւ Աղերս Եւթաղի:*

158. *Դ. Հմր 6. ՉԿ. - 1301. Vatican. Cod. Arm. X[413] [Cod. Arm. 10]: 153 թերթ (31x23). գրել է Դաւիթը, Փերուժ քաղաքում, Սուրբ Մատթէոսի եւ Բառնաբասի եկեղեցուն կից: Բովանդակում է՝ Գործք առաքելոց եւ Եօթ թուղթք կաթողիկեայք:*

159. *Դ. Հմր 7. ՉՇ. - 1311. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 221 [Մ 282]: 272 թերթ, [թուղթ], (23,5x16). գրել է Յովհաննէս Կարճեւանցին, Երնջակի Սուրբ Կարապետի վանքում: Բվնդ.՝ Թուղթք Պօղոսի, Գործք առաքելոց, Եօթ թուղթք կաթողիկեայք, Աղերս Եւթաղի, Յայտնութիւն եւ [Հանդիստ]:*

160. *Դ. Հմր 8. ՉՂԴ. - 1317. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 335 [Մ 242]: 391 թերթ, մագաղաթ (18x13). գրել է Սահակ քահանայ գրիչը՝ Թորոսի համար[414]*, Կիպրոս կղզում: Բվնդ.՝ Աւետարանք, Հանդիստ, Գործք առաքելոց, Եօթ թուղթք կաթողիկեայք, Աղերս Եւթաղի, Պօղոսի 15 թուղթք եւ Յայտնութիւն:*

161. *Դ. Հմր 9. ՉՂԳ. - 1334. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 211 [Մ 78]: 292 [թղթէ] թերթ (16,5x11,5). գրել է Սարգիս սարկաւագը՝ Յովհաննէսի համար: Բվնդ.՝ Թուղթք Պօղոսի:*

162. *Դ. Հմր 10. ՉՂՋ. - 1335. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 208 [Մ 154]:*

---

[413] **Միսքճեան**, Յուցակ Վատիկանի.- Հանդէս ամսօրեայ, 1892, էջ 341: * Տես նաեւ Վատիկանի ցուցակ, էջ 238-240:

[414*] Իրականում Թորոսը թէ՛ գրիչն է, թէ՛ ստացողը, Սահակ քահանան կազմողն է:

300 թերթ, մագաղաթ (19x13). գրել է Թորոս քահանան՝ Վարդան քահանայի համար: Ժամանակը որոշւում է Պաղտին մարաջախտի անուան յիշատակութեամբ (1335-1337)[415]: Բվնդ. Թուղթք Պօղոսի, Գործք առաքելոց, Եօթ թուղթք կաթողիկեայք, Աղերս Եւթաղի եւ Յայտնութիւն:*

163. *Դ. Հմր 11. ՁՀԸ. - 1338. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 217 [Մ 269]: 219 թերթ, մագաղաթ (19x13). Ստեփանոսը Մեծոփայ վանքում գրել է Կարապետ կրօնաւորի[416]* համար: Ունի Թուղթք Պօղոսի:*

164. *Դ. Հմր 12. ՌԲՃ. - 1653. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 202 [Մ 151]: 197 [թղթէ] թերթ (18x12). գրիչն է՝ Պօղոս երէց Այրարատու: Բվնդ.՝ Թուղթք Պօղոսի, Յայտնութիւն, Եօթ կաթողիկեայ թուղթք եւ Աղերս Եւթաղի:*

165. *Դ. Հմր 13. ՌՃԺԸ. - 1669. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 201 [Մ 150]: 199 [թղթէ] թերթ (14,5x10). գրել է Մանուէլ վարդապետը: Բվնդ.՝ Թուղթք Պօղոսի, Եօթ կաթողիկեայ թուղթք, Աղերս Եւթաղի, Հանգիստ:*

166. *Դ. Հմր 14. ՌՃՀ. - 1671. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 204 [Մ 152]: 307 [թղթէ] թերթ (19x14). գրել են [Վարդանէսը եւ] Աթանասը՝ Յովհաննավանքում: Բվնդ.՝ Թուղթք Պօղոսի, Եօթ կաթողիկեայ թուղթք, Աղերս Եւթաղի եւ քարոզների ժողովածու:*

167. *Դ. Հմր 15. ՌՃՀ.-1671. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 206 [Մ 153]: 171 [թղթէ] թերթ (19,5x14,5). գրել է Յովսէփը՝ Եղիսաբերի համար, Սպահան քաղաքում: Բվնդ.՝ Գործք առաքելոց, Թուղթք Պօղոսի, Յայտնութիւն եւ Հանգիստ:*

168. *Դ. Հմր 16. ԺԵ. դ. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 215 [Մ 155]: 130 [թղթէ] թերթ (14,2x11). տէրն է Վախթանգ իշխանը: Բվնդ.՝ Թուղթք Պօղոսի[417]*:*

169. *Դ. Հմր 17. ԺԷ. դ. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 218 [Մ 270]: 298 [թղթէ] թերթ (15,5x11,5). գրել է Աւետը: Բվնդ.՝ Եօթ թուղթք կաթողիկեայք, Աղերս Եւթաղի, Թուղթք Պօղոսի, Յայտնութիւն եւ Հանգիստ:*

170. *Դ. Հմր 18. ԺԸ. դ. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 228 [Մ 233]: 218 [թղթէ] թերթ (15,5x11,5). գրել է Զաքարիա գրիչը: Բվնդ.՝ Թուղթք Պօղոսի[418]*:*

---

[415]* Ճշգրիտ թուականն է՝ ԷՃԿ. - 1311:

[416]* Կարապետը հետագայ՝ ԺԷ. դարի ստացող է:

[417]* Ճիշտ ժամանակը՝ ԺԳ. դար:

[418]* Ճիշտ ժամանակը՝ ԺԴ. դար:

171. *Դ. Հմր 19. ձեռագիր Սսում [անյայտ]: Յիշատակում է Langlois-ն Սսի ձեռագրերի ցանկում, սակայն ժամանակը չի որոշում: Բվնդ.՝ Թուղթք Պօղոսի*[419]*:*

172. *Դ. Հմր 20. Ժէ. դ. Էջմիածնի վանքի ձեռագիր Հմր 806[Գ.] [Մ 2420]*[420]*: Բվնդ.՝ Թուղթք Պօղոսի, եօթ Թուղթք կաթողիկեայք եւ Աղերս Եւթաղի:*

Ե. ՆՈՐ ՁԵՌԱԳՐԵՐ

Նիւթի լրութեան համար մեզ թոյլ ենք տալիս տեղեկութիւններ աւելացնել մի քանի ձեռագրի մասին, որոնք ուշ ժամանակների չհրատարակուած աշխատանքներ են:

173. *Ե. Հմր 1. Վիեննայի կայսերական գրադարանում (Cod. Arm. Հմր 4)*[421] *կայ Սարգիս վարդապետ Հաճնեցու ձեռագիրը, որը 1773 թուականին Երուսաղէմում Ոսկանի հրատարակութեան հետ համեմատել է Աստուածաշնչի մօտ 15 ձեռագիր եւ նշել տպագրի համեմատ ձեռագրերի ունեցած կարեւորագոյն չեղումներն ու տարբերթերցումները: Ի դէպ, առաջին անգամ նա է նկատել հայկական Ընկալեալից Երուսաղէմի մի ձեռագրի (J²) Մնացորդաց գրքերի հին տարբերակի տարբերութիւնը: Սարգսի աշխատութեան պատճէնը պահպանւում է Վիեննայի մխիթարեանների մօտ*[422]*:*

174. *Ե. Հմր 2. Զօհրապեանն իր հրատարակութեան ծանօթագրութիւններում յաճախ ասում է, որ Աստուածաշնչի ձեռագրերում իր գտած որոշ յաւելումներ անհրաժեշտ չի համարել դնել իր հրատարակութեան մէջ եւ խոստանում է դրանք հրատարակել առանձին գրքոյկով: Դա նրան չյաջողուեց, սակայն նրա գրած ձեռագիրը պահպանւում է Մխիթարեանների գրադարանում*[423]*:*

[419*] Տե՛ս **V. Langlois,** Voyage à Sis, Capitale de l'Arménie au moyen âge, Journal Asiatique, cinquiéme série, t. V, 1855, էջ 257-300. էջ 295. «83. Épitres de saint Paul, in 8°, papier»:

[420*] Էջմիածնի հին Հմր 806ը Մ 684ն է՝ Վարք հարանց, 1654 թ., Առինջ, ճիշտը՝ Գէորգեան Հմր 806ն է, որ Մ 2420ն է. այսինքն՝ համարի «Գ»՝ Գէորգեան հաւաքածուինը լինելը վրիպմամբ մոռացել է գրել:

[421] **Հ. Յ. Տաշեան,** Հայերէն ձեռ. Վիեննայի կայս. գր. ի՝ ՀԱ, 1891, էջ 15, 16:

[422] Տաշեան, Ցուցակ, էջ 630-631, Հմր 244:

[423] **Հ. Գ. Գալէմքեարեան**, Հայերէն ձեռագիրք Միւնխէնի արքունի գրատան.- Հանդէս ամսօրեայ, 1891, էջ 364-5, ձեռ. Հմր 13 (ամբողջը՝ էջ 235-343, 307-314, 340-345, 364-368. առանձին գրքով՝ Ցուցակ հայերէն ձեռագրաց Արքունի Մատենադարանին ի Միւնխէն, Կազմեց **Հ. Գրիգորիս վ. Գալէմքեարեան՝** Մխիթ. ուխտէն, Վիեննա, Մխիթ. տպ., 1892. VIII, 37 երկսիւն էջ): * Յիշատակած Հմր 13 ձեռագիրը Վենետիկի մատենադարանի Զ. ճաղընտրից (ԺԱ. դ.) Զօհրապեանի արած ընդօրինակութիւն է՝ տարաբնոյթ նիւթերի, որոնց շարքում կան սուրբգրական մի քանի նախադրութիւն եւ

175. *Ե. Հմր 3. Վիեննայի կայսերական գրադարանում (Cod. Arm. Հմր 22) պահպանուել է 1712 թուականին Լակրոզի գրած ձեռագիրը, որ պարունակում է՝ հայերէն Աւետարանի օրինակութիւն, Յովհան Ոսկեբերանի պատմութիւնը, Սուրբ Նիկողայոս Սքանչելագործի պատմութիւնը եւ հատուած մի եթովպական ձեռագրից: Երբ Լակրոզը քննադատում էր Ոսկանի հրատարակութիւնը. նա համեմատել էր Ոսկանի հրատարակած Աւետարանի բնագիրն այն ընդօրինակութեան հետ, որ ինքն իր համար պատրաստել էր մի հին փարիզեան*[424]* *ձեռագրից, եւ ահա նրա ընդօրինակութիւնը պահպանուել է Վիեննայի գրադարանում*[425]*:*

176. *Ե. Հմր 4. Մեր ներածութեան մէջ խօսել ենք Պետրոս Լուրդէի՝ Աստուածաշնչի հայերէնից լատիներէն թարգմանութեան փորձի մասին, եւ ասել ենք որ նրա ձեռագիր աշխատութիւնը պահպանուել է Միւնխէնի արքայական գրադարանում: Այն երեք հատորից կազմուած ձեռագիր է. «Bible arménienne traduite par Lourdet», նկարագրել է Գր. Գալէմքեարեանը՝ բերելով իւրաքանչիւր հատորի բովանդակութիւնը: Ա. հատորն ընդգրկում է Հնգամատեանը՝ 1793 թուականից, Բ.՝ Յեսուից մինչեւ Դ. Թագաւորութեանց գիրքը՝ 1795 թուականից, Գ.՝ Մնացորդաց գրքերից մինչեւ Բ. Մակաբայեցոց Իթ. գրքերը ներառեալ՝ 1798 թուականից*[426]*:*

Զ. ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ ԳՐՔԵՐԸ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐԻ ՄԷՋ

Այդպիսի ժողովածուների թիւն առանձնապէս մեծ չէ, այդուհանդերձ դրանք արհամարհել չի կարելի, որովհետեւ յատկապէս նրանց մէջ են հանդիպում հետաքրքիր տեղեկութիւններ յետին ժամանակների աշխատանքների, ինչպէս օրինակ՝ Ստեփանոս Լվովցու կողմից Սիրաքի գրքի թարգմանութեան մասին: Այդպիսի բոլոր ժողովածուները ժամանակով ժէ. դարից հին չեն, եւ նրանց մէջ չկայ մագաղաթէ անգամ մի ձեռագիր[427]**:*

մարգարէների մահերը. այսինքն՝ «Աստուածաշնչի ձեռագրերում իր գտած որոշ յաւելումներ»ի ժողովածու չէ:

424* Իրականում համեմատել է միայն՝ Բեռլինի Ms. Or. Quart. 12ի հետ եւ միայն Մատթէոսի Ա-Զ. գլուխները. տե՛ս Վիեննայի կայսերական գրադ-ի ցուցակ, էջ 34-5:

425 **Հ. Յ. Տաշեան**, Հայերէն ձեռ. Վիեննայի կայս. գր. ի՝ ՀԱ, 1891, էջ 112-113:

426 **Հ. Գ. Գալէմքեարեան,** Հայերէն ձեռագիրք Միւնխէնի արքունի գրատան.- Հանդէս ամսօրեայ, 1891, էջ 366, ձեռ. Հմր 19:

427* Շարադրանքի յաջորդող մասը (գրքի էջ 171՝ 11 տող) առաւելապէս թուերի անարտայայտիչ շարք է, որ փոխարինում ենք ձեռագրերի ներկայ համարներին վերաբերող մեր յօդուածի համապատասխան մասով (**Մեսրոպ Տէր-Մովսիսեանի** «Պատմութիւն Սուրբ Գրոց հայկական թարգմանութեան» գիրքը եւ նրա մէջ ընկարագրուած-յիշատակուած ձեռագրերը- «Էջմիածին» հանդէս, 2016, Հմր Ժ., էջ

ա. *Սողոմոնի գրքերը. մէկը, երկուսը կամ բոլորը միասին.*

	Հմր Էջմ-ի	Հմր ի Մ	Էջք բնագրի
177	*18*	*9*	*71ա-159ա*
178	*615*	*718*	*56ա-100ա*
179	*1472*	*1465*	*62բ-100բ*
180	*1187*	*1177*	*301բ-330ա*
181	*1684*	*1887*	*269բ-366ա*
182	*1767*	*1667*	*46ա-167ա*

բ. *Յոբի գիրքը.*

	Հմր Էջմ-ի	Հմր ի Մ	Էջք բնագրի
183	*1345*	*1390*	*223ա-254բ*
184	*Գ533*	*3514*	*144բ-192բ*

գ. *Սիրաք. Զօհրապեանի հրատարակութեամբ բնագիրը.*

	Հմր Էջմ-ի	Հմր ի Մ	Էջք բնագրի
177	*18*	*9*	*159բ-171բ*
178	*615*	*718*	*67ա-133ա*
179	*1472*	*1465*	*30ա-62ա*
181	*1684*	*1887*	*343ա-366ա*
183	*1345*	*1390*	*254բ-276ա*
184	*Գ533*	*3514*	*112ա-144բ*
185	*Գ35*	*2961*	*2ա-39բ*

*[Սիրաք]. Ստեփաննոս Լվովցու թարգմանութիւնը.*428

	Հմր Էջմ-ի	Հմր ի Մ	Էջք բնագրի
186	*602*	*705*	*1ա-158բ*
187	*Գ412*	*3290*	*1բ-39բ*
188	*/Գ712*	*2909*	*18ա-37ա*[428*]

103-105 (ամբողջը՝ էջ 83-108), իսկ Մագիստրոսի գրքի այս 11 տողի ճշգրիտ հայերէնն այս է. «ա) *Սողոմոնի գրքերը*, մէկը, երկուսը կամ բոլորը մասին՝ Հմրք 18 (թ. 71), 615 (թ. 56), 1472 (թ. 62), 1187 (թ. 296), 1684 (թ. 269), 1767 (թ. 135): բ) *Յոբի գիրքը*՝ Հմրք 1345 (թ. 223), 533 Գ (թ. 144): գ) *Սիրաքի գիրքը*, բնագիրը Զօհրապեանի հրատարակութեամբ՝ Հմրք 18 (թ. 158), 615 (թ. 67), 1472 (թ. 30), 1684 (թ. 343), 1345 (թ. 264), 533 Գ (թ. 111), 35 Գ (թ. 2), Ստեփաննոս Լվովցու թարգմանութիւնը՝ Հմրք 602 (թ. 1), 412 Գ (թ. 1), 712 Գ (թ. 18) եւ Վիեննայի ձեռ. (տե՛ս վերը՝ Բ. Հմր 13): դ) Եօթ թուղթք առաքելոց եւ Աղերս Եւթաղի Հմրք 1430 (թ. 203), 1359 (թ. 185), 1187 (թ. 281). ե) Աղերս Եւթաղի Հմր 1348 (թ. 186). զ) Հաւգիստ Յովհաննու Հմրք 21 (թ. 37), 613 (թ. 120), 615 (թ. 46), 1359 (թ. 183), 796 (թ. 51) եւ 130 Գ (թ. 263). է) Տեսիլ Յովհաննու Հմր 632 (թ. 66)»:

[428*] Այս մասն աւարտել է՝ «եւ Վիեննայի ձեռագիրը (տե՛ս վերը՝ Բ. Հմր 13)». ուստի սա աղիւսակիս մէջ չառանք:

դ. Առաքելոց եօթ թղթերը եւ Եւթաղի աղերսը.

	Հմր Էջմ-ի	Հմր ի Մ	Էջք բնագրի
189	*1430*	*1420*	*203ա-234ա*
190	*1359*	*1357*	*188ա-204բ*
180	*1187*	*1177*	*287ա-301բ*

ե. Աղերս Եւթաղի [1 անուն].

	Հմր Էջմ-ի	Հմր ի Մ	Էջք բնագրի
191	*1348*	*1392*	*186ա-188ա*

*զ. Հանգիստ Յովհաննու.*429

	Հմր Էջմ-ի	Հմր ի Մ	Էջք բնագրի
192	*21*	*11*	*37ա-42ա*
193	*613*	*716*	*120ա-126ա*
178	*615*	*718*	*46ա-53բ*
191	*1359*	*1357*	*188ա-190բ*
194	*796*	*682*	*51ա-52ա*
195	*Գ130*	*3782*	*263բ-265ա*[429*]

է. Տեսիլ Յովհաննու.

	Հմր Էջմ-ի	Հմր ի Մ	Էջք բնագրի
196	*632*	*614*	*66ա-84բ*

[429*] Գ130 ձեռագիրը Մ 3782ն է, միևչդեռ՝ սա «Հանգիստ Յովհաննու» չունի, ունի՝ 263բ-5ա «*Յեկեղեցական Պատմութենէ վասն Յովհաննու Աւետարանչի* - Ասի բան, եթէ Յովհաննէս առաքեալ եւ աւետարանիչ... պաշտաւնեայս ըստ Որդւոյն տուչութեան». ուրեմն՝ Մագիստրոսն այս բնագիրը շփոթել է «Հանգիստ»ի հետ:

3. ՁԵՌԱԳՐԵՐԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Սուրբ Գրոց ձեռագրերի մեր առաջադրած համառօտ նկարագրութիւնը պարունակում է 79 լրիւ եւ 97 մասնական միաւոր, ընդ որում՝ յարմարութեան համար մասնականները բաժանել ենք խմբերի. Ա. - 18 ձեռագիր Հին եւ Նոր Կտակարանների մասերով, Բ. - 21 ձեռագիր Հին Կտակարանի մասերով, Գ. - 38 ձեռագիր Աւետարանի, եւ Դ. - 20 ձեռագիր Նոր Կտակարանի մասերով:

Ժամանակի առումով նրանք բաժանւում են՝ Աւետարանի - 1 միաւոր՝ Թ. դարի, 6 միաւոր՝ Ժ. դարի, 12 միաւոր՝ ԺԱ. դարի, Աստուածաշնչի 1 միաւոր եւ Աւետարանի 11 միաւոր՝ ԺԲ. դարի:

ԺԳ. դարի Աւետարանի ձեռագրեր մեր նկարագրութեան մէջ չեն մտել. նրանց թիւը շատ մեծ է, ընտրել ենք միայն երեք առաւել հետաքրքիր միաւոր, իսկ Աստուածաշունչը եւ նրա մասերը բերուած են բոլորը՝ ամբողջութեամբ: Աստուածաշնչերի 13 միաւոր թուագրուած են, իսկ 4ը՝ անթուական. Ա. չարքից 3ը թուականով են, Բ. չարքից 3ը թուականով եւ 2ը անթուական, Գ. չարքից 1ը թուականով եւ 1ը անթուական, Դ. չարքից 3ը թուականով, 2ը անթուական. բոլորը՝ 32 միաւոր:

ԺԴ. դարի Աստուածաշնչերի 15 միաւոր թուականով են, 3ը անթուական, ընդ որում՝ այս երեքը կարող են պատկանել նաեւ ԺԳ. դարին. Աստուածաշնչի մասերով բոլորը ձեռագրերը թուականով են՝ Ա. - 4, Բ. - 4, Գ. - 1, Դ. - 6. ընդամէնը՝ 15 միաւոր:

ԺԵ. դարի Աստուածաշնչերի 4 միաւոր թուականով են, Ա. - 1ը թուականով եւ 1ը անթուական, Բ. - 1ը թուականով եւ 1ը անթուական, Դ. - 1ը անթուական, բոլորը՝ 9 միաւոր:

ԺԶ. դարից 4 Աստուածաշունչ անթուական են, որոնցից երեքի՝ Sis^1, Sis^2 եւ V^9, թուագրութեան խնդիրը կասկածելի է, քանի որ դրանք կարելի է վերագրել ԺԵ. կամ ԺԷ. դարերին, իսկ Jl օրինակը հակուած ենք դասելու ԺԵ. հարիւրամեակին: Ա. - 1ը անթուական, Բ. - 1ը անթուական, բոլորը 6. այլ խօսքով՝ ԺԶ. դարից չկայ Աստուածաշնչի թուագրուած որեւէ ձեռագիր:

ԺԷ. դարի 30 միաւոր Աստուածաշունչ թուագրուած են, իսկ 6ը անթուական, Բ. - 4ը թուականով եւ 2ը անթուական, Դ. 4ը թուականով, 1ը անթուական. բոլորը՝ 52 միաւոր: Երկու միաւոր՝ V^{10} եւ V^{11}, մեզ մօտ բերուած են առանց որեւէ թուականի, իսկ Աստուածաշնչի մասերի երկու միաւորներ վերաբերում են ԺԸ. դարին:

Սուրբ Գրոց այս բոլոր ձեռագրերի հաւաքումը՝ բերուած համառօտ նշումներով, ինքն ըստ ինքեան տալիս է հայոց գրական գործունէութեան բաւական հետաքրքիր բնութագիր՝ նրանց պատմական կեանքի տարբեր շրջաններում: Հաւանաբար մեզ մօտ Սուրբ Գրոց ներկայումս գոյութիւն ունեցող ոչ բոլոր ձեռագրերի մասին տեղեկութիւններն են ի մի բերուած[430]*, էլ չասելով դեռեւս այն մասին, որ Սուրբ Գրքի ձեռագրերի ընդամէնն աննշան մասն է հասել մեզ: ԺԳ. դարի եւ յատկապէս ԺԴ. եւ ԺԷ. դարերի ձեռագրերի մեծ քանակութիւնը, նրանց համարեա իսպառ բացակայութիւնը ԺԶ. դարում եւ աննշան քանակութիւնը ԺԸ. դարում չենք կարող վերագրել ինչ որ պատահականութեան կամ բացատրել նրանով, որ ԺԸ. եւ ԺԶ. դարերի բոլոր ձեռագրերը կորսուել են, իսկ ԺԲ.-ԺԴ. եւ ԺԷ. դարերինը պահպանուել են: Սակայն մեր կազմած ձեռագրերի ցանկերն առաջացնում են ոչ միայն այսպիսի մտորումներ. սրանցով արձանագրուում է, որ չի պահպանուել ամբողջական Աստուածաշնչի կամ թէկուզ Հին Կտակարանի առանձին գրքերի որեւէ ձեռագիր՝ գրուած ԺԲ. դարից առաջ, երկաթագրով կամ գլխատառերով. իսկ դա նշանակում է, որ մենք չունենք կիլիկիան դարաշրջանից, այսինքն՝ ԺԲ. դարից առաջ գրուած ձեռագիր Աստուածաշունչ:*

Ինչպէս յունական եւ լատինական գրերը, այնպէս էլ հայկականները ժամանակի ընթացքում արտաքնապէս ենթարկուել են փոփոխութիւնների՝ ունենալով majuscul - капидарное или начальное письмо - երկաթագիր, miniscul - круглое письмо - բոլորագիր, cursiv - скоропись - նոտրգիր ձեւեր[431]*: Դժուար է ճշգրիտ որոշել, թէ երբ է աւարտւում մի ձեւի գործածութիւնը եւ մշակւում մէկ ուրիշը, որն էլ փոխարինում է նախորդին. եթէ նկատի ունենանք նաեւ այն հանգամանքը, որ գրերի գլխաւոր ձեւերի միջեւ եղել են անցումային աստիճաններ, այդուհանդերձ արձանագրուում է յայտնի ժամանակաշրջան, որի ընթացքում մշակուել եւ գերիշխել է նշուած ձեւերից որեւէ մէկը: Այդպիսի ժամանակաշրջանները մօտաւորապէս հետեւեալներն են. ԺԲ. դարի կէսից սկզբնական գիրը [երկաթագիրը] փոխարինւում է բոլորգրով, իսկ բոլորգիրը ԺԶ. դարից՝ նոտրգրով, թէեւ բոլոր երեք ձեւերն էլ յաջորդող նորի յայտնուելուց յետոյ էլ խառնուել են նախորդի հետ եւ չարունակել են կիրառուել ձե-*

---

[430] Օրինակ, Զարբհանալեանը յիշատակում է Վենետիկի մատենադարանի 13 միաւոր ձեռագիր, իսկ մեզ յաջողուեց տեղեկութիւններ ժողովել միայն 11 օրինակի մասին: Նաեւ՝ Սարգիս աբեղան ճաղորդում է, որ ինքը Երուսաղէմում Աստուածաշնչի տպագիր օրինակի հետ համեմատել է 15 ձեռագիր, իսկ մեզ մօտ յիշատակուած է միայն 7 միաւոր. եւ այլն:

[431] **Н. Марръ,** Грамматика древне-армяскаго языка. СПб, 1902, стр. 1, եւ **Զարբհ.,** Պատմ. հայ դպր., 1897, էջ 69-94:

ռագրերում: Աստուածաշնչի բոլոր ձեռագրերը գրուած են բացառապէս բոլորգրով՝ նոյնիսկ այն ժամանակ, երբ նոտրգիրը մեծ կիրառութիւն է ունել. օրինակ Ժէ. դարում[432]: Լեհաստանում՝ Լվովում, որքան մեզ յայտնի է, բոլոր սովորական ձեռագրերը գրւում էին նոտրգրով կամ նոտրգրանման բոլորգրով, եւ այնտեղ եւս Աստուածաշնչի բնագրերը գրուած են բոլորգրով: Դժբախտաբար այսպիսի պահպանողականութիւն չենք նկատում առաւել հին շրջանում. ԺԲ. դարի վերջից յանկարծ թողնում են երկաթագիրը եւ անցնում բոլորգրին: Հնում կազմարարները սովորութիւն ունէին՝ կազմի ամրութեան համար իւրաքանչիւր կազմուած գրքի սկզբում եւ վերջում դնում էին մագաղաթէ թերթեր: Այդ նպատակի համար նրանք օգտագործում էին ոչ թէ մաքուր մագաղաթ, այլ հնացած՝ երկաթագրով գրուած ձեռագրերի թերթեր, եւ սովորաբար վերցնում էին հնացած ձեռագիր Աւետարանների թերթեր: Այդպիսի մագաղաթէ թերթերի մէջ, թէկուզ եւ հազուադէպ, հանդիպում են հատուածներ ճառերի, պատմութիւնների, մեկնութիւնների, եկեղեցապաշտամունքային ճաշոցների, երբեմն էլ յունական, լատինական եւ ասորական ձեռագրերից. եւ այստեղ հազարաւոր այդպիսի թերթերի մէջ ոչ մի անգամ մեզ չեն հանդիպել Աստուածաշնչի ձեռագրերի մասեր[433]: Այսպիսի իրավիճակը մեզ իրաւունք է տալիս եզրակացնելու, որ մինչեւ ԺԳ. դարը Աստուածաշնչի ձեռագրերը չատ հազուադէպ են եղել, եւ այդ երկաթագիր հազուադէպ օրինակութիւններն անհետ կորել են, երբ նրանցից բոլորգրով արտագրուել են նոր օրինակներ:*

Բացառութիւն են Աւետարանի ձեռագրերը. այն եղել է ամենաանհրաժեշտ գիրքը ցանկացած եկեղեցում, ամէն հոգեւորականի եւ բարեպաշտ աշխարհականի համար: Չնայած ժամանակի աւերիչ ազդեցութիւնը եւ նրանց գիտակցաբար ոչնչացմումը սեփականատէրերի կողմից, երբ գրի ղժուարընթեռնելիութեան պատճառով ձեռագրերը դառնում էին ոչ պիտանի, այդուհանդերձ, մեզ համար պահպանուել են Թ.-ԺԲ. դարի մի քանի տասնեակ ընդօրինակութիւն՝ երկաթագրով, մագաղաթի վրայ:

---

[432] Շերմազանեանի ցուցակում բերուած՝ Նոր Ջուղայի վանքի երկու ձեռագիրն էլ համարւում են նոտրգրով գրուած. սակայն մենք Շերմազանեանի այս բնորոշումն անճիշտ ենք համարում. միայն մէկ ձեռագիր ըստ ճ. Տաշեանի նկարագրութեան գրուած է նոտրգրով, սակայն հաւանաբար այդտեղ էլ իսկական նոտրգիր չէ, այլ Լեհաստանի հայերի կիրառած գիրն է, այսինքն՝ բոլորգրի եւ նոտրգրի միջեւ ինչ որ միջին:

[433*] Պնդումը ճիշտ չէ. Մաշտոցեան Մատենադարանի Հայերէն պատառիկների հաւաքածուի մէջ բաւական շատ են թէ՛ Հին եւ թէ՛ Նոր Կտակարանների մասեր. տե՛ս **Օննիկ Եգանեան**, Առարկայական ցանկ Մաշտոցեան Մատենադարանի ձեռագիր պատառիկների.- Ռեղինակի՝ Աշխատութիւններ, Հրատարակութեան պատրաստեց՝ **Գէորգ Տէր-Վարդանեան**, Ցանկերը կազմեց՝ Գայիանէ Թերզեան, Երեւան, 2014, էջ 329՝ «Հին Կտակարան», էջ 329-331՝ «Նոր Կտակարան»:

Դրա չնորհիւ այժմ մենք ունենք Աւետարանի առաւել վաղ ժամանակների բնագրեր, քան Աստուածաշնչի բոլոր մնացած մասերը: Իմանալով պահպանուածութեան ճչգրիտ ժամանակաշրջանը ձեռագրերի՝ մի կողմից Աւետարանի, եւ միւս կողմից՝ ամբողջ Աստուածաշնչի, իր մասերով, կարող ենք ոչ աւելի առաջ, այլ միայն այդ ժամանակներից սկսած քայլ առ քայլ հետեւել հայերէն Աստուածաշնչի բնագրի իսկական պատմութեանը, թէ ինչ կազմով եւ ինչպիսի փոփոխութիւնների ու յաւելումների է ենթարկուել այս ձեռագիր բնագիրը՝ մինչեւ 1660 թուականի նրա առաջին տպագրութիւնը: Եւ այս դէպքում պէտք չէ դիմել ոչ մատենագրական տեղեկութիւններին, որոնք այնքան էլ շատ չեն, ոչ էլ տարբեր ենթադրութիւնների, քանի որ պահպանուած ձեռագրերն իրենք են խօսում իրենց մասին: Որպէս օրինակ նշենք մի բնութագրական երեւոյթ: Բնագրերը գիտակցաբար սրբագրուել են ինչպէս ամենավաղ ժամանակներում, նոյնպէս եւ աւելի ուշ՝ կիլիկեան շրջանում. Աւետարանի Թ-ԺԲ. դարերի հնագոյն ձեռագրերն այդպիսի սրբագրումների շատ օրինակներ ունեն: Նրանցով երեւում է, որ հնում սրբագրողը եւ նրա արտագրողները բնագրի փոփոխման կամ սրբագրման գործին բացայայտ զգուշութեամբ եւ վախով են վերաբերուել. հանդիպելով սրբագրում պահանջող որեւէ անճշտութեան կամ ձեւի, նրանք հեշտութեամբ չեն ջնջել իրենց կարծիքով ոչ ճիշտ բնագիրը, այլ միայն բաւարարուել են նրանով, որ իրենց ուղղումները գրել են ձեռագրի լուսանցներում՝ թողնելով նախկին բնագիրը: Գրիչներն էլ, սկսած ԺԴ. դարից, այդպիսի չրջահայեցութիւն չցուցաբերելով, ինքնակամ արտագրում էին կամ սրբագրումը կամ էլ նախկին չարադրանքը:

Հաշուի չառնելով այն, որ որոշ ձեռագրերի գրչութեան տեղի եւ ժամանակի մասին տուեալներ չկան, կամ էլ մենք գտնել չենք կարողացել համառօտ նկարագրութիւնների մէջ, նկատում ենք, որ գոյութիւն ունեցող տուեալները մեզ մատնանշում են հայոց գրական գործունէութեան կենտրոնները եւ որ ձեռագրերից քաղուած բոլոր այդպիսի տեղեկութիւնները հիանալի ձեւով համընկնում են նրա հետ, որ մենք ըստ պատմական այլ աղբիւրների գիտենք այդ կենտրոնների այդտեսակ գրական գործունէութեան մասին: Հայոց պատմութիւնից, օրինակ, գիտենք, որ Բագրատունիների թագաւորութեան վերջնական անկումից յետոյ, Հայաստանի բնակչութեան մի մասը թշնամական ուժի ազդեցութեամբ հարկադրուած է եղել լքելու իր հայրենիքը, իսկ մի մասն էլ նոյնն արել է անձնական անվտանգութեան համար եւ փրկութիւն է փնտրել հայրենի երկրից դուրս: Ըստ բուն Հայաստանի ամայացման չափի թուլացել է, իսկ որոշ տեղերում էլ ընդհանրապէս ամբողջովին ընդատուել է ամէն տեսա-

կի գրական գործունէութիւն: Յայտնի է, նաեւ, որ հայերը որտեղ էլ որ յայտնուել են, մնալով նուիրուած քրիստոնէական կրօնին եւ իրենց հարազատ եկեղեցուն, միշտ ուժերի եւ հնարաւորութիւնների ներած չափով աշխատել են այդ եկեղեցու բարգաւաճման համար: Նրանք շատ հեչտութեամբ իւրացնում էին չրջապատող ժողովրդի մշակոյթը: Այնպէս որ, եթէ մշակոյթի եւ մշակութային աշխատանքի նկատմամբ հետաքրքրութիւնը հայրենի հողում դադարում կամ թուլանում էր, ապա նոյն հետաքրքրութիւնն իրեն դրսեւորում էր իրենց բնակութեան նոր վայրերում: Եւ մենք պատմութիւնից գիտենք, որ ձեւաւորուել եւ բարգաւաճել են նման շատ գաղթօջախներ: Գրական գործունէութեան այսպիսի տեղաշարժ կարող ենք արձանագրել նաեւ ըստ Սուրբ Գրոց ընդօրինակութիւնների, եթէ սկսենք դրանք խմբաւորել եւ դիտարկել ըստ գրչութեան վայրերի:

Աւետարանների Թ-ԺԱ. դարերի բոլոր 18 ձեռագրերից յայտնի են 9 օրինակի գրչութեան վայրերը, այսինքն՝ ուղիղ կէսը. նրանցից Հմր 1ը (ձեռ. 887 թ.) գրուած է Վանանդում՝ Կարսի մարզում, Հմր 6ը (ձեռ. 989 թ.)՝ Երեւանի նահանգի Դարալագեազի գաւառի Սուրբ Ստեփանոս վանքում, Հմր 8ը (ձեռ. 1007 թ.)՝ Ադրիանապոլիս քաղաքում, Հմր 11ը (ձեռ. 1044 թ.) Երուսաղէմ քաղաքում, Հմր 14ը (ձեռ. 1057 թ.)՝ Փոքր Ասիայի Մելիտենէ քաղաքում, Հմր 15ը (ձեռ. 1064 թ.)՝ Շուքրտանտարեւտ վանքում (՞), Հմր 16ը (ձեռ. 1066 թ.)՝ Կապադովկիայի Սեբաստիա քաղաքում, Հմր 18ը (ձեռ. 1099 թ.)՝ Ալեքսանդրիա քաղաքում: Հետեւաբար, ինը ընդօրինակութիւններից չորսը գրուած են Հայաստանից դուրս, իսկ հինգը՝ Հայաստանի տարբեր վանքերում:

ԺԲ. դարի Աւետարանի տասը ձեռագրերից ըստ գրչութեան վայրի յայտնի են չորս օրինակը: Մէկը՝ Հմր 21ը (1181 թ.) գրուած է Հոռոմոս վանքում՝ Հայաստանի հին մայաքաղաք Անիի մօտ, երեքը՝ Կիլիկիայում, ա) Կատին[434] ամրոցի մօտ գտնուող մի վանքում՝ Հմր 26 (1193 թ.), բ) Ներսէս Լամբրոնացու համար՝ Հմր 27 (1193 թ.). տեղը խմացւում է ըստ տիրոջ անուան, գ) Մլէճայ[435] վանքում՝ Հմր 28 (1198 թ.):

ԺԳ. դարը ամենաբնութագրականն է Կիլիկիայում մատենագրական ծաղկման վառ արտայայտման իմաստով, որի հետ Հայաստանի ոչ մի մաս համեմատուել չի կարող: Մեր ցուցակում, ինչպէս ասուել է, Աւետարանի այս դարի ոչ բոլոր ձեռագրերն են բերուած, իսկ ամբողջական Աստուածաշնչի եւ նրա մասերի ձեռագրերը բաշխւում են հետեւեալ կերպ. Աստուածաշնչի 13 ամբողջական ընդօրինակութիւնից մէկ՝ Մօ օրինակի՝ երկայնամօրու վանքը, մենք ի վիճակի չենք եղել պարզել, թէ որտե՞ղ է

[434] **Ղ. Ալիշան**, Սիսուան էջ 534:

[435] **Ղ. Ալիշան**, Սիսուան էջ 66, 74:

գտնուում այդ անունով վանքը, որտեղ գրուել է ձեռագիրը՝ Կիլիկիայո՞ւմ, թէ՞ մեծ Հայքում. MA-ն գրուած է Այրիվանքում. Հմր 13ի գրիչը Հաղբատի վանքի աբեղայ է, հնարաւոր է՝ Հաղբատում, սակայն քանի որ յիշատակւում է արքայազն Թորոսի մահը, ապա հնարաւոր է այն գրուել է Կիլիկիայում. J²-ը գրուած է Երզնկայում, իսկ մնացած բոլոր ինը ձեռագրերը՝ O¹, O², An, Sk¹, St¹, MN, H, St², V⁸, գրուած են Կիլիկիայում: Մասնականներից՝ Ա. մէկ միաւոր՝ Հմր 3ը գրուած է Մլէճի վանքում՝ Կիլիկիայում, միւսը՝ Հմր 2ը Հռոմում, Բ.՝ մէկ օրինակ Հմր 2ը Դրազարկում՝ (Կիլիկիա), մէկը՝ Հմր 3ը՝ Ասպիսնակավանքում՝ Վանայ լճի ափին, Դ.՝ երկու օրինակ՝ Հմր 3 եւ 4 Սիս քաղաքում (Կիլիկիա), իսկ մէկը՝ Հմր 5ը՝ Աղթամար կղզում, ընդամէնը Կիլիկիայում ԺԳ. դարում գրուած են 13 ձեռագիր, 5ը Հայաստանում, 1ը Հռոմում: ԺԴ. դարը Կիլիկիայի վերաբերմամբ այդպէս ակնառու չի արտայայտւում. գրչութեան վայրերը յայտնի՝ Աստուածաշնչի ամբողջական 15 օրինակներից այնտեղ գրուած են չորսը. K(°), Sk², Ja, Sk³, իսկ 6ը՝ տարբեր տեղերում. Ez-ն՝ Երզնկայում, V²-ը՝ հին Սիւնիքի Գայլաձոր վանքում, V³-ը՝ Սուլթանիէ քաղաքում, AS-ն՝ Կազարիա[436] եւ Բոլոնիա քաղաքներում, WM՝ Անի քաղաքում, Su՝ Սուրղաթ քաղաքում, Sch՝ Նորաշէն վանքում կամ Շատիկում՝ կրկին Սիւնիքում, DI-ն՝ Ուրմիայում, երեքի վայրերն անյայտ են:*

Աստուածաշնչի մասնական ձեռագրերից. Ա. - Հմր 4ը գրուած է Լիմ կղզում, Հմր 5ը՝ Սուրղաթ քաղաքում, Հմր 6ը՝ Սիւնիքի Աւագ վանքում[437], Հմր 7ը՝ Սիւնիքի Ապրակունիս կամ Երնջակ վանքում (ո՛չ հեռու հին Նախիջեւանից), Բ. - Հմր 5ը՝ Բզնունի նահանգի Արծկէ վանքում՝ հին Վասպուրականում, Դ. - Հմր 6ը՝ Իտալիայի Պերուջիա քաղաքում, Հմր 7ը՝ Երնջակի վնքում, Հմր 8ը Կիպրոս կղզում, Հմր 10ը՝ Կիլիկիայում. նշանակում է Կիլիկիայում գրուած են հինգ ձեռագիր, բուն Հայաստանում՝ ինը, օտարութեան մէջ՝ եօթը, ընդ որում՝ Հայաստանում հանդէս են գալիս երկու կենտրոն՝ Սիւնիք (5) եւ Վասպուրական (3), որտեղ գրական չարժումը երբեք չի ընդհատուել:*

ԺԵ. եւ յաջորդ հարիւրամեակներում գրական գործունէութեան կենտրոնները տեղաշարժուել են. Կիլիկիայում այլեւս ձեռագրեր չեն գրուել, կամ էլ դրանք մեզ չեն հասել: Այդ հարիւրամեակի ամբողջական Աստուածաշունչ ձեռագրերից JT գրուած է Վարագայ վանքում, Mar-ը՝ Սիւնիքի Թանահատ վանքում, Jl-ն Գաւառում կան Ապարանում՝ Վասպուրականում[438]: Աստուածաշնչի մասնական ձեռագրերից. Ա - Հմր 8ը*

[436]* Վրիպակով տպուած՝ Кесаріи՝ Կեսարիա:

[437]* Այս վանքի Սիւնիքում լինելը որեւէ ձեւով փաստուած չէ:

[438]* Իրականում գրուած է Նախիջեւանի գաւառի Ապարաներ գիւղում:

գրուած է Երուսաղէմում, իսկ Հ՟Բ 14ը՝ Երնջակի վանքում. ԺԶ. դարից, ինչպէս ասուել է, տարեթուով եւ գրչութեան վայրով յայտնի որեւէ ձեռագիր չկայ:

ԺԷ. դարում ձեռագրերը բաշխուում են հետեւեալ կերպ. Աւստրիայի Սուչաւա քաղաքում գրուած է Wk, Լեհաստանի Լվով քաղաքում՝ LB^1, LB^2 եւ LB^3, Կոստանդնուպոլսում՝ Kon^1 - Kon^6, Տիգրանակերտում կամ Ամիդում՝ Tig^1 - Tig^3, Պարսկաստանում՝ Ջուղայում՝ Dj^1 - Dj^{10}, Էջմիածնում՝ E^1 - E^3, Մոկս քաղաքում՝ J^3, Խիզանում՝ J^5, Հին Մարմանտում[439] (՞)՝ J^4, Ղրիմի Կաֆա քաղաքում (Թեոդոսիա)՝ Kf. մասնական ձեռագրերից՝ Ա. - Հ՟Բ 11ը գրուած է Շոռոթում՝ Սիւնիքում, Դ. - Հ՟Բ 14ը՝ Յովհաննէս Մկրտչի վանքում:*

Այս համադրումից երեւում է, որ Ժ-ԺԱ. դդ. բուն Հայաստանում որոշ վանքեր դեռեւս չէն էին, հետագայում բացառութեամբ երկու գաւառների՝ Սիւնիքի եւ Վասպուրականի, դադարեցին տեղում զբաղուել ձեռագրերի գրչութեամբ, եւ ողջ աշխատանքը տեղափոխուել էր երկրի սահմաններից դուրս՝ տարբեր գաղթօջախներ: Նրանց մէջ ամէնից առաջ երեւելի էր Կիլիկիան, որտեղ 1080-1195 թթ. գոյութիւն ունէր իշխանապետութիւն, իսկ յետոյ՝ 1196-1393 թթ.՝ Հայկական Ռուբինեան եւ Լուսինեան թագաւորութիւնը: Այնտեղ ազգային իշխանութեան գոյութեան շրջանում հիմնուել են բազմաթիւ վանքեր, որոնց պատերի մէջ աշխարհական ունայնութիւնից ապաստան են որոնել ինչպէս հասարակ մարդիկ, այնպէս էլ թագաւորներ ու իշխանները, այդպիսք են Ներսէս Լամբրոնացին, Հեթում-Մակար թագաւորը՝ Օշին Լամբրոնացու տոհմի չառաւիղները, Հեթում Բ.-ը, որ թագը զիջեց իր եղբայր Թորոսին եւ մտաւ փրանկիսկեան վանք, Հեթում թագաւորի եղբայր Յովհաննէս եպիսկոպոսը եւ շատ ուրիշներ: Կարճ ժամանակում այդ վանքերը ծաղկուն վիճակի հասան եւ դարձան հայոց հոգեւոր վերածննդի կենտրոններ: Նրանցում մեծ ջանադրութեամբ արտագրում էին եւ բազմացնում հին գրողների երկերը, տարբեր լեզուներից թարգմանում էին մեծ մասամբ հոգեւոր-աստուածաբանական ստեղծագործութիւններ, եւ իրենք նոյնպէս ստեղծում էին նոր երկեր: Կիլիկիայի բազմաթիւ վանքերի մէջ հռչակ էին վայելում Դրազարկի[440], Սկեւռայի, Գռների եւ Ակների վանքերը: Աստուածաշնչի մեր ձեռագրերը հաստատում են այն, որ մենք հայ գրականութեան պատմութիւնից արդէն գիտենք այդ վանքերի եւ նրանց գլխաւոր աշխատողների մասին: Գռներում բարգաւաճում էր Յովհաննէս եպիսկոպոսը,

[439*] Գիւղ էր Արեւմտեան Հայաստանում՝ Բաղէշի նահանգում, Սասունի Մոտկան գաւառակում:

[440] **Զարբհ.**, Պատմ. հայ դպր., 1897, էջ 704-714:

Սկեւռայում՝ Գէորգ վարդապետը. նրանք եւ նրանց աշակերտները գրել են O¹, O², Sk¹-Sk³, K, Ja, An, St¹, St², MN, H, V⁸ ձեռագրերը, որոնցից առնուազն վեց օրինակ սերտ կապուած են Գէորգի անուան հետ, չնայած ո՛չ բոլորն են գրուած Սկեւռայում: Ընդհանուր հաշուով Կիլիկիայից պահպանուել են ամբողջական Աստուածաշնչի 13 ամենալաւ ընդօրինակութիւն, որոնցից ամենահինը 1253 թուականի է եւ ամենավերջինը՝ 1326-1340 թուականների. իսկ Աւետարանի եւ գլխաւորապէս մասնական Աստուածաշնչի ձեռագրերը ութ միաւոր են՝ սկսած 1193 թուականից: Կիլիկիայից յետոյ, Բագրատունեաց մայրաքաղաք Անիի ծնունդ հայերը սկսեցին գաղթել Սեւ ծովի ափերը. այնտեղ հիմնեցին քաղաքներ, կառուցեցին եկեղեցիներ, վանքեր եւ ԺԵ-ԺԷ. դարերում առեւտրական գործունեութեան չնորհիւ հասան նիւթական մեծ բարեկեցութեան: Եկատերինա Մեծը այդ հայերի մի մասին վերաբնակեցրեց Ռուսաստանում՝ Դոն գետի ափին, որտեղ նրանք հիմնեցին Նախիջեւան քաղաքը: Այնտեղից մենք ունենք երեք ձեռագիր. As, որի մի մասը գրուած է Իտալիայի Բոլոնիա քաղաքում, Su եւ Kf: Առաջին օրինակը գրուած է 1366 թուականին, իսկ վերջինը՝ 1689ին, երբ բնակիչների նոր տեղահանութիւնից յետոյ գրականութեան համար գաղութը կորցրել է իր նշանակութիւնը[441]*: Յաջորդ կարեւոր հայկական գաղութը եղել է Լեհաստանում, որտեղ հայերի գլխաւոր կեցավայրերը եղել են Լվով եւ Կամենեց-Պոդոլսկ քաղաքները: Առաջին քաղաքում աշխատել է Ղազար Բաբերդացին, եւ այնտեղից մենք ունենք երեք ձեռագիր՝ LB¹, LB² եւ LB³. այնտեղ Ստեփաննոս Լվովցին լատինական վուլգատայից թարգմանել է Սիրաքի գիրքը, քանի որ հին թարգմանութիւնը չատ թերութիւններ ունէր: Այդ գաղութի ձեռագրերին պէտք է դասել նաեւ Wk օրինակը՝ Աւստրիայի Սուչաւա քաղաքից: Բոլոր չորս օրինակները վերաբերում են ԺԷ. դարին: Բաւական յայտնի է 1605 թուականին Աբաս չահի կողմից հայերի բռնի վերաբնակեցումը Պարսկաստանում: Շահը նրանց բնակութեան համար տեղ յատկացրեց իր մայրաքաղաք Սպահանի մօտ: Այնտեղ քաղաքային ծագում ունեցողները Սպահանի մօտ քաղաք կառուցեցին՝ Նոր Ջուղան, իսկ գիւղական բնակչութիւնը տեղաւորուեց գիւղերում՝ նոր քաղաքից ոչ հեռու: Քաղաքաբնակներն առեւտրական յարաբերութիւններ սկսեցին Հնդկաստանի հետ, նրանց մի մասը նոյնիսկ վերաբնակուեց այնտեղ եւ առեւտուրը տարածեց նաեւ դէպի Եւրոպա: Նրանց բարե-*

[441] Դոնի Նախիջեւանի եկեղեցիների ձեռագրերի հաւաքածուում կան Կիլիկիայում գրուած տարբեր գրքերի շատ ընդօրինակութիւններ: Կիլիկեցիների ժառանգութիւնն ստացել են Սեւ ծովի ափերին ապրող հայերը: Նոյնպիսի կապ նկատւում է նաեւ նրանց եւ Լեհաստանում ապրող հայերի, ինչպէս նաեւ վերջինների եւ Նոր Ջուղայի բնակիչների միջեւ:

կեցուԹիւնը ժէ. հարուրիւրամեակում խիստ մեծացաւ եւ հայ ժողովրդի համար բարոյահոգեբանական նպաստաւոր նշանակուԹիւն ունեցաւ: ԳրականուԹիւնն այստեղ չռայլ բարերարներ եւ հովանաւորներ ունեցաւ: Մոսկուայի Արեւելեան լեզուների Լազարեան ճեմարանի, Փարիզի Մուրադ-Ռափայէլեան վարժարանի, որ այժմ տեղափոխուել է Վենետիկ, հիմնադիրները ծնունդով եղել են Ջուղայից: Ջուղայեցի վաճառականները հայերէն առաջին Աստուածաշնչի տպագրուԹեան համար Ոսկան վարդապետին դրամական նպաստ են տուել: Անկասկած առեւտրական յարաբերուԹիւնների չնորհիւ, Նոր Ջուղա է հասցուել Աստուածաշնչի Ղազար Բաբերդացու ընդօրինակուԹիւնը, որը դարձել է այնտեղ գրուած չատ ձեռագրերի նախօրինակը: Քանի որ Ջուղայում հարուստ վաճառականների պատուէրներով սկսեցին պատրաստել Աստուածաշնչի օրինակներ, ուստի չուտով նրանք տարածուեցին ամբողջ Հայաստանում: Ջուղայի ընդօրինակողների դպրոցը այնպէս փառաբանուեց, որ նոյնիսկ բուն Հայաստանից այնտեղ պատուէրներ էին տալիս: Միայն Էջմիածնի վանքը Ջուղայից ամբողջական Աստուածաշնչի եօԹ օրինակ ունի, իսկ մեր արձանագրած ջուղայական օրինակների Թիւը տասի է հասնում: Այս ծաղկումը չատ երկար չտեւեց. դատելով ըստ Աստուածաշնչի օրինակների՝ քառորդ դարից ոչ աւելի (1648-1662), ինչը լիովին հաստատւում է պատմական այլ տուեալներով:

Այս բոլոր գաղԹօջախներն աւելի կամ պակաս բռնի տեղահանուԹեան բնոյԹ ունէին, ասիացի բարբարոս իշխողներն իրենց աւերիչ արշաւանքներից փրկուածներին ստիպում էին լքել հայրենի երկիրը, կամ էլ նրանց ուժով տեղահանում էին եւ բնակեցնում իրենց երկրում՝ սրա բարգաւաճման համար: Մասնաւորապէս Թուրքական պետուԹեան նոր մայրաքաղաք Կոստանդնուպոլսում հայերի վերաբնակեցումը բնական հրապուրման կնիք է կրում: ՍուլԹաններն այնտեղ հիմնել են յունական եւ հայկական պատրիարքուԹիւններ. հայոց պատրիարքը ճանաչուել է իր հօտի հոգեւոր եւ աշխարհական ներկայացուցիչ՝ կառավարուԹեան առջեւ: Հայերի դրուԹիւնը մայրաքաղաքում բաւական տանելի էր այն ժամանակ, երբ հայրենի երկրում տիրում էր լիարժէք անիշխանուԹիւն: Հոգեւոր վերածնունդը խաղաղ կեանքի արդիւնք էր, որը ջերմանում էր արեւմտեան մշակոյԹի ազդեցուԹեամբ եւ հայկական այլ գաղուԹների մրցակցային գործունէուԹեամբ: Կոստանդնուպոլսից մենք ունենք 1625-1666 Թուականների հինգ ընդօրինակուԹիւն. երբ Աստուածաշունչը Ամստերդամում տպագրուել էր, նրա երկրորդ հրատարակուԹիւնը եղաւ Կոստանդնուպոլսում:

Գրական աշխատանքի երկար ընդմիջումները եւ լճացումները մի կողմից, եւ կենտրոնների տեղափոխութիւնը տարբեր տեղեր եւ տարբեր ազդեցութիւնների ներքոյ միւս կողմից՝ պատճառ դարձան նրա, որ կանոնաւոր յաջորդականութեան կապը խզուեց, եւ ընդօրինակողները սեփական հայեցողութեանը մեծ տեղ տուեցին:

Ժամանակի ընթացքում Աստուածաշնչի կանոնական գրքերի թուի մասին պատկերացումը փոխուել է, եւ Սուրբ Գրոց կազմում հետզհետէ սկսեցին տեղաւորել հնարաւոր չափով տարբեր շատ գրքեր: Այդպիսի յաւելումներ են Եզրի երկրորդ եւ երրորդ գրքերը, Սիրաքի գիրքը, Յայտնութիւնը, Յովհաննու Հանգիստը, ինչպէս նաեւ հետեւեալ անկանոն գրքերը՝ ԺԲ. նահապետների կտակները, Յովսէփի եւ Ասանէթի պատմութիւնը, Դանիէլի եօթներորդ տեսիլը: Սակայն ընդօրինակողները սրանով էլ չսահմանափակուեցին. նրանք Սուրբ Գրքերին հաւասար սկսեցին գրել եկեղեցու հայրերի երկերի հատուածներ. օրինակ՝ Հերոնիմոսի նախադրութիւնը, Եպիփան Կիպրացու, Աթանաս Աղեքսանդրացու եւ Դաւիթ Փիլիսոփայի՝ Սաղմոսների մեկնութիւնները, այնուհետեւ Գէորգ Սկեւռացու, Ներսէս Շնորհալու, Ներսէս Լամբրոնացու տարբեր գլխացանկեր, նախադրութիւններ եւ տաղեր, Վանականի եւ Ղազար Բաբերդացու՝ Աստուածաշնչի բառերի ցանկեր:

Կուզէի ուշադրութիւն դարձնել մի հանգամանքի վրայ եւս: Վերը յիշատակուած լրացումները բնագրի հիմնական կազմին աւելացւում էին մեծ մասամբ իրենց իսկ՝ օրինակողների ցանկութեամբ, եւ ամենեւին ո՛չ ըստ եկեղեցական ժողովների որոշումների: Նրանք մասամբ իրենց վրայ կրում են արտաքին՝ օտար գրականութեան ազդեցութեան կնիքը: Օրինակ՝ մինչեւ ԺԲ. հարիւրամեակը Յովհաննու Յայտնութիւնը ընդունուած չի եղել հայկական կանոնում. այդ ժամանակ Ներսէս Լամբրոնացին բնագրի հնագոյն թարգմանութիւնը սրբագրել է ըստ յունարէն հիմնօրինակի եւ ինքնակամ այն միացրել է կանոնին. Եզրի երկրորդ գիրքը, չնայած թարգմանուած է եղել դեռեւս մինչեւ ԺԳ. դարի վերջը, Սուրբ Գրքի ձեռագրերում թիւրիմացաբար առկայ չի եղել, եւ առաջին անգամ այն ցանկի մէջ է առնուել Յովհաննէս եպիսկոպոսի կողմից[442]: Գէորգ Սկեւռացու աշակերտներն իրենց ուսուցչին խնդրեցին Հին Կտակարանի համար գլխացանկեր կազմել. Ղազար Բաբերդացին լատինական վուլգատայից փոխ առաւ գլուխների բաժանումը տների. եւ այլն: Այս բոլորը կատարուել է մասնաւոր նախաձեռնութեամբ, իսկ յետոյ ամէն այդպիսի յաւելում մի անգամ մտնելով Աստուածաշնչի գրքերի կազմի մէջ, դառ-

[442] Ինչպէս հետագայում կտեսնենք, այդ գիրքը հայկական եկեղեցու կողմից որպէս կանոնական է ճանաչուել առնուազն Է. հարիւրամեակից սկսած:

նում էր արդէն ընդհանուրի սեփականութիւնը: Իւրաքանչիւր բանիմաց ընդօրինակող այն իր օրինակութեան մէջ արտագրում էր առանց հարցնելու, թէ պատկանո՞ւմ է արդեօք այդ գիրքը Սուրբ Գրքին:

Եթէ նոյնիսկ ենթադրենք, թէ գլխաւոր բնագիրը մնացել է անաղարտ, այդ ամէնը բուն Աստուածաշնչի արտաքին կազմին՝ նրա նախասկզբնական կազմի համեմատ այլ տեսք է տուել: Հիմնուելով բաւական մեծ քանակութեամբ ձեռագրերի վրայ, մենք կարող ենք որոշել այն մօտաւոր ժամանակը, երբ կատարուել են այդ յաւելումները, եւ դրան համապատասխան, թէկուզ ըստ առանձին ձեռագրերի արտաքին կառուցուածքի կամ բովանդակութեան, նրանց մեծ մասը բաժանել որոշակի խմբերի: Այդպիսի խմբաւորումը ըստ արտաքին յատկանիշների, անկասկած, կարող է զգալիօրէն հեշտացնել բուն բնագիրը համեմատելու եւ հասկանալու գործը: Ընդունում ենք, որ չի կարելի բաւարարուել նշուած արտաքին յատկանիշներով եւ նրանց վրայ հիմնուելով՝ ձեռագիրը դասել այս կամ այն խմբին, եւ որ հնարաւոր են դէպքեր, երբ ձեռագիրն արտաքին կառուցուածքով պատկանում է մի խմբի, իսկ բնագրով պէտք է դասուի մէկ ուրիշի:

O^2, LB^1 եւ E^2 ձեռագրերը շատ բաներում խիստ տարբերւում են իրարից՝ ինչպէս գրքերի քանակով եւ յաջորդականութեամբ, այնպէս էլ յաւելումներով: Այս երեք օրինակը տարբեր յաւելումներով ձեռագրերի տիպական ներկայացուցիչներ են: Առաջինն ունի Սուրբ Գրոց բնագիրն ըստ յունարէն Եօթանասնից (նկատի ունենք գրքերի թիւը եւ յաջորդականութիւնը) եւ Պամփիլոսի ձեռագրի՝ միայն երկու յաւելումով՝ Հերոնիմոսի նախադրութեան հատուածով եւ Եպիփան Կիպրացու մեկնութեամբ. երկրորդն ունի առաջինի բնագիրը եւ այն գրքերը, որոնք չեն եղել ո՛չ Եօթանասնից եւ ո՛չ էլ Պամփիլոսի մէջ, բացի դրանից, Սուրբ Գրոց բնագրերից առաջ եւ յետոյ աւելացնում է նախադրութիւններ եւ գլխացանկեր եւայլն, որոնք հեշտացնում են բնագրի օգտագործումը. եւ վերջապէս՝ երրորդը տալիս է երկրորդի ամբողջ նիւթը, եւ նաեւ այն ամբողջ աւելին, որ տուել է Ոսկանը իր հրատարակութեան մէջ: Քանի որ ձեռագրերն այդպիսի յաւելումներ ունեն, դա մեզ հնարաւորութիւն է տալիս որոշակի կապեր արձանագրելու մէկ կամ միւս ձեռագրերի միջեւ եւ բոլոր օրինակները բաժանելու առանձին խմբերի: Այսուհետ կաշխատենք տալ այդպիսի խմբերը եւ ճշգրիտ բնութագրել ամէն խմբի առանձնայատկութիւնները: Այս ուղիով կարելի է պարզեցնել ձեռագրերի համեմատութեան աշխատանքը, նաեւ՝ դրանից օգտուել անթուական ձեռագրերը թուագրելիս:

Բոլոր ձեռագրերը մենք բաժանում ենք հինգ խմբի՝ հիմնուելով, ինչպէս ասուել է, Հին Կտակարանի գրքերի տարբեր յաւելումների եւ գրքերի յաջորդականութեան վրայ:

Առաջին խումբ - սրանք հնագոյն ձեռագրերն են, որոնք չունեն Գէորգ Սկեւռացու գլխացանկերը եւ նախադրութիւնները. խումբն ունի Աստուածաշնչի գրքերի ամբողջական կազմը, ինչպիսին ունի Զօհրապեանի հրատարակութիւնը: Այս խմբի ներկայացուցիչն O^2 ձեռագիրն է: Բացի O^2-ից չկայ այս խմբի ուրիշ լրիւ ընդօրինակութիւն. մնացածները թերի են, օրինակ՝ O^1, Mo եւ. ոչ մասնական Աստուածաշնչերի՝ Ա. - 1, 2 եւ Բ. - 1, 7, 8 համարները: Այս խմբին կարելի կլինէր դասել նաեւ MA ձեռագիրը, եթե նրանում անտեսուած չլինէր Աստուածաշնչի ձեռագրի սովորական կանոնի կիրառութիւնը:

Երկրորդ խումբը մենք անուանում ենք Սկեւռական. բնագրի առումով այն առաջինից չի տարբերուում, եւ նրա մէջ կարգը եւ կանոնը համապատասխանում են Զօհրապեանի հրատարակութեանը, այն տարբերութեամբ, որ Սողոմոնի Իմաստութեան գրքին յաջորդում է Սիրաքի գիրքը, Դանիէլի մարգարէութեանը՝ Երեմիայի մարգարէութիւնը, Առ Կորնթացիս երրորդ թուղթը հետեւում է երկրորդին կամ էլ տեղադրուած է բոլոր թղթերից յետո: Երրորդ թղթի նկատմամբ այս անմիօրինակութիւնը նկատելի է բոլոր խմբերում, եւ ամենայն հաւանականութեամբ այն պատճառով է, որ թարգմանիչներն այն համարել են անկանոն, սակայն ոչ մէկը չի համարձակուել հանել այն: Այս երկրորդ խումբը կազմում են՝ MN (1293 թ.), K (1308 թ.), EZ (1318 թ.), DJ (1400 թ.), Tig^2 (1640 թ.), Ka (ԺԷ. դ.) եւ WM^2 (ԺԳ-ԺԴ. դ.): Սրանց մէջ Հին Կտակարանի բոլոր գրքերին Գէորգ Սկեւռացին աւելացրել է գլխացանկեր եւ նախադրութիւններ, իսկ մի քանիսում էլ կայ Յովհաննու Հանգիստը: Այս եւ միւս խմբի միջեւ գտնուում է H (1295 թ.) ձեռագիրը, քանի որ այն չունի Սիրաքի գիրքը, եւ Դանիէլի մարգարէութիւնը դրուած է Երեմիայի մարգարէութիւնից առաջ:

Երրորդ խումբը առաջիններից տարբերուում է նրանով, որ չունի Սիրաքի գիրքը[443]*, Դանիէլի մարգարէութիւնը Երեմիայի գրքից յետոյ է, եւ Յովհաննու Հանգիստը կայ բոլոր օրինակներում: Այս խմբում, ինչպէս նաեւ յաջորդում, գլխացանկերը եւ նախադրութիւնները Աստուածաշնչի անհրաժեշտ մասն են:*

Այս խմբին են պատկանում St^1 (1292 թ.), Sk^2 (1303 թ.), Sk^3 (1319 թ.), Ja (1327 թ.), AS (1366 թ.) եւ Kon^1 (1611 թ.)[444]*: Այս երեք խմբերի ձե-*

[443] Զօհրապեանի հրատարակութեան հիմք ձեռագիրը պատկանում է այս խմբին:

[444] Թէեւ Kon^2-ը գրուած է նոյն Մինքայէլ Թոխաթեցի գրչի ձեռքով, Կոստանդնուպոլսում,

ռագրերը հիմնականում պատկանում են հայ գրականութեան երկրորդ ծաղկման ժամանակին, այսինքն՝ Կիլիկիան դարաշրջանին: Այդ շրջանի գրական գործունէութեան ամենաերեւելի ներկայացուցիչներն Աստուածաշունչի ձեռագրերն ընդօրինակում էին իրենց իսկ ձեռքով կամ էլ գրել էին տալիս իրենց անմիջական հսկողութեամբ. այդպիսիք էին՝ Գռների գիտնական եպիսկոպոս, Հեթում թագաւորի եղբայր Յովհաննէսը (O¹ O²), Սկեւռայի վանքի Գէորգ վարդապետը, որն իր ողջ կեանքում ուսումնասիրել է Աստուածաշունչը (SK¹, SK², SK³), նրա օգնականներն ու աշակերտներն են եղել Մովսէսը (MN), Ստեփանոս Գոյները (St¹, St²), Հեթում գիտնական թագաւորը (H), Յակոբ կաթողիկոսը (Ja). բոլորը բարձր դիրքի եւ լաւ իմացութիւնների տէր մարդիկ էին: Այդպիսի անձինք չէին կարող լուրջ ուշադրութիւն չդարձնել բնագրի ճշգրտութեան վրայ, եւ մենք, ուշադրութեան առնելով նրանց գրական հեղինակութիւնը, կարող ենք վստահութեամբ վերաբերուել նրանց օրինակութիւններին: St¹ ձեռագրի[445] երկու յիշատակարանների (տե՛ս ծնթ. 249-250) միջոցով մենք ծանօթացանք եկեղեցական պաշտամունքի գրքերի ճշգրտութեան վերաբերեալ Գէորգի տեսակէտի հետ. նա կշտամբում էր բոլոր նրանց, ովքեր դիւրահաւատօրէն ձեւափոխում էին հին բնագրերը: Սակայն հէնց նրա կշտամբանքն էլ ապացուցում է, որ նրա հետ միաժամանակ եղել են այլ մտածելակերպի մարդիկ: Լաւագոյն օրինակ կարող է ծառայել Ներսէս Լամբրոնացին, որին դուր չէր գալիս Յայտնութեան հնագոյն թարգմանութիւնը, դրա համար էլ նա այն հիմնովին ձեւափոխեց՝ համեմատելով իր ժամանակի յունական օրինակի հետ: Այս խմբի որոշ ձեռագրեր առաջիններից տարբերւում են նրանով, որ նրանցում Յոբի գիրքը տեղադրուած է Սաղմոսներից առաջ: Այդպիսք են հետեւեալ ձեռագրերը. K (1317 թ.), WM¹ (1368 թ.), Ch (1384 թ.):*

Չորրորդ խումբ կազմում են այն ձեռագրերը, որոնց մէջ կանոնական գրքերի կողքին հանդիպում են հետեւեալ անկանոնները. ԺԲ. նահապետների կտակները, Յովսէփի եւ Ասանէթի պատմութիւնը եւ Եզրի երրորդ գիրքը: Այսպիսի ձեռագրերի թիւը շատ մեծ է, սակայն նրանք բոլորը միանման չեն: Կան ձեռագրեր, որոնցում նահապետների կտակները յաջորդում են Ծննդոց գրքին, ինչպէս օրինակ՝ Sch (1390 թ.), G (1635 թ.), Dj⁶ (1654 թ.), Dj⁷ (1657 թ.), JM (ԺԷ. դ.). կամ երբ Եզրի երրորդ գիրքը տեղադրուած է երկրորդ գրքից յետոյ, իսկ նահապետների կտակները՝ Մակաբայեցոց գրքերից յետոյ, ինչպէս օրինակ՝ Kon² (1625 թ.), Kon³ (1641 թ.), Kon⁴ (1641 թ.), Dj⁸ (1650 թ.), Tig³ (1683 թ.), E² (1616 թ.), E³

սակայն երկու՝ այն եւ այս ձեռագրերում կանոնը տարբեր է:

445* Ձեռագրի պայմանագիրը վրիպմամբ տպուած է՝ St².

(1700 թ.), Jl (Ժե. դ.), AS (Ժէ. դ.): Իսկ ինչ վերաբերում է Յովսէփի եւ Ասանէթի պատմուԹեանը, ապա կարելի է ասել, որ այն սովորաբար յաջորդում է Նահապետների կտակներին:

Հինգերորդ խումբ կազմում են Ղազար Բաբերդացու ձեռագրերը եւ նրանցից արուած օրինակուԹիւնները: Դրանք ունեն բոլոր անկանոնները, Ղազարի առաջաբանը, Սուրբ Գրքի կանոնի Գրիգոր [Տաթեւացու] ցանկը եւ վերջում՝ Աստուածաշնչի բառերի այբբենական աղիւսակները: Այս խմբի ձեռագրերը բաւական շատ են. LB[1] (1616 թ.), Dj[1] (1648 թ.), DJ[3] (1650 թ.), Dj[4] (1650 թ.), LB[2] (1655 թ.), Dj[8] (1660 թ.), Dj[9] (1663 թ.), Dj[10] (Ժէ. դ.). սրանց մասին համարձակ կարելի է ասել, որ նրանք բոլորը մի ձեռագրից արուած պատճէններ են:

Հին կտակարանում, որպէս գրքերի յաջորդականուԹեան ոչ ճիշտ երեւոյԹ մենք նշեցինք Յոբի գրքի տեղափոխուԹիւնը Սաղմոսներից առաջ, Դանիէլի տեղափոխուԹիւնը Երեմիա մարգարէից առաջ եւ կտակների անկանոնները՝ մէկ Ծննդոց գրքից, մէկ էլ՝ Մակաբայեցւոց գրքերից յետոյ. սակայն կան ձեռագրեր (Sn, Var, JT), որոնցում գրքերը շատ ցրուած են եւ որեւէ սկզբունքի չեն ենԹարկւում, այլ պարզապէս՝ կամ կազմարարը կազմելիս գրքերը ոչ ճիշտ է տեղադրել, կամ էլ գիրքը գրել են երկար, տարբեր տեղերում, տարբեր հիմքերից, ինչպէս պատահել է: Խմբերի բաժանելիս, մենք վերջին կարգի ձեռագրերին ուշադրուԹիւն չենք դարձրել՝ անտեսել ենք: Անհրաժեշտ է նկատել, որ մեր հինգ խմբերը ստացուել են ընդամէնը Հին Կտակարանի գրքերի վերաբերմամբ, բայց Նոր Կտակարանը եւս բաւական տարատեսակներ ունի: Ընդունուած կարգը հետեւեալն է. Զորս Աւետարանները, Գործք, ԵօԹ կաԹողիկեայ ԹուղԹք, ԹուղԹք Պօղոսի եւ ՅայտնուԹիւն, սակայն կան ձեռագրեր, որոնց մէջ չորս Աւետարաններից յետոյ տեղադրուած է ՅայտնուԹիւնը, օրինակ՝ Ez, Su, V[2], WM[1], E[2], E[3], կամ Զորս Աւետարաններին յաջորդում են Պօղոսի ԹղԹերը: Վերջինս կայ միայն մէկ դէպքում՝ Sch, իսկ առաջին դէպքի կրկնուԹիւնը հիմք է տալիս այդ երեւոյԹի մէջ տեսնելու ինչ որ կանոնի նմանակում: Զորս ձեռագիր՝ Kon[2], G, Kon[3], As, ՅայտնուԹիւնը դնում են Պօղոսի ԹղԹերից առաջ: Վերջապէս Jl ձեռագրում ՅայտնուԹիւնը եւ Պօղոսի 15 ԹղԹերը նախորդում են Գործքին:

4. ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ Ո՛Ր ԳՐՔԵՐՆ ԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԵԼ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՐՈՒՄ

Առաջաբանում մենք առիթ ունեցանք ցոյց տալու, որ մեր պատմական աղբիւրները պատասխան չեն տալիս չատ կարեւոր հարցերի եւ, ի միջի այլոց, չեն հաղորդում, թէ Սուրբ Գրոց որ գրքերն են թարգմանուել առաջին թարգմանիչների կողմից: Մասնագէտներն այս հարցը յաճախ են յարուցել եւ ընդհանուր առմամբ միանման լուծում են տուել. քանի որ մերոնք ունեցել են Եօթանասնիցի հիմնօրինակը, նրանք այն թարգմանել են ամբողջութեամբ: Բացի այսպիսի à priori պնդումից, ձգտել են Ե. դարի մատենագիրների ցուցմունքներով եւ Սուրբ Գրոց հայերէն թարգմանութեան վկայակոչումներով արձանագրել թարգմանուած գրքերի թիւն ու անունները:

Նախքան այդ բնոյթի դիտարկումներ ու փաստեր բերելը ցանկանում ենք նշել նաեւ այլ տեղեկութիւններ, որոնք առկայ են ոչ թէ Աստուածաշնչի եւ Աւետարանի պահպանուած ձեռագրերում, այլ այնպիսի եկեղեցական պաշտամունքային գրքերում, որոնք համարեա ամբողջութեամբ հիմնուած են Աստուածաշնչի վրայ, ինչպիսիք են, օրինակ, Շաշոցները եւ Տօնացոյցերը: Մեզ համար այդ գրքերը երկակի նշանակութիւն ունեն. առաջին հերթին, դրանց չնորհիւ մենք իմանում ենք, թէ Սուրբ Գրոց ո՛ր գրքերն են եկեղեցական իմաստով կանոնական եղել, այսինքն՝ ո՛ր գրքերն են ընթերցման թոյլատրուել հայոց եկեղեցում՝ առնուազն սկսած այդպիսի գրքերի պահպանուած ձեռագրերի ժամանակից, եւ երկրորդ՝ ծիսական Շաշոցներում մենք ունենք Աստուածաշնչի գրքերի՝ ընթերցման թոյլատրուած բնագրերի հատուածներ: Այդպիսի ձեռագրերի նշանակութիւնն աւելի է մեծանում նաեւ նրանով, որ այն դէպքում, երբ Հին Կտակարանի բնագրերը ԺԳ. Հարիւրամեակից առաջի որեւէ ձեռագրում չեն հանդիպում[446], արդէն Ժ-ԺԱ. դարերի ծիսական Շաշոցներում մենք ունենք որոշակի գրքերի որոշ հատուածներ:

Մեզ յայտնի հնագոյն ծիսական Տօնացոյցն առկայ է Էջմիածնի [փղոսկրէ] երկփեղկ [կազմով] ձեռագրում՝ 989 թուականի Աւետարանի[447] *վերջում: Այդ տօնացոյցում, որը ձեռագրում ընդամէնը երեք էջ է զբաղեցնում, կան խրատներ Աւետարանի ընթերցումների հետեւեալ տօներին՝ Քրիստոսի Ծննդեան եւ առաջին ութ օրերի, Տեառնընդառաջի, Բարեկեն-*

446 Յ[1] Հ[մր] 1՝ 1199 թ. ձեռագիրը հազիւ թէ բացառութիւն լինի:

447 Ձեռագրերի ցնկարագրութիւն՝ Գ. Հ[մր] 6, ծնթ. 378:

դանի, Ծաղկազարդի չաբաթուայ (Ղազարոսի օր), Ծառազարդարի կիրակիի, չարչարանաց Երկուշաբթիի, Երեքշաբթիի, մինչեւ Թովմայի Յարութեան եւ Համբարձման: Այդ Տօնացոյցը մեզ չատ բան չի սովորեցնում, որովհետեւ նրանում կան միայն Աւետարանից ընթերցումների ցուցումներ:

Երկրորդ Տօնացոյցը առկայ է ԺԱ. դարի Աւետարանի վերջում[448]*, այն առաւել հանգամանալի է, եւ նրա ցուցումները տարածւում են Սուրբ Գրքից վերցուած բոլոր ընթերցումների եւ տուեալ տօնի սաղմոսների բնագրերի վրայ: Այդ Տօնացոյցի վերնագիրն այսպէս է. «Աստուածայայտնութեան ժամերգութիւն ըստ սրբոյ Լուսաւորչի աթոռոյն հրահանգից եւ կարգաց, զոր ընկալեալ սրբոյն Սահակայ եւ հասուցին մինչեւ առ մեզ նախնիքն մեր»:*

Տօնացոյցը կամ «Պաշտամունք»ը սկսւում է Ծննդեան տօնից (յունուարի 5ից) եւ տարածւում է յաջորդ ութ օրերի, Տեառընդառաջի, Բարեկենդանի, մեծ պահքի բոլոր կիրակիների, Ձարչարանաց չաբաթուայ բոլոր օրերի, մինչեւ Տիրոջ Այլակերպութեան վրայ: Ինչ վերաբերում է Աւետարանի մասերի ընթերցմանը, ապա դրանք ամբողջովին համաձայնեցւում են վերը նշուած տօնացոյցի հրահանգների հետ, այն տարբերութեամբ, որ Աւետարանի ընթերցումների հետ մէկտեղ նշւում են այն բոլոր սաղմոսները, որոնք նախատեսուած են տօն օրերին ընթերցման եւ երգելու համար, ինչպէս նաեւ Հին Կտակարանից եւ Պօղոսի թղթերից ընթերցման համար: Ըստ այդ հրահանգների տեսնում ենք, որ մինչեւ բարեկենդանը՝ գլխաւոր տօների օրերին ընթերցւում էին բացառապէս Աւետարանից, իսկ Մեծ պահքի կիրակի օրերին՝ կէսօրեայ ժամերգութիւններին ընթերցւում էին նաեւ հատուածներ Եսայի մարգարէից եւ Պօղոսի հետեւեալ թղթերից. առ Հռոմէացիս, Կորնթացիս, Եփեսացիս, Փիլիպեցիս եւ Կողոսացիս:

Ընթերցումների այսպիսի սահմանափակումը մեր մէջ կասկած է առաջացնում. կարո՞ղ ենք արդեօք մենք այս երկու տօնացոյցները համարել եկեղեցական պաշտօնական ծիսակատարութեան ընթերցումների ընդունուած կանոն, թէ՞ պարտաւոր ենք նրանց վրայ նայել որպէս իրենց իսկ՝ ընդօրինակողների սեփական գրական գործերի: Թէեւ գրութեան ժամանակով երկու տօնացոյցերն էլ իրարից բաւական հեռու են, սակայն բովանդակութեամբ լիովին համապատասխան են այն մասերում, որտեղ հրահանգները վերաբերում են Աւետարանին: Միայն սա պէտք է

[448] Ձեռագրերի նկարագրութիւն Գ. Հմր 23, ծնթ. 396: * Նկատի ունի Մ 283 ձեռ-ը, որ, սակայն, Տօնացոյց չունի: Գուցէ պէտք է գրէր տուեալները Մ 311 ձեռ-ի (1066 թ., Սեբաստիա), որի 280բ-2ա էջերում կայ՝ «Աւետարանք յայտնութեան ութ աւուրցն առաւաւտին (Աւետարանացոյց) - Առաջին աւուրն, զկնի Տէր յերկնի... Այս են առաւաւտի, զայնն՝ յ[Ը]նթերցուածն տե՛ս»:

ապացուցի, որ նրանք բխում են ընդհանուր աղբիւրից, այսինքն՝ պաշտօնապէս սահմանուած տօնացոյցից: Այսպիսի եզրակացութիւնը չի կարելի համարձակ համարել, եւ զարմանալի բան չկայ, որ հնում հայոց եկեղեցում տօնական օրերին Հին Կտակարանից ընթերցւում էին միայն չնչին հատուածներ Եսայի մարգարէից եւ որոշ սաղմոսներ: Սակայն, բացի դրանից, այսպիսի եզրակացութիւնը հաստատւում է եկեղեցական ճաշոցների հնագոյն օրինակներով, որոնց պաշտօնական բնոյթին չի կարելի կասկածել: Դրանցում իսկապէս կան հատուածներ Աստուածաշնչի նաեւ այլ գրքերից, սակայն ոչ բոլոր «կանոնականներից»:

Այդպիսի հին՝ երկաթագրով մագաղաթի վրայ գրուած ժամագրքեր Էջմիածնի մատենադարանում գտել ենք երկու օրինակ՝ Ձ՟ր 898 [985] եւ Ձ՟ր 905[449] [832], Ժ-ԺԱ. հարիւրամեակներին պատկանող ձեռագրեր: Դրանցից առաջինը՝ Ձ՟ր 898ը [985] գրուած է Երուսաղէմի եկեղեցիներում օգտագործելու համար: Հոգեւոր ծառայողներին ուղղուած բոլոր խրատները վերաբերում են սուրբ վայրերին՝ Փրկչի տաճարին, Բեթղեհեմին, Համբարձման լեռանը եւ այլն, իսկ երկրորդը գրուած է բուն Հայաստանում եւ ինքնատիպ ազգային երանգ ունի: Նրա մէջ բոլոր տօնական օրերը բաժանւում են երկու կարգի՝ բացառապէս հայոց եկեղեցու, հայոց սրբերի տօների եւ ընդհանուր քրիստոնէական տօների: Տօնուող օրերի իւրաքանչիւր կարգում պահպանւում է ժամանակագրական կարգ, այն տարբերութեամբ, որ հայոց տօների օրերը նշւում են ամիսների հայկական անուններով՝ Նաւասարդ, Հոռի, Սահմի եւ այլն, իսկ համաքրիստոնէական տօների օրերը՝ ամիսների հռոմէական անուններով՝ յունուար, փետրուար եւ այլն[450]:

Համեմատելով այդ Ճաշոցների ընթերցումները եւ տօնացոյցների հրահանգները, նկատում ենք դրանց կատարեալ նմանութիւնը, բայց ո՛չ նոյնութիւնը: Այդ նմանութիւնը արտայայտւում է հետեւեալում. 989 թուականի Աւետարանի հնագոյն Տօնացոյցը բովանդակում է Աւետարանից յայտնի քանակի ընթերցումների մատնանշումներ: Այդ ընթերցումները գտնւում են ինչպէս ԺԱ. դարի Տօնացոյցում, այնպէս էլ Ժ-ԺԱ. դարերի Ճաշոցներում, միայն նոր ընթերցումների աննշան յաւելումներով՝ ժամանակի առումով ամէն յաջորդ օրինակում: Նման կացութիւն դիտւում է նաեւ Հին Կտակարանի գրքերից ընթերցումներում՝ երկու

[449] Այս երկու համարները Դանիէլի ցուցակում չկան: * Առաջին համարը սխալ է տպուել՝ 878, ուղղեցինք ըստ յաջորդ յիշատակման. Էջմիածնի հին 898ը ներկայիս Մ 985ն է, 905ը՝ Մ 832ը:

[450] Որքան մեզ յայտնի է, սա Ճաշոցի՝ այդպիսի հերօրինակ բաժանումով միակ օրինակն է:

Ճաշոցներում եւ երկրորդ Տօնացոյցում: Նշանակում է ամենահին ժամանակներում եկեղեցում Սուրբ Գրքից ընթերցումները եղել են շատ սակաւ քանակի եւ սահմանափակուած ըստ հատուածների քանակի ու ծաւալի, այնուհետեւ գնալով գերիշխել է նրանց ծաւալն ընդարձակելու միտումը:

Այդ ծիսական գրքերի համար սկզբանապէս օրինակ են ծառայել նրանց յունարէն կամ ասորերէն հիմնօրինակները, սակայն տօների բաժանումը ազգայինի եւ համաքրիստոնէականի ցոյց է տալիս, որ հայերն օգտուել են օտար համակարգից եւ այն կիրառել են սեփական նպատակների համեմատ: Այնքան փոքր են ամէնօրեայ ընթերցումների ծաւալները, որ արժէ ենթադրել, թէ պաշտամունքի ժամանակ ծէսը լրացնելու համար այդ ընթերցումներն ուղեկցուել են մանրամասն բացատրութիւններով: Տօնական ընթերցումների սահմանափակումն իր պատճառն է ունեցել մասամբ նրանով, որ տօնական օրերի քանակի սահմանափակում է եղել: Եւ բացի դրանից, ինչպէս բացատրում է Th. Zahn-ը, «Schon in den Bedürfnissen des christlichen Gottesdienstes ist es begründet, dass nicht alle die Schriften, welche zum A oder NT gerechnet wurden, in gleichem Masse und gleich häufig zur Vorlesung herangezogen und der Predigt zu Grunde gelegt wurden[451]*»: Հայոց եկեղեցին ընդհանուր կարգից բացառութիւն չի եղել: Եթէ ուշ ժամանակների ճաշոցները համեմատենք մեր յիշատակածների նման ծիսագրքերի հետ, ապա կարող ենք ասել, որ ընթերցումների թուերը յարաբերւում են համարեա ինչպէս մէկը տասին: Յիշատակուած տօնացոյցները սահմանափակւում են միայն տօնական օրերով, իսկ երկու ճաշոցներն ընդգրկում են ամբողջ տարին, այլ նաեւ սովորական օրերը: Նրանցով մենք կարող ենք պատկերացում կազմել Ժ. եւ ԺԱ. դարերի եկեղեցական պաշտամունքի, ինչպէս նաեւ Սուրբ Գրքի եկեղեցական կանոնի մասին:*

Նրանցում ընթերցման համար հատուածները վերցուած են Աստուածաշնչի հետեւեալ գրքերից. Հմր 905 [Մ 832]՝ Ծննդոց, երկրորդումն օրինաց, Յեսու, Թագաւորութեանց Ա., Բ., Դ., Սաղմոսք, Առակաց, Ժողովողի, Զորս գլխաւոր մարգարէների, Զաքարիա եւ Մաղաքիա, Զորս Աւետարաններ, Գործք, Թուղթք առ Հռովմայեցիս, Ա., Բ. Կորնթացիս, Եփեսացիս, Տիտոս եւ Տիմոթէոս, Պետրոսի Ա., Բ., Յովհաննու Ա., Բ. եւ Յակովբի: Հմր 898-ում [Մ 985] բացի նշուած գրքերից հանդիպում են

---

451 **Theodor Zahn,** Geschichte des Neutestamentlichen Kanons, Erster Band: Das Neue Testament vor Origenes. Zweite Hälfte, Erlangen und Leipzig, 1889, էջ 142 (այսուհետեւ՝ *Zahn*, Geschichte des NT Kanons, I). * Թարգմ.՝ «Արդէն հաստատուած է, որ քրիստոնէական պաշտամունքի կարիքների համար Հին կամ Նոր Կտակարանի մաս համարուող ոչ բոլոր գրքերն էին հաւասար չափով եւ հաւասարապէս օգտագործւում ընթերցման համար, եւ որ քարոզը հիմնուած էր նրանց վրայ»:

ընթերցումներ նաեւ Յոբից, Յովնանի մարգարէութիւնից եւ Թուղթք առ Կորնթացիս եւ Թեսաղոնիկեցիս[452]*:

Կասկածի ենթակայ չէ, որ Ե. դարում հայերէն թարգմանութիւնն այդ գրքերով չի սահմանափակուել: Եկեղեցապաշտամունքային ճաշոցները չեն վերարտադրում նոյնիսկ հայոց եկեղեցում էլ. դարում սահմանուած կանոնը: Սուրբ Սահակի եւ Մեսրոպի աշխատանքները չէին կարող սահմանափակուել այդպիսի նեղ շրջանակով, թէեւ նրանց առջեւ կանգնած էր առաջին հերթին եկեղեցու սպասաւորների ձեռքը նրանց համար հասկանալի բնագիր տալու անհրաժեշտ կարիքը: Նրանք գերազանց գիտէին, որ ամբողջ Սուրբ Գրոց թարգմանութեամբ ցանկալի նպատակի հասնելն աւելի լաւ է: Այսպիսով, տօնացոյցների եւ ճաշոցների հին օրինակների հետ մեր ծանօթութիւնը ցոյց է տալիս, որ թարգմանուած գրքերի թիւը որոշելու համար մենք նրանցով չենք կարող առաջնորդուել: Այնպէս որ առայժմ ամենաճիշտ միջոցը հայերէնով գրող հեղինակների յղումներն են: Թարգմանական երկերը եւս կարող են շատ յենման կէտեր տալ՝ ընդունելով ի գիտութիւն, որ թարգմանիչները կարող էին յղումների ժամանակ օգտուել հայերէն բնագրից. ինչպէս հաւաստի կերպով ապացուցւում է, օրինակ, Եւսեբիոսի Եկեղեցական պատմութեան մէջ առկայ՝ Յայտնութիւնից վերցուած քաղուածներով: Մի խօսքով, դժուար է դրանց վրայ հիմնուելը, առաւել եւս՝ որ այդպիսի դէպքերում հետագայի արտագրողների թարգմանած գրքերի քաղուածների սրբագրումը հնարաւոր է:

Բաւական ճշգրիտ եւ լաւ արդիւնքների է հասել գերմանացի գիտնական Վեբերը, որն առաջին անգամ հաւաքել է այդպիսի յղումները: Նրա բանիմաց յօդուածն ունի հետեւեալ վերնագիրը. «Սուրբ Գրոց նշանակութիւնը հին հայոց մէջ»[453]*: Նա հաւաքել է Սուրբ Գրոց բոլոր այն յղումները, որ ունեն Եզնիկը, Եղիշէն, Ղազար Փարպեցին, Մովսէս Խորե-*

---

[452]* Ժ. դարի Մաշտոցն ընթերցուածներ ունի հետեւեալ գրքերից. Հնգամատեան, Յեսու Նաւեայ, Թագաւորութեանց Բ-Դ., Առակք, Իմաստութիւն, Եսայի, Երեմիա, Ողբք, Աղօթք Երեմիայ, Թուղթ Բարուքայ, Եզեկիէլ, Դանիէլ, Յովէլ, Անգէ, Զաքարիա, Մաղաքիա, Դ. Աւետարանք, Գործք, Թուղթ Պետրոսի Ա-Բ., Թուղթ Յովհաննու Ա., Թուղթք Պօղոսի Առ Հռովմայեցիս, Առ Կորնթացիս Ա-Բ., Առ Գաղատացիս, Առ Եփեսացիս, Առ Կողոսացիս, Առ Թեսաղոնիկեցիս Ա., Առ Եբրայեցի, Առ Տիմոթէոս Բ., Հանգիստ Յովհաննու. ընդհանուր հաշուով՝ Հին Կտակարանի՝ 22, Նոր Կտակարանի՝ 18 գրքերից. մանրամասները տե՛ս Մայր Մաշտոց. Հատոր Ա., գիրք Ա., Ժ. դար, Ըստ հնագոյն երկաթագիր ձեռագրերի եւ համեմատութեամբ Աստուածաշունչ մատեանի, բնագրական եւ կանոնացանկային յաւելուածովք, Աշխատ.՝ Գէորգ Տէր-Վարդանեանի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատ., Սբ. Էջմիածին, 2012, էջ 774-787:

[453] Zur Geltung der heiligen Schrift bei den alten Armeniern, վերը՝ էջ 70:

նացին եւ Յովհաննէս Մանդակունին: Նրա նիւթերին մենք աւելացնում ենք Կորիւնի եւ Աբրահամ Խոստովանողի ունեցած յղումները[454]*:*

Կորիւնն անձնապէս մօտ կանգնած լինելով առաջին թարգմանիչների գործունէութեանը, ինքն էլ մասնակցութիւն է ունեցել նրան, ուստի նրա ամէն հաղորդում յատուկ նշանակութիւն ունի. իր ուսուցչի կենսագրութեան նրա առաջաբանը Հին եւ Նոր Կտակարանների բովանդակութեան բաւական յաջող վերաշարադրանք է:

Աբրահամն առ այսօր քիչ յայտնի մատենագիր է[455]*. ըստ Էջմիածնի միաբանութեան անդամ Գալուստ Տէր-Մկրտչեանի վերջին հետազոտութիւնների՝ նա Ե. դարի գրականութեան երեւելի ներկայացուցիչներից մէկն է: Նա Պարսկաստանում իր ապրած տարիներին պարսկերէնից թարգմանել եւ ինքն էլ գրել է սրբերի վարքեր, սակայն նրա աշխատութիւնն ամբողջական տեսքով չի պահպանուել: Նրա աշխատութիւնների հատուածներ նախկինում ըստ մասերի հրատարակուել են, այժմ էլ նոր հատուածներով հրատարակւում են Էջմիածնում եւ մօտ ժամանակներս լոյս կտեսնեն*[456]*:*

Ըստ քաղումների արձանագրւում է նշուած գրողների ծանօթութիւնը հետեւեալ գրքերին[457]*.*

[458]* *Հին Կտակարանի՝*

Ծննդոց գրքին՝ Կորիւն, էջ 8, 9, 10. Եզնիկ, Ա. 20, էջ 79. Ղազար Փար-

[454] Փաւստոս Բիւզանդի եւ յատկապէս Ագաթանգեղոսի պատմութիւնները հարուստ են քաղումներով, սակայն քանի որ դեռեւս վերջնականապէս որոշուած չէ, թէ որ լեզուով են նրանք գրուած եղել՝ հայերէ՞ն, թէ՞ յունարէն, այդ պատճառով նրանց քաղումներից օգտուել չցանկացանք:

[455] **Զարբհ.**, Պատմ. հայ դպր., 1897, էջ 295 եւ 296:

[456] Օգտուել ենք Գալուստ Տէր-Մկրտչեանի տպագիր՝ սրբագրութեամբ թերթերից:

[457] Յղումներում օգտուել ենք հետեւեալ հրատարակութիւններից. Կորիւն, Վենետիկ, 1894, Աբրահամ, Էջմիածին, 1902 թ., Եղիշէ, նրա ստեղծագործութիւնների լրիւ ժողովածուն, Վենետիկ, 1859, Եզնիկ, Վենետիկ, 1895, Ղ. Փարպեցի, Վենետիկ, 1891, Յովհան Մանդակունի, Վենետիկ, 1860: Ամէն անգամ նշում ենք միայն Սուրբ Գրքի քաղուածք օգտագործող հեղինակի գրքի էջը: * Թուարկուած գրքերի ճշգրիտ յղումները՝ 1. Պատմութիւն վարուց եւ մահուան սրբոյն Մեսրոպայ վարդապետի մերոյ թարգմանչի, Վենետիկ, Ս. Ղազար, 1894, 50 էջ: 2. Աբրահամ (տե՛ս նախորդ ծ.): 3. Սրբոյ հօրն մերոյ **Եղիշէի վարդապետի** մատենագրութիւնք ըստ ընտրելագոյն ընթերցուածոց գրչագրաց, Վենետիկ, Ս. Ղազար, 1859, ՌՄՅԸ., 384 էջ: 4. (Եզնիկի 1895 թ. տպագիր չկայ, ուրեմն օգագործել է)՝ **Եզնըկայ Կողբացւոյ** Բագրեւանդայ եպիսկոպոսի Եղծ աղանդոց, Վենետիկ, Ս. Ղազար, 1871, 334 էջ: 5. **Ղազարայ Փարպեցւոյ** Պատմութիւն Հայոց եւ թուղթ առ Վահան Մամիկոնեան, 3րդ տպագր., Վենետիկ, Ս. Ղազար, 1891, ՌՅԽ., ԺԷ., 719 էջ: 6. Տեառն **Յովհաննու Մանդակունւոյ** Հայոց Հայրապետի ճառք, 2րդ տպագր., Վենետիկ, Ս. Ղազար, 1860, ՌՅԹ., 220 էջ:

[458*] Այս թուարկումը միայար էր, էջահամարները՝ փակագծերի մէջ, ընդհանուր պատկերը՝ խճողուն. Աստուածաշնչի ամէն գրքի վերաբերող մասը դրեցինք նոր պարբերութիւնից, փակագծերը հանեցինք. այսպիսով՝ պատկերը բաւական յստակուեց:

պեցի, էջ 644-651. Աբրահամ, էջ 15, 61, 65, 79 եւ Եղիշէ, էջ 25.

Ելից գրքին՝ Կորիւն, էջ 10, Աբրահամ, էջ 32, 49 եւ Եղիշէ, էջ 27.

Ղեւտական գրքին՝ Աբրահամ, էջ 61, 51.

Թուոց՝ Եղիշէ, 192. Աբրահամ, 61, 96.

Երկրորդումն օրինացին՝ Եղիշէ, 83. Աբրահամ, 32, 42.

Յեսուին՝ Եզնիկ, Ա. 23, էջ 94. Աբրահամ, 49 (Եղիշէն գրել է՝ այս, Ծննդոց եւ Դատաւորաց գրքերի մեկնութիւնները).

Հոութին՝ Եղիշէ, էջ 173.

Թագաւորութեանց Ա.՝ Եզնիկ, Բ. 16, էջ 170 եւ Փարպեցի, 210.

Թագաւորութեանց Բ.՝ Եզնիկ, էջ 35. Փարպեցի, 623 եւ Աբրահամ, 60.

Թագաւորութեանց Գ.՝ Եղիշէ, մեկնութիւն Յեսուի, էջ 174.

Թագաւորութեանց Դ.՝ Աբրահամ, 43.

Եզրի Ա.՝ Եզնիկ, Բ. 16, էջ 165.

Մնացորդաց Բ.՝ Եզնիկ, Բ. 16, էջ 165. Եղիշէ, 262[459]*.*

Տովբիթից՝ Յովհան Մանդակունին մէջբերում է «Թուղթ յաղագս ողորմութեան տնանկաց» ճառում երկու տուն՝ Դ. 1 եւ Է. 11.

Մակաբայեցւոց Ա. եւ Բ.՝ Աբրահամ, 92, 96, 98, 99, 103. Եզնիկ, Բ. 24 էջ 160. իսկ Եղիշէն անուններով նշում է նրանց, 81.

Սաղմոսք՝ յիշատակում եւ մէջբերում են բոլոր հեղինակները.

Առակք՝ Կորիւն, 19. Աբրահամ, 155 եւ Խորենացի, Գ. ծգ.

Ժողովող՝ Եզնիկ, Բ. 26, էջ 189.

Երգ երգոց՝ Փարպեցի, էջ 625.

Իմաստութիւն՝ Աբրահամ, 235. Եզնիկ, Ա. 19 էջ 75.

Սիրաք՝ Եզնիկ, Բ. 13 էջ 153.

Յոբ՝ Կորիւն, 10. Աբրահամ, 26. Եզնիկ, 77.

Եսայի՝ Աբրահամ, 10, 12, 24, 38..., Եզնիկ, Բ. 22 էջ 193, Ի 21, էջ 82.

Երեմիա՝ Կորիւն, 18. Եզնիկ, Բ. 16 էջ 170.

Եզեկիէլ՝ Կորիւն, 18. Եզնիկ, Ա. 23, էջ 95.

Դանիէլ՝ Կորիւն, 9. Եզնիկ, Ա. 22, էջ 95:

Ո՛չ բոլոր կրտսեր մարգարէներից կան յղումներ, այլ միայն՝

Ամովսից՝ Եզնիկ, Բ. 26 էջ 196.

Յովնանից՝ Եզնիկ, Բ. 13, էջ 154, Բ. 16, էջ 170.

Միքիէից՝ Եզնիկ, Ա. 13, էջ 93.

Ամբակումից՝ Փարպեցի, էջ 662.

Անգէից՝ Եղիշէ, էջ 962.

Զաքարիայից՝ Եզնիկ, Բ. 16 էջ 194 եւ Բ. 12, էջ 151. եւ՝

[459] Հինգերորդ դարին է վերաբերում այս գրքի Եփրեմ Ասորու մեկնութեան թարգմանութիւնը, որից հատուած է պահպանուել. **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 947:

Մաղաքիայից՝ Եզնիկ, Գ. 18, էջ 230, Բ. 18, էջ 165:

Հաստատուած է, որ Նոր Կտակարանի գրքերից քաղումները բազմաթիւ են, բացի դրանից՝ Կորիւնը անուններով նշում է բոլորը, նա դրանք յիշում է հետեւեալ կարգով. Աւետարան, Գործք առաքելոց, Թուղթք առաքելոց եւ 14 Թուղթք Պօղոսի. նա չի ճանաչել 15րդ՝ անկանոն Թուղթը, ինչպէս նաեւ Յովհաննու Յայտնութիւնը: Կասկածելի կարող է թուալ առաքելական Թղթերի թիւը, քանի որ նա յիշատակում է միայն ընդհանուր անունը: Վերերն արձանագրել է քաղումներ հինգ Թղթից.

Յակոբի՝ Եզնիկ, Բ. 12, էջ 138 եւ Ղազար Փարպեցի, էջ 661.

Պետրոսի Ա.՝ Մանդակունի, 85, 138.

Պետրոսի Բ.՝ Եզնիկ, Բ. 23 էջ 184.

Յուդայի՝ Եզնիկի, Բ. 23 էջ 184 եւ՝

Յովհաննու Ա.՝ Ղազար Փարպեցի, 655:

Չեն վկայակոչուել Յովհաննու երկու՝ Բ. եւ Գ. Թղթերը. միայն Յովհաննու Բ. Թուղթն առկայ է Հ[մր] 905 [Մ 832] ճաշոց ձեռագրում:

Օ[2] ձեռագրի կանոնի տարբերութիւնը Ե. դարի հեղինակների՝ նշուած յղումներով յայտնի գրքերի համեմատութեամբ հետեւեալն է. հեղինակները չեն յղել Եզրի Բ., Եսթերի, Յուդիթի, Մնացորդաց Ա. եւ Հին Կտակարանի հինգ կրտսեր մարգարէների գրքերը եւ Նոր Կտակարանի երեք Թուղթ ու Յայտնութիւնը: Հազիւ թէ կարիք կայ ապացուցելու, որ Մնացորդաց Ա. եւ հինգ կրտսեր մարգարէների գրքերը գոյութիւն են ունեցել Թարգմանութեան մէջ. կասկածանքը կարող է վերաբերուել միայն ուրիշ գրքերի: Դատելով ըստ Բարսեղ գրչի նշումի (տե՛ս ծնթ. 187)՝ Եզրի Բ. գիրքը մինչեւ ԺԳ. Հարիւրամեակ կանոնի մէջ ընդունուած չի եղել, եւ նա առաջին անգամ այն իր ձեռագրի մէջ արտագրել է Յովհաննէս եպիսկոպոսի պահանջով: Միաժամանակ Բարսեղը պնդում է, որ այս գիրքն ինքնին գտնուել է մի այլ ձեռագրում, հետեւաբար այն վաղուց է Թարգմանուած եղել: Բարսեղի նշումը առաւել եւս տարօրինակ է թւում, որովհետեւ Պարտաւի եկեղեցական ժողովի որոշումն այն դասել է կանոնի չարքին, այլեւ նրա՝ որպէս կանոնական գրքի մասին խօսում է Ը. կամ Թ. դարի մատենագիր Գրիգոր վարդապետը[460*]*:*

[460*] «Գիրք պատճառաց»ի ճեղինակ Գրիգոր վարդապետ Աբասեանը ԺԳ. դարի գործիչ էր՝ մահացել է 1220/21 թթ.: Յ. Անասեանը գրել է. «Սանահինի վանքի առաջնորդն էր 1214 թուականից սկսած, ըստ երեւոյթին մինչեւ 20ական թուականների սկզբները, եւ հաւանաբար այս շրջանում է, որ նա աւարտել է «Գիրք պատճառաց»ի վերջնական ձեւաւորումը... «Գիրք պատճառացը» հաւաքական աշխատանքի պտուղ է: Եթէ նրա վերջնական խմբագրումը կամ կազմումը տեղի է ունեցել Գրիգոր Աբասեանի ձեռքով ԺԳ. դարի 10ական թուականներին, պէտք է ասել, որ նիւթերի մեծ մասի նախապատրաստումը, ժամանակի յայտնի դէմքերի գործակցութեամբ, կատարուել էր նախորդ ժամանակաշրջանում, սկսած դեռեւս ԺԲ. դարի երկրորդ

Հաւանաբար Բարսեղը ժողովի որոշմանը ծանօթ չի եղել, եւ անտեղի է տեղեկութիւն փնտրել նրա ընդունուած կամ չընդունուած լինելու մասին: Մենք գիտենք, որ այս հարցը վաղուց լուծուած է եղել, եւ դրան համապատասխան գիրքը վաղուց՝ Է. դարից առաջ թարգմանուած է եղել: Եւ մենք պարզ պատահականութեամբ ենք բացատրում, որ հին հեղինակները նրանից քաղումներ չունեն:

Առաւել դժուար է մեկնների՝ հին կտակարանի չքաղուած գրքերի հարցը: Եզնիկը մի քաղում ունի. «Եւ երկիր իբրեւ զմոմ հալեցի» (Բ. 10, էջ 272), որ յիշեցնում է Յուդիթի ԺԶ. 18 տունը՝ «եւ վէմք ... իբրեւ զմոմ հալեցան», սակայն այն յիշեցնում է նաեւ Ղ.Զ. Սաղմոսի 5րդ տունը՝ «լերինք որպէս մոմ հալեցին»: Այսպիսով, միակ արձանագրուած վկայութիւնը որոշակի ոչինչ չի տալիս: Մեզ թւում է, կարելի է համաձայնել Վեբերի, Նորայրի եւ ուրիշների կարծիքներին, որոնք ենթադրում են, թէ քանի որ հայերը թարգմանել են Սիրաքի գիրքը, Սողոմոնի իմաստութիւնը եւ Մակաբայեցւոց գրքերը, նրանք պարտաւոր էին թարգմանել նաեւ Եսթերի, Նէեմի եւ Յուդիթի գրքերը: Դրան մենք կարողացանք աւելացնել նաեւ մի այլ ապացոյց. այդ գրքերի թարգմանութեան լեզուի եւ ոճի ընդհանրութիւնը այլ գրքերի լեզուների հետ: Այսուհանդերձ, հարցի վերջնական լուծման համար, եթէ ժամանակի ընթացքում չգտնուեն քաղումներ կամ նշումներ, պէտք կլինի իմանալ, թէ Ե. դարում հայերն ի՞նչ կանոն են ընդունել, այդ կանոնի մէջ արդեօք մտե՞լ են վիճելի գրքերը, թէ՞ ոչ:

Անվիճելի ենք համարում Յովհաննու Բ. եւ Գ. Թղթերի թարգմանութեան հարցը: Ցահնի կարծիքով՝ Ասորեստանում եկեղեցին դեռեւս երրորդ հարիւրամեակում ճանաչել է առաքեալների միայն երեք թուղթ՝ Յակոբի, Պետրոսի եւ Յովհաննու Ա.[461], նոյնիսկ եթէ հայերն իրենց Աստուածաշունչը թարգմանել են հին ասորերէն հիմնօրինակից, անթոյլատրելի է, որ նրանք սահմանափակուէին երեք Թղթերի թարգմանութեամբ: Սակայն մենք ունենք վկայութիւններ Յովհաննու Բ. եւ Յուդայի Թղթերից, ինչն ապացուցում է մեր ենթադրութեան հիմնաւորութիւնը:

Կորնթացիներին ուղղուած երրորդ անկանոն թուղթը Vetter-ի ապացուցմամբ հայերէն է թարգմանուել ասորերէնից, եւ ո՛չ մի դէպքում՝ Ե. դարից ուշ: Այն Դ. դարում կանոնական է ճանաչուել միայն ասորական եւ հայկական եկեղեցիներում, սակայն երբ ասորիները Ե. դարում ընդու-

---

կէսից, յատկապէս նրա վերջին երեք տասնամեակներում...». մնացեալ մանրամասները տե՛ս **Յ. Ս. Անասեան**, Հայկական մատենագիտութիւն, Ե-ԺԸ. դդ., հտ. Ա., Երեւան, 1959, էջ ԺԳ-ԺԸ., հմմտ. նաեւ **Պ. Խաչատրեան,** Գրիգոր որդի Աբասայ.- Քրիստոնեայ Հայաստան. հանրագիտարան, Երեւան, 2002, էջ 245-6:

461 **Zahn**, Geschichte des Neutestamentlichen Kanons, II, *2*, էջ 375:

նեցին յունական կանոնը, այն հանեցին իրենց ձեռագրերից, իսկ հայերը, չնայած որ դադարեցին այն կանոնական համարել, այդուհանդերձ այն պահպանեցին Սուրբ Գրքի բնագրում: Պահպանուել է այդ թղթի Եփրեմ Ասորու մեկնութիւնը՝ կրկին հայերէն թարգմանութեամբ: Թղթի հնագոյն յղումը գտնում ենք Ագաթանգեղոսի պատմութեան մէջ՝ երկրորդ մասում, Գրիգոր Լուսաւորչի ճառի մէջ[462]*: Թեոդորոս Քռթենաւորը ծանօթ էր Լուսաւորչի այդ վկայութեանը: Լուսաւորչի եւ Եփրեմ Ասորու հեղինակութիւնը դարձել է մեր թղթի պահպանման պատճառ, որն առանց դրա վաղուց հանուած կլինէր՝ ինչպէս հանուել է ասորական, նոյնպէս եւ յունական ձեռագրերից:*

Վարդան պատմիչը (էջ 55) հաղորդում է, որ Յովհան Մանդակունի կաթողիկոսը թարգմանել է առ Կորնթացիս թուղթը: Դժբախտաբար պատմութեան բնագիրն այդ տեղում վնասուած է: Զարբհանալեանն իր Պատմ. Հայ Գրակ.-ում (էջ 330) գրում է. «սա թարգմանեաց զերրորդ Կորնթացի թուղթն, զՅոհաննու». եւ, ի դէպ, բուն պատմութեան մէջ, Զարբհանալեանի քաղուածից տարբեր, գրուած է. «սա թարգմանեաց զերկրորդ Կորնթացւոց թուղթն, զՅոհաննն»: Զարբհանալեանի քաղուածքը պէտք է հասկանալ այնպէս, որ Մանդակունին թարգմանել է առ Կորնթացիս թղթի ոմն Յովհաննու (մեկնութիւնը՞), իսկ ըստ Վարդանի պատմութեան հաղորդման ստացւում է, որ Մանդակունին թարգմանել է Առ Կորնթացիս երկրորդ թուղթը, եւ Յովհանի ի՞նչը՝ անյայտ է: Կորիւնը Պօղոսի 14 թղթի թարգմանութեան մասին իր հաղորդումով բացառւում է մտածելու հնարաւորութիւնը, թէ առաջին թարգմանիչներն առ Կորնթացիս երկրորդ թուղթը չեն թարգմանել. մնում է մտածել երրորդ թղթի թարգմանութեան մասին: Մանդակունին պատկանում էր թարգմանիչների երկրորդ կամ կրտսեր աշակերտների թուին. նրա ժամանակ հայերը վերջնականապէս ճանաչել էին Սուրբ Գրոց յունարէն ձեռագրերի հեղինակութիւնը, եւ ըստ նրանց սրբագրուել էր ամբողջ թարգմանութիւնը: Ոչ միայն յունական, այլեւ ասորական եկեղեցին վաղուց ամբողջ կանոնից բացառել էր առ Կորնթացիս երրորդ թուղթը, ուստի դժուար է հաւատալը, թէ Մանդակունին է այն թարգմանել: Ինչպէս յայտնի է, Յովհան Ոսկեբերանն ունի Պօղոսի թղթերի Մեկնութիւն, եւ Վարդանի հաղորդումը կարելի կլինէր վերագրել Ոսկեբերանի այդ գործի թարգմանութեանը, սակայն այդ դէպքում եւս կասկածելի է, թէ ի՞նչ հիման վրայ Վարդանը կյիշատակէր միայն առ Կորնթացիս երկրորդ թղթի մեկնութիւնը: Ուստի Վարդանի հաղորդումն ինքն իրեն չի բացատրում, եւ պէտք է ասել, որ առ Կորնթացիս երրորդ թուղթը

[462] **Ագաթանգեղայ** Պատմութիւն (Ընտիր մատենագիրք), Թիֆլիս, տպ. Յովհաննէս Մարտիրոսեանցի, 1882, էջ 18 (Բ., 524 էջ):

թարգմանուել է Ե. դարում, բայց ո՞վ է թարգմանել՝ անյայտ է:

Ե՞րբ է թարգմանուել Յայտնութիւնը եւ ե՞րբ է ճանաչուել կանոնական: Ձիչենք յիշատակուած Բարսեղ գրչի խօսքն այն մասին, թէ հները «զՅայտնութիւնն Յովհաննու ի կարծիք ձգեցին»[463]*, ինչը իր ժամանակ, այսինքն՝ Ժ-Գ. դարում արդէն չէին անում: Մխիթարեան Հ. Սուքրին Յայտնութեան թարգմանիչ է համարել Ներսէս Լամբրոնացուն*[464]*. նոյն կարծիքը կրկնել է Հ. Զարբհանալեանը՝ ընդունելով նոր եւ հին թարգմանութիւնների գոյութիւն: Երբ Հ. Սուքրին այս գրում էր, մէկ այլ Մխիթարեան՝ Հ. Գաթրճեանն*[465] *արձանագրել է Ժ. դարում Յայտնութեան հայերէն բնագրին Գրիգոր Նարեկացու ծանօթ լինելը: Հիւբշմանը*[466] *կարծում էր, թէ այն յայտնի է եղել դեռեւս Ը. դարում, իսկ Հ. Բ. Սարգիսեանը*[467] *այդ գրքի թարգմանութիւնը տարաւ Զ. դարի վերջ կամ Է. դարի սկիզբ: Բոլորովին վերջերս եւրոպական գիտնականներից Կոնիբէյրը*[468] *կարծիք արտայայտեց, թէ գիրքը երկու անգամ է թարգմանուել՝ համաձայնելով կարծիքին Զարբհանալեանի եւ նրանց, որոնք արձանագրում են հնագոյն թարգմանութեան գոյութիւնը:*

Ե. դարի կողմնակից են Վեբերը եւ Ն. Բիւզանդացին, ընդ որում՝ փաստական ապացոյցների համար մենք պարտական ենք Ն. Բիւզանդացուն: Վեբերի փաստարկներն այնքան էլ ծանրակշիռ չեն. դրանք նշանակութիւն են ստանում լուսաբանուելով հիմնաւոր փաստարկներով Նոյարի, որը հարցը լուծում է վերջնականապէս: Վեբերի դատողութիւնները յանգեցնում են հետեւեալին[469]*. նախ՝ չնայած հայերը գիտէին եւ թարգմանեցին Դիոնիսիոս Աղեքսանդրացու ու Յուլիան Ափրիկացու*[470] *ստեղծագործութիւնները, որոնք ժխտում էին Յայտնութեան կանոնականութիւնը, սակայն նրանք ծանօթ էին նաեւ Իրինէոսի (՞), Բարսեղի, Գրիգոր Նիւսացու, Աթանասի, Եփրեմի երկերին, որոնք ընդունում էին Յայտնութիւնը: Երկրորդ՝ եղնիկ Դ., 16, էջ 297 եւ Դ., 23, էջ 253 Մար-*

---

463 Տե՛ս վերը՝ ծնթ. 187:

464 **Հ. Ա. Սուքրեան,** «Աստուածաշունչք. թարգմանութիւն եօթանասնից եւ հայկականն. եւ ամբողջութիւն Նոր Կտակարանի».- Բազմավէպ, 1877, էջ 208 եւ **Զարբհ.,** ՄՀԹՆ, էջ 221:

465 Ecclesiae Ephesinae de obitu Joannis Apostoli narratio, էջ 77:

466 **Հ. Հիւբշման,** Սեմական փոխառեալ բառեր հայերէնի մէջ.- Հանդէս ամսօրեայ, 1893, էջ 17, ծնթ. 2:

467 **Հ. Բ. Սարգիսեան,** Ագաթանգեղոս եւ իւր բազմադարեան գաղտնիքն, էջ 339:

468 **Scrivener**, Intruduction. II, էջ 153:

469 Ս. Գրոց յարգն ու արժէքը հին հայոց քով.- Հանդէս ամսօրեայ, 1897, էջ 134:

470 Առաջինի ստեղծագործութիւնը կայ հայերէնով՝ **Զարբհ.,** ՄՀԹՆ, էջ 379, երկրորդի մասին որեւէ բան յայտնի չէ:

կիոնին յանդիմանում է այն բանի համար, որ նա ժխտել է Նոր Կտակարանի որոշ գրքեր, որոնց մէջ եղել է նաեւ Յայտնութիւնը, հետեւաբար պէտք է ենթադրել, որ հայոց մօտ այն եղել է: Չի կարելի ասել, որ այդ փաստարկումն առանձնապէս ուժեղ է եղել, սակայն փոխարէնն ուշադրութեան արժանի է նրա նշած՝ Եղնիկի մի աննշան վկայակոչում (Ա. 13, էջ 94), որի մէջ Միքայէլ հրեշտակապետն անուանւում է «զօրավար Աստուծոյ», ինչպէս նա կոչւում է Յայտնութեան ԺԲ. 7 տանը:

Անդրադառնանք Բիւզանդացու փաստարկներին[471]: Ե. դարում թարգմանուել է Եւսեբիոսի Եկեղեցական պատմութիւնը, որտեղ Յայտնութիւնը յիշւում է որպէս Սուրբ Գրոց կանոնին պատկանող: Ապա յայտնի է, որ հայերն այդ պատմութեանը կարեւոր հեղինակութիւն էին տալիս, ուրեմն բնականաբար պարտաւոր էին իւրացնել Յայտնութեան նկատմամբ Եւսեբիոսի կարծիքը եւ չէին կարող այն թողնել չթարգմանուած: Եկեղեցական պատմութեան մէջ Եւսեբիոսը մի քանի անգամ մէջբերել է Յայտնութիւնը. օրինակ, Եկեղ. պատմ. Է. 24 = Յայտն. Ա. 1-2, Եկեղ. պատմ. Է. 24 = Յայտն. Ա. 4, Եկեղ. պատմ. Է. 24 = Յայտն. Ա. 9, Եկեղ. պատմ. Է. 10 = Յայտն. ԺԳ. 5, Եկեղ. պատմ. Է. 24 = Յայտն. ԺԲ. 7, 8: Նորայրն այս վկայութիւնների բնագրերը համեմատել է եւ ցոյց տուել, որ Եւսեբիոսի պատմութեան թարգմանիչը թարգմանութեան ժամանակ օգտուել է հայերէն բնագրից. հետեւաբար՝ Յայտնութիւնը ոչ միայն Ե. դարում է թարգմանուել, այլ անգամ Եւսեբիոսի պատմութեան թարգմանութիւնից աւելի առաջ: Այդպիսի դատողութեան դէպքում կարող է առաջանալ մի կասկած, թէ հնարաւոր է, որ Եւսեբիոսի բնագրերը հետագայի գրիչները սրբագրած լինեն ըստ Սուրբ Գրոց հայերէն թարգմանութեան: Սակայն միւս փաստերը բացառում են այդպիսի կասկածի հնարաւորութիւնը, որովհետեւ Եւսեբիոսի թարգմանչից բացի, Ե-ԺԲ. դարերի այլ հայ մատենագիրներ եւս վկայակոչում են Յայտնութեան հայերէն բնագիրը: ԺԱ-ԺԲ. դարերի մատենագիր Սարկաւագ վարդապետն իր ճառերում[472] վկայակոչում է Ե. 8, Ը. 3, ԺԲ. 3-4 տները: Գրիգոր Նարեկացու վկայակոչումների մասին արդէն խօսել ենք. նա յղում է ԺԹ. 11 եւ ԺԶ. 20 տները[473]: Պարզւում է, որ յղումներ ունեն նաեւ աւելի հին հեղինակներ՝ Խորենացին եւ Դաւիթ Փիլիսոփան: Առաջինը Հռիփսիմէի

---

471 **Ն. Բիւզանդացի**, Կորիւն վարդապետ, էջ 413-422, ծնթ. 12. «Քննութիւն թարգմանութեան Յովհաննու Առաքելոյ Յայտնութեան գրոց»:

472 **Յովհաննու Սարկաւագ վարդապետի** Յաղագս քահանայութեան եւ քահանայից եւ գլխոց նոցին (Սոփերք հայկականք Գ.), Վենետիկ, Ս. Ղազար, 1853, էջ 27 (84 էջ):

473 **Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի** Նարեկայ վանից վանականի Մատենագրութիւնք, Վենետիկ, 1840, էջ 318, 334, 402 եւ 409:

եւ նրա ընկերուհիների մասին ճառում մէջբերում է ԺԲ. 1 տունը[474]*, իսկ Դաւիթ փիլիսոփան Փրկչի Խաչի մասին ճառի որոշ արտայայտութիւններում ցուցադրում է հայերէն բնագրին իր ծանօթ լինելը, յատկապէս Զ. 8, ԺԳ. 11-17, ԺԴ. 1, ԻԲ. 4 տներին*[475]*: Այս բոլոր փաստերը մեզ իրաւունք են տալիս Նորայրի հետ միասին գալու այն եզրակացութեան, որ Յայտնութիւնն իրոք թարգմանուել է Ե. դարում, եւ ո՛չ Է. կամ յաջորդ հարիւրամեակներում:*

Այժմ տեսնենք, թէ ինչում է կայացել Ներսէս Լամբրոնացու աշխատանքը: Նա, նախ՝ գրել է մեկնութիւն Յովհաննէսի մահուան մասին անկանոն գրքի՝ Հանգիստ սրբոյն Յովհաննու աւետարանչի. երկրորդ՝ յունարէնից թարգմանել է Յովհաննու Յայտնութեան Անդրէաս Կրետացու մեկնութիւնը, եւ երրորդ՝ Յայտնութիւնն ընդունել է Հայկական կանոնի մէջ: Անդրէասի թարգմանութեան առաջաբանում Ներսէսը գրում է, թէ Յայտնութիւնը չի եղել հայկական եւ այլ եկեղեցիների կանոնում, եւ ընդունուել է շատ ուշ, եւ ինքն էլ, այլ եկեղեցական հեղինակութիւնների օրինակով, այն կանոնի շարքին է դասել:

Ըստ այդմ՝ այս է իր վկայութիւնը. «եւ ստուգաբան արարաւ, վերստին երիւրեալ ի հելլենացւոյն՝ իմով նուաստ Ներսիսի թարգմանութեամբ»:

Այս խօսքերը կարելի է երկակի հասկանալ, որ նա հին թարգմանութիւնը վերցրել է եւ այն հիմնովին սրբագրել ըստ յունարէն բնագրի, կամ էլ նա պատրաստել է բոլորովին նոր թարգմանութիւն: Վերջինը Զարբհանալեանի եւ Կոնիբէրի կարծիքն է: Իսկ Նորայրը որոշակի ոչինչ չի ասում. նա բաւարարւում է նրանով, որ արձանագրում է հին թարգմանութեան գոյութիւնը: Մեր կարծիքով հնարաւոր է միայն առաջին բացատրութիւնը. Ներսէսը համեմատել է արդէն գոյութիւն ունեցող թարգմանութիւնը եւ սրբագրել է այն՝ «ստուգաբան արարաւ», ընդ որում՝ ուրիշ որեւէ մէկը նրան չի օգնել, այլ նա ինքը համեմատութեան համար թարգմանել է յունարէն բնագիրը: Եթէ նա հին թարգմանութեան վրայ չի աշխատել, ապա նա չէր կարող օգտագործել «ստուգաբան արարաւ վերստին երիւրեալ» բառերը:

Բացի այդ, Ներսէսի մասին գրող ժամանակակիցները Յայտնութեան նրա թարգմանութեան մասին ոչ մի բառ չեն գրում, չնայած նրանք այդ հնարաւորութիւնն ունեցել են: Սաղմոսների մեկնութեան նրա առաջա-

---

474 **Սրբոյն Հօրն մերոյ Մովսէսի Խորենացւոյ** Մատենագրութիւնք, Վենետիկ, Ս. Ղազար, 1843, էջ 306 (10, 640, 1 չհ.):

475 **Դաւիթ Փիլիսոփայի** Մատենագրութիւնք, Վենետիկ, 1833, էջ 114, 177: * **Կորիւն վարդապետ, Մամբրէ Վերծանող, Դաւիթ Անյաղթ,** Մատենագրութիւնք, Վենետիկ, Ս. Ղազար, 1833 (20, 640, 2 չհ. էջ). Էջ 95-635, նոր տիտղոսաթերթ՝ «Դաւթի Անյաղթ փիլիսոփայի Մատենագրութիւնք եւ Թուղթ Գիւտայ կաթողիկոսի առ Դաւիթ»:

բանում[476] *խօսւում է միայն այն մասին, որ ինքը թարգմանել է Յովհաննու Տեսիլի մեկնութիւնը: Նրա աշակերտ Խաչատուրն իր ուսուցչի կեանքի չափածոյ նկարագրութեան մէջ բանաստեղծական եղանակներով դիմելով մարգարէներին եւ առաքեալներին, նրանց հրաւիրում է իր հետ ողբալ անսպասելի վախճանն այն մարդու, որն աշխատել է նրանց ստեղծագործութիւնների վրայ: Դիմելով Յովհաննէս աւետարանիչին ասում է. «Եկ՛, ժողովէ, զՏեսիլն ու պահէ՛, զի այլ չըկայ տէրն որ մեկնէ»*[477]*. Թարգմանութեան մասին ոչ մի խօսք:*

Աստուածաշնչի երուսաղէմի հնագոյն J^1 ձեռագրում գտնւում է Ընկալեալից կամ Ներսէսի սրբագրած բնագրից տարբերուող մի բնագիր: Զարբհանալեանը տպագրել է նրա չորս տուն՝ Ա. 4–8, եւ կարծիք է յայտնել, թէ Երուսաղէմի ձեռագրում կայ առաջին թարգմանութիւնը, սակայն չորս տան հիման վրայ դժուար է որեւէ եզրակացութիւն անել: Հնարաւոր է՝ երուսաղէմեան բնագիրն իսկապէս հին տարբերակն է, որը Համբրոնացին ձեւափոխել է, բայց նաեւ հնարաւոր է, որ այն ինչ որ անկախ տարբերակ է:

Մեր հետազօտութիւնը մեզ իրաւունք է տալիս ասելու, որ Աստուածաշնչի բոլոր գրքերը, որոնք մտնում են մեր հնագոյն՝ O^2 ձեռագրի կանոնի մէջ, ամբողջովին թարգմանուել են Ե. դարում: Նրանց վրայ աշխատել են թարգմանիչների երկու, հնարաւոր է՝ երեք սերունդ: Այդ աշխատանքի մէջ իւրաքանչիւր սերնդի ունեցած մասնակցութեան բաժինը բացայայտելը, ինչպէս նաեւ թարգմանութիւնների գլխաւոր հիմք-բնագրերի մատնանշումը մանրամասն ուսումնասիրման խնդիր է: Կորիւնն Առ Կորնթացիս Գ. թուղթը եւ Յայտնութիւնը չընդունելով, առիթ է տուել ոչ թէ Ե. դարի սկզբի, երբ իշխում էին Եփրեմ Ասորու եւ Եւսեբիոսի կարծիքները, այլ եկեղեցու աւելի ուշ ժամանակի հայրերի հայեացքների արձագանգին:

476 **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 292 եւ **Ն. Բիւզանդացի**, Կորիւն վարդապետ, էջ 414:

477 **Ղ. Ալիշան**, Սիսուան, էջ 94 եւ **Զարբհ.**, Պատմ. հայ դպր., 1897, էջ 659:

5. ՏԱՐԲԵՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԳՐՔԵՐ ԵՒ ԱՆԿԱՆՈՆՆԵՐ

Ա. *Նոր Կտակարան. Սկզբում կդիտարկենք Նոր Կտակարանի մասերի կրկնակի թարգմանութիւնները: Մենք ցոյց տուեցինք, որ այն ամբողջութեամբ՝ ներառեալ Յայտնութիւնը, թարգմանել են առաջին թարգմանիչները, եւ կարող է տարօրինակ թուալ, որ կրկին վերադառնում ենք այդ հարցին: Սակայն մեր խօսքը վերաբերելու է ոչ թէ ամբողջական գրքերի թարգմանութեանը, այլ միայն նրանց առանձին հատուածներին, որոնք գոյութիւն ունեն ոչ միայն երկու, այլ նոյնիսկ մի քանի տարբերակներով: Յայտնի է, որ Մարկոսի, Ղուկասի եւ Յովհաննէսի Աւետարանների որոշ տներ մերժուել են՝ որպէս աւետարանիչներին ո՛չ հարազատ խօսքեր: Այդ տները հետեւեալներն են.*

ա) Աւետարան ըստ Մարկոսի ԺԶ. 9-20.

բ) Աւետարան ըստ Ղուկասու ԻԲ. (42), 43, 44.

գ) Աւետարան ըստ Ղուկասու ԻԲ. 51.

դ) Աւետարան ըստ Յովհաննու Ե. 4 եւ՝

ե) Աւետարան ըստ Յովհաննու Ը. 1-11[478]*. Հատուածը անառակ կնոջ մասին:*

Այս բոլոր տների մասին գիտական գրականութեան մէջ բաւական չատ է գրուած՝ ցոյց տալու ցանկութեամբ նրանց ծագումը, հաւաստիութիւնը, մերժուածութեան պատճառները, իսկ մեզ այստեղ հետաքրքրում է միայն այն, թէ նրանց ինչպէս են վերաբերուել հայ եկեղեցական հեղինակութիւնները: Դատելով նրանից, ինչ մեզ տալիս են ձեռագրերը, հնագոյն ժամանակներից հայոց եկեղեցու հայրերի մտքերում մեծ տարակարծութիւն է իշխել. եղել են որոշ տների կողմնակիցներ, միւսների հակառակորդներ. եղել են այնպիսիները, ովքեր ժխտել կամ ընդունել են բոլորը: Այդպիսի վերաբերմունքն արտայայտուել է լիովին գիտակցաբար, որ ապացուցւում է հետեւեալ փաստերով. առաջին՝ վիճելի տներ կան զանազան տարբերակներում, եւ երկրորդ՝ որոշ ձեռագրերում վկայութիւններ են բերւում Եւսեբիոսի եկեղեցական պատմութիւնից՝ անառակ կնոջ մասին հատուածի աղբիւրը ցոյց տալու բացայայտ մտադրութեամբ: Ինչ վերաբերում է զանազան տարբերակներին, ապա չի կարելի ասել, որ դրանք արուել են առաւել լաւ բնագիր ունենալու ցանկութեամբ, այլ պարզապէս եթէ ընդօրինակողը եղել է տների հաւաստիութեան կողմնա-

[478] Կամ էլ Է. 52, Ը. 1-10:

կից, նա դրանք դրել է իր ընդօրինակութեան մէջ, իսկ հայերէնում չուներ նախադէպ նոր թարգմանութիւն է արել: Սակայն մի բան պէտք է նկատել, որ նոյնիսկ վիճելի տների կողմնակիցները ոչ միշտ են դրանք դրել բնագրի հետ միաձոյլ, այլ դրանք առանձնացրել են եւ դրել կամ համապատասխան Աւետարանի վերջում, կամ լուսանցներում, կամ էլ բոլոր հատուածները միասին՝ մէկը միւսից յետոյ: Աւետարանի հնագոյն՝ Լազարեան ճեմարանի ձեռագիրը չունի այդ տներից ոչ մէկը, որի վրայ պէտք է յատուկ ուշադրութիւն դարձնել: Կարելի է ասել, որ Ժ-Գ. դարից սկսած՝ վերջնականապէս հաստատուում է տների պատկանելը Աւետարաններին, իսկ աւելի առաջ՝ սկսած ԺԱ. դարից, եկեղեցիներում Քրիստոսի համբարձման օրը կարդում էին Մարկոսի հատուածները:

ա) Մարկոսի Աւետարանի ԺԶ. 9-20 տները մեր դիտարկած ձեռագիր Աւետարաններում՝ սկսած Ժ. դարից, արդէն հանդիպում են Ընկալեալի տարբերակով, օրինակ՝ Գ. Հ՚ր՚ 6, 16 եւ 17 [Մ 2374, Մ 311, Մ 275], բայց դրանք չունեցող հին ձեռագրերը թուով համեմատաբար աւելի շատ են, օրինակ՝ Գ. Հ՚ր՚ 1, 12, 13, 14, 18, 23, 24 եւ 29 [Մ 6200, Մ 3723, Մ 3793, Մ 3784, Մ 288, Մ 283, Մ 2877, Մ 2589]: Բացի Ընկալեալի տարբերակից, մենք ունենք նաեւ ուրիշ երկուսը. դրանցից մէկը վաղուց յայտնի է, եւ Հ. Սուքրին տպագրել է Բազմավէպում[479], իսկ երկրորդը գտել ենք Գ. Հ՚ր՚ 36 [Մ 313] ձեռագրում, որն էլ առաջին անգամ տպագրում ենք ստորեւ (տե՛ս ծնթ. 483-484): Գտել ենք նաեւ Սուքրիի հրատարակած բնագրի մի երկրորդ ձեռագիր՝ Գ. Հ՚ր՚ 37 [Մ 2743]: Ինչպէս ցոյց է տրուած ներածութեան մէջ[480], Գ. Հ՚ր՚ 6 [Մ 2374] ձեռագիրը յայտնի է դարձել չնորհիւ այն բանի, որ նրա մէջ գրուած է հատուածի հեղինակի անունը: Այնտեղ մենք տուել ենք խնդրի գրականութիւնը եւ բերել գիտնական մասնագէտների կարծիքները: Այժմ հազիւ թէ որեւէ մէկը կասկածի Աւետարանի վերջին տների կեղծուած լինելու մէջ, սակայն երբ Արիստոն Երէցի անունը յայտնի չէր, չատերը՝ բաւական հեղինակաւոր անձինք, այդ տների հաւաստիութեան կողմնակից էին[481]: Իսկ հայկական գրականութեան մէջ այդ տների վերաբերեալ որոշակի որեւէ բան չկայ՝ թէ ե՛րբ եւ ի՛նչ անձանց կողմից է կատարուել դրանց հաւաստիութեան վիճարկումը: Եզնիկը ե. դարում գիտէր դրանք եւ մէջբերել է երկու տուն՝ 17 եւ 18. «Նշաձք հաւատացելոց այս են, զդեւս հանցեն եւ օձս ի ձեռս առցեն եւ զդեղ մահու ըմ-

---

479 **Հ. Ա. Սուքրեան,** «Աստուածաշունչք. թարգմանութիւն եօթանասնից եւ հայկականն. եւ ամբողջութիւն Նոր Կտակարանի».- *Բազմավէպ* 1877, էջ 209, որտեղ դժբախտաբար ոչինչ չի հաղորդուում այն ձեռագրի մասին, որից վերցուած է այդ տարբերակը:

480 Տե՛ս վերը, ծնթ. 113:

481 Հմմտ. **Th. Zahn,** Geschichte des Neutestamentlichen Kanons, II, էջ 910-938.

պիցեն եւ ոչ մեղանչիցէ»[482]*: Դժբախտաբար նա քաղուածքը բառացի չի բերել, այլ որոշ կրճատումներով, այլապէս հնարաւոր կլինէր պարզել, թէ երեք տարբերակներից որին է այն աւելի նման: Ընկալեալում այդ երկու տներն ասում են. «Նշանք այնոցիկ որ հաւատանան ... դեւս հանցեն... ի ձեռս իւրեանց օձս բարձցեն. եւ եթէ մահացու դեղ արբցեն, նոցա ինչ ոչ վնասեսցէ». Հմր 36 [Մ 313] ձեռագրում՝ «Իսկ նշանք հաւատացելոցն այսոքիկ... դեւս հանցեն... աւձս առցեն, թէպէտ եւ մահկանացու ինչ արբիցեն, մի՛ վնասեսցին». վերջապէս Հմր 37 [Մ 2743] ձեռագրում՝ «Եւ նշան հաւատացելոցն եղիցի այս, զդիւահարս բժշկեսցեն... եւ ձեռաւք իւրեանց զիժս կալցեն եւ եթէ մահու դեղ արբցեն, ոչ մեղիցէ նոցա»: Համեմատութիւնը ցոյց է տալիս, որ բոլոր չորս բնագրերն առանձին դարձուածներով եւ բառերով իրար նման են, եւ որ Եզնիկի մէջբերումը կարծես կազմուած է երեք տարբերակների տարրընթերցումներից: Սակայն անհնար է, որ բոլոր երեք տարբերակներն արուած լինեն միաժամանակ՝ Ե. դարում, թէկուզ այդ դէպքում եւս Եզնիկը կիմանար դրանցից միայն մէկը: Մենք վերն ասացինք, որ հատուածը կարդացւում էր եկեղեցիներում, եւ դա յայտնի է ոչ թէ ըստ ծիսական ճաշոցի հնագոյն օրինակների, այլ ըստ Աւետարանի ձեռագրերի, որոնցից ԺԱ. դարի մէկը (Գ. Հմր 17) [Մ 275] տներից վեր գրել է այսպիսի հրահանգ՝ «Համբարձմանն կարդա՛»: Նոր ձեռագրերը յաճախ են տալիս այդ հրահանգը: Դրա եւ Եզնիկի քաղուածքի հիման վրայ կարող ենք անել այսպիսի եզրակացութիւն. հատուածը թարգմանուել է հինգերորդ դարում, յետոյ այն քննադատութեան է ենթարկուել եւ ոմանց կողմից մերժուել, իսկ Ժ. դարից սկսած՝ եկեղեցին վաւերացրել է այն:*

Որքան էլ անցանկալի է, չենք կարող վստահութեամբ որոշել, թէ երեք տարբերակներից ո՛րն է ամենահինը: Ընկալեալի տարբերակն ամենատարածուածն է եւ ըստ ձեռագրի հինն է: Մենք նշել ենք այդ ձեռագրերը (Գ. Հմր 6, Ժ. դ.) [Մ 2374]. հայր Սուքրիի բնագիրը չգիտենք որ ձեռագրից է վերցուած, իսկ էջմիածնի նրա օրինակը վերաբերում է ԺԳ. դարին (ձեռ. Գ. Հմր 37) [Մ 2743]: Այս երկու տարբերակները լեզուով միմեանց աւելի են համապատասխանում: Կրկին ԺԳ. դարին է պատկանում մեր բացայայտած տարբերակի ձեռագիրը: Ուստի եւ մենք Ընկալեալ բնագիրն առայժմ պարտաւոր ենք համարել հնագոյնը: Վերջին տարբերակն ունի մի յատկութիւն, որով այն տարբերւում է առաջին երկուսից. այն ստրկաբար ճիշտ թարգմանուած է յունարէնից, ինչպէս ցոյց են տալիս խօսքի հետեւեալ դարձուածները. 10 «պատմեաց եղելոց ընդ նմա - ἀπήγγειλε τοῖς μετ᾽ αὐτοῦ γενομένοις». *11 «եւ տեսաւ ի նմանէ անհաւատացին* - καὶ ἐθεᾴθη ὑπ᾽ αὐτῆς ἠπίστησαν». *14. «ապա միաժողովեալ մետասանքն երեւեցաւ ան-*

[482] **Եզնիկ**, Եղծ աղանդոց, Ա., ԻԲ., **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 208:

gա - ὑστερον ἀνακειμένοις αὐτοῖς τοῖς ἕνδεκα ἐφανερώθη»: *Պատահական վերցուած այս օրինակները լրիւ բաւարար են մեր միտքը հաստատելու համար: Մենք տպագրում ենք Հ. Սուքրիի բնագիրը եւ նորագիւտը, իսկ Ընկալեալի տարբերակը կարելի է գտնել Աւետարանի եւ Աստուածաշնչի բոլոր հրատարակութիւններում:*

Ա. Աւետարան ըստ Մարկոսի, ԺԲ. 9-20

Տարբերակ բ., ըստ Ձ[մր] 37 [Մ 2743] ձեռագրի եւ «Բազմավէպ»ի

«Յարուցեալ[483] *առաւաւտուց ի միաշաբաթուցն, երեւեցաւ նախ Մարեմայ Մագդաղենացւոյ, յորմէ եհան զեւթն դեւն. եւ նորա գնացեալ պատմեաց այնոցիկ որ եթէ ընդ նմայն էին, մինչդեռ սգային եւ լային: Իսկ նոցա լըւեալ թէ կենդանի է, ոչ հաւատացին:*

Յետ այսորիկ երկուց ոմանց երեւեցաւ այլակերպ ձեւով, մինչդեռ երթային ի գեաւղ ուրեմն: Եւ նոցա երթեալ պատմեցին այլոց: Սակայն եւ նոցա ոչ հաւատայ(ց)ին: Իսկ յետ այսորիկ մինչդեռ բազմեալ էին մետասան աշակերտքն, երեւեցաւ նոց(ա) եւ նախատեաց զանհաւատութիւնն նոցա եւ զխստասրտութիւնն, վասն զի յարութիւնն Տեառն եւ տեսլեանն իւրեանց ոչ հաւատայ(ց)ին:

Եւ ապա ասէ ցնոսա. գնացէ՛ք այսուհետեւ ընդ ամենայն աշխարհ. եւ քարոզեցէ՛ք զաւետարանս ամենայն արարածոց. եւ որ հաւատասցէ, եւ մկրտեսցի՝ կեցցէ յաւիտեան: Իսկ որ ոչ հաւատասցէ՝ դատապարտեսցի: Եւ նշան հաւատացելոցն եղիցի այս: Զի անուամբս իմով զըդիւահարս բժշկեսցեն. եւ նոր ղեզուք[484] *խաւսեսցին. եւ ձեռաւք իւրեանց զիժս կալցեն. եւ եթէ մահու դեղ արբցեն. ոչ մեղիցէ նոցա: Ի վերայ հիւանդաց զձեռս իւրեանց դիցեն. եւ բժշկեսցեն զնոսա:*

Արդ, Տէրն մեր Յիսուս Քրիստոս յետ խաւսելոյն ընդ նոսա զայս, վերացաւ յերկինս եւ նըստաւ ընդ աջմէ Հաւր: Իսկ նոցա գնացեալ քարոզեցին ընդ ամենայն երկիր, գործակից լինելով Տեառն, եւ աւգնական, եւ զբան հաստատեին ի ձեռն նշանացն որ առնեին»:

Աւետարան ըստ Մարկոսի, ԺԲ. 9-20

Տարբերակ գ., ըստ Ձ[մր] 36 [Մ 313] ձեռագրի

«... Բայց յարուցեալ Յիսուս առաւաւտու միաշաբաթոյն, երեւեցաւ նախ Մարիամա Մակդաղենացւոյ, յորմէ էհան զեւթն դեւն. նա երթեալ պատմեաց եղելոց ընդ նմա զգացելոց: Եւ նոցա լուեալ թէ յարուցեալ եւ տեսաւ ի նմանէ, անհաւատացին: Ձկնի այսորիկ գնացին յագարակ ու-

483 Բազմ. «*Արդ՝ յարուցեալ*»

484 Բազմ. «լեզուօք»

բեմն, նոքա երթեալ պատմեցին եւս այլոց. եւ ոչ իսկ նոցայ հաւատացին: Ապա միաժողովեալ մետասանքն՝ երեւեցաւ նոցայ: Եւ նախատեաց զանհաւատութիւն նոցա եւ զխստասրտութիւն սրտից նոցայ. զի տեսողաց զնա յարուցեալ ոչ հաւատացին: Եւ ասէ ցնոսա. գնացեալք ընդ ամենայն աշխարհ, քարոզեցէ՛ք զաւետարանն ամենայն արարածոց. որ հաւատասցէ եւ մկրտեցսի ապրեսցի, եւ որ ոչ հաւատասցէ՝ դատապարտեսցի:

Իսկ նշանք հաւատացելոցն այսոքիկ հետեւեսցին անուամբ իմով. դեւս հանցեն. լեզուս խաւսեսցեն նորս. աւձս առցեն. թէպէտ եւ մահկանացու ինչ արբցեն, մի վնասեսցին. ի վերա հիւանդաց ձեռս դիցեն. եւ բարի լիցի:

Այս Տէր Յիսուս զկնի խաւսելոյ ընդ նոսայ, ամբարձաւ յերկինս եւ նստաւ ընդ աջմէ Աստուծոյ: Եւ նոքա գնացեալ քարոզեցին ամենայն ուրեք Տեառն գործակցութեամբ. եւ զբանն արդելով հետեւեցեալաք նշանաւքն ամէն»:

բ) Ձեռագրերից դատելով՝ Ղուկասի Աւետարանի ԻԲ. 42, 43 (43, 44)[485] *տները քննադատութեան ենթարկուելով, յաճախ բնագրի միջից ջնջուել են, կամ էլ առաւել զգուշաւոր արտագրողները գրել են լուսանցներում: Հայ մատենագրութեան պատմութիւնից մենք գիտենք, թէ երբ է սկսուել դրանց նկատմամբ այդ քննադատական վերաբերմունքը. սակայն նախ ցոյց տանք այն, ինչ տալիս են ձեռագրերը: Էջմիածնի վանքի բոլոր հին օրինակութիւնները, այսինքն՝ Գ. Հ՟րք 6, 12, 13, 16, 17, 24 [Մ 2374, Մ 3723, Մ 3793, Մ 311, Մ 275, Մ 2877] ձեռագրերն այդ հատուածները չունեն. համեմատաբար նորերու, իսկ նրանցից Գ. Հ՟ր 36 եւ 38 [Մ 313, Մ 280] ձեռագրերում (ԺԳ. եւ ԺԴ. դար) դրանք գրուած են լուսանցներում. ի վերջոյ Գ. Հ՟ր 17ում [Մ 275] (Ժ. դար) դրանք գրուած են ամբողջ Աւետարանի վերջում՝ միւս բոլոր մերժելի հատուածների հետ: Այսպիսի բացառիկ վերաբերմունք մենք չենք նկատում Մարկոսի եւ Յովհաննէսի հատուածների նկատմամբ, եւ եթէ չունենայինք Է. դարի մատենագրական վկայութիւնը, կարող էինք մտածել, թէ դրանք բոլորովին էլ Ե. դարում չեն թարգմանուել: Հայոց եկեղեցու երկու անուանի հայրեր՝ Թեոդորոս Քռթենաւորը Է. դարում եւ Յոհաննէս Օձնեցի կաթողիկոսը Ը. դարում, Յովհան Մայրագոմեցուն կչտամբում էին ի միջի այլոց նաեւ այն բանի համար, որ նա եւ իր հետեւորդները Ղուկասի Աւետարանից ջնջել էին 42 եւ 43 (44) տները: Այս վկայութիւնների*[486] *չնորհիւ մենք իմանում ենք ձեռագրերի տարակարծութիւնների պատճառը, ինչպէս նաեւ այն*

[485] Վիճարկելի են յատկապէս 42, 43 եւ 44 տների մասերը՝ - «*Բայց ոչ իմ կամք... իբրեւ զկայլակն արեամբ*»:

[486] **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 210, 211:

ժամանակը, երբ առաջին անգամ սկսուել է այդ տարակարծութիւնը: Այդ պատճառն այն է եղել, որ, ինչպէս բացատրում են երկու հայրերը, Մայրագոմեցին այդ տներում ժխտում էր Քրիստոս Աստծուն վերագրուող մարդկային թուլութիւնը: Տները յայտնի են միայն մէկ տարբերակով՝ որոշ տարընթերցումներով, որոնք տալիս է Զօհրապեանը (էջ 703):

Երեք տներից 43ը եւ 44ը հեռացուած են երկու յայտնի յունարէն ձեռագրերից՝ codd. Alexandrinus եւ Vaticanus, ինչպէս նաեւ Բրիտանական թանգարանի codex Nitriensis կրկնագրից, բայց 51րդ տան հանուած լինելը չի հաստատուում:

գ) Հմր 36ը [Մ 313] տարբերուում է նաեւ նրանով, որ նրա մէջ՝ Ղուկասի Աւետարանի վերջում ԻԴ. գլխին, անմիջապէս 53րդ տնից յետոյ, աւելացուած է երկու տուն՝ հետեւեալ բովանդակութեամբ. Քրիստոսի համբարձումից յետոյ ներկաներն ամէն ինչ պատմում են նրանց, ովքեր եղել էին Պետրոսի հետ, իսկ Յիսուսը աշակերտների ձեռքը տուեց աստուածային քարոզը՝ բոլոր արարածներին յաւիտենական կեանք քարոզելու համար: Մենք փորձեցինք գտնել այդ տների հիմնօրինակը, բայց ապարդիւն, քանի որ մեզ թւում է, թէ դրանք հայ արտագրողի աւելացրածները չեն, այլ միաժամանակ թարգմանուած են Մարկոսի հատուածի հետ միասին, որը ինչպէս տեսանք, Հմր 36ում [Մ 313] նոր տարբերակ ունի: Բայց ինչն է տարօրինակը՝ այն, որ յաւելումն իմաստով Ղուկասի Աւետարանի ԻԴ. գլխի հետ ուղիղ կապ չի ցուցադրում: Այնտեղ պատմուում է, թէ Քրիստոսը համբարձուելուց առաջ յատնուեց տասնմէկ աշակերտների մէջ (տուն 33), հետեւաբար նրանց մէջ է եղել նաեւ Պետրոսը. իսկ ըստ յաւելման առաջին տան, նա կարծես բացակայում էր եւ համբարձման մասին նրան պատմել են ուրիշները: Դա աւելի կհամապատասխանէր Մարկոսի Աւետարանի վերջին՝ ԺՋ. գլխին, որտեղ հրեշտակն ասում է Մարիամ Մագդաղինացուն եւ Յակոբայ Մարիամին. «Այլ երթայք ասացէ՛ք ցաշակերտս նորա եւ ց՝Պետրոս, եթէ ահա՝ յառաջագոյն երթայ քան զձեզ ի Գալիլեա, անդ տեսանիցէք զնա՝ որպէս ասացն ձեզ» (տուն 7)»: Բայց երկրորդ տունը եւս, որ աշակերտներին յաւիտենական կեանք քարոզելու Քրիստոսի պատուիրանի մասին է, կրկին չի կապակցւում նրա համբարձման պատմութեան հետ. կարծես թէ Յիսուսն իր աշակերտներին հրամայել է քարոզել, երբ ինքն արդէն համբարձուել է երկինք: Եթէ այս խօսքերը դրուած լինէին Մարկոսի Աւետարանի վերջին գլխում՝ 18րդ տնից յետոյ, նրանք լիովին իրենց տեղում կլինէին: Նշելով այս երկու տների այսպիսի ակնյայտ համընկնումը Մարկոսի Աւետարանի ԺՋ. գլխի վերջի եւ նրա հատուածի հետ, եւ ուշադրութիւն դարձնելով այդ հանգամանքի վրայ, միեւնոյն ձեռագիրը տալիս է Մարկոսի հատուածի

Նոր տարբերակ եւ Ղուկասի Աւետարանի նոր տներ. ենթադրում ենք, որ դրանք միասին են թարգմանուել յունարէնից, եւ հնարաւոր է պատկանել են նոյն Արիստոն Երէցին:

Այստեղ տպագրում ենք այդ տները[487]*:

53. «Եւ էին Հանապազ ի տաճարին, գովէին եւ աւրհնէին զԱստուած: Եւ զամենայնն համառաւտագոյն պատմեցին այնոցիկ, որք էին ընդ Պետրոսի: Յետ այնորիկ ինքն Յիսուս յարեւելից մինչեւ ի մուտս արեւու առաքեաց: Եւ ետ ի ձեռս նոցա զաստուածային զանապական քարոզութիւնն՝ յաւիտենական փրկութեան ամենայն արարածոց, յաւիտեանս ամէն»:

դ) Յովհաննու Ե. գլխի 4րդ եւ 5րդ տներն Էջմիածնի Հ՟ր 38 [Մ 280] ձեռագրում գրուած են լուսանցում, հետեւեալ նշումով. «գտաւ բանըս ի լատին լեզուոյն գիրքն եւ յունացն եւ յասորոցն»: Զօհրապեանն ունէր այնպիսի ձեռագրեր, որոնք մեր օրինակի նման այդ տունը բնագրում չունէին, այլ ունէին լուսանցներում. սակայն քանի որ այդպիսի ձեռագրերի թիւը չնչին էր, ուստի նա այն իր բնագրից չի հանել: Տունը յայտնի է միայն Ընկալեալի տարբերակով, եւ պէտք է ենթադրել, որ ժամանակի առումով այն վերաբերում է Ե. դարին[488]*:*

ե) Շնացեալ կնոջ մասին հատուածը, Մարկոսի Աւետարանի հատուածի նման, Ընկալեալ բնագրից բացի ունի նաեւ այլ տարբերակներ: Սրա վերաբերեալ մենք պէտք է կրկին նկատենք, որ որոշ ձեռագրերում այն բոլորովին չկայ. օրինակ՝ Գ. Հ՟ր 12, 18, 23, 29 [Մ 3723, Մ 288, Մ 283, Մ 2589]. կամ էլ այն գրուած է Աւետարանի վերջում, յատուկ վերնագրով՝ «Իրք կնոջն շնացելոյ»[489]*, կամ էլ տեղադրուած է շարադրանքի մէջ, այս վերնագրով՝ լուսանցներում, կամ առանց վերնագրի: ԺԳ. դարի բաւական շատ թուով ձեռագրեր նշում ունեն այն մասին, որ այս տներն ըստ Յովհաննէսի աշակերտ Պապիասի վկայութեան, Յովհաննու Աւետարանի մէջ են ընդգրկուել եբրայական Աւետարանից: Մի շարք առաւել նոր ձեռագրեր եւ Վարդան պատմիչը այս տների հեղինակ են համարում Պապիասին. «Այն շնացեալ կնոջ իրքն, որ այլ քրիստոնեայք ունին գրած յիւրեանց Աւետարանին, Պապիասյ ումեմն աշակերտի Յովհաննու է գրած, որ հերձուած խօսեցաւ եւ խոտեցաւ: Եւսեբի յասել զայս յետոյ եւ գրել»*[490]*:*

[487*] Բնագրում՝ Здѣсь я печатаю эти стихи съ русскимъ переводомъ. (իմա՝ ռուսերէն թարգմանութեամբ հանդերձ):

[488] «*Բազմավէպ*»ում տպագրուած է այդ նոյն բնագիրը. հմմտ. վերը՝ ծնթ. 80:

[489] Այդ նշումն այստեղ տպագրուած է. տե՛ս վերը, ծնթ. 191 եւ՝ Յուցակ Վենետիկի Ս. Գրոց.- *Բազմավէպ*, 1891, էջ 100. նաեւ՝ **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 212:

[490] Վարդանի հաղորդումը տպագրուած է՝ *Բազմավէպ*, 1877, էջ 211, ծնթ. 1, եւ **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 213: Վարդանը ոչինչ չի ասում Եւսեբիոսի մասին: Վերջին նախադասութեան յաւելումը տալիս է մէկ ձեռագիր՝ Էջմիածնի վանքի Հ՟ր 156 Գ [Մ 2512]:

Վերջապէս կան ձեռագրեր, որոնցում գրուած է, թէ՝ չնացեալ կնոջ գործերը «ընկալաւ եկեղեցի յաստրուց Աւետարանէ»[491]*:*

Այս բոլոր վկայութիւնները հիմնուած են Եւսեբիոսի խօսքերի վրայ, որոնք սակայն բերուած են տարբերակներով եւ բացայայտ անճշտութիւններով: Եւսեբիոսը Պապիասի մասին գրում է, որ նա ἐκτέθειται δέ και ἄλλην ἱστορια περὶ γυναικὸς ἐπι πολλαῖς ἁμαρτίαις[492] διαβληθείσης ἐπι τοῦ κυρίου, ἣν τὸ καθ᾽ Ἑβραίους εὐαγγέλιον πρειέχει[493]*: Սրանով Եւսեբիոսը ցոյց է տալիս, որ Պապիասը բանաւոր աւանդութիւնների հիման վրայ գիտէր չնացող կնոջ մասին պատմութիւնը, որը աւանդուել է եբրայական Աւետարանում եւ որը Աւետարանի կանոնին չէր պատկանում: Իսկ մեր գրառումների կազմողները Եւսեբիոսի խօսքերն իրենք իրենց այլ ձեւով են բացատրել: Նրանց պատկերացումներով՝ ըստ ոմանց ստացւում է, որ Պապիասը եբրայական Աւետարանը մատնանշում է որպէս հատուածի աղբիւր, ըստ միւսների՝ Պապիասն ինքն է յօրինել դրանք: Վերջինների չարքին է պատկանում Վարդանը, որը վկայակոչում է Եւսեբիոսի խօսքերը: Հետաքրքրական է իմանալը, որ հայերէնով ունենք այդ տների առնուազն հինգ տարբերակ. ա) Ընկալեալում, բ) Էջմիածնի Ձ՟ր 6 Գ. [Մ 2374] ձեռագրում, գ) Վենետիկի վանքի մի ձեռագրում*[494]*, դ) եւ ե) Զօհրապեանի հրատարակութեան մէջ՝ էջ 723: Բոլոր հինգ տարբերակներն արդէն տպուած են՝ ա., դ., եւ ե.՝ Զօհրապեանն առանձին դրել է Յովհաննէսի Աւետարանի վերջում, բ.-ն տպել է Կոնիբէրը՝ սկզբում հայերէն բնագիրը*[495]*, իսկ այնուհետեւ դրանք թարգմանել է անգլերէն*[496] *եւ ե.-ն՝ «Բազմավէպ»ում: Բոլոր հինգ*[497] *տարբերակներն իրարից զանազանւում են ոչ միայն թարգմանութեան լեզուով, այլեւ նրանք ներկայացնում են պատմութեան բոլորովին զանազան տարբերակներ: Ա. բնագիրը յայտնի էր Գրիգոր Նարեկացուն, որը բառացիօրէն մէջբերել է 11րդ տան երկ-*

---

491 Էջմիածնի ձեռագրեր Ձ՟ր 235, 258 եւ 335 [Մ 198, Մ 235, Մ 242]:

492 Գիրք պատճառաց (Liber Causarum) [Մ 1879] ձեռագրում Եւսեբիոսի այս արտայայտութեանը համաձայն պատմութիւնը կոչւում է *Պատմութիւն բազմաձկողիմ կնոջն:*

493 **Eusebius Caesariensis**, Historia Ecclesiastica, III, 39, 16: **Zahn**, Geschichte des Neutestamentlichen Kanons, II, 2, էջ 703:

494 Հ. Սուքրիճ ըստ այդ ձեռագրի տպագրել է բնագիրը՝ *Բազմավէպ*, 1877, էջ 211, ձեռագրի մասին ոչինչ չհաղորդելով:

495 **Կ. Կոնիբէր**, Թղթակցութիւն.- Հանդէս Ամսօրեայ, 1895, էջ 17-18 (Յ. Տաշեանի երկտող ծանուցումով):

496 A Dictionary of the Bible, Volume I, էջ 154:

497 Մենք առաջաբանում սխալմամբ յիշատակել ենք երեք տարբերակ. տես 68րդ ծանօթ. յաջորդ պարբերութիւնը:

րորդ մասը. «ոչ ես դատապարտեմ զքեզ»[498]*: Այն հանդիպում է նաեւ Գ. Հ՚ր 2ում [Մ 7737]՝ Սեւանի վանքի ԺԷ. դարի ձեռագրում. բ. բնագիրը հաղորդում է ԺԷ. դարի մի ձեռագիր, իսկ գ., դ., ե. բնագրերի մասին որոշակի որեւէ բան ասել չենք կարող: Յայտնի է, որ հին յունարէն ձեռագրերից չատերը մեր հատուածը չունեն. ուրիշ ձեռագրեր դրանք հաղորդում են չորս տարբերակով, եւ ո՛չ թէ հինգ՝ ինչպէս հայերէն ձեռագրերը*[499]*:*

Հինգ տարբերակի մասին փաստի արձանագրումը բաւական հետաքրքիր է. եթէ ունենայինք միեւնոյն բնագրի տարբեր թարգմանութիւններ, ապա կարող էինք մտածել, ինչպէս Մարկոսի Աւետարանի հատուածի դէպքում, որ թարգմանիչները հատուածն իրենց ձեռքի հայերէն օրինակի մէջ չգտնելով, ձեռնարկել են նոր թարգմանութիւն անելու. իսկ այստեղ հարցը այլ ձեւով է դրուած՝ ունենք ամբողջ հինգ տարբերակ, եւ ամէն մէկը՝ տարբեր բնագրից: Տպաւորութիւն է առաջանում՝ կարծես թէ գիտակցուած ցանկութիւն է եղել՝ տիրանալու հետաքրքիր պատմութեան բոլոր տարբերակներին. իսկ ո՞ր լեզուից, ե՞րբ է արուել այդ աշխատանքը՝ որոշակի ասել չենք կարող:

Հայկական Ընկալեալ բնագիրը թարգմանութեան ժամանակի առումով ամենայն հաւանականութեամբ հնագոյնն է եւ միայն նա է համապատասխանում յունական սովորական տարբերակին: Մնացած չորսը միմեանց նման են միայն մի բանում. նրանցում խօսւում է այն մասին, որ Յիսուսը մատով հողի վրայ գրել է չնացեալ կնոջը մեղադրողների մեղքերը, եւ նրանք այն բանից յետոյ, երբ կարդացին այդ՝ հեռացան: Մանրամասնութիւններում բոլոր չորս տարբերակներն այնպէս են զանազանւում իրարից, որ որեւէ կերպ հնարաւոր չէ դրանք համարել նոյն բնագրի տարբեր թարգմանութիւններ: Ամէն տարբերակ պատկանում է բոլորովին այլ բնագրի: Նրանք տարբերւում են նաեւ ծաւալով. օրինակ պրոֆ. Կոնիբէրի հրատարակած բնագիրը Ընկալեալի բնագրի կէսից աւելի չէ: Նրա սկիզբը լիովին համապատասխանում է մեր հատուածն ունեցող յունարէն հնագոյն D ձեռագրի բնագրին. «կին ոմն ըմբռնեցաւ ի չարիս — ἔπὶ ἁμαρτεία γυναίκα εἰλημένην»[500]*:*

Chr. Wordsworth-ի հրատարակութեան ծանօթագրութիւններում բերուած է երեք տարբերակ. Textus receptus Scholzio, Textus codicis D

[498] Տուճը նա մէջբերել է Երգ երգոցի մեկնութեան մէջ. **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 213:

[499] **Jülicher Adolf,** Einleitung in das Neue Testament, Freiburg i. B. und Leipzig, 1894, էջ 244, 245՝ խօսում է երկու տարբերակի մասին:

[500] Պրոֆ. Կոնիբէրը հակուած է այս տարբերակում տեսնելու այն օրինակը, որը հաղորդել է Պապիասը: Սակայն Եւսեբիոսի πολλαῖς ἁμαρτίας διεβληθεὶσης բառերը ոչ այնքան են ներդաշնակ մեր տարբերակի սկզբի հետ, որքան D ձեռագրի բնագիրը, որտեղ համընկնումը բառացի է (Հանդէս ամսօրեայ, 1895, էջ 18):

եւ Textus codicum multorum[501]*: Դրանցից D-ի բնագրի սկիզբը չնայած համապատասխանում է մեր բ. տարբերակի սկզբին, սակայն ընդհանուր առմամբ կարող է համարուել գ. տարբերակի հիմքը, բայց հէնց D բնագրի առաջին նախադասութիւնը հանուած է մեր գ. տարբերակից: Wordsworth-ի միւս երկու բնագրերը եւ մեր դ. եւ ե. տարբերակները միմեանցից որեւէ կախում չունեն:*

Մի քանի յիշատակարան եւ պատմիչ Վարդանը հաղորդում են հատուածի ժխտման մասին: Հաւաստի յայտնի չէ, թէ մեր հատուածի հերետիկոսական լինելը յայտարարելու համար եկեղեցական յատուկ որոշում է եղել, բայց եթէ նոյնիսկ այդպիսի որոշում եղել է, հազիւ թէ որեւէ մէկն ուշադրութիւն դարձնէր դրա վրայ. այդ են ապացուցում նշուած յիշատակարանները դրած ընդօրինակողները: Նրանք, անկախ բերուած վկայութիւններից, տները չեն կրճատել՝ հանել, այլ չարունակել են դրանք գրել[502]*:*

Մենք բերում ենք Կոնիբէրի եւ Հ. Սուքրի հրատարակած բնագրերը, իսկ միւս երեք տարբերակները մատչելի են Զօհրապեանի հրատարակութեամբ:

Աւետարան ըստ Յովհաննու, Ը., 1-11
Ըստ Գ. Հ՟պ 6 [Մ 2374] ձեռագրի. բ. տարբերակ

Կին ոմն ըմբռնեցաւ ի չարիս, որում ամենեքին վկայէին թէ ահապարտ է. ածին առ Յիսուս թէ զի՞նչ հրաման(ե) է, զի չարախօսեցին զնմանէ: Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ. Երթայք, դուք որ անմեղդ էք, արկէ՛ք քարինս եւ քարկոծ արարէ՛ք: Եւ ինքն խոնարհեցուցեալ զգլուխն, գրէր մատամբն ի վերայ երկրի՝ բացայայտել զմեղս նոցա. եւ տեսանէին զիւրաքանչիւր մեղս ի վերայ քարանցն. եւ ամաւթալից գնացին, եւ ոչ ոք մնաց, բայց կինն միայն: Ասէ Յիսուս. ե՛րթ ի խաղաղութիւն եւ մատո՛ զպատարագն վասն մեղաց, որպէս յաւրէնս նոցա գրեալ է:

Աւետարան ըստ Յովհաննու, Ը. 1-11
Ըհատ հ. Սուքրիի հրատարակութեան, գ. տարբերակ
Իրք կնոջն շնացելոյ.

Իսկ քահանայապետքն եւ փարիսեցիքն բերին կացուցին առաջի Յիսուսի կին մի, որ յառաջագոյն ի շնութեան գտեալ էր. եւ ասեն ցնա, վարդապե՛տ,

---

501 **Chr. Wordsworth**, The Holi Bible, I, Oxford, 1881, էջ 309, ծնթ. 2:

502 Ի դէպ, յունական աղբիւրները եւս գիտէին այն մասին, որ հայերը հերքել են հատուածը, որը երեւում է հետեւեալ վկայութիւնից. βλαβερὰν εἶναι λέγοντες τοῖς πολλοῖ ς την τοιαύτην ἀκρόασιν (Nicon, in Coteler, Part. Apostol. I, էջ 309): Այս նշումը ըստ Wordsworth-ի (The Holy Bible, I, էջ 309) վերաբերում է հայերէն բնագրին:

կինն այս գտաւ ի շնութեան, եւ Մովսէս հրամայեաց քարկոծել զայսպիսիքս. իսկ դու զի՞նչ ասես:

Իսկ Յիսուս խոնարհեալ՝ մատամբն գրէր ի վերայ գետնոյն. եւ նոքա սպասէին նմա, թէ զինչ ասասցէ: Հայեցաւ ի վեր Յիսուս եւ ասէ ցնոսա. որ ոք ի ձէնջ առանց մեղաց, արկցէ նախ զքարինն ի վերայ դորա: Եւ Յիսուս դարձեալ խոնարհեցաւ եւ գրէր ի վերայ գետնոյն, եւ ընթեռնոյր իւրաքանչիւր ոք զիւր մեղսն: Եւ սկսան ելանել մի ըստ միոջէ, սկսեալ ի քահանայիցն. մնաց Յիսուս միայն, եւ կինն կայր առաջի նորա: Եւ յորժամ կանգնեաց զգլուխն իւր Յիսուս, ասէ ցկինն. ո՞ւր են դատախազքն քո, ո՞վ ոք դատապարտեացէ զքեզ: Պատասխանի ետ կինն. ոչ ուրեք երեւին: Ասէ Յիսուս. եւ ոչ ես դատապարտեմ զքեզ, յայսմ հետէ մի՛ եւս մեղանչեր:

Իսկ ի միւսում աւուրն իբրեւ եկին առ նա դպիրքն եւ փարիսեցիքն, դարձեալ նա պատասխանի ետ եւ ասէ»:

Բ. Հ. *Կտակարան: Հին Կտակարանի գրքերից երկրորդ Թարգմանութիւններ ունեն՝ ա) Մնացորդաց երկու գրքերը, բ) Սիրաքի գիրքը, գ) Եզրի երրորդ կամ չորրորդ գիրքը:*

ա) ՄԱ եւ JL ձեռագրերը սուրբ Սահակ կաթողիկոսին համարում են Թարգմանիչը Մնացորդաց գրքի այն տարբերակի, որ վերջերս յայտնաբերուել եւ հրատարակուել է: Չենք կարող ասել, թէ ինչի վրայ է հիմնուած համառօտ այն յիշատակութիւնը, որ ասում է. «Ետուն Սահակա կաթողիկոսի զՄնացորդս յետ ամենայն մարգարէից է Թարգմանել» (տե՛ս ծնթ. 215), բայց եւ վկայութեան ճշմարտացիութեանը կասկածելու որեւէ հիմք չունենք. Սահակի գրչի տակից կարող էր դուրս գալ այն Թարգմանութիւնը, որն այժմ Ընկալեալ բնագրից աւելի հին է համարւում: Մենք անպատասխան ենք թողնում մէկ այլ հարց. այն է՝ ի՞նչ է իրենից ներկայացնում Ընկալեալ բնագիրը. արդեօ՞ք վերամշակութիւն է այն, թէ՞ նոր Թարգմանութիւն է, եւ ո՞ր ժամանակին է այն վերաբերում: Քանի որ Ներածութիւնում խօսելով պրոֆ. Խալաթեանցի հրատարակութեան մասին, մենք տուել ենք հարցի գրականութիւնը (տե՛ս ծնթ. 58-64), ինչպէս նաեւ նորայայտ գրքերի մասին մասնագէտների կարծիքների չարադրանքը, ուստի այստեղ աւելացնելու որեւէ նոր բան չունենք:

բ) Սիրաքի Իմաստութեան գիրքը երկու հին խմբագրութիւն ունի. մէկը հրատարակել է Զօհրապեանը, միւսը՝ 1833 եւ 1866 թուերին՝ Վենետիկում: Նրանք իրարից բացայայտ չեղումներ են ներկայացնում, բայց մենք ի վիճակի չենք ասելու, թէ բնագրերից ո՞րն է առաւել հին, եւ ե՞րբ է միւսը խմբագրուել: Երկու բնագրերն էլ աւատւում են ԽԳ. գլխով. հետեւաբար նրանց մէջ վերջից պակասում է ամբողջ 8 գլուխ. դրանից

բացի՝ որոշ գլուխներում տների քանակը կիսով չափ պակաս է յունարէն բնագրից. օրինակ՝ գլ. ԻԶ. եւ գլ. ԽԳ.՝ 20 տուն ունեն, յունարէնը՝ 36: Այդպիսի կրճատումներ կան նաեւ բոլոր տների ծաւալներում: Ինչպէս դա բացատրել. արդեօ՞ք հայկական հիմքի վրայ է տեղի ունեցել այդ կրճատումը, թէ, որ առաւել հաւանական է, հիմնօրինակը այսպիսի համառօտ տեսք է ունեցել. առանց բնագրերի նախնական հետազօտութեան դժուար է պատասխանել:

Ստեփանոս Լեհացին՝ լատիներէնից տարբեր փիլիսոփայական եւ աստուածաբանական ստեղծագործութիւնների յայտնի թարգմանիչը, նկատելով հայերէն բնագրի այսպիսի տարբերութիւնը լատինական վուլգատայից, վերջինից արեց նոր թարգմանութիւն՝ հնարաւորինս հարազատ մնալով հին տարբերակին: Նրա աշխատանքը, որ աւարտել է 1665 թուականին, կարելի է համարել աւելի չուտ հին թարգմանութեան լրացում, քան թէ նոր թարգմանութիւն: Հին տարբերակի մասին մեր ասածն առկայ է Ստեփաննոս Լեհացու թարգմանութեան առաջաբանում.

«Վասն զի ի նախկին թարգմանեալսն յորմէ իցէ, գտանիմ յոլով իմն բանք պակասք, ի սկզբանէ անտի գրոց մինչեւ ցկատարումն նորին... Նա եւ ի վերջոյ գլուխք իրրեւ ութ թուով.... Եւ զայսցանէ ստոյկագոյն ինձ ոչ ունիմ ասել. առ յոյնս այսպէս լինել թէ առ ասորիս, յորոց եւ փոխարկեալ գոյ»:

*Վերջին բառերը ցոյց են տալիս պատմութեան գիտակ Մովսէս Խորենացուն: Ստեփանոսի թարգմանութիւնը դեռեւս հրատարակուած չէ. նրա մասին անյստակ յիշատակութիւն կայ Հ. Յ. Տաշեանի՝ Վիեննայի Մխիթարեանների ցուցակի ցանկում: Այդ բնագիրն ունեցող բոլոր ձեռագրերը նշուած են այս գրքի 427*րդ ծանօթութեան մէջ:*

գ) Եզրի Ա. եւ Բ. գրքերից յետոյ կիլիկեան ձեռագրերում դրուած է Նէեմիի գիրքը: Իսկ ուշ շրջանի ձեռագրերում՝ սկսուած LB[1] օրինակից, Նէեմիի գրքից առաջ դրուած է նաեւ Եզրի երրորդ գիրքը[503]: Գրիգոր Տաթեւացու Կանոնը հաշւում է երեք գիրք: 1805 եւ 1860 թուականների տպագիրներում այն տեղադրուած է յաւելուածում, իսկ Ոսկանն այն թարգմանել է լատիներէնից եւ հրատարակել է «Եզրի չորրորդ գիրքը» անուամբ: Այդ չորրորդ գիրքն էլ երրորդ գիրքն է, այն տարբերութեամբ, որ երրորդ գրքում չկան Ա., Բ. եւ վերջին երկու, այսինքն՝ ԺԵ. եւ ԺԶ. գլուխները: Խօսելով Ոսկանի հրատարակութեան մասին, մենք ցոյց տուեցինք, որ նա ձեռքի տակ ունեցել է մի ձեռագիր՝ Ղազար Բաբերդացու այն ձեռագրերի խմբից, որոնցում առկայ է Եզրի Գ. գիրքը: Հնարաւոր չէ մտածել, թէ Ոսկանը չի նկատել Եզրի երրորդ եւ չորրորդ գրքերի նմա-

[503] Այս գիրքը կայ մեր շարքի հետեւեալ ձեռագրերում՝ MA, JL, Wk, LB[1], Kon[2], Kon[3], Dj[6], Dj[8], E[2], JM, As:

նուիրելը եւ կատարել է նոր թարգմանութիւն, այլ առաւել հաւանական է մտածելը, որ նրա ձեռագիրը երրորդ գիրքը չի ունեցել:

Զօհրապեանն իր հրատարակութիւնը տեղադրել է յաւելուածում (էջ 13-25), որովհետեւ բնագիրը գտել է Աստուածաշնչի «միայն երեք նորագոյն օրինակներում»[504], չորրորդ համարում (= մեր չարքի 46, Dj²), հինգերորդում (=մեր չարքի 51, LB²) եւ եօթներորդում (=մեր չարքի 52, LB³): Նա աւելորդ է համարել ձեռագրերի տարբերթերցումները դնելը: Զօհրապեան բնագիրը վերատպուել է երկու անգամ՝ 1860 թուականին եւ Հին կտակարանի աննկանոն գրքերում (էջ 251): Այդ բնագիրը Ֆրիտչէին առիթ է տուել հայերէն թարգմանութեան մասին արտայայտել այսպիսի կարծիք. «von den alten Ubersetzungen ist die armenische in kritischer Hinsicht wertlos»[505]: Մատնանշում ենք գոյութիւնը երկու հնագոյն՝ MA եւ JL ձեռագրերի, եւ, որքան նկատել ենք մակերեսային համեմատութեամբ, նրանք երկուսն էլ ունեն աւելի լաւ բնագիր, քան Զօհրապեանի հրատարակութեան մէջ եղածն է: Հնարաւոր է ժամանակի ընթացքում հին օրինակի ուսումնասիրութեամբ պարզուի, որ Ֆրիտչէի կարծիքն անհիմն է, եւ հայերէն բնագրի նկատմամբ մեծ ուշադրութեամբ վերաբերեբուելու անհրաժեշտութիւն կզգացուի:

Աւելորդ չենք համարում բերել մի ուրիշ գիտնականի՝ Robert L. Bensly-ի կարծիքը, որը Զօհրապեանի հրատարակած Եզրի երրորդ գրքի մասին ասել է, թէ՝ «was perhaps made from the syriac» եւ որ «a latin translation by J. H. Petermann is in Hilgenfeld[506]»: Պետերմանի թարգմանութեան մասին որեւէ այլ տեղ մենք տեղեկութիւններ չենք գտել, իսկ ինչ վերաբերում է ասորական հիմնօրինակին, չի երեւում, թէ Բենսլին իր կարծիքը հիմնել է ինչ որ տուեալների վրայ. ի դէպ՝ նա արտայայտւում է զուշակողաբար:

Գ. *Անկանոններ. Անցնելով աննկանոնների դիտարկմանը, պէտք է նկատենք, որ նրանց մէջ եւս կան այնպիսիները, որոնք առնուազն ԺԲ. դարից սկսած՝ Հայոց եկեղեցին կանոնական է ճանաչել. այդպիսիք են՝ Մանասէ թագաւորի աղօթքը եւ Յովհաննէս աւետարանիչի Հանգիստը. եւ ընդհակառակն՝ կան գրքեր, որոնք ըստ ամենայնի հայերէնով երբեւէ գոյութիւն չեն ունեցել. այդպիսիք են Հերմէսի Հովիւը կամ Կղեմէսի Թուղթը: Յան-*

---

504 Աստուածաշունչ Զօհրապեանի, էջ 306, ծնթ. եւ Յաւելուած էջ 1:

505 **Fritsche**, Kurzgefasstes exegetisches Handbuch zu den Apocryphen, Leipzig, 1851, էջ 9: * Թարգմ. «Հին թարգմանութիւններից հայերէնը քննական առումով անարժեք է»:

506 The fourth book of Ezra, by Arm. Robinson, Text and Studies, 1895, էջ XXIV: Թրգմն՝ «ոը, թերեւս, արուած էր ասորերէնից» եւ «Յ. Հ. Պետերմանի լատիներէն թարգմանութիւնը Հիլգենֆելդում է»:

կանում ենք սկզբից եւեթ զգուշացնել, որ մեր խօսքը վերաբերելու է հայերէնով գոյութիւն ունեցող ո՛չ բոլոր անկանոններին, այլ միայն նրանց, որոնք առկայ են Սուրբ Գրքի ձեռագրերում, աստուածաշնչական գրքերի հետ միասին. ըստ երեւոյթին օրինակողները նրանց եւ կանոնական գրքերի միջեւ որեւէ տարբերութիւն չեն դրել: Ընդ որում՝ պէտք է նկատել, որ այդ անկանոնները չեն գրուել որպէս յաւելուած՝ սկզբում կամ էլ վերջում, այլ օրգանականապէս հիւսուած են միւս գրքերի հետ՝ պատմողական կամ ժամանակագրական կարգով: Օրինակ՝ Դանիէլի եօթներորդ տեսիլը գրուած է վեցերորդից յետոյ, ԺԲ. նահապետների կտակները՝ Ծննդոց գրքից յետոյ. եւ այլն:

Նոր Կտակարանի մէջ մտնում է միայն մէկ անկանոն՝ Յովհաննու Հաւգիստը, որի մասին խօսք է եղել[507]: Նրա թարգմանութիւնը հին է, ոչ անհիմն վերաբերում է Ե. դարին, եւ կարծում ենք, որ այն Աստուածաշնչի մէջ ընդունուել[508] եւ կանոնական է դարձել՝ երբ Ներսէս Լամբրոնացին գրել է նրա մեկնութիւնը եւ Յայտնութեանը հաւասար դրել:*

Հին Կտակարանի անկանոնների քանակը շատ մեծ է: Միայն ՄԱ ձեռագիրը տալիս է այդպիսի գրքերի ամբողջութիւնը. նրա մէջ կան այնպիսի անկանոն գրքեր, որոնք մի այլ Աստուածաշնչում եւ ընդհանրապէս որեւէ տեղ չեն հանդիպում. օրինակ՝ ա) Մահք ԺԲ. աւագ մարգարէից եւ բ) Մնացորդք ի մնացորդաց՝ ըստ յունարէն ձեռագրերի (տե՛ս ծնթ. 230ի չուրջ):

գ) Ենովքի անկանոնը յայտնի է ըստ երեք ձեռագրի՝ ՄԱ, Աստուածաշունչի երուսաղէմեան մի ձեռագրում[509] եւ Էջմիածնի վանքի Հմր 794 [Մ 680] ձեռագրում:

դ) Հին Կտակարանի գրքերի շարքում հաստատուն դիրք են գրաւել ԺԲ. Նահապետաց կտակները: Նրանք առաջին անգամ թուարկուած են Սարկաւագի ցանկում՝ Մակաբայեցոց գրքերից եւ Ենովքի տեսիլից յետոյ. եւ Մխիթարն այդ նոյն կարգով ընդօրինակել է դրանք: Մխիթարի ձեռագրից առաջ դրանք առկայ են 1220 թուականին գրուած՝ Վենետիկի վանքի մի ձեռագրում [1322/192]: Անկանոններ պարունակող բաւական

---

507 Տե՛ս վերը՝ ծնթ. 155-157 եւ յջրդ:

508* Յովհաննու Հաւգիստը կայ Ժ. դարի Մաշտոցում. տե՛ս Մայր Մաշտոց. Հատոր Ա., գիրք Ա., Ժ. դար, Ըստ ինագոյն երկաթագիր ձեռագրերի եւ համեմատութեամբ Աստուածաշունչ մատեանի, բնագրական եւ կանոնացանկային յաւելուածովք, Աշխատ.՝ **Գէորգ Տէր-Վարդանեանի,** Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատ., Սբ. Էջմիածին, 2012, էջ 530-535:

509 **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 189՝ հաղորդում է, թէ անկանոնը դրուած է Եզրի գրքից յետոյ: Այն հրատարակուել է նախ «Արարատ» ամսագրում՝ Տեսիլ Ենովքայ արդարոյն.- Արարատ, 1894, ԺԲ. էջ 369-373, այնուհետեւ Անկանոնք ՀԿ-ի, էջ 378-386, իսկ ուսումնասիրել է՝ **Հ. Բ. Սարգիսեան,** Ուսումնասիրութիւնք, էջ 133-220:

մեծ քանակի նորագոյն ձեռագրեր կան: Կոնիբէյրը եւ Պրոչէնը մեր նեբածուխեան մէջ[510] *նշուած իրենց աշխատութիւններում թուարկում են՝ առաջինը հինգ օրինակ, իսկ երկրորդը դրանց աւելացնում է ուրիշ հինգը եւս: Նա դրանք վերցրել է Հին Կտակարանի Անկանոն գրքերի վենետիկեան հրատարակութիւնից (էջ 27-151): Այդ ձեռագրերը հետեւեալներն են.*

1) Վենետիկի վանքի Հմր 280, գրուած է թղթի վրայ՝ 1418 թ. (Կոնիբէյրն այն նշել է V, Անկ. Հ.Կ-ի հրատարակիչը՝ ԲՆ, [աստ՝ V⁴. Հմր 29]).

2) Վենետիկի վանքի Հմր 345, գրուած է թղթի վրայ, 1220 թուականին (հրատարակչի՝ Ա) [1322/192].

3) Վենետիկի վանքի Հմր 679, ԺԵ-ԺԶ. դարեր (հրատարկչի՝ Բ).

4) Աստուածաչունչ LB² (հրատարակչի՝ Գ, մեր չարքում՝ Հմր 51).

5) Աստուածաչունչ V⁹ (հրատարակչի՝ Դ, մեր չարքում՝ Հմր 71).

6) Աստուածաչունչ L (Կոնիբէյրն այն նշանակում է Բ. գրով, մեր չարքում՝ Հմր 75).

7) Աստուածաչունչ Z (այն այդպէս կոչում է նաեւ Կոնիբէյրը, մեր չարքում՝ Հմր 74).

8) Աստուածաչունչ Kon² (cod. Vat., մեր չարքում՝ Հմր 39).

9) Աստուածաչունչ Wk (cod Vindob. մեր չարքում՝ Հմր 33):

10) Վիեննայի Մխիթարեան վանքի Հմր 126 ձեռագիրը, գրուած 1388 թուականին, որտեղ պակասում են Ռուբէնի, Դանի եւ Նեփթաղիմի կտակները[511]*:*

Կոնիբէյրը եւ նրանից յետոյ Պրեչէնը յիշատակում են եւս 11 օրինակ, Էջմիածնի կաթողիկոսի ձեռագիրը, որից Կոնիբէյրն արել է կտակների լուսանկարները, բայց քանի որ նա չի տալիս ձեռագրի համարն ու թուականը, մենք չկարողացանք մօտաւորապէս պարզել այն: Բացի այս տասն օրինակներից, Էջմիածնի գրադարանն ունի եւս 21 միաւոր՝ Աստուածաշնչի 18 ձեռագրի եւ երեք ժողովածուի մէջ. MA, KJ, Sch, JL, G, Kon³, Kon⁴, LB¹, Dj¹, DJ⁶, DJ⁷, Dj⁸, E¹-E³, Kf, As, JM եւ Հմր Հմր 99, 102, 774 [Մ 59, 61, 669] ժողովածուներում:

Հայերէն բնագրի հրատարակիչն օգտուել է միայն առաջին հինգ օրինակից, մինչդեռ Էջմիածնի վանքի բազմաթիւ ձեռագրեր, առանձնապէս Մխիթարի օրինակը, արժանի են յատուկ ուշադրութեան: Աստուածաշնչի գրքերի յաջորդականութեան մէջ կտակների գրքերի զբաղեցրած տեղերի վերաբերմամբ նկատելի են զգալի տատանումներ. ովքեր դրանք կանոնական են համարել, ժամանակագրօրէն դասաւորելով՝ դրանք գրել են

---

510 Տե՛ս վերը՝ ծնթ. 115:

511 Տաշեան, Ցուցակ, էջ 412 եւ գերմաներէն մասի էջ 71:

անմիջապէս Ծննդոց գրքից յետոյ, իսկ ովքեր հակառակ կարծիքի են եղել՝ դրանք գրել են կամ Մակաբայեցոց գրքերից յետոյ, կամ էլ ամբողջ Աստուածաշնչի վերջում: Առաքել Սիւնեցի եպիսկոպոսը Սուրբ Գրոց կանոնի մասին իր չափածոյում[512] *դրանք տեղադրում է Հնգամատեանից յետոյ՝ ըստ կարգի համարելով վեցերորդը. «վեց՝ աւրինութիւնքն յակոբեան վերայ որդոցն երկոտասան»:*

ե) Յովսէփի եւ Ասանէթի պատմութիւնը Աստուածաշնչի կազմի մէջ է մտել կտակների հետ միաժամանակ եւ միշտ գրւում է նրանցից յետոյ: Սարկաւագի ցանկում այն կոչւում է «Աղօթք Ասանէթայ», իսկ ձեռագրում այս անուանումը տրուած է անկանոնի միայն մէկ մասին. «Աւրհնութիւն խոստովանութեան Ասանէթայ»: Սա հայերէն առաջին անկանոնն է, որի վրայ եւրոպացիներն ուշադրութիւն են դարձրել: Հայագէտ պրոֆ. Կարիէրը հրատարակեց դրա չորրորդ եւ վերջին գլուխը՝ ֆրանսերէն թարգմանութեամբ՝ նախաբանելով համառօտ մեկնաբանութեամբ հայերէն անկանոնի եւ Յովսէփի անկանոնի յունարէն բնագրի մասին[513]*: Իր աշխատանքի համար Կարիէրն օգտուել է «Բազմավէպ» ամսագրում հրատարակուած անկանոնից*[514]*:*

Քանի որ «Գիրք հրէից ծածուկքն» ցանկում Մխիթար վարդապետի մօտ Նահապետների կտակներից յետոյ հանդիպում է «Յովսէփի աղօթք»ը, ուստի պրոֆ. Կարիէրը երկմտութեան մէջ է եղել՝ արժէ՞ արդեօք այն նոյնացնել Սարկաւագի ցանկի «Ասանէթի աղօթք»ի հետ, թէ՞ ոչ: Այդ կասկածը ցրեց Պրոֆ. Մառը, առաջադրելով իրաւացի ենթադրութիւն, թէ՝ Ասանէթի աղօթքով Սարկաւագը հասկացել է Յովսէփի եւ Ասանէթի մասին ամբողջ անկանոնը, իսկ «Յովսէփի աղօթքը» պէտք է «Ասանէթի աղօթք»ից առանձին բան համարել[515]*:*

Հինկտակարանեան անկանոնների հրատարակիչը հաշւում է վեց ձեռագիր.

---

512 Տե՛ս ստորեւ՝ «Աստուածաշնչի Կանոնը» մասում:

513 Une version arménienne de i'histoire d'Assaneth, Nouvaux Mélanges Orientaux, Paris, 1886, էջ 477-513: Յօդուածի մի մասի թարգմանութիւնը՝ **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 186-190:

514 Պատմութիւն Յովսեփայ եւ կնոջ նորա Ասանեթի՝ դստերն Պետափրէ քրմի Արեգ քաղաքի.- *Բազմավէպ.* 1885, էջ 200-206, 1886, էջ 25-34. Անկանոնը վերատպուած է՝ Անկանոնք ՀԿ-ի, էջ 152-198. մանրամասները՝ **Հ. Բ. Սարգիսեան**, Ուսումնասիրութիւնք, էջ 122-132:

515 **Н. Я. Марръ,** Из лѣтней поѣздки въ Армению, IX, стр. 27-21. Оттискъ из записокъ Вост. Отд. Импер. Русск. Арх. Общ. V, стр. 211-215. Հայերէն թարգմանութիւնը՝ Հանդէս ամսօրեայ, 1891, էջ 260: В. М. Истринъ, Апокрифъ объ Иосифѣ и Асанетѣ, Труды Славянскаго комитета при Импер. Моск. Арх. Общ. том II, Москва, 1898. Յիշատակում է անկանոնի հայերէն տարբերակը:

1) Ա. Վատիկանի մի ձեռագրից (Kon²) 1884 թուականին օրինակուած մի ձեռագիր, որը հրատարակուել է «Բազմավէպ»ում:

2) Վենետիկի վանքի Հմր 679 (վերը՝ կտակք նահապետաց Հմր 3):

3) Վենետիկի վանքի Հմր 280. (վերը՝ Հմր 1):

4) Մի ձեռագիր, որը բնագրով նման է երրորդ համարին եւ գրուած է կոպիտ սխալներով:

5) Վենետիկի վանքի Հմր 1369. ճառընտիրը՝ առանց թուականի նշման:

6) Աստուածաչունչ LB²:

7) Վենետիկի վանքի Հմր 398. հրատարակիչն այս օրինակը չի օգտագործել, այն յիշատակել է Հ. Բ. Սարգիսեանը:

8) Վիեննայի Մխիթարեանների 1638 թուականի Հմր 115 ձեռագիրը. բովանդակում է միայն Ասանէթի աղօթքը[516]:

9) Վիեննայի մխիթարեանների Հմր 126 ձեռագիրը (վերը՝ կտակք նահապետացի մէջ՝ Հմր 10):

Էջմիածնի մատենադարանն ունի 10 օրինակ՝ բոլորն էլ Աստուածաշնչի ձեռագրերում՝ MA, Sch, LB¹, Kon³, Dj¹, Dj³, Dj⁷, JL, JM, E²:

գ) Մանասէ թագաւորի աղօթքը հայոց եկեղեցին ճանաչում է որպէս կանոնական եւ ԺԳ. դարից սկսած՝ այն տեղադրում է ժամագրքերում: Այն կարդացւում է Մեծ Պահքի ամենօրեայ առաւօտեան ժամերգութեանը: Զօհրապեանն այն տպագրել է Յաւելուածում՝ էջ 25: Այս աղօթքն ունեցող ձեռագրերն այնքան շատ են, որ հարկ չենք համարում թուարկել դրանք, թէեւ Աստուածաշնչի գրքերում այնքան էլ յաճախ չի հանդիպում: Նկատուած օրինակները հետեւեալներն են՝ SK², K, KJ, Sch, Wk, G:

է) Դանիէլի եօթներորդ տեսիլը Աստուածաշնչի ձեռագրերում առանձնապէս կարեւոր տեղ չի զբաղեցնում, այն հազուադէպ է հանդիպում, թէեւ՝ համեմատաբար հին օրինակներում: Առաջին անգամ նրա բնագիրը հիմնովին ուսումնասիրել է Հ. Գր. Գալէմքեարեանը, որն իր աշխատութիւնը բնագրի հետ միասին հրատարակել է գերմաներէնով[517]: Պարզուեց, որ այդ անկանոնն ունի ոչ թէ մէկ, այլ երկու տարբերակ[518]: Անկանոնի ընդօրինակութիւններ ունեն հետեւեալ ձեռագրերը.

1) Աստուածաշունչ L.

2) Աստուածաշունչ WM¹.

3) Աստուածաշունչ DJ եւ՝

---

516 Տաշեան, Ցուցակ, էջ 395:

517 Wiener Zeitschrift für die Kunde Morgenland's VI, II, էջ 109-136 եւ **Հ. Գ[րիգորիս] Գ[ալէմքեարեան],** Տեսիլ Դանիէլի եւթներորդ.- Հանդէս ամսօրեայ, 1892, էջ 241:

518 Անկանոնք ՀԿ-ի, էջ 237-250 եւ երկրորդ տարբերակը՝ էջ 387-399. հմմտ.՝ **Հ. Բ. Սարգիսեան,** Ուսումնասիրութիւնք,, էջ 133-220:

4) Բ. Հմր 6 [Վիեննայի Հմր 274] (տե՛ս վերը՝ ծնթ. 366)[519]*:*

ը) Մարգարէների մահերը անկանոնը պարունակում է չորս գլխաւոր եւ տասներկու փոքր մարգարէների համառօտ կենսագրութիւնը. որոշ մարգարէների մասին խօսւում է միայն երկու-երեք նախադասութեամբ: MA ձեռագիրն առաջին չորսին աւելացնում է միւս ութ գլխաւոր մարգարէների՝ Մովսէսի, Հեղիի, Յովասի, Եղիայի, Եղիսէի, Զաքարիայի՝ որդւոյ Բարեքայ, Զաքարիայի՝ հօր Յովհաննու եւ երեք մանկանց մահերը (էջ 101). եւ այսպէս ստացւում են հաւասար թուով աւագ եւ կրտսեր մարգարէներ: Հին Կտակարանի Անկանոնների հրատարակիչը տպագրել է կրտսեր եւ չորս գլխաւոր մարգարէների մահերի բնագիրը[520] *ըստ SK³ եւ երեք այլ ձեռագրերի, որոնք նշուած են Զ, ԺՀ եւ ԺԹ=6, 18 եւ 19 թուերով: Այս անկանոնով՝ Աստուածաշնչի էջմիածնի եւ միւս ձեռագրերը հետեւեալներն են. O¹, MA, St¹, SK², K, SK³, Ja, Ch, Sch, DJ, Wk, G, Tig², Dj⁸, V⁷, WM², JL, Ka, As, եւ Հին Կտակարանի մասնական ձեռագրերից՝ Ա. Հմր 10 [Մ 145] եւ Բ. Հմր 15 [Մ 156], 20 [Մ 144]: Միայն թէ անհրաժեշտ է յիշեցնել, որ ոչ բոլոր ձեռագրերն են բովանդակում բոլոր մարգարէների մահերի անկանոնը: Աւելորդ չենք համարում նշել նաեւ այն, որ Գրիգոր վարդապետը Պատճառաց գրքի (Liber Causarum)՝ առանձին մարգարէների մասին իր Պատճառների մէջ յաճախ բառացիօրէն գրում է այն, ինչը մարգարէների մասին ասւում է այս անկանոններում:*

Դ. Մնում է եւս մի քանի խօսք ասել այնպիսի երկերի մասին, ինչպիսիք են. 1) Յովսէփի պատմութիւնը եօթ վահանգի, 2) Յակոբի ժամանումը Գեսէմ, 3) Իսրայէլի դատաւորների անունները, 4) Սիմէոնի որդի Սիրաքի խօսքը: 5) Քանի անգամ է Աստուած խօսել մարդկանց հետ: Այս գործերի մասին, բացի չորրորդից, հայ գրականութեան մէջ ոչինչ չի ասուել: Նրանցից Յովսէփի պատմութիւնը եօթ վահանգի՝ վերագրւում է Եփրեմի[521]*, հաղորդում է Յովսէփի պատմութիւնը ըստ Ծննդոց գրքի շարադրանքի՝ բանաստեղծական տեսարաններով եւ հռետորական արտայայտութիւններով: Նախերգանքում հեղինակն աղօթքով դիմում է Աստծուն, որպէսզի ինքը Նրա ընտրեալների փառաւորութիւնը ձեռք բերի եւ որ «ի վիճա-*

519 **Տաշեան**, Ցուցակ, էջ 695. E. Klostermann, Analecta zu Septuaginta, Hexapla und Patristik, Leipzig, 1895. որպէս յուշարէն բնագրի իր հրատարակութեան յաւելուած՝ տալիս է հայերէն բնագրի գերմաներէն թարգմանութիւնը՝ էջ 113-123:

520 Անկանոնք ՀԿ-ի, էջ 207-227:

521 «Սրբոյն Եփրեմի ի Յուսէփ եօթ վահանգի»: Վահանգի բառի բացատրութիւն չենք գտել: Եփրեմ Ասորու ստեղծագործութիւնների Վենետիկի 1836 թուականի հրատարակութեան մէջ՝ **Սրբոյն Եփրեմի Խուրի Ասորւոյ** Մատենագրութիւնք, հտ. Դ., Վենետիկ, 1836 (282 էջ) կայ «Աւ Յովսէփ» խորագրով մի փոքրիկ ճառ (էջ 98-106), որը Աստուածաշունչ ձեռագրերի ճառի հետ ընդհանուր որեւէ բան չունի:

կի լինի առաւել վառ եւ գերազանց ձեւով պատկերելու կատարելագոյն Յովսէփին»: Պատմութեան հնագոյն օրինակը մեզ տալիս է JL ձեռագիրը, ապա՝ Նոր Ջուղայի երկու ձեռագիր՝ Dj^1 եւ Dj^7, Էջմիածնում գրուած եւս երկուսը՝ E^2 եւ E^3: Այն Եփրեմի ճառի մի հատուած է, որի լատիներէն թարգմանութիւնն ունի հետեւեալ վերնագիրը. «Auxilio Dei, qui totus amor est, invidiae autem aversor ac propaginum eius destructor, plantator vero amoris, quem inserit in omnibus qui nomen suum amant incipimus inscribere duedecim sermones, compositos a beato Ephraemo de Josephi justo»[522]*:*

2) Յակորի ժամանումը Գեսէմ պատմութիւն է, որ հիմնուած է Ծննդոց գրքի խե. եւ խԶ. գլուխների վրայ: Ջենք համարձակւում որոշել, թէ սրանով արդեօք հինկտակարանային որեւէ անկանո՞ն ունենք, թէ՞ միջին դարերում գրուած վերաշարադրանք: Այն տալիս է միայն մի ձեռագիր՝ JM, որն անթուական է, վերաբերում է ԺԷ. դարին:

3) «Եւ այս են դատաւորք, որք կացին յիսրայէլի». 19 դատաւորների անունների թուարկում է՝ նշելով նրանց կառավարման տարիները, սկսած Նաւէի որդի Յեսուից, մինչեւ Մանովէի որդի Սամսոնը: Այս ցանկն ունեն հետեւեալ ձեռագրերը O^2, MN, K, Sch, Kon^1, Kon^3, եւ Dj^3:

4) Սիրաքի խօսքերը որոշ ձեռագրեր տալիս են հետեւեալ վերնագրով՝ «Խօսք Սիրաքայ, կարծեմ որդւոյ կատարելոյն Սիմէոնի»: Խրատը, որ գրուած է Սիրաքի գրքի ոգով եւ ոճով՝ միշտ դրւում է այդ գրքից յետոյ, դրա համար էլ Զօհրապեանն այն հրատարակել է Աստուածաշնչի Յաւելուածում (էջ 12, 13): Էջմիածնի վանքի ձեռագրերից մեր շարքում նշուած են միայն երկու օրինակ՝ Kf եւ Kon^2:

5) «Քանի՞ցս անգամ խօսեցաւ Աստուած ընդ հարսն ամենայն». Թուարկում է Ադամի ժամանակներից սկսած այն բոլոր դէպքերը, երբ ըստ Հին Կտակարանի մարդիկ խօսել են Աստուծոյ հետ: Այս անկանոնը պարունակում են երեք ձեռագիր՝ As, Su, Kf:

Մենք փորձեցինք ապացուցել, եւ ընդհանուր առմամբ մեզ յաջողուեց հաստատել, որ O^2 ձեռագրի ամբողջ կանոնը եղել է Ե. դարի թարգմանութեան մէջ. այժմ հարց է առաջանում՝ մինչեւ ԺԳ. դարի կէսը ինչպիսի՞ փոփոխութիւնների է ենթարկուել հին բնագիրը, եւ ո՞րն է մեր դիտարկած անկանոնների եւ այլ գրքերի թարգմանութեան ամենաուշ ժամկէտը:

Բացի Սահակ կաթողիկոսի՝ Մնացորդաց գրքերի, Ստեփաննոս Լվովցու՝ Սիրաքի գրքի, եւ Ոսկան եպիսկոպոսի՝ այսպէս կոչուած Եզրի Դ. գրքի թարգմանութիւններից, մնացած բոլորի մասին ուղղակի որեւէ վկա-

522 **St. Ephrem** Syri Hymni et Sermones, ed Th. J. Lamy, t. III, 1889, էջ 253-639:

յութիւն չունենք. Հ. Բ. Սարգիսեանն արել է հինկտակարանային անկանոնների մանրամասն ուսումնասիրութիւնը. մենք չենք մտնի նրա ներկայացրած փաստերի մանրամասների մէջ եւ կսահմանափակուենք միայն նրանով, ինչը բխում է ձեռագրերի հետ անմիջական ծանօթութիւնից:

Նախ՝ մեզ յայտնի է Մնացորդաց գրքերի հին թարգմանութիւննեբի չորս օրինակ (տե՛ս ծնթ. 217), եւ նրանցից ոչ մէկը կիլիկիայում չի գրուել, թէեւ նրանք վերաբերում են տարբեր ժամանակների: Երկրորդ՝ Աւետարանի հատուածների զանազան տարբերակները[523] հանդիպում են միայն Ժ.ից մինչեւ ԺԳ. դարերի ձեռագրերում, եւ այն ձեռագրերում, որոնք գրուած են բուն Հայաստանում: Երրորդ՝ անկանոններից միայն Յովհաննու Հանգիստը եւ մարգարէների մահերն են հանդիպում կիլիկեան ձեռագրերում, մնացած բոլորը գրուած են բացառապէս բուն Հայաստանում, չխօսելով ուշ ձեռագրերի մասին, երբ որոշ անկանոններ ամուր դիրք են գրաւել կանոնական գրքերի շարքում: Ինչպէս ասացինք, Բագրատունեաց թագաւորութեան անկումից յետոյ, Հայաստանում գրական գործունէութիւնը թուլացաւ եւ տեղափոխուեց Կիլիկիա: Չի կարելի կարծել, թէ կիլիկեցիները ծանօթ չէին վերեւում բերուած գրքերին. նրանք գիտակցաբար խուսափում էին դրանցից, եւ մենք ցոյց կտանք պատճառը, սակայն մեզ համար այստեղ առաւել կարեւոր է հարցի միւս կողմը: Եթէ կիլիկեցիները խուսափում էին այդ տարբերակներց եւ անկանոններից, ապա նրանք ոչ մի կերպ չէին կարող դրանք թարգմանել, հետեւաբար բոլոր այդ զանազան տարբերակները եւ անկանոնները թարգմանուել են բուն Հայաստանում եւ ամենայն հաւանականութեամբ Ժ. դարից ո՛չ ուշ: Ե- Ժ. դարերում եւ ԺԱ. դարի կէսին բուն Հայաստանի վանքերում տքնաջան աշխատում էին: Այդ ժամանակաշրջանը կարող է ծառառայել որպէս ելակէտ՝ թարգմանութիւնների [ժամանակն] առաւել ճշգրիտ պարզելու համար:

Մեր չօշափած միւս հարցը՝ ինչպիսի՞ փոփոխութիւնների է ենթարկուել հին բնագիրը, թէկուզ բազմակողմանիօրէն չի պարզուում, յամենայն դէպս ձեռագրերի տուեալներով որոշ լուսաբանում ենք ստանում: Կիլիկեցիները մեզ տալիս են Սուրբ Գրքի միագիծ, միակերպ օրինակ՝ բոլոր առումներով ամբողջական: Այս բնագիրը դարձել է պաշտօնական, եւ միայն այն է ընդունուել Կիլիկիայում: Կիլիկեան դարաշրջանից յետոյ որոշ դէպքերում չեղուել են նրանից, սակայն 1805 թուականից, երբ Զօհրապեանը տպագրեց իր Աստուածաշունչը, այդ բնագիրը կրկին մտաւ իր իրաւունքների մէջ, հայոց եկեղեցին այն ճանաչեց որպէս Սուրբ Գրքի

[523] Դժբախտաբար ճ. Սուքրիի եւ Զօհրապեանի օրինակների մասին ստոյգ տեղեկութիւններ չեն հաղորդուում:

կանոն: Դրա համար էլ չատ կարեւոր է իմանալ, թէ ստացե՞լ են արդեօք կիլիկեցիները այս պատրաստի միակերպ բնագիրը, թէ՞ պարտաւոր էին ընտրութիւն կատարել տարբեր օրինակների միջեւ: Մենք հաւաստի կարող ենք ասել, որ նրանք իրենց օրինակի ունեցածին աւելացրել են Յայտնութիւնը եւ Յովհաննու Հանգիստը, կարող է պատահել՝ Եզրի Բ. գիրքը, Սիրաքի գիրքը, եւ վերջապէս՝ վերջնականապէս ընդունեցին բոլոր երեք Աւետարանների բոլոր վիճելի տները ըստ Ընկալեալ բնագրի: Բայց նրանք, բացի այդպիսի լրացումներից, ամբողջ բնագրի նկատմամբ եւս թոյլ են տուել բացայայտ նորարարութիւններ:

Հնում Հայաստանում կային Հին եւ Նոր Կտակարանների յայտնի օրինակներ: Մեզ յաջողուել է արձանագրել հետեւեալները. ա) Երուսաղէմի չորրորդ՝ այսպէս է անուանում Մխիթար Այրիվանեցին այն հիմնօրինակը, որից ինքն արտագրել է Երեմիայի գիրքը (տե՛ս ծնթ. 229), բ) Սանահնի՝ այն օրինակը, որը Mar ձեռագրի նախօրինակ է ծառայել (ծնթ. 293), գ-ե) Երուսաղէմի, Ալեքսանդրիայի եւ Որոգիմէսի Քառիջեան. երեքն էլ յիշատակւում են միասին. նրանց հետ համեմատուել են Սողոմոնի գրքերի երկու ձեռագիր (տե՛ս ծնթ. 364), զ) Եօթանասուն թարգմանիչների օրինակ, որը 12 մարգարէների գրքերի նախօրինակ է եղել. այս բոլոր օրինակները վերաբերում են Հին Կտակարանին, նրանցից վերջին չորսը յիշատակւում են մէկ ձեռագրում՝ Բ. Հմր 4 [Մ 193], է) Յակոբեան, Գ. Հմր 16 [Մ 311] Աւետարանի նախօրինակը (ծնթ. 388)], եւ ը) Մուրղանեցի, որը ծառայել է եւ Աւագ քահանայի Աւետարանի՝ համեմատութեան համար՝ Գ. Հմր 38 [Մ 280] (ծնթ. 410ից առաջ): Այս օրինակների բնագրերը Ընկալեալ բնագրի հետ համակողմանիօրէն չենք համեմատել. մակերեսային ծանօթութիւնը մեզ համոզել է, որ դրանք որեւէ տեսակի նոր տարբերակ չեն, այլ ունեն նոյն Ընկալեալը, եւ որ դրանց տարբերութիւնը տարբերցումների ընտրութեան մէջ է: Յակոբեան օրինակը տարբերւում է նաեւ նրանով, որ նրա մէջ բոլոր բառերի վրայ չեչտ է դրուած: Այդ օրինակներից Մուրղանեցին ու Սանահնինը կոչւում են Հայաստանի վանքերի անուններով. Յակոբեանը հաւանաբար կոչուել է առաջին ընդօրինակողի անունով՝ ինչպէս մենք ունենք Գէորգի օրինակը, իսկ գուցէ եւ այն ինչ որ կապ ունի ասորական-յակոբիկեան օրինակի հետ:*

Դժուար է պարզումը չորս այլ օրինակների հարցի, որոնք բոլորը միասին թուարկւում են Բ. Հմր 4 [Մ 193] ձեռագրում. Քառիջեանը եւ Եօթանասնիցը, Ալեքսանդրեան եւ Երուսաղէմեան օրինակների անունների հետ համադրութեամբ, ցոյց են տալիս, որ գործ ունենք ոչ թէ հայկական, այլ յունական ձեռագրերի հետ: Մեր բերած յիշատակութեան [Մ 193, 169բ] (տե՛ս ծնթ. 364) իմաստն այն է, որ անյայտ ընդօրինակո-

ղը 1299 թուականից չատ առաջ Սողոմոնի չորս գրքերը համեմատել է յունական երեք օրինակների հետ, իսկ ԺԲ. մարգարէից գիրքն օրինակել է Եօթանասուներկու մեկնիչների թարգմանութիւնից (յիշատակութեան մէջ գրուած է ՀԲ.): Համեմատուած օրինակը հռչակուած էր որպէս լաւագոյն, վաղ ժամանակներից ստուգուած եւ հաստատուածը, ու դարձել էր չատ ձեռագրերի նախօրինակ:

Երուսաղէմեանը մենք պարտաւոր ենք համարել այն օրինակը, որը պատրաստել են Եւսեբիոսը՝ Պամփիլիոսի հետ միասին՝ հիմնուելով Որոգինէսի Վեցիջեանի վրայ: Այն Պաղեստինում դարձել է հանրաճանաչ եւ այնտեղ եղել է պաշտօնապէս ընդունուած բնագիր: Հերոնիմոսի յիշատակած Ալեքսանդրեանը պատրաստել է Իսիքիոսը՝ Վեցիջեանից անկախ, եւ պաշտօնական է ճանաչուել Եգիպտոսում, իսկ Քառիջեանը կազմուած էր Եօթանասնից, Ակիւղասի, Սիմաքոսի եւ Թեոդոտիոնի յունարէն թարգմանութիւններից, որոնք գրուած էին չորս սիւնակով՝ Որոգինէսի քննական նշաններով՝ բրգաձեւերով եւ աստղանիշերով: Յիշատակութեան մէջ որեւէ ակնարկ չկայ այն անձի վերաբերմամբ, ով նշանակութեամբ Որոգինէսի արածին համապատասխանող աշխատանք է արել հայերէն Աստուածաշնչի համար: Յիշատակութեան հաղորդման հաւաստիութեանը կասկածելը դժուար է, որովհետեւ օրինակներից գոնէ մէկի մասին մենք այլ վկայութիւն ունենք. Մխիթար Այրիվանեցին գիտէր երուսաղէմեան չորրորդ օրինակի մասին: Ըստ յիշատակագրութեան բառերի՝ համեմատութեան աշխատանքը կատարուել է հին ժամանակներում, բայց թէ որքա՞ն հին՝ մեզ է թողնւում գուշակելը: Եթէ մենք չցանկանանք յիշատակութեան բառերը հնարանք համարել, ապա կարող ենք մտածել միայն մի ժամանակի մասին, որի մասին խօսում են մեր գրական աղբիւրները՝ հինգերորդ դարի մասին: Սահակն ու Մեսրոպն արուած թարգմանութիւնից դժգոհ մնացին եւ աշակերտներին ուղարկեցին Ասորիք, Բիւզանդիա եւ Ալեքսանդրիա՝ լեզուներ սովորելու եւ լաւագոյն օրինակները ձեռք բերելու համար: Ե. դարում ճանաչուած էին հէնց յիշատակարանում նշուած յունական չորս օրինակները, որոնք էլ ձեռք բերեցին աշակերտները: Ուստի մեզ թւում է, որ ամբողջ յիշատակումը հիմնուած է հին եւ հաւաստի վկայութեան վրայ, եւ մենք պարտաւոր ենք լիովին կարեւոր նշանակութիւն տալ նրա հաղորդմանը, որ հաստատում է Կորիւնին ու Խորենացուն: Եւ դրանով, առաւել եւս, մենք կարող ենք այդ կարծիքը հիմնել ձեռագրերի ունեցած փաստերի վրայ:

Նախ՝ չատ, նոյնիսկ կիլիկեան, ձեռագրերում հանդիպում են քննական նշաններ՝ Որոգինէսի բրգաձեւներ եւ աստղանշաններ[524]*: Երկրորդ՝*

[524] Մխիթար Այրիվանեցին գիտէր այդ նշանների մասին, ինչպէս նաեւ այն, որ դրանք

այդ ձեռագրերից մի քանիսում, օրինակ՝ Ka, Ja, Ez, Jm, JL, Dj[1], AS, Kf, որոնցից ոչ մէկը կիլիկեան չէ, լուսանցներում կան Սիմաքոսի, Ակիւղասի եւ Թեոդոտիոնի առանձին բառերի կամ նախադասութիւնների տարընթերցումներ: Ամէն տարընթերցում բնագրի մէջ նշւում է բառի վրայ դրուած նշանով, որը կրկնւում է լուսանցում, որի կողքին դրուած է թարգմանչի կրճատ անունը՝ Սիմ., Ակ. եւ Թէո, եւ դրանցից յետոյ՝ տարընթերցումը: Քանի որ Թագաւորութեանց գրքերում դրանք համեմատաբար աւելի շատ են, քան միւս գրքերում, հետագայում հրատարակելու համար մենք դրանք ի մի ենք հաւաքել:

Վերը թուարկած բոլոր ձեռագրերը միասին պարունակում են տարընթերցումների այսպիսի քանակ. Թագաւորութեանց առաջին գրքի համար՝ 37 տարընթերցում, երկրորդի համար՝ 26, երրորդի համար՝ 19 եւ չորրորդի համար՝ 107: Նրանց մէջ կան նաեւ տարընթերցումներ, որոնք Զօհրապեանն արդէն նշել է: Մեր հաւաքած նիւթը համեմատել ենք Որոգինէսի պատառիկների հետ՝ Field-ի յայտնի գրքում, եւ նշել ենք բաւական մեծ թուով չեղումներ եւ նրա պատառիկներում չնշուած շատ տարընթերցումներ[525]*:*

Նոյնպիսի տարընթերցումներ են հանդիպում նաեւ Նոր Կտակարանի հնագոյն ձեռագրերում: Մենք դրանք հաւաքել ենք Աւետարանի հնագոյն օրինակներից. Մատթէոսի՝ 64 տարընթերցում, Մարկոսի՝ 38, Ղուկասի՝ 44 (ԽԱ.ն ունի 9 տուն՝ յունականի 29ի դիմաց, գլ. ԽԲ.՝ 11 տուն յունարէնի), Յովհաննէսի՝ 48: Որոշ դէպքերում լուսանցներում գրւում է հայերէնին համապատասխանող յունարէն բառը: Երբ համեմատում ենք տարբեր ձեռագրերի այդպիսի տարընթերցումները, նկատում ենք, որ դրանք չեն կարող պատկանել մի ժամանակաշրջանի, այլ նրանց վրայ աշխատել են տարբեր մարդիկ:

Անունով նշուած ձեռագրերը մի կողմից, լուսանցային ընթերցումներով ձեռագրերը միւս կողմից, մեզ ցոյց են տալիս, թէ ինչպէս համարեա սկզբից աստիճանաբար եւ գիտակցաբար ձեւափոխել են հին թարգմանութիւնը՝ առաջնորդուելով այն չակերտ եւ բարելաւելու ցանկութեամբ:

Կիլիկեցիները պէտք է ընտրէին այդպիսի օրինակներից մէկը, կարող է նաեւ պատահել, որ նրանց ընտրութիւնը պատահական է եղել: Երկաթագրից բոլորդիր արտագրուած ինչ որ մի ձեռագիր նրանց համար դարձել է գաղափար օրինակ: Բայց այսպէս թէ այնպէս, նրանց ձեռագրերում մենք հանդիպում ենք Աստուածաշնչի գրքերի գիտակից ընտրութիւն եւ նոյնպիսի վերաբերմունք բուն բնագրի նկատմամբ: Նրանց ընտրութեան

ձեռագրի մէջ մուծել է Որոգինէսը (տե՛ս վերը, ծնթ. 213):

525 Origini Hexaplarum quae supersunt, I. Oxonii, 1875, p. 467-699.

մէջ եղել է զգալի խմբագրական աշխատանք, որն արտայայտուել է հետեւեալում.

ա) Նրանք նախընտրել են Մնացորդաց գրքերի Ընկալեալ տարբերակը, իսկ հին տարբերակը դուրս են թողել, թէեւ այն աւելի տարածուած էր, ինչպէս ցոյց են տալիս հին չորս օրինակները եւ այն հանգամանքը, որ Մխիթար Այրիվանեցին ծանօթ լինելով Ընկալեալ տարբերակին՝ նախընտրել է հինը:

բ) Ձեւափոխել են Յայտնութեան հին թարգմանութիւնը, որից յետոյ, դժբախտաբար, այդ հինը կորսուել է:

գ) Աւետարանի՝ զանազան տարբերակների մէջ յայտնի հատուածները մէկընդմիշտ առել են Ընկալեալ բնագրի մէջ:

դ) Դուրս են նետել Հին եւ Նոր Կտակարանների լուսանցային տարընթերցումները. եւ եթէ այլ ձեռագրեր չլինէին, մենք նրանց մասին յստակ պատկերացում չէինք ունենայ:

Դա մեզ իրաւունք է տալիս հայկական վուլգատան[526] անուանել կիլիկեան բնագիր եւ այն չհամարել հնագոյն տարբերակի իսկական ներկայացուցիչը: Եւ այն ինչ մենք ասացինք մեր ներածութեան մէջ, հարկ ենք համարում մի անգամ եւս կրկնել. [Սուրբ Գրքի] հայկական տարբերակի ապագայ հրատարակիչը պարտաւոր է չրջանցել կիլիկեան դարաշրջանը եւ մեզ տրամադրել հնագոյն տարբերակի բնագիրը: Միայն այսպիսի բնագիրը կարող է յաւակնել գիտնականների լիակատար ուշադրութեանը եւ համարուել հինգերորդ դարի թարգմանիչների աշխատանք:*

[526*] Ամենուր գրել ենք «Ընկալեալ» բնագիր ձեւով:

6. ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ ԿԱՆՈՆԸ

Ե. դարից սկսելով, ընդհուպ մինչեւ ԺԴ. հարիւրամեակի ընթացքում ասորերէնից եւ յունարէնից հայոց արած թարգմանական մեծաքանակ երկերն ամէնից լաւ են վկայում նրանց կենդանի հոգեւոր հետաքրքրութեան եւ անջատ մեկուսիութիւնից խուսափելու ձգտման մասին, իսկ հայրենական գրողների ինքնուրոյն ստեղծագործութիւնները ապացուցում են իրենց ուժերի ներած չափով նրանց եռանդուն գործունէութիւնը՝ ընդհանուր մշակոյթի ասպարէզում: Եւ քանի որ ըստ ժամանակի ոգու իշխում էր եկեղեցական գրականութիւնը՝ Սուրբ Գրոց գերիշխող ազդեցութեամբ, հայերը նոյպէս իրենց գրական գործունէութիւնը սկսեցին Սուրբ Գրոց թարգմանութեամբ եւ երբեք չդադարեցրին նրա ուսումնասիրումը: Այդպիսի ուսումնասիրութիւնների արդիւնքը եղաւ Աստուածաշնչի գրքերի սեփական կանոնի կազմումը, այդ կանոնը համալրելու ձգտումը՝ նրա կազմի մէջ նոյնիսկ անկանոններ ներառելով, եւ ծանօթանալը բուն բնագրի հետ տարբեր մեկնութիւնների եւ քաղուածու լուծմունքների (Katenen) միջոցով: Եւ երբ մենք ի մօտոյ ենք դիտարկում այդպիսի բոլոր աշխատանքները, նկատում ենք, ամէն նախորդ դարաշրջանի՝ յաջորդի վրայ զգալի ազդեցութեան առկայութեամբ, ինքնուրոյն աշխատանքի մշտական ձգտումը եւ աւանդութիւնների խիստ կապանքներում չկաշկանդուելու ցանկութիւնը: Սուրբ Գրոց կանոնը դրա վառ օրինակն է: Կարող է թուալ, թէ նրա որոշակի նշանակութիւնը եկեղեցում, եկեղեցական պաշտամունքի մէջ որեւէ փոփոխութիւն չպէտք է թոյլ տար, այդուհանդերձ, նկատում ենք, որ արդէն Ե. հարիւրամեակում Սիոն կաթողիկոսը ստիպուած էր եկեղեցական վճռով մատնանշել կանոնական գրքերը, քանի որ, Թէոդորոս Քռթենաւորի վկայութեամբ՝ շատերը նորարարութիւն էին մտցրել՝ կանոնին տարբեր գրքեր աւելացնելով կամ պակասեցնելով: Բայց պաշտօնական վճիռը եւս ժամանակի ընթացքում իր ուժը չի պահպանել:

Որքան էլ հետաքրքիր էր վաղ շրջանում տարբեր գրքեր կանոնի մէջ ընդունելու ընթացքին հետեւելը, բայց մինչեւ ԺԳ. դարը դա մեզ ո՛չ լիովին է յաջողւում: Մենք արդէն ծանօթացել ենք ձեռագրերի կանոնին, այժմ կբերենք այնպիսի տեղեկութիւններ, որոնք մեզ յաջողւել է հաւաքել մեծ մասամբ դեռեւս չհրատարակուած նիւթերից:

Ա. *Հնագոյն կանոնը Կորիւնի մօտ է*[527]*, երբ նա առաջաբանում խօսում է Հին եւ Նոր Կտակարանների բովանդակութեան մասին, կամ երբ հա-*

[527] **Կորիւն**, Վարք Մաշտոցի, էջ 21 եւ 22, տե՛ս վերը՝ Ներածութիւն, Ա., ծնթ. 12:

ղորդում է, թէ ինչպիսի գրքեր են թարգմանել առաջին թարգմանիչները: Երկրորդ դէպքում նրա այլաբանական խօսքերից միայն գուշակողաբար կարելի է արձանագրել, թէ որ գրքերն է նա նկատի ունեցել. բայց առաջաբանում, այն էլ միայն Նոր Կտակարանի վերաբերմամբ, ամէն առանձին գրքի անուան ներքոյ նա հաղորդում է նրանց թուերը եւ յաջորդականութիւնը: Դրանից առաջ նա խօսում է Հին Կտակարանի մասին եւ անուանով յիշում է միայն Յոբի, Դանիէլ մարգարէի եւ Մովսէսի գրքերը: Ամբողջ Աստուածաշունչը նա անուանում է Աստուածագիր օրէնք[528]*, այն բաժանում է հնագոյն կամ «առաջնագոյն» եւ յաջորդող մասերի, որոնք նա անուն առ անուն թուարկում է. Աւետարան՝ դրա տակ նկատի ունենալով չորս Աւետարանը. Գործք Առաքելոց, Կաթուղիկէք Առաքելոցն եւ Սրբոյն Պաւղոսի չորեքտասան թուղթք*[529]*:*

Կորիւնի այս հնագոյն վկայութեամբ գտնում ենք հայոց եկեղեցու այն հիմնական կանոնը, որն անշեղօրէն պահպանուել է մինչեւ ԺԲ. դարը, երբ նրան աւելացուել է Յայտնութիւնը՝ ամենայն հաւանականութեամբ Յովհաննու Հանգիստ անկանոնի հետ: Կորիւնի կանոնը համապատասխանում է Կիւրեղի[530]*, Աթանասի*[531]*, Եպիփանի*[532] *եւ այլոց կանոնին, ի միջի այլոց այն հանդիպում է ասորական չատ ձեռագրերում*[533]*:*

Բ. *Կանոն Գրիգորի վարդապետի՝ որդւոյ Աբասայ, գտնւում է նրա՝ չատ առումներով հետաքրքրական Պատճառաց գրքում՝ Liber Causarum կամ ամբողջական վերնագրով՝ «Պատճառ լայն եւ նուրբ գրեանց, առեալ ի հարցն սրբոց եւ ի վարդապետաց եւ ի մի հաւաքեալ եւ հոգացեալ մեծ րաբունապետին Գրիգորի՝ որդւոյ Աբասայ»:*

Գրիգոր վարդապետի ամբողջ գիրքն ըստ հաւաքուած նիւթերի յաջորդականութեան մենք կարող ենք բաժանել երեք մասի՝ Հին Կտակարանի 24 գրքի, եկեղեցական գրողների գրքերի կամ իմաստասիրական երկերի՝ Փիլոնի, Գրիգոր Աստուածաբանի, Գրիգոր Նիւսացու, Սուրբ Բարսեղի, Եւագրի, Դիոնիսոսի, Դաւիթ փիլիսոփայի. եւ տարբեր հեղինակների

528 **Կորիւն**, Վարք Մաշտոցի, էջ 10:

529 **Կորիւն**, Վարք Մաշտոցի, էջ 11. «Տեսանել զոմանց ի սուրբ Աւետարանին եւ զոմանց ի գործս առաքելոցն՝ երանելոյն Ղուկասու մատենագրեալ. եւ իցեն որ ի կաթուղիկէս առաքելոցն առաւելագոյնս ճանաչին. այլ սրբոյն Պաւղոսի չորեքտասանեքումբք թղթովք պատմէ...»:

530 **Zahn**, Geschichte des Neutestamentlichen Kanons, II, 2, էջ 382, ծնթ. 2 եւ 179:

531 Նոյն տեղում, էջ 211:

532 Նոյն տեղում, էջ 226:

533 **Wright**, Catalog, Հմր 64: * Wright William, Catalogue of Syriac manuscripts in the British museum acquired since the year 1838, part 1, London, 1870, p. 41-42, Հմր 64 (այսուհետեւ՝ **Wright**, Catalog. բոլոր հատորները տե՛ս https://books.google.com/books?id=eM0-AQAAMAAJ&source=gbs_similarbooks - 5. 9. 2018):

Մեկնութիւնների՝ սուրբ առաքեալների ընթերցումների, եւ, վերջապէս՝ Նոր Կտակարանի 26 գրքերի: Քանի որ Գրիգորի աշխատութեան [հեղինակային] բնագիրը չի պահպանուել, ապա նրա քաղուածու աշխատանքի եղանակի մասին կարող ենք դատել ըստ այն հետքերի, որոնք մնացել են Խաչատուր Կեչառեցու ձեռագրում: Ամէն մեծ հատուածը կամ «պատճառը», որպէս վերնագիր կրում է հատուածը մեկնողի անունը, իսկ հատուածի փոքրութեան դէպքում հեղինակի անունը նշւում է կրճատ ձեւով՝ ոչ թէ վերնագրում, այլ լուսանցներում: Եթէ բուն հատուածները սկիզբ եւ վերջ չեն արտայայտում, այլ միացուած են միւս հատուածների հետ, իրարից անջատւում են կէտերով կամ կարճ կարմիր գծիկներով: Յաճախադէպ են հատուածները, որոնք ո՛չ հեղինակի անուն ունեն, ո՛չ էլ բաժանման նշաններ, չնայելով նրանց ծաւալին, օրինակ՝ Հերոնիմոսի նախաբանը հեղինակի անունը չունի. կարող է պատահել հէնց Գրիգորն է դրանք այդպէս թողել, սակայն աւելի հաւանական է, որ դա տեղի է ունեցել արտագրողների մեղքով:

Գրիգորն իր գրքի համար օգտուել է բացառապէս հայերէն բնագրերից, եւ այնպիսիներից, որոնք չարադրման եւ թարգմանութեան ժամանակով ուշերորդ կամ իններորդ դարից առաջ չեն: Սուրբ Գրքի համար նա հաւաքել է հատուածներ հետեւեալ հեղինակներից. Հնգամատեանի համար՝ Կիւրեղից, Բարսեղից եւ Ապողինարից, Յեսու Նաւէի գրքի համար՝ «Եղիշէ հայոց վարդապետ»ից եւ Եփրեմ Ասորուց, Դատաւորաց եւ Մնացորդաց գրքերի համար՝ Եփրեմից, Թագաւորութեանց համար բերել է Prolugus galeatus [Նախադրութիւն սաղաւարտեալ], Սաղմոսների համար՝ Աթանասից, Դաւիթ Իմաստասէրից եւ Եպիփան Կիպրացուց, Ժողովողի եւ Երգ Երգոցի համար՝ Գրիգոր Նիւսացուց, Յոբի գրքի համար՝ Հիւսիքոսից, Եփրեմից, Ստեփանոսից, Եսայի մարգարէի համար՝ Յովհան Ոսկեբերանից, Եփրեմից, Կր. (կրճատ գրուած է կր, որը մենք չկարողացանք կռահել[534]), Ստեփանոս իմաստասէրից եւ Որոգինէսից: Նոր Կտակարանի գրքերի համար մեկնութիւնները պատկանում են հետեւեալ հեղինակներին. Յովհաննու Աւետարանի համար (այն ղրուած է բոլորից առաջ) Յովհան Ոսկեբերանին եւ մի քանի հատուած առանց հեղինակների անունների, Պօղոսի ԺԴ. թղթերի համար՝ Եւթաղին, Յովհան Ոսկեբերանին, Գէորգ Կաղին, Եփրեմին («որն ունի առ Կորնթացիս Գ. թղթի մեկնութիւնը), իսկ առ Եբրայեցիս թղթի համար բերւում են հատուածներ չատ հեղինակների մեկնութիւններից՝ Եւթաղի, Կիւրղի, Որոգինէսի, Եփրեմի եւ Յովհան Ոսկեբերանի, Գործք ս. առաքելոցի համար՝ Եփրեմի եւ Յովհան Ոսկեբերանի, Եօթ թղթոց համար՝ Եւթաղից:*

[534*] Գուցէ ձկատի ունի՝ «Կիւրեղ» ասո՞ւնը:

Գրիգորի գիրքը՝ էջմիածնի Հ՟ր 1650 [Մ 1879] ձեռագիրը, դեռեւս հրատարակուած չէ. նրանից արուած մի պատճէն գտնուում է Վիեննայի մխիթարեանների մատենադարանում, եւ նրա ցուցակի կազմող Հ. Տաշեանն ընդունելով նրա մեծ նշանակութիւնը, այն նկարագրել է չատ մանրամասն՝ ո՛չ պակաս քան 30 մեծադիր էջի վրայ[535]*: Ջնայելով Տաշեանի այդպիսի մանրամասն նկարագրութեանը, մենք նոյնպէս մեզ թոյլ ենք տալիս կանգ առնել Գրիգոր վարդապետի գրքի վրայ, քանի որ այն չօշափում եւ բացատրում է ոչ միայն Աստուածաշնչին վերաբերող հարցեր, այլ եւ եկեղեցական գրականութեան այնպիսի հարցեր, որոնց վրայ հայ գրականութեան մէջ առայժմ ուշադրութիւն չի դարձուել:*

Էջմիածնի ձեռագիրը գրուած է հաստ մոմապատ թղթի վրայ՝ խոշոր բոլորգրով, որն իր բնոյթով յիշեցնում է երկաթագիր գրչութիւնը: Ձեռագրում պակասում են վերջին թերթերը, մի քանիսն էլ՝ մէջտեղից, բուն բնագրից: Գրչի անունը եւ գրչութեան ժամանակն անյայտ են, սակայն ըստ գրի բնոյթի, թղթի որակի եւ յատկապէս տիրոջ անուան, որը ոչ այլ ոք է, եթէ ոչ ԺԳ-ԺԴ. դարերում իր ժողովրդական լեզուով գրուած բանաստեղծութիւններով փառաբանուած Խաչատուր Կեչառեցին[536]*. այն գրուած է ԺԳ. դարում: Քանի որ ժամանակի ընթացքում ձեռագիրը մաշուել-վնասուել է, զրկուել է կազմից եւ բուն շարադրանքի աննշան մասերից, ուստի նրա անյայտ տէրն այն տուել է կրկին կազմելու, որոշ մաքուր թերթեր է աւելացրել լրացնելու համար, ինչը իրեն չի յաջողուել անել: Երբ 1725 թուականին գրուեց Վիեննայի կրկնօրինակը, այն ժամանակ արդէն մեր ձեռագիրը գտնուում էր այդպիսի վնասուած վիճակում: Այդ պատճէնը ըստ Տաշեանի ենթադրութեան գրուել է Կոստանդնուպոլսում, հետեւաբար ձեռագիրն էջմիածնի մատենադարան է եկել այդ քաղաքից: Կրկնօրինակի արտագրողն իրեն թոյլ է տուել նիւթի դասաւորութեան մէջ կատարել որոշ փոփոխութիւններ ոչ միայն Աստուածաշնչի գրքերի վերաբերմամբ, այլեւ՝ իմաստասիրական երկասիրութիւնների. օրինակ՝ Յոբի գրքի պատճառը տեղադրել է Սաղմոսների պատճառներից առաջ, կամ էլ Գործք առաքելոցի [պատճառը] գրել է Աւետարանից առաջ, իսկ Դիոնիսոսի գրքի պատճառին իմաստասիրական երկասիրութիւնների գրքերի չարքում տուել է երրորդ տեղը:*

---

[535] **Տաշեան**, Ցուցակ, էջ 213-243 եւ գերմաներէն մասը՝ էջ 32-35: Ձեռագիրը նրանց մօտ ունի 47 համարը: Յ. Տաշեանը նկարագրութեան վերջում ասում է, թէ՝ յայտնի չէ որտեղ է գտնուում մխիթարեանների ձեռագիր պատճէնի հիմնօրինակը. հաւանաբար հոգեւորական գիտնականի ուշադրութիւնից վրիպել է Դանիէլ վարդապետի ձեռագրացուցակում Էջմիածնի ձեռագրի նկարագրութիւնը (Դանիէլի ցուցակ, էջ 178, Հ՟ր 1608 [Մ 1879]):

[536] Նրա մասին՝ **Զարբհ.**, Պատմ. հայ նոր դպր., էջ 248. եւ Ալիշան, Այրարատ, էջ 267:

Գրիգոր վարդապետի մատեանը, որ ըստ Գաթրճեանի կարծիքի՝ «բովանդակ հայ մատենագրութեան մէջ եզակի երեւոյթ մըն է»[537]*, կազմուած է այն գրականութեան ծրագրով եւ ոճով, որն առաջացել է Բիւզանդիայում՝ Ե. հարիւրամեակի երկրորդ կէսից եւ յայտնի է լուծմունքային գրականութիւն*[538] *անունով, այսինքն՝ այն նախորդ հարիւրամեակների մեծանուն գրողների մեկնութիւնների հատուածների ընտրութիւն է: Արդեօք Գրիգորից առաջ հայերին հասու եւ կիրառելի՞ էր այդպիսի գրականութիւնը, եւ որքանով է հետագայում այն արմատաւորուել եւ ծաղկել, չատ հետաքրքիր եւ ուշադրութեան արժանի հարց է, բայց առայժմ մենք պէտք է այն մի կողմ թողնենք եւ բաւարարուենք նշելով, որ Գրիգորի մօտ մենք արդէն տեսնում ենք գիտակցօրէն մշակուած եւ օրինակելի ձեւով կատարուած աշխատանք: Այդ աշխատանքի նպատակը եղել է հետեւեալը. եկեղեցու մեծ հայրերի եւ հին ժամանակների յարգի գրողների կարծիքների ու եզրակացութիւնների բառացի քաղուածքներով տալ եկեղեցական գրականութեան ակնարկ:*

Ինչպէս պարզւում է Գրիգորի եւ այլ մատենագիրների աշխատանքներից, Սուրբ Գրքի եւ եկեղեցական գրքերի՝ ըստ խմբերի դասակարգումը միջնադարի հայոց մէջ ունեցել է իր գործնական կիրառութիւնը եւ հետագայ զարգացումը: Այդպիսի խմբերի համար Գրիգորն օգտագործում է երկու եզր՝ լայն եւ նուրբ[539]*, ինչը մենք ըստ իմաստի եւ Պատկանեանի օրինակով թարգմանում ենք սրբազան եւ իմաստասիրական գրքեր: Այդ եզրերը գրքերի ճիշտ այդպիսի բաժանումներով հանդիպում ենք Սարկաւագ վարդապետի «Կարգադրութիւնք Գրոց Սրբոց»ում եւ մեր նկարագրած՝ էջմիածնի MN ձեռագրի երկու յիշատակագրութիւններում: Սարկաւագը «Կարգադրութիւնք»ի մէջ առաջին տեղը տալիս է հետեւեալ գրքերին. ա) Նոր Կտակարանք*[540]*, նրա չարքին դասելով եկեղեցական-ծիսական գրքերը, բ) Հին Կտակարանք, որի կազմի մէջ մտնում են բազմաթիւ Անկանոն գրքեր*[541]*, եւ գ) իմաստասիրական գրքեր՝ Նուրբքն կամ Նուրբ գիրք, որի կազմի մէջ մտնում են Գրիգորի ունեցած բոլոր երկերը եւ էլի չատ ուրիշ-*

[537] Սրբազան պատարագամատոյցք հայոց. Թարգմանութիւնք պատարագաց Յուլնաց, Ասորւոց եւ Լատինացւոց, հանդերձ քննութեամբք, նախագիտելեօք եւ ծանօթութեամբք ի **Յովսեփայ վ. Գաթրճեան**՝ ի Մխիթ. ուխտէն, Հրատարակեալ հանդերձ յաւելուածովք ի. **Հ. Յակովբոսէ Վ. Տաշեան**՝ ի Մխիթ. ուխտէն, Վիեննա, տպ. Մխիթարեան, 1897, էջ 178:

[538] **Bardenhewer**, Patrologie, Freiburg im Breisgau, 1901, էջ 466 (այսուհետեւ՝ Bardenhewer, Patrologie):

[539] Նուրբ բառն այդ իմաստով կիրառւում է Մխիթարի ժամանակագրութեան մէջ. տե՛ս վերը՝ ծնթ. *232*:

[540] Վերը նկարագրութիւն MA ձեռագրի՝ ծնթ. *202-215*:

[541] MA ձեռագիր՝ ծնթ. *212-234*:

ներ, որոնք Գրիգորը չգիտէր[542]: Աստուածաշնչի MN ձեռագրի գրառումներում դասակարգումն առաւել մանրամասն եւ որոշակի է. նրանց մէջ երկուսի փոխարէն օտագործուած է չորս եզր. ա) Գիրք Աստուածաշունչ, բ) մեկնչեր, գ) ընրեր, եւ դ) վարդապետական գիրք[543]: Թէեւ այս բաժանումներից մենք չենք կարող վստահօրէն ասել, թէ գրառումների գրիչ Մովսէս վարդապետի հասկացողութեամբ ո՞ր գրքերն են եղել մեկնութիւններ կամ աստուածաբանական, բայց հազիւ թէ կասկածի ենթակայ լինի, որ ընդհանուր առմամբ Մովսէսը եւս նկատի է ունեցել այն գրքերը, որոնք անուններով թուարկել են Գիրգորը եւ Սարկաւագը: Գրքերի այս երեք թուարկումներից առնուազն մէկը Թ., երկրորդը՝ ԺԱ., երրորդը՝ ԺԳ. դարերի են. երեւում է, որ Սուրբ Գրքի հետազօտումն ընթացել է համաչափ՝ մի անգամ հաստատուած նախագծով եւ ծրագրով: Գրիգոր վարդապետը ցանկացել է եկեղեցական երկասիրութիւնների մասին գիրք գրել, եւ ձեռքի տակ ունեցել է բոլոր նիւթերը, Մովսէս գրիչը Սեպուհ լեռան Սուրբ Գրիգորի վանքում կարճ ժամանակում հիմնադրեց մատենադարան՝ ժամանակի իմացութիւններին համապատասխանող բոլոր ձեռագրերով. եւ վերջապէս՝ Մխիթար Այրիվանեցին, ցանկանալով ունենալ մի ընդհանուր ձեռագիր, որ ունենար Սարկաւագի ցուցակում նշուած բոլոր գրքերը, իր ցանկութիւնն իրականացրեց 170 օրուայ ընթացքում, քանի որ, կարելի է ենթադրել, արտագրութեան համար նա օրինակ փնտրելու կարիք չունեցաւ՝ դրանցից վանքի մատենադարանում չատ կային: Այս ամէնը վկայում է միջնադարում հայոց մէջ որոշակի ծրագրով վանական դպրոցների գոյութիւնը, որոնցում Սարկաւագի ցուցակի նմանութեամբ կազմուած գրացուցակներն օրինակելի են համարուել: Այդ վանական դպրոցները, ըստ ծրագրի՝ ձգտում էին իրենց մատենադարանները համալրել ձեռագրերով, եւ մէկմէկու աջակցում էին՝ արտագրելու կամ ուսումնասիրելու համար ձեռագրեր տրամադրելով: Հետեւաբար Սարկաւագի ցուցակը բացառիկ երեւոյթ չէր, այլ ունեցել է հիմք օրինակ, ինչպէս ինքն է օրինակ ծառայել Մխիթարի համար: Գրիգորի ժամանակ դեռեւս խստօրէն ենթարկւում էին Սուրբ Գրքի՝ սահմանուած եկեղեցական կանոնին, իսկ Սարկաւագ վարդապետի օրօք արդէն որեւէ սահմանափակում չկար, գրական երեւակայութիւնները գլուխ են բարձրացնում, եւ միայն նրանք են ուղղութիւն տալիս: Սարկաւագն առանց քաշուելու Ծննդոց գրքից յետոյ տեղադրել է Ենովքի անկանոնը, եւ առաքեալների թղթերից յետոյ՝ Յովհաննու Հանդիստը եւ Յայտնութիւնը:

Որպէսզի յստակեցնենք հասկացութիւնների այն փոփոխութիւնը, որ

[542] MA ձեռագիր՝ ծՁթ. 232-243:

[543] Վերը՝ ձեռագիր MN՝ ծՁթ. 254:

տեղի էր ունենում ժամանակի ընթացքում, առաջին հերթին փորձենք պարզել, թէ ե՛րբ է ապրել Գրիգոր վարդապետը: Նրա գրքում, ինչպէս ասուել է, հանդիպում ենք մինչեւ Զ. հարիւրամեակի հեղինակների երկերի հատուածներ, եւ դրանք բոլորը վերցուած են հայերէն թարգմանութիւններից, որոնց ժամանակը հասնում է մինչեւ Ը. դար, բացառութեամբ Դիոնիսոս Արիսպագացու մասին մի հատուածից: Այդ հատուածի մասին Դիոնիսոսի կենսագրութեան սկզբում երկու գրառում կայ. դրանցից մէկի մէջ ասւում է, որ այն թարգմանել է Յովհաննէս բժիշկը՝ 889 թուականին, իսկ միւսում՝ 869 թուականին[544]*: Եթէ ենթադրենք, թէ Գրիգորն օգտուել է Յովհաննէս բժշկի թարգմանութիւնից, ապա մենք պէտք է նրա երկի ծայրագոյն սահմանը համարենք Թ. դարը*[545]*: Սակայն մենք գիտենք, որ Դիոնիսոսի կենսագրութիւնը թարգմանել է նաեւ մի ուրիշ հեղինակ՝ Ստեփաննոս Սիւնեցի եպիսկոպոսը*[546]*, որը սպանուել է 735 թուականին եւ որը նշուած երկասիրութիւնը թարգմանել է աւելի վաղ՝ Կոստանդնուպոլսում*[547]*: Խնդիրը կարելի է հեշտութեամբ լուծել՝ երկու թարգմանութիւնները Գրիգորի հատուածի հետ համեմատելով, եւ եթէ պարզուի, որ Գրիգորն ունեցել է Ստեփանոսի թարգմանութիւնը, ուստի, ըստ իս, հնարաւոր կլինի ոչ միայն որոշել ժամանակը, այլ եւ ճշտել Գրիգոր վարդապետի անձը:*

Մի այլ տեղում, մեր հրատարակուած Սոկրատ Սքոլաստիկոսի Եկեղեցական պատմութեան առաջաբանում, ցոյց ենք տուել, որ Հռոմէացի Սեղբեստրոս եպիսկոպոսի վարքը 678 թուականին հայերէն է թարգմանել Գրիգոր Ջորափորեցին՝ Աբասի որդին[548]*, ըստ գրութեան՝ Աբասուն Գրիգորի Ջորոփորեցւոյ:*

Այժմ, երբ հանդիպում է նոր երկասիրութիւն, որի հեղինակի անունը Սեղբեստրոսի վարքի թարգմանչի անուան հետ նոյնական է, բնականաբար հարց է առաջանում՝ չի՞ կարելի արդեօք նրանց նոյնականացնել: Ժամանակագրութիւնը դրան չի խանգարում. Գրիգորը Սեղբեստրոսի վարքը թարգմանել է 678 թուականին, իսկ Դիոնիսոսի վարքի Ստեփաննոս եպիսկոպոսի արած թարգմանութիւնը վերաբերում է 730 թուականին, ո՛չ ուշ: Եթէ ենթադրենք, թէ Գրիգորն իր առաջին թարգմանութիւնն արել է այն ժամանակ, երբ մօտաւորապէս 25-30 տարեկան էր,

[544] Երկու գրառումն էլ հաղորդում է **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 383. եւ նրանից՝ Տաշեան, Ցուցակ, էջ 224-225:

[545] Այսպիսին է Գաթրճեանի կարծիքը, Սրբազան Պատարագամատոյցք Հայոց, էջ 178 եւ **Տաշեան**, Ցուցակ, էջ 224:

[546] **Տաշեան**, Ցուցակ, էջ 225:

[547] **Զարբհ.**, Պատմ. հայ դպր., 1897, էջ 492, 496. **Ղ. Ալիշան**, Սիսուան, էջ 127:

[548] **Սոկրատայ Սքոլաստիկոսի** Եկեղեցական պատմութիւն, Վաղարշապատ, 1897, Առաջաբան, էջ ԺԷ.:

ապա նա իր կեանքի 60-70 տարեկան ժամանակ հիանալի ձեւով կարող էր օգտուել Ստեփանոսի թարգմանութիւնից: Այսպիսի ենթադրութիւնը հաստատւում է մի այլ դատողութեամբ եւս: Գրիգոր վարդապետի հինկտակարանային կանոնը ճշգրիտ վերարտադրութիւնն է Սիոն կաթողիկոսի կանոնի, որ նա հաստատել է Է. հարիւրամեակում, որն այդպիսով իր գրքի ստեղծման ժամանակ ազդեցութիւն է ունեցել Գրիգորի վրայ[549]*: Բայց չնայած այդպիսի փաստարկների եւ որքան էլ ցանկալի է Պատճառաց գրքի (Liber Causarum) հեղինակի անձի եւ ժամանակի ճշգրիտ որոշումը, վերը բերուած մեր դատողութիւնները մեզ դեռեւս իրաւունք չեն տալիս վճռականօրէն պնդելու այդ ենթադրութիւնը, եւ մենք դեռեւս հաւատարիմ terminus ad quem-ին, ճիշտ ենք համարում Թ. դարը: Իսկ Թ. դարը Գրիգորի գրքի [ստեղծման] վերջին ժամկէտն ենք համարում այն պատճառով, որ եթէ նա ապրէր աւելի ուշ շրջանում, ապա կօգտուէր Թ. դարից ուշ գրուած կամ թարգմանուած երկերից*[550*]*:*

Բացի տարբեր նախադրութիւններից եւ գլխացանկերից, մենք տեսանք որ Հին Կտակարանի հայերէն ձեռագրերում գտնուում են Եպիփան Կիպրացու եւ Դաւիթ իմաստասէրի Սաղմոսների մեկնութիւնների մեծ հատուածներ, Հերոնիմոսի նախաբանը ամբողջ Աստուածաշնչի մասին, որ տեղադրուած են Թագաւորութեան գրքերից առաջ եւ Պատճառաց գրքում (Liber Causarum) հանդիպում են որպէս «պատճառք»՝ նշուած գրքերի, այսինքն՝ Սաղմոսների եւ Թագաւորութեանց: Դա մեզ առիթ է տուել մտածելու, որ ընդհանրապէս հնարաւոր է՝ Գրիգորի գիրքը աղբիւր է ծառայել Հին Կտակարանի նախադրութիւնները կազմողի համար: Ըստ այդմ էլ Հին եւ Նոր Կտակարանների գրքերի բոլոր «պատճառները» մենք ուշադիր համեմատել ենք [Սուրբ Գրքի] ձեռագրերի նախադրութիւնների հետ, եւ չնայած շատ համապատասխանութիւններ ենք գտել Հին Կտակարանի նախադրութիւնների եւ Գրիգորի «պատճառների» հիմնական իմաստների մէջ, սակայն բացառութեամբ մի «պատճառի», միւսները Հին Կտակարանի նախադրութիւնների ուղղակի աղբիւրը համարուել չեն կարող: Եւ դա Երեմիա մարգարէի «պատճառն» է, որ վերցուած է Յովհան Ոսկեբերանի մեկնութիւնից[551]*:*

---

549 Պարտաւի եկեղեցական ժողովը գումարուել է ճիշտ այն տարում, երբ թարգմանուել է Սեղբեստրոսի վարքը, այսինքն՝ 768 թուականին, ինչպէս ցոյց է տրուած ճետեւեալ գրքում՝ Աբէլ եպիսկոպոս [Մխիթարեան], Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ, հանդերձ կանոնագրութեամբք, ի պէտս ժառանգաւորաց, Վաղարշապատ, 1874, էջ 99 եւ 20:

550* Պատճառաց գրքի կազմող Գրիգոր Աբասեանի մահուան թուականը 1220-ն է. մանրամասները տե՛ս վերը՝ ծնթ 460:

551 Յովհան Ոսկեբերանի ամբողջական մեկնութիւնը հին թարգմանութեամբ գոյութիւն

Ինչ վերաբերւում է Նոր Կտակարանի նախադրութիւններին, ապա խնդիրն այսպէս է. Աւետարանի, Պօղոսի թղթերի եւ սուրբ առաքեալների Գործոց համար ամէն անգամ տարբեր հեղինակների երկասիրութիւններից բերուած են մի քանի հատուածներ, իսկ Առաքելոց եօթ թղթերի համար տրուած են այն նախադրութիւնները (=պատճառներ), որոնք վերագրւում են Եւթաղին եւ որոնք տպագրուած են Զօհրապեանի եւ 1860 թուականի հրատարակութիւններում: Մենք այստեղ ունենք բաւական հետաքրքիր նիւթ, որը մեզ համոզում է, թէ որքան ճշգրիտ են եղել վաղ չրջանում թարգմանուած այդպիսի բնագրերը, եւ որքան անճիշտ, ուղղակի ողորմելի են եղել վերջին ժամանակների թարգմանութիւնները: Հայերէն իմացողների համար ամբողջութեամբ վերատպում ենք դրանք. եւ սա կլինի Նորայր Բիւզանդացու ոչ իրաւացի դատողութեան լաւագոյն պատասխանը: Նա կարծել է, թէ նախադրութիւններն այն տեսքով, որով դրանք տպագրուած են Աստուածաշնչի երկու հրատարակութիւններում, թարգմանուել են Ե. դարում: Նոյն բնագրի այս երկու բացարձակ տարբեր թարգմանութիւնները, մեր կարծիքով, պէտք է ծառայեն որպէս ապացոյց այն բանի, որ այդպիսի բացատրական մասերը, եթէ անգամ թարգմանուած են եղել առաջին հարիւրամեակներում, Աստուածաշնչի բնագրի անբաժանելի մաս չեն կազմել, որովհետեւ Գրիգոր վարդապետի բնագիրը եւ այն, որը գտնւում է Աստուածաշնչի շատ օրինակներում, կարող էին միայն տարընթերցումներով տարբերուել, այլ ոչ թէ իրարից բացարձակ անկախ երկու թարգմանութիւններ լինել: Պէտք է ենթադրել, որ Գրիգոր վարդապետը մեր այստեղ բերած բնագիրը վերցրել է մեկնութիւնների որեւէ դրքից, իսկ ԺԲ., ԺԳ. դարերի անյայտ ընդօրինակողը կամ ինքն է կրկին թարգմանել Աստուածաշնչի ձեռագրերում առկայ բնագիրը կամ էլ պատրաստի թարգմանութիւն է գտել եւ արտագրել իր օրինակում, ինչպէս Հին Կտակարանի նախաբանների հետ այդ արել են գրիչներ Մովսէսը (ձեռ. MN) եւ Թորոս Ռուբինենցը (ձեռ. O[2]):

է ունեցել դեռեւս տասներորդ եւ տասնմէկերորդ դարերում (**Զարբհ.**, Պատմ. հայ դպր., 1897, էջ 554 եւ 697), իսկ ԺԲ. դարում միակ պահպանուած օրինակը խիստ վնասուած է եղել: Այդ պատճառով էլ շատերը Մխիթար Գօշին խնդրել են լրացնել եւ վերափոխել ինացած եւ վնասուած ձեռագիրը: Մխիթարն ասում է. «զի թէպէտ եւ սուրբ հայրն Յոհաննու Ոսկեբերանի առձեռն կայր մեկնութիւն այսմ մարգարէութեան, սակայն յաւրինակէ եւ ի գրողէ յոյժ ապականեալ եւ հատակոտոր լեալ ի բազում տեղիս: Ուստի եւ յաճախութիւն բանին սրբոյն տաղտկալի եւ շաղփաղփ եղեալ՝ ի զըզուանս գայր ընթերցողաց եւ դժուարառելի վարդապետաց, յաղագս որոյ չափաւորել եւ յղկել ախորժեցաք» (իր Նախաբանը Էջմիածնի մատենադարանի Ձ[մր] 1253 [Մ 1216, 218աբ] ձեռագրի մէջ): Հին Կտակարանի նախադրութիւնների կազմողն օգտուել է Մխիթարի ձեռափոխած այդ բնագրից, ինչպէս մեզ համոզեց Աստուածշնչի նախաբանի համեմատութիւնը Գրիգորի հատուածի եւ Գօշի ձեռագրի հետ: Զարբհանալեանը (նշուած տեղում) Երեմիայի մարգարէութեան մեկնութիւնը սխալմամբ համարում է Մխիթար Գօշի ինքնուրոյն աշխատութիւն:

ՆԱԽԱԴՐՈՒԹԻԻՆ ԹՂԹՈՑՆ ՅԱԿՈԲԱ ԵՒ ՆՈՐԻՆ ՊԱՏՃԱՌ

Արդարև Յակոբոս, որ էր ըստ մարմնոյ եղբայր Տեառն մերոյ, գրէ զայս թուղթս առ ևոսա, որք յերկոտասան ազգացն հաւատացեալք էին ի Տէր մեր Յիսուս Քրիստոս, եւ սփռեալք էին ի գաւառս հրէից եւ հեթանոսաց: Քանզի եպիսկոպոս գոլով Երուսաղէմի, եւ թլփատութեանն առաքեալ, իրաւացի էր հոգալ վասն ևոցա, եւ խրատել ի յառաջադիմութիւն հաւատոցն, որ եւ գրէ ոչ զայս առ ևոսա վարկպարագի թուղթ. այլ մխիթարական, եւ վարդապետական, եւ յանդիմանական: Յորում նախ դնէ զգանազան իրաց փորձանացն պատահումն, թէ որք ի ևոցանէ յԱստուածոյ ազդին եւ թէ ո՞յք՝ որ միայն ի սրտից մարդկան. առ որով թէ ոչ պարտին միայն բանիւ, այլ եւ գործով քան զհաւատսն պատուիրեալ ցուցանէ՛: Պատուիրէ եւ մեծատանցն, զի մի՛ նախապատուեսցին յեկեղեցին քան զաղքատն եւ առաւելպէս անգոսնել, զորս ամբարտաւանութեամբ կշտամբեն զևոսին: Այլ եւ զրկեալսն մխիթարէ. աւրինակ ի մէջ ածեալ զհամբերութիւնն Յոբայ. որպէս զի երկայնամիտ լիցին մինչ ի գալուստ դատաւորին: Խրատէ եւ զերիցունսն ի միասին գալ եւ զտկարացեալսն ի մեղս փութալ յուղղութիւն ածել: Եւ մեծամեծ վարձս սակս այսր ևոցին խոստացեալ եւ աստանաւր աւարտէ զթուղթս: Բայց պարտ է գիտել, զի ոմանք դաւաճանեն զայս թուղթ, եւ զայն որ ի Յուդայէն, ևոյն եւ զ Պետրոսի երկրո՛րդն, զորոյ պատմէ Եւսեբիոս յեկեղեցական պատմութեանն: Այլ մեք տեսաք զսոսա ընկալեալս յամենեցունց նախ քան զմեզ հարցն, եւ կարգեալս յեկեղեցիս ընդ թուղթսն կաթուղիկեայս: Որով եւ սկսանի՛. Յակոբոս Աստուածոյ եւ Տեառն Յիսուսի:

ՆԱԽԱԴՐՈՒԹԻԻՆ ԱՌԱՋԻՆ ԹՂԹՈՑՆ ՊԵՏՐՈՍԻ

Պետրոս ինքն խնդրեաց զայս թուղթս գրել առ որ ի սփիւռս հրէայք հաւատացեալք էին, խրատ վարդապետական. զի ոչ սակաւք էին ի յերբայեցւոցն ցրուեալք յայնժամ ի մէջ հեթանոսաց, յորոց եւ հաւատացին բազումք յԱւետարանն: Արդ, զի անդրդուելի ի ևոյն մնասցեն, կարեւոր համարեցաւ երանելիս թղթովս զևոսա հաստատել: Եւ նախ դնէ զառ ի Քրիստոս հաւատոցս ի մարգարէիցն կանխաւ պատմել, զի ևոքա գուշակեցին զայժմու եղեալ փրկութիւնս հրէից եւ հեթանոսաց, որոց ծածուկ ի հրեշտակաց՝ խորհուրդն ևոցա յայտնեցաւ: Ետ որոյ յորդորէ արժանապէս կոչողին ստանալ բարեպաշտութիւն, խորհրդակից լինի եւ զթագաւորս պատուել, եւ կանանց արանց համախոհ լինել պատուիրէ. խրատէ սակաւիկ մի եւ ըստ բնական սովորութեան ունել զպարկեշտութիւն: Յուցանէ թէ ի Տեառնէ փրկական քարոզութիւնն, եւ ի դժոխս քարոզեցաւ ի յարութեանն: Այլ զի եւ կանխաւ ևնջեցելոցն առաջիկայ յարութիւն եւ դատաստան մարմնո(ց), որք մնան շնորհի յարութեանն: Նշանակէ զկատարումն ամենայնի թէ մերձեալ է. յաղագս որոյ պարտին պատրաստական լինել, թէ որպէս առաջի թագաւորին տացեն պատասխանի յաւուրս մեծի: Զոր եւ սկսեալ ասէ այսպէս. Պետրոս առաքեալ:

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ԹՂԹՈՅՆ ՊԵՏՐՈՍԻ ԵՐԿՐՈՐԴ

Գրէ դարձեալ առյն ինքն Պետրոս եւ զայս թուղթս, եւ առաքէ վերստին առ հաւատացեալսն: Զոր յիշատակեաց անուամբ յառաջի թղթին՝ ազդումն ընկալեալ զփոխումն իւր յարագ յաշխարհէս, փութացաւ գրել զայս առցին յիշատակ վարդապետութեանն զոր ուսան: Ի սկզբանն զհաւատս զոր կանխաւ գուշակեցին մարգարէքն յայտ առնէ: Եւ զի մարգարէութիւնք որ զՓրկչին, ոչ իբրեւ զվայրապար բանս մարդկան, այլ որպէս յԱստուծոյ ազդեցաւ: Յետ այսր պատուէր տայ՝ ոչ տալ խաբէբայիցն տեղի, որոց հաղորդութիւնն ձգէ զնոսա ի կործանումն հրեշտակացն յանցուցելոց: Կանխաւ գուշակէ եւ զաւուրսն, յորս լինին մոլորեցուցիչքն, որք ի պատրելն զմարդիկ ասիցեն. ունայն է պատմութիւն միւսանգամ գալստեանն Քրիստոսի: Զի միշտ խոստանան գալ, եւ աճա ոչ ուրեք երեւին: Յայսպիսեացս զգուշացուցանէ զամենեսեան աւուրն Տեառն բարիոք գործովք, որ արագ եւ զանխլաբար ի վերայ հասանէ: Հրամայ տայ եւ զթուղթսն Պաւղոսի առաքելոյ սիրով ընդունել, եւ անարգել զորս անգործեն զնոսա: Այլ եւ ամենայն աստուածաշունչ գրոց պատուիրէ քննողս լինել. որով յայս աւարտեալ, սկսանի այսպէս. Շմաւոն Պետրոս, ծառայ եւ առաքեալ:

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ ԹՂԹՈՅՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ

Յովհաննէս, որ զԱւետարանն գրեաց, առյն առաքէ թուղթ առ հաւատացեալսն Տեառն, յիշատակ աւանդեցելոյց ի նոսա կանխաւ քարոզութեանն. որպէս շնորհիւ մկրտութեանն՝ զլուր բանին ընկալեալք, ոչ յեղգասցին պտղաբերել զգործս առաքինութեան: Եւ իբր առ կատարեալ անձինս, վայելչական եւ նուրբ շաւղաւք վարէ առ նոսա զընթաց գրոյս: Նախ որպէս յԱւետարանն՝ աստուածաբանէ եւ աստ զմշտնջենաւորութիւն բանին զսկիզբն թղթոյս վերադրեալ, որ երեւեցաւ այժմ կցորդս առնել զմարդիկ աստուածութեանն իւրոյ: Եւ զայս շնորհաց հաղորդութիւն ունել վկայէ հաւատացելոցն ըստ հաւատոցն որ ի Տէր: Սակայն թուղթս յաւելաւ ի նոսա, զի եւ վարուք պայծառացեալք ընդ լոյսն աստուածմաքրութեանն լուսով անքակ միասցին: Առ այս ննկատեալք՝ զի թէ ըստ բնութեանն տկարութեամ վերջասցին նոքա, շնորհեսցէ նոցա զարիւնն Քրիստոսի ի զաւրութիւն: Առ այսու եւ ըստ զանազան ընթացից աշակերտելոցն մակարդէ զմարմնական հասարակաց անուն, եւ խրախոյս տա իւրաքանչիւրից ի կատարումն փութալ: Խրատէ եւ ի հերձուածողացն զգուշանալ, եւ հոգւովն զոր ունին իմաստնանալ, եւ խուսել ի նոցանէ: Որոշէ՛ եւ զորդիսն Աստուծոյ եւ զորդիսն սատանայի ի գործոցն: Դատէ եւ զժամանակեայ Ն(ե)ռինս եղեալս. եւ ուսուցանէ թէ զամենայն որ ոչ խոստովանի Յիսուս գոլ Որդի Աստուծոյ, եւ զնոյն Աստուած ի Հաւրէ՝ սուտ է. եւ ի Հաւրէն ստութեան յառաջ ածէ զայս ստութեան բարբառ: Ապա յետ այսորիկ ամենայն թղթովս յաղագս սիրոյ ուսուցանէ. բարիոք զայս աւանդութիւն որ յԱստուծոյ էջ եւ վայելչական ասելով մեզ ունել, զի եւ զմեզ Քրիստոս սիրով փրկեաց: Խառնէ ընդ այս պատմութիւն եւ այլ իմն կատարեալ սիրոյ ձշմանակ, որ գերազանց երկիւղի գտանի: Եւ յոր-

դորէ զմեզ այնպէս առ Աստուած զսէրն հաստատել: Դնէ դարձեալ եւ ախոյեան ընդդէմ հերձուածողացն, զմիաբգամ եւ երկիցս Հայր ի վերայ Քրիստոսի վկայութիւնն, թէ համապատիւ որդի նորա է: Պատմէ եւ զմեղս մահու չափս. եւ որ ոչն այնպէս. եւ թէ վասն որոց ի նոցանէ ունիմք համարձակութիւն առ Աստուած աղաւթել: Միխթարէ մերձ ի կատարումն զհաւատացեալսն, որք ատեալ էին յաշխարհէ, որ ի չարիս կայ, եւ բարեացն ոչ կարէ լինել ընդունակ: Այլ մեք, ասէ, զի ի կեանս յաւիտենականս հրաւիրեցաք, այնմ սպասեսցուք, եւ պահեսցուք զանձինս ի կոոց: Զոր եւ զսկիսբն արարեալ թղթին ասէ. Որ էրն ի սկզ:

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՐԿՐՈՐԴ ԹՂԹՈՑՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ

Զառաջնում թղթին զաւրութիւն ունի եւ այս թուղթս, համառաւտիւ կարճ բանիւք: Ի նոյն խորհուրդն հայելով եւ ի դէմս առնու զեկեղեցին իբրեւ զմի ի կանանց ողջախոյից, Կիւրիայ անս անուն մակադրեալ: Ցետ այսորիկ գովէ զյառաջադիմութիւնն ի բարիս, եւ թախանձէ մնալ անփոփոխ ի նոյն: Փոքր ինչ եւ յաղագս սիրոյ յիշատակէ. զգուշացուցանէ դարձեալ եւ ի հակառակորդաց ճշմարտութեանն, որք բազմացան յաշխարհի եւ զլանան զմարդեղութիւնն Քրիստոսի. յորոց ոչ միայն խորշել հրամայէ, այլ եւ ոչ ի տուն ընդունել, եւ ոչ խաղաղութեան ողջոյնն շնորհել անարժանիցն: Խոստանայ առ սմին եւ զիւր գալուստն, ի մխիթարութիւն նոցա աւարտէ զթուղթս: Բայց սակայն ոմանց թուեցաւ պարզապէս առ ոմն կին Կիւրիայ անուն բարեբաշտաւն լինել զգրեցեալս որ աւետարանական վարդապետութեամբն խրատեալ՝ զտուն իւր եկեղեցի արար եւ զորդեակսն ուղղէր հոգեւորապէս ի փառս Աստուծոյ յաւիտեան:

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՐՐՈՐԴ ԹՂԹՈՑՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ

Գրէ նոյն երանելի զայս երրորդ թուղթ, սակայն Գայիոսի գրէ. յորում եւ վկայէ, եւ գովութեանց արժանի առնէ վասն աւտարսիրութեանն, եւ վասն զոմանս եղբարցն հանգուցանելոյ: Յայտ առնէ թէ զայն բարեգործ լինելս յԱստուծոյ ընկալաւ շնորհ. առ որ քաջ եւ արի լինել հրամայէ: Եւ մանաւանդ յորժամ աննշանից աղքատացն ասպնջական լինիցի. զի այսպէս յառաջադէմ եղեալ՝ աճեսցէ՛ ի նոյն գովելի սպասաւորութիւնն: Իսկ զԴիոտրեփայ չարափառութիւնն յիշեցուցեալ, զգուշացուցանէ զաշակերտսն ի վարդապետին հակառակ ախոյեանէն. որ զնոյն ձանձրացուցանէր եւ զաղքատսն տառապեցուցանէ՛ր: Եւ զԴէմետրէոս յառաջ բերէ գեղեցիկ վկայութեամբ եւ աւարտէ զգիրս: Սակայն նոյն եւ այս թուղթ վասն յառաջ ասացելոյս պատճառին գրեցաւ, զի յերկրորդ թուղթն ցուցաք ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ:

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ԹՂԹՈՑՆ ՅՈՒԴԱՅԻ

Զթուղթս զայս գրէ նորոգ հաւատացելոցն այսու պատճառանաւք: Քանզի ձեւացեալք չարին մշակք ի կերպարանս բարեպաշտից եկին առ նոսա. եւ առանց պատժոց ուսուցանէին զմեղս, որք ըստ ճշմարտութեան ուրացեալ էին

զՏէր մեր. եւ միայն ախտի իւրեանց ջատագով ստացան յանուն նորա զմոլար վարդապետութիւնն: Սակս այսորիկ յարկել եւ առաքելոցն գրել եւ ամրացուցանել զհաւատացեալսն: Եւ նախ աղաչէ ճգնել ջանիւ ի նոցա աւանդեալն հաւատ. ապա ի բաց վարել եւ որոշել զմոլորեցուցիչսն. եւ ոչինչ իւիք հաղորդութիւն ունել ընդ նոսա: Եւ զի ոչ է բաւական միայն կոչիլն ի հաւատ, եթէ ոչ արժապէս կոչմանն գնասցուք: Քանզի եւ զառաջին ժողովուրդն եհան Տէրն յԵգիպտոսէ, սակայն իբր ոչ մնացին ի գործս բարեաց, սատակեցան: Նաեւ ի հրեշտակս, որ ոչ պահեցին զկարգ իւրեանց, ոչ խնայեաց: Եւ զի պատշաճ է յայնպիսի չարաբաս հայհոյութեանց հրաժարել. զոր աւրինակ եւ Միքայել հրեշտակապետն, որ ոչ հանդուրժեաց հայհոյութեանն սատանայի: Գուշակէ եւ զկորուստ նոցա նման լինել սոդոմաեցոցն: Պատուիրէ եւ ի սովորութիւնսն արիութիւն. եւ յանձանց փրկութիւնն, զուարթութիւն: Պատուիրէ եւ զմոլոր աւրինացն հաւանեալսն կշտամբել. եւ զղջացեալսն ի նոցանէ...:

Այսպիսով, Աստուածաշնչի ուսումնասիրութեան հարցում Գրիգոր վարդապետի հիանալի գրքից մենք ստանում ենք հետեւեալ արդիւնքները: Առաջին՝ սկսած առնուազն Է.ից մինչեւ ԺԴ. դարերը, հայերը յոյների օրինակով կազմել են իրենց լուծմունքների գրքերը, նրանց մէջ իրականացնելով հոգեւոր դաստիարակութեան յայտնի ծրագիրը՝ Աստուածաշնչի նշանակալի գերակշռութեամբ: Այդ ծրագիրը նրանք ժամանակի հետ ընդլայնեցին եւ ըստ նրա տարբեր վանքերում կազմեցին ձեռագրերի մատենադարաններ: Երկրորդ՝ Աստուածաշնչի պաշտօնապէս սահմանուած եւ ընդունուած կանոնը ոչ մի լրացում չի ունեցել եւ սահմանափակուած է եղել Հին եւ Նոր Կտակարանների գրքերի որոշակի թուով՝ 24+26=50, կազմուած՝ Ծնունդք, Ելք, Ղեւտական, Թիւք («պատճառ»ի մի մասը պակաս է), Երկրորդումն օրինաց («պատճառ»ի մի մասը պակաս է), Յեսու Նաւէ, Դատաւորք, Հռութ, Ա-Դ. Թագաւորութեանց, Մնացորդաց, Եզրի (Եզրի պատճառն ընդհանրապէս չկայ, թերթերը կորսուած են), Սաղմոսք, Առակք, Ժողովող, Երգ երգոց, Յոբ, ԺԲ. մարգարէք, Եսայի, Երեմիա, Եզեկիէլ եւ Դանիէլ՝ բոլորը 24 գիրք կամ 35՝ եթէ հաշուենք կրտսեր մարգարէների գրքերը: Նոր Կտակարան - Աւետարանք՝ ըստ Յովհաննու, Մատթէի, Մարկոսի, Ղուկասու (առաջին «պատճառը» սկսւում է Յովհաննէսի գլխաւորութեամբ, երկրորդը եւ երրորդը՝ ընդունուած կարգով), ԺԴ. թուղթք Պօղոսի՝ Առ Հռովմայեցիս, Առ Կորնթացիս Ա. եւ Բ., Առ Գաղատացիս, Առ Եփեսացիս, Առ Փիլիպէցիս, առ Կողոսացիս, Առ Թեսաղոնիկեցիս Ա. ե Բ., Առ Եբրայեցիս, Առ Տիմոթէոս Ա. եւ Բ., եւ Առ Փիլիպէցիս (նրան յայտնի էին նաեւ 15րդը՝ Առ Կորնթացիս Գ. թուղթը եւ սրա՝ Եփրեմ Ասորու մեկնութիւնը), Գործք առաքելոց, Յայտնութիւն, եւ եօթ թուղթք կաթողիկեայք՝ Յակոբոս, Պետրոսի Ա. եւ Բ., Յովհաննու Ա., Բ., Գ. եւ Յուդայի:

Հին Կտակարանի նրա կանոնը Սիոն կաթողիկոսի կանոնի ճշգրիտ վերարտադրութիւնն է. միայն թէ Սիոնի մօտ Յոբի գիրքը դրուած է Սաղմոսներից առաջ: Հաւանաբար Նոր Կտակարանի կանոնը եւս կազմուել է ըստ Սիոնի վճռի, որի Նոր Կտակարանի մասը չի պահպանուել: Նոր Կտակարանի Կորիւնի կանոնի համեմատ՝ տարբերութիւնը գրքերի յաջորդականութեան մէջ է. նրա մօտ Պօղոսի 14 թղթերը դրուած են վերջում: Այդ կարգը մեզ մօտ ունեն JL եւ Sch ձեռագրերը, իսկ ընդհանուր [քրիստոնէական] գրականութեան մէջ Յահնի վկայութեամբ այն տալիս է Պեշիտտայի ե-Զ. դդ. գրուած մի ձեռագիր եւ cod. Sinaiticus-ը[552]*:*

Գ. *Գրիգոր վարդապետի աշխատութիւնից յետոյ առաջնակարգ նշանակութիւն ունի Մխիթար Այրիվանեցու ձեռագիրը, եւ ի յաւելումն դրա՝ նրա ժամանակագրութիւնը: Նրա վերջին աշխատութիւնը գտնուել է նախորդ դարի 50ական թուականներին եւ հայերէնով հրատարակուել է 1860 եւ 1867 թուականներին. ռուսերէն եւ ֆրանսերէն՝ 1869 թ.*[553]*: Բացի ժամանակագրութեան հրատարակութիւններից, նրան են նուիրուել Մ. Բրոսէի, Թ. Յահնի, Կարիէրի եւ Հ. Գր. Գալէմքեարեան գիտական յօդուածները: Մխիթարի աշխատութիւնը մեծ չէ (Պատկանեանի ռուսերէն հրատարակութիւնն ունի in 8^{0}, էջ 321-418 հարիւր էջից պակաս, հայերէնը՝ 1-84) կազմուած է՝ աշխարհի վեցօրեայ արարմանը վերաբերող առաջին մասից, երկրորդ մասից, որ ընդգրկում է աղիւսակներ անունների՝ հինկտակարանային նահապետների, քահանաների, դատաւորների, թագաւորների, մարգարէների. հայոց, վրաց, աղուանից, բիւզանդական, պարսից, թաթար ազգութիւնների արքաների եւ կաթողիկոսների. Քրիստոսի աշակերտների. Երուսաղէմի, Անտիոքի, Հռոմի, Ալեքսանդրիայի, Եփեսոսի եւ Կոստանդնուպոլսի պատրիարքների, եւ գրքերի ու պատմիչների: Այդ աղիւսակներին յաջորդում է երրորդ մասը՝ իսկական ժամանակագրութիւնը, սկսած Ադամից մինչեւ մեր դարաշրջանի 1289 թուականը՝ առանց հաղորդուող իրադարձութիւնների միջեւ որեւէ կապի: Նրա աղբիւրներն են եղել հայ պատմիչներ Սամուէլ Անեցին, Վարդան Բարձրբերդցին եւ Միխայէլ Ասորին. աղիւսակների համար նա ունեցել է եկեղեցական աղբիւրներ, որոնց մէջ՝ Սարկաւագ վարդապետի յիշուած աշխատութիւնը:*

Մեզ համար հետաքրքրութիւն ունեն նրա գրքի երկրորդ մասի՝ աղիւ-

---

552 **Zahn**, Geschichte des Neutestamentlichen Kanons, II, 2, էջ 382 ծնթ. 4: Պշիտտայի ձեռագրի մասին տե՛ս Wright, Catalog, էջ 40, Հ^{մր} 63:

553 Առաջինը հրատարակել է Մ. Էմինը. լոյս է տեսել Մոսկուայում. վերջին երեքը Պետերբուրգում՝ հայերէն եւ ռուսերէն թարգմանութիւնը՝ **Ք. Պատկանեանը**, եւ ֆրանսերէն թարգմանութիւնը՝ **M. Brosset**-ն:

սակների 33 եւ 34րդ գլուխները. «Գիրք Հրէից ծածուկքն»[554] եւ Կարգադրութիւնք գրոց սրբոց որ ստուգաբանեցաւ ի Սարկաւագ վարդապետէն եւ գրեցաւ յիւէն՝ ի տէր Մխիթար վարդապետէս պատմագրէ ի միւն տուփ, յաւուրս ՃՀ. (170)[555]: Մխիթարի իսկ ձեռքով գրուած ձեռագիրը, որ մեզ է հասել մէկ հատորով, պարզաբանում է Սարկաւագի ցանկին վերաբերուող չատ կասկածելի հարցեր, եւ վերջնականապէս հաստատում կամ ոչնչացնում է վերը նշուած գիտնականների տարբեր ենթադրութիւնները: Մխիթարի ձեռագրի գոյութեան մասին առաջին անգամ նշել է Վիեննայի Մխիթարեան միաբանութեան անդամ հ. Գր. Գալէմքեարեանը, որն իր «Մխիթար Այրիվանեցի եւ իւր նորագիւտ գրուածքը»[556] յօդուածում ցոյց տուեց, որ Մխիթարի ձեռագիրը գտնւում է էջմիածնի կաթողիկոսական մատենադարանում՝ Համր 944 (Դանիէլի ցուցակի Համր 924): Հ. Գրիգորի ենթադրութեան հիմք է ծառայել Վիեննայի մատենադարանի մի ձեռագիր, որ 1848 թուականին Պօղոս Տէր-Պետրոսեան վարդապետի ձեռքով օրինակուել է էջմիածնի վանքում[557], որի մէջ Պօղոս վարդապետը հիմնաւոր կերպով նկարագրել է իր ընդօրինակութեան հիմնօրինակը: Երբ հ. Գր. Գալէմքեարեանը ծանօթացաւ Պօղոս վարդապետի պատճէնի հետ, նրա բովանդակութիւնը համեմատեց Սարկաւագի «Կարգադրութիւնք Գրոց Սրբոց»ի հետ՝ Մխիթարի ժամանակագրութեան մէջ, եւ էջմիածնի ձեռագրի նկարագրութեան հետ՝ ըստ Դանիէլի ցուցակի, ապա համոզուեց, որ Դանիէլի ցուցակում Համր 924 (էջ 130-133) համարի ներքոյ նկարագրուած ձեռագիրը Մխիթարի աշխատութեան հիմնօրինակն է:

Գալէմքեարեանի աշխատութեամբ դրդուած, անցեալ տարուայ ամռանը մենք յատուկ ուշադրութիւն դարձրինք Մխիթարի ձեռագրի վրայ եւ համոզուեցինք ոչ միայն հ. Գալէմքեարեանի ենթադրութեան հաւաստիութեան մէջ, այլեւ մեծ հաճոյքով նկատեցինք, որ ձեռագիրը պարունակում է Սուրբ Գրքին վերաբերուող բաւական արժէքաւոր նոր նիւթեր, որոնք գրիչ Պօղոս վարդապետը չի նկատել: Ամէնից առաջ ուշադրութեան արժանի են Սուրբ Գրոց անկանոն եւ կանոնական գրքերի չորս ցուցակ: Ձեռագրի նկարագրութեան մէջ մենք արդէն նշեցինք այդ ցանկերը, որոնք

[554] «Ծածուկքն» բառը Պատկանեանը թարգմանում է «тайныхъ» ձեւով, այսպիսի ծանօթութեամբ. «ծածուկքն բառով ձեղինակը ընկատի ունի Հին եւ Նոր Կտակարանների իր ժամանակ հայերէնով գոյութիւն ունեցած անկանոն գրքերը»՝ էջ 359:

[555] «Ի միւն տուփ» բառերը Պատկանեանը չի թարգմանել. Ցաինը եւ Կարիէրն այս բառերին տալիս են տարբեր բացատրութիւններ, որոնք Մխիթարի ձեռագրի գիւտի առումով կարեւորութիւն չունեն, որովհետեւ նրանց արած կռահումներն ու ենթադրութիւնները չեն արդարացում:

[556] **Հ. Գ. Գալէմքեարեան**, Մխիթար Այրիվանեցի եւ իւր նորագիւտ գրութիւնը.- Հանդէս ամսօրեայ, 1891 էջ 161-167:

[557] Այդ պատճէնի մանրամասն նկարագրութիւնը տե՛ս Տաշեան, Ցուցակ, էջ 548-558:

գտնուում են Հին կտակարանի գրքերի վերջում՝ 396րդ թերթի կէս էջի վրայ: Ընդհանրապէս նկատելի է, որ Մխիթարը թուղթը խնայել է. ամբողջ ձեռագիրը գրել է սեղմ. միայն այս ցանկերը նա գրել է կէս էջի վրայ, որի երկրորդ կէսը մնացել է մաքուր: Այդ ցանկերը հետեւեալներն են.

1. «Գիրք զոր ունին հրէայքն՝ ի ծածուկ այսոքիկ են:

[558]Ադամա, Ենովքա, Սիբէլա[1], ԲԺ. (12) ձահապետացն[2], Աղաւթքն[3] Յովսեփա, Վերացումն Մուսէսի[4], Ելդադ եւ Մովդատն[5], Սաղոմոնի սաղմոսքն, Եղիայի ծածուկքն, Դանիէլ Է.երորդ տեսիլն[559]:

Իսկ ըստ Նորոյս. Գիրք մանկութեան Տեառն[6], Թումայի աւետարանն[7], Յայտնութիւնն Պետրոսի, Գ. շրջագոյ Պաւղոսի[560], Կաթուղիկէ թուղթքն Բառնաբա, եւ Յովդաի, եւ Թոմայի[561]»:

Այս անկանոն գրքերից հայ գրականութիւնն ունի հետեւեալ գրքերը. Գիրք Ադամի, Ենովքի, ԺԲ. նահապետների, Յովսէփի աղօթքները (եթէ միայն այս գրքերի տակ ենթադրւում է Յովսէփի եւ Ասանէթի պատմութիւնը, չնայած դա անհաւանական է), Մովսէսի Համբարձումը եւ Դանիէլի եօթներորդ տեսիլը՝ հինկտակարանային անկանոններից[562], իսկ նորկտակարանայիններից միայն կայ Տիրոջ մանկութեան գիրքը եւ առ Կորնթացիս երրորդ թուղթը, եթէ «գ. շրջագոյ Պաւղոսի»ն համարենք առ Կորնթացիս թուղթը[563]:

Առաջին ցանկից յետոյ դրուած են ուրիշ երեքը, բոլորն էլ իրենց կազմողների անուան վկայակոչմամբ:

2. «Սրբոյն Կղէմա՝ եթէ ո՞ր գիրք ընդունելի է:

1) Գործքն եւ[1] Կանոնք առաքելոցն, Յայտնութիւն[2] Յոհաննու, որ կոչի Պիլալիմսիս, Խրատ Աստուածածնին առաքելոցն, Գիրքն Դիոնիսեա Աթենացւո[3], Տիմոթեա թուղթն, Գիրքն Կրիսպոսի[4], Բանքն Յուստոսի, Քարոզ ուղափառացն, Թուղթն Բառնաբա:

---

[558] *Ընթերցումներ.* 1. Սիբիլայ, 2. ԲԺ. ձահապետք, 3. Աղօթք, 4. Մովսիսի, 5. Մովդատ, 6. Մանկութիւնն Յիսուսի, 7. Թումայ աւետարան

[559] Դանիէլի Է. տեսիլն ակնյայտ անճշտութիւն է, որը նկատել է **ճ. Գր. Գալէմքեարեանը**՝ Die VII Vision Daniel's. էջ 3, ծնթ. 1:

[560] «շրջագայ Պօղի»՝ Brosset-ն թարգմանում է՝ le voyage de Paul.

[561] «Սրբոյն Կղեմայ», որ Մխիթարի ձեռագրում յաջորդ ցուցակի ոեղինակի անունն է, որն էլ ֆրանսերէն թարգմանութեան մէջ ճիշտ է ներկայացրել Բրոսէն: Այս եւ յաջորդ երեք ցուցակները Կարապետ վարդապետը տպագրել է Էջմիածնի «Արարատ» *հանդէսում* 1895 թ., էջ 408. նոյն տեղում՝ էջ 406-408 տպուած է Առ Կորնթացիս Երրորդ թուղթը՝ ըստ Մխիթարի ձեռագրի:

[562] Համմտ. Անկանոնք ՀԿ-ի, էջ 24, 27, 152, 199, 277 եւ 398. Մովսէսի անկանոնը անգլերէն թարգմանութեամբ հրատարակել է՝ **F. C. Conybeare,** On the Apocalypsis of Moses, The Jewish Quartrly Review vol. VII. 1891 էջ 216-235:

[563] Անկանոնք ՆԿ-ի, էջ 1-212. անկանոն՝ Աւետարան մանկութեան Տեառն, Առ Կորնթ. Գ. թղթի մասին տե՛ս վերը, Առաջաբան, ծնթ. 148-155:

Զայս ես եւ Անաձէ գրեցաք ի Վիմի-քաղաքի[564] որ[5] եկեղեցի աւրհնեցաք»:

Այս գրքերից հայ գրականութիւնում առկայ են. Գործք եւ Կանոնք Առաքելոց, Յովհաննու Յայտնութիւնը եւ Դիոնիսոսի գիրքը, իսկ միւսների մասին որոշակի ոչինչ յայտնի չէ: Այս ցանկը կազմել են Կղեմէսը եւ Անանիան՝ Դամասկոսից, ինչպէս պարզ է դառնում Գրիգորի ցուցակից, որը մենք բերում ենք յաջորդաբար:

3. «Սրբոյն Եւագրեա կարգաւորութիւն աստուածաշունչ տառից:

Արարածքն ե., յեսուն գ., Թագաւորութիւնքն դ., Սաղմոսքն, Սգաւնութիւնն, Սիրաքն, Յոբն, Երկոտասանքն, Եսաին, Երեմիայն, Դանիէլն, Եզեկիէլն, Աւետարանքն դ., Պրակքն, Առաքեալն ժե., Կաթուղիկէքն է.»:

4. «Աստուածաշունչ. սրբոյն կիւրղի Երուսաղէմի (հայրապետին) կարգադրութիւն. Ալիփ-ա. Ծնունդքն, բեթ-բ. Ելքն, գամէղ-գ. Ղեւտիկոնն. գաղէթ-դ. Թիւքն, հէ-ե. Երկրորդ աւրէնքն. վաւ-զ., Յեսու որդի Նաւեա. զէ-է., Դատաւորքն եւ Հոութն. խէթ-ը. ա. եւ բ. Թագաւորութիւնքն, տէթ-թ., գ. եւ դ. Թագաւորութիւնքն, յաւդ, որդ-ժ., ա. եւ բ. Մնացորդքն քաֆ-ժա., ա. եւ բ. Եզրն, ղամէթ-ժբ., Եսթերն. ստիքերոն գիրք ե., միմ-ժգ., Յոբ, նուն-ժդ., Սաղմոսքն, սամքաթ-ժե., Սգաւնն, է-ժզ., Էկլէսիաստէսն, փէ-ժէ., Աւրհնութիւնք աւրհնութեանցն, ծադէ-ժը., Երկոտասանքն, Կոփ-ժթ., Եսաին, րէշ-ի., Երեմիայն, շին-իա., Եզեկիէլն, թաւ-իբ.՛ Դանիէլն:

դ. Աւետարանքն, Գործքն, է. կաթողիկէքն, ժդ. թուղթն Պաւղոսի»:

Առաջին երկու ցանկերի մասին Սուրբ Գրքի կանոնի գիտակները, յատկապէս Ցահնը, արտայայտել են կարծիքներ, որոնք մինչեւ ներկայ ժամանակները համընդհանուր ճանաչման են արժանացել, սակայն այժմ՝ Մխիթարի ձեռագրի գոյութեան արձանագրմամբ այդ կարծիքները պէտք է ենթարկուեն հիմնաւոր ստուգման: Պատկանեանը առաջինն է կարծիք յատնել, թէ Մխիթարի «Գիրք Հրէից ծածուկք» ցանկում թուարկուածները Մխիթարի ժամանակ հայերէն լեզուով գոյութիւն են ունեցել: «Հին եւ Նոր Կտակարանի այս անկանոն գրքերը, բոլորն առանց բացառութեան, այն ժամանակ հայերէնով գոյութիւն են ունեցել եւ ժողովրդի մէջ մեծ յարգ են վայելել»[565]: Պատկանեանի այս միտքը որդեգրել է Կարիէրը,

[1)] Ժամանակագրութեան տարընթերցումները. 1՝ չունի, 2. տեսիլք, որ կոչի պիլալիմսիս չունի, 3. գիրքն Դիոնէսիոսի, 4. Կիպրոսի, 5. քաղաքին ուր

564 Բրոսէն, եւ նրա օրինակով Կարիէրը չեն թարգմանում «ի վիմի քաղաքի»՝ Vimit kaghaque, համարելով այն յատուկ անուն, իսկ Պատկանեանը թարգմանում է «ի վիմի քաղաքի»: Բրոսէին ճիշտ է թւում, եւ մենք կարծում ենք, որ յատուկ անունը թարգմանուած է յունարէնից. արդեօք Պետրօսլուս անունի՞ց չէ, ինչպէս ցոյց է տալիս ՝Հելիօսրօլուս «Արէգքաղաք», Կոնստանտինօսլուս «Կոնստանտինի քաղաք» եւ այլ յատուկ անունների թարգմանութիւնների օրինակը (հմմտ. **Սոկրատես Սքոլաստիկոսի** Եկեղ. Պատմ. Առաջաբան. էջ ՂԵ.):

565 Ժամանակագրութեան ռուս. թարգմանութիւն, էջ 315 եւ 359, ծնթ. 3:

եւ Ժամանակագրութեան ցանկերը համեմատելով նոյնանման յունարէն երկու ցանկերի հետ, Պատկանեանի կարծիքը վճռականօրէն հաստատեց հետեւեալ արտայայտութիւններով. «L'existence en arménien, à l'époque de Mkhitar, des apocryphes mentionnés plus haut nous paraît donc indiscutable»[566]: Իսկ Հ. Զարբհանալեանն արտայայտուեց այդ ենթադրութեանը հակառակ. «այս կարծիք այնչափ հաւանական չերեւնար, մեր գրչագրաց մէջ անոնց չատին հետքն անգամ չգտնելով»[567]:

Յահննայդ հարցը լուծում է Մխիթարի՝ պատրաստի ցանկ ստացած լինելու օգտին:

«Wenn Mchithar das Ganze mitsammt der Schlussbemerkung nicht mechanisch aus einem ältern Werke abgeschrieben hat, so hat er selbst in Gemeinschaft mit einem andern diese dreiteilige Liste bei Gelegenheit der Einweihung einer Kirche irgendwo vorgetunden und copiert»[568]:

Յահնը հիմնական ուշադրութիւնը դարձրել է համանման յունարէն ցանկերի հետ հայերէն ցանկերի գրքերի համեմատութեանը, որպէսզի այդ ճանապարհով աւելի ճիշտ որոշի ինչպէս ցանկի բնութագիրը, նոյնպէս եւ որոշ գրքեր, որոնց մասին հաւաստի տեղեկութիւններ չունենք:

Զպէտք է մոռանալ, որ այս բոլոր գիտնականներն իրենց ձեռքին ունեցել են տեղ-տեղ աղճատուած բնագիր եւ սոսկական անուններ, առանց որեւէ բացատրութեան կամ այսպիսի խնդրական յաւելումներով, օրինակ՝ «Յոբ, 9 օրում, Առակներ՝ 6»[569] եւ այլն. այս թուերը, ինչպէս այժմ պարզուում է, նշանակել են իւրաքանչիւր գիրքն արտագրելու համար անհրաժեշտ ժամանակը:

Այս հարցի վերաբերմամբ մենք չենք ծաւալուելու, քանի որ ձեռագրից քաղուած տուեալների չնորհիւ վերջնականապէս ապացուցւում է Պատկանեանի, Կարիէրի եւ Յահնի ենթադրութիւնների անհիմն լինելը: Նախ՝ Մխիթարն ինքը չի կազմել անկանոն եւ կանոնական գրքերի ցանկերը, այլ փոխառել է՝ 1) Սարկաւագի, 2) Կղեմէսի, 3) Եւագրի, 4) Կիւրեղ Երուսաղէմացու եւ 5) հրէաների անկանոնների ցանկի անյայտ հեղինակի

566* «Մխիթարի դարաշրջանում վերը յիշատակուած պարականոն նիւթերի հայերէնով գոյութիւնը մեզ անվիճելի է թւում»:

567 **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 187:

568 **Zahn**, Forschungen, V, էջ 115. Նա dreiteilige Liste [եռամասն ցանկ] է համարում Հրէական անկանոններ՝ 1) Հին Կտակարանի, 2) Նոր Կտակարանի եւ 3) ընդունելի գրքերի ցանկը, որ մեզ մօտ կոչւում է *Կղեմէսի ցանկ*: Մենք ցոյց ենք տալիս, որ «Ես եւ Անանիան» նախադասութիւնում «Ես»ը չի կարող Մխիթարին վերաբերուել: * Թրգմն. «Եթէ Մխիթարն աւելի հին գործից մեքենաբար չի կրկնօրինակել ամբողջ եզրափակիչ նշումը, ապա նա ինքը, ուրիշի հետ միասին, ծրագրել եւ այս եռամասն ցանկը պատճենել է եկեղեցու հիմնարկութեան առիթով»:

569 Համեմատի՛ր Ժամանակագրութեան ցանկը:

կազմածները: Երկրորդ՝ միայն այն գրքերը, որոնք հանդիպում են Սարկաւագի ցանկում, անկասկած, հայերէնով գոյութիւն են ունեցել Մխիթարի ժամանակ եւ նրանից առաջ, իսկ միւս անկանոնների գոյութիւնը պէտք է առանձին ապացուցել՝ անկախ ցանկերից: Այս կարծիքի հաստատում է ծառայում հետեւեալը. Մխիթարն իր դիրքով (եպիսկոպոս էր եւ Գեղարդի վանքի վանահայր) եւ գիտելիքներով, անկասկած, հիանալի գիտէր եւ Սուրբ Գրքի անկանոնները տարբերում էր կանոնական գրքերից. գրական հետաքրքրութիւններից դրդուած, իր ձեռագրում կանոնական գրքերի շարքում գրել է շատ անկանոն գրքեր: Եթէ այսպիսի մարդն ինքը կազմէր հրէական անկանոնների ցանկը, ապա նա պարտաւոր էր այդ ցանկում տեղադրել Եզրի՝ Սաղաթիէլի, Վասն Երեմիայ ի Բաբելոն, Մահք մարգարէից գրքերի անունները. գրքեր, որոնք կան նրա ձեռագրում, իսկ հրէական գաղտնի գրքերի ցանկում այդպիսի գրքեր չկան, եւ հակառակը՝ իր ձեռագրում կտեղադրէր Ադամի, Սիբէլլի, Ելդադ Մովդադի եւ այլ գրքեր: Վերը՝ նրա ձեռագիրը նկարագրելիս մենք բերել ենք նրա գրառումը Մակաբայեցւոց չորրորդ գրքի մասին, որի մասին նա հաղորդում է, որ փնտրել եւ չի գտել այն. ուրիշի ցանկի գրքերի անունների նկատմամբ այդպէս բարեխիղճ վերաբերուող մարդը իր սեփական ցանկի մէջ նշուած գրքերի գոյութեան կամ չգոյութեան մասին չէր լռի: Ինչպէս ասուել է, Զարբհանալեանը բաւական հիմնաւոր կարծիք է յայտնել այն մասին, որ ցանկում յիշատակուած շատ անկանոնների մասին հայ մատենագրութեան մէջ յուշ անգամ չկայ. օրինակ՝ Ելդադի ու Մովդադի կամ Սիբիլի գաղտնիքների մասին, հետեւաբար կասկածելի է, որ ցանկի կազմողը հայ լինի: Այպիսի եզրակացութեան է բերում պրոֆեսոր Կարիէրի նշումը անկանոնների յունական երկու ցանկերի մասին, որոնք իսկապէս մեծ նմանութիւն ունեն Մխիթարի ցանկի հետ. առաջինը տպագրել է Pitra-ն[570], երկրորդը De Boor-ը, իսկ ցահնը համեմատութեան համար նշել է այսպէս կոչուած Աթանասի Σύνοψις-ի կանոնը[571]: Անկանոնների բաշխումով Մխիթարի ցանկը լիովին համապատասխանում է յունական այդ երեք ցանկերին. տարբերութիւն նկատուում է նշուած ցանկերի գրքերի քանակի մէջ: Օրինակ, հայերէնի եւ Նիկիփորի ցանկերի համեմատութեան դէպքում տարբերութիւնն այսպիսին է. հայերէնում պակասում են Διαθήκη Μωϋσέως, Ἀβραάμ, Σοφονίου Προφήτου, Ζαχαρίου πατρὸς Ἰωάννου,

570 Juris ecclesiastici Graecorum historia et monumenta jussu Pii IX. Pont. Max. curante J. B. Pitra. Front Cover. Jean-Baptiste Pitra. typis collegii Urbani, Romae, 1864, t. I, p. 100. Zahn, Geschichte des Neutestamentlichen Kanons, II, 2, էջ 292:

571 Nicephori archiepiscopi Constantinopolitam opuscula historica, ed. C. de Boor. Accedit Ignatii diaconi vita Nicephori, Lipsiae, 1880, p. 134. Zahn, Geschichte des Neutestamentlichen Kanons, II, 2, էջ 300, 301 եւ 317:

Βαρύχ, Ἀμβακούμ, Ἰεσεκίηλ καί Δανιήλ ψευδεπίγραφα *գրքերը, եւ հակառակը՝ Նիկիփորի ցանկում պակասում են Ադամի, Սիբիլի եւ Սողոմոնի Սաղմոսների գրքերը: Այս բոլորը ճիշտ ըստ Նիկիփորի ցանկի կրկնւում է Աթանասի* Σύνοψις-*ում:*

Յունական երկրորդ ցանկի հետ տարբերութիւնն այսպիսին է. Սիբիլի գրքի փոխարէն յունականում դրուած է Λάμεχ-*ը, Մովսէսի համբարձումը դրուած է Ելդադ եւ Մովդադ անունից յետոյ, իսկ յունականը չունի Դանիէլի եօթներորդ տեսիլը: Փոխարէնը նրանում կան հետեւեալ անուններըը, որոնք չկան հայկականում.* Διαθὴκη Μώσεως, Ἡσαίου ὅροσις, Σοφονίου ἀποκάλυψσις Ζαχαρίου ἀποκ.,Ἔσδρα ἀποκ.*:*

Նորկտակարանային անկանոնների Պիտրի եւ Մխիթարի օրինակները խիստ տարբերւում են. նրանց մէջ ընդհանուր են միայն Պետրոսի յայտնութիւնը եւ Բառնաբայի թուղթը: Այդպիսի մեծ տարբերութիւն առկայ է նաեւ Նիկիփորի ցանկի հետ: Բացի վերը մեր բերած փաստարկներից, յունարէնով գոյութիւն ունեցող այս երեք նոյնանման ցանկերը եւս պէտք է հեռացնեն Մխիթարի՝ ցանկն ինքնուրոյն կազմելու մասին ցանկացած միտք, ինչը կամենում էին ապացուցել Կարիէրը եւ միւսները:

Ինչ վերաբերւում է Կղեմէսի երկրորդ ցանկին, նրա մասին աւելորդ չենք համարում բերել Ցահնի խօսքերը, որը հանդէս գալով Բրոսէի իրաւացի կռահման[572] դէմ, բացականչում է. «Und wer solite dieser Clemens sein, welcher die Schriften des Areopagiten und dergleichen recipiert haben soll?»[573]: Այսպիսով, նա կասկածի է ենթարկում Կղեմէսի հեղինակութիւնը, եւ միւս կողմից ենթադրում է, թէ ծայրայեղ դէպքում կարելի է մտածել Կղեմէս Աղեքսանդրացու մասին, որին, ի դէպ, վերագրում էին Աստուածաշնչի ձեռագրերի ընդօրինակութիւն եւ նրանց մէջ կէտադրական նշանների ներմուծում (Interpunction)[574], իսկ ըստ Եւսեբիոսի Եկեղեցական պատմութեան՝ նա նաեւ մի գիրք է յօրինել եկեղեցական կանոնի մասին կամ յուդայականութեան կողմնակիցների դէմ (Hist. eccl. VI, 13, 3)[575]: Սակայն մենք ունենք տեղեկութիւն, որը հարցին այլ ընթացք է տալիս:*

Բացի Մխիթարից, եւ կարելի է որոշ վստահութեամբ ասել՝ նրանից անկախ, Կղեմէսի ցանկը յայտնի է եղել Գրիգոր Տաթեւացուն (ստորեւ՝

---

572 Բրոսէն, ինչպէս վերը ցոյց ենք տուել, Կղեմէսի անունը դրել է երկրորդ ցանկի սկզբում՝ որպէս նրա հեղինակի, մինչ, ի դէպ՝ Պատկանեանցը Կղեմէսի անունը դնում է նախորդ ցանկի վերջում՝ որպէս Թղթի հեղինակի. Ցահնը պաշտպանում է վերջին կարծիքը:

573* «Եւ, վերջապէս, ո՞վ կարող էր լինել այդ Կղեմէսը, որ ասում էր, թէ իբր ստացել է Արէոպագացու կամ նման նիւթերը»:

574 **Pitra**, Anaiecta Sacra, II, 208:

575 **Bordenhewer**, Patrologie, 1901, էջ 119:

Ե. Է.), որը նոյնպէս ցանկի հեղինակ է կոչում Կղեմէսին եւ Անանիա Դամասկացուն: Գրիգորը թուարկել է վեց գրքի անուն. 1) Յակոբի եօթ ընթերցում, 2) առաքեալների կանոնները, 3) Յուստոսի խօսքերը, 4) Դիոնիսոսի գրքերը, 5) Յուստոսի գրքերը եւ 6) Պետրոսի քարոզները: Գրքերի անունների եւ նրանց քանակների՝ Մխիթարի եւ Գրիգորի հաղորդումների տարբերութիւնն ակնյայտ է, սակայն մեզ համար կարեւոր է իմանալ այն փաստը, որ ԺԳ. եւ ԺԵ. դարերում հայ մատենագիրները մեր ցանկի կազմումը վերագրել են Անանիային եւ Կղեմէսին, որոնց նրանք դասել են 72 առաքեալների չարքին (Գործք Թ., 10 եւ Թուղթ առ Փիլիպէցիս Դ., 3): Մենք յանձն չենք առնում պատասխանելու այն հարցին, թէ որտեղի՛ց է եղել երկու առաքեալներին վերագրուած այդ կեղծ ցանկը:

Սուրբ Եւագրի կազմած՝ Սուրբ Գրքերի դասաւորութիւնը իր վրայ պէտք է յատուկ ուշադրութիւն գրաւի: Դատելով ըստ Ցահնի գրքի, այդ ցանկի մասին յունարէն եւ այլ լեզուներով որեւէ բան յայտի չէ, սակայն ոչ միայն այս հանգամանքն է այն հետաքրքիր դարձնում, այլեւ նոյնանման ցանկերի մէջ նրա բացառիկ եւ ինքնատիպ դիրքը: Հին Կտակարանի գրքերը Եւագրը միացնում է ըստ խմբերի՝ Արարածքն ե., Յեսուն դ., որոնց տակ անհրաժեշտ է հասկանալ Յեսուի, Դատաւորաց, Հռութի եւ Թագաւորութեանց չորս գրքերը. չի յիշատակում Մնացորդաց, Եզրի գրքերը, իսկ փոխարէնն ունի Սիրաքի գիրքը: Նաեւ Սողոմոնի չորս գրքերից ունի այն, որը հրէական կանոնը եւ եկեղեցու հայրերը համարում էին անկանոն, այսինքն՝ Իմաստութեան գիրքը: Գրքերի յաջորդականութիւնը, բացառութեամբ Սիրաքի գրքի, համապատասխանում է Գրիգոր վարդապետի եւ Պարտաւի ժողովի կանոններին, բայց կրկին այն տարբերութեամբ, որ այստեղ վերջում դրուած է Եզեկիէլ մարգարէն, իսկ Եւագրի մօտ՝ Դանիէլը: Նոր Կտակարանի կանոնում ուշադրութեան արժանի է Պօղոսի թղթերի թիւը՝ 15, որը ուրիշ որեւէ կանոնում չի հանդիպում: Իսկ գրքերի դասաւորութիւնը՝ Պօղոսի թղթերը առաքեալների եօթ թղթերից առաջ, որոնք դրուած են վերջում, ըստ Ցահնի հանդիպում է Canon Muratorianus-ում[576], Գրիգոր Նազիանզացու[577], Նիկիփորի[578] կանոններում եւ ուրիշների մօտ, իսկ մեզ մօտ՝ Sch. ձեռագրում: Ով է այդ ցանկի հեղինակ Եւագրը, ցանկի խորագրից չի երեւում. այդ անունով գրողների մէջ յայտնի է միայն Եւագր Պոնտացին, որի երկասիրութիւնները մեծ յարգ են ունեցել հայոց մէջ, ինչպէս ցոյց են տալիս այդ երկերի թարգմանութիւնները: Այդ թարգմանութիւնների թուարկումը Զարբհանալեանի

576 **Zahn**, Geschichte des Neutestamentlichen Kanons, II, 2, էջ 139-140:

577 Նոյն տեղում, էջ 217:

578 Նոյն տեղում, էջ 298:

մօտ զբաղեցնում է 11 էջից ոչ պակաս[579]: Հնարաւոր է՝ այդ երկերից մէկում գտնուի մեր ցանկը՝ հեղինակի մանրամասն բացատրութիւններով, սակայն մեզ չի յաջողուել քննել Եւագրի ձեռագրերը:

Վերջապէս, Կիւրեղ Երուսաղէմացուն պատկանող՝ Մխիթարի չորրորդ ցանկը իրեն վերաբերող բաւական մեծ գրականութիւն ունի: Նրա յունարէն բնագիրը բազմիցս տպագրուել է եւ մանրամասն ուսումնասիրուել. մենք կբաւարարուենք հայերէն բնագրի առանձնայատկութիւնների մատնանշմամբ: Կիւրեղի այդ կանոնը գտնւում է նրա յայտնի κατήχησις*-ում, որը նաեւ առանց վերջին հինգ ճառերի թարգմանուել է հայերէն եւ հրատարակուել 1727 թուականին, Կոստանդնուպոլսում եւ 1832 թուականին՝ Վիեննայում: Յայտնի է, որ Կիւրեղի այդ կանոնը, որ կազմուած է Հին Կտակարանի 22 եւ Նոր Կտակարանի 26 գրքերից, կազմում է այսպէս կոչուած հրէական կանոնը եւ գտնւում է Դ. կատեխիզիսում, § 33-36, կանոնի եւ Եսթանասուն մեկնիչների թարգմանութեան ծագման մասին բացատրութիւններով: Կիւրեղը բոլոր 22 գրքերը բաժանել է չորս խմբի, առաջին եօթը՝ Ծննդոց գրքից մինչեւ Հռութ, որը Դատաւորների գրքի հետ միասին համարում է մի խումբ, պատմական հինգ գրքերը՝ Թագաւորութեանց Ա. գրքից մինչեւ Եսթեր համարում է մէկ խումբ (մէկական համարելով Թագաւորութեանց երկուական գրքերը), Մնացորդաց գրքերը եւ Եզրը, Հինգ գրքի* στιχηρά πέντε*, այսինքն՝ Յոբի, Սաղմոսների եւ Սողոմոնի 3 գրքերը, եւ մարգարէների հինգ գրքերը[580], տասներկու մարգարէների գրքերը համարելով մէկ գիրք:*

Մխիթարի ցանկը պահպանում է կատեխեզիսի գրքերի քանակը եւ յաջորդականութիւնը. բայց նրա մէջ, նախ՝ բոլոր գրքերը նշանակուած են յատուկ համարակալմամբ, եբրայական տառերով՝ տառադարձութեամբ եւ հայերէն յաջորդական թուատառերով, երկրորդ՝ բոլոր քսաներկու գրքերը չորս խմբի բաժանելը Մխիթարի ցանկում չի պահպանուել, այլ միայն Յոբի գրքից առաջ գրուած է՝ στιχηρά πέντε *- ստիքերոն գիրք ե., որն առանց կատեխիզիսի բնագրի անհասկանալի կմնար: Երրորդ՝ Հին եւ Նոր Կտակարանների գրքերը թուարկուած են առանց որեւէ բացատրութեան: Հետեւաբար, պէտք է մտածել, որ ինչ որ մատենագիր որոշ փոփոխութիւններով Կիւրեղի երկից արտագրել է նրա կանոնը՝ տարբեր հեղինակների կանոնները պատկերող մի ընկալելի աղիւսակ կազմելու համար:*

Թէոդոր Յահնը Սարկաւագի եւ Մխիթարի երկու ցանկերի (Հմր 1, 2) իր հետազօտութեան[581] աւարտին գալիս է այն եզրակացութեան, թէ ինչ

---

579 **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 421-432 եւ մանրամասները՝ **Bardenhewer**, Partologie, էջ 271:

580 **Zahn**, Geschichte des Neutestamentlichen Kanons, II, 2, էջ 172-180:

581 **Zahn**, Forschungen, V, էջ 136-137:

որ ժամանակ գոյութիւն է ունեցել մի հիմնական ցանկ՝ Urliste, որը կազմուած է եղել հետեւեալ մասերից. 1) Սուրբ Գրոց կանոնից՝ 22+26=48 կամ 34+26=60 գիրք, 2) Հին Կտակարանի անկանոն գրքերից, 3) Նոր Կտակարանի անկանոն գրքերից, 4) անկանոններից: Ցահնը կարծում է, որ այսպիսի հիմնական ցանկի հետագայ մշակումը պահպանուել է Նիկիփորի եւ Աթանասի ցանկերում, նաեւ՝ Պիտրի տպագրած ցանկում, միայն մի մասն էլ՝ հայերէն տարբերակում: Որքանով են իրաւացի յարգարժան գիտնականի եզրայանգումները Նիկիփորի եւ ուրիշների ցանկերի վերաբերմամբ, մենք մի կողմ ենք թողնում, Մխիթարի ցանկերի վերաբմամբ որեւէ այլ հիմնական ցանկի մասին միտքն անընդունելի է: Այս դէպքում հարցը լուծւում է աւելի պարզ. նա, ով առաջինը մտադրուել է կազմել այդպիսի աղիւսակ, նպատակ է ունեցել համադրելու եկեղեցու հեղինակաւոր հայրերի ցանկերը՝ ատուածաշնչի տարբեր գրքերի վերաբերեալ նրանց ունեցած հայեացքներին ծանօթացնելու համար, եւ ամենեւին չի ձգտել դրանց առանձին մասերը միացնել իրար՝ որպէս մէկ ամբողջութիւն:

Մնում է պարզել նաեւ հետեւեալ հարցը. ո՞վ է եղել այդ հաւաքողը, արդեօք Մխիթարն ի՞նքն է տարբեր հեղինակներից հաւաքել բոլոր չորս ցանկերը, թէ՞ նրանից առաջ դա արուած է եղել: Այս հարցի վերաբերեալ մենք ոչ մի ուղղակի վկայութիւն չունենք. կասկածի ենթակայ չէ, որ Մխիթարը հիմնաւոր ձեւով գիտէր միջնադարեան եկեղեցական գրականութիւնը, եւ դա ապացուցւում է նրա ժամանակագրութեամբ, ինչպէս նաեւ նրա գրած ձեռագրով: Դրա հիման վրայ հնարաւոր եղաւ ենթադրել, որի նա ինքն է իր աշխատանքի ընթացքում հաւաքել այդ ցանկերը: Եւ մենք գիտենք, որ նա այդպիսի ցանկերի սիրահար էր. նրա ժամանակագրութեան մեծ մասը կազմուած է այդպիսի աղիւսակներից: Բայց չնայած դրան, մեզ թւում է, որ նա ինքը չի հաւաքել դրանք: Վերը մենք ցոյց տուեցինք հայոց մէջ հոգեւոր գրականութեան որոշակի ծրագրի առկայութիւնը եւ այդ ծրագրի վրայ հիմնուած՝ վանական մատենադարանների գոյութիւնը: Մեր կարծիքով, այդ ծրագիրը կազմողներին արժէ աւելացնել նաեւ Մխիթարի ցանկերի հաւաքածուն: Հարկ է ուշադրութիւն դարձնել մի հանգամանքի վրայ՝ որ բոլոր ցանկերը թարգմանուած են յունարէնից, որը, ըստ բոլոր յատկանիշների՝ Մխիթարը չգիտէր: Նա երկու տեղում ակնյայտ ձեւով բացայայտում է իր չիմացութիւնը, մի անգամ 2րդ ցանկում, որտեղ նա գրում է. «Յայտնութիւն Յոհաննու, որ կոչի պիլալիմսիս», աղաւաղելով յունարէն εὐκάλιψις *բառը, որ լեզուն իմացողը թոյլ չէր տայ. երկրորդ անգամ 4րդ ցանկում, որտեղ նա «ստիքիրոն գիրք ե.» բառերի վրայ գծիկներ է դնում՝ որպէս անպէտքութեան եւ բառերի ջնջման նշան: Ինչպէս վերը նկատուել է, այդ բառերն, առան-*

ձին վերցուած, իմաստ չունեն: Մխիթարը դա նկատել է, բայց որպէս բարեխիղճ ընդօրինակող, դրանք դուրս չի թողել, այլ բաւարարուել է նրանով, որ կէտերով ցոյց է տուել, որ դրանք պէտք չեն: Յետոյ Մխիթարը կարդացել է Սամուէլ Անեցու ցանկը եւ ժամանակագրութեան մէջ հաղորդել է «քաջաբան ասորի»ների Հայաստան ժամանելու մասին, բայց նրա ցանկը չի փոխառել, ինչը հաւանաբար կանէր, եթէ նրա նպատակի մէջ լինէր կանոնական եւ անկանոն գրքերի իրեն յայտնի բոլոր ցանկերի հաւաքումը: Ուստի պէտք է ենթադրել, որ Մխիթարը պատրաստի է ստացել ինչպէս Սարկաւագի, այնպէս էլ յաջորդող չորս ցանկերը:

Դ. *Մի քանի խօսք ասենք նաեւ անկանոն գրքերի այն ցանկի մասին, որ կայ Սամուէլ Անեցու ժամանակագրութեան եւ Կիրակոս Գանձակեցու Պատմութեան մէջ*[582]*:*

Սամուէլը պատմում է, որ Ք. յ. 591 թուականին Ասորիքից Հայաստան եկան գրաւիչ խօսող մարդիկ, որոնք ձգտում էին մարդկանց մէջ տարածել Նեստորի հերձուածը, սակայն չուտով նրանք ենթարկուեցին բանադրանքի եւ հեռացուեցին երկրից[583]*: Այսուհանդերձ, ոմանք մոլորութեան մէջ ընկան, անցան նրանց կողմը եւ հայերէն թարգմանեցին նրանց կեղծ գրքերը, առանձնապէս՝ «Զ Գործոսակ, զ Կիրակոսակ, զ Պօղոսի տեսիլն, զ Ադամայ ապաշխարութիւնն, զ Տիադեկ, զ Մանկութիւն Տեառն, եւ զ[Ս]եբիոս, եւ զ Ճիոն օրհնութեան, եւ զ Անթաքչելի մատեանն, եւ զ Աւետարանի Մեկնութիւն զ Մանեայ եւ որ հաւատայ նոցա, նզովի յուղղափառաց»:*[584]*

Սամուէլ Անեցին իր ժամանակագրութիւնը հասցրել է մինչեւ 1179 թուականը, անկանոնների թարգմանութեան մասին նրա հաղորդած

582 **Eusebii Chronicorum,** Libri duo, editio A. Mai et Zohrabii, Mediolani, 1808, p. 52. **Brosset**, Collection des hist. Armén., 1878, II, p. 395: **Zahn**, Forschungen, 1893, V., p. 110: Հանդէս ամսօրեայ, 1895, I (Գրախօսութիւն Ցահնի աշխատութեան) եւ Կիրակոս Գանձակեցի, Վենետիկ, 1865, էջ 29:

583 Մխիթար Այրիվանեցու՝ այս հարցին ծանօթ լինելն իմանում ենք հետեւեալ բառերից. «Գրիգոր եւ Վրթանէս վարդապետք ի Յոյնս գնացին, իսկ քաջաբան ասորիք ի Հայս եկին, եւ երկոքինն ոչ ինչ օգտեցան»՝ **Մխիթար Այրիվանեցի**, Պատմութիւն, 1867, էջ 64:

584* Սամուէլի նոր հրատարակութեան մէջ այս հաղորդումը հայոց ԼԲ՝ 588 թ. ներքոյ է եւ ունի հետեւեալ տեքը. «Ցայսմ վայրի եկին ի Հայս ասորիք՝ արք քաջաբանք, եւ կամէին սերմանել զաղանդն Նեստորի, եւ նզովեալ հալածեցան, բայց ոմանք ընկալան, եւ նոքա թարգմանեցին նոցա գիրս սուտս՝ զ Գաւրտոսակ եւ Կիրակոսակ, զ Պաւղոսի տեսիլն, զ Ադամայ զապաշխարութիւնն եւ Դիաթեկ, զ Մանկութիւն Տեառն եւ զ Սեբիոս եւ զ Ճիո աւրհնութեան եւ զանթաքչելի մատեանն եւ Աւետարանի մեկնութիւն՝ զ Մանեա. եւ որ հաւատայ նոցա՝ նզովի». տե՛ս **Սամուէլ Անեցի,** Հաւաքմունք ի գրոց պատմագրաց՝ յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ, Բնագիրը կազմեց Ա. Տաճիհտ Հայրապետեանը, Առաջաբանը՝ Կարէն Մաթեւոսեանի, Խմբագրութեամբ՝ Գէորգ Տէր-Վարդանեանի, Երեւան, «Նայիրի», 2011, էջ 95:

փաստը վերաբերում է 591 թուականին՝ ժամանակի առումով ժամանակագրութիւնից ուղիղ վեց հարիւրամեակ առաջ: Այն գրքերը, Սամուէլի վկայութեամբ, որպէս հերետիկոսական երկեր, ուղղափառների կողմից ենթարկուել են ոչնչացման, ըստ այդմ էլ անհնար է, որ Սամուէլը ժամանակին դրանք ունենար իր ձեռքին եւ ըստ դրանց կազմէր իր ցանկը, այլ աւելի հաւանական է, որ Սամուէլը, ինչպէս հետագայում Մխիթարը, պատրաստի ցանկ է ստացել: Նշուած տաս գրքերից հայ մատենագրութեան մէջ պահպանուել են միայն երկուսը. Ադամի ապաշխարութիւնը եւ Տիրոջ մանկութիւնը, իսկ մնացածը ոչ միայն հայ գրականութեանը, այլ ընդհանրապէս անյայտ երկեր են: Պրոֆ. Ցահնն իր վրայ վերցրեց դրանք առաւել յստակ պարզելու աշխատանքը, եւ ստորեւ մենք կներկայացնենք նրա հետազօտութեան արդիւնքները[585]*:*

Գորտոսակը բացարձակապէս անյայտ երկ է: Կիրակոսակը յիշեցնում է սուրբ Կիրակոսի վարքը (Ciricus, Quiricus կամ Cirycus) Յուդիտայի եւ Գէորգինայի, որը հերետիկոսական է ճանաչուել. Պօղոսի տեսիլը հրատարակուել է ասորերէն[586]*. այն գրուել է մօտաւորապէս 380 թ. եւ յիշատակւում է Օգոստինոսի եւ Սոզոմենոսի մօտ: Ադամի գրքի անունը հանդիպում է Պիտրայի եւ Մխիթարի ցանկերում, իսկ Տիադեկը՝ Պիտրայի եւ Նիկիփորի մօտ: Անյայտ է մնում Մանկութեան Աւետարանը, որը ներկայ դէպքում ենթադրուել է որպէս չատ աւետարաններից մէկը: Մնացած հինգ գրքերից մօտաւոր որոշւում է միայն մէկը՝ Ծիոն օրհնութեան. Ցահնը կարծում է, որ հնարաւոր է այդ գրքի ներքոյ հասկացուել է Յակոբ Մծբնացու (աւելի ճիշտ Ափրահատի) 23րդ ճառը, որի հին հայերէն թարգմանութիւն գոյութիւն չի ունեցել, որը կարծես թէ թարգմանուել է աւելի ուշ եւ բոլորից առանձին: Ընթերցողին դժուար չէ համոզուելը, որ Ցահնի բոլոր բացատրութիւնները հիմնուած են ենթադրութիւնների վրայ, քանի որ Սամուէլի ցանկը սոսկական անուններից բացի որոշակի ոչինչ չի տալիս, իսկ այդ անուններին համապատասխանող երկեր գոյութիւն չունեն. միայն մի բացառութեամբ՝ Պօղոսի տեսիլի: Պէտք է միայն յուսալ, որ ժամանակի հետ հայերէն անկանոնների ուսումնասիրութեամբ հնարաւոր կլինի հարստացնել մեր աղքատիկ տեղեկութիւնները:*

Ե. *Սրանով Սուրբ Գրոց կանոնին վերաբերուող նիւթը դեռեւս չի սպառուում: Բաւական հետաքրքիր են կանոնի ցանկերը եկեղեցական ժողովների կանոններում եւ Աստուածաշնչի բուն ձեռագրերի յաւելուածներում: Դժբախտաբար եկեղեցական կանոնների բազմաթիւ ժողովածու-*

585 **Th. Zahn,** Forschungen, V, III, էջ 110:

586 **Brandes**, Visio Pauli, 1885: * **Brandes Herman**, Visio s. Pauli, ein Beitrag zur Visionslitteratur, mit einem Deutschen und zwei lateinischen texten, Halle, 1885.

ներ ուսումնասիրուած չեն, իսկ դրանց հրապարակումը միայն վերջերս ձեռնարկել է էջմիածնի սինոդի անդամ Արիստակէս արքեպիսկոպոս Դաւթեանը, որը դրանք մաս առ մաս տպագրում է Թիֆլիսում հրատարակուող «Լումայ» հայերէն ամսագրում[587]*: Այս հրատարակութիւնում կանոններն ըստ բովանդակութեան բաժանուած են գլուխների, որով նրանց օգտագործումը զգալիօրէն հեշտացել է: [Աստուածաշնչի] կանոնի մասին կանոնները տրուած են «Յաղագս եկեղեցական գրոց եւ ընթերցուածոց» (էջ 37-43) խորագիրի տակ: Այստեղ կան կանոններ այն մասին, թէ եկեղեցում երբ եւ ինչպէս պէտք է կարդալ Սուրբ Գրոց մասերը, եւ ո՛ր մասերն է անհրաժեշտ կարդալ, եւ տրւում է ամբողջ Սուրբ Գրքի կանոնի չորս ցանկ:*

Նրանցից բուն Հայաստանում սահմանուած է միայն Սիոն կաթողիկոսի կանոնը, իսկ մնացած երեքը թարգմանուած են յունարէնից:

Առաջին կանոնն ընդունուել է այն ժողովում, որին մասնակցել են «435 եպիսկոպոսներ», երկրորդը՝ «Անտիոքի ժողովում», իսկ երրորդն այն կանոնների շարքում է, որոնք ունեն «Կանոնք հարցն հետեւողաց» խորագիրը: Մենք յոյս ունէինք նրանց բնագրերը գտնել Mansi, Collectiones conciliorum-ում, կամ էլ համապատասխան բացատրութիւն Hefele, Conciliengeschichte-ում, սակայն մեր որոնումներն ապարդիւն եղան: Նրանց մօտ բերւում է Սուրբ Գրքի Հ՛ր 85 կանոնը՝ այսպէս կոչուած առաքելական կանոններից, Լաւոդիկէի ժողովի Հ՛ր 60ը եւ Հիպպոնի ժողովի Հ՛ր 36ը, բայց նրանցից ոչ մէկը չի կարող հայերէնով գոյութիւն ունեցող կանոնների հիմնօրինակը համարուել: Ցահնի նորագոյն՝ Geschichte des neutestamentlichen Canons աշխատանքը եւս մեր երեք ցանկերի մասին ոչինչ չի հաղորդում: Ստորեւ բերում ենք դրանք:

ա) 435 եպիսկոպոսների կանոնի առաջին ցանկը վերաբերում է Հին եւ Նոր Կտակարանների գրքերին.

«Իբրեւ չէ մարթ յիմաստութենէ ուրուք եղեալ պաշտել յեկեղեցւոջ, բայց եթէ ի Գրոց Սրբոց իցէ, կամ կանոնեալք են յեկեղեցւոջ, թէ սաղմոսք, թէ օրհնութիւնք. այնպէս եւ գիրս ինչ չէ պարտ կարդալ յեկեղեցւոջ, բայց եթէ որ կանոնեալքն են, այսինքն՝ զ Նոր օրէնս եւ զՀին Կտակարանս:

Եւ զոր ինչ արժան է կարդալ, են այսոքիկ. զԱրարածս, զԵլս, զՂեւտացիս, զԹիւս, զերկրորդ օրէնս, զՅեսու, զԴատաւորսն, զՀռութ, զԹագաւորութիւնս Դ., զՄնացորդս Բ., զեզր Բ., զՍաղմոսն Դաւթի՝ ՃԾ., զՍո-

---

587 Լումայ, 1901, Կանոնք ժողովոց: * **Դաւթեան Արիստակէս արքեպս.**, Կանոնք ս. ժողովոց եւ ս. հարց եկեղեցւոյ.- Լումայ, 1900, Գիրք Ա., էջ 1-16, Գիրք Բ., էջ 17-32, 1901, Գիրք Ա., էջ 33-48, 1902, Հ՛ր 2, էջ 49-64, Հ՛ր 4, էջ 65-80, Հ՛ր 6, էջ 81-96, 1903, Հ՛ր 2, էջ 97-112, Հ՛ր 4, էջ 113-128, 1904, Հ՛ր 1, էջ 129-140:

ղոմոնի Գ.՝ զԱռակս, զԵկղեստիաստէսն, զերգ երգոցն, զՅոբ, զերկոտասան մարգարէսն՝ զՈվսէ, զԱմովս, զՄիքիա, զՅովէլ, զԱբդիու, զՅովնան, զՆաւում, զԱմբակում, զՍոփոնիա, զԱնգեա, զԶաքարիա, զՄաղաքիա, զեսայի, զերեմիա, զեզեկիել, զԴանիէլ, զՄակաբայեցիս:

Զնոր Կտակարանաց՝ չորս Աւետարանս՝ զՄաթէոս, զՄարկոս, զՂուկաս եւ զՅովհաննէս, Գործք առաքելոց, կաթուղիկէք թուղթ է.՝ Ա. Յակոբայ, Բ. Պետրոսի, Գ. Յովհաննու, Ա. Յուդայի, Պօղոսի թուղթք՝ Ա. առ Հռովմայեցիս, Բ. առ Կորնթացիս, Ա. առ Գաղատացիս, Ա. առ Եփեսացիս, Ա. առ Փիլիպեցիս, Ա. առ Կողոսակցիս, Բ. առ Թեսաղոնիկեցիս, Ա. առ Եբրայեցիս, Բ. առ Տիմոթէոս, Ա. առ Տիտոս, Ա. առ Փիլիմոն:

Այս սահմանք եղան, որ ի միասին ժողովեալք եպիսկոպոսք Նէե.»[588]:

Սա նման է Գրիգոր վարդապետի կանոնին, որը չունի Մակաբայեցւոց գրքերը. իսկ Յահնի գրքում բերուած յունարէն տարբեր ցանկերի մէջ կանոնը նմանութիւն ունի Նիկիփորի (Բ. էջ 297, 298) եւ 60 գրքերի (Բ. էջ 290, 291) կանոնների հետ: Բայց այդ ցանկում եւս Մակաբայեցւոց գրքերը կանոնականների մէջ չեն դրուած: Սա էական տարբերութիւն է, իսկ գրքերի յաջորդականութիւնը համարում ենք երկրորդական տարբերութիւն:

բ) Երկրորդ կանոնը՝ Անտիոքի երկրորդ ժողովի, նոյնպէս տարածւում է Հին եւ Նոր Կտակարանների գրքերի վրայ: Անտիոքի առաջին երեք ժողովները, որ ուղղուած էին Պօղոս Սամոսատացու դէմ, տեղի են ունեցել 264–269 թուականներին, բայց յայտնի չէ, թէ այդ ժամանակ Սուրբ Գրոց կանոն սահմանուած լինի, կամ պէտք է ենթադրել, որ բնագիրը կորել է, եւ պահպանուել է միայն հայերէն թարգմանութիւնը:

Բ. Ժողով Անտիոքայ.

«Ամենայն գիրք աստուածաշունչք են ի խրատ եւ ի վարդապետութիւն, բայց կանոնեալ եւ օրէնուսոյց գիրք, զո՞րս պարտ է ընդունել՝ ցուցցուք: Ծնունդ, Ելք, Ղեւտականն, Թիւսն, Երկրորդ օրէնսն, Յեսու Նաւեայ, Դատաւորսն, Հռութ, Չորս Թագաւորութիւնս, երկու Մնացորդացն, Եզրաս, Դաւթի ՃԾ. Սաղմոսն, Առակքն Սողոմոնի, Եկեղեսիաստեսն, Օրհնութիւն օրհնութեանց, Յոբն, Երկոտասան մարգարէսն՝ Ովսէ, Ամովս, Միքէ, Յովէլ, Աբդիու, Յովնան, Նաւում, Ամբակում, Սոփոնիա, Անգէաս, Զաքարիաս, Մաղաքիա, Եսայեայ, Երեմիաս, Եզեկիէլ, Դանիէլ: Համանգամայն հնոց Կտակարանաց տունք են ՔՃԻԹ. (9129):

Նոր Կտակարանք. չորս աւետարանիչքն՝ Մաթէոս, Մարկոս, Ղուկաս, Յովհաննէս, Գործք առաքելոց, կաթուղիկէից թուղթք է.՝ Ա. Յակոբայ, Բ. Պետրոսի, Գ. Յովհաննու, Ա. Յուդայի, Պօղոսի թուղթք ԺԴ.՝ առաջին առ Հռովմայեցիս, Բ. առ Կորնթացիս, Գ. առ Նոսին, Դ. առ Գա-

588 Լումպ, էջ 38-39:

դատացիսն, Ե. առ Եփեսացիս, Զ. առ Փիլիպպեցիս, Է. առ Կողոսացիս, Ը. առ Թեսաղոնիկեցիս, Թ. առ Նոսին, Ժ. առ Եբրայեցիս, ԺԱ. առ Տիմոթէոս, ԺԲ. առ Նոյն, ԺԳ. առ Տիտոս, ԺԴ. առ Փիլիմոն:

Այս սահմանք եղան ի ժողովոյն Անտիոքայ: Միանգամայն նորոյ կտակարանաց Ա. ՓՇՂ. Ա. (8590): Եւ միահամուռ Հին եւ Նոր կտակարանաց՝ ԺՓԶԻ.»[589]:

Երկրորդ կանոնը նախորդից տարբերւում է նրանով, որ ունի եզրի մէկ գիրք եւ բացառւում է Մակաբայեցւոց գրքերը:

գ) Երրորդ կանոնը՝ առաքեալների հետեւորդներին (առաքելական այրերի) ներկայացնում է միայն Հին կտակարանի գրքերը:

Ս ըբ ոց Հ ա յ ր ն Հ ե պ ե ո ղ ս.

«Լուռ մտօք կալ ժողովրդականաց եւ մի՛ բազում լինել վարդապետք. գո՛ւցէ, որով չափով չափէ, չափեսցի նմա, կամ դատիւ դատեսցի. եւ խնամի աչխարհականն՝ այլ ոչ կարէ խնամել:

Եւ եղիցի ձեզ ամենեցուն եկեղեցականացդ Սուրբ Գիրք Հին եւ Նոր կտակարանաց՝ Մովսիսի. Ծնունդքն, Ելք, Ղեւտացիք, Թիւք, Երկրորդ օրէնք, Յեսու, Դատաւորաց, Հռութ, Թագաւորութիւնք չորք, Մնացորդաց աւուրք, Եզրի Բ. բանք, Յովբ, Սաղմոսացն ՃԾ., Սողոմոնի, Գ., Մարգարէք ԺԲ., Եսայի, Երեմիա, Եզեկիէլ, Դանիէլ: Այլն՝ Մակաբայեցիք եւ Սիրաք կալջիք առ ի խրատել զմանկունս ձեր»[590]:

Եզրափակող բառերը յիշեցնում են առաքելների կանոնի բանաձեւը, որի մէջ Եսթերն ու Մակաբայեցիները կանոնական են համարւում:

դ) Չորրորդ կանոնը՝ Պարտաւինը սահմանուել է 678 թուականին՝ Պարտաւ քաղաքում Հայոց Սիոն կաթողիկոսի նախագահութեամբ կայացած ժողովի ժամանակ: Կանոնն ինքնին կազմուած է երկու մասից. առաջին մասում քահանային հրամայւում է չնչանադրել եւ չպսակել արիւնահոսութեամբ աղջկայ, քանի դեռ նա հիւանդութիւնից չի ապաքինուել[591]:

---

589 [Լումպ, էջ 42-43]: Թուի գումարի տառերը եղծուած են եւ տպուած՝ «ԹԻ. ՁԻ.», *որ* «ԺՓ. ՁԱ.»ի բացայայտ աղաւաղում է՝ գրիչների հեշտութեամբ կարող էին «ԺՓ.»ն «ԹԻ.» դարձնել: * Ռուսերէն մասում այս «թիւ»ը վերծանել է՝ «18720». մինչդեռ՝ 9129ի եւ 8590ի գումարը պէտք է աներ՝ 17.719: Նոր հրատարակութեան մէջ այսպէս է. «Այս սահմանք եղան ի ժողովոյն Անտիոքայ. միաձգամայն Նորոց Կտակարանաց տունն ԱՓԾՂԱ.: Եւ միաձամուռ Հին եւ Նոր Կտակարանաց տունն ԹԻՁԻԷ.». տես Կանոնագիրք Հայոց, հտ. Բ., աշխատ. **Վազգէն Յակոբեանի**, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1971, էջ 54՝«Կանոնք երկրորդ Անտիոքայ»:

590 Լումպ, էջ 37-38:

591 «Աղջիկ խօսեալ առն՝ թէ ապաւար իցէ (տեռատես) մի՛ իշխեսցին քահանայքն այնպիսոյն պսակ դնել, կամ զուգել ընդ առն յամուսնութիւն, մինչեւ սրբեսցի յապաւարէն եւ ապա ամուսնասցի». [Լումպ, էջ 42]:

Իսկ ժողովի որոշման 24րդ յօդուածի երկրորդ մասն ասում է.

«Ա՛նպէս հայոց կաթողիկոսն է.

«Եւ եղիցի ձեզ ամենեցունց, եկեղեցականաց եւ աշխարհականաց պաշտելի Սուրբ Գիրք Հին եւ Նոր Կտակարանացն՝ Մովսէսի. գիրք՝ Ծննդոց, Ելից, Ղեւտական, Թիւք, Երկրորդ օրէնք, Յեսու Նաւեայ, Դատաւորք եւ Հռութայն, Թագաւորութեանց Դ., Մնացորդաց գրոցն աւուրք Բ., Եզրի Բ. բանք, գիրք Յոբայ, Սաղմոսացն գիրք Ա., Սողոմոնի Գ. գիրք, ԺԲ. մարգարէքն, Եսայի, Երեմիա, Եզեկիէլ, Դանիէլ:

Եւ յարտաքուստ պատգամաւորեսցի առ ի ուսուցանել զձեր մանկունս՝ զուսումնաբազումս Սիրաքայ իմաստութիւնն»[592]:*

Վերջին բառերը առաքելական կանոնի յունարէն բնագրի բառացի թարգմանութիւնն են. Ἔξωθεν δέ ὑμῖν προσιστορείσθω μανθάνειν ὑμῶς τὴν σοφὶαν τοῦ πολυμαθοῦς Σιράχ*: Կանոնի մէջ բացակայում են Նոր Կտակարանի մասերը, եւ պէտք է կարծել, որ դրանք բոլորովին էլ չեն եղել, կամ էլ այն կորել է առաջին օրինակողներից մէկի մեղքով:*

Երբ մենք Սուրբ Գրոց կանոնի այս բոլոր չորս ցանկերը համեմատում ենք իրար հետ, գտնում ենք հետեւեալ տարբերութիւնները. երկրորդում (բ.) կայ Եզրի մէկ գիրք, երրորդում եւ չորրորդում (գ., դ.) Յոբի գիրքը դրուած է Սաղմոսներից առաջ, առաջինում (ա.) Մակաբայեցւոց գրքերը կանոնական են համարւում, երրորդում դրանք Սիրաքի գրքի հետ միասին նախատեսւում են պատանիների դաստիարակութեան համար, իսկ չորրորդ կանոնը այդ նպատակի համար երաշխաւորում է միայն Սիրաքի գիրքը: Մանրամասն ուսումնասիրութիւնը ցոյց կտայ եկեղեցական կանոնների թարգմանութիւնների ժամանակը եւ կեանքում կիրառելիութեան իմաստով նրանց գործնական նշանակութեան աստիճանը: Այսուհանդերձ, երբ մենք ապշեցնող նմանութիւն ենք նկատում Պարտաւի ժողովի հայկական կանոնի եւ նրա կողմից առաքելական կանոնի բանաճեւի բացայայտ փոխառումը, պէտք է ենթադրենք, որ կանոնի մեր բերած երեք ցանկերը (ա., բ., գ.) զգալի ազդեցութիւն եւ պաշտօնական նշանակութիւն են ունեցել հայոց եկեղեցու համար: Սիոն կաթողիկոսն իր կանոնը կազմելիս այդ նշանակութիւնը հաշուի է առել, իսկ Գրիգոր վարդապետը նրանով, որ հաւատարիմ է մնացել Սիոնի կանոնին, ցոյց է տալիս, որ այդ կանոնը եկեղեցական գրականութեան մէջ սկզբնական շրջանում լիակատար կիրառութիւն է ունեցել:

Աստուածաշնչի ձեռագրերի մէջ առկայ կանոնացանկերը յատուկ քննութեան արժանի են այն պատճառով, որ նրանք ինքնուրոյն երկեր են, անկախ այն բանից, թէ ի՛նչ գրքեր կան բուն ձեռագրում:

592* [Լումայ, էջ 42]:

ե) Առաջին ցանկը մենք գտել ենք O^2 ձեռագրում, որը երկրորդ գրիչ Թորոս Ռուբինանցը գրել է գրքի վերջում: Ընդհանուր առմամբ Թորոսի ցանկը գրքերի թուով եւ յաջորդականութեամբ համապատասխանում է բուն ձեռագրին (տե՛ս ծնթ. 185-215)՝ տարբերուելով հետեւեալում. Սիրաքի գիրքը դրուած է Նոր Կտակարանի գրքերի շարքում՝ Պօղոսի թղթերից առաջ, Դանիէլ մարգարէն դրուած է Երեմիա մարգարէից առաջ, եւ ձեռագրում կայ առ Կորնթացիս Գ. թուղթը, իսկ ցանկում այն չկայ: Որպէս աւարտ Թորոսը գում է. [815ա] «Աստուածաշունչս ամէնն ՇԵ. (55) փերթ գիրք է, ու թէ զԱւետարանին ու զառաքելին Պաւղոսի գլխնին յետ ի յետ հաշուիս, նայ համարն ՀԱ. (71) կուգայ»:

զ) Երկրորդ ցանկը գտնում է K [Մ 183] ձեռագրի վերջում եւ տալիս է ոչ միայն գրքերի անուննները, այլեւ՝ իւրաքանչիւր գրքում քանի տուն կայ:

[573ա] «Վ֊ասն համարոյ հին ե֊նոր կ պակաբանաց.

Ծննդոց գիրքն տունք ՏՅԷ., ելքն՝ ՎՆ., Ղեւտացին՝ ՍՁ., Թիւքն՝ ՎՁԼԳ., երկրորդ աւրէնքն՝ Վ Ճ., Յեսուն՝ ՎՃ., Դատաւորքն՝ ՍՃԾ., Հռութն՝ Յ., Առաջին Թագաւորքն՝ ՍՁ., երկրորդ՝ ՍՆԼԲ., երրորդն՝ ՍԸ., Չորրորդն ՌՈ., Առաջին Մնացորդն՝ ՍՃԾ., երկրորդն՝ Վ., Առաջին Մակաբայեցւոցն՝ ՍՁԻԵ., երկրորդն՝ ՍԸ., երրորդն՝ ՁԾ., Չորրորդն՝ ՌՃ., երկոտասան մարգարէքն՝ ՎՅԱ., Եսային՝ ՎՊԻ., երեմիայն՝ ՎՊ., Բարուքն՝ ՅԾ., Ողբքն երեմիայի՝ ՅԿ., Թուղթ նորին՝ ՅԾ., Եզեկիէլն՝ Տ., Դանիէլն՝ ՌՁԾ., Սաղմոսն՝ ՐՃ., Առակքն Սողոմոնի՝ ՌՁԾ., Եկղէստիաստէսն՝ ՁԷ., երգս երգոցն՝ ՄՁՁ., Յոբն՝ ՌՈ., Իմաստութիւն Սողոմոնի՝ ՌՃ., Սիրաքն՝ ՍՊ., Առաջին Եզրն՝ ՌՅ., Երկրորդն՝ ՍՊ., Եսթեր՝ ՁԾ., Տուբիթն՝ ՁԾ., Յուդիթն՝ ՌՅ., Միահամուռ տունք՝ ՔՃԻԹ.:

Նոր՝ Աւետարանն Մատթէոսի ՍՈ., Մարկոսի՝ ՌՈ., Ղուկասու՝ ՍՊ., Յովհաննու՝ ՍՅ., Գործքն՝ ՍՊ., Թուղթն Յակոբայ՝ Յ., Պետրոսի առաջինն՝ Յ., երկրորդն՝ Մ., Յոհաննու առաջինն՝ ՄԼ., երկորդն՝ ՇՁ., երրորդն՝ ԼԷ., Առաքեալն՝ Հռովմայեցին՝ ՁՇԲ., Առաջին Կորընթացոց՝ ՊԽԲ., երկրորդն՝ Ո., Գաղատացւոց՝ ՅԺԲ., Եփեսացւոց՝ ՅՇԲ., Փիլիպերցւց՝ Մ., Կողոսացւոց՝ Յ., Թեսաղոնիկեցւոց՝ ՅԺԲ., երկրորդ՝ ՃՇ., Եբրայեցւոց՝ ՁՇ., Տիմոթէոսի առաջինն՝ ՄԻ., երկրորդ՝ ՃՁ., Տիտոս՝ ՂԳ., Փիլիմոնին՝ ԽԸ.»:

է) Երրորդ ընդօրինակութիւնը հանդիպում է LB^1 ձեռագրում եւ նրանից արուած ընդօրինակութիւններում: Այն գրել է եկեղեցական մատենագիր եւ ժե. դարի քարոզիչ Գրիգոր Տաթեւացին:

[5ա] «Կ֊ըսկզոզէ ե֊սա֊ՆՅ֊ն , որ այսպէս շարամբ֊սելէ զհին ե֊զնոր կ պակաբանս.

Որքան են եւ որք են Գիրք Սուրբք՝ Հին եւ Նոր Կտակարանս. Հին Կտակարանքն՝ Ե. գիրքն Մովսէսի այս են. առաջինն Արարածք, Ելք, Ղեւտականք, Թիւք, Երկրորդ օրէնք, Յեսու, Դատաւորք եւ Հռուէ, Զորս գիրք Թագաւորութեանց, որ լինի ԺԲ.: Որոց առաջինն պատմէ զՍաւուղայ Թագաւորին, երկրորդն՝ զԴաւթայ, երրորդն՝ զՍողոմոնի, չորրորդն՝ զՅուդայի եւ զԵղեկիէլի մինչեւ ցգերութիւն: Երկու Մնացորդք, երեք Եզրաս, Նէեմի, Եսթերա, Յուդիթն, Տուբիայ, որ լինի Ի.: Երեք գիրք Մակաբայեցւոցն, Սաղմոսն, Սողոմոնի Դ. գիրքն, որ է՝ Առակն, Ժողովող, Երգ երգոցն, եւ Իմաստութիւն, Սիրաքն, Յոբ, որ լինի՝ Լ.: Եսայի, Երկոտասան մարգարէքն, որոց առաջինն Ովսէէ, Ամովս, Միքիա, Յովէլ, Աբդիու, Յովնան, Նաւում, Ամբակում, Սոփոնիա, որ լինի՝ Խ.: Անգիա, Զաքարիա, Մաղաքիա, Երեմիա, Բարուք, Ողբք, Դանիէլ, Եզեկիէլ, եւ Կտակն վերջին, որ լինի՝ Ծ., պակաս մին. այսպէս թուեալ: Այլ զԲԺ.անքն մին գիրք եւ զԵրեմիայն մին գիրք համարեալ՝ լինին ԼԶ. գիրք Հին Կտակարանքն բովանդակ:

Իսկ Նոր կտակք յայտնի են. Աւետարանն Դ. գլուխ Մատթէոս, Մարկոս, Ղուկաս, Յովհաննէս, Տեսիլն Յովհաննու, եւ Ննջումն՝ էր ընդ եղբարսն, Գործքն, եւ Է. Թուղթ կաթուղիկէք, որոց առաջինն Յակոբոս, Բ. Պետրոս, Գ. Յոհաննու եւ Յուդայի վերջին, որ լինի ԴԺ.ան: Զորեքտասան Թուղթն Պօղոսի, որ լինի ԻԸ. որոց առաջինն Հռոմաեցւոց, երկու Կորնթացւոց, Գաղատացւոց, Եփեսացւոց, Փիլիպեցւոց, Կողոսացւոց, երկու Թեսաղոնիկեցւոց, Եբրայեցւոց, երկու Տիմոթէոսի, Տիտոսի, Փիլիմոնի, եւ երրորդ Թուղթ Կորնթացւոց, եւ Թադէոսի, որ լինի Լ.:

Եւ որպէս ասեն Կղեմ եւ Անանիա Դամասկացի՝ թէ Զ. գիրք այլ ընկալաք յեկեղեցի, որ է՝ Ընթերցուածն Յակոբա, եւ Կանոնք առաքելոցն, Բանք Յոստոսի, Գիրք Դիոնիսեա Արիսպագացւոյ, գիրքն Կրիսպոսի եւ Քարոզութիւն Պետրոսի առաքելոյն, իբր լինին ԼԶ. գիրք Հին Կտակարանացն եւ ԼԶ. Նորոյ, բովանդակն՝ ՀԲ.:

Դարձեալ գիտելի է, զի Հին Կտակարանք ամենայն յերիս բաժանին. որ է՝ Օրէնք, Մարգարէք, Սրբագիրք: Օրէնք՝ Մովսիսի Ե. գիրքն, որպէս ասացաւ, եւ մարգարէք Ը., որոց առաջինն Յեսու, երկրորդ՝ Դատաւորք եւ Հռութն, երրորդ՝ Բ. Թագաւորութեանցն եւ չորրորդ՝ Թագաւորութեանցն, հինգերորդ՝ Եսայի, վեցերորդ՝ Երեմիայն, եւթներորդ՝ Եզեկիէլն, ութներորդ՝ Երկոտասան մարգարէքն: Եւ երրորդ ժողովումն՝ Սրբագիրք. որոց առաջինն Յոբ, երկրորդ՝ Դաւիթ, երրորդ՝ Առակացն, չորրորդ՝ Ժողովն, հինգերորդ՝ Երգ երգոցն, վեցերորդ՝ Դանիէլն, եւթներորդ՝ Բ. Մնացորդացն, ութներորդ՝ Եզրի, իններորդ՝ Եսթերայն, որ լինի բովանդակն ԻԲ.: Զի ԻԲ. տառք են ալփաւիթայց եբրայեցւոյ, եւ ԻԲ. գլխաւոր արարածք, որպէս գիրք գումարեալ աստուածակերտ գրոց:

Իսկ Սիրաք, եւ Իմաստութիւն, եւ Յուդիթն, եւ Տաւբիթն, եւ Մակաբայեցիքն, եւ Կտակքն, եւ այլքն չեն այսմ համարոյ, այլ ընկալեալ են ի կարգս Աստուածաունչ գրոց:

Հրց. քանի՞ տուն է Աստուածաչունչ գիրք ամենայն: Պխ. Հին Կտակարանքն ամենայն ՔՃԻԹ. [9129], եւ Նոր Կտակարանքն ամէն տունք ՓՇՂԱ. [8591]: Միահամուռ Հին եւ Նոր Կտակարանք ԺՓԷՉԻ. [18720. իմա՛ 17720] տուն է»:

Գրգորի ցանկը մասամբ Հերոնիմոսի առաջաբանի վերաշարադրանքն է, բայց նա օգտուել է նաեւ Կղեմէսի եւ Անանիայի ցանկից, որի մասին վերեւում խօսել ենք (ծնթ. 575), եւ հայկական աղբիւրներից՝ Նոր Կտակարանի գրքերի թիւը լրացնելու համար, որ հաւասար է Հին Կտակարանի գրքերի 36 թուին: Վերջին աղբիւրից վերցուած են անկանոնների անունները՝ Յովհաննու Հանգիստը, առ Կորնթացիս Գ. թուղթը եւ Թադէոսի թուղթը: Վերջին երկասիրութիւնը մեզ յայտնի չէ, կարելի է մտածել Աբգարի թղթի մասին՝ վերագրուած նրա քարտուղար Լաբուբնայիին. սակայն այս ենթադրութիւնը պնդելն անհիմն է:

ը) Էջմիածնի Հ՟ր 484 [Մ 481] ձեռագրում (թերթ 4) ինչ որ մէկը կազմել է Սուրբ Գրոց գրքերի ծագումնաբանական ծառը՝ հետեւեալ վերնագրով. «Առաջին կարգ աստուածային կտակարանաց ըստ ուղղափառ վարդապետաց եկեղեցւոյ»: «Աստուածային գրքերի» ընդհանուր արմատից ճիւղաւորուում են՝ ա) Հնգամատեան, բ) Մարգարէք, գ) Վկայաբաններ եւ դ) Անկանոններ՝ «թագուցեալ գրեանք կտակարանաց», Իմաստութիւն, Յուդիթ, Տովբիթ, Մակաբայեցիք, Հովիւ[593], Բարուք, Նոր Կտակարանը մէկ ճիւղ ունի. Աւետարանք՝ Մատթէոս, Մարկոս, Ղուկաս, Յովհաննէս, Պօղոս, Գործք, Եօթ թուղթք, Յայտնութիւն:

թ) Մի ցանկ, որ գրուած է չափածոյ, պատկանում է Առաքէլ եպիսկոպոս Սիւնեցուն: Նա Գրիգոր Տաթեւացու աշակերտն ու զարմիկն էր, յայտնի է եղել որպէս յօրինող տարբեր քարոզների եւ չափածոների[594], որ չափածոյի է վերածել Ադամի գիրքը, Ներսէս Մեծի պատմութիւնը, գրել է չափածոներ Սաղմոսների եւ Սուրբ Գրոց մասին: Կանոնի մասին նրա չափածոն, որքան մեզ յայտնի է, դեռեւս չի հրատարակուել եւ որեւէ տեղ չի յիշատակուում: Մենք այն յայտնաբերեցինք Պրոֆ. Խալաթեանցի մի ձեռագրում՝ տարբեր երկերից կազմուած մի ժողովածուում (թերթ 387-

593 «Հովիւ» գրքի անուան օգտագործումը կապած է առաջացնում՝ պատճէնած չէ՞ արդէօք այդ ծագումնաբանական ծառը լատիներէնից:

594 **Զարբհ.**, Պատմ. հայ նոր դպր., էջ 249, եւ Յ. Տաշեան, Յուցակ, էջ 1061-1062:

395) եւ էջմիածնի գրադարանի Հ՟ր 599 [Մ 702. 186ա-9բ][595] ձեռագրում եւ այստեղ բերում ենք նրա բնագիրը:*

ՀԱՄԱՌՈՏ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ԳՐՈՑ[596]
Տէր[1] Առաքել դիտող Սիւնեաց՝
զուրկ եւ թափուր յամէն չնորհաց,
զարդարեցի զկարգ գրանաց.
զԱստուածաչունչ կտակարանաց:
Վասն այն յայտնեմ զբանս գրանաց՝
ըզՀին եւ զՆոր Կտակարանաց,
զի ուսանին զանուանս կարգաց
իւթանասուն ‘ւ երկու գրանաց:
Քառասուն ու չորս Հին կտակին,
/186բ/ քսան եւ ութ Նոր կտակին,
Աստուածաչունչ կոչին սոքին,
զոր խաւսեցաւ Աստուած Հոգին[2]:
Նախ է հինգ գիրք մովսիսական՝
Ծընունդք եւ Ելք եւ Ղեւտական,
Թիւքն եւ երկրորդ աւրէնքն որ կան՝
խրատք աշխարհի ընդհանրական:
Վեց աւրհնութիւնքն յակոբեան՝
վերայ որդոցն երկոտասան,
զի աւրհնութիւնքն որ ադամեան,
յորդոց յորդիս կարգաւ երթան:
Իսկ երրորդ կարգն որ յետ սոցա՝
գիրք եւթն՝ Յեսու որդի Նաւեայ,
ութ՝ Դատաւորքն որ յետ նորա,
ինըն՝ Հռութ մայրն Յովբեթայ:
Սաղմոս կոչի մեծին Դաւթայ[3]
կին /187ա/ Բոյոսի մայր Յովբեթա.

595* Յաջորդող բնագրի խորագրի սկզբում ունէր «Համառօտ» բառը, որ ՄՄ Հ՟ր 702 ձեռագրում չկայ (Խալաթեանցի ձեռագրի°ց է առել). ամբողջը համեմատել եւ տասնեակ շեղումներ սրբագրելով՝ համապատասխանեցրել ենք ՄՄ Հ՟ր 702 ձեռագրին, նաեւ՝ բնագիրը մշակել ենք ըստ գլխատառի եւ կէտադրութեան գործածութեան ներկայիս կանոնների:

596 Տարընթերցումներ՝ ըստ Պրոֆ. Խալաթեանցի ձեռագրի՝ Խ, որ չունի ընդհանուր վերնագիրը: 1. Խ չունի տէր բառը: 2. Խ զՀոգին: 3 Խ դաթիայ: 4. Խ զյովբէթ: 5. Խ չունի «սենեկապետ Սողոմոնին» բառերը: 6. երկու ձեռագրում էլ գրւում է *Բաղամ*՝ *Յերեբովամ*-ի փոխարէն, Մնացորդաց 2[2]: 7. Խ՝ Է.] Ե.: 8. Խ գործքըն] գրեցան: 9. Խ եաւթնեքեան] ամէնեքեան: 10. Խ գոնցուք [*Մ.Տ-Մ.՝ սրա փոխարէն տպել է՝ գտցուք]:

զի Յովբէլթ[4] ծնաւ զՅեսսէ տղա,
Եսսէ ծնաւ զԴաւիթ արքա:
Թագաւորութեանց գիրք չորեքին,
սՍղմոսն եւ չորս Սողոմոնին.
Յոբ եւ Սիրաք սրբահոգին,
սենեկապետ Սողոմոնին[5]:
Այս քսան գիրք հին կտակին,
որ մինչեւ յայս վայր դիպեցին,
յետ այսորիկ բաժանէին
թագաւորութիւնք ազգի նոցին:
Րոբովամ որդի Սողոմոնին
թագաւորեաց բոլոր ազգին,
‘ւ յետոյ Բաղամ[6] ծառայ նոցին.
որ փախեաւ յահէ Սողոմոնին:
Զի սա յԵգիպտոս փախեալ մնաց,
մինչ Սողոմոն արքայն նընջեաց.
յետոյ եկեալ հակառակեաց,
տասըն ցեղին թագաւորեաց:
Քսան ու մին գիրքն Եսայեայն,
քսան /187բ/ երկու՝ Երեմիային,
քսան երեք՝ Եզեկիէլին,
երկոտասանքն ի միասին:
Այս երեսուն եւ հինգ լինին
գրեանք Հնոյ Կտակարանին.
մինչեւ ցայս վայր կարգն երկրորդին
մինչդեռ կային յիւրեանց երկրին:
Յետ այսորիկ գերի գնացին
ի Բաբելոն բոլորովին.
Հ. ‘ւ (72) երկու տարին
ազգն ամենայն գերի գնացին:
Իսկ երրորդ կարգն որ սկսանին,
երկու եզրսն են առաջին,
որ այլ եւ այլ ժամանակին,
միայն անուամբ համաձայնին:
Մինն ի յազգէն էր Յուդային,
մին՝ ղեւտական քահանային,
յետ գերութեան Բաբելոնին
զկտակարանքն սոքա գրեցին:

Մինն Եզրաս էր Սաղաթիէլ,
որ ծնաւ որ/188ա/դի զՋաւրաբաբէլ.
Հոգով Սրբով լցեալ սայ էր,
զեղծեալ գրեանսըն նորոգէր:
Զի կտակարանքն որ ընդ նոսին
ի Բաբելոն կորեան նոքին.
սոցա յայտնեաց Աստուած Հոգին,
որ զամենայն նորոգեցին:
Եւ երկու գիրք Մնացորդ[աց]ին,
զոր վեցեքին սոքա գրեցին.
եւ մնացորդ վասն այն ասեն,
զոր յետոյ սոքա զմնացեալս գրեցին:
Դանիէլին եւ Եսթերին,
Բարուք եւ Մակաբայեցին,
Տուբիթ, Յուդիթ, կարգ Նե[յէ]մին,
որ յերրորդ կարգս աւարտեցին:
Այս են գրեանք Հին կտակին
քառասուն չորս գիրք գլխովին.
Աստուածաշունչ կոչին սոքին,
զոր խաւսեցաւ Աստուած Հոգին:
Սաղաթիէլս այս ցանկալի
եւ ե.[7] (5) ընտրեալ արք ընդ նըմին,
զեղծեալ գրեանս կտա/188բ/կարանին
քառասուն աւր զամէն գրեցին:
Յետ սոցա Նոր Կտակարանին,
քսան եւ Ը. (28) գիրք անուանին.
որ գալստեամբ աստուածային
զայս խաւսեցաւ Աստուած Հոգին:
Նախ չոր[ս] գլուխ Աւետարան,
Թուխտ Պաւղոսի չորեքտասան
Առաքելոց գիրքն գրեցան[8]
Կաթուղիկէքն ամենեքեան[9]:
Այլ եւ Տեսիլն Յոհաննու,
որ յայտնեցաւ նմա յԱստուծոյ.
Էր ընդ եղբարսն յաւուր մահու,
որ գրեցաւ ի Յոհաննու:
Այս ԻԸ. գիրք ըստ կարգին
Կտակարանաց Նորոյ ուխտին

Աստուածաչունչ կոչի սոքին,
զոր խաւսեցաւ Աստուած Հոգին
Ըստ իւթանասուն ւ՚ երկու լեզուին,
նոյնքան թուով գիրք չնորհին
զի ամենայն ազգք առանձինն,
առցէ չնորհք աստուածային: /189ա/
Այս լինելոց է յետ Նեռին,
որ գան ի հաւ[ա]տս ամենեքին,
զի ամենայն լեզուք խոստովանին
զՔրիստոս Աստուած զանձն երեքին:
Եւ գոնցուք[10] հոգոյն այսքան թըւով,
զոր Տէրն յայտնեաց այս խորհրդով
եաւթանասնեկի է. (77) չափով
թողեցես եղբաւրն զմեղս յոլով:
Վասն այն ետ գրեանք այսքան թըւով,
որպէս ծաղկունք դեղ կազմելով.
եաւթեան մահու մեղքն չափով
Եաւթանասնեկի է. (77) կրկնելով.
Եւթանասնեկի է. (77) թուով,
չորս հարիւր Ջ. (480) համարով,
զոր չորս տարերքս յաւելորդով
մեք մեղանչեմք ուրթ խորհրդով:
Արդ, այսքան դեղ չնորհեաց չափով
զոր մեղանչեմք նոյնքան թուով.
զի սրբես/189բ/ցուք յախտէ հոգով
սուրբ գրոց ունկն դնելով:
Այժմ աւրհնութիւն տամ ցնծալով
երեք անձանց հաւատ[ալ]ով,
զոր այսչափ մեզ խրատ գրեաց
զմեզ ի մեղաց ազատելով:
Փառս տամ Հաւրն ազատողի
եւ Միածնին զմեզ փրկողի.
Սուրբ Հոգոյն կեցուցանողի,
Երրորդութեանըն միակի:

7. ԲՆԱԳՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ, ԱՌԱՋԱԲԱՆՆԵՐ ԵՒ ԳԼԽԱՑԱՆԿԵՐ

Մեզ մնում է խօսել նաեւ Սուրբ Գրոց բնագրերին գումարուած բոլոր այն երեք յաւելումների մասին, որոնց նպատակը բնագրի ընկալումը եւ նրանից օգտուելը հեշտացնելն է: Այդպիսի յաւելումների թուին ենք դասում բնագիրը գլուխների եւ տների բաժանելը, բոլոր գրքերի համար նախադրութիւնների եւ գլխացանկերի կազմումը, յայտնի հեղինակների երկերի տարբեր հատուածների փոխառումը, որոնք օգտագործւում են այս կամ այն գրքի առաջաբանի փոխարէն, մի խօսքով՝ այն ամէնը, ինչը ժամանակի ընթացքում եկեղեցու հայրերի երկերից առնելով՝ աւելի եւ աւելի շատ են գումարել Աստուածաշնչի բնագրին: Անկասկած, դրանք մատենագրական մեծ հետաքրքրութիւն ունեն՝ արտացոլելով հների քննադատական հայեացքները եւ Սուրբ Գրոց տարբեր հարցերի նրանց ընկալման աստիճանը:

Ինչպէս կտեսնենք, այս ամբողջի՝ Հին Կտակարանին վերաբերող առաւել մեծ մասը գլխաւորապէս իրենց իսկ՝ հայոց ինքնուրոյն աշխատանքն է, հնարաւոր է՝ այլ օրինակների նմանակմամբ, իսկ Նոր Կտակարանի յաւելումներն ամբողջութեամբ փոխառնուած են յունարէնից:

Ա. ա) Հայերը ծանօթ են եղել Տատիանի Համաբարբառին (Diatessaron)՝ ըստ Եփրեմ Ասորու մեկնութեան, որն ամբողջութեամբ պահպանուել է միայն հայերէն թարգմանութեամբ: Այդ թարգմանութիւնն արուել է Ե. դարում, ուստի պէտք է ենթադրել, որ Ամոնի բաժանումները եւ Եւսեբիոսի համաձայնութեան աղիւսակները, կարպիանոսին ուղղուած թղթի հետ միասին, չէին կարող իրենց վրայ չհրաւիրել առաջին թարգմանիչների ուշադրութիւնը, եւ որ նրանք հայերէն թարգմանութեան մէջ են մտել առնուազն թարգմանութիւնն ըստ յունարէն հիմնօրինակի սրբագրելու ժամանակ: Որպէս այս ենթադրութեան իսկական ապացոյց կարող ենք նշել այն հանգամանքը, որ բոլոր հին ձեռագրերը՝ Գ. Հ՛րք 1, 2, 5, 6 [Մ 6200, 7737, 7735, 2374] եւ այլն, ունեն դրանք, թէեւ կան նաեւ ձեռագրեր առանց դրանց. օրինակ՝ Գ. Հ՛րք 16, 17, 23 [Մ 311, 275, 283]: Կանոնների տասն աղիւսակները, որոնք յունական ձեռագրերի նմանողութեամբ դրուած են Մատթէոսի Աւետարանի սկզբում, դրւում են տարբեր գոյների չրջանակների մէջ, որոնք չրջապատուած են խորհրդանշական կենդանիների պատկերներով:

բ) Կանոնների այդ աղիւսակներին յաջորդում են աւետարանիչների մասին այսպէս կոչուած ὑπόθεσις-ներ, որոնք մենք համարում ենք աւելի ուշ ժամանակների յաւելումներ, որովհետեւ դրանք ոչ բոլոր ձեռագրերում կան, եւ բացի այդ, ὑπόθεσις-ներ գոյութիւն ունեն երեք, նոյնիսկ չորս տարբերակով՝ լեզուով եւ բովանդակութեամբ տարբեր. մի տարբերակն անգամ չափածոյ ձեւ ունի:

գ) Յայտնի է, որ Եւթաղ Ալեքսանդրացին՝ քերականութեան եւ գրականութեան լաւ իմացութիւններով մի մարդ, Ե. դարում ձեռնարկել է կազմելու Գործք առաքելոցի եւ Թղթերի տնաչափութիւնը, պարզել Նոր Կտակարանում առկայ՝ Հին Կտակարանից քաղումները, եւ իւրաքանչիւր գիրք օժտելով համառօտ առաջաբանով: Նրա աշխատանքի ճիշտ թուականն անյայտ է. ըստ որոշ վկայութիւնների՝ նա այն արել է Հարիւրամեակի սկզբում (410 թ.), իսկ ըստ միւսների՝ վերջում: Նրա աշխատանքն ամբողջութեամբ թարգմանուած է հայերէնի, բայց ե՞րբ՝ արդեօ՞ք Ե. դարո՞ւմ, ինչպէս ընդհանրապէս ընդունուած է կարծել, թէ՞ աւելի ուշ, յայտնի չէ: Ձեռագրերի տուեալների հիման վրայ դժուար է որոշակի որեւէ բան ասել, որովհետեւ նրանցից ամենահինը 1220 թուականի է: Վերը բերուել են «Կայսերաց գրք»ից քաղումներ, «Գիրք պատճառաց»ից (Liber Causarum) եւ ամբողջութեամբ տպագրուել է առաքելական թղթերի առաջաբանների երկրորդ տարբերակի բնագիրը: Այս ամէնի հիման վրայ մենք կարող ենք եզրակացնել, որ եօթներորդ հարիւրամեակում հայերը ծանօթ են եղել Եւթաղի աշխատանքին, իսկ այն աւելի վաղ ժամանակի վերագրելու համար դեռեւս որեւէ ուղակի վկայութիւն չունենք: Յետոյ մենք գիտենք, որ ամբողջ աշխատութեան համար Եւթաղի ընդհանուր առաջաբանը՝ այսպէս կոչուած Եւթաղի աղերսը, հայոց եկեղեցում կանոնական նշանակութիւն է ստացել եւ ընթերցւում է Համբարձման օրը:

Անկասկած, տարբեր ձեռագրերում առկայ հետեւեալ յաւելումներն ուշ շրջանի ծագում ունեն. ա) Գործք առաքելոցի եւ Պօղոսի Թղթերի երկրորդ առաջաբանները, որոնք մենք առիթ ենք ունեցել տեսնելու St[1], Sk[2], Ja ձեռագրերում, բ) «Անուանք վիճակեալ սարկաւագացն, որ եղեն յառաքելոցն» եւ նրանց գործած հրաշքները՝ նոյն այդ ձեռագրերում եւ գ) «Ընթացք Պօղոսի առաքելոյն»:

Բ. *Հին Կտակարանի յաւելումներն առաւել բազմազան են եւ բաժանւում են՝ յաւելումների, որոնք վերաբերւում են բոլոր գրքերին, ապա՝ առանձին գրքերի վերաբերող յաւելումների: Ընդ որում, պէտք է նկատենք, որ այդ բոլորն աւելացուել են հետագայում, ո՛չ առաջին թարգմանութեան ժամանակ:*

ա) Նախադրութիւնները եւ գլխացանկերը մենք դիտարկելու ենք միասին, որովհետեւ նրանք կազմուել են միասին, եւ իրար հետ սերտ փոխկապակցուած են: Ձեռագրերում նրանց տեղը համապատասխան գրքի սկզբում է, բացառութեամբ այն դէպքերի, երբ նրանք, ընդօրինակողներից անկախ պատճառներով, գրուած են խմբերով: Առաջաբանների համար հայերէնում օգտագործւում են՝ Նախադրութիւն, յառաջաբան եւ պատճառ բառերը՝ praepositio, prologus եւ argumentum կամ Causa, գլխացանկերի համար՝ Գլուխք եւ ցանգք՝ capitula եւ indices: Առաջաբաններն ընդհանրապէս ծաւալով զբաղեցնում են մէկ սիւն կամ Զօհրապեանի հրատարակութեան տասնեակ տողեր: Նրանց բոլորի ընդհանուր կառուցուածքը միանման է, եւ թէ՛ լեզուով, թէ՛ ոճով կարող են պատկանել միայն մէկ հեղինակի: Այդ կառուցուածքն ակնառու ներկայացնելու համար բերում ենք առաջին երկու՝ Ծննդոց եւ Ելից գրքերի առաջաբանների բովանդակութիւնը:

Ծննդոց գիրքը գրել է առաջին մարգարէն, երբ նա Եգիպտոսում մարգրէութեան չնորհ է ստացել: Մարգարէութիւնն անյայտի իմացումն է եւ արտայայտւում է կանխագուշակութիւններում, պատմութիւններում եւ օրէնսդրութիւնում: Մարդիկ այն ժառանգութիւն են ստացել որպէս սատանայի դէմ պայքարի միջոց եւ Յիսուս Քրիստոսի մարդեղացումը կանխաճանաչելու համար: Աստուած մարդկանց տուեց գրուած օրէնքներ, որպէսզի նրանք չմոռանան դրանք, իսկ Ծննդոց գիրքը գրուել է ճշմարտութեան իմացութեան համար եւ որպէս յորդոր՝ ուղղուած մոլորուած ու Աստծուն չընդունող մարդկանց: Առաջաբանը վերջանում է գրքի բովանդակութիւնը մի քանի նախադասութեամբ թռուցիկ վերապատմելով:

Ելից գիրքը հրէաները բոլոր գրքերից աւելի են յարգել այն պատճառով, որ այն պատմում է Եգիպտոսից նրանց հրաշքով ազատուելը: Առաջաբանի վերջում այդ հրաշքով փրկութեան վերաչարադրումն է:

Գլխացանկերը հաղորդում են գրքի կամ առանձին հատուածների բովանդակութեան էութիւնը, կամ էլ պարզում են, թէ Հին Կտակարանի որեւէ մաս ի՛նչ կապ ունի Նոր Կտակարանի հետ: Ամէն գրքի բաժինների թիւը լատինական վուլգատայի գլուխներից ընդհանրապէս չատ է տարբերւում. օրինակ, Ծննդոց գիրքն ունի հայկական 58 գլուխ, լատինական՝ 50. Ելքի հայկականը՝ 169, լատինականը՝ 40, Երկրորդումն օրինացի հայկականը՝ 140, լատինականը՝ 27. եւ այլն:

Փորձենք լուծել այն հարցը, թէ որտեղից են այդ առաջաբանները եւ գլխացանկերը: Մինչեւ այժմ հայ գրականութեան մէջ իշխում է այն կարծիքը, թէ նրանք Աստուածաշնչի գրքերի հետ միասին ասորերէնից կամ յունարէնից թարգմանուել են հինգերորդ դարում: Զօհրապեանն իր

առաջաբանում գրում է, թէ՝ ինքը Միլանի Ամբրոսեան գրադարանում վարքագիրների եւ մարգարէների գրքերի հետ միասին տեսել է ԺԹ. դարի ասորական մի ձեռագիր, «որ պարունակէր զիմաստնական եւ զմարգարէական գիրս եւեթ, ի սկիզբն անցնիւր գրոց ունէր կարգեալ զցանկ գլխոց, որ գրեթէ բառ առ բառ համեմատէր ընդ մերումս»[597]: Միայն թէ նա զարմանում է, որ ասորական ձեռագրում նախադրութիւններ չկան, որովհետեւ առաջաբանների եւ գլխացանկերի ոճի եւ լեզուի նմանութիւնը թոյլ չի տալիս դրանց թարգմանութիւնը վերագրել տարբեր հեղինակների եւ ժամանակների[598]: Զարբհանալեանը մտածում էր, թէ քանի դեռ չի գտնուել յունարէն հիմնօրինակը, չի կարող ընդունուել կարծիքը նրանց, ովքեր նրանց հեղինակ են համարել Եւսեբիոսին[599], «հաւանականաբար կրնանք կարծել», ասում է նա, «թէ ի մերոց յօրինուած ըլլան եւ կամ նմանողութեամբ յոյն լեզուով չարագրուած նման գրուածի մը, որ կամ իսպառ անհետացած է, եւ կամ դեռ յայտնուած չէ: Յօրինման եւ չարագրութեան ոճն թուին հաւատարմացընել թէ բուն ազգային ըլլան»[600]: Զարբհանալեանի ենթադրաբար արտայայտած կարծիքն այժմ հաստատւում է անառարկելի փաստերով, բայց ծանօթանանք նաեւ Ն. Բիւզանդացու կարծիքի հետ, որի մասին խօսք է եղել ներածութեան մէջ: Նրա կարծիքով «Ոմանք յայս Նախադրութեանց թուին արդարեւ գրեալք ի Հայ եկեղեցականէ», որ հաստատում են Եւսեբիոսի ժամանակագրութեան հայերէն թարգմանութիւնից արուած բառացի փոխառութիւնները, «կան բաւական զօրաւոր պատճառք՝ արտաքին եւ ներքին՝ առ ի կարծել թէ Հին Կտակարանի բազում Նախադրութեանց եւ Գլխոց սկզբնագիրն ասորական եղած է»[601]: Այդ պատճառները հետեւեալն են. ա) Եփրեմ Ասորին ունէր Հին եւ Նոր Կտակարանների չատ գրքերի մեկնութիւններ, բ) Ամբրոսեան գրադարանում կայ մի ասորերէն ձեռագիր՝ գլխացանկերով, գ) առաջաբանների եւ գլխացանկերի մէջ հանդիպում են բազմաթիւ ասորաբանութիւններ: Ժամանակաշրջանի մասին նա գրում

---

597 Ատտուածաշունչ Զօհրապեանի, առաջաբան, էջ 9. ինչպէս նաեւ՝ **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 757:

598 Ամբրոսեան ձեռագիրը հրատարակուել է դեռեւս 1788 թուականին. Daniel secundum editionem LXX interpretum ex tetraplis desumptam ex codice syro-estrangelo bibliothecae Ambrosinae syriace edidit, Latine vertit, praefationibus notisque criticis illustravit, ***Caietanus Bugatus***, *Mediolane.* մեզ չի յաջողուել տեսնել այս հրատարակութիւնը, բայց նրա նկարագրութիւնը կայ՝ Field, II, էջ 906, որը ոչինչ չի հաղորդում Զօհրապեանի տեսած առաջաբանների մասին: Հետաքրքրական է Զօհրապեանը տեսել է ո՛չ այդ, այլ ուրիշ ձեռագիր:

599 Սա հ. Սուքրիի կարծիքն է՝ Բազմավէպի 1877 թ. մեր վկայակոչած յօդուածում:

600 **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 172-173:

601 **Ն. Բիւզանդացի,** Կորիւն վարդապետ, էջ 422-432:

է. «Ժամանակ գրութեան Նախադրութեանց եւ Գլխակարգութեանց թէ՛ Հին կտակարանին եւ թէ՛ Նորոյն՝ թուի կատարած Հինգերորդ դարուն կամ սկիզբն Վեցերորդին, յորում վաղուց խամրեալ էր Առաջին աշակերտաց աննման Հայ լեզուն, եւ կը տիրէր նորահնար Հայերէնն Երկրորդ Աշակերտաց»[602]: Մենք չենք փորձի ժխտել այս դատողութիւնները, որոնք իրենք իրենց յօդս են ցնդում՝ նախադրութիւնների եւ գլխացանկերի մասին անառարկելի տուեալների հետ ծանօթանալիս:

Նրանք երբեք թարգմանուած չեն եղել, այլ ինքնուրոյն ստեղծագործութիւնն են Ժ.Գ. դարում ապրած Գէորգ Սկեւռացու, որ անդամ էր միաբանութեան, կամ հնարաւոր է՝ առաջնորդ Կիլիկիայի Սկեւռա վանքի: Նրա կեանքի եւ մատենագրական գործունէութեան մասին մենք բաւական չատ հաւաստի տեղեկութիւններ ունենք, որ առկայ են հէնց Գէորգի եւ նրա բազմաթիւ աշակերտների աշխատութիւններում: Ըստ այդ տեղեկութիւնների մենք գիտենք, որ նա իր ժամանակ եղել է կենտրոնը Կիլիկիայի հայոց այն մատենագրական գործունէութեան, որը արտայայտուել է գլխաւորապէս Սուրբ Գրքի ուսումնասիրութեամբ եւ նրա օրինակների բազմապատկման ձգտմամբ:

Նա ծնունդով Կիլիկիայի Լամբրոն ամրոցից էր, սակայն իր կրթութիւնն ստացել է Հայաստանի վանքերում, եւ արդէն 1267 թուականից մենք նրա գրական աշխատանքների մասին փաստեր ունենք: Իր իսկ ձեռքով գրուած մի ընդարձակ յիշատակութեան մէջ նա պատմում է իր մասին, որ սկզբում սովորել է Գրիգոր Բ Ղնեցի եպիսկոպոսի, այնուհետեւ յայտնի պատիչ Վարդանի մօտ՝ Խոր Վիրապ վանքում, եւ հայրենիք վերադառնալուց առաջ եղել է Սաղմոսավանքում եւ Թեղենեաց ուխտում[603]: Վերադառնալով Սկեւռայի վանք, նա աշակերտներ է հաւաքել եւ սկսել պարապել նրանց հետ: Նրա աշակերտներ են եղել Ստեփանոս Գոյները, Խաչատուրը, Մարտիրոսը, Մովսէսը, Ներսէսը, որոնք մեզ են թողել Սուրբ Գրքի մէկական կամ մի քանի օրինակ: Գէորգի գրական աշխատանքների մասին մեր MN ձեռագրի գրիչ Մովսէսը գրում է հետեւեալը.

«Գծէր եւ կանոնս կարգաւորս եւ բանս խրատականս վասն խոստովանութեան առ ի յօգուտ տգիտաց քահանայից. առնէր համարս գլխոց եւ ցանկի եւ նախադրութիւնս Աստուածաշնչից տառից. գրէր եւ ճառս ներբողականս ի պատիւ սրբոց. առնէր եւ համառօտ մեկնութիւն Գործոց առաքելոց ի խնդրոյ արքայեղբօրն, տեառն Յոհաննու... Բազում բանս պիտանիս հաւաքէր ի գանձուց աստուածայնոց, առ ի վարժումն մանկանց նորոգունից»:

602 Նոյն տեղում, էջ 429:

603 **Ղ. Ալիշան,** Սիսուան, էջ 102-107, եւ Զարբհ., Պատմ. հայ դպր., 1897, էջ 718-722:

Նա ունեցել է նաեւ ուրիշ աշխատանքներ. օրինակ, մի հետաքրքիր գիրք՝ «Արուեստ գրչութեան», Մեկնութիւն մարգարէութեանն Եսայեայ եւ այլն: Այստեղ մենք նկատում ենք մի տարօրինակ երեւոյթ. Գէորգի սան Մովսէսը ճշգրիտ եւ որոշակիօրէն հաղորդում է. «Գէորգը կազմել է Սուրբ Գրքի գլուխների ե՛ւ Գլխացանկերի ե՛ւ Առաջաբանների հաշուարկումը». այսպիսի վկայութիւն քաջ յայտնի է եղել բոլոր նրանց, որոնց կարծիքների հետ մենք ծանօթացել ենք, եւ չնայած դրան, նրանք դիմում էին զանազան ենթադրութիւնների: Այսպիսի մոլորութիւնը բացատրւում է նրանով, որ նրանք բոլորը Ե. դարի թարգմանութիւնը պատկերացնում էին ոչ այլ կերպ, քան կիլիկեան դարաշրջանի Ընկալեալ բնագրի տեսքով, նրա բոլոր մասերով: Սակայն պէտք է ասենք, որ նշուած անճանց կարծիքի հիմնաւորուածութեանը սկսել ենք կասկածել ոչ թէ ըստ Մովսէսի այս վկայութեան, այլ նրա եւ եւս երկու այլ գրիչների գրառումների հիման վրայ: Ձեռագրերի նկարագրութիւնների մէջ այդպիսի բոլոր գրառումները քննուել են, եւ ընթերցողների ուշադրութիւնը հրաւիրուած է դրանց վրայ. այստեղ պէտք է կրկնենք նրանց ընդհանուր մատնանշումները: Վկայութիւններից ամենագլխաւորը նոյն այդ Մովսէսի հաղորդումն է MN ձեռագրում (էջ 130ա), այն մասին, թէ՝ ձեռագիրը գրելու ժամանակ «մերն էր բաբունապետ», այսինքն՝ Գէորգ Սկեւռացին, կազմել է Հին Կտակարանի գրքերի նախադրութիւնները եւ գլխացանկերը: Երկրորդ վկայութիւնը տալիս է H ձեռագրի գրիչը՝ կրկնելով Մովսէսի հիմնական միտքը, որ՝ գլխացանկերը եւ նախադրութիւնները կազմուել են Հեթումի ձեռագրի գրուելու ժամանակ: Առաւել որոշակի է V^7 ձեռագրի յիշատակարանը, որտեղ ասւում է. «Գէորգ վարդապետին որ զնախադրութիւններս եւ զգլխիս ամէն Հին Կտակարանացս չինել»[604]: Վենետիկի ձեռագիրը Գէորգ Սկեւռացու աշակերտ Մարտիրոսի օրինակի պատճէնն է: Էջմիածնի վանքի մատենադարանում գտնւում է Մարտիրոսի մէկ այլ ձեռագիրը՝ SK^2, $Հ^{մր}$ 14. բայց սա վենետիկեան ձեռագրի գաղափար օրինակը չէ, որովհետեւ բացի նրանից, որ չունի Գէորգի մասին յիշատակարանը, գրքերի քանակով եւս երկու օրինակներն իրար չեն համընկնում, որից պէտք է միայն եզրակացնել, որ Մարտիրոսն ունեցել է երկու կամ աւելի ձեռագիր: Եթէ Գէորգի երկու աշակերտները՝ Մովսէսը եւ Մարտիրոսը, այսպէս որոշակի եւ իրարից անկախ հաղորդում են նոյն բանը, ապա նրանց հաղորդածի հաւաստիութեանը կասկածելու որեւէ հիմք չունենք: Այսուհանդերձ, մեր կարծիքի առաւել հիմնաւորութեան

---

604 Ձեռագրերի նկարագրութիւն, V^7. $Հ^{մր}$ 65: Այդ ձեռագիրի նկարագրողը (Յուցակ Վենետիկի Ս. Գրոց.- Բազմավէպ, 1891, էջ 98) տպագրել է յիշատակարանը, եւ վկայութիւը կասկածելի համարելով, յիշատակարանից առաջ հարցական նշան է դրել:

համար աւելորդ չենք համարում վկայակոչել այլ փաստեր եւս:

Առաջին՝ ինչպէս արդէն ուրիշները նշել են, գլխացանկերի եւ նախադրութիւնների կազմողը հայերէն թարգմանութեամբ օգտուել է Եւսեբիոսի եւ Ափրահատի աշխատութիւններից: Երկրորդ՝ երեմիա մարգարէի առաջաբանի կազմութեան համար նա չի ունեցել Յովհան Ոսկեբերանի մեկնութեան հին թարգմանութիւնը, այլ ունեցել է Մխիթար Գօշի ԺԲ. դարի ձեւափոխութիւնը (էջ 232): Երրորդ՝ 1292 թուականից առաջ գրուած բոլոր ձեռագրերը գլխացանկեր եւ նախադրութիւններ չունեն. օրինակ՝ O^1, O^2, MA, Mo ձեռագրերը, O^2-ում դրանք աւելացուել են շուրջ 1360 թուականին (տե՛ս վերը՝ ծնթ. 184ի մօտ): Հէնց այս ձեռագրերն էլ մեզ օգնում են որոշելու Գէորգի յօրինման ժամանակը: Մենք արդէն ցոյց ենք տուել, որ այն համապատասխանում է MN ձեռագիրը գրելու տարուան, այսինքն 1292 թ.: Մեր նախորդ փաստարկներին կարող ենք աւելացնել հէնց նոր բերուած փաստը, որ 1292 թուականից առաջ գրուած բոլոր ձեռագրերը չունեն ո՛չ գլխացանկեր, ո՛չ նախադրութիւններ:

բ) «Սկիզբն եւ պատճառ Թագաւորութեանց գրոց եւ յառաջաբան նախակարգեալ Թագաւորութեանցն»[605]:

Այս պատճառը վերցուած է Հերոնիմոսի յայտնի առաջաբանից՝ In totam Scripturam Prologus Galeatus, որը հանդիպում է Աստուածաշնչի շատ ընդօրինակութիւններում՝ սկսած հնագոյն O^2-ից, չնայած այն բովանդակում է դատողութիւններ 22 գրքերի եբրայական կանոնի մասին. ձեռագրերում միշտ գրուած է Թագաւորութիւնների գրքերից առաջ՝ իւրայատուկ վերնագրով: Զօհրապեանը մտադրուել էր այն տպագրել առանձին գրքով՝ Աստուածաշնչի ձեռագրերում առկայ նման նիւթերի հետ միասին, սակայն չհասցրեց իր ցանկութիւնն ի կատար ածել[606]: 1867 թ. ոմն Ա. Մուրադեան Զմուռնիայում ստացաւ Աստուածաշնչի հին մագաղաթէ ձեռագրի մի քանի թերթ, որոնց վրայ, ի միջի այլոց, եղել է այդ առաջաբանը: Այնտեղ նա ճանաչեց Հերոնիմոսի առաջաբանը՝ թարգմանուած եւ հրատարակուած Ոսկանի կողմից եւ նոր թարգմանութեան հետ մեծ տարբերութիւն նկատելով՝ հրատարակեց այն[607]: Այդ հրատարակութիւնը, հեղինակի հաւաստի վկայութեամբ, մնացել է անյայտ, այդ իսկ

---

605 Այս վերնագիրը վերցրել ենք Պատճառաց գրքից (Liber Causarum): Աստուածաշնչի ձեռագրում աւում է՝ «Ցառաջաբան նախակարգեալ Թագաւորութեանց»:

606 Աստուածաշունչ Զօհրապեանի, էջ 170, ծնթ., նրա հաւաքած նիւթերը գտնւում են Միւնխէնի գրադարանի ձեռագրում. հմմտ. Ե. Հմտ 2 ձեռագրի նկարագրութիւնը՝ ծնթ. 423:

607 Նրա հրապարակումը եղել է Զմիւռնիայում տպագրուող «Արշալոյս Արարատեան» հայկական թերթում՝ 1867 թ., Հմտ 811, էջ 1-2՝ * հրապարակումն է Հերոնիմոսի «Առաջաբանութիւն սաղաւարտեալ»ի, որ կայ նաեւ Մխիթարի Աստուածաշնչի վերջում:

պատճառով Հ. Սուքրին Բազմավէպի մեր նշած յօդուածում[608] տպագրել է հատուածներ առաջաբանից՝ ըստ վենետիկեան ձեռագրերի, իսկ դրա հեղինակ համարել է Որոգինէսին[609]:

Հետաքրքական է իմանալ, թէ ե՞րբ է թարգմանուել մեր առաջաբանը, եւ որ լեզուից՝ յունարէնի՞ց, թէ՞ լատիներէնից: Մինչեւ ԺԲ. դար հայոց մէջ լատիներէնից թարգմանութիւններ չեն եղել, իսկ Հերոնիմոսի առաջաբանը հանդիպում է արդէն Գրիգոր վարդապետի գրքում եւ հէնց Թագաւորութեանց գրքերից առաջ. նշանակում է այն թարգմանուած է եղել Ը. դարից առաջ, եւ՝ յունարէնից: Գր. Գալէմքեարեանը ենթադրում է, թէ դատելով ոճից, թարգմանութիւնն արուել է Ե. դարում[610], մենք չենք կարող համաձայնել նրա հետ եւ առայժմ բաւարարւում ենք ընդունումով ծայրային սահմանի, այսինքն՝ Ը. դարի, յուսալով, որ Հերոնիմոսի ամբողջական թարգմանութիւնը կգտնուի եւ ժամանակը ճշգրիտ սահմանելու հնարաւորութիւն կտայ:

Հատուածը սկսւում է հետեւեալ խօսքերով. «Վասն զի. յերկուս (22) գիրս առ ի հեբրայեցւոցն պատմութիւնս բաժանելոյ...», եւ աւարտւում է՝ «Բայց զմակաբայեցւոց զառաջին գիրսն գտաք գրեալ եբրայեցերէն, եւ զերկրորդն՝ յունարէն, որպէս եւ անդստին ի խաւսիցն է նշանակեալ»:

գ) Գէորգը Սաղմոսների համար առաջաբան չի գրել, որովհետեւ նրանից առաջ Սաղմոսների բնագրից առաջ գրում էին հատուածներ Աթանասի, Եպիփանի կամ էլ Դաւիթ Փիլիսոփայի մեկնութիւններից, առաւել յաճախ՝ Եպիփանի: Գրիգոր վարդապետը որպէս Սաղմոսների «պատճառ» տալիս է բոլոր երեք հեղինակների այդ հատուածները, իսկ Աստուածաշնչի ձեռագրերում սովորաբար դրուած է մէկը կամ միւսը, կամ էլ երկուսը միասին: Առաջին հատուածի վերնագիրը հետեւեալն է.

«Ցառաջաբան Դաւթի մարգարէութեանն Աթանասի եպիսկոպոսի Աղեքսանդրացւոյ»[611]:

Նրանում Աթանասը մի անապատականի («ծերոյ») խօսքերով բացատրում է Սաղմոսների ծագումը եւ նրանց մեծ նշանակութիւնը հաւատի համար: Բնագիրն Աստուածաշնչի ձեռագրերից աւելի լաւ պահպանուել է Պատճառաց գրքում (Liber Causarum): Հարկ է նկատել, որ մենք ունենք այդ հատուածի մի այլ՝ աւելի երկար տարբերակ, որ գտնւում է

608 Ներածութիւն, ծնթ. 80:

609 Դեռեւս Գէորգ Սկեւռացին է մտածել Որոգինէսի հեղինակութեան մասին՝ Թագաւորութեանց գրքերի առաջաբանում:

610 **Գ. վ. Գալէմքեարեան**, Պատմութիւն հայ լրագրութեան, Վենետիկ, 1893, էջ 53, ծնթ. 1 եւ Տաշեան, Ցուցակ, էջ 215:

611 Աստուածաշնչի ձեռագրերում, օրինակ՝ St եւ Kon, վերնագիրն այլ ձեւ ունի. հմմտ. **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 282:

St[1] ձեռագրում, միայն թէ լեզուն երկուսում էլ վկայում է մի ընդհանուր թարգմանութիւն: Աթանասի մեկնութեան յունարէն ամբողջ բնագիրը չի պահպանուել. մենք համեմատել ենք հայերէն թարգմանութիւնը Migne-ի հատուածների հետ՝ Patralogia Graeca, XXVII, սակայն մեր հատուածին համապատասխան ոչինչ չենք գտել:

Այն հատուածը, որը վերագրւում է Դաւիթ Փիլիսոփային, հետագայում չփոթուել է, եւ երբեմն նրա անուան փոխարէն վերնագրում գրել են Եպիփանի անունը: Այդ սխալն ուղղւում է Պատճառաց գրքի (Liber Causarum) վկայութիւններով, որտեղ կայ Դաւթի մեկնութեան նոյնիսկ մի քանի հատուած:

«Դաւթի Փիլիսոփայի՝ Նախակարգեալ յառաջաբանք Սաղմոսաց. վասն երգչացն, վասն վերնագրացն, վասն զանազանել վերնագրացն, վասն Սաղմոսացն որք ասին որդոցն Կորխա»:

Աստուածաշնչի ձեռագրերի մէջ ընդունուած է միայն առաջին հատուածը, այն էլ բաւական ուշ, քանի որ այն հանդիպում է Kon[1], E[2] եւ JM ձեռագրերում՝ «Եպիփանու Կիպրացւոյ առաջաբանք Սաղմոսաց»:

Ըստ մեկնութեան բովանդակութեան եւ ձեւի այն նման է Աթանասի մեկնութեանը, որն իր «ծեր»ով հանդերձ յղւում է որպէս աղբիւր: Դատելով ըստ Bardenhewer-ի հայրաբանութեան, յունարէնով ոչ միայն ամբողջ աշխատութիւնը, այլեւ՝ հատուածներ չեն պահպանուել, իսկ վերջիններից հայերէնով բաւական մեծ քանակութիւն կայ[612]: Զօհրապեանը Գէորգի պակասող նախադրութեան փոխարէն հրատարակել է Եպիփանի առաջաբանը: Կան ձեռագրեր (SK[2], K, Tig[2]), որոնք առաջին մասում նոր՝ «Եպիփանու Կիպրացւոյ յաղագս Սաղմոսաց Դաւթայ» խորագրի ներքոյ գրում են երկրորդ հատուածը[613]: Պատճառաց գիրքն (Liber Causarum) այս երկու հատուածներից գիտէ միայն առաջինը:

դ) Սաղմոսներից բացի, լրացուցիչ նախադրութիւններ ունի նաեւ Յոբի գիրքը. մեկնութիւնների հատուածներ, մէկը՝ Յուլիանեայ եպիսկոպոսի Աղեքսանդրացւոյ[614], երկրորդը՝ Սամուէլի վարդապետի: Առաջինի յունարէն բնագիրը պահպանուել եւ հրատարակուել է մի քանի անգամ[615], իսկ հայերէնով կան միայն հատուածներ: Սամուէլը, որ գրել է նշուած համառօտ նախադրութիւնը, ամենայն հաւանականութեամբ Ժ. դարի հայ վարդա-

612 **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 414-416: թուարկում է առնուազն 11 հատուած:

613 Kon[2] ձեռագիրը Եպիփանի անուան փոխարէն գրում է՝ Դաւիթ, հմմտ. Աստուածաշունչ Զօհրապեանի, էջ 320, ծնթ.:

614 WM[1] ձեռագրում «Աղիկսանդացւոյ» փոխարէն սխալմամբ գրուած է՝ «Աղեքսանդրիացւոյ»:

615 **Bardenhewer**, Patrologie, էջ 470 եւ **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 617:

պետ է, որին յիշատակում է Ասողիկը՝ կամրջաձորեցի մականուամբ, որը հռչակուած էր Սուրբ Գրոց իր իմացութեամբ: Նրա աշխատանքից չատ փոքր հատուած կայ երկու՝ MN եւ K ձեռագրերում:

ե) Կարծես թէ չբաւարարուելով այս բոլոր յաւելումներով, անանուն մի գրիչ փոխառել է Լամբրոնացու, Մխիթար Գօշի, Վարդանի, Եսայիի եւ Եփրեմ Ասորու մեկնութիւնների առաջաբանների մասեր եւ դրանք կցել է ԺԲ. մարգարէից, Երեմիայի, Դանիէլի, Եզեկիէլի գրքերին եւ առ Կորնթացիս Գ. Թղթին: Սա ունեն ընդամէնը երկու ձեռագիր՝ Sch եւ Kon[2]-ը:

Այն հարցը, թէ ե՞րբ եւ որտե՞ղ են Աստուածաշնչի ձեռագրերի մէջ ընդունուել այս բոլոր յաւելումները, վերաբերում է հիմնականում Հերոնիմոսի, Եպիփանի, Դաւթի, Աթանասի եւ Յուլիանոսի հատուածներին, որոնց երկերը հայերէնով եղել են Զ. դարից առաջ: Յայտնի MA ձեռագիրն այս հատուածներից ոչ մէկը չունի. փոխարէնը համարեա բոլոր կիլիկեան օրինակները դրանք ունեն: Եթէ Գրիգոր վարդապետի գիրքը չլինէր, մենք կարող էինք մտածել, որ դրանց փոխառումն առաջինը եղել է Կիլիկիայում, իսկ այժմ այդ աշխատանքի արմատները մենք պարտաւոր ենք փնտրել կրկին բուն Հայաստանում՝ մատենագրութեան ծաղկման դարաշրջանում:

զ) Շատ ձեռագրում Հին Կտակարանի առաջին ինը գրքերի վերջերում կան համառօտ չափածոներ, որոնք աղօթքի ձեւով արտայայտում են ընդօրինակողի չնորհակալութիւնը եւ խնդրանքն առ Աստուած՝ իրեն ուժ տալու, որ աւարտի սկսած աշխատանքը: Այդ չափածոներն ընդհանուր բնոյթի են, բացի մէկից, որ ունի այսպիսի մշուշոտ հաղորդում.

«Ժամանեցո՛ ի լրումն քոց սուրբ մատենից.
Ժառանգեցո՛ Լուսաւորչին պայազատից,
Դայեկաբար ջամբեցողաց զկաթն իմաստից.
Որոց նստին ասեմ յաչխարհն Արեւելից.
Ուր ապրեցաւ սուրբն անվնաս ի մէջ օձից»[616]:

Այս բառերը ցոյց են տալիս, որ չափածոյի հեղինակը ծնունդով Արեւելեան Հայաստանից չէ, այլ որ նա իր տողերը գրել է այնտեղ, ուր Տրդատ Թագաւորը կալանել էր Հայաստանի Լուսաւորիչ Գրիգորին, եւ նա «ապրել է օձերի մէջ», որտեղ էլ հիմնուել է Խոր Վիրապի վանքը[617]: Էջմիածնի վանքի Հ՟ր 18 [Մ 9] ձեռագրում գտել ենք, ի միջի այլոց, Հին Կտակարանի գլխացանկերը եւ նախադրութիւնները, նաեւ մեր չափածոն [6բ], մի նշումով՝ «Գէորգէ» (18ա): Չափածոներով Աստուածաշնչի հնա-

616 **Զարբհ.**, ՄՀԹՆ, էջ 130 եւ Տաշեան, Ցուցակ, էջ 316:

617 Ըստ աւանդութեան՝ Տրդատ թագաւորի կողմից Խոր Վիրապի (փոսի) մէջ գցուած Գրիգորն ապրել է 15 տարի:

գոյն՝ SK[3] ձեռագիրն օրինակուած է Գէորգ վարդապետի ձեռքով գրուած «ազնիւ» օրինակից: Այս փաստերի համադրումը հնարաւոր է դարձնում ենթադրելը, որ այս տաղերը յօրինել է Գէորգ Սկեւռացին, Խոր Վիրապի վանքում եղած ժամանակ, Աստուածաշնչի այն օրինակի համար, որը նա սկսել է գրել այնտեղ, եւ որն էլ ինչ որ պատճառով հասցրել է միայն մինչեւ Թագաւորութեանց գրքերը: Նման տաղեր այն ժամանակ շատ ընդօրինակողներ էին յօրինում, սակայն ուրիշ գրիչներ դրանք չէին արտագրում: Գէորգի հեղինակութիւնը եւ նրա տների ընդհանուր բնոյթը այլ գրիչների կողմից դրանք ընդունելու պատճառ էին դարձել: Գէորգի տաղերը գտել ենք հետեւեալ ձեռագրերում՝ SK[3], V[2], Su, Ch, Tig[2], Kon[5], WM[2], Il եւ Ka, իսկ դրանք տպագրել է Զարբհանալեանը (էջ 129-133):

է) Դեռեւս Գէորգից առաջ այդպիսի տաղեր Ներսէս Շնորհալին յօրինել է Սաղմոսների (ձեռ. O[2], Ia, AS, E[1]) եւ Սողոմոնի գրքերի (ձեռ. H, DJ) համար, նաեւ Ներսէս Լամբրոնացին՝ Եսթերի գրքի համար (ձեռ. V[8]):

Գ. *ա) Շատ յաճախ ձեռագրերի սկզբում կամ վերջում գտնում ենք Վանական վարդապետի՝ Աստուածաշնչի բառերի այլաբանական բացատրութիւնը[618]. օրինակը լաւագոյնս ցոյց կտայ, թէ ինչ բացատրութիւններ են դրանք. Երկին = Եկեղեցի, Արեգական = Քրիստոս եւ Աւետարան, Արուսեակն = Յովհաննէս Մկրտիչ... Ադամ = Քրիստոս, Օձ = Եւա, Գաբրիէլ = Կոյս... եւ այլն: Այս բառերի աղիւսակը զբաղեցնում է մօտաւորապէս երկու էջ, եւ կարելի է ենթադրել, որ այս բառերը ծառայել են մեկնիչներին կամ քարոզիչներին՝ որպէս նրանց մեկնութիւնների եւ քարոզների ուղեցոյց:*

բ) Վանականի աշխատանքի օրինակով, բայց այլ նպատակով, Դաւիթ եւ Ղազար Բաբերդացի վարդապետները ԺԷ. դարի սկզբին կազմեցին Աստուածաշնչի բառերի աւելի մանրամասն ուղեցոյցներ, որոնց նպատակը բառերին համապատասխանող չարադրանքներ գտնելն էր, եւ ըստ այդմ էլ ամէն բառի դիմաց նշուած էին համապատասխան գլուխի եւ տան համարները: Մի ուղեցոյցը ըստ Գէորգ Սկեւռացու գլուխների է, միւսը՝ լատինականների: Նրանց մէջ բառերը չարուած են այբբենական կարգով[619]: Բացի դրանից, Ղազար Բաբերդացին առաջին անգամ գլուխները բաժանել է տների:

Դ. *Սուրբ Գրոց միայար չարադրանքն օգտագործելու համար մեծ դժուարութիւններ ունէր, ուստի ժամանակի ընթացքում ենթարկուել է զանազան բաժանումների: Այդպիսի բաժանումների մէջ հնագոյնը գրքե-*

618 Ձեռագիրք՝ MN, K, As, Kon[2], E[1]-E[3], Kon[5], KT, WM, AS:

619 Ոսկանճ այդ ուղեցոյցները տպագրել է:

րի տնաչափական բաժանումն է, որն սկզբում ծառայել է վաճառուող ձեռագրերի գինը կարգաւորելու նպատակին[620], իսկ հետագայում ծառայել է որպէս միջոց՝ առանձին մտքերի կամ նախադասութիւնների որոշման համար: Արդէն Զ. դարում մատնանշում էին Աստուածաշնչի այնպիսի ձեռագրերը, որոնք Որոգինէսի, Իրինէոսի եւ ուրիշների կողմից ըստ բովանդակութեան բաժանուած էին տների, իսկ codex Sinaiticus-ը տնաչափական նշաններ ունի Պօղոսի որոշ թղթերում: Այս առումով հայերէն ձեռագրերի վրայ ուշադրութիւն դարձուած չէ: Նրանցում տնաչափութեան թուեր կան. դա յայտնի է, սակայն յայտնի չէ, թէ ե՞րբ են փոխառնուել այդ թուերը եւ յունական ո՞ր ձեռագրերից: Հնագոյն՝ Կիլիկիայի եւ բուն Հայաստանի O^1, O^2 եւ MA ձեռագրերը թուեր ունեն՝ թէկուզ եւ ո՛չ բոլոր գրքերում. բայց մի շարք նոր եւ հին ձեռագրեր չունեն այդ թուերը: Բացի դրանից, տարբեր ձեռագրերում առկայ թուերը նոյնական չեն: Դա պէտք է ապացոյց ծառայի այն բանի, որ տնաչափութիւնը փոխառնուած է կիլիկեան դարաշրջանից առաջ, բայց ո՛չ առաջին թարգմանութեան հետ միաժամանակ, որովհետեւ այդ դէպքում բոլոր ձեռագրերն այն կունենային. սակայն թուերի տարբերութիւնն էլ ցոյց է տալիս, որ դրանք յունարէնից փոխառել են տարբեր մարդիկ:*

Վերը [ըստ K՝ Մ 183 ձեռագրի 573ա էջի] բերուած [«Վասն համարոյ հին եւ նոր կտակարանաց»] ցանկի տնաչափութեան թուերը, օրինակ՝ O^1 ձեռագրի թուերի հետ համեմատելիս, նկատում ենք այսպիսի տարբերութիւն. ըստ ցանկի Եսայիի մարգարէութիւնն ունի 3820, Գործք առաքելոցը՝ 3800, Յակոբի թուղթը՝ 300, Պետրոսի Ա. թուղթը՝ 300, Բ. թուղթը՝ 200, իսկ O^1 ձեռագրում Եսայիի մարգարէութիւնն ունի 3400, Գործք առաքելոցը՝ 2516, Յակոբի թուղթը՝ 237, Պետրոսի Ա.՝ թուղթը՝ 234, Բ. թուղթը՝ 266 տուն: Եթէ յունական ձեռագրերում տնաչափութեան վերաբերմամբ մեծ տարբերութիւններ չլինէին, դրա բացատրումը դժուար կլինէր, բայց մենք գիտենք, որ յունական ձեռագրերում տնաչափութեան

620* Սխալ է՝ տնատումները երբեւէ գրքերի գին որոշելու նպատակի չեն ծառայել. այս խնդրի համար տե՛ս **Հ. Արիստակէս վ. Վարդանեան,** Հայ գրչագիրները ի՛նչ պայմաններու տակ կընդօրինակէին հայ ձեռագիրները, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1924 (Ազգային մատենադարան, ՃԵ.), 55 էջ. նաեւ՝ **Աշոտ Աբրահամեան,** Հայոց գիր եւ գրչութիւն, Երեւան, 1973, էջ 301-331՝ «Ովքե՞ր են գրիչները եւ ի՞նչ պայմաններում են նրանք աշխատել» գլուխը: Տնաչափութիւնների բուն նպատակի մանրամասները տե՛ս **Յակոբ Անասեան,** Հայ համաբարբառային գրականութիւնը եւ հայ մատենագրութեան համաբարբառը (աղբիւրագիտական եւ բնագրագիտական ուսումնասիրութիւն).- **Յ. Ս. Անասեան,** Մանր երկեր, Լոս Անջելես, 1987, էջ 61-145 (նախապէս տպուած՝ «Էջմիածին», ամսագիր, 1971, ԺԱ. էջ 49-64, ԺԲ. էջ 49-64, 1972, Ա. էջ 49-64, Բ.էջ 49-64, Գ.էջ 49-64, Դ.էջ 49-64):

մի քանի համակարգեր են եղել: Յահնի յայտնի գրքի[621] 394-397 էջերում հաւաքուած են յունական եւ լատինական ձեռագրերի մի շարք տնաչափական աղիւսակներ, նաեւ՝ կանոնացանկեր, որոնց հետ մենք կարող ենք համեմատել մեր ցանկը եւ O[1] ձեռագիրը:

Այս համեմատութեան ժամանակ նկատում ենք, որ Յահնի աղիւսակի թուերի որեւէ համակարգ չի կարող համարուել մեր ցանկի անմիջական բնագիրը, բայց մեծ նմանութիւն կայ, օրինակ, մեր եւ Նիկիփորի ցուցակի միջեւ: Մեր ցանկում Ծննդոց գիրքն ունի 4305 տուն, Նիկիփորի ցանկում՝ 4300, Ղեւտական գրքում երկուսում էլ 2700ական է, Թուոցը՝ ցանկում 3533, Նիկիփորինը՝ 3536, Բ. Օրինացը՝ երկուսում էլ 3100ական, իսկ մնացած բոլոր գրքերում տարբերութիւնը չատ մեծ է: Նոր Կտակարանի տնաչափութիւնն Աւետարանում ճչգրիտ համապատասխանում է յունական նոր ձեռագրերին, իսկ մնացած մասերում հայերէն ցուցակը առանձնայատուկ տեսակ է:

Տնաչափութեանը յաջորդել են բաժանումների ուրիչ համակարգեր, որոնցից Աւետարանն ունի հետեւեալները.

ա) Տնաչափութիւն. Մատթէոս՝ 2600, Մարկոս՝ 1600, Ղուկաս՝ 2800, Յովհաննէս՝ 2300[622]:

բ) Κεφάλαια, *այսինքն՝ Ամոնիոսի բաժինները. Մատթէոս՝ 355, Մարկոս՝ 236[623], Ղուկաս՝ 342 եւ Յովհաննէս՝ 232[624]:*

գ) Վկայութիւնք. Մատթէոս՝ 32, Մարկոս՝ 15, Ղուկաս՝ 17 եւ Յովհաննէս՝ 15. «բոլոր չորս աւետարանները միասին ունեն 1165 գլուխ, 8800 տուն եւ 79 վկայութիւն».

դ) Աւետարանք գլխաւորք. Մատթէոս՝ 69, Մարկոս՝ 55, Ղուկաս՝ 71 եւ Յովհաննէս՝ 157, բոլորը՝ 252[625]:

ե) Եօթնօրեակներ. ծիսական ընթերցումների համար, ըստ յատնի ծրագրի՝ Նոր Կտակարանի ամէն գրքի բաժանումը հատուածների: Վերջին բաժանման ելակէտ են ներկայացրել երկու մեծ տօն՝ Ծնունդը եւ Զատիկը: Ամէն Աւետարանի սկիզբը նշանակուել է առաջին տօնին ընթերցելու համար, իսկ աւարտը՝ երկրորդին: Օրինակի համար բերում ենք

---

621 **Zahn**, Geschichte des Neutestamentlichen Kanons, II, 2, էջ 384-480 «Zur bibischen Stichometrie»:

622 Ձեռագիր MA ունի՝ 2380:

623 Ձեռագիր MA ունի՝ 233:

624 Ասորական Աւետարաններում Մատթէոսն ունի 426, Մարկոսը՝ 290, Ղուկասը՝ 402 եւ Յովհաննէսը՝ 271. հմմտ. G. H. Gwillian, The Ammonian sections, Eusebians cannones.- Studia Biblica et Ecciesiastica, vol. VII, էջ 246:

625 Այս վերջին բաժանումը գտել ենք Գ. Հփ 33 ձեռագրում, իսկ MA ձեռագիրն ունի Մատթէոսի համար 61, Մարկոսի՝ համար 56, եւ Յովհաննէսի համար՝ 49:

Մատթէոսի աւետարանի եօթնօրեակները. ա) Ա. 18 - գլխի վերջ, բ) Բ. 1-12, գ) Բ. 13 - գլխի վերջ, դ) Գ. 1-12 եւ ե) Գ. 13-4, 11, հինգ հատուածները կազմում են Ծննդեան չորս տօն: Այնուհետեւ գալիս են եօթ եօթնօրեակներ. ա) Դ. 12 - Ը. 17, բ) Ը. 18 - ԺԱ. 24, գ) ԺԱ. 25 - ԺԳ. մինչեւ գլխի վերջ, դ) ԺԴ. 1 - ԺՋ. 12, ե) ԺՋ. 13 - Ի. 28, զ) Ի. 29 - ԻԴ. 29, է) ԻԴ. 30 - ԻՋ. 2: Ամէն եօթնօրեակ բաժանուած է եօթ հատուածի, համարակալուած թուերով՝ աա, աբ, ագ... աէ, բա, բբ... բէ. եւ այլն, որով պարզեցուած է ցանկալի ընթերցման փնտրումը: Աւետարանի աւարտը կազմում են Զատկի ընթերցումները՝ ա) ԻՋ. 3-16՝ «չարչարանաց չորեքշաբթի» բ) ԻՋ. 17-30՝ «չարչարանաց հինգշաբթի», գ) ԻՋ. 31-56՝ «Աւետարան չորրորդ. չարչարանաց ուրբաթ, գիչեր», դ) ԻՋ. 57 - գլխի աւարտ՝ «Աւետարան հինգերորդ», ե) ԻԷ. 1-56՝ «Աւետարան ուրբաթի երեկոյեան», զ) ԻԷ. 57-61՝ «երեկոյեան վեցերորդ Աւետարան», է) ԻԷ. 62 - աւարտ՝ «Աւետարան չաբաթու առաւօտեան», եւ ը) ԻԸ. 1 - աւարտ «Աւետարան իւղաբերից»:

Յայտնութիւնը եւ առ Կորնթացիս Գ. թուղթը եօթնօրեակ չունեն, իսկ Հին Կտակարանի գրքերից ունեն միայն Սաղմոսները: Բացի այդ, ոչ մի ձեռագրում Հին Կտակարանի բնաբանային բաժանում մենք չենք հանդիպել: Հայերի համար այդ աշխատանքների օրինակ են ծառայել բացառապէս յունարէն ձեռագրերը, միայն արժէ իմանալ, որ փոխառումը տեղի է ունեցել ո՛չ միանգամից եւ ո՛չ էլ մի օրինակից: Մենք այսպիսի եզրակացութեան ենք գալիս հետեւեալ փաստերի հիման վրայ. առաջին, Գ. Հ՟Բ 1 եւ 6 [Մ 6200, 2374] ձեռագրերը նախապէս եօթնօրեակ չեն ունեցել. դրանք ներմուծուած են աւելի ուշ. երկրորդ՝ մեր դիտարկած ո՛չ բոլոր ձեռագրերն ունեն բաժանման համակարգեր. երրորդ՝ թուային մեծութիւնների տարբերութիւնը կարող է բացատրուել միայն յունական տարբեր բնագրերից փոխառուած լինելով: Վերջապէս միայն Թ. դարից է յունարէն ձեռագրերում արձանագրուել մի նորամուծութիւն, այսինքն՝ իւրաքանչիւր ընթերցման սկիզբը եւ աւարտը սահմանելու համար նրանց կցւում են α (ἀρχή) եւ τ (τέλος)[626] տառեր: Հայերէն որոշ ձեռագրեր այդ նորամուծութիւններին իրենց տեղեակ լինելը ցոյց են տալիս՝ նշելով այդպիսի ընթերցումների աւարտը՝ վջ (վերջ):

բ) Լիովին անհրաժեշտ է եղել ամբողջ Սուրբ Գրքի բաժանումը գլուխների, որը ԺԳ. հարիւրամեակում ներդրեց Փարիզի համալսարանի քարտուղար (կանցլեր) Ստեփան Լանգտոնը (Stephan Langton): Բաժանման նրա համակարգը շատ պարզ է եղել. բովանդակութեանը քիչ ուշադրութիւն դարձնելով՝ նա բոլոր գրքերը բաժանել է մօտաւորապէս իրար հաւասար հատուածների: Լանգտոնի նորամուծութիւնը շատ արագ տա-

626 **Jülicher**, Einleitung in das N. T. Freiburg. 1894, էջ 374:

բածուեց, եւ արդէն ԺԳ. դարի վերջին՝ 1292 թուականին մտաւ հայերէն ձեռագրերի մէջ: Ըստ երկու՝ Su եւ Ch ձեռագրերի գրառումների՝ մենք իմանում ենք, որ այդ աշխատանքն արել է Հեթում երկրորդ թագաւորը՝ թագաւորական գահից իր հրաժարուելու տարում, եւ այդ նոյն տարում գրուած St[1], MN եւ H ձեռագրերն իսկոյն այն փոխ առան: Արտայայտութիւնները, որոնք յիշատակարանում գործածուել են գլուխները՝ ջաբիտար (chapistr՝ chapitre) եւ ֆռանկի համարները (համար ֆրանկին) նշելու համար, իրաւունք են տալիս մտածելու, որ Հեթումն իր առջեւ ունեցել է Աստուածաշնչի ֆրանսիական օրինակ, եւ ո՛չ լատինական[627]:

Ինչպիսի առնչութիւն են ունեցել Գէորգի գլխացանկերը Հեթումի աշխատութեան հետ՝ որեւէ տեղեկութիւն չունենք, այդ պատճառով դժուար է ժխտել կամ հաստատել Գէորգի ծանօթ լինելը այդ աշխատանքներին: Նրանցից ով է իր աշխատանքն աւելի շուտ արել՝ կրկին դժուար է ասել, բայց եթէ Գէորգի գլխահամարները չեն համապատասխանում վուլգատայի գլխահամարներին, ապա դրա պատճառը հետեւեալն է. Գէորգը, գլխացանկը կազմելիս պարտաւոր էր ուշադրութիւն դարձնել, որ իւրաքանչիւր հատուած ունենայ վերնագրին համապատասխան լիարժէք իմաստ, մինչդեռ Լանգտոնը, ինչպէս ասուել է, բոլոր գրքերը բաժանել է մօտաւոր հաւասար մասերի: Սկեւռացու աշակերտ Ստեփան Գոյները լաւ ծանօթ էր Գէորգի համակարգին, նաեւ՝ Հեթումի ներդրած ֆռանկական համակարգին, դրա համար էլ իր St[1] ձեռագրում ամէն անգամ ընդգծել է երկու համակարգերի գլուխների համարների տարբերութիւնը եւ նշել հայերէն եւ լատիներէն բնագրերի տարբերութիւնները, որոնք արդիւնք են գլուխների համեմատութեան:

Վ Ե Ր Ջ

627* Սխալ բացատրութիւն է. միջնադարեան հայ իրականութեան մէջ «ֆռանկ» նշանակում էր ընդհանրապէս «եւրոպացի» եւ «եւրոպական»:

ՅԱՒԵԼՈՒԱԾ

«Մշակ» լրագրում (1902 թ., Հմր 178), պատահական մի թղթակից հաղորդել է, որ Մեծչէն գիւղի Աւետարանը (վերը՝ ծնթ. 408ից յետոյ) գրուած է քրիստոնէական դարաշրջանի 867 թուականին, Արեւելեան լեզուների Լազարեան ճեմարանի ձեռագրից [Մ 6200] (տե՛ս վերը, ծնթ. 158ից առաջ) քսան տարի առաջ:

Մեր աշխատութեան տպագրութեան վերջում ստացանք Գ. Ռ. Գրեգորիի գրքի վերջերս լոյս տեսած երկրորդ հատորը[628], որի մէջ (էջ 565-573) հայերէն թարգմանութեան (Armenische Übersetzung) մասին ընդհանուր տեղեկութիւններից յետոյ՝ 569-573 էջերում՝ «Armenische Handschriften» խորագրի ներքոյ համառօտ տեղեկութիւններ է տուել Աւետարանի եւ Աստուածաչնչի 65 ձեռագրի մասին: Գրեգորին իր ցանկը կազմել է ըստ քաղաքների կամ պետութիւնների, որից տեսնում ենք, որ թուարկուող տեղերում կան նշուող քանակների ձեռագրեր. Բոստոնում կայ 1 միաւոր Աւետարան, Լոնդոնում՝ 12, Օքսֆորդում՝ 6, Վիեննայում՝ 2, Կոպենհագէնում՝ 1, Փարիզում՝ 5, Բեռլինում՝ 2, Լայպցիգում՝ 2, Միւնխէնում՝ 2, Ֆլորենցիայում՝ 1, Հռոմում՝ 2, իսկ 4 միաւոր ներկայացուած է Վենետիկի Մխիթարեանների ձեռագրերից: Սրանցից մեր ցուցակի մէջ չեն մտել Աւետարանի Ժ-ԺԲ. դարերի հետեւեալ ձեռագրերը.

1) Հմր 4. Լոնդոն, British Museum, Add. 19.727, 1166 թ., 308 թերթ, թուղթ, 23,1x15 մեծ.

2) Հմր 6. Լոնդոն, Br. Mus., Add. 21.932, Ժ-ԺԱ. դարեր, 244 թերթ, մագաղաթ, 27,5x20,6 մեծութեան.

3) Հմր 8. Լոնդոն, Br. Mus., Or. 81. 1181 թուականի, 386 թերթ, մագաղաթ, 21,2x15,9 մեծ.

4) Հմր 22. Փարիզ Bibliothèque National, Arm. 8, թուղթ, երկաթագիր, մեծադիր (in folio). ձեռագիրը պակասաւոր է, Աւետարանից պակասում են՝ Մատթէոսի Աւետարանի Ա-Ե. գլուխները, Մարկոսի՝ ԺԶ. 1-12, Ղուկասի ԻԲ-ԻԴ. եւ Յովհաննէսի Աւետարանը լրիւ.

5) Հմր 44. Լայպցիգ, Stadtbibliothek, sl. fol. Ժ. դար (?), մեծադիր (in folio), թուղթ, 187 թերթ, գրիչի անունը՝ Գրիգոր քահանայ.

6) Հմր 45. Լայպցիգ, Gregory-ի սեփական, Ժ. դար (?), 28 թերթ, մագաղաթ, մնացած 217 թերթերը թուղթ են. գրուած է երկաթագրով, երկ-

---

628 **Caspar René Gregory**, Textkritik des Neuen Testamentes, Zweiter Band, Leipzig, 1902, X, 479-993 S.

սիւն, 42,3x30,1 մեծութեան: Ստորին լուսանցներում ունի համաբարբառի աղիւսակներ:

Աւետարանի մնացած բոլոր ձեռագրերը վերաբերում են ԺԳ-ԺԷ. դարերին:

Նրա մօտ կայ Նոր Կտակարանի մասերով երկու միաւոր՝

7) Հմր 23, Փարիզ, Bibl. Nat. Arm. 9, ԺԱ. դար, մեծադիր (in folio), 285 թերթ, մագաղաթ, ունի՝ Եւթաղ, Գործք առաքելոց, Առաքեալների եօթ թղթերը, Պօղոսի թղթերը եւ Յայտնութիւն, յունարէն բնագրով հանդերձ.

8) Հմր 24, Փարիզ, Bibl. Nat. Arm. 10, ԺԵ. դար, քառածալ (in 4⁰), թուղթ, ունի՝ Թուղթք Պօղոսի, Առաքելոց [կաթողիկեայք], առ Կորնթացիս Գ. թուղթ[629]:*

[629]* Այս «Յաւելուած»ը երեւի շտապ է տպուել, շատ վրիպակներ ունէր, որոնք ուղեցինք՝ Գրեգորիի գրքի հետ համեմատելով:

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբամելիք-Լազարեան Սիմէոն - 66
Աբաս, հայր Գագիկ Շահանշահի, ԺԱ. դ. - 188
Աբաս, շահ Պարսից - 114, 160, 204
Աբգար թագաւոր - 115, 280
Աբեղեան Մանուկ - 28
Աբէլ, ասորի կր. - 29
Աբրահամ Խոստովանող - 216-217
Աբրահամ կր. գրիչ ի 1315 թ. - 172
Աբրահամ Պելերգատցի, ստացող ի 1656 թ. - 158
Աբրահամ քհյ Սէչովցի, գրիչ 1608 թ. ձ-ի - 149
Աբրահամ քհյ, ստացող 1608 թ. ձ-ի - 149
Աբրահամ, գրիչ ի 1299 թ. - 175
Աբրահամ, նորոգող 1295 թ-ի ձ-ի, յԵւդոկիայ - 172
Աբրահամեան Աշոտ - 296
Ագաթանգեղոս - 15, 25, 28, 46, 77, 78, 79, 80, 216, 220, 221
Ագոնց Ստեփանոս - 56
Ադամ նախահայր - 119, 120, 243, 264, 267, 268, 272, 273, 280
Ազարիա կթղ. Կիլիկիոյ Հայոց - 5, 50, 51, 154
Ազարիա մարգարէ - 118
Աթանաս Աղեքսանդրացի - 7, 126, 150, 162, 206, 221, 250, 251, 267, 268, 271, 292, 293, 294
Աթանաս կր., պատուիրատու Եւթաղի - 117
Աթանաս, գրիչ ի 1671 թ. - 192
Ալեքսան վ., 1640 թ. - 138
Ալեքսանդր եպիսկոպոս Ալեքսանդրացի - 125, 251
Ալեքսանդր Մակեդոնացի - 76
Ալէքսան Նորաշէնցի, գրիչ ի ԺԵ. դ. - 174
Ալէքսան, գրիչ ի 1668 թ. - 173
Ալիշան Ղ. վ. - 27, 105, 108, 109, 112, 113, 127, 128, 133, 135, 140, 141, 171, 181, 186, 201, 224, 252, 255, 289
Ակիւղաս - 58, 85, 104, 106, 246, 247
Ակքերս Կարոլ, տպագրիչ - 59
Ահարովն, գրիչ ի 1099 թ. - 184
Աղեքսանդր Ջուղայեցի, կթղ. Հայոց - 55
Ամառեան Հրաչեայ - 176, 177, 180
Ամէմեան Ծ. արք. - 12
Ամալեան Հայկ Մ. - 10
Ամբակում մարգարէ - 82
Ամբակում, պարոն, ստացող ի 1660 թ. - 160
Ամիր Մուլք, թուղթ նուիրող ի 1390 թ. - 146
Ամովն Աղեքսանդրացի - 76, 181, 285, 297
Այտընեան Արսէն վ. - 77
Անանիա (Անանէ) Դամասկացի - 26, 265, 266, 269, 279, 280
Անանիա մարգարէ - 118, 155
Անասեան Յակոբ - 218, 219, 296
Անդրէաս Կրետացի - 223
Անդրէաս քհյ, գրիչ 1422 թ. ձ-ի - 148
Անթաբեան Փայլակ - 12, 103, 108, 136, 165, 166, 175
Աշճեան Մեսրոպ վրդ. - 166
Առաքել աբղ, գրիչ, 1366 թ. - 143
Առաքել եպս. Սիւնեցի - 7, 240, 280, 281
Առաքել եպս., ստացող ի 1640 թ. - 174
Առաքել վ., գնող 1418-1422 թթ. ձ-ի - 148
Առաքել վ., հեղինակ՝ Գովասանութեան Սաղմոսաց - 169
Առաքէլ քհյ, գրիչ ի 1207 - 171
Ասանէթ (ընդ Յովսեփայ) - 6, 68, 92, 119, 120, 146, 148, 151, 152, 154, 156, 157, 159, 161, 163, 166, 206, 209, 210, 240, 241, 264
Ասլան, ձեռագիր փրկագնող ի 1376 թ. - 112
Ասկղեպիաս - 123
Ասողիկ պատմագիր - տե՛ս Ստեփաանոս Տարօնացի Ասողիկ
Աստուածատուր դպ., գրիչ ի 1641 թ. - 155
Աստուածատուր երէց, գրիչ ի ԺԷ. դ. - 169
Աստուածատուր քհյ, գնող ձ-ի ի 1171 թ. - 184
Աստուածատուր քհյ, գրիչ եւ ստացող ի 1285 թ. - 113
Աստուածատուր քհյ, գրիչ ի 1660 թ. - 159
Ատտիկոս պատրիարք Պոլսի - 34, 44
Արիստակէս վ., 1624 թ. յետին ստացող 1295 թ. ձ-ի - 137
Արիստակէս, վերակազմել տուող, 1600 թ. - 166
Արիստոն (Արիստիոն) երէց Պելլացի - 87, 181, 226, 231
Արիստոտէլ - 123
Արկադէոս կայսր - 116
Արշակունեաց արքայատոհմ - 40, 43
Արողինար - 251
Աւագ դպ., ծաղկող, 1341 թ. - 142
Աւագ քհյ, գրիչ ի 1310 թ. - 190, 245

Աւգերեան Յարութիւն վ. - 95
Աւետ տանուտէր, յետին ստացող ԺԲ-ԺԳ. դդ-ի ձ-ի - 189
Աւետ, գրիչ ի ԺԷ. դ. - 192
Աւետիք վ. Դարանաղցի - 141, 148
Աւետիք, ստացող ի 1654-8 թ. - 158
Ափրահատ - 89, 273, 291
Ափրիկանոս - 119
Բագրատ, զարմիկ Վրաց Գորգի թգւրի, 1465 թ. - 177
Բագրատունեաց արքայատոհմ - 204
Բագրատունի Արսէն վ. - 61
Բագրատունի Կարապետ արքեպս., յետին ստացող ԺԷ. դ. ձ-ի - 167
Բակուրան, որդի Սմբատայ, 1194 թ. - 183
Բայրոն Ջորջ - 95, 95
Բառնաբաս առաքեալ - 264, 268
Բարդածան ասորի (Bardesanes) - 38
Բարխուդարեան Մկրտիչ - 179
Բարխուդարեան Սեդրակ - 181
Բար-Հրէայ (Բարհեբրէոս) - 94, 95
Բարսեղ աւագ սրկ., յետին ստացող 1654-8 թ. ձ-ի - 158
Բարսեղ Կապադովկացի (Կեսարացի) - 123, 221, 250, 251
Բարսեղ Հաղբատեցի գրիչ ի 1298 թ. - 137
Բարսեղ հայրապետ, 1181 թ. - 185
Բարսեղ վ. Արծրունի, ստացող ի 1622-1632 թթ. - 153
Բարսեղ վ. Սիւնեցի, ստացող ի ԺԵ. դ. - 174
Բարսեղ, գրիչ ի 1270 թ. - 110, 111, 218, 219, 221
Բարսեղ, գրիչ ի ԺԳ-ԺԴ. դ. - 164
Բենիկ վ., ԺԹ. դ. - 185
Բերժէ Մ. Ա. - 96
Բիւզանդացի Նորայր Ն. - 5, 15, 25, 27, 28, 29, 32, 37, 48, 49, 76-80, 103, 104, 107, 219, 221-224, 257, 288
Բիւրթէլ, հիւպատոս եւ սպարապետ Հայոց ի Սուլթանիէ - 142
Բրենդենկամպ Օտտո - 83
Բրոսէ Մարի - 100, 109, 112, 116, 121, 123, 262, 264, 265, 268
Բրքիշո Ասորի, կթղ. - 40
Գագիկ Շահանշահ՝ որդի Աբասայ, ԺԱ. դ. - 188
Գաթրճեան Յովսէփ վ. - 16, 27, 96, 97, 221, 253, 255
Գալէմքեարեան Գրիգորիս վ. - 50, 82, 92, 97, 114, 123, 124, 144, 164, 193, 194, 241, 262-264, 292
Գալուստ կազմող ի 1650 թ. - 127
Գայիոս, ի Գ. թղթի Յովհաննու - 260
Գասպար Սահրադեան, հրատարակիչ - 56
Գասպար քհյ Ակնցի, ստացող ի 1641 թ. - 155
Գասպար *քհյ, ազգական Ղազար Բաբերդացու - 157*
Գասպար քհյ, գրիչ ի 1648, 1650, 1663 թթ. - 156, 157, 161
Գատցուկ Վառվառէ, տպագրիչ - 63
Գելցէր Հենրիկոս - 82
Գէոթենգէր - 81
Գէոտսբերգէր - 95
Գէորգ Ալեքսանդրացի - 81
Գէորգ Դ. կթղ. - 102, 149
Գէորգ եպս., յետին ստացող 1425ից առաջ - 141
Գէորգ Կաղ - 251
Գէորգ վ. Սկեւռացի - 7, 60, 72, 113, 126, 127, 131, 133-135, 138, 140, 145, 150, 152, 155, 162, 164-168, 204, 206, 208, 209, 245, 289, 290-292, 294-295, 299
Գէորգ քհյ, յիշ. - 169
Գէորգ, գրիչ ի ԺԳ-ԺԴ. դ. - 164
Գէորգինա, սուրբ - 273
Գինէոս. սրբագրող Ս. Գրքի - 76
Գլոսուս, պրոֆեսոր Դորպատի համալսարանի - 100
Գոհար, ձ-ի նորոգել տուող ի 1183 թ. - 186
Գորանդուխտ թագուհի, ԺԱ. դ. - 188
Գորգի, թգւր Վրաց - 177
Գրեգորի Գասպար Ռենէ - 300
Գրիգոր Աբասեան (որդի Աբասու) Ձորոփորեցի - 6, 117, 218, 219, 242, 250, 251, 252, 253, 254, 255, 256, 257, 261, 263, 265, 269, 275, 277, 292, 294
Գրիգոր աբղ. Հաղբատեցի, գրիչ ի 1298 թ. - 137
Գրիգոր Բ. Վկայասէր կթղ., 1099 թ. - 184
Գրիգոր Բջնեցի եպս. 1267 թ. առաջ - 289
Գրիգոր դպ. Գաւառեցի կամ Ապարանեցի, գրիչ ի ԺԵ-ԺՋ. դ. - 165
Գրիգոր եպս, առաջնորդ թեմին Հիւսիսոյ, 1660 թ. - 143
Գրիգոր Է. Անաւարզեցի կթղ. - 137
Գրիգոր ԺԳ. պապ - 51
Գրիգոր Լուսաւորիչ - 27, 38, 39, 45-47, 50, 93, 118, 128, 129, 133, 135, 139, 212, 220, 294
Գրիգոր Խլաթեցի - 63

Գրիգոր Համազասպեանց, գրիչ ի 1657 թ. - 159
Գրիգոր Մարսուանեցի - 35
Գրիգոր Մուրղանեցի - 72, 190, 245
Գրիգոր Նազիանզացի - 123, 250, 269
Գրիգոր Նարեկացի - 65, 76, 171, 221, 222, 232
Գրիգոր Նիւսացի - 122, 221, 250, 251
Գրիգոր սրկ., բնագնաց Ազարիա կթղ-ի - 51
Գրիգոր վ. Խարբերդցի ի 1314 թ. - 133, 134
Գրիգոր վ. Տաթեւացի - 7, 152, 156, 157, 210, 236, 268, 269, 278, 280
Գրիգոր վ., ստացող ի 1628 թ. - 173
Գրիգոր Տղայ կթղ., 1174 թ. - 184, 186
Գրիգոր քհյ Թորոսենց, գրիչ ի 1371 թ. - 145
Գրիգոր քհյ, գրիչ ի 1635 թ. - 154
Գրիգոր քհյ, ծաղկող ի 1271 թ. - 175
Գրիգոր քհյ, միաբան Տաթեւի վանքի, 1642 թ. առաջ - 143
Գրիգոր քհյ, յիշատակագիր 1066 թ. - 183
Գրիգոր քհյ, ստացող ի 1341 թ. - 142
Գրիգոր, գրիչ ի 1174 թ. - 184
Գրիգոր, ծաղկող ի 1232 թ. - 189
Գրիգոր, որդի Եղիա քհյ-ի՝ գնողի 986 թ-ի ձ-ի - 180
Գրիգոր՝ հայր նուիրատու Եփրեմ քհյի, 1354 թ. - 143
Գրիգորիս Ապիրատ կթղ., 1194, 1198 թթ. - 183, 187
Գրիգորիս Բ. Վկայասէր կթղ. Հայոց, յիշ.՝ 1064 թ. - 183
Դաղեան Խաչիկ վ. - 102, 145
Դանիէլ Ասորի եպիսկոպոս - 29, 30, 42
Դաւթեան Արիստակէս արքեպս. - 274
Դաւիթ եպս. Այրիվանքի, 1601 թ. - 115
Դաւիթ թագաւոր, սաղմոսասաց - 45, 120, 125, 126, 279, 282
Դաւիթ վ. Բաբերդացի ի ԺԷ. դ. - 295
Դաւիթ փիլիսոփայ Ներգինացի - 7, 117, 123, 150, 174, 206, 222, 223, 250, 251, 256, 292-294
Դաւիթ, գրիչ ի 1301 թ. - 191
Դաւիթ, գրիչ ի 1332 թ. - 141
Դաւիթ, գրիչ ի ԺԷ. դ. - 174
Դեմետրէ Վրաց թագաւոր - 124
Դեւրիկան Վարդան - 108, 141, 165, 166
Դէմետրէոս, ի Գ. թղթի Յովհաննու - 260
Դիոնիսիոս Աթենացի, սուրբ - 122, 264
Դիոնիսիոս Աղեքսանդրացի - 221, 252, 255
Դիոնիսիոս Արէոպագացի - 268, 279
Դիոնիսիոս Թրակացի - 123, 250
Դիոտրեփոս, ի Գ. թղթի Յովհաննու - 260
Եգանեան Օնիկ - 12, 13, 102, 103, 108, 136, 165, 166, 175, 199
Եզեան Կարապետ - 137, 158
Եզեկիէլ սրկ., գրիչ ի ԺՋ. դ. - 166
Եզեկիէլ սրկ., ձեռագիր վաճառող ի 1425 թ. - 141
Եզնիկ Կողբացի վ. - 25, 30, 32, 33, 36, 76, 78, 79, 215-219, 221-222, 226-227
Եզր մարգարէ եւ գրքեր - 6, 53, 57, 62, 68, 79, 80, 85, 110, 118-120, 130, 150-152, 154-155, 157-159, 163, 166-167, 169, 171, 177, 206, 209, 217, 218, 235-238, 243, 245, 253, 261, 265, 267, 269-270, 274-279, 282-283, 286
Եկատերինա կայսրուհի Ռուսաց - 204
Եկղորոս աղանդաւոր - 117
Եղիա քհյ, գնող 986 թ-ի ձ-ի - 180
Եղիազար Այնթապցի կթղ. - 115, 156
Եղիազար, գրիչ ի 1640 թ. - 155
Եղիազար, յիշ. ի 1650 թ. - 156
Եղիշէ (Եղիսէ) քհյ, ստացող ի Ժ. դ. - 188
Եղիշէ պատմագիր - 77, 78, 215-217, 251
Եղիսաբեր, ստացող ի 1671 թ - 192
Ենովք նիպտ - 6, 119, 238, 264
Եպիփան Կկիպրացի - 7, 110, 118, 125, 138, 206, 207, 250, 251, 256, 292, 293, 294
Եսայի մարգարէ - 42, 102
Եսայի վ. Նչեցի - 7, 140, 150, 294
Երեմիա մարգարէ - 62, 79, 84, 118, 291
Երեմիա, ստացող ի 1660 թ. - 160
Երմոնի Վ. - 93
Եւագր Պոնտացի - 6, 121, 123, 250, 265, 266, 269, 270
Եւգինէ տիկին, քոյր Գէորգ Դ. կթղ-ի - 149
Եւթաղ Աեքսանդրացի - 7, 15, 25, 57, 72, 76-80, 87-89, 105, 111, 116, 117, 139, 142, 144, 146, 166, 171, 172-174, 191-193, 195-196, 251, 257, 286, 301
Եւսեբիոս Կեսարացի - 56, 58, 74, 76, 87, 92, 110, 111, 115, 174, 178, 179-182, 190, 215, 222, 224, 225, 231-233, 246, 258, 268, 272, 285, 288, 291
Եփրեմ Ասորի - 7, 79, 88-89, 90, 95, 96, 146, 156, 159, 217, 220, 221, 224, 242, 243, 251, 261, 285, 288, 294
Եփրեմ քհյ գրիչ ի 1332 թ. - 141
Եփրեմ քհյ, նուիրատու ի 1354 թ. - 143
Զալեման Կ. Գ. - 23

Զարբհանալեան Գարեգին վ. - 5, 15, 16, 25, 44-46, 50-52, 56, 60, 66, 67, 72, 73, 75, 77, 78, 81-83, 85, 87, 92, 95, 99, 103-105, 108, 110-113, 119, 121, 122, 123, 124, 128, 135, 136, 137-142, 146, 147, 150, 153-155, 161, 164-166, 170, 171, 179, 181-188, 198, 203, 216, 217, 220, 221, 223, 224, 227, 229, 231, 233, 238, 240, 252, 255, 257, 266, 267, 269, 270, 280, 288, 289, 292-294, 295
Զաքարիա եպս., ստացող ի 1660 թ. - 159
Զաքարիա վ., հեղ. ԺԷ. դ-ի յիշ-ի - 137
Զաքարիա, գրիչ ի ԺԴ. դ. - 192
Զէյթունեան Անդրանիկ - 12, 103, 108, 136, 165, 166, 175
Զինկէր Ռ. - 91
Զիրաք խոջա, յետին ստացող ի ԺԷ. դ. - 107
Զուչէ, անգլիացի լորդ - 169
Զօհրապեան Յովհաննէս վ. - 5, 18, 53, 55-62, 67-69, 75, 86, 88, 92, 96, 99, 120, 127, 135, 140, 151, 153, 155, 156, 158, 169, 188, 189, 193, 195, 208, 230, 231, 232, 234, 235, 237, 241, 243, 244, 247, 257, 272, 287, 288, 291, 293
Էմին Մկրտիչ - 25, 26, 28, 97, 262
Էյքհորն (Johann Gottfried Eichhorn) - 83
Էվատշահ, վերջին տէր ԺԱ. դ. Աւետարանի - 188
Թադէոս դպ., գրիչ ի 1668 թ. - 173
Թադէոս կր., ստացող ի 1315 թ. - 172
Թադէոս քհյ, Համազասպեան, հրատ. 1686ի Ճաշոցի - 55, 56
Թադէոս, հեղինակ Թղթի - 280
Թամուր դպ. Ակնցի, գրիչ ի 1660 թ. - 160
Թերզեան Գայիանէ - 199
Թէոդոս կայսր - 44, 45
Թէոդոտիոն - 58, 65, 82, 85, 104, 106, 246, 247
Թէոդորոս Քռթենաւոր - 46, 47, 220, 229, 249
Թէոփիլոս - 117
Թոմա սրկ., գրիչ 1422 թ. ձ-ի - 148
Թոռնեան Թադէոս վ. - 78, 79
Թովմա առաքեալ - 212, 264
Թովմա Արծրունի - 44, 45, 65
Թովմաս երէց, գրիչ ի 1057 թ. - 182
Թովմաս, վանահայր Շուխր Խանդառեայ վանքի - 183
Թորոս Բ. իշխան - 131
Թորոս դպ., գրիչ 1616-1619 թթ. ձ-ի - 151, 153
Թորոս եպս. Սեբաստացի, ստացող ի 1641 թ. - 155
Թորոս իշխան, եղբայր Հեթում Բ. թագաւորի - 132, 137, 202, 203
Թորոս կր., գրիչ ի 1036 թ. - 181
Թորոս քհյ Ռուբինանց, գրիչ ի 1270 թ. - 108, 109, 112, 257, 278
Թորոս քհյ, մեկենաս ի 966 թ. - 180
Թորոս քհյ, ստացող ի 1295 - 172
Թորոս քհյ, ստացող ի ԺԳ-ԺԴ. դ. - 164
Թորոս, գրիչ եւ ստացող ի 1317 թ. - 191
Թօփճեան Յակոբ Յ. - 102, 145
Իմիրզա, ստացող ի 1648 թ. - 156
Իսահակ եպս., ստացող ի 1657 թ. - 159
Իսիքիոս (Հիւսիքիոս) - 83, 246, 251
Իստրին Վ. Մ. - 240
Իրինէոս - 110, 221, 296
Իւղիտա, ձեռագիր փրկագնող կին ի 1376 թ. - 112
Լաբուբնա - 280
Լազարեան տոհմ - 156
Լակրոզ - 48, 54, 81, 83, 194
Լանգլուա Վիկտոր - 28
Լանգտոն Ստեփան (Stephan Langton) - 298
Լեմմ Օ. Է. - 23
Լեւոն Ա. Մեծագործ թագաւոր Հայոց - 105, 124, 186, 187
Լեւոն Բ. թագաւոր Հայոց, որդի Հեթմոյ - 111, 113, 128, 131, 132, 133, 135
Լէնկ Թեմուր - 146
Լուկիանոս - 83
Լուսինեան թագաւորութիւն - 203
Լուրդէ Սիմոն Պիէռ (Պետրոս) - 82, 194
Խալաթեանց Գրիգոր - 29, 63, 64, 66, 104, 106, 107, 118, 164-166, 178, 235, 280, 281
Խաչատուր աբեղ Ջուղայեցի, մեկենաս ի 1648 թ. - 156
Խաչատուր Կեչառեցի - 251, 252
Խաչատուր պատանի, ստացող ձեռագրի ի 1285 թ. - 113
Խաչատուր քհյ, գրիչ 1422 թ. ձ-ի - 148
Խաչատուր քհյ, ստացող ի 1277 թ. - 191
Խաչատուր, աշակերտ Գէորգ Սկեւռացիի - 289
Խաչատուր, աշակերտ Ներսիսի Լամբրոնացւոյ - 224
Խաչատուր, աշակերտ Ստ. Գոյներիցանցի - 126
Խաչատուր, յետին ստացող ի 1650 թ. - 127

Խաչատուր, ուսուցիչ Հայրապետ ծակողի ի Նոր Ջուղայ - 157
Խաչատուր, վանահայր Հոռոմոսի վանուց, 1181 թ. - 185
Խաչատրեան Պօղոս - 219
Խաչիկ կթող. Հայոց, 1057 թ. - 182
Խաչիկ, որդի Եղիա քհյ-ի՝ գնողի 986 թ-ի ձ-ի - 180
Խաչիկեան Լեւոն - 12, 103, 147, 149, 189
Խապայեան Սահակ եպս. - 63
Խիկար Իմաստասէր - 156
Խոսրով Անձեւացի - 126
Խոսրովիդուխտ, ձ-ի նորոգել տուող ի 1183 թ. - 186
Կայիափա - 119
Կանայեանց Ստեփան - 96
Կարակալա, կայսր Հռոմայ - 38
Կարապետ գրիչ ի 1431 թ. - 173
Կարապետ կր., ԺԷ. դ-ի ստացող 1338 թ-ի ձ-ի - 192
Կարապետ Սասնեցի - 105
Կարապետ վ. Մոկացի, ստացող ի 1624 թ. - 153
Կարապետ քհյ, օրինակի շնորհող ի 1310 թ - 190
Կարապետ, գրիչ 1418-1422 թթ. ձ-ի - 148
Կարապետ, գրիչ ի 1341 թ. - 142
Կարապետ, գրիչ ի 1379 թ. - 172
Կարենեան Յակոբ - 101, 103
Կարիէր Ա. - 96, 121, 240, 262, 263, 265, 266, 268
Կարպիանոս եպս. - 76, 111, 115, 285
Կարպոկրատ, աղանդաւոր - 117
Կէտիկեան Հ. Թովմաս - 9
Կիրակոս Գանձակեցի - 92, 93, 272
Կիրակոս րաբունի, գրիչ ի 1317 թ. - 139
Կիրակոս քհյ, գրիչ ի 1361 թ. - 177
Կիրակոս քհյ, գրիչ ի 1624 թ. - 153
Կիրակոս, գրիչ ի 1007 թ. - 181
Կիրակոս, սուրբ - 273
Կիւրեղ Երուսաղէմացի - 6, 79, 121, 126, 251, 266, 270
Կիւրեղ, սլաւոնների քարոզիչ - 38
Կիւրիա կին, ի Գ. թղթի Յովհաննու - 260
Կղեմէս Աղեքսանդրացի - 268
Կղեմէս Հռոմէացի - 6, 89, 121, 237, 264-266, 268, 269, 279, 280
Կղէոբոս (Կաղբոս) աղանդաւոր - 117
Կոթորոս աղանդաւոր - 117
Կոնիբէր Ֆրեդերիկ - 34, 43, 44, 46, 47, 70, 82, 85-91, 94, 122, 169, 181, 186, 188, 190, 221, 223, 232-234, 239
Կոստանդիանոս Մեծ կայսր - 58
Կոստանդին Զ. Վահկացի կթղ., 1437 թ. - 137
Կոստանդին իշխան, եղբայր Հեթում Բ. թագաւորի - 132
Կոստանդին իշխան, հայր Հեթում Ա. թագաւորի - 132, 184
Կոստանդին իշխան, յետին ստացող 1358 թ. - 108, 109, 112
Կոստանդին կր., գրիչ եւ ստացող ի 1271 թ. - 175
Կոստանդին քհյ, ստացող ի 1200 թ. - 187
Կոստանդին, գրիչ ի 1258 թ. - 174
Կոստանդին, զարմիկ Վրաց Գորգի թգւրի, 1465 թ. - 177
Կորիւն վրդ., Ե. դ. - 6, 15, 25-39, 41, 42, 48, 64, 74, 75, 77-79, 91, 103, 216-218, 220, 222-224, 246, 249-250, 262, 288
Կրիսպոս - 264, 279
Հախնազար, յետին ստացող, 1669 թ. - 145
Հայրապետ Ջահկեցի, յիշ. 1648 թ. - 156
Հայրապետ քհյ, ծաղկող ի 1200 թ. - 187
Հայրապետ քհյ, կազմող ի 1279 թ. - 172
Հայրապետ քհյ, ստացող ի 1647 թ. - 177
Հայրապետ, ծաղկող ի 1648, 1650 թթ. - 156, 157, 159
Հայրապետեան Անահիտ - 272
Հեթում Ա. թագաւոր Հայոց (Մակար կր.) - 83, 104, 111, 113, 128, 131, 132, 135, 138, 184, 203
Հեթում Բ. թագաւոր Հայոց (Յովհաննէս կր.) - 52, 83, 101, 105, 132, 133, 134, 135, 136, 137, 140, 144, 145, 160, 162, 191, 203, 209, 290, 299
Հեթում Նղրեցի ջամբռլայ, ԺԴ. դ. - 109
Հեթում Սեւաստաւս, տէր Լամբրաւնին եւ Պապեռաւնին, յիշ.1194 թ. - 183
Հեթում վ., ստացող ի ԺԲ-ԺԳ. դդ. - 190
Հերմէս Իմաստասէր - 123, 237
Հերոնիմոս Ստրիդոնացի - 7, 10, 35, 53, 76, 109, 118, 125, 130, 152, 163, 168, 206, 207, 246, 251, 256, 280, 291, 292, 294
Հիւբշման Հենրիկոս - 221
Հռիփսիմէ կոյս - 222
Հռոփանոս - 35
Ղազար Բաբերդացի վ. - 7, 10, 52, 53, 76, 103, 141, 151-153, 156-159, 161, 163, 204-206, 210, 236, 295

Ղազար Փարպեցի - 25, 27-31, 33, 34, 38-41, 47, 74, 152, 215-218
Ղազար քհյ, 1366 թ. ի Ղրիմ - 144
Ղազար քհյ, ստացող ի 1337 թ. - 176
Ղազար, գրիչ ի 1637 թ. - 1783
Ղազար, գրիչ ի 1648 թ. - 156
Ղազարեան Վիգէն - 187
Ղեւոնդ Վանանդեցի - 32
Ղուկաս աւետարանիչ - 6, 46, 47, 57, 111, 116, 125
Ղուկաս դպիր Վանանդեցի - 67
Ղուկաս Կարնեցի կթղ. Հայոց, ստացող - 157
Ճուխրէ, եղբայր յետին ստացողի, մի. 1358 թ. - 109, 112
Մաթեւոսեան Արտաշէս - 113, 128, 136, 137, 179, 180-182, 184-188, 272
Մաթեւոսեան Կարէն - 272
Մակար կթղ. - 45
Մաղաքիա Կ. Պոլսեցի, ծաղկող ի 1683 թ. - 163
Մայի Անժելո, կարդինալ - 56, 272
Մանասէ թգւր - 6, 57, 79, 126, 138, 139, 146, 150, 154, 155, 163, 171, 237, 241
Մանի, աղանդապետ - 272
Մանկասար, գրիչ ի 1647 թ. - 177
Մանովէ, հայր Սամսոնի - 243
Մանուէլ եպս. Բջնեցի, ստացող ի 1368 թ. - 144
Մանուէլ վ., գրիչ ի 1669 թ. - 192
Մանուէլ վ., նուիրակ Էջմիածնի ի 1664 թ. - 112
Մանուէլ վրդ. Կիւմուշխանեցի ի 1828 թ. - 100
Մանուկեան Սեդա - 17
Մառ Նիկողայոս (Марръ Н.) - 9, 10, 11, 17, 19, 20, 34, 45, 63, 64, 65, 66, 70, 71, 90, 120, 179, 198, 240
Մատթէոս Ա. Պոլսեցի կթղ. - 101
Մատթէոս աւետարանիչ - 57, 68, 76, 111, 116, 125
Մատթէոս Վանանդեցի - 51, 52
Մատթէոս, գրիչ ի ԺԷ. դ. - 167
Մարգար վրդ., յետին ստացող - 107
Մարգարէ Ապուչեխցի եպս., ստացող ի 1703 թ. - 173
Մարգարէ քհյ, գրիչ ի 1337 թ. - 176
Մարգարէ, գրիչ ի 1269 թ. - 171
Մարգարէ, մեկենաս ի Շատիկայ անապատ, 1671 թ. - 147
Մարեմ, ստացող ի ԺԱ. դ. - 188
Մարիամ Մագդաղենացի - 228, 230
Մարիամ Յակոբայ - 230
Մարկիոն - 221-222
Մարկոս աւետարանիչ - 6, 57, 72, 87, 111, 116, 125
Մարկոս քհյ, գրիչ ի 1651 թ. - 157
Մարկոս, գրիչ ի 1655-1657 թթ. - 158
Մարտիրոս երէց, գրիչ ի 1700 թ. - 163
Մարտիրոս վ. Ղրիմեցի, ստացող ի 1661 թ. - 161
Մարտիրոս վ., ստացող ի 1615 թ. - 150
Մարտիրոս վ., օրինակի շնորհող ի ԺԳ-ԺԴ. դ. - 164
Մարտիրոս, աշակերտ Գէորգ Սկեւռացիի - 289, 290
Մարտիրոսեանց Մնացական, տրագրիչ - 15, 25, 28
Մարտիրոսեանց Յովհաննէս, տրագրիչ - 220
Մելքիսեդեկ դպիր, կազմող ի 1624 թ. - 137
Մեսրոպ դպ., գրիչ ի 1628 թ. - 173
Մեսրոպ Երէց, մատենագիր, Ժ. դ. - 74
Մեսրոպ Մագիստրոս - տե'ս Տէր-Մովսիսեան Մեսրոպ Մագիստրոս արքեպս.
Մեսրոպ Մաշտոց - 25, 26, 27, 29, 30-37, 39, 40-43, 47, 58, 74, 76, 78, 79, 86, 93, 105, 117, 215, 216, 246
Մերուժան Արծրունի - 43
Միխայէլ Ասորի - 262
Մինաս Տիգրանակերտցի [Ամթեցի] վ., ստացող ի 1683 թ. - 163
Մինաս, առաջնորդ Սկեւռայի (1285 թ.) - 113
Մինաս, գրիչ ի 1269 թ. - 107
Միսքճեան Յովհաննէս վ. - 50, 154, 174, 191
Միրանշահ, ստացող 1492 թ. ձ-ի - 149
Միրզա Օհաննէսեան Զարգարեանց, ձ-ի փրկագնող ի 1827 թ. - 185
Միքայէլ Թոխաթեցի, գրիչ 1611 եւ 1625 թթ. ձձ-ի - 150, 154, 208
Միքայէլ հրեշտակապետ - 222
Միքայէլ վ., ստացող ի 1663 թ. - 161
Միքայէլ վրդ. - 101
Միքայէլ քհյ, գրիչ ի 1253-1255 թթ. - 104
Մխիթար Ա. կթղ. Հայոց, 1354 թ. - 143
Մխիթար վ. Այրիվանեցի - 6, 92, 93, 114, 115, 118-120, 123, 124, 238-240, 245, 246, 248, 253, 254, 257, 262, 263-273, 291
Մխիթար վ. Գօշ - 7, 146, 150, 257, 291, 294

Մխիթար վ. Սեբաստացի - 5, 55, 56, 86, 291
Մխիթար քհյ, գրիչ ի 1447 թ. - 177
Մխիթար, գրիչ ի 1269 թ. - 107
Մխիթար, նուիրատու ի 1301 թ. - 182
Մխիթար, օրինակի շնորհող ի 1299 թ. - 176
Մխիթարեան Աբէլ եպս. - 256
Մխիթարիչ, ֆրա, ստացող ի ԺԵ-ԺՋ. դ. - 165
Մկրտիչ Նաղաշ, ստացող 1418-1422 թթ. ձ-ի - 127, 148
Մկրտիչ վ. Խարբերդցի, ստացող 1611 թ. ձ-ի - 150
Մկրտիչ վաճառական, ձեռագիր գնող-նուիրատու ի 1663 թ. - 156
Մկրտիչ քհյ, ծաղկող ի 1390 թ. - 146
Մնացականեան Ասատուր - 12, 103, 108, 136
Մովսէս գրիչ - 103
Մովսէս Խորենացի - 25, 27-36, 38, 39, 41-44, 47, 57, 58, 74-76, 78, 81, 83, 95, 215, 217, 222, 223, 236, 246
Մովսէս կր., գրիչ եւ ծաղկող ի 1640 թ. - 174
Մովսէս մարգարէ - 31, 58, 118, 120, 235, 264, 268
Մովսէս վ. Երզնկացի գրիչ, աշակերտ Գէորգ վ. Սկեւռացիի - 128-131, 133-136, 209, 254, 289, 290
Մովսէս վ. Մեծոփայ վանաց, 1355 թ. - 143
Մովսէս վ., գրիչ, 1341 թ. - 142
Մովսէս վ., յետին ստացող ի 1671 թ. - 147
Մովսէս Տաթեւացի կթող. - 127
Մովսէս քհյ, գրիչ ի 1057 թ. - 182
Մովսէս քհյ, ստացող ի 1733 թ. - 173
Մովսէս, թուղթ կոկող ի 1390 թ. - 146
Մովսէս, յետին ստացող, 1669 թ. - 145
Մուհամմեդ սուլթան, 1656 թ. - 138
Մուրադեան Ա., 1867 թ. ի Զմիւռնիայ - 291
Մուրաւեով Ն. Ն., ռուս իշխան - 137
Յակոբ Ա. Կլայեցի կթող. Հայոց (1285 թ.) - 113, 124, 141
Յակոբ Ակնեցի, գրիչ ի 1641 թ. - 155
Յակոբ Բ. Անաւարզեցի կթող. Հայոց (1338 թ.) - 140, 141, 209
Յակոբ գրիչ ի Պոլիս, 1666 թ. առաջ - 162
Յակոբ Դ. Ջուղայեցի կթող. - 51, 52, 138, 156, 161
Յակոբ կր., գրիչ, 1384 թ. - 145
Յակոբ Ղրիմեցի. մատենագիր - 104
Յակոբ Մծբնացի - 273
Յակոբ նիպտ. - 6, 167, 242, 269, 279
Յակոբ քհյ, ստացող 1608 թ. ձ-ի - 149
Յակոբ, գրիչ ի 1269 թ. - 107
Յակոբ, սրբագրող Ս. Գրքի - 76
Յակոբեան Վազգէն - 276
Յարութիւն Թիֆլիսեցի, նուիրատու ի 1793 թ. - 157
Յարութիւնեան Իսահակ - 29
Յարութիւնեան Սէթ - 28
Յեռեթէոս- 122
Յեսու Նաւէ - 243
Յեսու՝ հայր Սիրաքայ - 62, 120
Յիսուս Քրիստոս - 21, 24, 31, 35, 40, 117, 120, 123, 127, 129, 147, 158, 160, 164, 211, 226, 228, 230, 258, 259, 260, 262, 264, 287, 295
Յոբ - 7, 32, 53, 54, 57, 76, 105, 110, 121, 131, 136, 138, 139, 144, 145, 148, 150, 152, 154, 155, 157, 159, 173, 174, 175, 177, 178, 195, 209, 210, 215, 217, 250, 251, 252, 258, 261, 262, 265, 266, 270, 275, 277, 278, 279, 282, 293
Յոհաննէս քհյ, օրինակի շնորհող ի 1270 թ. - 112
Յովասափ քհյ Արծրունեցի, ստացող ի 1640 թ. 155
Յովասափ, ստացող ի ԺԱ. դ. - 188
Յովհան Եկեղեցացի - 30, 31, 33, 36, 76
Յովհան եպս., բնագնաց Ազարիա կթղ-ի ի 1585 թ. - 51
Յովհան Մայրագոմեցի վ. - 46, 47, 229, 230
Յովհան Ոսկեբերան - 45, 48, 50, 81, 105, 126, 194, 220, 251, 256, 257, 291
Յովհանէս երէց, գրիչ ի ԺԷ. դ. - 167
Յովհանէս, գրիչ 1492 թ. ձ-ի - 149
Յովհաննէս արքեպս. [Ագուլեաց], ստացող ի 1700 թ. - 163
Յովհաննէս արքեպս., առաջնորդ Վարագայ վանքի - 148
Յովհաննէս աւետարանիչ, առաքեալ - 6, 57, 72, 79, 80, 95-97, 104, 111, 115, 117, 125, 126, 128, 135, 136, 139, 140, 143, 150
Յովհաննէս բժիշկ, 889 թ. - 255
Յովհաննէս Գառնեցի վ. - 45, 46, 72
Յովհաննէս գրիչ, 1656 թ. - 138
Յովհաննէս դպ. Լեհցի, գրիչ ի 1656 թ. - 158
Յովհաննէս եպս Անեցի, գրիչ ի 1368 թ. - 144

Յովհաննէս եպս, ստացող ի 1390-1400 թթ. - 146
Յովհաննէս եպս. Արքաեղբայր - 101, 103, 105, 108, 109-113, 191, 203, 206, 209, 218, 289
Յովհաննէս եպս. Բաբերդի ի 1376 թ. - 112
Յովհաննէս եպս., 1366 թ. - 143
Յովհաննէս Երզնկացի - 135
Յովհաննէս Երզնկացի, գրիչ ի Գլաձոր - 139, 140
Յովհաննէս երէց, գրիչ ի 1700 թ. - 163
Յովհաննէս Ը. Կարբեցի կթող. - 100
Յովհաննէս Իմաստասէր Օձնեցի կթող. - 47, 229
Յովհաննէս Կարճեւանցի, գրիչ ի 1311 թ. - 191
Յովհաննէս Կոզեռն - 127
Յովհաննէս կր., գրիչ ի 1317 թ. - 176
Յովհաննէս կր., ստացող ի 1354 թ. - 172
Յովհաննէս Մալազ Կառկառեցի, ստացող ի ԺԷ. դ. - 169
Յովհաննէս Մանդակունի կթող. - 117, 216, 220
Յովհաննէս Որոտնեցի - 96
Յովհաննէս պռտուսպաթար, ստացող ի 1007 թ. - 181
Յովհաննէս Սարկաւագ վ. - 45, 72, 92, 93, 115, 117, 119-122, 143, 222, 238, 240, 253, 254, 262, 263, 266, 267, 270, 272
Յովհաննէս սրկ., օգնական գրիչ ի 1317 թ. - 139
Յովհաննէս վ. Կոստանդնուպոլսեցի, ստացող ի 1625 թ. - 154
Յովհաննէս վ., գրիչ 1422 թ. ձ-ի - 148
Յովհաննէս վ., ստացող ի 1666 թ. - 161
Յովհաննէս վ., ստացող ի 1668 թ. - 173
Յովհաննէս վ., ստացող ի ԺԳ. դ. - 177
Յովհաննէս վ., տէր 1418-1422 թթ. ձ-ի - 148
Յովհաննէս Վարագացի, յետին ստացող ի 1604 թ. - 114, 116
Յովհաննէս քհյ, գրիչ ի 1053 թ. - 182
Յովհաննէս քհյ, գրիչ ի 1295 թ. - 171
Յովհաննէս քհյ, գրիչ ի 1400 թ. - 146
Յովհաննէս քհյ, գրիչ ի ԺԱ. դ. - 189
Յովհաննէս քհյ, գրիչ ի ԺԲ-ԺԳ. դդ. - 189
Յովհաննէս քհյ, գրիչ ի ԺԳ. դ. - 164
Յովհաննէս քհյ, յետին ստացող ի 1687 թ. - 189
Յովհաննէս քհյ, ստացող ի 1232 թ - 189
Յովհաննէս, առաջնորդ Նոր Ջուղայի ի 1847 թ. - 179
Յովհաննէս, գրիչ ի 1071 թ. - 183
Յովհաննէս, գրիչ ի 1181 թ. - 185
Յովհաննէս, գրիչ ի 1319 թ. - 140
Յովհաննէս, գրիչ ի 1654-8 թ. - 158
Յովհաննէս, գրիչ ի 989 թ. - 180
Յովհաննէս, ստացող ի 1334 թ. - 191
Յովհաննէս, ստացող ի 1361 թ. - 177
Յովհաննէս, վերակազմել տուող, ի 1600 թ. - 166
Յովհաննիսեան (Իօնիսեան), բժիշկ, ԺԹ. դ. - 149
Յովսեպոս, *որ է Կաիափա - 119*
Յովսէփ արքեպս. Արղութեան-Երկայնաբազուկ - 144, 167
Յովսէփ դպ., գրիչ ի 1650 թ. - 156
Յովսէփ Հողոցմեցի կթող. - 26
Յովսէփ Պաղանացի - 30, 31, 32, 33, 36, 76
Յովսէփ քհյ, գրիչ ի 1651 թ. - 157
Յովսէփ, գրիչ ի 1299 թ. - 175, 176
Յովսէփ, գրիչ ի 1671 թ - 192
Յովսէփ, իսմայէլեան արքայ - 112
Յովսէփ, սգրկն. - 6, 68, 146
Յովսէփեան Գարեգին կթող. - 113, 179, 181, 183, 185-188
Յովսէփեան Սարգիս վ. - 68, 119
Յուլիանոս Աղիկառնացի (Աղեքսանդրացի) - 7, 136, 139, 144, 293, 294
Յուլիանոս Ափրիկացի - 221
Յուղիտա, սուրբ - 273
Յունան քհյ, ստացող ի 1207 - 171
Յունան, գրիչ ի 1666 թ. - 162
Յուսիկ քհյ, գրիչ ի 1044 թ. - 182
Յուստոս - 264, 269, 279
Նազարէթ քհյ, գրիչ ի 1650 թ. - 156
Նազարէթ, խջյ, ստացող ի 1650 թ. - 156
Նաթան մարգարէ - 118
Նահապետ կթող. Եղեսացի - 101, 115, վրդ., գրիչ եւ ստացող ի 1686 թ. - 163, ստացող ի 1700 թ. - 163
Նահապետեան Սուսաննա - 4, 20
Նատեր, հայր Ստեփանոս գրչի - 143
Նաւէ, հայր Յեսուի - 243
Նեռ - 284
Նեստոր աղանդապետ - 93, 272
Ներսէս Ա. Պարթեւ կթող. Հայոց - 39, 280
Ներսէս աբղ, գրիչ 1332 թ. - 141
Ներսէս Ե. Աշտարակեցի կթող. Հայոց - 179
Ներսէս եպս. Կոռեցի, ստացող 1332 թ - 141, 142

Ներսէս Լամբրոնացի - 7, 76, 97, 145, 146, 150, 162, 164, 173, 186, 201, 203, 206, 209, 221, 223, 224, 238, 294, 295
Ներսէս Շնորհալի - 7, 112, 136, 137, 141, 143, 148, 155, 161-163, 167, 169, 173, 175, 176, 183, 206, 295
Ներսէս Պաղոնց կամ Պալիեանց - 142
Ներսէս վ., ստացող ի 1640 թ. 155
Ներսէս քհյ, ստացող ի 1295 - 171
Ներսէս, աշակերտ Գէորգ Սկեւռացիի - 289
Ներսէս, գրիչ ի 1292 թ. - 103, 128, 135
Նիկիփոր - 267, 268, 269, 270, 273, 275, 297
Նոյման Կարլ Ֆրեդերիկ - 81
Նուրվալի (Նուրիջան), խջ., 1600 թ. 166
Շահիխասենց տոհմ ի Նոր Ջուղայ - 160
Շահնազարեանց Դանիէլ վ. - 101, 102, 104, 108, 113, 114, 124, 128, 135, 138, 139, 144, 146, 147, 150, 155, 156-161, 163, 165, 167, 171, 177, 180, 183-185, 189, 213, 252, 263
Շահումեան Ամալիա - 17
Շարաձէ Մ., տրագրիչ - 29
Շարմազանեան Գալուստ, 1853 թ. - 157, 169, 180, 199
Շեխ Հասան, կառավարիչ Սուլթանիէհի, 1341 թ. - 142
Շմիդտ Անդրէա - 187
Շմուէլ Ասորի կթղ. - 40
Շուլց - 84
Շրեդէր - 81, 82
Շրումպֆ Գիւստաֆ Ադոլֆ - 16, 73, 81, 82, 95
Ոնորիոս կայսր - 116
Ոսկան Երեւանցի - 5, 50-60, 68, 81, 84, 86, 163, 169, 193, 194, 205, 207, 236, 243, 291, 295
Որոգինէս - 58, 59, 72, 74, 76, 84, 89, 94, 104, 106, 108, 118, 176, 245, 246, 247, 251, 292, 296
Ուլֆիլա՝ գոթերի քարոզիչ - 38
Ուրսինոս - 82
Չերտկով, ռուս իխան - 137
Չուխաճեան Կղեմէս վ. - 148
Չրաքեան Քերովբէ վ. - 64, 80
Պալեան Տրդատ վ. - 50, 113, 188
Պաղտին մարաջախտ, 1335 թ. - 192
Պամփիլոս - 88, 89, 207
Պապիաս Հիերապոլսեցի - 87, 111, 231-233, 246
Պատկանեան Քերովբէ - 45, 92, 114-116, 118, 120-122, 253, 262, 263, 265, 266, 268
Պարզեանց Սուքիաս արքեպս. - 28
Պարոնեան Սուքիաս վ. - 29, 44, 45, 164
Պալինով Ա. Մ. - 165
Պետափրէ քուրմ - 119
Պետերման - 82
Պետրոս աբղ, գրիչ ի 1390 թ. - 146
Պետրոս առաքեալ - 89, 116, 230, 231, 258, 259, 264, 268, 269, 279
Պետրոս Լատինացի - 5, 55
Պետրոս կթղ. Հայոց, 1044 թ. - 182
Պետրոս կր., գրիչ ի ԺԵ. դ. - 178
Պետրոս կր., ստացող ի 1258 թ. - 174
Պետրոս, ստացող ի 1312 թ. - 175
Պետրոս, ստացող ի 1648 թ. - 156
Պէրպէրեան Նշան Կ. - 147
Պողարեան Նորայր արքեպս. - 14, 107, 183, 188
Պորփիւր - 123
Պտղոմեանք - 76
Պտղոմէոս - 58
Պրէոշէն - 91
Պրինցինգ Գիւնտեր - 187
Պրոխորոն, աշակերտ Յովհաննէս աւետարանչի - 115, 182
Պրոկղ Դիոդոխոս - 123
Պօղոս (Պաւղոս) առաքեալ - 31, 46, 54, 57, 87-90, 95, 96, 102, 105, 111-117, 126, 131, 139, 142-144
Պօղոս երէց, գրիչ ի 1653 թ. - 192
Պօղոս Սամոսատացի - 275
Պօղոս վ., 1478 թ. նորոգող 1332 թ. ձ-ի- 142
Պօղոս, գրիչ ի ԺԳ. դ. - 177
Պօղոս, խջ, ստացող ի 1650 թ. - 157
Պօղոս, ստացող ի 1312 թ. - 175
Ջալալեան Եղիա վ. - 63, 166
Ռըստակէս կր., կազմող - 139
Ռիէու Չարլզ - 94
Ռոբինսոն Ջոն - 34, 82, 89, 90
Ռուբինեան արքայատոհմ - 132, 136
Ռուբինեանց ընտանիք - 113. թագաւորութիւն - 203
Ռստակէս կթղ., 1472 թ., - 138
Ռստակէս քհյ, գրիչ ի 1182 թ. - 185
Ռօբէն, գրիչ ի ԺԳ. դ. - 174
Սահակ (Իսահակ) Պարթեւ - 25-40, 42, 44, 47, 58, 74, 76, 78, 93, 117, 118, 172, 173, 212, 215, 235, 243, 246
Սահակ Վանանդեցի, գրիչ ի 887 թ. - 178

Սահակ քհյ, կազմող ի 1317 թ. - 191
Սահակ, գրիչ ի 1312 թ. - 175
Սահակ, ստացող ի ԺԲ-ԺԳ. դդ. - 189
Սաղաթէլ վ. ստացող 1422 թ. ձ-ի - 148
Սամուէլ Անեցի - 6, 7, 92, 93, 139, 262, 272
Սամուէլ մարգարէ - 118, 120
Սամուէլ վ., Կամրջաձորեցի, Ժ. դ., մեկնիչ Յոբի գրքի - 293
Սամուէլ քհյ, օրինակի շնորհող ի 1310 թ - 190
Սամսոն, որդի Մանովէի - 243
Սամփսոն - 122
Սանժեան Աւետիս - 179, 186
Սարատ խջ., ստացող ի ԺԵ-ԺՋ. դ. - 165
Սարգիս արքեպս. Եկեղեաց, ստացող ի 1269 թ. - 107
Սարգիս եպս. ի Սուլթանիէ - 142
Սարգիս Պիծակ - 127, 140, 141
Սարգիս սրկ., գրիչ 1647 եւ ի 1630 թթ. - 177
Սարգիս սրկ., գրիչ ի 1200 թ. - 187
Սարգիս սրկ., գրիչ ի 1334 թ. - 191
Սարգիս վ. Մալեան Հաճնցի, 1775 թ. - 63, 107, 193
Սարգիս, գրիչ ի 1283 թ. - 114
Սարգիսեան Բարսեղ վ. - 16, 28, 68, 92, 148, 158, 164, 184, 187, 188, 190, 221, 228, 240, 241, 244
Սարեան Ստեփանոս վ - 48, 92, 93
Սաւուղ թագաւոր - 279
Սաֆար (Վաթան), խջյ, մեկենաս գրչութեան ի 1660-3 թ. - 160, 161
Սաֆար, խջյ, մեկենաս ի 1657 թ. - 159
Սաֆի Ղզլբաշ, շահ - 138
Սեղբեստրոս եպս. Հռոմէացի - 255, 256
Սենեքերիմ Արծրունի թագաւոր, 1066 թ. - 183
Սեւերիանոս Եմեսացի - 123
Սէն-Մարտէն - 81
Սիբիլ - 264, 267, 268
Սիմաքոս - 58, 85, 104, 106, 246, 247
Սիմէոն, գրիչ ի 1277 թ. - 191
Սիմէոն, հայր Սիրաքայ - 6
Սիմէոն, յետին ստացող ի 1604 թ. - 114, 115
Սիմոն Ռ. - 84
Սիոն կթղ. Հայոց - 249, 256, 262, 274, 276, 277
Սիրաք - 6, 53, 57, 61, 62, 110, 120, 121, 125, 136-138, 140, 145, 146, 148, 150, 155, 159, 162, 166, 167-169, 172-174, 177-178, 194-195, 204, 206, 208, 217, 219, 235, 242, 243, 245, 265, 269, 276-280, 282
Սկորոխոդով Ի. Ն., տպագրիչ - 45
Սկրիվեներ - 85
Սմբատ իշխան, եղբայր Հեթում Բ. թագաւորի - 132, 137
Սմբատ, որդի Վահրամի, ստացող ի 1071 թ. - 183
Սմբատեանց Մեսրովբ արք. - 165
Սոզոմենոս - 273
Սոկրատ Սքոլաստիկոս - 29, 255, 265
Սողոմոն թգւր. - 6, 30, 31, 57, 61, 62, 85, 104, 105, 110, 120, 121, 131, 136, 141, 143, 145, 150, 155, 159, 161-163, 168, 169, 171-178, 195, 208, 219, 245, 246, 268-270, 275-279, 281-282, 295
Սոմալ Սուքիաս վ. - 81
Սուքրեան (Սուքրի) Արսէն վ. - 5, 76, 117, 221, 226-228, 232, 234, 244, 288, 292
Ստեփան դպ., գրիչ ի 1666 թ. - 161
Ստեփաննոս եպս. Սիւնեցի - 190, 251, 255
Ստեփաննոս եպս., ստացող ի 1253-1255 թթ. - 104
Ստեփանոս Լեհացի (Լվովցի) - 62, 177, 194, 195, 204, 236, 243
Ստեփանոս Նախավկայ - 180
Ստեփանոս սրկ., գրիչ ի 1283 թ. - 114
Ստեփանոս վ. Գոյներ Երիցանց (Կայթառոնցի, Կայծառոնցի) - 113, 124, 126, 127, 134-137, 140, 209, 289, 299
Ստեփանոս վ., առաջնորդ Մաղարդի Սուրբ Ստեփանոս Նախավկայի վանքի, ստացող ի 989 թ. - 180
Ստեփանոս Տարօնացի Ասողիկ - 15, 25, 294
Ստեփանոս քհյ, յետին կազմող 1295 թ-ի ձ-ի, յԵւդոկիայ - 172
Ստեփանոս քհյ, վաճառող ձ-ի ի 1171 թ. - 184
Ստեփանոս քհյ., գրիչ ի 1371 թ. - 172
Ստեփանոս, գրիչ ի 1295 թ. - 135, 136
Ստեփանոս, գրիչ ի 1338 թ. - 192
Ստեփանոս, գրիչ ի 1354 թ. - 172
Ստեփանոս, գրիչ ի 1366 թ. - 143
Ստեփանոս, օգնական գրիչ ի 1263 թ. - 105
Ստրիժիգովսկի Յոզէֆ - 180
Սրուանձտեանց Գարեգին վ. - 10, 11, 185
Վախթանգ իշխան, ստացող ի ԺԳ. դ. - 192
Վահան Մամիկոնեան իշխան - 27, 216
Վահրամ, հայր Ներսէս Կոռեցի վ-ի - 142

Վանական վրդ. - 7, 134, 139, 143, 150, 152, 154, 157, 161-163, 165, 169, 206, 295
Վասիլ, կայսր Բիւզանդիոյ, 1007 թ. - 181
Վարդան աբեղ, գրիչ ի 1659 թ. - 159
Վարդան Արեւելցի (Բարձրաբերդցի) - 7, 25, 146, 150, 178, 220, 231, 232, 234, 262, 289, 294
Վարդան եպս., ստացող ի 1668 թ. - 162
Վարդան երէց, ստացող ի 1181 թ. - 185
Վարդան կր., հեղ.՝ Խոստովանութեան - 172
Վարդան վ., մականուն Հիւսն, վանահայր Մլիժ վանքի - 172
Վարդան Վանանդեցի, հայր 887 թ. ձ-ի գրիչ Սահակի - 178
Վարդանեան Արիստակէս վ. - 296
Վարդանէս, գրիչ ի 1671 թ. - 192
Վարժապետեան Ներսէս պատրիարք - 62
Վեբեր Սիմոն - 82, 92, 215, 218, 219, 221
Վետտ Դէ - 82
Վիլֆրուա աբբա - 82
Վիստոն եղբարք - 58, 59, 81, 83, 95
Վռամշապուհ արքայ - 38
Վրդանէս, գրիչ ի 1182 թ. - 185
Վրթանէս (Վարդան) երէց, գրիչ ի 1668 թ. - 162
Տայեցի Եսայի վ. - 68
Տաշեան Յակովբոս վ. - 67, 87, 90, 92, 94, 96, 97, 99, 107, 114, 144, 149, 165, 176, 177, 193, 194, 199, 232, 236, 239, 241, 242, 252, 253, 255, 263, 280, 292, 294
Տատիանոս - 89, 285
Տէր-Մինասեան Վահան վ. - 147
Տէր-Մկրտչեան Գալուստ - 11, 29, 216
Տէր-Մկրտչեան Կարապետ վ. - 264
Տէր-Մովսիսեան Մեսրոպ Մագիստրոս արքեպս. - 4, 5, 9-14, 17-19, 23, 75, 100, 105, 119, 128, 149, 170, 179, 194-196
Տէր-Ներսէսեան Ներսէս վ. - 61
Տէր-Պետրոսեան Պօղոս վ., 1848 թ. - 263
Տէր-Վարդանեան Գէորգ - 4, 5, 9, 12, 13, 18, 19, 74, 141, 186, 199, 215, 238, 272
Տիմոթէոս Եփեսացի - 122
Տիշենդորֆ - 94
Տիրատուր դպիր, գրիչ ի 1683 թ. - 163
Տիրացու, գրիչ ի 1232 թ - 189
Տիրոյեան Աթանաս վ. - 120
Տուկիծ, կայսր Բիւզանդիոյ, 1064 թ. - 183
Տրդատ Գ. թագաւոր Հայոց - 38, 294
Տրեգէլս - 94
Ցահն Թէոդոր - 82, 88, 89, 93, 96, 97, 219, 262, 263, 265-275, 297
Փաւստոս Բուզանդ - 15, 25, 43, 77, 78, 79, 80, 216
Փիլիմոն - 88, 89
Փիլիպիանոս թագաւոր - 116
Փիլիպոս կթղ., 1640, 1660 թթ. - 138, 161, 169
Փիլոն Ալեքսանդրացի - 91, 115, 121, 122
Փիրղալէմեան Ղեւոնդ վ. - 147, 149
Քարամեանց Նիկողոս - 172
Քէօշկերեան Արմինէ - 108
Քիւչուկ-Իոաննեսով Խաչատուր - 165
Օգոստինոս - 273
Օդաբաշեան Դաւիթ - 186
Օշին Լամբրոնացի - 203
Ֆէտտեր Ֆ. - 63, 64, 95, 96
Ֆիլիպ, թագաւոր ֆռանկաց - 112
Ֆրիտչէ (**Fritsche** *) Otto Fridolin - 237*

Alfer F. C. - 94
Assemani Joseph - 119
Bardenhewer Otto - 16, 38, 86, 87, 96, 253, 268, 270, 293
Barhebräus - 94, 95
Bensly (Բենսլի) Robert L. - *237*
Bergé M. Adolphe - 157
Berger S. - 96
Berthold - 83, 86
Bousset Wilhelm - 89
Brandes Herman - 272
Bratke (Բրատկէ) - 96
Brendenkammp Otto - 83, 86
Brosset M. - 93, 100, 108, 110, 111, 112, 124, 147, 150, 157, 158, 160, 161, 163, 167, 262, 264, 272
Caracalla - 38
Carrière A. - 92, 96
Conybeare Frederic - 5, 43, 47, 67, 84, 90, 91, 154, 186, 190, 264
Cornely - 48, 86, 95
Corsen - 96
De Boor C. - 267
Donat-Vernière P. - 86
Eichhorn - 95
Ermoni V. - 5, 48, 54, 67, 93, 95
Eulinger M. S. - 97
Fabricius - 95
Field Fr. - 94, 247, 288
Fritzsche O. F. - 83
Gelzer H. - 83

Giesbach - 86
Göttsberger Dr. F. - 94
Goussin H. - 97
Gregory G. R. - 94, 99, 300
Harnack von, Adolf - 87, 89, 91
Hartwell Horne Th. - 86
Hastings James - 43
Hefele Karl Joseph von - 274
Herzog - 83
Holmes - 52, 94, 149
Hyvernat H. - 5, 51, 82, 83, 94
Jülicher Adolf - 233, 298
Karganoff M. - 100
Kaulen Franz (Կաուլէն) - 48, 84, 86, 94, 95
Krikorian Mesrob K. - 187
La Croze V. de - 81, 95
Lagarde de Paul - 86, 95
Lang-Edwards Annette - 187
Langlois Victor - 16, 26, 27, 28, 166, 193
Lelong Jaques - 81
Lourdet P. - 5, 194
Mansi J. - 274
Martin J. PP. - 86
Meillet A. - 9
Michaelis Johann David (Միքաէլիս) - 52, 84
Mourier I. I. - 102
Nersessian Vrej Nerses - 164
Nestle Eb. (Նեստլ) - 67, 69, 82, 83
Neumann Carl Friedrich - 81
Nêve Félix - 86
Nirschl Joseph - 86
Pamphilius (Պամփիլիոս) - 87
Parson - 94, 149
Petermann *J. H. - 83, 237*
Pitra Jean-Baptiste (Պիտր) - *267, 268, 271, 273*
Preuschen (Պրոշէն) - 68, 91, 239
Resch Alfred - 87
Rink W. (Ռինկ) - 95, 96
Robinson John Alan - 5, 68, 87, 88
Sanjian Avedis K. - 179
Schmid M. J. - 97
Scholz Augustin J. M. - 84, 86
Schröder J. - 81
Schrumpf G. A. - 73, 95
Schulz - 84
Scrivener F. H. A. - 44, 83, 84, 94, 98, 221
Simon R. - 84, 85
Somal S. - 81
Teza E. - 97
Tisserant Eugenius, կարդինալ - 154
Tregelles - 94
Tulberg O. F. - 95
Ussher J. - 95
Vetter P. - 5, 86, 95, 96
Vigouraux F. - 52, 83
Walton - 94
Weber Simon - 92
Weise Christian - 187
Welte B. - 26, 86
Wette de - 5, 82
Wetzer - 86
Whiston M. - 83, 95
Wilkins - 95
Wiseman - 95
Wordsworth Chr. - 233, 234
Wright W. - 97, 250
Zahn T. - 5, 87, 88, 89, 92, 96, 97, 214, 219, 226, 232, 250, 262, 266, 267, 269, 270, 272, 273, 297
Zouche, լորդ - 87, 169

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ԵՒ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ագուլիս - 127
Ադրիանապոլիս - 181, 201
Ախալցխա - 165, 167, 189
Ախուրեան գետ - 185
Ակն քաղաք - 160
Ակների վանք - 203
Աղեքսանդրիա - 116, 184, 201, 245, 246, 262
Աղթամար - 148, 191 (կղզի), 202
Աղուանք - 26, 30, 31, 35
Ամբրոսեան գրադարան ի Միլան - 287
Ամերիկա - 179
Ամիդ քաղաք - 154, 203
Ամստերդամ (Ամսթելոտամ) - 51, 52, 56, 67, 81, 205
Այրարատ(եան) գաւառ - 42, 183, 192
Այրիվանք (Գեղարդ) - 114, 115, 202, 267
Անաւարզա - 103, 113
Անգլիա - 164, 169
Անթիլիաս - 74, 179, 181, 183, 185-188
Անի - 144, 185, 201, 202, 204
Անտիոք - 6, 184, 262, 274, 275, 276
Անտոնեան միաբանութիւն - 179
Աշտիշատ - 32, 42
Ապարաներ - 202
Ապրակունիս գիւղ - 172
Ապրակունիս վանք - 202
Առինջ - 193
Ասիական թանգարան ի Ս. Պետերբուրգ - 158
Ասորեստան (Ասորիք) - 26, 30, 30, 32, 36, 40, 42, 43, 44, 246, 272
Ասպիսնակայ վանք - 175, 202
Արաքս գետ - 145, 180
Արեգ քաղաք - 119
Արեւելից աշխարհ - 294
Արեւմտեան Հայաստան - 44, 203
Արծկէու անապատ - 176, 202
Արկուռի գիւղ - 183
Արղնի - 162
Արծէշ գաւառ - 175, 176
Աւագ անապատ - 172
Աւագ վանք ի Սիւնիք - 202
Ալաւրայ գիւղ - 116
Աւստրիա - 67, 203, 204
Բաբելոն - 62, 110, 282
Բաբերդ - 112, 190
Բալթիմոր - 179
Բաղէշ - 45, 203
Բարձրբերդ - 105
Բաքու - 149
Բեթղեհեմ - 213
Բեռլին - 98, 172, 194, 300
Բզնունեաց գաւառ - 176, 202
Բէյրութ - 113
Բիւզանդիա - 26, 30, 32, 246, 253
Բիւզանդիոն (հմմտ. Կոստանդնուպոլիս) - 74
Բոլոնիա քաղաք - 143, 202, 204
Բոստոն - 300
Բութանիա - 113
Բրիտանական թանգարան (գրադարան) - 87, 98, 169, 186, 188, 230
Գալիլեա - 230
Գաւառ գիւղ - 149, 202
Գեհովն գետ - 116
Գեսեմ - 6, 242
Գլաձորի (Գայլաձորի) վանք - 142, 202
Գողթն գաւառ - 38, 41
Գռների վանք - 203, 209
Գրիգոր Լուսաւորչի վանք յԵկեղեաց գաւառ, ի Սեպուհ լեռ - 128, 129, 131, 133, 135, 139, 254
Դալարագեազ գաւառ - 180, 201
Դամասկոս - 116
Դարանաղեաց գաւառ - 131, 133, 141
Դոն գետ - 204
Դորպատ - 100
Դրազարկ ուխտ - 175, 202, 203
Եգիպտոս - 246, 282, 287
Եդեսիա - 30, 38, 83, 137, 189
Եկեղեաց գաւառ - 31
Եղեգեաց գետ - 147
Ենի-Պակաբ գիւղ - 165
Երեւան - 9, 12, 14, 18, 51, 103, 108, 113-115, 128, 136, 137, 141, 147, 149, 165, 166, 175, 179, 180-182, 184-189, 199, 201, 219, 272, 276, 296
Երեւանցոց թաղ Նոր Ջուղայի - 51
Երզնկա - 107, 202
Երկայն Մաւրու անապատ - 104
Երնջակ - 156, 165, 174, 191, 202, 203
Երուսաղէմ - 14, 63, 74, 98, 99, 103, 104, 106, 107, 116, 118, 121, 126, 150, 153, 154, 160, 161, 162, 170, 173, 183, 184, 188, 193, 198, 201, 203, 213, 224, 245, 246, 258, 262, 265
Եւդոկիա քաղաք - 137, 172, 184

Եւրոպա - 50, 51, 52, 99, 204
Եփեսոս - 25, 115, 116, 262
Եփրատ - 115
Զմիւռնիա - 67, 95, 116 (Զմուրմին), 291
Էնֆիաժեանի մասնաւոր գրադարան ի Թիֆլիս - 190
Էջմիածին - 4, 12, 13, 18, 19, 22, 45, 51, 52, 55, 63, 64, 74, 87, 91, 98, 99-105, 108, 109, 111-113, 115, 117, 118, 119, 124, 127, 128, 135, 137-140, 143-148, 150, 153, 154-163, 165, 167, 168, 171-185, 187, 189, 191-195, 203, 205, 211, 213, 215, 216, 227, 229, 231, 232, 238, 239, 241, 242, 243, 252, 253, 257, 263, 264, 274, 280, 281, 290, 294, 296
Թաթարստան - 104
Թանահատ (Թանատեաց) վանք - 149, 202
Թարգմանչաց վանք - 189
Թաւրիզ քաղաք - 142, 185
Թեղենեաց ուխտ - 289
Թէոդոսիա քաղաք - 143, 162, 178, 203
Թիֆլիս - 29, 77, 98, 101, 102, 190, 220, 274, 220, 274 (տե'ս նաեւ Տփղիս)
Թիֆլիսի Ներսիսեան դպրոց - 98
Թոխաթ - տե'ս Եւդոկիա
Թուրքիա - 11, 167
Իսրայէլ - 120, 242, 243
Իտալիա - 52, 54, 202, 204
Լազարեան ճեմարան ի Մոսկուայ - 25, 63, 66, 98, 156, 178, 205, 226, 300
Լամբրոն (Լամբրաւն) - 183, 289
Լայպցիգ - 300
Լաւոդիկէ - 274
Լեհաստան - 149, 152, 153, 199, 203, 204
Լիբանան - 74
Լիզպոն - 12
Լիմ կղզի - 172, 202
Լիվոռնո - 51, 52
Լոնդոն - 59, 67, 91, 94, 98, 118, 164, 169, 186, 188, 190, 300
Լվով (Լեմբերգ) - 51, 52, 151, 153, 187, 199, 203, 204
Խիզան քաղաք - 153, 203
Խլաթ քաղաք - 148
Խոյթ լեռ - 44, 45
Խոր Վիրապի վանք - 289, 294, 295
Ծուրղութ գիւղ - 189
Կ. Պոլիս - տե'ս Կոստանդնուպոլիս
Կազարիա քաղաք ի Ղրիմ - 143, 202
Կալկաթա - 67
Կամենեց-Պոդոլսկ քաղաք - 204
Կապադովկիա - 201
Կատինոյ դղեակ - 186, 201
Կարբի - 160
Կարին (Էրզրում) - 67, 98, 101, 115, 145, 160, 167, 176, 180, 181
Կարս քաղաք - 167
Կարսի մարզ - 149, 178, 201
Կաֆա քաղաք - 143, 162, 203
Կեսարիա - 39, 202
Կիլիկեան Հայաստան - 50, 105, 109, 124, 128, 130-133, 135, 136, 139, 151, 166, 169, 186, 201-204, 209, 244, 289, 294, 296
Կիպրոս կղզի - 191, 202
Կոկիսոն - 81
Կոպենհագէն - 300
Կոստանդնուպոլիս (Կ. Պոլիս) - 5, 10, 34, 35, 44, 49, 55, 58, 61, 67, 68, 79, 83, 98, 103, 113, 137, 138, 147, 150, 154, 155, 161-163, 179, 203, 205, 208, 252, 255, 262, 270
Կովկաս - 165
Կորդուք - 116
Կտուց վանք - 113
Հալէպ - 95
Հաղբատի վանք - 137, 202
Համբարձման լեռ - 213
Հայաստան (Հայոց աշխարհ, Հայք) - 11, 26-28, 30-32, 34, 36-40, 43-45, 48, 49, 51, 52, 56, 58, 70, 74, 79, 81, 93, 94, 98, 100, 101, 113, 120, 124, 131, 137, 138-140, 143, 147, 175, 179, 186, 200, 201-203, 205, 213, 216, 219, 244, 245, 256, 272, 274, 276, 289, 294, 296
Հաշտեան գաւառ - 116
Հիզան քաղաք - 146
Հիլգենֆէլդ - 237
Հիպպոն - 274
Հոռոմոսի վանք - 185, 201
Հռոմ - 50, 51, 112, 154, 171, 202, 262, 300
Ղազարի վանք ի Տարօն - 142
Ղանլիճա գիւղ - 149
Ղրիմ - 143, 144, 162, 167, 203
Մակեդոնիա - 181
Մաղարթայ գաւառ - 139, 180
Մանեայ այր - 128, 129, 139
Մաշտոցեան Մատենադարան յԵրեւան - 12-14, 103, 108, 136, 141, 166, 175, 179, 186, 199
Մարմանտ գիւղ - 153, 203
Մարմաշէն - 149

Մելիտենէ քաղաք - 94, 182, 201
Մեծ Շէն գիւղ - 189, 300
Մեծոփայ վանք - 143, 192
Մերիլէնդ - 186
Միլան - 51, 96, 288
Միւնխէն - 45, 82, 98, 193, 194, 291, 300
Մլէձ (Մլիժ) վանք - 171, 175, 187, 201, 202
Մխիթարեանց մատենադարան ի Վենետիկ - 14, 59, 62, 87, 98, 99, 140, 148, 158, 184, 187, 188, 190
Մոկս քաղաք - 150, 203
Մոսկուա - 11, 25, 28, 29, 63, 66, 67, 97, 98, 118, 165, 179, 205, 240, 262
Մոսկուայի Ռումեանցեւեան թանգարան - 98
Մոտկան գաւառակ - 203
Մորաւիա - 38
Մուշ - 112
Մուրադ-Ռափայէլեան վարժարան ի Փարիզ - 205
Մօրու անապատ - 103
Յովհաննավանք - 160, 192
Յունաստան (Յունաց երկիր) - 26, 30, 33, 38, 44
Նախիջեւան (հին) - 156, 202
Նիկիա - 30, 32, 46
Նիւ Եորք - 67
Նոր (Դոնի) Նախիջեւան - 98, 144, 186, 204
Նոր շինայ անապատ (Մանուկ Սուրբ Նշան) - 146
Նոր Ջուղա - 51, 98, 156, 157, 158, 159, 160, 169, 179, 180, 199, 203, 204, 205, 243
Նորավանք Բղենոյ - 181
Նորշէն վանք - 202
Շատիկայ անապատ - 147, 202
Շխնոց գիւղ - 181
Շոռոթ - 173, 203
Շուխր Խանդառեայ վանք - 183, 201
Շուշի քաղաք - 185, 189
Շօշ - տես Սպահան
Ուրմիա - 202
Պաղեստին - 246
Պապեռաւն - 183
Պատմոս - 115
Պարսկաստան (Պարսից երկիր) - 43, 98, 156, 179, 203, 204, 216
Պարտաւ - 7, 218, 256, 269, 276, 277
Պետերբուրգի Ասիական թանգարան - 98
Պերուջիա քաղաք - 202
Պրուսա քաղաք - 113
Պօղոսական անապատ - 186
Ջուղա (հին) - 160, 181
Ռահ գետ - 42
Ռուսաստան - 144, 156, 204
Սաթլէդ գիւղ - 165
Սաղմոսավանք - 289
Սամոսատ - 83
Սանահին - 149, 218, 245
Սանասարեան վարժարան ի Կարին - 67, 98, 176, 177, 179, 180
Սանդղկայ (Սանդուխտ) վանք - 182
Սանկտ Պետերբուրգ - 4, 5, 9, 11, 12, 15, 23, 25, 43, 45, 61, 67, 70, 98, 100, 114, 115, 137, 188, 189, 198, 262
Սասուն - 44, 142, 203
Սարուշէն գիւղ - 185
Սեբաստիա քաղաք - 183, 201
Սեպուհ լեռ - 128, 129, 131, 133, 139, 254
Սեւ ծով - 204
Սեւան - 98, 179, 233
Սիս քաղաք - 108, 141, 166, 191, 193, 202
Սիւնիք - 202, 203
Սկեւռա վանք - 113, 187, 203, 204, 209, 289
Սուլթանիէ քաղաք - 142, 202
Սուչաւա (Սեչով) քաղաք - 149, 203, 204
Սուրբ Ամենափրկչի վանք ի Նոր Ջուղայ - 98
Սուրբ Առաքեալոց վանք ի Տարօն - 142
Սուրբ Աստուածածնի վանք յԱրղնի - 162
Սուրբ Գէորգ եկղ. յԵդեսիայ - 189
Սուրբ Գրիգոր եկղ. Մելիտէնէ քաղաքի - 182
Սուրբ Թադէոս առաքեալի վանք - 155
Սուրբ Թովմա առաքեալի վանք յԱգուլիս - 127
Սուրբ Թորոսի եւ Սուրբ Նշանի վանք - 182
Սուրբ Խաչ եկղց. Վարագայ վանքի - 143
Սուրբ Կարապետի վանք Երնջակի - 156, 165, 191
Սուրբ Կարապետի վանք Տարօնի - 112
Սուրբ Ղազար կղզի ի Վենետիկ - 26, 27, 29, 47, 53, 56, 87, 95, 98, 119, 140, 146, 148, 158, 184, 187, 188, 190, 216, 222, 223
Սուրբ Մատթէոսի եւ Բառնաբասի եկեղ. ի Փերուժ - 191
Սուրբ Յովհաննէս եկղ. ի Բաբերդ - 190
Սուրբ Յովհաննէս եկղ. Շխնոց գիւղի - 181
Սուրբ Յովհաննէս Մկրտչի վանք - 203ղ
Սուրբ Պօղոս եւ Պետրոս եկղ. ի Հռոմ - 171

Սուրբ Սարգիս եկղ. Ապրակունիս գիւղի - 172
Սուրբ Սարգիս վանք յՈւշի - 52
Սուրբ Սիոն եկղ. ի Բաբերդ - 190
Սուրբ Ստեփանոս Նախավկայի վանք (Մաղարթայ) - 139, 145, 180, 201
Սուրղաթ քաղաք - 145, 172, 202
Սպահան - 159, 160, 161, 192, 204 (տե'ս նաեւ Նոր Ջուղա)
Ստոկհոլմ - 76
Սրբոց Յակոբեանց վանք եւ մատենադարան յԵրուսաէմ - 14, 74, 98, 103, 106, 107, 183, 188
Վաղարշապատ - 29, 102, 145
Վան քաղաք - 112, 148, 149
Վանայ լիճ - 113, 172, 176, 202
Վանանդ - 201
Վանկունք անապատ - 175
Վասպուրական - 176, 202, 203
Վատիկան - 50, 98, 150, 154, 173, 174, 191, 241
Վարագայ վանք - 114, 143, 147, 148, 150, 202
Վարշաւա - 187
Վենետիկ - 5, 14, 15, 16, 25-28, 46, 47, 50, 51, 53, 55, 56, 58, 59, 61, 62, 64, 65, 67, 68, 72, 73, 74, 80-82, 86-88, 91, 93, 95, 98, 99, 105, 113, 119, 139, 140-142, 146, 148, 153, 156, 158, 164-166, 169, 170, 181-190, 193, 198, 205, 216, 222, 223, 231, 232, 235, 238, 239, 241, 242, 272, 290, 300
Վիեննա - 14, 54, 67, 77, 78, 92, 94, 96, 98, 99, 107, 114, 144, 146, 149, 165, 168, 177, 187, 193-195, 236, 239, 241, 242, 252, 253, 263, 270, 296, 300
Վիեննայի կայսերական մատենադարան - 14, 54, 94, 107, 193, 194
Վիմի քաղաք - 265
Վրաստան - 26, 30, 100, 147
Տաթեւի վանք - 143
Տաճկաստան - 177
Տարօն (Տարաւն) - 32, 42, 112, 115, 142
Տիգրանակերտ քաղաք - 137, 154, 155, 161, 162, 203
Տիգրիս գետ - 116
Տրապիզոն - 188
Տփղիս (Տփխիս) - 15, 25, 28, 29, 137 165 (տե'ս նաեւ Թիֆլիս)
Փարիզ (Paris) - 16, 26, 27, 48, 51, 54, 55, 67, 76, 86, 88, 92, 93, 96, 98, 164, 205, 240, 298, 300, 301
Փերուժ քաղաք - 191
Փիսովն գետ - 116
Փոքր Ասիա - 201
Փոքր Հայք - 81, 94
Օշական գիւղ - 42
Օքսֆորդ - 300
Ֆլորենցիա - 300
Ֆրայբուրգ - 93
Ֆրանսիա - 52

Amsterdam - 95
Arménie - 16, 26, 38, 81, 82, 83, 86, 100, 108, 166, 193
Berkeley - 179
Berlin - 172
Bonn - 86
Breisgau - 16, 38
California - 179
Cambridge - 38, 44, 87, 88, 91
Edessa - 38
Edinburgh - 43
Erlangen - 87, 88, 97, 214
Freiburg - 16, 38, 97
Géorgie - 108
Göttingen - 95
Halle - 81, 273
Heidelberg - 96
Köln - 86
Leipzig - 83, 87, 88, 89, 91, 92, 94, 214, 233, 237, 242, 267, 300
London - 44, 52, 87, 97, 164, 179, 186, 250
Los-Angeles - 179
Louvain - 86
New York - 44
Oxsford - 94
Paris - 16, 26, 27, 48, 86, 88, 92, 93, 96, 240
Passau - 97
Rotterdam - 85
St. Petersbourg - 93
Strasburg - 97
Tübingen - 26, 96
United Kingdom - 164
Upsala - 95
Waltres Art Gallery ի Բալթիմոր - 179
Wiesbaden - 187

ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԷՐ-ՄՈՎՍԻՍԵԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ

Ռուսերէնից թարգմանեց՝
ՍՈՒՍԱՆՆԱ ՆԱՀԱՊԵՏԵԱՆ
Առաջաբանը գրեց, խմբագրեց եւ ծանօթագրեց՝
ԳԷՈՐԳ ՏԷՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ

Հրատարակչական բաժնի տնօրէն՝	Տ. Արարատ քահանայ Պօղոսեան
Հրատարակչական խորհրդի անդամներ՝	Գեւորգ եպս. Սարոյեան, Զաքարիա Ծ. վրդ. Բաղումեան, Գարեգին վրդ. Համբարձումեան, Արշակ Մադոյեան, Գեւորգ Տէր-Վարդանեան
Սրբագրիչ՝	Ս. Առուշանեան
Էջադրումը՝	Ղեւոնդ աւ. քահանայ Մայիլեանի

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ – 2018

ISBN 978-9939-59-219-0

Ճանաչել գիմաստութիւն և գիտուր,
իմանալ զբանս հանճարոյ:

(Առակք Ա. 1)